ՎԱՐԴԱՆԻ
և
ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՂԻՇԷ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1989

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

93ր

ԵՂԻՇԵ

ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ

30.363
ԼԵՌՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1989

ԳՄԴ 63.3(2Հ)42+84Հ1—4
Ե 400

Հրատարակության է պատրաստել բանասիր. գիտ. դոկտոր,
պրոֆ. Գ. Գ. ԱՆԱՆՅԱՆ

«Ուսանողի գրադարան» մատենաշարի խմբագրական հանձնաժողով.
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ., ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Հ. Ս., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ., ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.

Եղիշե
Ե400 *Վարդանի և Հայոց պատերազմի մասին /[Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ե. Տեր-Մինասյանի].—Եր.: Երևանի համալս. հրատ., 1989.—448 էջ.— Ուսանողի գ-րան /Երևանի պետ. համալս.; խմբ. հանձնաժողով՝ Համբարձումյան Ս. Ա. (Նախագահ) և ուրիշներ:*

Եղիշեն V դարի հայ պատմագրության ու մշակույթի նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա երկը նվիրված է հայ ժողովրդի պատմության այն ժամանակաշրջանին, երբ անհավասար պայքար էր մղվում ազատության և երկրի անկախության համար: Գիրքը գրական ու պատմական արժեքավոր հուշարձան է, ինչպես նաև՝ կարևոր սկզբնաղբյուր Հայաստանի և հարևան երկրների պատմության ուսումնասիրման համար:

Ե $\frac{4702080000}{704(02)-89}$ 30—88 ԳՄԴ 63.3(2Հ)42+84Հ1—4

ЕГИШЕ
О ВАРДАНЕ И АРМЯНСКОЙ ВОЙНЕ
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1989

©Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանության և ծանոթագրությունների համար, 1989

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ
ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
ԴԱՒԹԻ ԵՐԻՑՈՒ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱՅՑԵԱԼ

Զբանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ. վասն Հայոց պատերազմին հրամայեցեր, յորում բազումք առաքինացան քան զսակաւս։

Ահա նշանագրեցի յայսմ եւթն յեղանակիս.

Առաջին՝ զժամանակն։

Երկրորդ՝ զԻրացն պատահումն յիշխանէն արեւելից։

Երրորդ զՄիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ։

Չորրորդ՝ զԵրկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ։

ԱԲԳԴԵԶԸԹԺԻԽԿՀՁՏ² ունեն հետևյալ վերնագիրը.—*Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի (ԸԽՏ² ստրատելատի) և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սրբոյ (Ի չիք սրբոյ) Դաւթայ (Տ² ի Դաւթայ) երիցու (ԲԽՏ² երիցուէ) հայցեալ (Կ հարցեալ) գրեաց (ՁՏ² չիք գրեաց)։*

ԷՎ *Եղիշէի վարդապետի զոր արարեալ է (Է էր) ի խնդրոյ Դաւթի Մամիկոնի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (Է և Վարդանայ և Հայոց պատերազմին)։*

ԼՄ *Յիշատակարան և պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկային (Մ սուրբ վկային) Քրիստոսի աստուծոյ (Մ աստուծոյ մերոյ)։*

Տ¹ *Օգնեա տէր. Պատմութիւն Նահատակութեան Վարդանայ քաջի՝ Հայոց սպարապետի՝ սրբոյ վկային Քրիստոսի աստուծոյ մերոյ արարեալ մեծին Եղիշէի՝ գիտնական վարդապետի աշակերտի սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ։*

Տ³ *Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ։*

Բ Վերնագրից հետո՝ *«Օգնեա աստուած»։*

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԴԱՎԻԹ ԵՐԵՑԻ[1]
ԽՆԴՐԱԾ [ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ] ՎԱՐԴԱՆԻ
ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այն գործը, որ պատվիրեցիր, կատարեցի, ո՛վ առաքինի. Հայոց պատերազմի մասին հրամայեցիր [գրել], որի մեջ քչերի հանդեպ շատերն առաքինի գտնվեցին։

Ահա շարադրեցի այս յոթը գլուխների մեջ։

Առաջին՝ ժամանակը։

Երկրորդ՝ Արևելքի իշխանի ձեռնարկած գործերը։

Երրորդ՝ Եկեղեցու ուխտի միաբանությունը։

Չորրորդ՝ Նույն ուխտից բաժանված մի քանիսի երկպառակությունը։

Դ Վերնագրից հետո կարմիր թանաքով՝ *«Յիշատակարան սրբոյն Վարդանայ Հայոց զօրավարին»։*

Կ Վերնագրից հետո՝ *«օգնեա Յիսուս տկարիս»։*

1 ԱԲԳԵԶԷԹԺԻԽԿՀՁՏ² զԲանն վասն որոյ Տ³ Բանն վասն որոյ ԱՎծան. Բանն զոր Ժ ով քաջ, արարի ԴԼՄՏ¹ որ վասն 2 ԸՁՏ² զոր հրամայեցեր ԴԼ յորոց ՄՏ¹ Վծան. որոց Հ որում ԱԲԸԹԻԽՀՁ քան թէ սակաւ ԴԺԼՄՏ¹Տ² քան թէ սակաւք Ե քան թէ սակաւս 4 Բ նշանագրեցից ԵԹԺ յութն ԱԳԴԺԻԽ յեղանակի ԲԸԹԼՁ եղանակի Ծ յեղանակ Կ եղանակիս Հ նշանակի փխ յեղանակիս 5 ԹԻԿՀՁ առաջինն ԱԳԴԵԸԹԺԻԼԽՄԿՀՁՏ² զժամանակն ՎԱ զժամանակսն Բ զժամանակս 6 Լ զիրաց Բ չիք պատահումն ԱԵԹԻՀՁ իշխանէն յԱրեւելից Բ յիշխանացն յԱրեւելից ԴՄ Արեւելեաց 7 Հ երրորդն ԱԳԵԸԻՏ² զմիաբանութիւն ուխտի ԲԹ ուխտի եկեղեցւոյն ԴԼՄՏ¹ զմիաբանութիւն եկեղեցեացն (Լ եկեղեցաց) 8 ՁԷՎ երկպառակութիւն Բ բաժանելոյ Գ բաժանեցելոց ԴԼՄՏ¹ չիք ոմանց բաժանելոց ԴԼ ուխտէն։

Հինգերորդ՝ զՅարձակումն արեւելեայց։
Վեցերորդ՝ զԸնդդիմանալն Հայոց պատերազմաւ։
Եւթներորդ՝ զԵրկարումն իրացն խռովութեան։

Յայսմ յեւթն գլուխս կարգագրեալ և եդեալ ծայրալիր պատարմամբ զսկիզբն և զմիջոցն և զկատարումն, զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաջինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն. ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ գիտութեան լրման, այլ այցելութիւն երկնաւոր տնտեսութեան, որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուցմունս երկոցունց կողմանցն, որ երեւելեօքն զաներեւոյթն գուշակէ։

Այլ դու, ո՜վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն։ Որպէս երեւի ինձ և քեզ և այնոցիկ, որ զեգերեցին յիմաստասիրութեան, երկնաւոր սիրոյ է նշանակս այս և ոչ երկրաւոր փառասիրութեան. որպէս և ասացին իսկ ոմանք ի քաջ պատմագրացն. «Զուգութիւն է մայր բարեաց և անզուգութիւն ծնող չարեաց»։

Որպէս և մեր իսկ հայեցեալ ի սուրբ սէր քոյոյ հրամանիդ՝ ոչ ինչ զանգազեալ վեհերեցաք հայեցեալ ի մեր տգիտութիւնս։ Քանզի բազում ինչ է սրբութիւն՝ սատար լինել անօրութեան, որպէս աղօթք գիտութեան, և սէր սուրբ՝ միաբան օգնին։

Զոր և մեր ընդ հրամանին քում ընկալեալ՝ յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց և յոյս

---

1 Բ յարուցումն փխ յարձակումն ԱԳԵԸԻԼԾԿՏ^{1}Տ^2 արեւելից ԲԵԹԽՀՁ յարեւելից 2 ԵԹ ընդդիմանալն ԴԼԾ վեցերորդն դիմանալ զՀայոց պատերազմէն 3 ԱԲԳԸԹԻԼԽԾՁՏ^{1}Տ^2 զերկարումն ԼԾ իրաց Ի խռովութեանց 4 ԱԲԵԹԻՀՁ զգլուխս Դ գլուխսն Ղ եօթներորդ զգլուխսն Ծ եօթներորդ գլուխսն ԲԸԺԻԽՀՁ կարգադրեալ ԶԷ գրեալ փխ կարգագրեալ ԱԲԳԵԸ ԹԺԻԽԿՀՁՏ^2 պատարմամբ A պարապմամբ 5—6 ԱԲԳԴԸԹԺԻԽԿՀՁ զկատարումն փխ զկատարածն A և այլք զկատարածն Բ հանապազ Դ զի որք ընթեռնուցուն ԼԾ զի որք հանապազորդ ընթեռնուցուն 6—7 Ե զառաջինեացն Բ քաջութիւն և զյետ ԶԷV յետս ԴԼԾՏ^1 զվատութիւնն 7—8 ԱԳԸԻՁ կարութիւն ԲԵԷԹԺ կարօղութիւն (Ժ կարօտութիւն) քո առ տգիտութեան զալ լրման A գիտութեանդ Կ չիք այլ 8 ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁՏ^{1}Տ^{2}Տ^3 այցելութիւն A յայցելութիւն 8—9 A տնտեսութեանն ԴԼԾՏ^1 տնօրէնութեանն փխ տնտեսութեան ԶԷ չիք որ ԴՏ^1 չիք որ մատակարարէ յառաջգիտութեամբ 9—10 ԴԼԾՏ^3 զհատուցումն ԶԷ յառաջգիտութեան զհատուցումն A երեւելեօքս զաներեւոյթսն 11 ԴԶԷ գնելով փխ դու ով ԱԲԳԵԹԺԻԿՀՁ մեծդ Ըև ով մեծիդ 12 ԱԵԻՀՁ չիք հրամայեսցես քան եթէ ԴԼԾ Թէ Բ հրամայիցես լաւագունիցն Է լաւագոյնիցն Թ չիք քան եթէ հրամայիցիս Տ^2 հրամայիցե՞ս քան թէ հրամայիցիս 12—13 A չիք քեզ և

Հինգերորդ՝ Արեւելցիների հարձակումը։
Վեցերորդ՝ Հայերի ընդդիմանալը պատերազմով։
Յոթերորդ՝ Խռովության գործերի երկարաձգումը։

Այս յոթը գլուխների մեջ կարգով գրեցի և մանրամասն շարադրեցի սկիզբը, միջին [ժամանակն] ու ավարտը, որպեսզի շարունակ կարդաս, լսելով առաջինների քաջությունը և հետ կացածների վատթարությունը, ո՛չ թե երկրավոր առատ գիտության անձնական պակասը լրացնելու, այլ երկնավոր նախախնամության այցելության համար, որ նախագիտությամբ երկու կողմերին էլ հատուցում է տալիս, որ տեսանելի բաներով անտեսանելին հայտնի է դարձնում։

Իսկ դու, ո՛վ մեծդ աստվածային գիտության մեջ, ինչո՞ւ արդյոք [ինձ] հրամայեցիր, քանի որ ինքդ կարող էիր հրամաններ ընդունել ավելի լավերը [գրելու] համար[2]։ Ինչպես թվում է ինձ և քեզ և իմաստասիրությամբ պարապած մարդկանց՝ այս բանը երկնավոր սիրո նշան է և ոչ թե երկրավոր փառասիրության, ինչպես որ հմուտ պատմագիրներից ոմանք ասել էլ են՝ «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»։

Այսպես և մենք տեսնելով, որ քո հրամանը անկեղծ սիրուց է [առաջացել], ամենևին չդանդաղեցինք և չվախեցանք՝ մեր տգիտությունը նկատի ունենալով։ Որովհետև մեծ բան է անկեղծությունը տկարությանն օգնելու համար, ինչպես աղոթքը՝ գիտության, և մաքուր սերը՝ հասարակաց օգտի համար։

Որ և մենք քո հրամանի հետ ընդունելով՝ հոժարությամբ սկսեցինք այս բանը, որ սիրելիների համար մխիթարություն է, հուսացողներին՝

ԱԲԳԵԶԷԸԹԺԻԽՀՁ որպէս երեւի ինձ և քեզ և այնոցիկ յորդեգրեցին (Խ որ զեգերեցին) յիմաստասիրութեան ԴԼԾ գեգերեալին ԴԼԾԶԷ յիմաստութիւն A յիմաստասիրութիւն Կ յիմաստութեան 14 ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁ նշանակս այս A ի քեզ այս նշանակ ԴԼԾ սիրոյս փառասիրութիւնս 14—15 ԱԲԳԵԶԷԸԹԺԻԿՀՁ որպէս և A բանզի և ԴԼԾ որպէս ասէին իսկ ԶԷ չիք իսկ 15 Ձ պատերազմագրացն Ի պատգամագրացն ԱԲԳԴԵԸԹԺ ԻԼԽԾԿՀՁ զուգաւորութիւն Լ չիք է 16 ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՁ և անզուգութիւն Ը չարաց 18 ԴԼԾՏ^1 վերջացաք փխ վեհերեցաք ԱԲԳԵԶԷԸԹԺԻԽԿՀՁ հայեցեալ A հայելով ԶԷ ի մերս գիտութիւնս Ձ տկարութիւնս փխ տգիտութիւնս 19 Ձ նրբութիւն փխ սրբութիւն ԴԼԾՏ^1 տկարութեան փխ անօրութեան 19—20 Է չիք անօրութեան որպէս աղօթք գիտութեան Ժ անօրութեան (վերևում՝ տկարութեան) 20 ԳԸԽԿ աղօթք՝ տքնութեան ԵԹ տքնութիւն փխ գիտութեան Ա աղօթք՝ տքնութիւն ԲԻՀՁ տգնութիւն 21 ԴԸԼԾ Տ^1 ըստ հրամանի (Ը ըստ հրամանին) Ա ընգալեալ 22 Բ ի ձեռն արկաք ԶԷ ձեռին արկեցաք ԱԲԳԴԵԸԹԺԼԾՀՁ զայն ինչ Լ ձեռագիրը տարբին յաւանցում՝ «Եղիշէի պատմագրի յաղագս Վարդանայ» և այսպես մինչև վերջը։

յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան, որ և ոչ ումեք ոտնհար լիցի թշնամութեամբ, այլ ամենեցուն ուսուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն։ Եւ ահա ո՛ ոք կամեսցի՝ ընդունի իբրև զնահատակ առաքինի։ Եւ քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի շնորհս բաշխէ ամենեցուն. զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր սուրբ յաննենգ մտաց գիտեմք։

Այս պարգութիւն զվերնոյն բերէ զնմանութիւն. զոր և մեր ի քեզ տեսեալ, մոռացաք զմեր բնութիւնս։ Եւ ահա վերաբերիմք ընդ քեզ ճախրելով, և իբրև բարձրաթռիչս եղեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օդովք անցանիցեմք, և փոքր ի շատէ ծծելով յանապական վերին օդոցն՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ։ Ուստի և բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեսցեն զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցուն. ուր ընդ նմին սուրբ Երրորդութիւնն ընծայեալ բերկրիցի յանտրամական յիւրում էութեանն։

Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով։

1—2 ԱԲԳԵԼԸԹԺԻԿՀՁՏ² և քաջալերութիւն Ըե քաջալերութիւնք ԱԲԵԸԹԺԻԽՀՁՏ² բռնութեամբ փխ կամակարութեամբ ԳԿ բռնաւորութեամբ ԴԺ յարձակել ԱԲԹԺԻԽԿՀՁ մահու 2 ԴՁԷԺԼ առաջի ԱԲԹԻ յառաջոյ ԲԼ զօրագլուխն 3 ԱԲԳԵԹԻԽԿՀՁ և ոչ ումեք է ումեքլ ոտնահար 3—4 ԱԲԳԵԹԻԽՀՁՏ² լիցի Λ լինի ՁԷ անդ փխ ամենեցուն ԼԾ չիՐ ամենեցուն ԱԲԳԴԵՁԸԹԺԻԼԽԾԿՀՁՏ¹Տ² ուսուցանել է անդ ուսուցանէ Λ ցուցանէ 4 ԱԲԳԵԸԹԺԻԽՀՁՏ² զիւր զանպարտելի զօրութիւն 4—5 ԱԲԻՁ որք որ Գ ո ոք որ ԵՀ որ կամեսցի ՁԷ որ և ԸԹԺԿԽՏ² ոք որ ՁԷ չիՐ իբրև զնահատակ առաքինի ԴԼԾՏ¹ զառաքինի նահատակ 6 Բ նահատակութեան ԴԼԾՏ¹ առաքինութեանդ փխ նահատակութեանդ Է նահատակութիւնք ՁԷ բազմադիմի է 6—7 ԱԳԵԸԻԽԿՀՁՏ² բաշխէ ԲԹ և նա և բաշխէ ԴՁԷԺԼԾΛ բաշխեաց Է զոր և մեք իսկ ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀՁՏ²Տ³ սէր A Վ 1852 զսէր 7—8 ՀՁ աննենգ ի գիտեմ 9 ԴԺԼԾՏ¹Տ² զի այս փխ այս ԲԳԴԼԾԿՏ¹ զվերնոյն ԱԲԵԻՀՁ մեք փխ մեր 10 ԴԼ տեսար ԱԲԳԵԸԹԺԻԼԽԿՀՁՏ² բնութիւն։ Վերաբերեմք 11 Է ճախրելով 11—12 ԱԲԳԵԹԺԻԽԿՀՁՏ² իբրև ի բարձրաթռիչս ԱԵԸԹ ԺԻԽՀՁՏ² օդովք Բ օդով ԴԼԾՏ¹ օդովքն ԳΛ օդովքդ ՁէՏ² օդովքս 12—13 Տ³ անդու-

հույս, քաջերին՝ քաջալերություն, որոնք հոժարակամ հարձակվում են մահվան վրա՝ առաջները տեսնելով հաղթության զորագլխին³, որը ոչ ոքի թշնամությամբ չի արհամարհի, այլ բոլորին սովորեցնում է իր անպարտելի ուժը։ Եվ ահա՛, ով որ կամենա՝ կընդունվի որպես քաջ զինվոր։ Եվ քանի որ նահատակություն բառը բազմանշանակ է, նա էլ բազմապիսի շնորհներ է բաժանում բոլորին, որ և աննենգ սրտի սուրբ սերն ամեն բանից մեծ ենք ճանաչում։

Այս պարգությունը նման է երկնային պարգությանը. և այս էլ քո մեջ տեսնելով՝ մոռացանք մեր բնության [հատկությունները]։ Եվ ահա քեզ հետ վեր ենք բարձրանում սավառնելով, և երբ բարձր թռած կանցնենք բոլոր վնասակար մրրկածին օդերից, փոքրիշատե ծծելով վերին անապական օդերից, կստանանք գիտություն մեր անձերի փրկության և ամենահաղթ եկեղեցու փառքի համար։ Ուստի և բազմաթիվ սուրբ պաշտոնյաները թող զվարթությամբ կատարեն իրենց պաշտոնն ու ծառայությունը, որպեսզի փառավորվի բոլորիս Հայրը. ուր և նրա հետ ընծա ու բերկրի սուրբ երրորդությունն իր անտրտում էության մեջ։

Արդ որովհետև քո աննախանձ բարք ու բնությունից պատվեր ու հրաման ստացանք, սկսենք, որտեղից արժան է սկսել, թեպետև չէինք հոժարի մեր ազգի թշվառությունը ողբալ։ Ահա մեր կամքի հակառակ արտասվալից ողբերով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով։

դանիցեմք ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՁՏ² և փոքր ի շատէ ծծելով Λ ծծելով փոքր ի շատէ ԴԼԾՏ¹ ծամելով փխ ծծելով ԴՁԷԼԾ յանապական վերին օդոյն ԿՀ օդոյն 13—14 ԱԲԳԵԸԺԻՀՁ գիտութիւն ԱԷԹ ի փրկութեան Դ փրկութիւն անձանց մերոց Ը գիտութիւն անձանց մերոց ԼԾ զգիտութիւնն փրկութեան անձանց մերոց Տ² զգիտութիւն 14—15 ԴՁԷԼԾՏ³ չիՐ և (բազում) Ի բազումք ԱԲԵԸԹԺԻԽՀՁՏ³ պաշտօնեայք ԴԼԾ պաշտօնեայք սուրբք ՁԷ կատարեսցեն զսպաս 15—16 ԴԼԾ վիճակի ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՁՏ² հատւոյ փխ Հօրն ԴԼԾ բոլորեցունց ԴԼԾ որ փխ ուր 16—17 ԲԳԴԵՁԸԹԺԼԽԾԿՀՁՏ² Երրորդութիւնն Λ Երրորդութիւն ԱԲԵԸԹԺԻԽՀՁՏ¹Տ² բերկրի ԴԼԾ բերկրեսցի ԴԷԼԾ իւրում 18 ԱԲԳԴԵԸԹՀՁՏ²Տ³ պատուիրանին 19 ԺԻԼԽԾՏ¹ բնութեանցդ ԱԲ արժանի է ԵԹԻՀՁ արժանի 20 ԴԺԷԼՁ յօժարիցիմք ԱԻ յազգիս մերոյ ԲԳԴԵԸԹԺԼԽԾԿՀՁՏ² ազգիս մերոյ ΛՏ³ մերոյ ազգիս է ողբալ զՀայոց Ձ ոչ ըստ կամաց մերոց 21—22 Գ արտօսրալի ՁԷՏ³ արտասուալից ԸԽՀ արտասուալիր ԼԾՏ¹ արտասուալի ԱԲԳԵՁԷԸԺԻԿՀՁՏ²Տ³ հարուածս Λ հարուածսն 22 ԲԵԸԹԺԻԽՁՏ² ականատես ԴԼԾՏ¹ ականատես եղեալ ԱԳՁ ԷΛ ականատեսք։

ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿՆ

Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք։ Եւ ըսկըսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք։

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁՏ^{1} վերնագիր չունեն (է նույնիսկ նոր տողով չի սկսվում) Տ^{2} նախարանից հետո՝ *Գլ. Ա. առաջին զժամանակն* Տ^{3}Ա *առաջին յեղանակ ժամանակըն* 1 *ԱԲ «Քանզի»* նոր տողով և մեծատառով *Ե* ծաղկագրով և 3 տող կարմիր թանաքով Տ^{2} դնում է, նախ՝ *Գլ. Ա. առաջին զժամանակն* *ԶԷ*Տ^{3} *աշխարհին* 2 *Դ Հաոց Սասանա* 2—3 *ԱԻ զիւր զիշխանութիւն ԵԷ իշխանութիւն Զ զիշխանութիւնն ԱԲԳԵԸԹԺԽԿՀՁ*Տ^{2} *մոգուց* Ա*Տ*^{3} *մոգուցն Զ մոգացն Է մոգոցն ԴԼԾ*Տ^{1} չիք *և ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁ*Տ^{2}Տ^{3} *օրինօք* ԱՎ^{1852} *օրինօքն* 4 Ա *յամաց* 5 *ԱԻՀՁ Տիրանայ Տրդատայ ԲԹ*Տ^{2}Տ^{3} *Տիրանայ թոռորդւոյն Տրդատայ* Վ^{1852} չիք *թոռորդւոյն Տրդատայ ԳԵԶԷԸԺԽԿ Տրդատայ* փխ *Տիրանայ* (*Ե լուսանցքում այլ գրով՝ Տիրանա «Տրդատայ»-ից առաջ*) (*Ժ լուսանցքում՝ Տիրանայ*) 5—6 *ԱԳԵԶԷԸԹԺԻԽԿՀՁ*Տ^{2}Տ^{3} *յամն Բ* չիք *յամն Դ ի յամս Լ ամս Ծ*Տ^{1} *յամս* Վ^{1852} *ցամն* *ԱԳԵԸԹԺԻ*Տ^{2} *որդւոյ ԳԴԶԼԾ Արտաշեսի Բ Վռամշապուհոյ ԴԼԾ*Տ^{1}Տ^{3} *Սռահրաշապհոյ ԶԷ Ըռամհաշապհոյ ԴԼԾ* չիք *և ԱԲԳԵԹԺԻԽԿՀՁ*Տ^{2} չիք *ևս* 7 *ԱԲԳԵԸԹԺԻԽՀՁ*Տ^{2} *ի նախարարս Կ նախարարացն* 8 *Է* չիք *զի ԴԼԾՀ* չիք *և ԴԼԾ յարքունիսն* 8—9 *Է յարքունիս երթայր Պարսկաց* 9 *ԴԼԾ*Տ^{1} չիք *Պարսկաց ԴԸԼԽԾ*Տ^{1} չիք *Հայոց Կ* չիք *բովանդակ* 9—10 *ԴԼԾ*Տ^{1} *նախարարացն Հայոց առաջնորդէր ի պատերազմին Խ*Տ^{2} *ի պատերազմին*

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿԸ

Երբ Արշակունյաց ցեղը[4] վերացավ, Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը[5], որ իր իշխանությունը վարում էր մոգերի կրոնի համաձայն և շատ անգամ կռիվ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը. սկսելով Տիրանի որդի Արշակ թագավորի օրերից՝ կռվում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին։ Եվ երբ սրան էլ զրկեց թագավորությունից, իշխանությունն անցավ Հայոց նախարարներին. որովհետև թեպետև հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ։ Այս պատճառով էլ աստվածպաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում, արքայից արքա Շապուհի[6] թագավորության սկզբից մինչև Վռամի[7] որդի արքայից արքա Հազկերտի[8] երկրորդ տարին, որին՝ սատանան իրեն գործակից գտավ, և հավաքված ամբողջ թույնը դուրս թափեց և լցրեց նրան ինչպես թունավորված նետերով լի կապարճ։ Եվ սկսեց հոխորտալ անօրենությամբ, գոռոզանում էր և աղմկելով քամի էր բարձրացնում աշխարհի չորս կողմերը, և մեզ, Քրիստոսի հավատացյալներիս, իրեն թշնամի և հակառակորդ էր ներկայացնում և նեղվում ու տագնապում էր անխաղաղասեր կյանքով։

---

*10—11 ԲԵԹԻ աստուածպաշտութեամբ Լ աստուածպաշտութիւն 11—12 ԴԼԾ բարձրիգլուխ Կ կամակորութեամբ ԴԼԾ*Տ^{1} *երևեալ լինէր Է աշխարհին ԴԼԾ յաշխարհիս 12* Ա *ի սկզբանց ԶԻ սկզբանն 12—13 Բ Շապուհոյ* Ա *ցամն Զ ցամն երկրորդի* Տ^{2} *յամս երկրորդ 13—14 ԴԼԾ*Տ^{1} չիք *մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի որդւոյ Վռամայ Գորգոյն ԴԼԾ իւր գործակից սատանայ 14—15 Ա մլթարեալ Զ մթարեալ Լ* չիք *մթերեալ ԴԼԾ*Տ^{1} *և զամենայն զթոյնսն ի նա թափեաց ԲԹ թոյնս 15—16* Տ^{3} *զպատկանդարան տեղովք ԴԶԷԼԾ*Տ^{1} *դեղով* փխ *դեղեալ նետիւք 16—17 ԱԲԵԸԹԺԻԽՀՁ*Տ^{2} *և գոռոզանայր Խ անօրէնութեան ԳԴԶԷԼԾԿ*Տ^{1}Տ^{3} չիք *գոռոզանայր ԱԲԳԵԸԹԺԻԽՀՁ*Տ^{1}Տ^{2} *հողմն հանէր ԴԶԷԼԾԿ*ԱՏ^{3} *հող հանէր* (*Ծ-ում* հետո ջնջված է *հողմ*) *18 Ա երևեցուցանէր զհաւատացեալսն ի Քրիստոս Բ հակառակորդէր և ցուցանէր զհաւատացեալսն ի Քրիստոս Դ ևս* փխ *իւր ԴԼԾ իւր ցուցանէր զհակառակորդս ի Քրիստոս ԵԹԺԻԽՀՁ*Տ^{2} չիք *իւր ԳԵԷԸԹԺԻԿՀԽ*Տ^{2} *զհաւատացեալսն* Տ^{1} *իւր ցուցանէր 19 ԱԲԺԻԽՀՁԸ*Տ^{2} *և նեղէր 20 ԳԴԵԶԷ ԸԼԽԾԿՀՁ*Տ^{1}Տ^{3} *խաղաղասէր* (1) ԱՏ^{2}*ՎեՆ (1852, 1893 և այլն) անխաղաղասէր Ժ խաղաղասէր*

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն և արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թիւնաւոր, կամ ո՞ւր բացատրեցից զբազմութիւն նետիցն։ Եւ առ յոյժ յիմարութեան իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի էր խաղաղասէր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն, և դարձաւ անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն։

Եւ իբրև ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւն նորա, սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, որպէս ոք զի ի հուր բորբոքեալ յաւելու բազում նիւթս փայտից։ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք սպանանելօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր։ Յափշտակութիւն առնէր ընչից և աւարոց, և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Եւ իբրև ետես՝

---

1 ԱԲԵԹԺԻՀՉ արեան հեղութիւն ԳԿ արիւնհեղութեան ԴԼԾՏ¹ և արիւնհեղութիւն ԸԽՏ² արեան հեղութեան A *չիք և   2 ՁԷՏ³ տարբերէր Ա թէ յո՞ Բ թէ յո՞ թափիցէ Զ թէ ո՞ ԴԵԸԹԺԻԽ թէ   2—3 ԱԲԳԵԸԺԻԹԽԿՀՁՏ² թիւնաւոր (ԲԹՁ թունաւոր) ԴԼԾՏ¹ զթոյնս դառնութեան* AՏ³ *զդառնութիւն թիւնից   3 ԲԵԸԹԺԻԽԿՀՁՏ² և կամ ԴԼԾՏ¹Տ² բացատեցից ԴԼԾ նետից   4 ԱԲԵՁԷԹԻՁՏ³ յիմարութեան ԳԴԸԺԼԽԾԿ*AՏ² *յիմարութեանն ԱԲԳԵԸԹԺԻԽ ԿՏՁ զգազան կատաղի ԴԼԾՏ¹ չիք կատաղի* AՏ² *մի կատաղի   5—6 ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՁՏ² և եհար մինչև ԴԼԾՏ¹ աշխարհիս Հայոց և Յունաց և եհար ԾՏ¹ չիք եհար Գ Մծին Կ Նծբին ԱԲԵԸԹԺԻԽՀՁՏ² և զբազում քաղաքս ԳԴԷԼԾԿՏ²Տ³ զբազում Դ ʼաւարեաց   6—7 է ամենայն ԱԲԳԵԹԺԿՁՏ² եկեղեցիս երկրին Խ և զբազում եկեղեցիս երկրին Դ եկեղեցեան Ը և զբազում եկեղեցիս ԵՀՁ չիք հրձիգ   7 ԴԼԾՏ¹ չիք կուտեաց զաւար և զգերի   8 ԲԹ զարս փխ զօրս   9 ԴԼԾ իսկ Թէոդոս կայսր երանելի Ժ կայսրն Լ Թէոթոս* A *խաղաղասէր էր   10—11* AՏ³ *ելանել ընդ առաջ Ե չիք ընդ առաջ ԳՁԷԿՏ³ Անատող ԴԼԾ Անատողի (ԾՏ¹ Անատոլի) ԴԼԾՀ յարևելից   12 ԱԳԵԺԿՀՁ որ   13 ԱԲՁԷԸԹԻԽԿՁՏ²*

Որովհետև նրան շատ սիրելի էր խռովությունն ու արյունահեղությունը, այդ պատճառով էլ ինքն իր մեջ ալեկոծվում էր, թե ո՞ւմ վրա թափեմ դառն թույներս կամ ո՞ւր արձակեմ բազմաթիվ նետերս։ Եվ սաստիկ հիմարության պատճառով/ինչպես կատաղի գազան հարձակվեց Հունաց երկրի[9] վրա, հարվածեց մինչև Մծբին[10] քաղաքը և ասպատակ սփռելով՝ ավերեց Հոռոմների շատ գավառներ և հրդեհեց բոլոր եկեղեցիները./ավար ու գերի հավաքեց և ահաբեկեց երկրի ամբողջ զորքը։

Իսկ երանելի/Թեոդոս կայսրը[11], որովհետև խաղաղասեր քրիստոնյա մարդ էր, չկամեցավ նրա դեմ պատերազմի դուրս գալ, այլ Անատոլ անունով մի մարդու, որ Արևելքի նրա սպարապետն էր, շատ գանձերով նրա մոտ ուղարկեց։ Եվ բռնեց ու նրա ձեռքը տվեց այն պարսիկ մարդկանց, որոնք քրիստոնյա լինելու պատճառով փախել էին և գտնվում էին կայսեր քաղաքում։ Եվ այն ամենը, ինչ որ ասաց [Հազկերտը] ժամանակին, [Թեոդոսը] կատարեց նրա կամքի համաձայն և իջեցրեց նրա մեծ բարկությունը. և այսպիսով նա վերադարձավ իր քաղաքը՝ Տիզբոն[12]։

Երբ անօրեն իշխանը տեսավ, որ իր չարությունը հաջողվեց, սկսեց մի այլ խորհուրդ էլ մտածել, ինչպես մի մարդ, որ բորբոքված կրակի մեջ շատ վառելափայտ է ավելացնում։ Որովհետև որտեղից մի քիչ կասկած ուներ, այնտեղից լիովին ապահովվեց. այդ պատճառով էլ քրիստոնյաների սուրբ ուխտից շատերին խախտեց՝ մեկին սպառնալի խոսքերով, մյուսին շղթաներով ու տանջանքներով, երրորդին չարաչար մահով սպանելով։ Հափշտակում էր նրանց ստացվածքն ու կալվածքները. և մեծ անարգանքով տանջում էր բոլորին։ Եվ երբ տեսավ, որ ցիրուցան

և կային ի քաղաքին կայսեր ԳԵՁԷԸՀ կէին ԴԺԼԾՏ¹ ի քաղաքն ՁԷԸԻ   15 Դ ձեռագրից այստեղ թերթ է ընկած. վերջանում է *«ըստ կամ[աց]»* բառերով. վերսկսվում էջ 18 տող 10 *«եկեալ հասեալ էջ»* բառերով   *16* A *դարձոյց* AՏ³ *յիւր քաղաքն Բ Տիզբոն ՁԷ Տիզբոնն Հ Տիսպոն ԱԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀ Տիսբոն* Ձ ձեռագիրը վերջանում է այստեղ *«ի բազում բարկութենէն»* բառերով   *17 ԱԲԵԸԹԺԻԽՀՏ² և իբրև տեսանէր ԴԼԾ աջողեցաւ ԱԲԵԸԹԺԻԽԿՏ² թէ ոչ յաջողեցաւ չարութիւն է յաջողեաց Հ որ ոչ յաջողեցաւ* AՏ³ *չարութիւնն   18 ԴԼԾՏ¹ սկսաւ այնուհետև (Դ այսուհետև) ԴԼԾ չիք այլևս ԱԲԵԸԹԺԻԽՀՏ² որպէս ոք ԼԾ իբրև ոք* A *իբր ոք Տ¹ իբրև թէ ոք Բ զի հուր   19 ԱԲԵԸԹԺԻԽՀՏ² յաւելու... փայտի ԴԼԾՏ¹ յաւելուցու ի բազում... փայտի ԿՏ¹ յաւելու զբազում* A *յաւելուլ   19—20 ԱԲԵԸԹԺԻԽՀՏ² սակաւ մի կասկածէր... հաստատէր ԴԼԾՏ¹ կասկած ունէր   21 ԱԲԵԸԹԺԻՀ դրդեցոյց Խ դրդեցուց Բ էր որ ԱԲԵԸԹԺԻՀ և էր զոր   22—23* A *չիք և Բ չիք և տանջանօք ԴԼԾՏ¹ էր զոր բանիւք և էր զոր սպանանելիւք և էր զոր կապանօք տանջէր Բ էր զոր չարչարանօք մահուամբ վաղճանէր։ Դ և զոր է վաղճանեաց   23—24 ԱԲԹԻ ընչից ԴԼԾՏ¹ ստացուածոց* փխ *աւարոց Բխ զամենեսեան։*

եթէ վայրատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ձախակողմանն, որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև ընդ կենդանի ի գերեզմանի, յորս ամենևին չծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քրիստոսի։ Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն հզօրագոյնք կռուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ։ Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան, և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուին։ Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին ի վերայ նոցա, «Այր, ասէ, առ քաղցի, իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ»։ Սմին նման և Տէրն ինքնին ասէ. «Ամենայն տուն և թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն»։

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չշիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ իբրև զագիր մեռելոտի ի բաց ընկեցեալ։ Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսցիր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա։

եղան այս ու այն կողմ, խորհրդի կանչեց ձախակողմյան պաշտոնյաներին[13], որոնք կռապաշտության մեջ կաշկանդված էին անքակտելի կապերով, վառված ու կրակ կտրած ինչպես մի հնոց՝ եկեղեցու սուրբ ուխտն այրելու համար։

Որովհետև այդպիսիները հենց իրենց կենդանության ժամանակ բնակվում են ինչպես թանձրամած խավարում, և հոգիները մարմնի մեջ փակված են ինչպես կենդանի [մարդը] գերեզմանում, որոնց [հոգիների] վրա ամենևին չի ծագում Քրիստոսի սուրբ լույսի նշույլը։ Օրհասական արջերն էլ շնչերը հատնելիս ավելի ուժգին են կռվում, և իմաստունները խույս տալով փախչում են նրանցից։ Այսպիսի մի վախճան է եկել-հասել այդ տերությանը. երբ նրանց խփում են՝ չեն զգում, և երբ [իրենք] են խփում՝ չեն հասկանում. իսկ երբ արտաքին թշնամի չի գտնվում, իրենք իրենց հետ են կռիվ սկսում, մարտնչում։ Մարգարեի խոսքը հենց հարմար է գալիս նրանց վերաբերմամբ. «Մարդ, ասում է, իր քաղցածությունից [ստիպված] շուռ կգա և կուտի իր անձի կեսը»։ Սրա նման ասում է նաև Տերն ինքը. «Ամեն մի տուն և թագավորություն, որ բաժանվում է ինքն իր մեջ, հաստատուն մնալ չի կարող»։

Արդ, ի՞նչ ես ծեծկվում, ի՞նչ ես կռիվ տալիս, ի՞նչ ես այրվում, ի՞նչ ես բորբոքվում, ինչո՞ւ ես հանգչում, ի՞նչ ես խորհրդի կանչում նրանց, ովքեր ձեր հոգիները ձեզնից խլել՝ ձեր անապականը ապականության են դարձրել, իսկ ձեր ապականացու մարմինը զազրելի դիակի նման քարշ են տվել ու դեն գցել։ Չէ՞ որ այդ ես կամենում, որ ամբարիշտ խորհուրդդ ծածկվի. կտեսնես՝ երբ կհայտնվի, հետո կիմանաս դրա վերջը։

---

1 ԱԲԵԸԹԻԽՀՏ^2 վայրավատեալ ցրուին ի բազում կողմանց (ԲԹ չիք բազում Տ^2 վայրավատեալ) ԴԺԼԾՏ^1 վարատեալ Կ վարավատեալ ԱԲԵԸԹԺԻԽԿՀՏ^2 կոչեաց 2—3 ԴԼԾՏ^1 զձախակողմեան զպաշտօնեայսն ԵԸԺ ձախակողմեանն ԲՏ^2 կապեալք ԱԲԴԵԹԺԻԼԾԿ ի կռապաշտութիւն ՁԷԸՏ^3 A կռապաշտութեան 3—4 ԴԼԾՏ^1 անլուծանելի կապանօք Ա հանգուցիւք Բ վառեցեալք ԴԼԾՏ^1 ջեռուցեալք ԱԲԴԵԸԹԺԻԼԽԾՀՏ^2 առ ի յայրել 4 Կ զուխտս Բ զուխթ Կ եկեղեցւոյն 5 ԴԼԾՏ^1 են իսկ փխ էին իսկ 5—6 ԱԲԵԸԹԺԻԽՀՏ^2 իբրև թէ ի 6 Հ հոգիքն ԱԲԵԸԹԺԻԽՀ արգելեալ ի մարմինն ԴԼԾՏ^2 ի մարմինսն 7 ԴԼԾՏ^1 ոչ ծագէ 8—9 Խ օրհասարակ նորա Հ նաև արք քաջք ատարհասականք ԱԵԸԹԺԻԽԿՀՏ^{2}Տ^3 շնչոցն հզօրագոյնք (Տ^3 շնչոյն) Բ շնորհացն հզօրագոյնք ԴԼԾՏ^1 հզօրագոյն ԴԼԾՏ^1 չիք և ՁԷ վախճանեալք Λ շնչոյն հզօրագոյնս 9—10 Բ որոց և իմաստունն ԴՁԷԼԾՏ^3 իմաստունք Տ^1 տուեալ ԴԼԾ ի նոցանէն Է փաղչէին 10—11 ԱԲԳԴԵԹԺԼԾՏ^2 հասեալ էր վախճան տէրութեան Ը ի վախճան ԱԳԴՁԷԺԻԼԽԾԿՏ^1 չզգան (Ա հետո ուղղուած է «չհոգան») ԲԹԻՏ^2 չհոգան ԴԼԾՏ^1 և եթէ զոր հարկանեն է հարկանին 11 էխ չիմանան ԱՏ^3 և իբր ԲԴԼԾՏ^2 չիք և Զ իբր 12 ԴԼԾՏ^1 մարտեալ ԼԾ բանս 14 ԲԹ ի քաղցի ԴԼԾ չիք ասէ էր իմում փխ իւրում ԴԼԾ և կերիցէ, ասէ 15—16 ԱԲԳԵՁԸԹԽԻԿՀՏ^2 սմին նման և տէր (ԲԹ տէր ինքն) AՏ^3 նման սմին է նման է սմին տէր Ժ սմին նման և տէրն իսկ Վ1852 տէրն Դ իսկ փխ ինքնին Գ չիք որ է անձ իւր ԱԲԵԸԹԺԻԽԿՀՏ^2 բաժանեսցի 16 Գ բաժանիցի ԴԼԾՏ^1 յանձն իւր բաժանեալ ԴԼԾՏ^1 ոչ կա ՁԷԸԽ կեալ 17—18 Ի և մրցիս Խ չիք զի՞ մրցիս, զի՞ այրիս ԱԲԳԵՁԷԸԹԺԻԽԿՀՏ^3 զի՞ չիջանիս ԴԼԾՏ^{1}Տ^2 Վ1852 չիջանիս A ոչ շիջանիս 18—19 ԴԼԾ ի խորհուրդս ԱԲԳԵԸԹԻԺԽՀՏ^2 չիք քաղեալ ԴԼԾՏ^1 որոց զոգիս ձէնջ հանեալ և քաղեալ է զանապականութիւն ՁՏ^3 որ փխ որոց Ժ զոգիս Տ զհոգիս 20 ԴԼԾՏ^{1}Տ^3 գէշաքարշ է չիք արարեալ 20—21 ԱԳԵԺՀ զզագիր Դ զազարի ԴԼԾՏ^1 մեռելոտիս է չիք իբրև զագիր մեռելոտի է գէշարաց ընկեցեալ 21—22 ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՏ^2 Վ1852 խորհուրդ ամբարշտութեանդ ԴԼԾՏ^1 ծածկեսցես զխորհուրդս A խորհուրդն ամբարշտութեան ՁԷՏ^3 զի ծածկես զխորհուրդ ամբարշտութեան ԸԽ յայնժամ փխ յորժամ 23 Խ կատորածի փխ կատարածի

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն. և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մացէ ընդ օրինօք քովք։ Արդ զմի բան զմեր վաղվաղակի կատարեա դու, արքայ. զօր գումարեա և գունդ կազմեա. խաղա գնա դու յերկիրն Քուշանաց. և զամենայն ազգս հաւաքեա և անցո ըստ Պահ դուռն ի ներքս. և դու անդէն արա քեզ բնակութիւն։ Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. և որպէս երևիս մեզ ի գենիս մերում, տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ։ Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ ի միջոյ»։

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, պնդագեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ։ Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմացի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ։

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դուք զբարի զմտաւ ածէք և անսպառ լերուք յուրախութեան. բայց զայս

1—2 ԲԹԿS^2 զյաղթութիւնդ ԴԼԾS^1S^2 զտէրութիւնդ զայդ և զյաղթութիւնդ Զէ զտէրութիւն S^3 զտէրութիւն և զյաղթութիւն   2—3 ԱԲԳԵՁԷԸԹS^3S^3A կարօտեն ԺԻԽԿՀ կարօտ են S^1 կարօտին է մեծութիւն   3 Ը չիք ի ԲԹ դարձուցես   3—4 ԴԼԾS^1 զազինս որ են ընդ տէրութեամբ քո   4—5 ԳԴԼԾS^1 չիք և ԱԲԹԻ հնազանդեալ լինի Գ եղիցի փխ մացէ ԴԼԾS^1 չիք հնազանդեալ ԵԸԺԽՀS^2 հնազանդեալ եղիցի Կ մտանէ   5—6 ԱԲԵԸԹԺԻԽՀS^2 Արդ զմի բան զմեր չիք զայսօրիկ ԳԿ զբան մի զմեր զայս ԴԼԾS^1 զբանս մեր։ չիք զայսօրիկ AS^3 զբանս զայսօրիկ ԴԼԾ չիք դու   6—7 Հ չիք և գունդ կազմեա ԱԹ չիք դու ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԾԿՀS^1S^2 յերկիրն AS^3 յաշխարհն   7—8 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀ S^1S^2 հաւաքեա AS^3 ժողովեա փխ հաւաքեա ԲS^2 ընդ Պահ դուռն ԴԼԾS^1 ընդ Պահլա դուռն   8—9 ԱԲԵԸԹԺԻԽՀS^2 և դու անդէն արքայ արա ԴԼԾ և դու քեզ անդրէն արա Ը ի բնակութիւն ԴԼԾ չիք քեզ ԴԼԾ փակես և արգելուս   9—10 ԱԲԳԵԹԺԻԽ ի հեռաւորո թեան, չիք օտարութեան ԴԼԾS^1 օտարութիւն ԸԺԿS^2 ի հեռաւորութեանն Հ ի հեռաւորութիւն Բ չիք քոց և ԲԴԼԾ խորհուրդ չիք և Զէ խորհուրդքն—երևի մեզ ԴԼԾ երևիս դու   10—11 ԾS^1 որպէս երևիս դու երկրին Քուշանաց։ չիք մեզ ի գենիս մերում՝ տիրես դու և   11—12 ԱԲԵԹԻՀ տիրեսցես դու յերկրին Քուշանաց (Բ և գենիս յու-

Մոգերն[14] ասում են. «Քա՛ջ թագավոր, աստվածները տվին քեզ այս տերությունը և հաղթություն. նրանք ամենևին մարմնավոր հարստության կարոտ չեն, միայն թե մի կրոնի դարձնես քո տերության մեջ գտնված բոլոր ազգերին ու ժողովուրդներին, այն ժամանակ Հույների երկիրն էլ հնազանդվելով՝ կենթարկվի քո իշխանությանը։ Արդ, մեր մի խոսքը շուտով կատարի՛ր, արքա՛, զորք հավաքիր և գունդ կազմիր, վեր կաց գնա Քուշանների[15] երկիրը և բոլոր ազգերին ժողովիր և անցկացրու Պահ դռնից[16] ներս, և այնտեղ շինիր քո բնակությունը։ Երբ բոլորին արգելես ու պահես հեռավոր օտարության մեջ, քո կամքն ու խորհուրդները կկատարվեն և, ինչպես երևում են մեր գուշակությունների[17] մեջ, դու կտիրես նաև Քուշանների երկրին և մինչև անգամ Հույները քո իշխանության դեմ դուրս չեն գա։ Միայն թե քրիստոնյաների կրոնը մեջտեղից վերացրու»։

Այս խորհուրդը հաճելի եղավ թագավորին ու իրեն համամիտ մեծամեծներին. Հրովարտակներ գրեց, արագագնաց սուրհանդակներ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը։ Եվ այս է հրովարտակի պատճենը.

«Իմ տերության բոլոր ազգերին, արիներին և անարիներին[18], թող բազմանա մեր մարդասեր ողջույնը ձեզ. դուք ողջ եղեք, մենք էլ արդեն ողջ ենք աստվածների օգնությամբ։

«Առանց ձեզ որևէ նեղություն տալու ելանք-գնացինք Հույների երկիրը, և առանց պատերազմի, սիրով ու մարդասիրությամբ նվաճեցինք ամբողջ երկիրը մեզ ծառայելու։ Դուք բարին մտածեցեք և անսպառ ուրախության մեջ մնացեք. բայց շուտով կատարեցեք այս բանը, որ ա-

---

սանեցնում՝ «հաստոյս») Դե չիք և S^2 գենիս մերում, տիրեսցես ԱԲԳԵԹԺԻԿՀ չիք իսկ ԴԼԾ և ոչ յոյնք ելանեն   12—13 ԱԲԳԴԵԹԺԻԿՀ իշխանութեանդ ԲԴԹԼ զաղանդն Հ զողանդ (!)   ԸS^2 քրիստոնէիցն   14—15 ԴԼԾS^1S^2 եւ հաճոյ ԱԵԻՀ խորհուրդ ԴԼԾ բանն փխ խորհուրդն ԴԼԾS^1 ի նմին դրանն փխ ի նմին բանի   15 Աի հրովարտաք ԲԵԹԼՀ հրովարտակ Զէ հրովարտաքս Բ պնդադեսպան ԴԼԾS^1 հրովարտակ գրէր, պնդով դեսպան արձակեաց Զէ պնդաւ դեսպանս առաքէր S^2 պնդով դեսպանս S^3 պնդադեսպանս առաքէր   16 Գ տէրութեանն ԴԼԾS^1 կողմանս փխ տեղիս ԴԼԾS^1 և այս էր հրովարտակին պատճէն էի հրովարտաքին   17 Ա ազգ տէրութեան իմոց ԳԵԸԹԺԻԽՀ ազգ   18—19 ԱԵS^3 բազմացի ձեզ ԴԼԾ առ ձեզ ԹԺԻ չիք ի (ձեզ) է մարդասիրութեանն ԱԲԹԿ իմոյ փխ մերոյ Զէ չիք մեք Ի չիք մերոյ ԴԼԾ և դուք   20—21 ԴԼԾ ինչ զձեզ ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀS^2 աշխատելոյ փխ աշխատ առնելոյ Խ գնացի ԱԳԵ ի յերկիրն   21—22 S^2 գործոց է չիք սիրով մարդասիրութեամբ   22—23 է չիք զամենայն երկիրն ԱԲԵԸԹԺԻԽՀS^2 ի ծառայութիւն մեզ Կ ի հնազանդութիւն փխ ի ծառայութիւն ԴԼԾ և դուք ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀS^2 բարի է մտաւ Զէ յուրախութեանն։

բան կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմ։

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհըն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց· դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջոյ քան զիս, յանդիման լինիջիք ինձ յԱպար աշխարհին»։

Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից և ի Լփնաց, ի Ծաւդէից և ի Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ։ Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ· ըստ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից և յաշխարհէն Լփնաց, և որ այլ ևս ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի և ի Հոռոմոց աշխարհն և ի Կորդուաց և ի Դասն և ի Ծաւդէ և յԱրզնարզիոն, որք էին ամենեքեան հաւատացեալք և մկրտեալք ի մի կաթողիկէ և առաքելական եկեղեցի։

Եւ անմեղութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան աներկբայ հաւատովք։ Բարձին ևս ընդ իւրեանս զաստուածային սուրբ կտակարանսն բազում պաշտօնէիւք և քահանայիւք։ Բայց հրաման

---

1 ԱԲԹԻՏ^1 զայս բան ԴԼԾՏ^1 զբանս զայս AՏ^3 բան զայս ԱԳԵԸԺԻԽԿՀ զոր ասեմ ԲԹՏ^2 ասեմս AՏ^3 ասեմքս 2 ԴԼԾ և անվրէպ խորհրդով ի մտի եդաք ԼՏ^1 չիք գնալ 2—3 ԲԷԻ աշխարհն յարևելից 3 ԴԼԾՏ^1 չաստուածոցն ԶԷ օգնութեամբ 4 ԱԵԷԹԻ զտէրութիւն ԷV զհրովարտակս 4—5 ԲՏ^2 տեսանիցէք Է անխափան 5—6 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀՏ^2 այրուձի AՏ^3 այրեձի ԴԼԾՏ^1 յառաջ AՏ^3 առաջի ԱԳԵԹԺԻԿՀ և յանդիման լինիջիք Բ և յանդիման լինիք ինձ ԴԼԾՏ^1 լինիցիք ԸԽՏ^2 և յանդիման լիջիք ԶԷՏ^{3}A լերուք 6 ԱԳԵՏ^2 աշխարհի ԲԹԻ յԱպր աշխարհի Է յաշխարհին 7 ԴԼԾ հրովարտակն Է հրովարտաք ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՏ^2 եհաս և ի (Բ չիք ի) Հայոց աշխարհն 8—9 ԱԲԵԸԹԺԻԽԿՀ և Լբնաց և Ծօդէից և Կորդուաց և Աղձնեաց (Ա յԱղձնեաց) և այլ բազում Գ չիք ի (Լփնաց)։ և ի Ծաւդէից—և ի յԱղձնեաց ԴԼԾՏ^1 և ի Ծաւդէից, ի Կորդուաց. յԱղձնեաց և ի բազում յայլ տեղիս հեռաւորս Տ^2 յայլ բազում տեղիս հեռաւորս ԶԷ և յԱղձնեաց (Է ի յԱղձնեաց) ԶԷԳ յայլ ԸԺ տեղաց Ե չիք այլ 9—10 Դ ոչ էր օրէն ԱԲԵԸԷԹԺԻԽԿՀՏ^3 զայն ճանապարհ երթալ (Է երթեալ) 10—11 ԱԳԵԸԹԺԻԽՀՏ^2 գունդս Տ^2 չիք զազատ Ժ զազատորդիս 11 ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՏ^1 զոտանիկ AՏ^{2}Տ^3 զոստանիկ 12—13 Լ յաշխարհին Բ Լբնաց ԴԼ և որ ևս յայլ կողմանց ԴԼԾVՏ^1 և մերձ ի կողմանց ԶԷ ի կողմանս Խ չիք կողմանց 14 ԴԼԾՏ^1 և ի հռոմայեցոց աշխարհէն Ա յաշխարհն 14—15 չիք և ի Կորդուաց և ի Ծաւդէ ԳԵԴԹԺԼԾԿՀ չիք և (ի Կորդուաց) ԲԹԻ և ի Հռոմոց աշխարհն. ի Կորդուաց և ի Ծօդէ և յԱզնարազոն Ա և յԱզնարազոն ԴԼԾՏ^1 Գիլաց, Ծաւդէից և յԱրզնարազոն ԶԷ յԱրզնարզիոն Է Զօդէիցն ԶԷAՏ^3 Գդացն փխ Դասն ԱԲԹԻ չիք ի Դասն և AVՏ^3 յԱրզնարզին ԳԵԸԺԽԿՀՏ^2 ի Դասն և ի Ծաւդէ և յԱզնարազոն Խ չիք ամենեքեան 15—16 ԱՏ^2 հաւատացեալք և մկրտեալք ի մի կաթողիկէ և ԲԳԴԵԸԹԺԻԼԽԾԿՀՏ^1 հաւատացեալք և մկրտեալք ի կաթողիկէ և A չիք և մկրտեալք 16 ԱԻ և յառաքելական ԳԵԹԺԽԿՀՏ^2 և առաքելական A չիք և 17 Խ ոչ իմացեալ 18 Է խաղային գնային Ը յաշխարհաց AՏ^3 և աներկրամ խնդութեամբ (և տիրասէր) ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԾՀՏ^{1}Տ^2 չիք և աներկրամ խնդութեամբ 19—20 Լ խորհրդով ԱԲԳԴԵԸԹԺԼԽԿՀՏ^2 կատարել A կատարեալ Տ^3 կատարեալք ԶԷV կատարեալք զպատուազինութեան (է վրան ուղղած Լ զսպաս զինուորութեան) ԲԴԼԾՏ^1 զպարտս փխ զսպաս ԳԿԸՏ^2 զինուորութեանն Բ վարուք Դ վաստակաւք AՏ^3 վաստակովք փխ հաւատովք ԱԳԵԸԹԺԻԼԾԽՀՏ^{1}Տ^2 հաւատովք 20—21 Դ և փխ ևս A չիք զաստուածային ԱԲԴԵԸԶԷԹԺԻԼԾԽՀՏ^{1}Տ^2 զաստուածային զսուրբ (ԲԴԸԽՏ^2 սուրբ) կտակարանսն Կ զաստուածային կտակարանսն A կտակարանս V բազում սուրբ 21 ԲԴԶ բազմագունք քահանայիւք AՏ^{2}Տ^3 բազմափոյն քահանայիւք Գ բազմագոյն (այս Գ ձեռագիրը գրում է նաև սստակայապաք, նորայ, նոցայ, նոքայ. Այլևս չենք նշանակում)։

սում եմ։

«Մենք մտքներումս դրել ենք անպատճառ⌈վերկենալ-գնալ Արևելքի աշխարհը, աստվածների օգնությամբ մեզ ենթարկել Քուշանների տերությունը. դուք հենց որ այս հրովարտակը տեսնեք, շուտով առանց ուշացնելու այրուձի ժողովեցեք՝ ինձանից առաջ, ներկայացեք ինձ Ապար աշխարհում»[19]։⌋

⌈Այս պատճենի համաձայն հրովարտակ հասավ Հայոց, Վրաց և Աղվանից[20] և Լփնաց[21], Ծավդեից,[22] և Կորդվաց,[23] Աղձնյաց[24] աշխարհները և շատ ուրիշ հեռավոր տեղեր, որոնք առաջ պարտավոր չէին այն ճանապարհը գնալ։⌊Զորք էր ժողովում Մեծ Հայքից ազնվականներին և ազատորդիներին և թագավորական կալվածներից ոստանիկ մարդկանց. նույն օրինակով Վրաց, Աղվանից և Լփնաց աշխարհներից, և հարավի զանազան կողմերից՝ Տաճկաստանի[25] և Հռոմների աշխարհի սահմաններին մոտիկ, և Կորդվաց և Դասն և Ծավդեից և Արզնարզյուն[26] [երկրներից], որոնք բոլորն էլ հավատում էին մի կաթողիկե առաքելական եկեղեցուն և մկրտված էին։

⌈Եվ անմեղությամբ չիմանալով թագավորի խարդախ միտքը՝ յուրաքանչյուրը իր երկրի զվարթությամբ և տիրասեր խորհրդով ելան-գնացին, աներկբա հավատով կատարելով [իրենց] զինվորական ծառայությունը։ Իրենց հետ վերցրին նաև աստվածային սուրբ կտակարանները շատ պաշտոնյաներով և քահանաներով։ Բայց հրաման տվին ի-

տուեալ աշխարհի՝ ոչ իբրև յակնկալութիւն կենաց, այլ իբրև ի վճարումն վախճանի, յանձն առնելով միմեանց զոգիս և զմարմինս։ Զի թէպէտ և խորհուրդ թագաւորին չէր յայտնեալ նոցա, սակայն կարծիք ի մտի էին ամենեցուն. մանաւանդ իբրև քննեալ տեսանէին զզօրութիւնն Յունաց առաջի նորա, յոյժ հարեալ խոցեցան ի խորհուրդս իւրեանց։

Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն ի Պաւղոսէ, եթէ «Ծառայք, հպատակ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց. մի՛ սուտակասպասք և առաչս աչառելով. այլ սրտի մտօք ծառայեցէք իբրև Աստուծոյ և մի՛ իբրև մարդկան. քանզի ի Տեառնէ է հատուցումն արդար վաստակոց ձերոց»։

Եւ այսու ամենայնիւ բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ և յանձն եղեալք սուրբ Հոգւոյն, յանդիման լինէին՝ փութով կատարեալ զհրամանն, և զամենայն արարեալ ըստ կամաց նորա։ Յոյժ ուրախ լինէր թագաւորն, իբր այն եթէ կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա առնէր ընդ նոսա զայն ինչ, զոր պաշտօնեայքն ամբարշտութեան նորա խրատեցին։

Ապա իբրև ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց, որք սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ևս ուրախ լինէր առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երեսս թաքուցանէր զկամս մտաց իւրոց, և ակամայ առատապէս պարգևէր զնոսա։ Խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն. և զերկեամ մի կռուեալ՝ ոչ ինչ կա-

---

1—2 Է յաշխարհի ԲԴ ակնկալութիւն Ըն չիք յակնկալութիւն կենաց, այլ ԴՁԷՎ չիք ի Հ զվճարումն 2—3 ԲԴ չիք միմեանց է զմիմեանց ԱԳԵԸԺԻԿՀS^1S^2 զոգի և զմարմին ԹԼԾ զհոգի և զմարմինս ԲԴ զհոգիս ԴՀ չիք և (խորհուրդ) AS^3 զոգիս և զմարմինս 4 ԲԴ կարծիքն ԱԵԸԹԺԻ ունէին փխ էին 5 Դ էր փխ էին ԲԳՁԷԿAS^3 տեսին ԱԲԻ զզօրութիւն Դ զզօրութիւն յունացն 5—6 Ըն խոցան ԲԴ ի սիրտս փխ ի խորհուրդս 7 Դ ցի փխ քանզի S^3 պատուիրանապանք ԴԸ ի սուրբ Բ կտակարանաց 8 ԱԳԵԸԹԻԺ ԼԾԿՀ ԲԷ փխ եթէ 9—10 ԱԳԵԸԹԺԻԼԽԾԿՀS^1S^2 հպատակ լերուք AS^3 հնազանդ լերուք ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀS^2S^3 սուտակասպասք ԲԴ սուտակասպաս աչառելով A սուտակասպաս 10—11 ԱԳԸԹԺԻԼԽԾԿՀS^1S^2 ծառայեցէք ԱVS^3 ծառայել ԵՀ ծառայեգեր (!) ԱԸԹԺԻԽՀ իբրև յԱստուածոյ Զե չիք իբրև (Աստուծոյ) 11 ԵԸԹԺԻԼԽԾՀS^1S^2 ցի փխ քանզի ԱԲԳԴԵՁԷ 12 ԸԹԺԻԼԽԾԿՀS^1S^2 արդար վաստակոց ձերոց AS^3 չիք արդար 13 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀS^2 Եւ այսու (Հ զայսու) ամենայնիւ AS^3 եւ ամենայնիւ այսու

րենց աշխարհում, որ կյանքի ակնկալություն չունենան, այլ իրենց վախճանին [սպասեն], հանձնարարելով միմյանց իրենց հոգիներն ու մարմինները։ Որովհետև թեպետև թագավորի մտադրությունը նրանց հայտնըված չէր, բայց բոլորի սրտում էլ կասկած կար. մանավանդ երբ հույների զորությունն էլ ընկճված տեսան նրա առաջ, շատ խիստ խոցվեցին իրենց մտքերում։

Բայց որովհետև Աստծու սուրբ կտակարանների պատվիրանները պահող մարդիկ էին, շարունակ հիշում էին Պողոսի պատվերները, թե՝ «Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ո՛չ թե կեղծավորությամբ և աչառությամբ, այլ սրտանց ծառայեցեք ինչպես Աստծուն և ոչ ինչպես մարդկանց. որովհետև տիրոջից է լինելու ձեր արդար վաստակների հատուցումը»։

Այս ամբողջ բարեմտությամբ ուղևորվելով [իրենց] աշխարհից և իրենց հանձնելով սուրբ հոգուն, հրամանը շուտով կատարելով՝ ներկայացան, ամեն ինչ անելով նրա կամքի համաձայն։ Թագավորը շատ ուրախացավ՝ այն մտքով, թե իր կամքը կատարվեց. և ահա նրանց հետ վարվում էր այնպես, ինչպես խրատել էին նրա ամբարիշտ պաշտոնյաները։

Ապա, երբ թագավորը տեսավ բարբարոսների[27] գնդի ամբողջ պատրաստությունն ու բազմությունը, որոնք հոժարակամ եկել էին արքունի ծառայության, ավելի ևս ուրախանում էր իր մեծամեծների և զորքերի ամբողջ բազմության առաջ։ Արտաքուստ թաքցնում էր իր մտադրությունները և ակամա առատ-առատ պարգևներ էր տալիս նրանց։ Ելավ գնաց Հոնաց աշխարհի տերության վրա, որին Քուշանք են անվանում, և երկու տարու չափով կռվելով՝ նրանց ոչ մի վնաս հասցնել չկարո-

---

13—14 Բ յզարկեալք եւ յանձնեալ Դ յանձնեալք ԲԴ լինելով փխ լինէին 15 ԱԲԳԵԸ ԹԺԻԼԽԾԿՀS^1S^2 կատարել AS^3 կատարեալ ԱԳԵԸԹԺԻԼԽԾԿS^2 չիք և Բ և զամենայնն 16 Ըն յայնժամ փխ յոյժ ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԾԿՀS^2 իբրև ԱԳԴԵԸԹԺԻԼԽԾԿՀS^2 թէ է կամքն 17—18 Բ կարծեացն ԲԴ չիք ահա ԱԸԹ պաշտօնեայք ամբարըշտութեան էին և նորա խրատեցին ԴԵԸԹԺԼԽԾS^2 պաշտօնեայք (Գ ամարշտութեանն) 18 ԲԴԼԾS^1S^2 խրատեցին զնա 19 A Արդ փխ ապա Դ կազմութիւնն Ըն չիք կազմութիւն և 20 A գնդի ԲԴ բարբարոսացն 21 A չիք ևս AS^3 ուրախ եղև ի մեծացն 22 Ե բազմութիւն է զամենայն բազմութիւն ԲԳԹ զօրացն 23 ԱԲԳԵՁԷԸԺԻԼԽԾԿՀS^2S^3 մտաց ՃԿ1852 մտացն ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀ$S^1S^2S^3$ առատապէս A առաւելապէս ԲԴ պատուէր զնոսա և ի վերին երեսս թաքուցանէր զկամս մտաց իւրոց 24 A տէրութեանն Հ յունաց փխ Հոնաց 25 ԲԳԴ Քուշանսն ԳԿ անուանէին։

րաց ազգել նոցա։ Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլս փոխանակ նոցա առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ։ Եւ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն։

Եւ իբրև եւես, եթէ հաստատուն կացին Հոռոմք յուխտին իւրեանց, զոր եդին ընդ նմա, և դադարեցին խայլնդուրք ելանել ընդ պահակն Ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, և ի նեղ ևս էարկ զթագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա և յաջողեցաւ տէրութիւն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն տարուչանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք և գիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի, և խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ. պսակօք և պատուովք մեծարեաց զբազումս ի մոգաց և զբազմագոյնս ի մոգպետաց։ Ետ ևս հրաման յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զստացուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին։

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ապարթանէր ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան ըզբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երևէր իմաստնոցն, յանմահից իմն կարգի դնէր զինքն։ Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ ա-

---

1 Բ ազգ առնել փխ ազգել Լ արձակեաց ԱԴՆԸԹԺԻԼԽԾԿՀS^1 զմարդիկսն ԳՉVS^3 զմարձիկսն ԲէA Վ1852 զմարդիկսն 2 Դ և զայլսն առ իւր կոչել փոխանակ նոցա ՉէVS^3 և զայլսն փոխանակ նորա առ իւր կոչէ Դ տեղիսն A և զայլսն ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց Բ կոչեալ 3 Չէ չիք եւ Հ եւ այնպէս 3—4 ՉէV անդրէն Բ շինեաց բնակութեան Դ քաղաք շինեաց բնակութեամբ Ե բնակութեանն 4—5 ԱՆէԸԻԼԽԾS^2 ւէրութեան 5 ԲԴ ամի չիք թագաւորութեանն է ամն ԳՉէV թագաւորին փխ *թագաւորութեանն Կ թագաւորութեան Հ չիք իւրոյ 6—7 ԸԽS^2 թէ V Հոռմք Խ Ռոմք ԱէԻ ուխտին Թ ուխտին իւր 7—8 ԱԳՆԸԹԺԻԼԽԾԿՀ հայել ընդ որուք Բ դադարեցին ի զուրս ելանել* փխ *խայլնդուրք Չէ խայլընդուրք (է խայլընդուր.* ճետ ավելացրած է՝ *«սրս») Դ ի դրունս ելանել S^1 դադարեցին հայել ընդ պահակն S^2 դադարեցին հայել ընդ արիք 8—9 է ամենայն ԲԴԺ աշխարհն ԴS^3 արկ Ի չիք ի է բազում Հ յունաց (!) 10 ԱԲԳԴԵՉէԸԹԺԻԼԽԾԿՀS^{1}S^{2}S^3 գաւառս նորա և յաջողեցաւ տէրութիւն նորա (է յաջողեաց) A չիք և յաջողեցաւ տէրութիւն նորա 10—11 ՉէVS^3 աւետիս ԳԿ աւետաւորանս ԲԴ արձակեաց Ի առաքեցաւ ԲԴ ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ առ տարուչանս սպիտակ ցլաւք (Դ ցլովք) ՉVէ ցլաւք սպիտակաւք Հ չիք իւրոյ 12 Բ նոխազիւք ԱԲԳԵՉԸԻ դոհս ԲՉS^{2}S^3 կրակին 13* **Ննձն, օրի-**

ղացավ։ Հետո զինվորներին ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը և նրանց փոխարեն իրեն մոտ ուրիշներին կանչեց նույն պատրաստությամբ։ Եվ այսպես տարեցտարի սովորություն սահմանեց, և այնտեղ իր համար բնակության քաղաք շինեց, իր թագավորության չորրորդ տարվանից սկսած մինչև իր իշխանության տասնմեկերորդ տարին[28]։

Եվ երբ տեսավ, որ Հոռոմները հաստատ մնացին իրենց դաշինքին, որ դրել էին նրա հետ, և Խայլնդուրները[29] դադարեցին Ճորա պահակն[30] անցնելուց, և իր երկիրն ամեն կողմից խաղաղության մեջ է ապրում, և դեռ Հոների թագավորին էլ նեղն է լծել, որովհետև ավերեց նրա շատ գավառները, և իր թագավորությունը հաջող դրության մեջ է,— ավետավորներ ուղարկեց իր երկրի բոլոր տարուչանները[31], սպիտակ ցուլերով և գիսավոր նոխազներով առատացրեց կրակի զոհերը և միանգամայն անընդհատ դարձրեց իր պիղծ պաշտամունքը. մոգերից շատերին և մոգպետներից է՛լ ավելի շատերին մեծարեց պսակներով ու պատիվներով։ Նաև հրաման տվեց հափշտակել Պարսից աշխարհում գտնվող քրիստոնյաների ամբողջ ինչքն ու գույքը։

Եվ այսպես հպարտացավ, գոռոզացավ իր մտքում, սանձարձակորեն հոխորտում էր մարդկային բնությունից էլ վեր, ո՛չ միայն մարմնական պատերազմների գործերի մեջ, այլ ինքն իրեն հայրենի կարգի բնությունից մեծ մի բան էր կարծում. այդ պատճառով նա կեղծավորությամբ ինքն իրեն իր կարծիքով թաքցնում էր, բայց ինչպես նկատում էին իմաստունները, ինքն իրեն կարծես անմահների կարգն էր դասում։ Եվ

նակի Թիֆլիսի 1879 թ. տպագրությունը և Նռան Ննանեյով ուրիշները *խիտ* փխ *խիտ առ խիտ ԱՆԸԹԺԻԼԽԾՀS^{1}S^2 անդուլութեամբ ԲS^2 անդադար յըրութեամբ էՉS^3 անդադար* AՎ^{1852} *անդադարութեամբ է* չիք *և 13—14 ԱԹԺԻԼԽԾՀS^2 զպաշտօնն պղծութեան իւրոյ ԲԳՆէԸ զպաշտօնն պղծութեան* A *պղծութեանն ԵԸԼ պատուօք ԱԲԴՆԸԹԺԻԼԽԾS^{1}S^2 ի մոգուց (ԲԴԹԻ ի մոգուցն 15 ԱԳՆ զբազմագոյնսն ԱՆԸԹԺԻԽԿՀS^2 և հրաման ետ ևս ԳէS^3 ետ ևս հրաման ԼԾS^1 և ետ հրաման ևս* A չիք *ևս 15—16 ԱԳՆԸէԹԺԻԼԽԾՀS^2 յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից* AS^3 *յափշտակել զքրիստոնէից զինչս Դ զզանձս* փխ *զինչս 18 ԲԴ* չիք *բարձրացաւ V* չիք *ի միտս 18—19 ԱՆԸԹԺԻԽՀ ի վեր քան զմարդկան բնութիւն ընդվզեալ ապարթանէր* (լուսանցքում՝ *«հակառակէր»*) *19—20 ԲԴS^2 բնութիւնս անդր վազեալ ընթանայր ԳՉէԼԾԿS^1 անդր վազեալ ապարթանէր ԵԻ զմարդկան ՉէS^3 բնութիւնս Վ1852 բնութիւն* A *ապարատանէր ԲԴՉէVS^3 յիւր* փխ *յիրս ՉէVS^3 ի մարմնական Վ1852 յիրս 20—21 ԲԴ* չիք *ոմն Գ զբնութիւնն 21 Դ այնորիկ ԲԴ* չիք *կեղծաւորութեամբ 21—22 Ա թագուցանէր Դ ընդ* փխ *ըստ Խ* չիք *զինքն 22 Բ ընդ կարծեացն որպէս երևի ԱԳՆԸԹԺԻԽՀS^2 իմաստնոց Դ* չիք *երևէր իմաստնոցն ԴՉէ* չիք *և 23 Չ յանմահի ԲԴ յանմահի կարգ իմն դնէր զինքն V յանմահի հիմն կարգի դնէր զինքն Չ յիմն ԸԽ* չիք *կարգի ԲԴ և յոյժ ցասուցեալ էր Չէ* չիք *էր։*

նունն Քրիստոսի, յորժամ լսէր՝ թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ։

Եւ իբրև այսպէս օր ըստ օրէ ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդդէմ բանս եդ և ասէ. «Արքայ քաջ, դու ուստի՞ գիտես զայդպիսի բանս խօսել ըղՏեառնէ»։ Ետ պատասխանի թագաւորն և ասէ. «Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ»։ Ետ պատասխանի անդրէն պատանեակն և ասէ. «Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ. այլ յառաջ ես մատո զկարդացումն, և լսես անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումս, զվերացումն յերկինս, ըղնստելն ընդ աջմէ Հօր, զխոստումն երկրորդ գալստեանն՝ զհրաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց. զհամառօտ հատուցմունսըն արդար դատաստանին»։ Իբրև լուաւ զայս թագաւորն, ի խոր խոցեալ՝ վեր ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ. «Այդ ամենայն խաբէութիւն է»։ Ետ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. «Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր չարչարանքն նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա»։

Եւ զայս լսելով թագաւորին՝ բորբոքեցաւ իբրև զհուր հնոցին ի Բաբիլոն, մինչ և ինքն իսկ անդէն դեռ ևս իբրև զքաղդէացիսն այրեցեալ լինէին։

Յայնժամ զբոլոր բարկութիւն սրտմտութեանն եհեղ յայրն երանելի, որում անուն էր Գարեգին։ Կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ ի չարչարանս, և հանեալ ի բաց զաէքրութիւնն ի նմանէ՝ ընկալաւ զվճիռ մահու։

---

1 ԲԴ ընդ անուն քրիստոնէութեան Գ անուն ԼԾ ընդ անուանն 1—2 Ձէ թէ Քրիստոս տանջեցաւ—և մեռաւ թաղեցաւ ԲԴ տանջեցաւ Քրիստոս, խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ և յարեաւ Ի չիք մեռաւ և Է և թաղեցաւ և յարեաւ Ծ չիք յարեաւ Հ չիք տանջեցաւ 3 ԲS^3 չիք եւ ԱԹԻ իբրև օրըստօրէ այսպէս ի սոյն միտս Դ չիք օր ըստ օրէ Դ ի նոյն ԱՆԸԹԺԻԽՀ դանդաչէր (լուսանցքում՝ «երկրայէր») ԲԴ իբրև այսպէս ի նոյն միտսն ցնորեալ դանդաչէր օր ըստ օրէ 4 ԲԴ մի ոմն ի մանկտոյն ԲԴ չիք Հայոց ԲԴ եդ ընդդէմ բանս 5 ԲԴ չիք դու ԲԳԴԵS^2 այդպիսի ԱԸԹԺԿ այդպիսի բանզ ՁVS^3 այսպիսի բանս Վ1852 զայդպիսի ԺԼԾՀԽ այդպիսի բանս Թ խօսիլ 6 ԿԹ ետ պատասխանի և ասէ թագաւորն 7 ՁV զգիրսն A մոլորութեանն ԱԳԵԸԹԺԻԼԽԾՀS^2 անդէն ԲԴ չիք անդրէն 8 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀS^{1}S^{2}S^3 պատանեակն A պատանին ՁէVS^{3}Վ^{1852} ընդէ՞ր ցարդ վայր, արքայ 9 ԲԴ այլես յառաջ մատո Թ և այլ յառաջ ես ԲՁS^3 զկարդացումնն 9—10 ԱԵԷԻ զյարութիւն, զյայտնութիւնն ԲԴԹS^2 և զյայտնութիւնն Դ և զյայտնութիւն ԼԾ և զյայտնութիւնն և զվերացումն V յարութիւն 10—11

սատիկ զայրացած էր Քրիստոսի անվան վրա, երբ լսում էր, թե տանջվեց, խաչվեց, մեռավ և թաղվեց։

Եվ երբ այսպես օրեցօր ցնորված տարուբերվում էր նույն մտքով, Հայոց երիտասարդ նախարարներից մեկն ընդդիմաբանեց նրան և ասաց. «Քա՛ջ թագավոր, դու որտեղի՞ց գիտես Տիրոջ մասին այդ բաները, որ խոսում ես»։ Թագավորը պատասխան տվեց և ասում է. «Հենց իմ առաջ կարդացին ձեր մոլորության գրքերը»։ Կրկին պատասխան տվեց պատանյակն և ասում է. «Թագավո՛ր, ինչո՞ւ մինչև այդտեղ միայն կարդալ տվիր. շարունակել տուր կարդալը, և այնտեղ կլսես հարությունը, շատերին հայտնվելը, երկինք վերանալը, Հոր աջ կողմը նստելը, երկրորդ գալստյան խոստումը՝ բոլորին հրաշալի կերպով հարություն տալով, արդար դատաստանի համառոտ հատուցումը»։ Երբ թագավորն այս լսեց, խոր խոցված՝ երեսանց ծիծաղեց և ասաց. «Այդ բոլորը խաբեություն է»։ Քրիստոսի զինվորը պատասխան տվեց և ասաց. «Եթե քեզ համար հավատալի են նրա մարմնավոր չարչարանքը, է՛լ ավելի հավատալի պիտի լինի քեզ համար նրա երկրորդ ահավոր գալուստը»։

Թագավորը այս լսելով՝ բորբոքվեց Բաբելոնի հնոցի[32] կրակի նման, այնպես որ մինչև անգամ յուրայինները ևս քաղդեացիների նման այրվում էին։

Այն ժամանակ ամբողջ բարկությունն ու զայրույթը թափեց այն երանելի մարդու վրա, որի անունը Գարեգին էր։ Կապված ոտներով ու կապված ձեռներով երկու տարու չափ հանձնվեց չարչարանքների և իշխանությունից զրկվելով՝ մահվան դատապարտվեց։

ր զնստեալն ԼԾ և զնստելն Ա ընդ յաջմէ ԱԲԴԵՁԷԹԺԻԿՀS^{1}S^{2}S^3 գալստեանն A գալստեան 12—13 ԵԹԻՀ յարութիւն ԳՁԷԿ չիք բոլորեցունց Խ զբոլորեցունց ԱԳԵՁԸԺԻԼԾՀS^{2}S^3 հատուցմունսն ԲԴէ զհատուցումն Դ չիք զհամառօտ V առնելով զհամառօտ հատուցմունսն A հատուցմունս 13 ԱԳԵԹԺԻԼԾԿ իսկ իբրև լուաւ 13—14 ԲԴ ի խոր խոցեցաւ վեր ի վայր ծիծաղելով ասէ ՁէVS^3 խոնարհեալ վեր ի վայր Թ խոցեցաւ ծիծաղեալ ՁէԹԿVS^3 չիք և Վ^{1852} ի խոր խոցեալ վեր ի վերոյ 14 AS^3 ամենայն այդ 15—16 ԲԴ չիք քեզ ԳԸԼԾS^2 հաւատարիմք 16 A չարչարանք S^2 չիք նորա 17 ԳԵԸԺԼԽԾ ԿՀS^{1}S^2 չիք ահաւոր ԳԴԸ գալուստ 18 Բ լուեալ թագաւորն Կ թագաւորն 19 ԱՁԷԹԻԿS^3 ի Բաբիլոն ԳԵԸԺԽՀS^2 ի Բաբելոն ԴՎ^{1852} Բաբելոնի A ի Բաբիլոնի 19—20 Բ մինչև ինքն իսկ անդէն իբրև զքաղդեացիսն այրեցեալ լինէր Գ մինչև ԴԼԾS^1 ինքն իսկ ԴԼԾS^1 չիք դեռևս ԴԼԾS^1 այրեալ լինէր ԹԻ մինչև ինքն իսկ անդէն դեռ ևս Թ լինէր 21 ԳԵԷԼԽԾՀ սրտմտութեան Բ ի յայրն 21—22 ԵՀ երանելին 22—23 Ձ անունն ԲԴԼԾS^{1}S եւ հրաման կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք 23 ԲԳԴԵԸԺԼԽԾԿՀS^{1}S^2 տուեալ 23—24 ԲՆԷՀ զաէքրութիւն 24 Գ ի նմանէն ԱԲԳԴԵՁԷԸԹԻԺԼԽԿՀS^{1}S^{2}S^3 ընկալաւ A ընդունէր Ը վճիռ Կ մահունն

ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ԻՐԱՑՆ ՊԱՏԱՀՈՒՄՆ ՅԻՇԽԱՆԷՆ ԱՐԵՒԵԼԻՑ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ ի բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպէս մեծ է ոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մըտաց քան զմարմնոց։

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռա-

---

Վերնագիր—*ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀVՏ^{2}Տ^3 Երկրորդ՝ գիրացն պատահումն յիշխանէն արևելից (Բ ի յիշխանէն ԶԷԸԽ յարևելից ԸԽ իշխանէն ԶԷ յերկրորդ Հ իրացն իշխանէն յԱրևելից Տ^3*A *իրացն) Տ^1 *Գլուխ Բ. երկրորդ՝ գիրացն պատահումն յիշխանէն արևելից 1 Լ ոգիք Ա թուլացեալք են ԲԴԹԼՏ^{1}Տ^2 թողացեալ 2 Բ անգեալ է Դ մարմնոյն ի մարմնաւոր ԲԴ հողմոց ԱԶԷԹV շարժին 3 ԱԶԷԹV խռովին ԳԵԺԼԽԿՀ* չիք *և Բ դողա 4 Ի անգիւտ ԱԶԷ կորուստ 4—5 Բ յղարկի ի մահուանն է յուղարկի ԳԼ ի մահուանն ԵԺՏ^2 մահուանն 5 Դ* չիք *և ԲԴԵԶԷԸԺԽ ի հնումն ԱԹԻ ի հնոյն Լ ասաց ի հնումն Հ ի հնում Տ^1* չիք *ոմն* A *ի հնոցն ԲԴ և մահ 6 Հ* չիք *մահ է, մահ իմացեալ 7 ԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի նմանէ* փխ *ի մահուանէ Ը երկնչի ի նմանէ V ի մահուանէն Կ զմահն Կ ոչինչ երկնչի ԱԶԻ ի մահուանէն* փխ *ի նմանէ ԲԴԵԸԹԺԻԼԽՏ^{1}Տ^{2}Տ^3 ի մահուանէ ԿՀՎ^{1852}*A

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԵՎԵԼՔԻ ԻՇԽԱՆԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած [նրանց] մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այդպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորստյան է մատնվում։ Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն։ Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում։

Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից։ Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից։ Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր։ Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից։

Եթե մեկը շատ ճոխացած լինի աշխարհական մեծությամբ, իսկ մտքով ավելի աղքատ լինի, այնպիսին ողորմելի է շատերից. ինչպես որ տեսնում էլ ենք ո՛չ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա մեջ, որ ամենից մեծն է։ Եթե թագավորը իմաստությունն իրեն աթոռակից

ի նմանէ 8 է չարիքս Ա մտան փխ *մտանեն Բ ի սիրտս* փխ *ի միտս Դ ի սիրտ մարդոյն ԶԷ մտանի (է* ուղղված է՝ *մտանեն) Տ^2 մարդկան 8—9 Բ յանուսմնութենէ 9 Կ տգիտութիւնն 10 ԽՏ^2 զրկէ ԲԴ* չիք *կատարեալ ԳԵԷԸԺԽԿՏ^2 կենացն ԲԷ զկոյր 11 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԿՀՏ^{1}Տ^2 ոգի* A*Տ^3 հոգի ԲԴ այնպէս ԲԴ տեսութիւն* փխ *տեսաւորութիւն Կ տեսութիւնն Բ զմարմնոյ Դ զմարմնոյն Գ մարմնոց 13 ԲԴԿ կարի որ Թ և եթէ կարի ոք ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2* չիք *կարի 14 ԲԴ աղքատագոյն է, ողորմելի է այնպիսին քան զբազումս ԵԺԸԼԽՀՏ^{1}Տ^2* չիք *այնպիսին ԳԵԸԼԽՏ^2 մտօք 15 Դ մարդիք ԵՀ մարդիկք ԱԲԳԴԵԶԷԹԺԻՏ^2 այլև որ Լ և որ Բ մեծ Դ մեծ է 16 ԱԹԻVՏ^3 որ* փխ *եթէ է թագաւոր որոյ չունի։*

կից իւր, որ կայէ ի վիճակին իւրում վայելուչ գոյ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՜րչափ ևս առաւել առ հոգևորսն։

Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս։ Թագաւոր ոչ զիւրն միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատճառք ի կորուստ։

Բայց մեք թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս, և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի։ Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ գանդաղիմ, ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով ոչ լռեցից։ Ոչ ի կարծ ընդոստուցեալ, և ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ ի տեղւոջն պատահեցի և տեսի և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ՝ զի՜ բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց։ Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, և ընդաճէր զմոգութիւնն և զքաղդէութիւնն և զամենայն ուսումնս աշխարհին իւրոյ։ Արկանէր ի ներքս և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, և ասէր զայրացեալ մտօք. «Հարցէք, քննեցէք, տեսէք՝ թող որ լաւն է՝ ընտրեալ կացցուք»։ Եւ փութայր որ ինչ ի մտին էր, զի վաղվաղակի կատարեսցէ։

Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն, որ ի զօրուն էին, իմացան զհուրն որ ի ծածուկ վառեալ բորբոքէր, և կամէր հրդեհել

---

1 Բ իւր փխ իւրում Դ ի վիճակին իւր վայելուչ կալ ԼS^1 կալ ԱՁԷԹԻVS^3 երկրաւորս Ը չիք առ 2 Ժ մարմնաւոր Բ այսպէս է ԱԵՁԷԸԹԺԻԼԽՀ$S^1S^2S^3$ հոգևորն ԲԴՎ1852 է, հոգևորսն ԳԿ հոգևորս A առ հոգևորսն 3 ԳԿ մարմնոյ Դ մարմնոյն ԵԸԼԽՀ մարմնոյն հոգին է S^2 մարդոյն հոգին Կ կենդանութիւնն ԲԴՀ հոգւոյ և մարմնոյ ԹԺ մարմնոյն և հոգւոյն 4 ԵԸԺԽՀ միտքն Բ կառավարք Դ չիք մի ԳԴԵԸԺԼԿՀS^2 այսպէս և 5 ԸԺԼԽS^2 թագաւորն ԱԲԳԴԵՁԷԹԻԼԽԿՀVS^3 ոչ միայն զիւրն միայն տացէ (ԲԳԴԵԼԽ չիք միայն) ԵՀ զպարտիս ԳԵԸԼԽԿՀS^2 Վ^{1852} A զիւր 6 Բ եղեն պատճառս կորստեան ԴԵԸԺԼԽԿՀS^2 եղեն Դ պատճառ կորստեան 7 ԲԴS^2 չիք մեք ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀS^1S^2 չունիմք ԲԴS^2 իշխանութիւն փխ հրաման ԲԴ զիշխանսն ԳԵԸԺԼԽԿՀS^2Վ^{1852} զիշխանս A զիշխանսն բայց (և ոչ գովողք) 8—9 ԱԵԳՁԷԸԹԺԻԼԽԿՀV$S^1S^2S^3$ աստուածամարտ լինին (ԳԷԿ լինի) ԲԴ աստուածամարտն կամին լինել (Դ աստուածամարտքն) Բ արդ փխ այլ 9 ԱԹԻ զանցս իրացս Հ զանցսն իրացն ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽՀ S^2S^3 պատմեմ Վ^{1852} A պատմեմք Դ ի նմանէն S^2 որ յիւրմէ փխ որ ի նմանէ 10 ԱԲԴՁԷԹԻVS^3 անցանէր ԲԴ չիք և Դ չիք ոչ Լ գանդաղիմ փխ գանդաղիմ S^1 գանդաղեմ Բ բամբասասէր փխ ոչ բամբասասէր 11 ԱՁԹԻ զելան ԲԴ ասել զելս իրացն ոչ լռեցից Դ չիք ասելով ԵՀ լռեցի 11—12 Թ ընդոստուցեալք 12 Բ և ի լռու փխ և ոչ ի

չունի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել։ Իսկ եթե մարմնավոր բաների վերաբերմամբ այսպես է, որքա՜ն ավելի ևս հոգևոր բաների վերաբերմամբ է։

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է. և ինչպես որ մի մարդու վերաբերմամբ է, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ։ Թագավորը միայն իրեն համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել։

Բայց մենք թեպետև թույլտվություն չունենք բամբասելու իշխաններին, բայց չենք՝ էլ կարող գովաբանել մի մարդու, որ աստծու դեմ է կռվում։ Այլ կպատմեմ անցքերն ու դեպքերը, որ նրա ձեռքով անցան սուրբ եկեղեցիների գլխով, և չեմ դանդաղի. գործերի ընթացքը ո՛չ թե բամբասասեր մտքով, այլ ճշմարտությամբ պատմելուց չեմ դադարի։ Ո՛չ կարծիքներով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս անձամբ նույն տեղում պատահեցի, և տեսա ու լսեցի հանդգնաբար խոսելու ձայնը. ինչպես սաստիկ քամին ալեկոծում է մեծ ծովը, այնպես էր շարժում ու տարուբերում իր զորքերի ամբողջ բազմությունը։ Եվ բոլոր ուսմունքների հանդիսավոր քննություն էր կատարում, կշռադատում էր մոգությունն ու քաղդեությունը[33] և իր աշխարհի բոլոր ուսմունքները։ Կեղծավորությամբ մեջ էր բերում նաև քրիստոնեությունը և ասում էր զայրացած. «Հարցրե՛ք, քննեցե՛ք, տեսե՛ք. որը լավն է՝ թող այն ընտրենք ու պահենք»։ Եվ ջանք էր գործ դնում, որ իր մտադրությունը շուտով կատարի։

Իսկ զորքի մեջ եղած զանազան կողմերից եկած քրիստոնյաները հասկացան այն կրակը, որ ծածուկ վառվում-բորբոքվում էր և ուզում էր լեռներն ու դաշտերն առհասարակ հրդեհել։ Նրանք էլ կրակ կորե-

---

լուր Դ չիք և ոչ ի լուր 12—13 S^3 չիք անձամբ S^1 չիք և տեսի V անձամբ ի տեղւոջն ԱԲԴՁԷԹԻ չիք անդէն ԲԴ պատահեցա 13 ԵԸԺԼԽS^2 բարբառոյն 14 ԴS^2 խօսելոյ ԱԵԸԺԼԽS^1 զհողմն ԳԴԿ հողմ Դ որ փխ զի ԵԳԸԺԼԽԿՀS^1S^2 բախեսցէ 15 Խ ամենայն ԲA զօրացն 16 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀS^2S^3 ընդաճէր A անդաճէր ԱԲԴՁԷԹԻS^3 զամենայն մոգութիւնն 16—17 A զմոգութիւն և զքաղդէութիւն ԳԵԸԺԼԽԾԿՀA չիք զամենայն ԼS^1 չիք և զքաղդէութիւնն 17—18 ԲԴ և արկանէր Ա ի ներս 18 ԳԴԷԸԺԼԿS^2 քրիստոնէութիւնն Հ չիք «և զամենայն ...զքրիստոնէութիւն» 19 ԲԴ տեսէք քննեցէք Ի չիք տեսէք Բ լաւ է՝ ընտրեալ 19—20 Ի և կայցուք Բ և փոյթ ի մտի կայր Դ որ ի մտին կայր ԱՁԷ թէ փխ զի 20—21 ԱԳԵՁԷԺԻԼԽԿՀ$S^1S^2S^3$ կատարեսցէ ԲA Վ1852 կատարեսցի Թ թէ վաղվաղակի կատարեցէ 22 ԲԴ իսկ քրիստոնեայքն որ ի կողմանց կողմանց Ե քրիստոնեայքն 23 Վ^{1852}A զհուրհուրցն փխ զհուրն A ծածուկ Թ բորբոքիւր։

զլերինս և զդաշտս առհասարակ։ Զհուրն և նորա անծախական հրովքն, և սաստկապէս պատրաստեցան առ ի փորձութիւն զաղտնի մեքենայիցն։

Սկսան այնուհետև բարձր բարբառով, սաղմոսիւք և երգովք հոգևորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանել. և աներկիւղ առանց զանգիտելոյ՝ ո՛ք և երթայր առ նոսա, ուսուցանէին կամակար։ Եւ Տէր յաջողէր նոցա նշանօք և արուեստիւք. քանզի բազում հիւանդք ընդունէին զբժշկութիւն ի հեթանոսական զօրուէն։

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն, և պատրաստեալ հուրն՝ մինչև ուրուք ի նա փչեալ՝ վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն. և անբժշկական վէրս յաչս և ի մարմինս տեսանէր։

Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գեղոյր, գլորէր, տապալէր երկդիմի մտօք և զխորհուրդս կամացն կամէր կատարել։ Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր,— վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա,— սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակէր ի միմեանց։

Թէպէտ և ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյնս յաստուածպաշտութեան, մանաւանդ որք էին յազգէ

1—2 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ջեռնուին ԱԲԳԵԶԷԸԹԺԻԼԽԿՀՏ^{2}Տ^3 հրովն A հրով   2 ԱԶԷԹԻՏ^3 ի փորձութիւն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Վ^{1852} առ ի փորձութիւն Դ փորձութիւնսն A չիք ի   4 ԱԹԻ չիք և (երգովք)   5 ԲԴԷ չիք և (մեծապայծառ)   6 Դ բանակին մեծի ԱԳԵԶԷԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Տ^3 զպաշտօնն ցուցանէին A ցուցանել ԲԴ կատարել փխ ցուցանել ԲԴԸԺՏ^1 չիք և ԵԸԼԽՀՏ^2 աներկիւղ և   7 Դ որք փխ ո՛ք Է և ո ոք Հ որ երթայր   8 ԴԻ աջողէր Ի նշանիւք ԲԴ հիւանդք և ախտաժէտք   9 ԱԳԵԶԷԸԹԻԼՏ^{1}Տ^{2}Տ^3 ի հեթանոսական զօրուէն Խ զօրութենէն փխ զօրուէն ԲԴՎ^{1852}A զօրուն   10—11 Դ խորամանկութեան Լ խորամանկութիւնն   11 ԱԶԸԹԻԽՏ^3 խորհրդոցն ԲԴ նորա խորհրդոցն Վ^{1852}A խորհրդոյն ԱԹ պատրաստել   12 ԱԴԷՎ երկիւղածաց   13 ԵԸԺԼԽՀՏ^{2}Տ^1 չարութեան իւրոյ   14 ԱԶԷԻԹՎ ի հոգիս և ի մարմինս Բ ի յոգիս Գ ի մարմինսն Թ տեսանեմ   15 Բ մերթ թշնամանէր մերթ գալարէր ԱԲԳԵԶԸԺԻԼԽՀՏ^{2}Տ^3 թիւնաւոր A թունաւոր   16 Խ գալարէր փխ գոչէր ԱԶԷԹԻՏ^3 գեղոյր գլորէր տապալէր Բ գեղոյր տապալէր Դ գլորէր տապալէր AՏ^{2}Վ^{1852} գեղոյր և տապալէր   17 ԲԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և զխորհուրդս A չիք և (զխորհուրդս) ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 կատարել կամէր   18 ԳԿ չկարէր փխ ոչ կարէր ԲԴ քանզի փխ վասնզի   18—19 Հ ի մի վայրի Դ առ նա   19 ԱԴԵԶԷԸԹԺԻԼԽՏ^{2}Տ^3 զկրսերս ԲԳA զկրտսերս   20 Թ յաւագացն Ի աւագաց ԲԴ ի գիտնականաց   21 ԲԴ թուեցից ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 թուեմ (Լև թըւեմ)   21—23 Բ չիք այլ ԱԶԷԹԻՏ^3 այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր Բ անարժանս արժանաւորս յետս մատուցանէր ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 անարժանս արժանաւորս (Տ^2 զանարժանաւորս) (Ըև զարժանաւորս) A չիք զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն   24 ԱԳԵԶԷԸԹԺԻԼԽԿՀՏ^{2}Տ^3 թէպէտ և A և թէպէտ ԲԴ չիք և Ըև չիք ամենայն   24—25 ԲԴ զայս անկարգութիւնս, առաւել ևս Թ զանարգարութիւնս ԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 բայց առաւել   26 ԲԳԴԵԸԹԺԼԽԿՀՏ^2 ջերմագոյն ԳԴ յաստուածպաշտութեան ԵԸԺԼԽՀՏ^2 յաստուածպաշտութիւնն ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք մանաւանդ A նախարարաց

ցին անմարելի հրով և սաստկապես պատրաստվեցին գաղտնի որոգայթների փորձության դեմ։

Այնուհետև սկսեցին բարձրաձայն, սաղմոսներով ու հոգևոր երգերով և մեծապայծառ վարդապետությամբ [իրենց] պաշտամունքը կատարել մեծ բանակի դեմ հանդիման, և աներկյուղ ու անվախ համարձակությամբ սովորեցնում էին իրենց մոտ եկող մարդկանց։ Եվ Տերն էլ հաջողում էր նրանց [գործը] զանազան հրաշքներով, որովհետև հեթանոսական զորքից շատ հիվանդներ բժշկվում էին։

Իսկ անօրեն իշխանը երբ իմացավ, թե հայտնվեց [իր] խորամանկ մտադրությունը, և պատրաստված հուրը՝ դեռ ոչ ոք նրա վրա չփչած՝ նրա վառվելը հայտնի դարձավ աստծու երկյուղածներին. սկսեց ծածուկ նետերով խոցոտել իր չար միտքը և անբուժելի վերքեր էր պատրաստում հոգիների և մարմինների համար։

Մերթ շանթում՝ գալարվում էր ինչպես մի թունավոր օձ, մերթ ձգվում՝ մռնչում էր ինչպես զայրացած առյուծ, ճմլվում ու թապլտկվում էր խարդախ մտադրությամբ և կամենում էր իր կամքը կատարել։ Քանի որ ձեռքը ձգել և բռնել չէր կարողանում,— որովհետև ամենքը միատեղ չէին նրա մոտ միևնույն վայրում,— այնուհետև սկսեց առաջ քաշել կրտսերներին ավագների միջից, և անարգներին պատվականների միջից, և տգետներին գիտունների միջից, և վախկոտներին քաջ մարդկանց միջից. և էլ ի՞նչ մեկ-մեկ թվեմ, բոլոր անարժաններին առաջ էր քաշում, իսկ բոլոր արժանավոր մարդկանց հետ էր տանում. մինչև անգամ հորն ու որդուն բաժանում էր միմյանցից։

Թեպետև բոլոր ազգերի վերաբերմամբ էր այս անկարգությունն անում, բայց ավելի Հայոց աշխարհի դեմ էր մարտնչում. որովհետև նրանց ավելի ջերմեռանդ էր տեսնում աստվածպաշտության մեջ մանախարարացն Հայոց, և անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից։ Պատրէր զոմանս ի նոցանէ ոսկւով և արծաթով, և զբազումս այլով ևս առատ պարգևօք. իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ դեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք։ Եւ այլ ևս սնոտի յոյս ոգւոց առաջին զընէր և այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ. «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք, և զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցջիք ի ճշմարտութիւն երեւելի մերոց դից օրինացս, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաւասար իմոյ սիրելի նախարարացս, և առաւել ևս զանցուցից»։ Եւ այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ, զի խորամանկութեամբ որսալ մարթասցէ զնոսա ըստ առաջին խորհրդականացն խրատուց։ Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէն մինչև մետասաներորդ ամն իւրոյ տէրութեանն։

Եւ իբրև ետես եթէ ոչինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմքն յոլովագոյն գործէին,— քանզի տեսանէր զքրիստոնէութիւն, որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր,— սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոց հանել։ Յայտնեաց ակամայ ըզծածուկ խորհուրդն. ետ հրաման բարձր բարբառով և ասէ. «Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ դադարեսցեն յիւրաքանչիւր մոլոր օրինաց, և միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով և աստուած անուանելով, և

1—2 ԲԴ ունէին զքրիստոնէութիւնն, զսուրբ քարոզութիւնն զսուրբ առաքելոցն և զմարգարէիցն ԳԵԸԺԼԽԿՀՏ^2 զքարոզութիւն չիք զսուրբ ԳԵԸԺԼԽՀՏ^2 առաքելոց և մարգարէից ԷԹ զմարգարէիցն 2 ԱԲԳԴԵՁԷԺԾԿՀ պատրէր ԹԻ պատուէր ԸԽ պարտէր Լ պատրաստէր Ծ պատրէր 3 ԲԴ այլովք առատ Դ չիք ևս ԸԽ այլևս 4 ԱԳԸԹԿՏ^{1}Տ^2 գեղիւք։ չիք զոմանս 4—5 ԲԴԵԸՀ պատուով և իշխանութեամբ ԳԸԹԿ իշխանութեամբ ՁԷԹԻԿ չիք զոմանս ԸԹԼԽՀՏ^2 և զոմանս ԳԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 մեծամեծիւք Ծ պարգևօք և մեծամեծիւք և այլ ևս սնոտի իսկ զոմանս ագարակօք 5 ԱԲԴՁԷԹԻՎՏ^3 սնոտի յուսովք ոգւոցն Վ1852 ոգւոց 6 ԲԴ և այսպէս հրապուրելով յորդորէր Խ չիք և (յորդորէր) Հ չիք և այսպէս 6—7 Դ ասէ՝ եթէ միայն 7 Ի զօրէնսն Կ մոգութեանս Դ կալջէք Խ և զձեր սրտի մոլորութիւնդ 8 ԱԲԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Տ^3 դարձուցջիք ԱՎ1852 դարձուցանիցէք Դ դարձուցէք Ա երեւելի ԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԿՏ^{2}Տ^3 յերևելի մերոյ ԱԲՁԷՎՏ^3 դից օրինացս Դ դիցն օրինացն Թ դիցն օրինացն Ի դից օրինացն Հ դիցազնական ԳԵԸԺԼԽԾԿAՏ^{3}Վ1852 դիցազնական փխ դից 9 ԵԸԼԽՀՏ^2 ի մեծութիւն Դ չիք և ԵԸԺԼԽՀՏ^2 հասուցից զձեզ 9—10 Բ յաւագութիւնս հաւասար իմոց սիրելեացդ հասուցից և առաւել ևս Դ հաւասար իմոց սիրելի նախարարացն հասուցից 12—13 ԲԷ խորամանկութեամբ ԲԴ կա-

նավանդ նրանք, ովքեր Հայոց նախարարների տոհմից էին և միամտությամբ պահպանում էին առաքյալների և մարգարեների սուրբ քարոզությունը։ Նրանցից ոմանց խաբում էր ոսկով ու արծաթով և շատերին էլ ուրիշ առատ պարգևներով. ոմանց էլ ագարակներ ու մեծամեծ գյուղեր [շնորհելով], ոմանց մեծամեծ պատիվներով ու իշխանություններով։ Եվ ուրիշ դատարկ հույսեր էլ էր տալիս նրանց։ Եվ այսպես հրապուրում ու հորդորում էր շարունակ. «Եթե միայն, ասում է, մոգության կրոնը հանձն առնեք և ձեր մոլորությունից սրտանց դառնաք մեր երևելի կրոնի ճշմարտությանը, մեծությունների և ավագությունների կհասցնեմ [ձեզ] իմ սիրելի նախարարներին հավասար, և է՛լ ավելի կբարձրացնեմ»։ Եվ այսպես կեղծավորությամբ խոնարհվում էր ամենքի մոտ՝ խոսելով նրանց հետ սիրո պատրվակով, որպեսզի կարողանա նրանց խորամանկությամբ որսալ՝ խորհրդատուների առաջին խրատի համաձայն։ Եվ այս բանն անում էր իր իշխանության չորրորդ տարուց սկսած մինչև տասնմեկերորդ տարին։

Եվ երբ տեսավ, որ ծածուկ հնարագիտությունը բանի տեղ չանցավ, այլ դիմացիններն ավելի շատ էին գործում,— որովհետև տեսնում էր, որ քրիստոնեությունն օրեցօր աճում-տարածվում էր հեռավոր ճանապարհի այն բոլոր կողմերը, որոնցով ինքն անցնում էր,— սկսեց հալումաշ լինել և հառաչելով հոգոց հանել։ Ակամա հայտնեց գաղտնի մտադրությունները. բարձրաձայն հրաման տվեց և ասաց. «Իմ իշխանության ներքո գտնված բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն [իրենց] մոլար կրոններից և գան երկրպագություն անեն միմիայն արեգակին, զոհեր մատուցելով և աստված անվանելով [նրան], և սպա-

---

րասցէ փխ մարթասցէ Լ մարթեսցէ ԱՁԷԹԻՏ^3 չիք զնոսա ԱՁԹԻՎՏ^3 խորհրդեան խրատուցն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{2}Վ1852 խորհրդական խրատուցն Է խորհուրդն խրատուցն 14 ԱԲ ԴՁԷԹԻՎՏ^3 չիք սկսեալ ԱՁԹԻ ամի ԲԴ չմետասան ամ (Դ ամին) է ամ 14—15 ԸԼԽՏ^2 մետասան A տէրութեան 16 Դ չիք եւ ԳԿ թէ Բ յարգեցաւ Ե հնարագիտութիւն 17—18 ԱՁԹԻՏ^3 ընդդէմք Դ ընդդէմ ԲԴ յոլովագոյնք ԳԴԺ զքրիստոնէութիւնն ԷԸ քրիստոնէութիւնն 18 ԴԸԺԼԽՏ^{1}Տ^2 յորդորեալ 19 Բ հեռաւորս 19—20 Բ հալել մաշել հառաչելով Դ չիք եւ և 20 Թ ոգւոց Խ հոգւոց Հ հոգոց ԲԴ ապա յայտնեաց Թ յակամայ 20—21 ԲԵԸԺԽՏ^2 զծածկեալ խորհուրդն Հ զծածկեալ խորհուրդն Դ խորհուրդս 21 ՁԷՎ չիք ետ հրաման բարձր բարբառով (է հետո ավելացրած է) Բ չիք և (ասէ) 22 ԱԲԳԴՁԷԹԻԿ ազգք ԵԺԼԽՀ լեզու ԹՁԷԻՏ^3 չիք են ԱԲԴ որ ընդ իմով իշխանութեամբ ԲԴ էք փխ են ԵԸԺԼԽՀՏ^2 իշխանութեամբ իմով 22—23 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԿՏ^{2}Տ^3 դադարեսցեն A դադարեսցին 23 ԲԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 մոլար օրինացն և միայն 23—24 է երկրպագութիւն ԴԹ արեգականն է չիք և աստուած անուանելով ԸԽ աստուածս Լ չաստուած։

սպառ ունելով կրակի. և ի վերայ այսր ամենայնի և զմոգութեան օրէնս կատարելով, զի մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն։

Զայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին, և պատուէր սաստիւ ի վերայ դնէր ամենեցուն. և դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զդոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր։

Արդ ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Իտաղականի։ Զայս տեսեալ թագաւորին Քուշանաց՝ ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին, թաքստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք։ Իսկ սա ասպատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս, և կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն։ Եւ անդ այնուհետև յընդունայն եղեալ ի նոյն խորհուրդս՝ հաստատէր ի կարծիս մոլորութեան, ասելով ցըպաշտօնեայս ամբարշտութեանն. «Զի՞նչ հատուցուք մեք աստուածոցն փոխանակ այս մեծի յաղթութեանս, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ»։

Յայնմ ժամանակի առ հասարակ մոգք և քաւդեայք բարձին զձայնս իւրեանց միաբան և ասեն. «Աստուածքն որ ետուն քեզ զտէրութիւն և զյաղթութիւն ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ են կա-

---

1 ՋէԹԻS^3 չիք և (ի վերայ) ԿS^3 և զմոգութեան ևս 2 ԱԲԳ զեւ օրէնս ՋէԹԻ ևս օրէնս Դ կատարել ԱԳԵՋԷԸԺԼԽԿՀ$S^1S^2S^3$ զի մի՛ ինչ A չիք զի Բ զի մի՛ ամենևին ինչ Դ չիք զի մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն ԳԵԸԺԼԽԿՀS^2 չիք ամենևին ԹԻ զմի ինչ 3 ԳԵԸԼԽՀ առնելով փխ ասելով ԲԿՀ մեծ ԳԵԸԼԽS^2 ի մեծ 3—4 ԲԴS^1 սաստիկ Կ և պատուիրէր սաստիւ 4 ԸԽS^2 դնէր ի վերայ Բ ամենեցուն դնէր 4—5 Սոփայով առաքէր ԴԵԸԼԽՀS^1S^2 ընդ ամենայն ԵԷԸԺԼԽԿՀ դեսպան Ժ ստիպաւ արձակէր ընդ ամենայն 5 ԲԴ և զդոյն Ի զատն փխ զդոյն Կ զդոյն պատուիրէր և հրաման 6 Բ ակնարկէր Դ առաքէր ԸԽS^2 արձակէր փխ արկանէր 7 ԱՋV երկոտասաներորդի ամի թագաւորութեանն ԲԴS^3 երկոտասան S^3 թագաւորութեանն ԲԴ երկոտասան ամի տէրութեան 8 Բ գունդս ԱԲԳԴԵՋԷԸԹԺԻԼԽԿՀ$S^1S^2S^3$ կազմէր AՎ1852 գումարէր ԲԴ անհնարին փխ անհամար 9 ԱԲՋէԹS^2S^3 իտաղական ԳԵԸԺԻԼԽԿՀS^1 իտալական (Ժ այլ գրչով սկզբից ավելացրած է «Թ») Դ իտաղիական A Քիտաղական 10 ԱԲԳԹԺԻS^2S^3 ելանել ընդ առաջ նորա ԵՋԷԸԼԽԿՀ ելանել ընդ յառաջ նորա ԴՎ1852 ընդ առաջ նորա ելանել A ընդ առաջ ելանել նորա ԳԵԺ այլև 11—12 Ա թաքստեամբ ԲԴՎ1852 ապրէր ամենայն զօրօքն հանդերձ VS^3 չիք հանդերձ 13—14 ԱԻԾԼ վայրաց և զքաղաքաց կուտէր զգերին ԲԴ գաւառաց և վայրաց և տեղեաց Խ չիք զբազում Հ բազում ԲԴՋէԹԻ չիք առ-

սավորելով կրակին. բացի այս ամենից՝ մոգության օրենքներն էլ կատարեն, առանց որևէ բան պակաս թողնելու։

Այս ասելով՝ բարձրաձայն հրապարակում էր [հրամանը] մեծ բանակի մեջ և խիստ պատվեր էր տալիս ամենքին. և շտապով սուրհանդակներ էր ուղարկում բոլոր հեռավոր ազգերի մոտ, այդ նույն հրամանը հասցնում էր բոլորին։

Արդ, իր թագավորության տասներկուերորդ տարվա սկզբին անթիվ բանակությամբ զորք ժողովեց և հարձակվելով հասավ Իտաղական երկիրը[34]։

Այս տեսնելով Քուշանների թագավորը՝ չկարողացավ պատերազմի դուրս գալ նրա դեմ, այլ փախուստ տալով ամուր անապատի կողմերը՝ թաքչելով ազատվեց իր ամբողջ զորքի հետ։ Իսկ սա ասպատակ սփռեց գավառների, տեղերի, վայրերի վրա. առավ բազմաթիվ բերդեր ու քաղաքներ, հավաքեց գերիներ, կողոպուտ ու ավար և տարավ-հասցրեց իր իշխանության [տակ գտնված] երկիրը։ Եվահա այնուհետև նույն դատարկ մտադրության հետևից ընկած՝ հաստատվեց իր մոլար կարծիքի վրա, ասելով իր ամբարիշտ պաշտոնյաներին. «Ի՞նչ տանք մենք աստվածներին այս մեծ հաղթության փոխարեն, որ ոչ ոք չկարողացավ մեր դեմ պատերազմի դուրս գալ»։

Այն ժամանակ բոլոր մոգերն ու քավդեաները միաբերան իրենց ձայնը բարձրացրին և ասացին. «Աստվածները, որ քեզ տվին տերություն և հաղթություն քո թշնամիների դեմ, ամենևին կարիք չունեն քեզ-

---

նոյր զբազում բերդս և (է-ում հետո ավելացրած է) ԳԵԸԺԼԿՀS^2S^3 չիք և (կուտէր) Ե զգերի Դ զքաղաքս աւերէր կուտէր ՋԷ և զքաղաքաց կուտէր զգերին Բ զքաղաքս աւերէր կուտէր զգերին և զառ ԱS^2 զապուր ԳԵ զաւարն 14 ԲԴ ածեալ ՋԷ ածէր և հասուցանէր ԸԺԼԽՀS^1S^2 զաւարն հասուցանէր ածէր 14—15 ԱԲԴՋԷԹԻS^2S^3 յերկիրն ԵԸԺԼԽՀS^2 տէրութեան իւրոյ 15—16 ԲԴ ընդ նոյն ելեալ զնոյն խորհուրդ հաստատէր ԳԻԺԿՀS^1 ելեալ փխ եղեալ ԼԾ ընդունայն ելեալ 16—17 ԲԳԴԸԹԺԻԽՎ1852 մոլորութեանն։ ցպաշտօնեայսն 17 ԵԺ ամբարշտութեան ԲԴ չիք մեք 17—18 Ի յաստուածոցն Լ աստուածոց 18 A փոխարէնս ԴՎ1825 փոխարէն այսմ Կ այսմ մեծի յաղթութեան S^3 կարէ Վ1852 կարաց 19 Ա ընդդէմ Դ ընդդէմ մեր ելանել 20—21 Ա յայնմ ժամանակի միաբան մոգքն և քաւդեայքն բարձին զձայնս իւրեանց միաբան և ասեն ԲԴ յայնժամ միաբան մոգքն և քաղդեայքն ամբարձին զձայնս իւրեանց և ասեն ԲԻ միաբան փխ առհասարակ Վ1852 առհասարակ VS^3 մոգքն և քաւդեայքն ԵՋԷԸԹԺԻԼԽԿՀS^1S^2 քաղդեայք չիք միաբան VS^3 չիք միաբան Է զձեռս փխ զձայնս 21 ԲԴ ասեն արքայ Գ աստուածք 22 ԳԵԸԺԼԽՀ զտէրութիւնդ զայդ S^3 տէրութիւն ԲԴ զտէրութիւնդ ԲԴԵԸԺԼԽՀS^1S^2 և զյաղթութիւնդ է յաղթութիւն ԱԲԳԴԵՋԷԸԹԼԽԿՀS^2S^3 ոչինչ են կարօտ A Վ^{1852} ոչինչ կարօտ են բոտ խնդրել ի քէն յերևելի պատուականացս, այլ զի բարձցես զամենայն ուսմունս մոլորութեան մարգկան, և ի մի դարձուցես օրէնս զրադաշտական պատուիրանին»։

Հաճոյ թուէր բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առաջակայք օրինացն։ Խորհուրդ ի մէջ առեալ յաղթէր խրատն։

Անդէն ի ներքոյ Պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զՎրաց և զԱղուանից, և զամենեցուն՝ որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի։ Եւ հրաման սաստիւ դռնապանացն առնէին, եթէ որ յարևելս առ մեզ գայցէ՝ թողցեն, իսկ յարևելից յարեւմուտս անանց լիցի ճանապարհ։

Եւ իբրև արգել և փակեաց զնոսա յամուր և յանել դաստագիղն,— և յիրաւի ասացի ամուր և անել, քանզի չիք անդ տեղի փախուստի և թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ,— յայնմ ժամանակի ձեռն արկանէր ի նոսա, և մեծաւ չարչարանօք և պէսպէս տանջանօք վատթարէր զբազումս ի նոցանէ, և ստիպէր ուրանալ զճշմարիտն աստուած, և խոստովանել զերևելի տարերս։ Իսկ զօրականքն առ հասարակ գեղեցիկ խորհրդով, քաջապէս զօրութեամբ միաբան աղաղակէին և ասէին. «Վկայ են մեզ երկինք և երկիր, որ ոչ երբէք հեղգացեալ եմք յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան. ի զուր և անողորմ են հարուածքս ի վերայ մեր»։

Եւ բազմանայր գոչումն աղաղակի նոցա, մինչև ինքնին թա-

---

1 ԲԴ չիք յերևելի Դ ի պատուականացս Է պատուականս 2 ԲԴ ուսումն Ըե մարգկանն Ջ չիք ի Դ դարձուցանես 3 ԱՁԷԸԹԻ զօրէնս Թ յօրէնս ԲԳԴԺԼԿS^1S^2Վ$^{1-2}$ զրադեշտական ԵԽՀ զրադեշական (լուսանցում՝ բուն բան կամ կարևոր ուխտ) Ը զրադեշտական (լուսանցում՝ բուն բան կամ կարևոր ուխտ) Թ զրադաշտական (լուսանցում՝ բուն բան կ) 4 ԱՁԷԹԻS^3 թուեցաւ ԲԴ չիք առաջի 5 ԱՁԷԸԻVS^3 և մանաւանդ Թ չիք մանաւանդ Թ չիք որ էին ԱՁԷԸԹԻVS^3 առաջիկայք ԲԴ որք էին յառաջակայք ԻԴ չիք օրինացն 6 Խ խրատուն S^2 խրատոն 7 ԲԴ եւ անդէն Ըե չիք զբազմութիւն 7—8 ԲԴ այրուձիոյ զՀայոց 8 Ա Հայոց և զՎրաց ԳԵԸԺԼԿ չիք և (զՎրաց) ՁԷԻS^3 Վրաց ԹՀ Վրաց և Աղուանից Դ և զԱղուանից Թ ամենեցուն 9 ՁԷԹԻՏ չիք ի Կ ի մի ԱՁԷԹԻS^3 սուրբ աւետարանին ԲԴ զամենեսեան որք հաւատացեալ էին յաւետարանն ԲԴ չիք եւ (հրաման) ԵԸԺԼԽՀS^1S^2 և սաստիւ հրաման ԲԴՁԷԹ սաստիկ 10 ԲԴՁԷԹ$S^1S^2S^3$ ի վերայ դռնապանացն ԱԻ սաստիւ ի վերայ դռնապահացն ԱԲԴՁԷԸԹ թէ Ի թէ որ յարևելից ԱԲԴՁԷԽS^3 գայցեն 11 Դ իսկ որ Ը արևմուտս ԲԴ մի՛ լիցի ճանապարհ 12 ԲԴ փակեաց և արգել զնոսա յամուրսն Գ արգել փակեաց ԵԷԸԺԼԽԿՀ չիք և (փակեաց) ԳԵԸԺԼԽՀS^2 անել և ամուր ԳԵԸԺԼԽԿՀS^2 չիք և (յանել) 12—13 ԲԴ գաւառին փխ գաստագիղն (Դ յետոյ ունելացրած գաստագիղն) ՁԷV գաստագեղն Գ գամագիղն 13 S^3 որ ի յիրաւի ԱՎ1852 և յիրաւի Կ տեղի անդ 14 ԲԴ շուրջ Թ էին 14—15 ԱԴ բնակել փխ բնակեալ 15 ԲԴ յայնժամ ԱԲԳԴՁԷԸԹԺԻԼԽԿS^2S^3 և մեծաւ Ա չիք և ՀԵ և մեծամեծ փխ մեծաւ 16 Դ չիք և պէսպէս տանջանօք Դ ի նոցանէն 17 Ի զՔրիստոս ճշմարիտն աստուած է խոստովանէր 18 ԱS^3 տարերս ԵԸԺԼԽՀS^2 տարերքս Ը խորհրդովք 18—19 ԲԴ քաջապէս աղաղակէին միաբան և ասէին VS^2S^3 վկայեն S^3 չիք մեզ 20 ԲԴ զի ոչ ԳՁԷԹԻԿS^3 չիք որ Դ հեղգացեալ մեր։ չիք եմք է յարքունիս ԵԸԺԼԽՀ վաստակ 21 ԲԴ ոչ խառնեալ զքաջութիւն ընդ վատութիւն ԱԷՁԹ ընդ արութեան քաջութեան Գ արութիւնս Հ արիարութիւն փխ արութիւն 21—22 Ա ի զուր անողորմ են Ի զի զուր Կ զի զիւր(!) 22 ԳԵԸԺԽS^2 հարուածս 23 Դ գոչիւն Հ կոչումն և աղաղակ։

նից խնդրելու այս տեսանելի պատվական բաներից, միայն թե՛ մարդկանց բոլոր մոլար ուսմունքները վերացնես և [բոլորին] զրադաշտական կրոնին[35] դարձնես»։]

Այս խոսքին հավանեցին թագավորն ու բոլոր մեծամեծները, մանավանդ նրանք, ովքեր կրոնի առաջնորդներն էին։ Խորհուրդ արին, և այդ խրատը հաղթող հանդիսացավ։

Այնտեղ՝ Պահ դռան ներսում, արգելեց Հայերի, Վրացիների և Աղվանների և այն բոլորի բազմաթիվ հեծելազորը, ովքեր հավատում էին Քրիստոսի սուրբ ավետարանին։ Եվ դռնապաններին խիստ հրաման տվին, որ դեպի Արևելք մեզ մոտ եկողներին ներս թողնեն, իսկ արևելքից արևմուտք փակ լինի ճանապարհը։

Եվ երբ արգելեց ու փակեց նրանց ամուր և անել վանդակի մեջ,— և իրավացի ասացի ամուր և անել, որովհետև այնտեղ փախչելու և թաքչելու տեղ չկա, քանի որ չորս կողմը թշնամիներ են բնակվում,— այն ժամանակ գործի ձեռնարկեց նրանց վերաբերմամբ և նրանցից շատերին թուլացրեց մեծ չարչարանքներով ու պես-պես տանջանքներով, և ստիպում էր ուրանալ ճշմարիտ աստծուն և հավատալ տեսանելի տարրերին։ Իսկ զորականներն առհասարակ գեղեցիկ խորհրդով, արիասիրտ զորությամբ միաբան աղաղակում էին և ասում «Վկա են մեզ երկինքն ու երկիրը, որ երբեք չենք ծուլացել արքունի ծառայության մեջ և ոչ էլ վախկոտություն ենք խառնել [մեր] արության ու քաջության հետ. զուր և անողորմ են մեզ վրա [տեղացող] այս հարվածները»։

Եվ այնքան շատացավ նրանց գոռում-գոչումի ձայնը, մինչև որ ինզաւրն ականատես լինէր իրացն յանդիմանութեան, և անդէն վաղվաղակի երդմամբ հաստատէր և ասէր. «Ոչ թողացուցից ձեզ, մինչև կատարեսջիք զամենայն կամս հրամանաց իմոց»։

Եւ ահա իշխանութիւն առեալ չարասէր սպասաւորացն, զի ըզչորս զինուորսն ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն։ Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուածովք, նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին։ Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ, և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առնէր սատանայական խրատուն։

Եւ յետ երկոտասան աւուր հրաման տայր ընթրիս գործել առատութեամբ և աւելի քան զաւուրց սովորութիւն, և կոչէր զբազումս ի զինուորական քրիստոնէիցն։ Եւ ի ժամ գահուն պատրաստութեան զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականսն. և սիրով խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերևս հաւանեսցին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ էր երբէք օրէն ուտել քրիստոնէից։ Իբրև ոչ կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց, այլ հրամայեաց մատուցանել նոցա զսովորական կերակուրն, և առաւել զինեօքն յաւելոյր ի տաճարին զխրախութիւն։

Եւ անտի ի դուրս ելեալ ի սրահն արքունի, արգելին զոմանս ի նոցանէ ձեռս յետս կապելով, և զխոնջանունսն կնքելով և զգուշութեամբ պահելով՝ էր որ զերկուս աւուրս, և էր որ զերիս/ Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր և ոչ ընդ գրով իսկ

1—2 Ե իրաց ԲԴ չիք վաղվաղակի   2 ՁԷՎՏ^3 թուլացուցից (Տ^3 թուղացուցից)   2—3 ԱՎ կատարեսջիք զկամս ԲԴ զձեզ, մինչև կատարիցէք զկամս իմոյ հրամանաց (Դ հրամանացս)   3 ՁԷԹԻ չիք զամենայն ԹԼԿՏ^{1}Տ^2 զձեզ։ կատարիջիք   4 ԳԵԸԺԼԽԾԿ ՀՏ^{1}Տ^2 չարասէր ԱՁԷԹԻՏ^{3}Ա չարաչար ԲԴ չար   4—5 ԱԲԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Տ^3 զի զչորս Ա չիք զի   5 Բ զինաւորս ԲԳԵԼԽ յաւագացն ԳԵԸԺԼԽՀՏ^{2}Տ^3 մատուցեն Բ մատուցանէ Դ մատուցանէին Ա մատուցին   5—6 ԱԲԳՁԷԸԹԺԻԼԽԿՀ ի փորձութիւն տանջանացն ԴԵ ի փորձութիւն տանջանաց Ա ի փորձութիւնս տանջանաց   6 ԴՁԷԹԻՏ^3 չիք եւ ԳՁԷ զառաջաւ ԱՁԷԹԺ դատել Խ զամենայն փխ բազում ԴՁԷԹԻ և նովին   7 ԱՁԷԹԻՏ^3 կապանօք անցին Ի կապանօք անցանէին յարգելարանին   7—8 ԲԴ չիք խաբէութեամբ   8 ԱԳՁԷԹԻՏ^3 առժամանակն ԵԸԺԻԼԽՀՏ^{1}Տ^2 թողութիւն փխ թողութիւն Դ առ ժամանակ մի խաղաղութեամբ թողութիւն արարեալ   8—9 Բ զվնասուն պատճառսն արկանէր զկապելոցն   10 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 խրատովն է խրատոյն   11 Ա Իսկ յետ ԱՁԷԹԻՎՏ^3 կազմել, փխ գործել   12—13 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք և Բ զաւուրցն սովորութիւնն ԴԸԼԽՀՏ^{1}Տ^2 զայլ աւուրցն Ե այլ աւուրցն Թ սովորութիւնն Բ կոչէր զբազմութիւն զինուորական   13 ԱՁԷԹՏ^3 քրիստոնէից ԱԲԳԴԵՁԷԹԺԻԼԽԿՀՏ^{2}Տ^3 գահուն Ա գահու   13—14 ԱԲԳԴԵՁԼՎՏ^3 պատրաստութեամբ   14 ԲԴ տեղիս բազմականին շնորհէր նոցա ԱԳԵՁԷԸԺԻԽԿՏ^{2}Տ^3 տեղիս ԸԽՏ^2 ի բազմականին   15 Բ խաղաղութեամբ փխ խոնարհութեամբ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և սիրով և խոնարհութեամբ ԲԳ առաջին   16 ԲԴ զմիսն Դ զոր չէր օրէն ԲԴ չիք երբէք ԳԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 ոչ երբէք օրէն էր Թ օրէն երբէք Կ երբէք էր օրէն Հ երբեք զօրէն էր   17 Բ քրիստոնէիցն ԼՏ^{1}Տ^2 չիք քրիստոնէից Հ ընկալան Ը յանձն ԲԴ ամենեքեան   18 ԱԳՁԷԹԿ հրամայեաց նոցա մատուցանել Դ հրամաեց Բ չիք մատուցանել   18—19 Բ կերակուրսն   19 ԱՁԷԹԻԿՎ^{1852} այլ առաւել զգինեօքն (ՁԻ առաւեալ է զգինեօքն ձեռքով է ավելացրած) Տ^3 այլ առեալ փխ առաւել ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք և առաւել—զխրախութիւն ԲԴԿ խրախութեան (Բ խրախութեանն) Թ զխրախութիւնն   20 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀՏ^{1}Տ^{2}Վ^{1852} և անտի ի դուրս ելեալ Ա և անտի իբրև ի դուրս ելին Լ անդէն փխ անտի Է արքունիս   21—22 Դ զխոնճանունսն ԵԺԼԽՀ չիք և (զգուշ...) է ձեռքով ավելացրած է՝ և զխոնջանունսն կնքելով և զգուշութեամբ պահէին   22 ԱԵՁԸԹԺԻԼԽՀՏ^{2}Տ^{3}Վ^{1852} պահելով ԲԴ պահէր Տ^1 պահեալ Ա պահէին ԲԴ երկուս ԲԴ չիք էր որ զերիս ԵԸԺԹԼԽՀ զերիս աւուրս Տ^2 և էր որ զերեք աւուրս ԱՁՀՏ^3 Եւ բազում Բ չիք բազում ԳԷԸ   22—23 Եւ բազում այլ ևս Կ Եւ բազում այլև   23 Դ անարժան հարուածովք չարչարէին զնոսա ԱԳԴԵՁԷԸԹԺԻԼԽՏ^{2}Տ^{3}Վ^{1852} զոր և ոչ Բ զոր և ոչ իսկ ընդ գրով Ա զոր ոչ։

րը Թագավորն իր աչքով տեսավ կատարվող անցքերը և տեղնուտեղը իսկույն երդումով հաստատեց ու ասաց. «Ձեզ չեմ զիջանի, մինչև չկատարեք իմ ամբողջ կամքն ու հրամանները»։

Եվ ահա չարասեր սպասավորները իրավունք ստացան, որ բուն ավագներից չորս զորականի մեջտեղ բերեն և սկսեն տանջել։ Նախ և առաջ նրանց դատաստանը տեսան խիստ ծեծելով և նույն կապանքներով տարան բանտը գցեցին։ Իսկ մյուսներին [Թագավորը] առժամանակ խաբեությամբ ներեց և ամբողջ մեղքը գցեց բանտարկվածների վրա. և այս կատարում էր սատանայական խրատի համաձայն։

Իսկ տասներկու օրից հետո հրաման տվեց առատ և սովորական օրերից ավելի ճոխ ընթրիք պատրաստել և հրավիրեց քրիստոնյա զինվորականներից շատերին։ Եվ սեղանի պատրաստության ժամին՝ յուրաքանչյուրին իր նստելու տեղն էր շնորհում սեղանի շուրջը և խոսում էր նրանց հետ սիրով ու խոնարհությամբ առաջվա կարգի համաձայն, որպեսզի գուցե համաձայնեն զոհած միս ուտել, որ երբեք օրենք չէր ուտել քրիստոնյաներին։ Երբ ոչ մեկն էլ հանձն չառավ [ուտել], շատ էլ չստիպեց, այլ հրամայեց մատուցել նրանց սովորական կերակուրը և առավելապես գինիով էր ճոխացնում սեղանի ուրախությունը։

Եվ երբ այնտեղից դուրս եկան արքունի սրահը, նրանցից ոմանց ձերբակալեցին՝ ձեռները հետևները կապելով և խոնջանները կնքելով[36], և զգուշությամբ պահում էին որի՛ն երկու և որի՛ն էլ երեք օր։ Շատ ուրիշ անարժան չարչարանքներ էլ էին տալիս, որ մինչև անգամ գրի

հէր նոցա ԱԳԵՁԷԸԺԻԽԿՏ^{2}Տ^3 տեղիս ԸԽՏ^2 ի բազմականին   15 Բ խաղաղութեամբ փխ խոնարհութեամբ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և սիրով և խոնարհութեամբ ԲԳ առաջին   16 ԲԴ զմիսն Դ զոր չէր օրէն ԲԴ չիք երբէք ԳԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 ոչ երբէք օրէն էր Թ օրէն երբէք Կ երբէք էր օրէն Հ երբեք զօրէն էր   17 Բ քրիստոնէիցն ԼՏ^{1}Տ^2 չիք քրիստոնէից Հ ընկալան Ը յանձն ԲԴ ամենեքեան   18 ԱԳՁԷԹԿ հրամայեաց նոցա մատուցանել Դ հրամաեց Բ չիք մատուցանել   18—19 Բ կերակուրսն   19 ԱՁԷԹԻԿՎ^{1852} այլ առաւել զգինեօքն (ՁԻ առաւեալ է զգինեօքն ձեռքով է ավելացրած) Տ^3 այլ առեալ փխ առաւել ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք և առաւել—զխրախութիւն ԲԴԿ խրախութեան (Բ խրախութեանն) Թ զխրախութիւնն   20 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀՏ^{1}Տ^{2}Վ^{1852} և անտի ի դուրս ելեալ Ա և անտի իբրև ի դուրս ելին Լ անդէն փխ անտի Է արքունիս   21—22 Դ զխոնճանունսն ԵԺԼԽՀ չիք և (զգուշ...) է ձեռքով ավելացրած է՝ և զխոնջանունսն կնքելով և զգուշութեամբ պահէին   22 ԱԵՁԸԹԺԻԼԽՀՏ^{2}Տ^{3}Վ^{1852} պահելով ԲԴ պահէր Տ^1 պահեալ Ա պահէին ԲԴ երկուս ԲԴ չիք էր որ զերիս ԵԸԺԹԼԽՀ զերիս աւուրս Տ^2 և էր որ զերեք աւուրս ԱՁՀՏ^3 Եւ բազում Բ չիք բազում ԳԷԸ   22—23 Եւ բազում այլ ևս Կ Եւ բազում այլև   23 Դ անարժան հարուածովք չարչարէին զնոսա ԱԳԴԵՁԷԸԹԺԻԼԽՏ^{2}Տ^{3}Վ^{1852} զոր և ոչ Բ զոր և ոչ իսկ ընդ գրով Ա զոր ոչ։

արժանի համարեցաք արկանել։ Եւ զոմանս ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յաղնուական պատուոյն անարգեալ։

Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցուն զկարգեալ թոշակն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զգժնեայ վայրսն հրամայէին նոցա. և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին։

Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յուսոյն, որ առաջի պատրաստեալ կայ պատուիրանապահ համբերողացն։ Որչափ չարութիւն զանարգութիւն բազմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային ի սէրն Քրիստոսի. մանաւանդ զի բազումք ի նոցանէ զգիրս սուրբս ուսեալ էին ի մանկութենէ, զանձինս մխիթարէին և զընկերս քաջալերէին, և իբրև աշտարակ լուսոյ զպաշտօնն ունէին և բազմացուցանէին։

Վասն որոյ և բազումք ի հեթանոսաց, որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջալերէին զնոսա, և ասէին բանս մխիթարութեան, իբրև թէ լաւ իցէ մարդոյ մահու չափ ճգնել՝ քան յայդպիսի օրինաց ուրանալ։

տանել արժանի չենք համարում։ Եվ նրանցից ոմանց էլ ազնվական պատվից զրկելով՝ քաշեցին և հեռացրին։

Եվ դարձյալ նրանցից խումբ-խումբ ուղարկում էին հեռավոր երկիր՝ անբնակ վայրերի ամրոցները՝ թագավորի թշնամիների դեմ պատերազմ մղելու համար. շատերը հենց այնտեղ էլ իրենց մահը գտան սրով։ Եվ բոլորի նշանակված թոշակները պակասեցնում էին և քաղցով ու ծարավով տանջում նրանց. ձմեռելու համար դժնդակ տեղեր էին նշանակում նրանց և բոլորի աչքում անարգ ու վատթար նրա՛նց էին ցույց տալիս։

Իսկ նրանք Քրիստոսի սիրո համար մեծ ուրախությամբ էին հանձն առնում բոլոր չարչարանքները այն մեծ հույսի ակնկալությամբ, որ առաջուց պատրաստված է պատվիրանապահ համբերողների համար։ Որքան չարությունը ավելացնում էր անարգանքը, այնքան նրանք ավելի ևս զորանում էին Քրիստոսի սիրո մեջ. մանավանդ որ նրանցից շատերը սուրբ գրքը սովորել էին մանկությունից, մխիթարում էին իրենց և քաջալերում ընկերներին, և որպես լույսի աշտարակ կատարում ու ավելացնում էին [քրիստոնեական] պաշտամունքը։

Այս պատճառով էլ հեթանոսներից շատերը, որոնց ախորժելի ու ցանկալի էին թվում [նրանց երգերի] ձայները, քաջալերում էին նրանց և մխիթարության խոսքեր ասում, թե լավ է մարդ մահու չափ չարչարանք կրի, քան այդպիսի կրոնն ուրանա։

1—2 ԱԲՁԷԹԻՀՏ^{3} ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յաղնուական (Բ և յաղնուական) պատուոյն անարգել (Տ^{3} անարգեալ) ԳԵԸԺԼԽՏ^{1} ի նոցանէ հեռացուցանէին յաղնուական պատուոյն զարշեցուցանէին (Ը քարշեցուցանէին) անարգեալ Դ ի նոցանէ հեռացուցին և քարշեցին և յաղնուական պատուոյ ընկեցին ԿՎ^{1852} ի նոցանէ հեռացուցանէին և զարշեցուցանէին յաղնուական պատուոյն անարգեալ Տ^{2} ի նոցանէ հեռացուցին և քարշեցին, և յաղնուական պատուոյն զարշեցուցանէին անարգեալ A և զոմանս ի նոցանէ ընդ քարշ վարէին յօտարութիւն յաղնուական պատուոյն անարգեալ 3—4 Բ և գունդս գունդս ի նոցանէ գումարէին յերկիր հեռաւորս ի յամուրս Դ ի նոցանէ գումարէին ԱՁԷԹԻVՏ^{3} յերկիրն ի հեռաւոր յամուրս Դ չիք դարձեալ ԵՀ դարձուցեալ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} Վ^{1852} հեռաւոր A հեռաստան ԵԸԺ թշնամեաց 5 ԱԹԻ և բազմաց իսկ և իսկ անդէն ԵԸԺԼԽՄՀՏ^{2} անդէն իսկ ՁԷՏ^{3} իսկ և իսկ ԲԴ վճիռ փխ վախճան Հ չիք վախճան Լ չիք մահու 6 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽՄԿՀՏ^{2}Տ^{3} զամենեցուն A զամենեցունց ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{2} թոշակն AՏ^{3} թոշական ԲԴ նուազեցուցանէր 7—8 ԲԴ ձմերոցի տեղիս հրամայէին զգժնեայ վայրս (Դ տեղի) ԳԵԸԺԼԽԿՀ զձմերոցի տեղիսն 9 ԱՁԷԹՏ^{3} զվայրսն ԱՁԷԹԻV վատթար 10 Լ չիք սէրն (Մ ունի սէրն) 11—12 ԲԴ չարչարանս ԱՁԷԹԻ յուսոյն Քրիստոսի որ առաջի պատրաստեալ կայ պատուիրանապահք համբերողացն ԲԴ յուսոյն Քրիստոսի որ առաջի կայր պատրաստեալ պատուիրանապահացն և համբերողացն VՏ^{1} վասն անուանն Քրիստոսի և մեծի յուսոյն, որ առաջի պատրաստեալ կա պատուիրանապահ համբերողացն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Վ^{1852} յուսոյն որ ի Քրիստոս, որ առ յապա պատրաստեալ կա պատուիրանապահ համբերողացն ԳԿ յուսոյն ի Քրիստոս Λ առաջոյ պատրաստելոյն 12 ԲԴ և որչափ ԳԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2} որչափ զչարութիւն ԱԲԴՁԷԹԻԿՏ^{3} չարութիւն զանարգութիւն (ԲԴ չարութիւնն) Հ զչարութիւն և զանկարգութիւն ԳԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2} և զանարգութիւն AՎ^{1852} չարութեամբ զանարգութիւնն 14—15 Գ սուրբ Ձէ ուսեալք Բ մանկութենէ Գ ի մանկութեան 15 AՎ^{1852}անձնս (զանձինս) ԱԲԳԴԵՁԷԹԺԻԼՀ զընկերս (ԱԷԹԻԼ ընկերս Ե զընգերս) Λ զընկերսն 15—16 ԲԴԼՏ^{1}Տ^{2} և իբրև աշտարակ լուսոյ զպաշտօնն առնէին ի բազմացուցանէին (Տ^{2} աշտանակ Տ^{1} չիք լուսոյ) ԱՁԷԹԻV աշտարա ԳԵԸԺԿ աշկարակ Λ աշկարայ ԳԵԸԺԽԿՀ չիք ունէին Դ առնէին 17 ԱԷԹԻVՏ^{3} չիք բազումք Զ ի նոցանէ փխ բազումք ԲԴ վասն որոյ հեթանոսք որ լսէին հեշտ 18 է մխիթարական 19 ԱՁԷԹԻՏ^{3} իբր ԱԳԵՁԷԸԹԻԼԽԿՀՏ^{3} թէ Λ եթէ ԲԴ չիք իբրև ԲԴ թէ լաւ է մարդոյ մահու ճգնել Թ ճգնիլ 19—20 Ձէ այդպիսի օրինացն։

Բայց սակայն թէպէտ և նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ զուարթութեամբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի ողորմ էր յօտարութեանն։ Այնպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարաշուք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարաչար կայր ի ծառայութեան մարդախողխող բռնաւորին. որ և ընդ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնհեղութեամբ, և ամենևին չկարծէր՝ թէ գուցէ այսր ամենայնի վրեժխնդիր յերկինս։

Նա և ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. և որ մեծն քան զամենայն է ըստ մարմնաւոր կարգի, քանզի գոյին ոմանք ի նախարարացն, որոց զեղբարս նորա սնուցեալ էր մայրենի կաթամբն իւրեանց, առաւել ևս քան զամենեսեան զնոսա զատէր։

(Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանկեաց։ Զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց՝ որում անունն էր Դենշապուհ.| որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և թեթևութիւն ծանրութեան այրուձիոյն։ Թէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին։

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն։ Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ։

Երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց։

---

1 ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք առ սէրն Քրիստոսի   1—2 Բ նոքա յոյժ զուարթութեամբ էին ի ներքին մարդոյն ՁԷԹS^3 զօրութեամբ փխ զուարթութեամբ   2 Դ էին փխ խընդային   3 ԲԴS^2 ողորմելի էր A յոտարութեանն ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԿՀ$S^1S^2S^3$ այնպիսի A այսպիսի ԲԴ սեփական փխ պատուական ԳԴԸԺԼԽ զինուորութիւնն   3—4 ԵԸԺԼԽՀ S^1S^2 հասանէր   4 ԲԴ չարաշշուկ Ե ազատութիւն   5 ԵԸԺԼԽՀ ի ծառայութիւն ԻԹ մարդախողխող ԲԴ չիք և Թ թէ փխ և ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽՄԿ$S^1S^2S^3$ ընդ A ըստ Հ չիք ընդ Գ հեթանոսացն   6 Դխ հեթանոսաց օրէնսն Բ անցուցանէր ԱԹԻS^2 արիւնահեղութեամբ ԵՄՀ արենհեղութեամբ ԸԼԽ արեան հեղութեամբ   7 ԲԴ եթէ Բ այսմ ԵԸԺS^1S^2 որ և ամենեւին ԱՁԷԹԻVS^3 վրէժխնդիր զոյ յերկինս ԳԵԸԺԼԽՀS^2 վրէժխնդրութիւն Ը երկնից ΛՎ^{1852} գուցէ այսր ամենայնի վրէժխնդիր յերկնից   8 Դ զվաստակս ԲԴ յիշեաց ԲԴ չիք և   8—9 ԴԸ որ մեծ է քան զամենայն ԵԹԺԼԽՀS^2 մեծն է   9 Բ զի փխ քանզի   9—10 ԱՁԷԹԻA (նախարարացն) Հայոց ԳԵԺԼԽ որոյ ԴԷ զեղբայրս ԲԴ նոցա փխ նորա ԱԲԴՁԹԻS^3 կաթամբ է կաթամբ իւրոց   11 ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԿՀS^2S^3 առաւել ևս ԲԴ առաւել ևս զնոսա զատէր։ չիք քան զամենեսեան A չիք ևս   12 ԷԹՀ

Սակայն թեպետև նրանք Քրիստոսի սիրո պատճառով խիստ ուրախ և զվարթ էին ներքուստ, բայց [նրանց] արտաքին տեսքը շատ ողորմելի էր օտարության մեջ։ Այնպիսի պատվական զինվորությունը հասել էր չարաշուք և անարգ վիճակի, և հայրենի ազատությունը չարաչար կերպով գտնվում էր մարդախողխող բռնավորի ծառայության մեջ, որը արյունհեղությամբ հեթանոսների օրենքներից էլ գերազանցում էր և ամենևին չէր կարծում, թե այս ամենի համար կարող է երկնքում մի վրեժխնդիր լինել։

Այլև ոչ ոքի երկրավոր ծառայությունները չէր հիշում. և որ ամենից մեծ է մարմնավոր կարգով, այնտեղ կային նախարարներից ոմանք, որոնք նրա եղբայրներին մեծացրել էին իրենց մայրենի կաթով, ամենից ավելի նրա՛նց էր տանջում։

Բացի այս ամենից՝ մի այլ չարություն էլ նյութեց։ ⌈Իր հավատարիմ ծառաներից մեկին, որի անունը Դենշապուհ էր, գործով ուղարկեց Հայոց երկիրը. սա եկավ տեղ հասավ արքունի հրամանով, բերեց մեծ թագավորի ողջույնը և խաղաղասեր կեղծավորությամբ ամբողջ Հայոց երկիրը աշխարհագիր արեց՝ իբր թե հարկերը ներելու և այրուձիու ծանրությունը թեթևացնելու նպատակով։ Թեպետև երեսանց կեղծավորություն էր անում, բայց ներքուստ երևում էին չարագույն դիտավորությունները։

Առաջին, եկեղեցու ազատությունը ծառայության տակ դրեց։

Երկրորդ, վանքերում բնակված միայնակյաց քրիստոնյաներին նույն աշխարհագրի տակ գցեց։

Երրորդ, երկրի հարկն ավելի ծանրացրեց։

այսր Բ այլ և ած զմտաւ խորամանկութեամբ Դ այլ ևս ածէր զմտաւ խորամանկութեամբ   13 ΛՎ^{1852} ծառայիցն Դ առաքէր ի գործ ԼS^1 չիք ի գործ Է զերկիրն   14—15 ԱԲԳԴԹ անուն ԱԹ Դենշապու Գ Դենշապուրհ ԲԴ հասեալ յերկիրն հրամանաւ արքունի ԱՁԷԹԻVS^3 զողջոյնս   15 Ե զմեծն Կ արքային   16 ԲԴ առնել աշխարհին Հայոց A առնելով ամենայն երկիրն ԲԴ չիք ի   17 ԱՁԷԻV և ի թեթեւութիւն այր և ձիոյ ԲԴՁԷԹԻS^3 չիք ծանրութեան ԲԴԹ այրուձիոյ ԱՁԷԹԻ թէպէտ   18 ԱՁԷV երեւն ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 զայս կեղծաւորէր (Կ զայր) ԲԴ խորհուրդս չարագոյնս ԵԸԺԼԽS^1 խորհուրդքն է խորհուրդ Հ խորհուրդն   19 ԲԴԹ ցուցանէր   20 ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀS^2S^3 եկեղեցւոյն ԴA եկեղեցւոյ Բ եկեղեցոյ ԱՁԷԹԻVS^3 արկանէր ընդ ծառայութեամբ   21 ԱՁԷԻ երկրորդք Հ երկրորդն ԱԲԴՁԷԻԺԹՄS^3 միայնակեացք ԵԸԺԼԽՀS^1S^2 չիք քրիստոնեայք   21—22 Բ վանորեայս Կ վանորայսն ԱՁԷԹԻԿVS^3 ընդ նովին աշխարհագրաւ արկանէր ԲԴ ընդ նովին աշխարհարգաւ առնէր Ը արկ   23 Հ երրորդն ԱԹԻ զհարկս Բ առաւել զհարկ աշխարհին ԳԵՁԷԸԺԽԿՀV չիք զհարկ Լ զհարկն։ չիք աշխարհին Մ զհարկ աշխարհին։

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն։

Եւ զայդ՝ ամենայն առնէր՝ թերևս զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուց։

Եւ է՛ւս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին, իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ՝ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն փառսն աղաւաղեսցեն։

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն։ Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին. նոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց զնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակացն։ Նա և բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիա՞րդ չէն կալցէ աշխարհն։

Եւ իբրև տեսին՝ թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրա-

---

1 2 չորրորդն ԱԳՁԷԹԻԼԿՏ³ բանսարկութեամբ զնախարարեանն էարկ (Տ³ արկ) ԲԴԺԸԽ բանսարկութեամբ արկ զնախարարսն (ԸԺ զնախարարսն էարկ Խ էարկ զնախարարսն) ԵՀՏ¹Տ² բանսարկութեամբ զնախարարս էարկ 3 ԲԴA զի թերևս ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀՏ²Տ¹ չիք զի ԱԲԵՁԷԸԹԻԺԼԽՀՏ²Տ³ քակեսցէ AՎ¹⁸⁵² քակտեսցէ 4 ԱԷԸՁ և զուխտս ԲԴ զուխտ Ի չիք և զուխտ եկեղեցւոյն ցրուեսցէ Թ ցրեսցէ զմիայնակեացսն ցրուեսցէ և փախուսցէ 5 Ե դշինական Բ զի և ընդ յոյժ Դ զի փխ և Դ աղքատութիւնն է աղքատութեան 6 ԲԴ մոգութեանն ԳԵԹԺԼԽՏ² մոգուցն 7 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² հինգերորդն ևս չարագոյն ԳԵԸԺԼԽԿՀՏ² հազարապետ աշխարհին էր 8—9 ԲԴ որպէս հայր ԳԴԸՀ հայր Տ² իբր ԱԲԴՁԷԹԻԿՏ³Վ¹⁸⁵² աշխարհականացն և քրիստոնէիցն ԳV աշխարհականաց և քրիստոնէից A աշխարհականացն 9—10 ԳԵԸԺԼԽԿՀՏ² գրգռեալ է գրգռեաց ԲԴ յարոյց ի վերայ ամբաստանութիւն և հանեալ զնա 10 Թ էած Հ եկաց փխ էած Դ ի յաշխարհն 11—12 Դ չիք ևս Բ զի զեկեղեցւոյն զփառսն աղաւաղեսցեն Դ զեկեղեցոյն փառսն աւաղեսցեն A զեկեղեցւոյ փառս 13 Խ չիք թէպէտ ԼՏ¹Տ² չիք այս ԲԴ այս ամենայն գործք Ձէ դժնեայ 13—14 ԲԴ չև ուրուք յայտնի ձեռն արկեալ էր

Չորրորդ, նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց։

Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե քանդի միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվի, և միայնակյացներին փախցնի, և շինականներին տկարացնի. և չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը։

Բայց ամենից վատթարը հինգերորդն էր. որովհետև նա, որ երկրի հազարապետն[37] էր, համարվում էր քրիստոնյա աշխարհականների վերակացու հայրը. սրա դեմ գրգռելով ամբաստանություն հարուցեց, և նրան գործից հանելով՝ նրա փոխարեն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը, և մի մոգպետի էլ աշխարհիկ դատավոր [կարգեց], որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնեն։

Սակայն թեպետև այս բոլոր գործերը դժնդակ էին, բայց դեռ ոչ ոք հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն. այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացավ, թեև հարկերը ծանր էին։ Որովհետև որտեղից պետք էր հարյուր դահեկան[38] առնել, կրկնապատիկն էին առնում. այսպես էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին և երեցներին, ո՛չ միայն շեն, այլև ավերակ տեղերը։ Մանավանդ ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր[39] էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա։ Առնում էին ո՛չ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին՝ թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը։

Եվ երբ տեսան, թե այն ամենով չկարողացան զզվեցնել, այն ժա-

Ե¹ ձեռնարկեալ ԻԸԺԼԽՀVՏ² յեկեղեցին յայտնի ԲԴ այնորիկ ոչ ոք ԱՁԷԹԻՏ³ չիք և (ոչ ոք) 14—15 ԳԿ և ոչ ընդդիմացաւ ոք նմա Լ սմա փխ նմա 15 Դ հարկաց 16 ԱՁԹ արժանն ԱԲԴՁԷԹԻԿՏ³ դահեկանաւ չափ կրկին առնուին Գ դահեկանաւ չափ կրկնէին ԵԸԺԼԽՀՏ¹Տ² դահեկանի չափ կրկնէին և առնուին A դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին A սոյնպէս 17 Ր սոյնպէս եպիսկոպոսաց Գ եպիսկոպոսացն Դ չիք և (եպիսկոպոսաց) ԹԻՏ³ նոյնպէս և ԵԺԼԽԿՀ եպիսկոպոսացն և երիցանցն 18 ԲԴԼ նա և բնաւ իսկ ո՞վ Գ և ո՞վ իսկ է նա և ԺԽԿՀ բնաւ և ո՞վ իսկ ԱԵՁԸԹԻA չիք և (բնաւ) 19 Ձի ծանրութեանն Տ¹ չիք ծանրութեան ԱՁԷԹԻV զսակից ԳԵ հարկաց փխ հասից ԸԺԽԿՀ բաժից և հարկաց Լ հասից և հարկաց Ե և բաժից և հասից և հարկաց Տ¹ և հարկաց լերանց Տ² բաժից և հարկաց լերանց 20 ԱԲԴՁԷԹԻV չիք արքունի Ե արժանաւորութեան 21 ԱՁԷԹԻV քինաբար (է ձեռքով ուղղված է՝ հինաբար) ԲԴ առնոյր յափշտակութիւն առնելով մինչ ԵԸԺԼԽՏ¹Տ² յափշտակէին է յինքեանք ԸԽՏ² չիք իսկ ԲԴ չիք մեծապէս 22—23 ԵէՀ կացցէ A աշխարհն Հայաստանեայց 24 ԲԴԵԸԺԼԽՀ Տ¹Տ² չիք Եւ ԲԴ եթէ փխ թէ Խ չկարացին V չկարաց Տ² չկարացան ցուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց։ Եւ է պատճէն նամակին այս.

«ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎԶՈՒՐԿ հրամանատար Երան եւ Աներան. Հայոց մեծաց ողջոյն շատ».

«Դուք գիտասջիք, ամենայն մարդ՝ որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դենի մազդեզն, նա խուլ է և կոյր, և ի դիւաց Հարամանոյ խաբեալ։

Քանզի մինչ չև էին երկինք և երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր զհազար ամ և ասէր. «Թերևս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր»։ Եւ յղացաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ՝ և զմիւսն ես ի թերևսն ասելոյ։ Իբրև գիտաց, եթէ երկու են յորովայնի, «Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զթագաւորութիւնս»։

«Իսկ որ էր ի թերահաւատութենէն յղացեալ՝ պատառեաց զորովայնն և ել ի դուրս։ Ասէ ցնա Զրուան. «Ո՞վ ես դու»։ Ասէ, «Որդին քո եմ Որմիզդ»։ Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր»։ Եւ իբրև կարի դառնապէս ելաց, ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ։

---

1 Դ չիք յայտնապէս Բ մոգացն է մոգոց մոգպետաց Թ մոգուց S^{2} մոգացն և մոգպետացն 2 է ծախողական փխ *ձախողակի ԲԴԼS^{2}Վ^{1852} էր* փխ *է Ի* չիք *է 3 Ըև* չիք *և Լ պատճէն նամակին այս 4 ԲԳԵԼԽ Միրհներսեհ ԺՀ Մեհրներսեհ Ջ Վեհրներսեհ ԱԲՋԷԹԻS^{3}Վ^{1852} Վզրուկ Լև Վզրկ (և* լուսանցքում՝ *մեծ) ԸՀ Վրզրկ (*լուսանցքում՝ *մեծ) Եժ Վզրկ (*լուսանցքում՝ *մեծ) ԾS^{1} Վզըրիկ ԱՁԷԻV հրամատար Գ հրամայտար ԲԴS^{2} ի հարմատա ԵԸԹԺԼԽԾԿՀ$S^{1}S^{3}$A հրամանատար ԱԲԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀ$S^{1}S^{2}S^{3}$Վ^{1852} Տանեռան (Բ Տանրերան) Դ Տարերան (ԵԸԺ* լուսանցքում՝ *մեծարոյ և պատուական) ԽԸ մեծար և պատուական Թ մեծատուն պատուական Հ մեծարգոյ և պատուական)* A *Աներան 6—7 Բ բնակեալ են ի ներքոյ երկնից և ոչ ունին զօրէնս մազդեզանց Հ բնակեալ է ի վերայ ամենայն երկնի Գ են* փխ *է Դ երկնից ՁԷԹ յերկնի ԴԼ$S^{1}S^{2}$Վ^{1852} մազդեզանց Թ դենի մազդեզն (*լուսանցքում՝ *հաւատոց հաւատ) ԽԷԺԽ մազդէն (*լուսանցքում՝ *հաւատոյ հաւատ Հ դնի մազդէն (*լուսանցքում՝ *հաւատոյ հաւատ) ԳԵԷԽԿՀAS^{3}Վ^{1852}* չիք *ի 8 ԴԲ խարամանեաց ՁV Հարամայնոյ է Հրամայնոյ ԳԵԸ խարամանոյ (ԵԸ* լուսանցքում ավելացրած է՝ *պատրողաց) ԺԽՀ խարաւմանոյ (Հ խարամանոյ)* (լուսանցքում *պատրողաց) ԼԿ դիւաց խարաւմանոյ $S^{1}S^{2}$ խարամանւոյ 9 ԵԸԺԹԽՀ Զրուան* (լուսանցքում *Կռենոս կամ Արամազդ) ԲԴԵԸԺԼԽՀS^{2} մեծ աստուածն 10 Թ յաշտ առնէր* (լուսանցքում՝

մանակ հայտնապես հրաման տվին մոգերին և մոգպետներին մի նամակ գրել՝ իրենց ձախուծուռ հավատի համաձայն։ Եվ նամակի պատճենն այս է.

«ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎԶՈՒՐԿ[40] հրամանատար Երան և Աներան[41], Հայոց Մեծաց շատ ողջույն».

«Իմացած եղեք, որ ամեն մարդ, ով բնակվում է երկնքի տակ և չունի դենիմազդեզն[42] կրոնը, խուլ է և կույր և Հարամանիի[43] դևերից խաբված։

«Որովհետև քանի դեռ չկային երկինքն ու երկիրը, մեծ աստված Զրվանը հազար տարի զոհ էր անում և ասում էր. «Թերևս ինձ մի որդի լինի Որմիզդ անունով, որ ստեղծի երկինքն ու երկիրը»։ Եվ հղացավ երկու հոգի [իր] որովայնում. մեկը՝ զոհ մատուցանելու և մյուսն էլ՝ թերևս ասելու համար։ Երբ իմացավ, որ որովայնի մեջ երկուսն են, ասաց. «Որը շուտ դուրս գա, նրան կտամ թագավորությունս»։

«Բայց նա, որ թերահավատությունից էր հղացած, պատառեց որովայնը և դուրս եկավ։ Ասում է նրան Զրվանը. «Ո՞վ ես դու»։ Ասում է՝ «Քո որդին եմ՝ Որմիզդը»։ Զրվանն ասում է նրան. «Իմ որդին լուսավոր է և անուշահոտ, դու խավարային ես և չարասեր»։ Եվ երբ խիստ դառնապես լաց եղավ, թագավորությունը նրան տվեց հազար տարով։

ներգործէր) ԵԸԺԽՀ յաշտ (լուսանցքում՝ *ներգործէր կամ ստեղծագործէր) ԲԴS^{2} լինիցի իմ որդի մի Գ «որդի մի»* բառերից հետո թերթ է ընկել. պակասում է մինչև էջ 52 տող *20 «առեն» Կ ինձ որդի մի ԵԸԺԼԽՀS^{1} որդի մի Որմիզդ* (լուսանցքում՝ *անդրանիկ) 11 ԲԻԵԸԺԼԽԿՀ$S^{1}S^{2}$ անուն նորա, որ արասցէ զերկինս և զերկիր Բ յուղացաւ 11—12 ԲԴS^{2} մի յաշտ առնելով ԵԸԺԼՀ մին Թ յաշտ առնելոյ* (լուսանցքում՝ *ներգործելոյ) 12 Ա ես թերևսն ԲԴS^{2} միւսն թերևս ասելով ՁԷԹԻS^{3}* չիք *ի է զմիւս ասելով ԸԼԽԿ* չիք *ես ԻVS^{3} թերևսն ասելով Թ ասելոյն Լ ի թերևսն յասելոյն ԵԸՀ միւսն ԴԵԸԽԿ թէ Ի* չիք *եթէ 13 ԲԴS^{2} յորովայնին, ասէ, որ վաղ եկեսցէ. նմա տայց ԵԸԺԽԿՀ յորովայնի, ասէ ? ԷԼS^{1} յորովայնի Լ* չիք *ասէ ԼԽS^{1} տացէ 15 S^{2}* չիք *էր ԲԴS^{2} իսկ որ ի թերահաւատութենէն յղացեալ էր 15—16 ԱԹ զորովայնս 16 ԲԴS^{2} արտաքս* փխ *ի դուրս Դ և ասէ ԴԸ ասէ ցնա ԲԴ ցնա Զրուանն՝ ո՞ ես դու ԱԴՋԷԻԿ$S^{1}S^{2}S^{3}$ Զրուանն ԵԺԽԸ Զրւանն* (լուսանցքում՝ *Արամազդ) Թ Զրուանն* (լուսանցքում՝ *Կրոնոս) 17 Ը Որմիզդ* (լուսանցքում՝ *Արամազդ) Թ Որմիզդ* (լուսանցքում՝ *անդրանիկ հարազատ!) Խ Որմիզդին Կ Արհմն* փխ *Որմիզդ ԱԲԴՁԷԹԺԻԿ$S^{1}S^{2}S^{3}$ Զրուանն ԵԼԽ Զրւանն ԲԴ* չիք *եւ 19 ԱԲԴԵՁԷԸԹԺԻԼԽ$S^{1}S^{2}$ Վ^{1852} զհազար։*

«Իբրև ծնաւ զմեւս ևս որդի, անուանեաց զնա Որմիզդ, եհան զթագաւորութիւնն յԱրհմնէ, և ետ ցՈրմիզդն և ասէ ցնա. «Ցայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արար»։ Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց։

«Եւ այսպէս բաժանին արարածքս. հրեշտակք Որմզդի են, իսկ դևքն Արհմնոյն, և ամենայն բարիք, որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք, որ անտի և այսօր գործին՝ զայն Արհմն արար։ Սոյնպէս յերկրիս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար, և որ ոչն է բարի՝ զայն Արհմն արար. որպէս զմարդ Որմիզդ արար, և զախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար։ Եւ ամենայն թշուառութիւնք և պատահարք որ լինին, և պատերազմունք դառնութեան, չարին մասին արարածք են. իսկ յաջողութիւն և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մարմնոց, գեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդ ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, ի նա չարին արարած խառնեալ է։

«Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն՝ եթէ «Զմահ Աստուած արար, և չար և բարի ի նմանէ լինին»։ Մանաւանդ որպէս քրիստոնեայք ասեն՝ թէ «Աստուած նախանձոտ է. վասն թզոյ միոյ ուտելոյ ի ծառոյն՝ Աստուած զմահ արար, և զմարդն էարկ ընդ այ-

«Երբ ծնավ մյուս որդին էլ, անունը Որմիզդ դրեց. Թագավորությունը խլեց Արհմնից և տվեց Որմզդին, և ասում է նրան. «Մինչև այժմ ես քեզ զոհ արի, այժմ դո՛ւ ինձ արա»։ Եվ Որմիզդն ստեղծեց երկինքն ու երկիրը, իսկ Արհմնը [նրա] դեմ չար գործեց։

«Իսկ եթէ դու ի տգիտութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ, ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանդ։ Եթէ աշակերտիմ անուսումնութեանդ, երկոքինս յանդիւտ կորուստ մատնիմք, թերևս ես չարագոյն քան զքեզ, քանզի վկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ. «Ծառայ, ասէ, որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ, և արժանի գանի ինչ գործ գործէ, ըմպել ըմպէ գան, այլ սակաւագոյն» իսկ որ տեղեկագոյն է կամաց թագաւորին, և յանցանէ ինչ առաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ տանջի։

«Արդ աղաչեմ զքեզ և զամենեսեան, որ ընդ քոյով իշխանութեամբ են. մի՛ դու ընդ իս բազմապատիկ տանջիր և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն. այլ ես և դու և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի թագաւորաւդ այնպէս աշակերտեսցուք աստուածային գրոց, զի ի տանջանացն ապրեսցուք, և զզօրիս արհամարհեսցուք, և յանշէջ հրոյ զերծանիցիմք, և զարքայութիւնն ժառանգիցեմք, և անցաւոր

---

1 ԲԴԸԺՀԽ հրեշտակք Տ^{2} և հրեշտակք (փակագծով՝ և մարդիկ) ԹՀ զկամս փխ ի կամս ԼՏ^{1} չիք «բայց—անձին» Խ չիք բայց մարդ և Հ ազատ թողեալ զկամս անձանց իւրեանց Ճ^{6} անձին իւրեանց ԴԵԸԺԽՀՏ^{2} անձանց իւրեանց ԱԲԲ^{2}ԳՁԷԹԻԿVՏ^{3}Վ^{1852} անձին իւրոյ 2 Բ^{2}Դ կալցեն ԲԴՏ^{2} եւ զբոլոր 3 Տ^{3} առեալ է փխ տուեալ է 3—4 ԱԲԴ ԵԸԹԺԻԼԽԿՀ զերկիր 4—5 Ա ստունգանիցեն և անցանիցեն ըստ հրամանաւ Բ^{2}Տ^{3}Վ^{1852} անցանիցեն ըստ հրամանաւ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} ստուգանեսցեն և անցցեն ԵԺԽՀՏ^{2} զպատուիրանաւն ՁԷԹԻV ըստ հրամանաւ ԲԴ ստունգանեն և անցցեն (Դ անցանեն) զպատուիրանաւ նորա և ընդդէմս (Դ ընդդէմ) աստուծոյ գործիցեն 5—6 ԵԸԺԼԽՀՏ^{1} աստուծոյ գործեսցեն Տ^{2} և զընդդէմսն աստուծոյ գործիցեն 6 ԲԴՏ^{2} պատուոյ ԵԸԺԼԽՀՃ^{6} պատույն ԱԲ^{2}ԹԻ զանարգսն ՁԷV զանարգս ԵԸԺԼԽՀՏ^{1} ընկալցին զանարգանս 6—7 ԲԴ զի տէրութիւնն անբամբաս երևեսցի 7 ԵՀ տէրութիւն ԱԲ^{2}ԳՁԷԹԻVՏ^{3}Վ^{1852} յանցաւորքն ամօթալից յանցանացն ԲԴ և յանցաւորքն յամօթ լիցին 7—8 Կ յամօթալից յանցանացն ԵԻՀ և անցաւորքն է յանցօրքն Ճ^{6} չիք յանցանաց 9 ԳԵԸԺԼԽԿՃ^{6}Տ^{1}Տ^{2} տգիտութեամբ ԲԴ զի դու տգիտութեամբ մոլորեալ ես Հ տիգութեամբ(!) Ա վրիպեալ իցես 9—10 է հաստատուն 10 Ա որ փխ ոչ ԱԳԵԹԺԻԼԽԿՀՃ^{6} քոյոյ փխ քո 10—11 ԳԵԸԺԼԽՀՏ^{1} չիք եթէ աշակերտիմ անուսումնութեանդ 11 ԲՃ^{6} քո անուսումնութեանդ ՁԷ անյուսմնութեանդ ԲԴ երկոքեանս ԵԺԼԽՄ և երկոքեանս ԲԴ չիք յանդիւտ ԲԴ ի կորուստ 12 ԲԴ և թերևս ԵԿ և ես Հ թերևս և ես Ճ^{6}Տ^{2} չիք ինձ Ճ^{6} ունիմ վկա 13 VՏ^{3} ձայն ԲԴԸԽ չիք ասէ ԵԺԼՀՏ^{3} ձայնն աստուծոյ որ ասէ Ը չիք աստուծոյ ԲԴ գիտիցէ 14 Բ գանի ինչ արժանի գործէ ԳԿ ինչ գանի գործ գործէ Դ գանի ինչ գործել Ճ^{6} չիք ինչ ԸԽՏ^{2} չիք գործ Հ ըմբելով ըմբէ ԱՁԷ այս փխ այլ 15 ԱԳԵՁԷԸՀ տեղեկագոյնն Բ չիք է Բ թագաւորին է Դ թագաւորին կամացն 15—16 Զ յայնցանէ(!) Ի անցանէ 16 ԲԴ չիք ինչ Է աստուծոյ փխ նորա Ճ^{6} չիք առաջի նորա ԱԳԵՁԷԸԹԺԽԿՀV և առանց 18 ԼՀ աղաչեմք Կ զամենեսին ԸԽ որ են Ճ^{6} չիք ընդ ԲԴ քո Գ քով Ճ^{6} ձերով փխ քոյով 19 Ը չիք են ԲԴ չիք դու Ե ընդ յիս Թ չիք իս 20 Դ չիք և (ամենայն) Գ բազմութեամբդ 21 Ճ^{6} չիք այնպէս ԵԸԺԼԽՀ աշակերտիմք ԲԴ աստուածեղէն 22 Ե ի տանջանաց ԳԺՏ^{2} տանջանաց ԳԵԺԼԽՄԿՏ^{2} և զժոխօքն Հ և զժոխքն ԲԴՏ^{1}Ճ^{6} չիք և զժոխս արհամարհեսցուք Ա առ ոտն կոխեսցուք փխ արհամարհեսցուք է անշէջ 23 Ճ^{6} զերծանիմք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} զերծցուք ԵԷ զարքայութիւն ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{1} ժառանգեսցուք։

սահմանից. բայց մարդն ու հրեշտակը ազատ են թողնված իրենց կամքին, որովհետև բանական են. եթե նրա հրամանին հնազանդ մնան, անմահ են և աստծու որդիներ։ Բոլոր արարածներին տվել է ծառայության համար—երկիրս՝ մարդկանց, իսկ երկինքը՝ հրեշտակներին. իսկ եթե ականջ չդնեն և պատվիրանը չպահեն, աստծուն ընդդեմ գործեն, ամեն պատվից [կընկնեն] և կանարգվեն, որպեսզի [նրա] իշխանությունն անբամբաս երևա, իսկ հանցանք կատարողներն ամոթալից լինեն։

«Իսկ եթե դու մոլորվել ես տգիտության մեջ, ես, որ հաստատ գիտեմ, չեմ կարող քո մոլորության հետևից գալ։ Եթե հետևեմ քո անուսումնությանդ, երկուսս էլ անդառնալի կորստի կմատնվենք, գուցե՝ ես քեզանից ավելի վատթար, որովհետև ինձ վկա ունեմ աստծու ինքնասաց ձայնը. «Այն ծառան,— ասում է,— որը չգիտե իր տիրոջ կամքը և ծեծի արժանի մի գործ է կատարում, ծեծ ուտելն ուտում է, բայց ավելի քիչ. իսկ ով լավ տեղյակ է թագավորի կամքին և որևէ հանցանք է գործում նրա առաջ, բազմապատիկ տանջանքի է ենթարկվում առանց բարեխոսի»։

«Արդ, խնդրում եմ քեզ և քո իշխանության տակ եղած բոլորին. ո՛չ դու ինձ հետ բազմապատիկ տանջանքի ենթարկվիր, և ո՛չ էլ ես քեզ հետ՝ ավելի քիչ. այլ ես ու դու և ամբողջ բազմությունդ քաջ թագավորիդ հետ միասին այնպես աշակերտենք աստվածային գրքերին, որ տանջանքներից փրկվենք և զժոխքն արհամարհենք և անհանգչելի կրակից ազատվենք, և արքայությունը ժառանգենք, և այս անցավոր կյանքով կենօքս զանանց մեծութիւնն անվախճան ունիցիմք։

«Բայց յորմէ դուք վարհուրեալ եք՝ դիւրահաւան լեր, և վաղվաղակի աշակերտիս ճշմարտութեանն։

«Ոմն ի հրեշտակաց յանմահիցն գնդէն ստամբակեալ և ի բաց գնացեալ յերկնից, և ի մեր աշխարհս եկեալ՝ պատիր բանիւք և սուտ խոստմամբ զանլինելի յոյսն առաջի դնէր՝ իբրև տղայ մանկան՝ անփորձ և անկիրթ նորաթեք մարդոյն, ի վեր հայեցուցանելով զմիտս նորա, ունելով ի պտղոյ ծառոյն,— յոր հուպն չհրամայեաց երթալ,— զի լիցի աստուած։ Իսկ նորա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցաւ զկնի մոլար խաբէութեանն, կորոյս զոր ունէր զփառս անմահութեանն, և չեհաս հրաղայոյս կարծեացն։ Վասն որոյ և մերժեալ ի կենաց տեղւոյն, ընկեցաւ յապականելի աշխարհս, յորում և դուք էք բնակեալ այժմ, և ցնորեալ մոլորիք զկնի նորին խրատու. ոչ ևս ունելով ի պատուիրեալ ծառոյն, այլ զարարածս աստուած ասելով, և անխօս տարերցս երկիր պագանելով, և անորովայն դիւաց կերակուր մատուցանելով, և յարարչէն բոլորեցունց ի բաց լինելով։

«Ոչ յաղագս չար խրատուն, այլ կամի, զի քան զինքն չարագոյնս արասցէ։ Քանզի դեւքն ոչ եթէ բռնաբար զոք վարեն ի կորուստ, այլ զմեղս քաղցրացուցանեն ի կամս մարդոյն, և ողոքանօք որսան զանուսմունս ի խաբէութիւն, որպէս բազում մարդիկ զընկերս իւրեանց ի գողութիւն և յաւազակութիւն. իբրև ոչ եթէ բռնի ինչ վարելով, այլ պատիր խաբէութեամբ տան գործել բազում չարիս, զոմանս ի կախարդութիւն, և զոմանս ի պոռնկութիւն, և զո-

---

1 ԱԲԳԴԵԶԸԹԺԻԼԽԿVS¹S² կենօքս A կենօք է կենացս ԽԷ մեծութիւն Ճ⁶ առնուցումք փխ ունիցիմք 3 ԳԿ ճշմարտութեամբ Ծ ճշմարտութեան 4 ԲԴS² յանմահ ԳԵԸԺ գնդէ ԱԳԴԶԷԸԺԽՀV չիք և 4—5 VS³Վ¹⁶⁵²A և ի բաց գնաց A չիք և (ի բաց) 5 ԹԻ ի մեր աշխարհս եկեալ ԳԵ աշխարհ 6 ԱԲԳԵԶԷԸԺԽՀS¹S² խոստմամբք ԲԴ զյոյսն ԳԺԽԿ յոյսս ԳԽԿ դնել Ճ⁶ եդեալ 7 Կ նորաթագ(!) Ի և վեր 8 ԶԷV չիք զմիտս նորա, ունելով Ի ուխտելով փխ ունելով A ունել 8—9 ԴԵԸԺԼԽՀS¹S² հրամայեաց չերթալ Ճ⁶ յոր հուպ լինել չհրամայեաց։ չիք երթալ 10 ԱԴS² խաբեալ 10 Ճ⁶ չիք զկնի մոլար խաբէութեանն Ե խաբէութեան 10—11 ԲԴS²Ճ³ կորոյս զանմահութեան զփառսն զոր ունէր 11 ԳԿ փառս ԾԷԸՀ անմահութեան ԲԴ և հրաղայոյս կարծեացն չեհաս Ը հրաղայոյս կարծեացն ԲԴ չիք և 12 Ե ի կենացն Խ անկաւ ԲS արտաքս անգաւ Դ արտաքս անկեալ Ի ապականելի 13 Կ կենցաղս փխ աշխարհս ԱԳԶԷԹԻVՎ¹⁸⁵² դուքս ԵԺԽ չիք և ԲԴS³ այժմ բնակեալ էք Ճ⁶ չիք այժմ ԾS¹ մոլիք փխ մոլորիք (S¹ մոլիք զկնի նորա) 13—14 Դ ցնորիք մոլորեալ Գ (նորին) խրատու 14 ԵԸԺԼԽՀS¹ (նորին)

անվերջ ունենանք անանց մեծությունը։

«Բայց ինչ բանից որ դու զարհուրել ես, բարեհաճ եղիր և շուտով կաշակերտես ճշմարտությանը։

«Հրեշտակներից մեկն անմահների գնդից՝ ապստամբվելով և հեռանալով երկնքից և գալով մեր աշխարհը՝ խաբեական խոսքերով ու սուտ խոստումով անիրագործելի հույս տվեց անփորձ ու անկիրթ նոր եղած մարդուն, ինչպես մի մանուկ տղայի, ըմբոստացնելով նրա միտքը, որ ուտի այն ծառի պտղից, որին հրամայել էր չմոտենալ,— որպեսզի աստված դառնա։ Իսկ նա Աստծու պատվիրանը մոռանալով՝ խաբվեց-գնաց մոլար խաբեության հետևից, կորցրեց իր ունեցած անմահ փառքը և չըհասավ երազով հուսայած փառքին։ Ուստի և մերժվելով կյանքի վայրից՝ գցվեց այս ապականելի աշխարհը, որի մեջ դուք էլ բնակված եք այժմ, և ցնորված մոլորվում եք միևնույն խրատատուի հետևից, այլևս չունենալով պատվիրած ծառից, այլ արարածներին աստված անվանելով, և անխոս տարրերին երկրպագելով, և անորովայն դևերին կերակուր մատուցանելով և բոլորի արարչից հեռացած լինելով։

«Չար խրատատուն չի կշտանում, այլ կամենում է, որ իրենից է՛լ ավելի վատթարները կատարի։ Որովհետև դևերը ո՛չ թե բռնությամբ են մարդուն դեպի կորուստ տանում, այլ մեղքը քաղցրացնում են մարդու ըմքի համար և հորդորելով որսում են անուսումներին ու խաբում, ինչպես որ շատ մարդիկ իրենց ընկերներին գողության և ավազակության են հորդորում. ո՛չ թե որևէ բռնությամբ մղելով, այլ ստապատիր խաբեությամբ շատ չարիքներ են գործել տալիս, ոմանց կախարդություն, ոմանց պոռնկություն և ոմանց էլ շատ ուրիշ անթիվ աղտեղի բաներ։ Եվ

խրատուն ԶԷԹԻV խրատուի ԲԴS² խրատու Դ ոչ ունելով ևս Թ ունել ԳԵԸ ծառոյ 15 ԱԳԶԷԹԻԿ աստուածս Ճ⁶ խոստովանելով փխ ասելով ԹՀ տարերացս 15—16 V երկրպագանելով 16 Ը յորովայն փխ անորովայն ԲԳԴ կերակուրս 16—17 ԵԸԺԼԽ ԾS¹ և յամենեցուն արարչէն ի բաց մերժելով Հ ամենեցուն յարարչէն ԳՃ⁶ ի բաց ելանելով ԳԿՃ⁶ ամենեցունց Կ ելանելով փխ լինելով A և յարարչէն բոլորեցունց ի բաց մերժելով 18 ԲԴS² որ ոչ յաղագս չար խրատուն ԵԶԸԺԻԼԽՀVS¹ խրատուն է խրատոյն Թ խրատատուն 18—19 ԳԿՎ¹⁸⁵² չարագոյն 19 ԲԴ դեք 19—20 ԲԴS² ոչ զոք բռնաբար վարեն ի կորուստ Դ չիք եթէ A վարեն զոք 20 ԴԵԸԺ զմեղսն ԲԴ մարմնոյն փխ մարդոյն 21 ԱԶԷԹԻV զանուսումս Դ զանուսմունսն ԳԵԸԺՀS² որպէս և ԴԹ մարդիկք 22 Բ զկեանս փխ զընկերս Ի աւազակութիւն ԲԳԴS² իբրև Ի և իբր 23 Ճ⁶ չիք ինչ Ե խաբէութեան ԲS² անբաւ ԳԵԸԺԼԽԿS¹ ան թիւ փխ բազում 23—24 Ճ⁶ և յայլ բազում չարիս Ճ⁶ չիք էջ 74 տող 23—էջ 76 տող 1 տան գործել—աղտեղութեանն 24 Հ չիք ի պոռնկութիւն մանս յանթիւ ի բազում յայլ իրս աղտեղութեանս։ Եւ արդար դատաւորօք վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի Աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ, և չարին չարագործ. զի բազում անգամ է՝ զի ի բարի մարդկանէ չարք լինին, և յետոյ ի չարագունից անտի կատարելագոյն բարիք։

«Եւ դատաւորք ստոյգ, որք դատին զչարագործս, ոչ եթէ չարք անուանին և չարչարիչք, այլ յոյժ բարիք և բարեգործք. և բնութիւն մի է, և ոչ երկու. իսկ ի միոջէ անտի գործք երկուութեան երևին, ոմանց սատակիչք, և ոմանց պարգևատուք։ Եւ եթէ առ մարդիկ այս պաշտի ի ձեռն թագաւորական վիճակին իրաւունն խնամ տանել իւրում իշխանութեանն, ո՜րչափ ևս առաւել Աստուծոյ բոլոր աշխարհս, որ ընդ ամենեցուն կեանս կամի և ոչ զմահ։ Եւ ահա ուր բազմացաւ յանցաւորութիւն, տանջեաց զամենեսեան մահուամբ. իսկ ուր եղև ունկնդրութիւն հնազանդութեան, շնորհեաց զպարգևս անմահութեան։

«Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ, զոր դու աներասանակ արձակ բերանով՝ անահ աներկիւղ համարձակութեամբ հայհոյես։ Թողեալ զՅիսուս Քրիստոս զփրկական անունն՝ Փանդուրակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիչ կարծես. և զերկնաւոր փրկութիւնն աղաւաղես և անարգես ի կորուստ անձին և բոլոր աշխարհիս։ Զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վրէժ տանջանացն յանշէջ հուրն սպառնացեալ գեհենին,

---

1 Հ չիք և զոմանս յանթիւ Տ^{3} և զոմանս բազումս ԳԵԸԺԼԽԿՏ^{1} չիք յանթիւ ԱԵՁէԹԽ այլ ԲՏ^{2} չիք իրս ԲՏ^{2} աղտեղութիւն Դ և զոմանս ի բազում աղտեղութիւնս 1—2 ԲԴA դատաւորք 2 ԳԵԺԼԽԿՀՏ^{1} մահուամբ չափ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{2} իբրև 3 ԱՁէԻ բարեգործք ԲԴՃ^{6} դատաւորքն իցեն արարածք ԳԵԸ արարուածք փխ բարեգործ ԺԽԾԿՏ^{1}Տ^{2} արարածք ԲԴ և չարի չարագործքն ԱԳԵՁէԺԻԿՀՃ^{3} չարագործք 3—4 ԲԴՏ^{2} բազում անգամ է որ ի բարի ԸԿՀ և փխ զի (ի բարի) ԳԵԺԽ անգամ և ի բարի 4 ԳԵԸԺԽԿՀ յետոյ և 5 ԲԴՏ^{2} կատարելագոյնք լինին բարիք 6 ԲԴ և ստոյք դատաւորք որ Տ^{2} և ստոյգ դատաւորք Հ դատեն Դ զչարագործսն ԸԽ չիք և 7 ԲԴ չիք և չարչարիչք ԲԴ չիք բարիք և ԲԳԴԼԽԿՏ^{2} բնութիւնն 8 Կ ի միջոյ փխ ի միոջէ ԲԴԸԺԼԽՃ^{6}Տ^{1} երկու փխ երկուութեան ԳԿ երկուութիւն ԵՀ չիք իսկ ի միոջէ անտի գործք երկուութեան Տ^{2} երկու երևի Ճ^{6} երկու բնութիւն 9 ԵԸԺԼԽՏ^{1} սատակիչ ԵԺԸԼԽՏ^{1} պարգևատու Տ^{2} և ոմանց պարգևիչ ԲԳԴԸԺԼԽԿՀՃ^{6}Տ^{1}Տ^{2} ի մարդիկ 10 ԲԴԸԽՏ^{2} պատշաճի փխ պաշտի ԲԴ իրաւունն վիճակին հրաման տալ ԳԵԺՏ^{2} իրաւունք է իրաւունքն 11 Ե իշխանութեան Հ յիւրում իշխանութեան ԳԿ առաւել ևս Ճ^{6} չիք առաւել 11—12 ԲԴ

արդար դատավորների միջոցով մահու չափ վրեժ են առնում. ո՛չ իբր թե բարի աստծու դատավորները բարեգործ են լինում, իսկ չարինը՝ չարագործ. որովհետև շատ է պատահում, որ բարի մարդկանցից չարություն է բխում, և հետո այն չարագույններից էլ՝ կատարյալ բարություն։

«Եվ ճշմարիտ դատավորները, որոնք դատում են չարագործներին, ո՛չ թե չար ու չարչարող են կոչվում, այլ շատ բարի և բարեգործ. և բնությունը մեկ է և ոչ թե երկու. իսկ այն մեկից երևան են գալիս երկու տեսակ գործեր. ոմանց համար մահաբեր, իսկ ուրիշների համար պարգևատու։ Եվ եթե մարդկանց մեջ այսպես է կիրառվում, որ [դատավորը] թագավորից ստացած իրավունքի համաձայն պատժի միջոցով կառավարում է իր իշխանությունը, որչա՜փ ավելի կլինի աստծու խնամքը ամբողջ աշխարհի համար, որ բոլորին էլ կյանք է կամենում և ոչ թե մահ։ Եվ ահա, ուր բազմացավ հանցանքը, բոլորին էլ մահով պատժեց, իսկ ուր հնազանդություն և լսողություն եղավ, անմահության պարգևներ շնորհեց։

«Ճշմարիտ աստվածը, մեր բոլորիս արարիչը նա է, որին դու անսանձ արձակ բերանով անահ, աներկյուղ, համարձակ հայհոյում ես։ Թողած Հիսուս Քրիստոս փրկական անունը, Փանդուրակի որդի ես անվանում և կարծում ես, թե մոլորեցուցիչ մարդ է. այլև երկնավոր փրկությունն աղավաղում-անարգում ես՝ անձիդ և այս ամբողջ աշխարհի կորստյան համար։ Այդ տանջանքների անանցական վրեժը պիտի փոխհատուցես սպառնացված Գեհենի[53] անշեջ կրակի մեջ՝ քո բոլոր գործա-

---

չիք բոլոր 12 Բ որում փխ որ ընդ Ճ^{6} զամենեցուն Դ որում ամենեցուն ԲԴ մահ ԳԵԼԿ ընդ մահ 13 ԱԲԳԴԵՁԸԹԺԻԼԽՃ^{6}Տ^{3} իսկ ուր է իսկ որ ԿՀ իսկ փխ և ահա է բազմացէ V իսկ ուր բազմաց է Տ^{2}Տ^{3}Վ^{1852} իսկ ուր բազմացաւ 13—14 Դ մահուամբք 14 ԲԴ հնազանդութեանն 15 ԱԲԳԴԵՁէԸԹԺԻԽԿՀՃ^{6}Տ^{1} զպարգևս A պարգևս 16 ԳԵԸԺԽԿՀ բոլորեցուն ԲԴՏ^{1} չիք մեր Գ դուն 16—17 ԱԳՁէԼV անէրեսանակ Թ անէրեսանակ (լուսանցքում՝ սանձ) 17 Ճ^{6} չիք արձակ Հ առանց սանձի աներեսանակ Տ^{3}A համարձակ 18 ԵՀ զՅիսուսի Քրիստոսի ԴԵՀ փրկական 19 ԱԳԵՁէԸԹԺԻԼԽԿՀVՃ^{6}Տ^{1}Տ^{3}Վ^{1852} Փանդուրակայ ԲԴ Փանթուրակայ որդոյ Տ^{2} Փակթուրակայ (ԵԺՀ լուսանցքում՝ հրեան Թխ հրեան Ը հեւսեան) A Բանթուրակայ Ճ^{6} ասես փխ անուանես 20 ԵԸԺԼԽՀՏ^{1} զերկնից ԵԷ փրկութիւն Ա աղուաղես Կ անձինդ 21 Ճ^{6} աշխարհի A աշխարհիդ Ճ^{6} չիք և հատուցանելոց 21—22 Ճ^{6} չիք զանանցական ԱԳԵԸԹԺԻԼԽՃ^{6}Տ^{2} 22 վրէժս Կ վրէժսն Հ զվրէժս ԲԳԴԵԸԺԼԽՀ տանջանաց ԲԴՏ^{2} յանշէջ ուր ԲԴՏ^{2} գեհենին չիք սպառնացեալ ԳԵԸԺԼԽ հուր սպառնալեաց ԲԴՏ^{2} գեհենին յանսպառ տանջանքն Ճ^{6} սպառնալեաց։

հանդերձ ամենայն գործակցօք քովք, առաջնովք և միջնովք և վերջնովք։

«Այլ մեք այսպէս գիտեմք զԱստուած, և ի սոյն հաւատամք յաներկբայս։

«Աստուած, որ արար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, յառաջագոյն նկատելով մարգարէիցն, առանց իրիք պատճառանաց մարմնաւոր կարգի։ Որպէս յոչընչէ արար զայս մեծ մարմին աշխարհս, սոյնպէս առանց իրիք մարմնական միջնորդի առ զմարմինն յանփորձ կուսէն ճշմարտիւ, և ոչ ստուերագիր երևմամբ։ Էր Աստուած ճշմարտիւ, և եղև մարդ ճշմարտիւ, ոչ ի լինելն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, և ոչ ի կալ մնալն Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն և մի։

«Այլ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս, զի և մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն։ Ոչ անարգանս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրև զաստուածաստեղծ զիւր գործ։ Ոչ առ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն՝ իբրև զանմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով, շնչով և հոգւով զգեցաւ, և միաբանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետև մի գիտեմք զաստուածութիւնն, որ յառաջ էր քան ըզաշխարհս, նոյն և այսօր։

«Այս Յիսուս Քրիստոս, որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն կամաւ ի մահ. և որպէս ինքն աստուածութիւնն գիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն, և ծնաւ և պատեցաւ ի խանձարուրս և եդաւ ի մսուր, և շարժեաց էած զմոգսն յարևելից յերկրր-

---

1 Ճ^{6} գործովք փխ գործակցօք A քոյովք փխ քովք ԱԳԴԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2} քովք Բ առաջնաւքն, միջնովք 1—2 Ճ^{6} չիք «առաջնովք—վերջնովք» ԳԴԵԺԽԿՀ չիք և (միջնովք) ՁէԻV չիք և վերջնովք 4 Ըխ աներկբայս VՏ^{3}A ի յաներկբայս 5 A եւ փխ աստուած Ջ զոր փխ աստուած որ Բ սրբոյ 6 ԱՁէԹԻV զուշակելով փխ նկատելով ԲԴՏ^{2} ասելով փխ նկատելով ԵԺ մարգարէից 6—7 ԲԴ առանց և ոչ մի (Դ միոյ) իւիք մարմնաւոր կարգի պատճառս Տ^{2} առանց և ոչ մի իրիք պատճառաց 7 Տ^{1}Ծ չիք արար 8 Տ^{2}Տ^{3}A մեծամարմին ԲԴ մեծ մասն աշխարհիս Գ մեծ զմարմին Հ զաշխարհս ԲԴ չիք իրիք Բ մարմնականի 9 Ի և առ Բ զմարմին ԱԳԴէԹVՃ^{6} էառ զմարմին(ն) ԵէԸԺԼԽԿՀՏ^{1} էառ մարմին Տ^{2} առ զմարմին Ի անփորձ 9—10 ԱՁէԻVՃ^{6} Տ^{2}Տ^{3}Վ^{1852} և ոչ առստուերագիր երևմամբ ԳԺԼԽ ստուերագիր (տողամիջին՝ «առ աչս») Դ չիք և ոչ ստուերագիր ճշմարտիւ (բայց հետո ավելացված է լուսանցքում) Թ չիք և ոչ ստուերագիր երևմամբ 10 Բ չիք և եղև մարդ ճշմարտիւ ԵԸԺԽԾՀՏ^{2} ճշմարիտ 11

կիցներով մեկտեղ, առաջիններով, միջիններով և վերջիններով։

«Իսկ մենք այսպես ենք ճանաչում Աստծուն և այս բանին հավատում ենք աներկբա։

«Աստված, որ ստեղծեց այս աշխարհը, նույնը եկավ և ծնվեց սուրբ կույս Մարիամից, ինչպես առաջուց գուշակել էին մարգարեները, առանց մարմնավոր կարգի որևէ պատճառի։ Ինչպես որ ոչնչից ստեղծեց այս մեծամարմին աշխարհը, այնպես էլ առանց որևէ մարմնական միջնորդի [իր] մարմինն առավ անարատ կույսից ճշմարտապես, և ոչ իբրև ստվեր երևալով։ Ճշմարտապես աստված էր և ճշմարտապես մարդ դարձավ. ո՛չ մարդ դառնալիս աստվածությունը կորցրեց, և ո՛չ էլ աստված մնալիս՝ աղավաղեց մարդկությունը, այլ [մնաց] միևնույնը։

«Բայց որովհետև չէինք կարող տեսնել անտեսանելուն և մերձենալ անմերձենալուն, ուստի եկավ մեր մարդկությունն ընդունեց, որպեսզի մենք էլ նրա աստվածություն [ից բաժին] ընդունենք։ Ամենևին անարգանք չհամարեց իր ստեղծած մարմինն առնելը, այլ մեծարեց նրան իբրև իր աստվածաստեղծ գործը։ Ո՛չ թե քիչ-քիչ շնորհեց սրան անմահության պատիվն ինչպես անմարմին հրեշտակներին, այլ միանգամից զգեցավ ամբողջ բնությունը մարմնով՝ շնչով և հոգով, և միացրեց աստվածության հետ. միություն և ոչ թե երկուություն. և այսուհետև մեկ ենք ճանաչում աստվածությունը, որ կար այս աշխարհից առաջ, նույնը և այսօր։

«Այս Հիսուս Քրիստոսը, որ իր մարմնով փրկեց ամբողջ աշխարհը, իր կամքով դեպի մահ եկավ. և ինչպես ինքն աստվածությունը գիտե՝ մարմնացավ անարատ կույսից և ծնվեց ու խանձարուրներով փաթաթվեց և մսուրի մեջ դրվեց, և արևելքից մոգերին շարժեց-բերեց իրեն երկըր-

---

ԲԴ ոչ ի մարդն լինել ԱԲՁէԹV մնալ 12 ԳԵԺԸԼԽՀՏ^{1} չիք «և ոչ զմարդկութիւնն» Խ այլ մի և նոյն 13 ԲԴ չիք այլ Կ զի փխ քանզի ԵԸԺԼԽՀ ոչ ոք կարէ Տ^{1} ոչ ոք կարէր 14 Բ մերում փխ մերով ԳԺԽԿՀՃ^{5} չիք և 15 Ի աստուածութեամբ Λ անարգս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1} ոչինչ անարգանս 15—16 ԲԴՏ^{2} ոչինչ անարգութիւն Ճ^{6} զգենուլ 16 ԲԴՏ^{2} արարած փխ ստեղծուած Կ զմարմինս 16—17 A աստուածաստեղծ ԲԴ աստուածաստեղծագործ փխ զաստուածաստեղծ զիւր գործ 18 Ի և իբրև 19 ԲԴԳԵ բնութիւն Դ մարմնովն Տ^{2} և շնչով ԱՁէԻV զգեցաւ (է զգեցօ) 20 Ե աստուածութեան Բէ երկութիւն ԲԴ չիք և 21 ԲԴՏ^{2} չիք էր ԵԸԺԼԽՀՏ^{1} որ էր յառաջ 22 A այսօր և յաւիտեան ԳԿ նոյն է և այսօր 23 Գ իւրով մարմնով ԵԸԺԼԽՀ մարմնով իւրով Տ^{1} որ մարմնով փրկեաց 24 ԲԴՏ^{2} սա եկն ինքնին կամաւ A կամօք ԲԴ չիք և Ե աստուածութիւն Ճ^{6} չիք աստուածութիւնն 25 ԵԸԺԽ չիք և (ծնաւ) 26 ԲԴ չիք և (շարժեաց Տ^{2}Տ^{3}Λ ած Դ աստուած փխ էած ԲԴ յարևելից զմոգսն A յարևելից կողմանցս պագութիւն. սնաւ իբրև զտղայ կաթամբ, աճեաց և մեծացաւ ամս երեսուն, մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամլորդւոյն ի Յորդանան գետ: Արար նշանս մեծամեծս և արուեստս ի մէջ Հրէիցն. մատնեցաւ ի քահանայից, դատապարտեցաւ ի Պիղատոսէ Պոնտացւոյ: Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի. երևեցաւ երկոտասան աշակերտացն և այլոց բազմաց աւելի քան զհինգ հարիւրոյն: Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս քառասուն՝ վերացաւ ի լեռնէն Ձիթենեաց յերկինս յանդիման իւրոց աշակերտացն, ել և նստաւ ի Հայրենին աթոռն. խոստացաւ երկրորդ անգամ գալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զբոլոր աշխարհս, առնել դատաստան արդար ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ զպարգևս արժանաւորաց, և հատուցանել պատիժս չարագործաց, որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ հաւատան:

«Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք:

«Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան. ըստ կամաց քոց արա զինչ և կամիս: Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկիր այլ տէր փոխանակեմք ընդ քեզ, և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Աստուած բաց ի նմանէ:

«Ապա եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, ահաւասիկ կամք զբոլոր մարմինս տուեալ ի ձեռս քո. վաղվաղակի արա զինչ և կամիս ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք. սուրք քո՝ և պարանոցք մեր: Զիմք ինչ յաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց:

---

1 ԲԴ սնաւ կաթամբ իբրև զտղայ Ճ^6 աճեաց ըստ մարմնոյ 2 է ի յորովայնէ փխ Յովհաննէ ԵԺԽՃ^6 չիք ի (յամլ…) ԲԴՀ^2 ի սուրբ Յովհաննէ ամլորդւոյն մկրտեցաւ ի Յորդանան գետ Թ Յորդան գետ ԴԿ ի սուրբ Յովհաննէ յԱմլորդէ 3 ԱԳՁԼԻԿVS^3 զարուեստս ԲԴ զօրութիւնս փխ արուեստս ԵԸԺԼԽՀS^{1}S^2 և արուեստս մեծամեծս ԳԵԺ Հրէից 3—4 ԲԴԺԼԽS^{1}S^2 չիք մատնեցաւ ի քահանայից ԸՀ մատնեցաւ քահանայից 4 ԲԳԴԵԸԼԿԽՀS^{1}S^2 դատեցաւ ի Պիղատոսէ (Բ Պեղատոսէ) Ճ^6 չիք պոնտացւոյ 5 ԱՁԷԹԻV և երևեցաւ Բ աւելի ես 6 ԲԴS^2 հարիւրաց ԲԴ չիք եւ 7 ԵԸԺԼԽՀ երկերնոցա ցանի փխ և շրջելով ընդ նոսա Ի և շրջեալ ԲԴ աւուրս 7—8 Ա յերկինս ի լեռնէն Ձիթենեաց Է ի լեառնէն 8 Հ չիք յերկինս ԲԴ չիք իւրոց Ժ աշակերտացն իւրոց ԲԴ ել նստաւ 9 ԲԴS^2 խոստացաւ գալ երկրորդ անգամ 12 ԳԹ չարագործացն ԲԴS^2 այսր փխ այսմ 12—13 ԲԴS^2 ամենայն 13 ԲԴԸԽS^2 բարութեանց Ճ^6 չիք բարերարութեանց 14 Դ հաւատայ է նախատել փխ խախտել Ճ^6 ի մերոց հաւատոյս

պագելու. որպես երեխա սնվեց կաթով, աճեց ու մեծացավ երեսուն տարի, ամլորդի Հովհաննեսից[54] մկրտվեց Հորդանան գետում[55]: Մեծամեծ հրաշքներ ու սքանչելիքներ գործեց հրեաների մեջ. մատնվեց քահանաների կողմից, դատապարտվեց Պոնտացի Պիղատոսի[56] կողմից: Խաչվեց, մեռավ, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ. երևաց տասներկու աշակերտներին և ուրիշ շատերին՝ ավելի քան հինգ հարյուրի: Եվ նրանց հետ շրջելով քառասուն օր՝ երկինք վերացավ Ձիթենյաց սարից[57] իր աշակերտների աչքի առաջ, ելավ ու նստեց հայրենի աթոռը: Խոստացավ երկրորդ անգամ գալ ահավոր զորությամբ՝ մեռելներին հարություն տալու, ամբողջ աշխարհս նորոգելու, արդարների և մեղավորների միջև արդար դատաստան անելու, արժանավորներին պարգևատրելու և այն չարագործներին պատժելու համար, ովքեր այս բոլոր բարերարություններին չեն հավատում:

«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված:

Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքումն են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթե այս հավատի մեջ թողնես, ո՛չ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն և ո՛չ էլ երկնքում ուրիշ աստված կընդունենք Հիսուս Քրիստոսի փոխարեն, որից բացի՝ ուրիշ աստված չկա:

Իսկ եթե այս մեծ վկայությունից հետո ուրիշ բան հարցնես, ահավասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը քո ձեռքը տված. արա՛ շուտով՝ ինչ որ կամենում ես: Քո կողմից տանջանք, իսկ մեր կողմից հանձնառություն. քո սուրը և մեր պարանոցները: Մենք ոչնչով ավելի լավ չենք մեր նախնիներից, որոնք այս հավատի համար դրին իրենց գույքն ու ստացվածքը և մարմինները:

խախտել զմեզ ոչ կարէ ԳԵԺԽ չիք և (ոչ մարդիկ) 15 Դ մարդիկք, ոչ սուր ոչ հուր ՁԼԹԽV մարդիկք Լ ոչ մարդիկ և ոչ հրեշտակք ԲԳԵԺ չիք և (ոչ հուր) է և ոչ ջուր և ոչ S^1 ինչ և են Ճ^6 չիք ոչ ջուր: չիք զինչ և են Ի և ոչ ջուր և ոչ ամենայն 16 ԲԴ տանջանք փխ հարուածք 15—16 Է չիք ամենայն զինչ և են դառն հարուածք 17 ԱԲ^{2}ՁԻԹ և ամենայն ինչք ԼԽ ինչ Ճ^6 չիք մեր 18 Ճ^5 չիք կան Ի չիք քոց Ճ^6 արա զոր ինչ կամիս ԲԴS^2 արա ըստ կամաց քոց 19 ԲԴ հաւատով ԲԳԴԵԺԽԿՀS^2 ի յերկիր 19—20 ԲԴ ընդ քո ԲԳԴԵԺԽԿՀS^2 ի յերկինս Թ չիք այլ 21 VS^3 բայց 22 Դ ապա եթէ ի վերայ այսր Կ քէ Թ այս փխ այսր ԸԽ վկայութեանս 23 ԲԲ^{2}Դ ահաւասիկ ԱԲԲ^{2}ԳԴՁԷԹԻԿ մարմինս Ա մարմին ԵԸԺԼԽՀS^{1}S^2 մարմինս մեր Ճ^6 մարմինք մեր ԲԴ տամքք S^2 տամք փխ տուեալ 23—24 ԲԴ արա վաղվաղակի 25 ԲԴԵԺԼԽԿS^{1}S^2 պարանոց ԲԴ չիք ինչ ԵԸԺԼԽՀS^1 մեք յաւ 25—26 Խ որ այս վկայութեան ի վերա. ԲԴՃ^6 եդին զանձինս իւրեանց և զստացուածս 26 Ճ^6 չիք և զստացուածս և զմարմինս իւրեանց 27 Բ չիք իւրեանց:

«Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր. քանզի և նա անմահ էր, և ա՛յնչափ սիրեաց զմեզ, մինչև մահ ի յանձն էառ, զի և մեք նորա մահուամբն յաւիտենական մահուանէն ապրեսցուք։ Եւ եթէ նա զիւր անմահութիւնն ոչ խնայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամօք յանձն առցէ զմեզ յիւր յանմահութիւնն. մեռցուք իբրև զմահկանացուս. զի ընկալցի զմեր մահն իբրև զանմահից։

«Այլ դու յետ այսր ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրև զտղայս. այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա, և ոչ յաւիտեանս, և ոչ յաւիտենից յաւիտեանս»։

Ի սմին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւնն միաբանեաց ի մեծամեծաց մինչև ցփոքունս. անսուտ երդմամբ եդին վկայութիւն՝ կենօք և մահու ի նմին կալ հաստատուն։

Եւ իբրև եհաս նամակն յարքունիս, և ընթերցան ի մեծի խոնաստանի յանդիման ամենայն բազմութեան կարաւանին, բազումք այնոքիկ էին, որ իբրև լսէին՝ գովէին զպատասխանիսն։ Թէպէտ և երկնչէին յահէ տէրութեանն, սակայն ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն ընդ համարձակութիւն աներկիւղութեանն

---

1 Բ զի թէ ԳԺԽԿՀ և անմահք Դ անմահ եղ և անմահ ԲԴԾ^6 չիք մեզ ԳԿՏ^2 մեռանել մեզ Բ^{2}Թի մեռանիլ 1—2 Ծ^6 վասն սիրոյն Քրիստոսի մեռանել ԵԺԼԽՀ մարթ էր և մեռանել մեզ Ի մեր Տ^1 զի եթէ և անմահ իսկ էաք. մարթ էր և մեռանել մեզ վասն սիրոյն Քրիստոսի 2 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք արժան էր Ե չիք և նա Խ չիք և (նա) Դ չիք քանզի և նա անմահ էր Է այնչափ ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^1 չիք և (այնչափ) Դ զմեզ առաւել 2—3 Ծ^6 զմեզ սիրեաց 3 ԲԴԵԺԽԿՀ զմահ յանձն առ (Ժխ էառ) ԴԵ չիք ի ԾՏ^2 զմահ A զի մեք 3—4 ԲԾ^6 ի յաւիտենական ի մահուանէն ԴԺԿ ի յաւիտենական V յաւիտենականէն 4 ԲԴ չիք նա 4—5 ԱԶէՏ^{3}Վ^{1852} յանմահութիւնն Խ անմահութեանն 5 Գ եղեաք Հ մեզօք փխ եղաք Խ չիք եղաք մահկանացուք կամօք Ծ^6 կամաւ 6—7 ԳԴԺԵԼԽ անմահութիւնն Է յանմահութիւն 7 Բ մահկանացուք Դ զմահկանացուք 8 Ի զանմահութիւն փխ զանմահից 9 VՏ^{3}Λ այլ դու յայսր ամենայնի ԲԴՏ^2 այլ բանիւք զմեզ ԳԿԾ^6 զմեզ բանիւք ԵԸԺԼԽՀՏ^1 զմեզ բանիւ այլ մի՛ հարցաներ 10 ԲԴԸԻԼԽԾ^6 պարտիցիմք 11 ԲԴ անլուծութեամբ եմք Տ^2 եմք ընդ Աստու-

Որովհետև եթե անմահ էլ լինեինք և պետք լիներ մեզ մեռնել Քրիստոսի սիրո համար, արժան էր, որովհետև նա էլ անմահ էր, բայց այնչա՛փ սիրեց մեզ, որ մինչև անգամ մահ հանձն առավ, որպեսզի մենք էլ նրա մահով փրկվենք հավիտենական մահից։ Եվ եթե նա իր անմահությունը չխնայեց, մենք, որ [մեր] կամքով մահկանացու եղանք. [մեր] կամքով էլ կմեռնենք նրա սիրո համար, որպեսզի նա էլ հոժարությամբ ընդունի մեզ իր անմահության մեջ. կմեռնենք իբրև մահկանացուներ, որպեսզի [նա] մեր մահն ընդունի որպես անմահների մահ։

«Իսկ դու այս ամենից հետո մեզ այլևս մի՛ հարցնի. որովհետև մեր հավատի ուխտը ո՛չ թե մարդու հետ է, որ երեխայի նման խաբվենք, այլ աստծու հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ, ո՛չ այժմ և ո՛չ հետո, ո՛չ հավիտյանս, և ո՛չ էլ հավիտենից հավիտյանս»։

Ամբողջ բազմությունը, մեծերից մինչև փոքրերը, միաբանվեցին այս մեծ վկայությանը. անսուտ երդում դրին՝ կյանքով և մահով հաստատ մնալ նրա վրա։

Երբ այս նամակն արքունիք հասավ և կարդացին մեծ խոնաստանում[58] բանակի ամբողջ բազմության առաջ, շատերը, որ լսում էին, գովում էին [տված] պատասխանները։ Թեպետև տերությունից երկյուղ էին կրում, սակայն գաղտնաբար մեկմեկու մոտ նույն գովասանական վկայությունն էին տալիս. ճարտարաբանությունից ավելի զարմանում էին

ծոյ ԲԴՏ^3 չէ փխ չիք V որ ոչ ումեք չիք փխ որում չիք Ծ^6 որև չէ իսկ հնար 11—12 ԲԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 քակել Թ քակտիլ 12 ԲԴԵԸԺԼԽՀ առ յապա Ըխ չիք և ոչ յաւիտեանս 12—13 Լ չիք յաւիտենից ԲԴ և ոչ յաւիտեանս յաւիտենից 14 Դ ի նմին Ե բազմութիւն 15 ՁէVՏ^3 մինչ ԴԿ ի փոքրկունս ԵՀԼՏ^1 ի փոքունս Ըխ չիք ի մեծամեծաց մինչև ցփոքունս 16 Դ մահուամբ 17 ԵԸԺԽՀ չիք Եւ (իբրև) ԴԴԵԺ յարքունիսն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ընթերցեալ 17—18 ԱԲԹԻ խոնաստանի (լուսանցում՝ երախանի) ԳԵԼ խոնաստանին ԴՏ^1 խորաստանին Ի երախանի խոնաստանի ԿԾ^6 Հոնաստանին 18 ՁէV ամենայնի Դ չիք բազմութեան Դ կարաւանին և յանդիման ամենայն զօրուն ԾՏ^1 չիք յանդիման կարաւանին 18—19 ԲԴՏ^2 բազում փխ բազումք 19 Դ այն էին փխ այնոքիկ էին Բ չիք իբրև ԲԻՎ^{1852} զպատասխանին 20 Լ չերկնչէին(!) Դ ի յահէ Ե տէրութեան ԳԵԽ չիք ի Հ չիք ի ծածուկ 21 Դ զնոյն տային վկայութիւն Խ չիք ընդ 22 Բ ճարտարութեանն Դ ճարտարութիւն բարբառնութեանն և Խ զճարտարաբանութեանն և ընդ ԵԷ աներկիւղութեան Տ^2 աներկեղութեանն։

զարմանային։ Եւ բազումք ահաբեկեալք սկսան զրահել պնդագոյն, և զնոյն շշնչիւն լսէին յամենայն շրթանց։

Իսկ չարասէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն շնչեաց չարախօսութիւն, և բորբոքեաց զԹագաւորն իբրև զհուր անշիջանելի։ Եւ սկսաւ կրճտել զատամունսն իւրև զօրհասական վիրաւոր. և յայտ յանդիման ձայն արձակեաց առ մեծ հրապարակն և ասէ. «Գիտեմ ես զչարութիւն բազմութեան մարդկանս, որ թերահաւատեն ի մերոց օրինացս, և զկնի կախարդութեան մոլորեալ են անդարձութեամբ։ Եւ իմ եդեալ է ի մտի, թէ ոչ ումեք թողացուցից ի մեծամեծ հարուածոցն, մինչև ակամայ ի բաց կայցեն յայնպիսի վրիպական օրինաց. եթէ ոք կարի ի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նա անցուցից»։

Յայնժամ ծերն դառնացեալ բանս ի ներքս ընկէց, և ասէ ցԹագաւորն. «Առ ի՞նչ է քո այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չելանէ ըստ քո հրաման, և Հոնք կան քեզ ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ։ Տրբաբար հրաման տուր ի ներքս, և ամենայն որ ինչ և ասես՝ վաղվաղակի կատարի»։

Եւ անդէն Թագաւորն ի ներքս կոչեցեալ զդպրապետն, հրամայէր գրել հրովարտակ. և ոչ ևս ըստ սովորութեանն, այլ բանս զայրագինս իբր առ ատելիս և անպիտանս, չյիշելով ամենեին զմեծամեծ վաստակս տիրասէր մարդկանն. այլ միայն կոչոյ հրաման տուեալ յականէ յանուանէ զարս, զոր ինքն ճանաչէր, որոց անուանքն են այս։

ի տոհմէն Սիւնեաց ՎԱՍԱԿ անուն։

---

1 Դ չիք Եւ ԷԸ բազում A յահաբեկելոց Բ յահաբեկեալք ԵԸԺԼԽՀՏ¹Տ² ահաբեկեալ Գ սկսան խիղախել 2 Բ շնչիւն Դ շշնչէին և ասէին յամենայն շրթանց 3 Խ հազարապետին 4 ԸԽ չարախօսութեամբ Դ իբրև զհուր անշէջ զԹագաւորն Ծ զԹագաւորն ի բարկութիւն 5 Դ կրճել ԳԵԺ զատամունս ԸԽ զատամունս իւր Ժ իբր Հ հասարական(!) փխ զօրհասական 6 ԱԲԳԶԷԿԹV յանդիմանութեամբ Ի յանդիմանութիւն ԸԽ ձայնս արձակեաց Տ³Վ¹⁸⁵² ձայնարկեաց A ձայն արկեալ ի մեծ հրապարակին ԳՏ³Վ¹⁸⁵² հրապարակին V հրապարին(!) Դ հազարապետն փխ հրապարակն 7 Դ մարդկանն 7—8 Բ թերահաւատին 8 Է ի մերոյ Ի արդար օրինացս V չիք կախարդու (բաց տեղ է թողած, երևի օրինակը փչացած է եղել) Դ և զկնի մոլորութեան կախարդութեան վրիպեալ են 8—9 Դ չիք անդարձութեամբ է անդարձակութեամբ(!) 9 Դ ի մտի եդեալ է ԷV չիք և իմ եդեալ է ԲԵԸԹԺԼԽ եթէ Դ ոչ երբէք ԵԸԺԼԽՀՏ² չիք ումեք 10 ԴԵԷԸԹԽՀՏ¹Տ² մեծամեծաց հարուածոց ԲԹ յակամայ Դ չիք ակամայ ԱԵԶԷԺԻԼԽԾՀVՏ³Վ¹⁸⁵² կայցեն Բ „յնպիսի 11 ԳԵԸԺԼԽԿՀՏ² վրիպակ Դ օրինացն ԱԲԶԷ ի կարի մերձաւորաց ԳԵԸԺԼԽԿՀՏ²

աններկյուղ համարձակության վրա։ Եվ շատ ահաբեկվածներ սկսեցին ամրապես զորանալ և նույն շշնջյունն էր լսվում բոլոր շրթունքներից։

Իսկ չարասեր մոգպետը մեծ հազարապետի հետ միասին չարախոսություն շնչեց և թագավորին իբրև անշիջանելի հուր բորբոքեց։ Եվ նա սկսեց ատամները կրճտացնել ինչպես մի օրհասական վիրավոր և բոլորի առաջ ձայն արձակելով մեծ ատյանում՝ ասաց. «Ես գիտեմ այդ բազմաթիվ մարդկանց չարությունը, որոնք թերահավատությամբ են վերաբերվում մեր կրոնին և անդարձ մոլորված են կախարդության հետևից։ Եվ ես մտքումս դրել եմ, որ ոչ ոքի մեծամեծ հարվածներից չազատեմ, մինչև որ ակամա հեռանան այնպիսի սխալ կրոնից. եթե ամենամոտիկ մարդկանցիցս մեկն էլ լինի, նույն պատիժները նրան էլ կտամ»։|

Այն ժամանակ դառնացած ծերը[59] խոսք վրա բերեց և ասաց թագավորին. «Ինչո՞ւ համար է այդ քո մեծ տրտմությունը, որովհետև եթե կայսրը քո հրամանից դուրս չի գալիս, և հոները քեզ են ծառայում, էլ ո՞ր մարդն է երկրի վրա, որ կարող է ընդդիմանալ քո հրամանին։ Տիբաբար հրաման տուր ներսը[60], և ինչ էլ որ ասես՝ իսկույն կկատարվի»։

| Եվ թագավորն անմիջապես ներս կանչելով դպրապետին՝ հրամայեց հրովարտակ գրել.| բայց այլևս ո՛չ թե սովորության համաձայն, այլ զայրագին խոսքեր ինչպես ատելի և անպիտան անձերի, ամենևին չհիշելով տիրասեր մարդկանց մեծամեծ ծառայությունները, այլ միայն անուն-անուն կանչելու հրաման տալով այն մարդկանց, որոնց ինքը ճանաչում էր և որոնց անուններն են՝

| Սյունյաց տոհմից ՎԱՍԱԿ անունով.

և եթէ կարի ոք Ի չիք ի Դ չիք «եթէ ոք—անցուցից» 12 VՏ³A նոսա փխ նա 14 Դ արդ քո Ի չիք քո Բ մեծութիւնդ փխ մեծ տրտմութիւնդ ԶV տէրութիւնդ է տէրութիւն ԳԿ սրտմտութիւնդ Դ չիք եթէ Բ կայսրն 15 ԳԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² ոչ ելանէ ԱԲԶԹԻ ընդ փխ ըստ Դ ընդ քո հրամանաց է հրամանդ(!) Հ յոյնք փխ հոնք Խ ո՞վ 16 Դ իցէ յերկրի եթէ կարէ Դ կամաց քոց փխ քում հրամանիդ 17 ԱԲԳԶԷԹԻV զինչ ԳԺԽ զոր ինչ ասես ԵԸԼՏ² և զամենայն որ ինչ ասես ԺԽ զամենայն 18 Դ լինի փխ կատարի Խ կատարեա 19 ԱԲԶԷԹԻ Թագաւորն վաղվաղակի ի ներքս ԵԸԺԼԽՀՏ² և Թագաւորն անդէն (ԵՀ անդրէն) Բ կոչեաց A կոչեալ Դ և անդէն Թագաւորն զդպրապետն ի վաղվաղակի ի ներս կոչէր Բ և հրամայէր Խ հրամայէ 20 ԳԸԼԽԿՀՏ² չիք և (ոչ ևս) ԵԸԺԼԽ ոչ փխ և ոչ ևս ԵԷ սովորութեան Տ² հրովարտակ ոչ ըստ սովորութեան 21 ԳԴԵԷԼԽԿՀՏ² իբրև 21—22 Դ չիք զմեծամեծ 22 Դ զվաստակս ԲՏ² մարդկան 22—23 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² կոչելոյ հրաման տայր 23 ԼՏ¹ չիք զարս ԳԵԺԽԾԿՀՏ² զորս 23—24 ԱԲԶԷԹԻԿVՏ³Վ¹⁸⁵² որոց անուանքն (Բ անուանք) են այս ԳԴԵԸԺԼԽՀՏ¹Տ² որոց անուանք են այսոքիկ Λ և այս անուանք են նախարարացն 25 ԴԼԾՏ¹ դնում են նախ ի տոհմէն Արծրունեաց, ապա՝ ի տոհմէն Սիւնեաց։

Ի տոհմէն Արծրունեաց ՆԵՐՇԱՊՈՒՀ անուն։
Ի տոհմէն Ռշտունեաց ԱՐՏԱԿ անուն։
Ի տոհմէն Խորխոռունեաց ԳԱԴԻՇՈՅ անուն։
Ի տոհմէն Մամիկոնէից ՎԱՐԴԱՆ անուն։
Ի տոհմէն Մոկաց ԱՐՏԱԿ անուն։
Ի տոհմէն Ապահունեաց ՄԱՆԷՃ անուն։
Ի տոհմէն Ամատունեաց ՎԱՀԱՆ անուն։
Ի տոհմէն Վահևունեաց ԳԻՒՏ անուն։
Ի տոհմէն Անձևացեաց ՇՄԱՒՈՆ անուն։

Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին ի դուռն արքունի, և կէսքն առ նմա իսկ էին ի կարաւանին, և այլքն ի կողմանց հիւսիսոյ ի Հոնաց պահակին. Թողեալ էր զոմանս ի նախարարացն անդէն յաշխարհին Հայոց։

Արդ թէպէտ և ոչ համագունդ ի միոջ վայրի դիպեցան ամենեքեան, սակայն յառաջագոյն գիտացեալ զխորհուրդս չարաբարոյ բռնաւորին, և զհեռաւորսն ևս իբրև զմերձաւորս ի միոջ վայրի առ միմեանս համարէին։

Եւ ի ձեռն սրբոյն Յովսեփու եպիսկոպոսի նովին ուխտիւ հաստատեալ՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր տեղեաց ի դուռն արքունի։ Եւ յոյժ փութային վասն եղբարց և որդեաց և սիրելի դայեկանունդ բնակացն, որ չարաչար կային ի մեծի նեղութեանն։ Վասն որոյ և նոքա զանձինս ի մահ մատնեցին՝ ոչ ինչ զանգիտելով իբրև զանարի վատասիրտս. այլ յոյժ քաջութեամբ պնդեցին զանձինս, զի թերևս կարասցեն փրկել զնոսա ի մեծամեծ հարուածոցն։ Եւ իբրև հասին ի դուռն արքունի, ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին թագաւորին։ Բայց թէպէտ և տեսանէին զեղ-

---

1 ԱԳՁԷԻԿV Մերշապուհ Բ Մերշահ 2 ԳԵՋԺԼԽԿՀS^1S^2 Ըռշտունեաց Արտակ S^2 Արտակ (Ըռշտունեացի վերևը գրված է՝ Մոկաց) 3 ԱԳԵՋԷԸԹԺԼԽԿՀV$S^1S^2S^3$Վ^{1852} Գադեշո(յ) ԲԻ Գադեշ Դ Գադիշ A Գադիշոյ Դ նախ՝ Խորխոռունեաց, ապա՝ Ռշտունեաց 4 ԱԴՁԷԻVՎ^{1852} Մամիկոնենից 5 Դ չիք ի տոհմէն Մոկաց Արտակ անուն 6 Դ Ամատունեաց փխ Ապահունեաց Դ Մանաճիհ 7 Դ Ապահունեաց փխ Ամատունեաց Դ Սահակ փխ Վահան 8 ԱԲԳՁԷԹԻԿVՎ^{1852} Գիտ 9 ԱԲԴՁԹVS^3Վ^{1852} Անձևացւոց ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 Անձաւացեաց է Անձևացոյ Ի Անձևացիոց 10 Խ այս ԱՁԷԻV նախարարք ԳԿ նախարարս 11 Դ և կէսքն իսկ առ նմա Կ առ նմին ԳԵԸԺԼԽԿS^1S^2 անդէն ի կարաւանին, և այլք Դ ի դրան Արքունի փխ ի կարաւանին Հ ի կարաւանի 11—12 Դ ի կողմանս հիւսուսոյ 12 ՑԷԿ հիւսւսոյ ԲԴ չիք էր 13 Գ յաշխարհէն Ի աշխարհին 14 ԳԵԺԼԽԿՀ չիք և Բ չիք ոչ Գ ի միջոց վայրի Ե ի միոջ վայր Լխ վայր 15 ԱՁԷVS^2Վ^{1852} զխորհուրդսն ԳԵԸԺԼԽՀ զխորհուրդ Թ զխորհուրդն Դ անօրէն փխ չա-

Արծրունյաց տոհմից ՆԵՐՇԱՊՈՒՀ անունով.
Ռշտունյաց տոհմից ԱՐՏԱԿ անունով.
Խորխոռունյաց տոհմից ԳԱԴԻՇՈ անունով.
Մամիկոնյան տոհմից՝ ՎԱՐԴԱՆ անունով.
Մոկաց տոհմից ԱՐՏԱԿ անունով.
Ապահունյաց տոհմից ՄԱՆԵՃ անունով.
Ամատունյաց տոհմից ՎԱՀԱՆ անունով.
Վահևունյաց տոհմից ԳՅՈՒՏ անունով.
Անձևացյաց տոհմից ՇՄԱՎՈՆ անունով։

Այս նախարարներին անուն-անուն կանչեցին արքունի դուռը։ [Հայ նախարարների] մի մասը հենց իրեն մոտ էին՝ բանակում, մյուսներն էլ հյուսիսային կողմերը՝ Հոնաց պահակում. նախարարներից ոմանց էլ թողել էր Հայոց աշխարհում։

Արդ, թեպետև բոլորը միևնույն տեղում չպատահեցին միմյանց, բայց առաջուց իմանալով չարաբարո բռնավորի մտադրությունները, հեռավորներին էլ իբրև միևնույն վայրում եղած մերձավորների միմյանց մոտիկ էին համարում։

Եվ սուրբ եպիսկոպոս Հովսեփի ձեռքով նույն ուխտի մեջ հաստատվելով՝ յուրաքանչյուրն իր տեղից ելան-գնացին արքունի դուռը։ Եվ շատ էին շտապում [իրենց] եղբայրների, որդիների և դայեկասնունդ[61] սիրելի մտերիմների համար, որոնք խիստ մեծ նեղության մեջ էին։ Այս պատճառով էլ նրանք իրենց անձը մահվան մատնեցին՝ ամենևին չվախենալով ինչպես թույլ վատասիրտներ, այլ մեծ քաջությամբ սիրտ էին տալիս իրենց, որ գուցե կարողանան նրանց փրկել մեծամեծ հարվածներից։

Երբ հասան արքունի դուռը՝ զատկի ավագ շաբաթ օրը ներկայացան թագավորին։ Եվ թեպետ իրենց եղբայրներին տեսնում էին մեծամեծ

րաբարոյ Զ չարայբարույ 16 Բ զհեռաւորս է հեռաւորսն և Խ զհեռաւորսն և ԲԴԵԸԺԼՀ չիք ևս A զմերձաւորսն S^2 զմերձաւոր ԸԹԽS^1 ի միջոց վայրի 16—17 ԲԴ իւրեանս փխ միմեանս Զ առ ի միմեանս 18 ԲԴԵԸԺՀS^1S^2 սրբոյն Յովսէփայ Լխ սրբոյն Յովսէփա A Յովսէփու մեծի եպիսկոպոսի Դ ուխտին 19 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 խաղային գնային 20 S^1 յայնժամ փխ յոյժ Բ որդոց ԳԴԵԸԺԼԽԿՀS^2 որդւոց 20—21 ԳԵԸԺԽԿՀԼS^1 դայեկասուն 21 A բարեկամացն փխ բնակացն ԲԴԼS^1S^2 բնակչացն է բանակացս ԱՁԷԹԻ Կ փխ ոռ ԱԷԻ ևեհն ՁԷԳ կէին V կէաին(!) Ե նեղութեան 22 ԲԴ մատնելով ԲԴ զանգիտեցին 23 VAS^3 պնդէին Հ պնտեցին ԲԴ զանձինս իւրեանց 25 ԱԲԳԴԵՁԹԺԻԼԽՀVS^1 և ի մեծի Կ և ի մեծ 25—26 է չիք շաբաթու զատկին յանդիման լինէին 26 ԱՁԹԻVS^3Վ^{1852} մեծի թագաւորին ԲԴ չիք բայց ԳԵ զեղբարսն Դ զեղբայրս ԸԽՀ զեղբայրսն Խ չիք և։

բարս իւրեանց ի մեծամեծ վիշտս տառապանաց, որ վասն անուանն Քրիստոսի ճգնեալք էին պնդապէս, ոչ ինչ տրտում և տխուր գերեսս ցուցանէին հրապարակին։ Եւ որչափ նոքա զուարթագին երևէին ամենեցուն, առաւել զարմանային չարաչարքն։

Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ առաջ յղէր, և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին, և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր, և զհանդէս գընդին ինքնին տեսանէր և յառաջ քան ի գործ պատերազմին հասանել զգալն իսկ առ նա՝ մեծ շնորհակալութիւն համարէր, և առաջի աթոռակցացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ գովութիւն մատուցանէր ամենեցուն, և յիշէր զնախնեացն զվաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա։

Իսկ այն օր և ոչ մի ինչ յայսցանէ ամենեւին ինչ ոչ յիշեաց. այլ իբրև զշարագև մի՝ ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնւոյ։ Որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան, ոչ դուզնաքեայ վեր ի վերոյ, այլ անդատին յանդնդոց բարձրանայր փրփրեալ կուտակեալ, վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով ահաասարակ դողացուցանէր զտիեզերական զիւր իշխանութիւնն, որպէս զի փլեալ տարածանիցի համատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց, ձորոց՝ ապականել միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելչութեան։

Մռնչելով բարբառ արձակեալ և ասէ. «Երդուեալ իմ յարեգակն, ի մեծն աստուած, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ

---

1 Դ չիք իւրեանց ԲԴԵԺԼԶS^{1}S^2 ի մեծ Ըխ ի մեծ վշտի Բ որք   2 Կ չիք ինչ   3 ԲԴ հրապարակին ցուցանէին   4 ԱԴՋԷԹԻԿV չիք առաւել զարմանային չարաչարքն ԲԴ նոքա առաւել արհամարհէին զնոսա փխ առաւել զարմանային չարաչարքն   5 ԱԲԳԴՋԷԻԿV չիք Եւ Դխ չիք ի (Հայոց)   5—6 Դ այրուձին   6 ԲԴ երթայր ի դուռն ԲԳԴԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 պատուաւոր Բ առն փխ այր   7 ԲԴ չիք ընդ առաջ ԳԵԻ յառաջ   7—8 Դ ուրուք առն յղէր ԳԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 աշխարհն Հայոց   8 ԲԴ չիք անգամ   9 ԲԴ ինքն ԳԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 տեսանէր ինքնին A տեսանէր թագաւորն S^3 զ՛ ի գործ A զգործ Գ պատերազմի   10 Ե չիք իսկ ԲԴ չիք առ նա ԲԴ մեծ շնորհակալ լինէր A մեծի շնորհակալութեան   10—11 ԲԳԴԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 առաջի թագաւորացն փխ աթոռակցացն   11 ԲԴԼS^{1}S^2 չիք իւրոց ԶԵ չիք ամենայն ԲԴ մեծամեծաց ԱՋԷԹԻVS^{3}Վ^{1852} ամենեցուն գովութիւն մատուցանէր ԳԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 չիք ամենեցուն   12 ԲԴ զնախնեաց է նախարարացն փխ նախնեացն ԳԵԺԼԽԿԷ վաստակս   12—13 ԲԴ քաջութիւնս   14 ԱՋԷԹԻVS^{3}Վ^{1852} և ոչ մի ԲԴ և ոչ մի ինչ յիշեաց յայսցանէ A չիք և Բ չիք ամենևին ինչ ոչ Դ չիք ամենևին ԳԵԸԺԼԽԿԶS^{1}S^2 և մի ինչ ԳԵԸԺԼԽԿԶ ամենևին յայնմանէ ոչ յիշեաց S^{1}S^2 յայնմանէ   15 ԱՋԷԻԿV զշար գև մի Թ չարագև ԱՋԷԹԻԿVS^{3}Վ^{1852} ոչ ես Գ ոչ ես դադարէր Ջէ ի շարժել ԲԴ շարժել և յուզել   16 է չիք և Ըխ ալէկոծութեան ԲS^2 խռովութեանց Ըխ չիք խռովութեան VS^{3}Վ^{1852} և ոչ   17 Բ դոյզնաքեայ Գ դողնաքեայ ԱՋԷԹԻV չիք անդատին Դ յանդնդոցն   17—18 ԱԹԻVS^{3}Վ^{1852} բարձրանալ, փրփրել, կուտակել ԳԵԸԺԼԽԿԶS^1 բարձրանայ փրփրայ կուտակել   18 Դ փրփրեալ կուտակել A և (վիշապ...) Խ որոտելով   18—19 ԲԴ չիք գազանաբար գոչելով է կոչելով   19 ԱԲԴՋԷԹԻV դողացուցանելով A չիք զիւր Ա լուսանցքում զիւր (իշխան...)   20 Խ ոչ զի փխ որպէսզի A որպէս թէ S^{3}Վ^{1852} չիք զի ԱՋԷԻV տարածանեցի Բ տարածանիցէ   20—21 ԲԴ չիք ի վերայ   21 ԱS^2 և խորոց ձորոց ապականեալ A խորոց և ձորոց Խ ձորոյ ԴՋԷԹԻV ապականեալ   21—22 ԳԺԽԿS^{1}S^2 և զլայնութիւն Ե և լայնութիւն   22 ԲԴ դաշտաց ԱԲՋԹԻՎV վայելչութիւն   23 ԲԴ արձակէր ԳԵԸԺԼԽԶS^{1}S^2 արձակեաց Բ և ասէր Դ չիք և ասէ Խ եմ փխ իմ   23—24 ԲԴ յիմ աստուածն արեգակն Գ յիմ արեգակն ԱՋԷԹԻVS^{3}Վ^{1852} երդուեալ իցէ իմ   24 ՋԷԹԻVS^{3}Վ^{1852} ի մեծ աստուածն ԲԴԿ ճառագայթիւք։

վշտերի ու տառապանքների մատնված, որոնք Քրիստոսի անվան համար սաստիկ նեղության մեջ էին, բայց դեմքերին ոչ մի տրտմություն ու տխրություն չէին ցույց տալիս ժողովի առաջ։ Եվ որքան նրանք ուրախ-զվարթ էին երևում բոլորին, այնքան ավելի էին զարմանում չարասերները։

\Առաջվան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը։

Իսկ այն օրը սրանցից և ոչ մեկն էլ չհիշեց,\ այլ ինչպես մի չար դև՝ չէր դադարում ձմեռվա բուքը հուզելուց և շարժելուց. ինչպես որ հենց նմանվում էլ էր վրդովված ալեկոծ ծովի, որը ո՛չ թե երեսանց է մի քիչ [հուզվում], այլ նույնիսկ անդունդից էլ բարձրանում փրփրած ու իրար վրա դիզված, վիշապաձայն որոտալով, գազանի նման մռնչալով ընդհանրապես սարսափեցնում էր իր տիեզերական իշխանությունը, կարծես թե փուլ գալով պիտի տարածվեր ամեն կողմ լեռների, անդունդների և ձորերի վրա՝ լայնարձակ ու գեղեցիկ դաշտերը միանգամայն փչացնելու համար։

Մռնչալով ձայն արձակեց և ասաց. «Երդվել եմ մեծ աստված արեգակով, որ իր ճառագայթներով լուսավորում է ամբողջ տիեզերքը և իր զամենայն տիեզերս, և ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն, եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երեւումն սքանչելւոյն, ընդ իս իւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ ածելով մինչև ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց։

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ի Քրիստոս՝ ոչ ի սառնամանեաց ձմերայնւոյն հովանային, և ոչ ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ ի սպառնալեաց տանջանացն զանգիտէին ․այլ ի վեր հայեցեալք՝ զզօրութիւնն Քրիստոսի յօգնութիւն եկեալ տեսանէին, և զուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին.

«Խնդրեմք ի քէն, արքայ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուր զոր ասելոցս եմք։

«Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի, և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց ի ծառայութիւն սովին օրինօք, որով և մեք իսկ վարիմք այժմ. և հարքն մեր և հաւք հարցն մերոց կացին նմա ի ծառայութեան վաստակս, և սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարգևք լինէին։ Եւ յայնց ժամանակաց մինչև ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոցն»։

Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քաջ զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի։ Իսկ զմտից և զասակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբըն նորա երթայր յարքունիս։

---

1 ԲԳԴԵԸԺԽԿ ջերմութեամբ ԲԴ իւրով կենագործէ   1—2 Դ զարարածս փխ զգոյացեալսն ԲԳԸԺԽԿԵ գոյացեալս   2 ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք ոչ ԳԺԿՀ առաւօտս Դ ընդ վաղիւ ընդ առաւօտն Ե վաղիւն ընդ առաւօտ ԲԴ երեւումն նորումն սքանչելեացն է սքանչելեացն   3 ԲԺ զիւրաքանչիւր ԲԴ նմա ոչ կրկնեսջիք զծունր Բ խոստովանել Դ խոստովնեալ   4 Բ չիք ինչ ԲԴ չիք ձեզ Դ ոչ թողացուցանեմ   5 ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{2} չարչարանաց ԱԲԴԶԷԹԻVՏ^{3}Վ^{1852} կատարեսջիք ԲԴ զբան փխ զկամս   7 ԲԴ և հաստատեալքն Ի չիք հաստատեալք   8 ԴԷ ձմերայնո Դ խորշակի   9 ԲԴ ի սպառնալեացն   9—10 ԲԴ չիք տանջանացն   10 ԲԴ հայեցեալ Ե զզօրութիւն Խ զօրութիւն   11 ԱԲԶԷԹԻԿVՏ^{3}Վ^{1852} յօգնականութիւն Դ զօգնականութիւնն աստուծոյ է տեսանիցեն է չիք և (զուարթագին) Ի եւ փխ և (զուարթագին)   12 ԲԴ պատասխանի և ատէին ցթագաւորն   13 ԲԴ թագաւոր քաջ ԲԴ չիք սակաւ ԳԵՏ^{1} սակաւիկ մի Կ սակաւիկ բանից մերոց ԵԸԺԼԽՀՏ^{2} սակաւ մի ԱԶԷԹԻVՏ^{3} սակաւ բանից մերոց   14 A լուիցես ԹԺԼ ասելոց   15 ԲԴ զժամանակս Հ զժամանակքն ԴՀ Շապուհոյ Ե Շապոյհոյ   16 Բ հաւու ԳԴԺԿՏ^{1}Տ^{2} հաւոյ ԸԽ հաւասոյ փխ հաւուն Հ հաւասար(!) հօր քո Յազկերտի ԱԲԶԷԻV Ազկերտի   17 Հ չիք Հայոց VՏ^{3}A ի ծառանգութիւն փխ ի ծառայութիւն Բ օրինակով Գ օրինակաւ Ի օրինակօք ԲԴԽ չիք և ԵԸԺԽԼՀՏ^{2} չիք իսկ   18 ԲԴ վարիմքս Տ^{1} եմք մեք և վարիմք այժմ ԲԴ հարք ԱԶԷԹՏ^{3}Վ^{1852} հաւքն ԳԵԸԼԽԺՏ^{1}Տ^{2} հարանց ԴԷ կային Ի չիք նմա   19 ԲԴ կատարեցին   19—20 ԴԼԽՏ^{2} հրամանս Ը հրամանք Բ զամենայն բանս հրամանի նորա   20—21 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} մեծապատիւ փխ մեծապարգևք ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀVՏ^{1}Տ^{2}Տ^{3}Վ^{1852} լինէին A եղանէին   21 ԲԴ ի հայրենի քո Ի չիք մեք   23 ԱԳԶԷԹԻԿ առաջնոցն   24—25 ԲԴ բայց առաւել քան զառաջնոցն քեզ ցուցանէին ըստ զինուորութեան կարգի (Դ կարգին) Կ չիք «զայս ասելով—զառաջնոցն» ԳԵ արութեանց   25 ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} զինուորական ԳԵԸԼԽՏ^{1}Տ^{2} կարգին Բ զոր   26 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1} են փխ էին ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{2} հարկք ԱԷ բազմագոյնք Գ չիք քան   27 ԲԴ քո փխ նորա ԲԴ այժմ երթայ յարքունիս։

ջերմությամբ կենդանացնում է բոլոր արարածներին, որ եթե վաղն առավոտյան, սքանչելու ծագելուն պես, բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնեք նրա առաջ՝ նրան աստված դավանելով, ձեզ ամենևին զիջողություն չեմ անի, ամեն տեսակ նեղություն ու չարչարանք կթափեմ ձեզ վրա, մինչև որ ակամա կատարեք իմ կամքն ու հրամանը»։

Իսկ հավատացյալները՝ Քրիստոսի մեջ հաստատված՝ ո՛չ ձմեռային սառնամանիքից էին հովանում և ո՛չ խորշակի տոթից տաքանում, ո՛չ ահագին ձայնից էին սարսափում և ո՛չ էլ տանջանքների սպառնալիքից վախենում, այլ վերև նայելով՝ տեսնում էին Քրիստոսի զորությունն իրենց օգնության եկած և զվարթ դեմքերով ու համեստ խոսքերով առաջ անցնելով՝ թագավորին պատասխան տվին.

«Խնդրում ենք քեզնից, քա՛ջ թագավոր, ականջ դիր մեր մի քանի խոսքին և քաղցրությամբ լսի՛ր, ինչ որ ասելու ենք։

«Քեզ հիշեցնում ենք արքայից արքա Շապուհի ժամանակները, որ քո պապ Հազկերտի[62] հայրն էր, և Աստված նրան Հայոց երկիրը հպատակեցրեց հենց այս կրոնով, որով և մենք ենք կառավարվում այժմ. և մեր հայրերն ու մեր հայրերի պապերը նրա ծառայության մեջ մնացին և սիրով կատարում էին նրա բոլոր հրամանները, և շատ անգամ էլ նրանից մեծամեծ պարգևներ էին ստանում։ Եվ այն ժամանակներից մինչև քո հայրենի աթոռը նստելդ՝ մենք էլ նույն կերպով ծառայեցինք և, թերևս քեզ ավելի լավ, քան [քո] նախորդներին»։

Այս ասելով՝ ցույց էին տալիս, որ զինվորության կարգի մեջ իրենց քաջությունները ավելի էին, քան առաջիններինը։ Իսկ տուրքեր, սակեր և աշխարհի ուրիշ ինչ տեսակ հարկեր որ կային, ավելի շատ էին մտնում արքունի [գանձարանը], քան նրա հոր ժամանակ։

«Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր. և մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ։ Արդ վասն է՞ր յուզեալ իջէ ցասումնս այս ի վերայ մեր. ասա դու մեզ զպատճառս վնասուն. եթէ օրէ՞նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո»։

Իսկ չարագէն լի ամենայն նենգութեամբ՝ զերեսս ի մի կոյս դարձուցեալ և ասէ. «Վնաս համարիմ ընդունել ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի ագիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և զաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք, և ըզմեռեալս ի հող թաղելով զերկիր ապականէք, և քրփկար* չառնելով ույժ տայք Հարամանոյ. և որ մեծ զամենայն, զի հանապազ ի կանայս ոչ մերձենայք. և մեծապէս լինի դիւաց խնդութիւն, չխրատելով ձեր և չպահելով զամենայն կարգս մոգաց։ Տեսանեմ զձեզ իբրև զխաշինս ցրուեալս և վայրատեալս յանապատի, և յոյժ վիշտ է մտաց իմոց, թէ գուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր՝ ի մէնջ վրէժս առնուցուն։ Այլ դուք եթէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր և մեծարանօք անդրէն յուղարկիլ, զոր ասացի՝ վաղվաղակի կատարեցէք»։

Յայնժամ երանելի նախարարքն առ հասարակ զձայնս իւրեանց բարձին և ասեն յանդիման ամենեցուն. «Մի՛ դու, արքայ, և մի՛ զայդ այլ առ մեզ ասեր. քանզի ոչ է եկեղեցի շինուած մարդոյ, և ոչ սուրբ արեգական, որպէս դուդ այլ ընդ այլոյ կարծես՝ թէ աս-

---

1 ՁԷԹԻV չիք և Բ Ն սուրբ եկեղեցի որ ազատ էր Դ և եկեղեցի որ ազատ էր ՁԷ յազատ 2 Լ նախնեաց V չիք ընդ ԲԾԹԺԼՀՏ^1 եդեր 3 ԲԳԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք քեզ 4 ԲԴ յուզեցաւ ԱԳԾՁԷԸԺԻԼԽՀՏ^{1}Տ^2 ցասումս այս ամենայն (ԳԼ ցասումն Տ^2 ցասումնս) ԲԴ ցասումն սրտմտութեանս այս (Դ սրտմտութեանցս) 5 ԳԾԸԼԽՀՏ^2 զպատճառ ՁԷV զպատճառն ԲԴ վնասուդ ԱԲԳԴԾԹԺԼԽԿՀ օրէնք ԲԴ են ԾԸԺԼԽՀՏ^1 իցեն պատճառք Տ^2 իցեն պատճառ 6 ԲԴ լինել Բ ի մէջ նոցա փխ առաջի քո 7 Բ կողմ փխ կոյս ԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի միւս կողմն 8 ԲԴԾԸԺԼԽՀՏ^2 չիք և Բ ի գանձն արքունի 9 ԲԴԾԸԼԽՏ^{1}Տ^2 զհարկ Ըխ արիութեան 10 ԳԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մեր ճշմարիտ օրինացս ԲԴ օրինաց 11 ԾԸԺԼԽ չիք և ԲԴ զաստուածսն Լ զաստուած Ծ զկրակս Թ չիք և զկրակ սպանանէք ԲԴ զջուր 11—12 Բ չիք և զմեռեալս 12 ԴԼՏ^{1}Տ^2 թաղեալ Ծ քրտիկար ԱԲԳԴՁԷԸԹԺԻԼԽԾԿV քրտիկար Հ քրտիկալք ԾԸԹԺԽՀ լուսանցում՝ «յուսացումն ի փոր չառնելով մուտ տալք դիւաց և հոտոյ գարշութեան» Ա քրտար* 13 ԱՁԷԹԻV յոյժ փխ ույժ Հ չիք չառնելով ույժ տայք ԱՁԷԹԻԿ Հարամանոյ (Է հրամանոյ) ԲԴԾԸԼԽՀՏ^{1}Տ^2 Խարամանոյն Գ հարանոյ ԳԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մեծն ԳԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք զի 13—14 ԲԴ է քան զամենայն՝ ի կանայս չմերձենալով լինի 14 ԳԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ոչ մերձենալով ԳԾԸԺԼԽՀ

«Նույնիսկ սուրբ եկեղեցին, որ մեր նախնիների կարգի համաձայն սկզբից ևեթ ազատ էր ի Քրիստոս, դու հարկի տակ դրիր, և մենք քո տերությանդ սիրո համար ամենևին չընդդիմացանք քեզ։ Արդ, ինչո՞ւ համար է այս ցասումը հարուցված մեզ վրա. դու մեզ ասա՛ մեր հանցանքն ու մեղքը. մի՞թե մեր կրոնն է պատճառ, որ մենք անվաստակ ենք դուրս եկել քո առաջ»։

Իսկ չար դևը, ամեն նենգությամբ լցված, երեսը մի կողմ դարձրեց և ասաց. «Վնաս եմ համարում արքունի գանձարանն ընդունել ձեր աշխարհի հարկը, և ձեր արիությունն ու քաջությունն էլ՝ անօգուտ, որովհետև տգիտությամբ մոլորվել եք մեր ճշմարիտ կրոնից, աստվածներին անարգում եք, կրակն սպանում, ջրերը պղծում և մեռելներին հողի մեջ թաղելով՝ երկիրն ապականում, և մեր կրոնի պատվերները[63] չկատարելով՝ ուժ եք տալիս Հարամանին. և, որ ամենից մեծն է, ամեն ժամանակ կանանց չեք մերձենում. և դևերը մեծապես ուրախանում են, երբ չեք խրատվում և չեք պահում մոգերի բոլոր կարգերը։ Տեսնում եմ ձեզ ինչպես անապատի մեջ ցրված ու մոլորված խաշներ և ես շատ վախենում եմ՝ չլինի՞ թե աստվածները ձեր պատճառով բարկանան ու վրեժը մեզանից առնեն։ Իսկ դուք եթե կամենում եք ապրել և ձեր անձերը փրկել, և մեծարանքներով հետ ուղարկվել, ինչ որ ասացի՝ վաղը շուտ կատարեցեք»։

Այն ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձրացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ. «Մի՛, թագավո՛ր, այդպես մի՛ ասի մեզ այդ բանը. որովհետև եկեղեցին մարդու շինածը չէ և ո՛չ էլ արեգակի տվածը, որի մասին դու թյուրիմացությամբ կարծում ես, թե աստված

Տ^{1}Տ^2 չիք և ԳԾԽ դիւացն 15 Բ կարգ մոգուցն Դ կարգ մոգացն Խ մտաց(!) փխ մոգաց Ը տեսանեմք 16 Ի խաշինս ԴԽ ցրուեալ Բ վարանեալս ԳԿ վայրագատեալ ԾԸԺԽՀVՏ^{1}Տ^{2}Վ^{1852} զվայրատեալս ԴԺԼՏ^1 վարատեալս 17 ԲԴԳԸԺԼԽԿՏ^{1}Տ^2 եթէ 18 ԲԴ վրէժ առնուն ի մէնջ ԳՁԷԹԻԿVՏ^{3}Վ^{1852} վրէժ ԳԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 թէ 19 Բ յղարկիլ յաշխարհն ձեր զոր ասացի Դ անդրէն դառնալ յաշխարհն ձեր ԳԿ անդրէն ի նոյն յուղարկիլ ԱԾՁԷԸԹԺԻԼԽԾՀVՏ^{3}Ա անդրէն յուղարկիլ Գ ասացին Տ^2 վաղին ԲԴ չիք վաղիւ 20 Գ կատարիցէք 22 Բ ամենեցուն 22—23 ԱԳԹԻՆ զայդ բան ԲԴԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և մի՛ դու զայդ բանդ Ա այլ ես ԼԹԽ չիք այլ 23 ԲԳԴ շինած մարդկան ԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մարդկան 24 ԺԽՏ^2 աւուրք(!) փխ սուրբ ԼՏ^1 չիք և ոչ սուրբ արեգական ԲԴ չիք դուդ ԲԴ կարծէք ԱԾՁԷԸԹԺԻԼԽՀՏ^2 թէ նա ԳԻ եթէ նա Տ^1 թէ արեգակն աստուած է։

* Ուղղում ենք՝ «քրփկար», որ նշանակում է «վարձատրության արժանի բարի գործեր»։ «Քրտիկար» անկասկած աղավաղված է «քրփկար» բառից. տե՛ս Հ. Աճառյան, Արմատ. բառարան, հ. VI, էջ 1556—1557 և Միքայել Փորթուգալ փաշա, Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և ծանօթութիւնք, Վենետիկ, 1903, էջ 252—253։

տուած իցէ. ոչ միայն զի ստուած չէ, այլ և կենդանի չէ։ Այլ եկեղեցիք ոչ են պարգևք թագաւորաց, և ոչ արուեստ ճարտարութեանց, և ոչ գիւտք իմաստնոց, և ոչ աւար քաջութեան զինուորաց, և ոչ պատիր խաբէութիւնք դիւաց. նա և բնաւ իսկ ամենևին զինչ և ասասցես յերկրաւորացս, կամ ի վեհից կամ ի վատթարաց, բնաւ ուրեք եկեղեցի ի նոցանէ ոչ գտցի։ Այլ շնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալ են ի բնակութիւն ի ներքոյ արեգականս։ Հիմունք նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի. ոչ ներքինք շարժել կարեն. և ոչ վերինք դրդուեցուցանել։ Եւ զոր երկինք և երկիր ոչ դողացուցանէ, մի՛ որ ի մարդկանէ խրոխտասցի յաղթել նմա։ Հա՛պա, որով օրինակաւ զինչ կամիս առնել, կատարեա. պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց, զոր սպառնացար. ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել։ Եւ եթէ դարձեալ ես զնոյն բանս հարցանես, ի մինչէ մինչէ լուիցես առաւել քան զզոյն պատասխանի»։

Յայնժամ դառնացեալ քան զլեղի թագաւորն՝ փլուզանէր անդէն ի փորին զծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն հլանէր, իբրև ի սաստիկ հնոցէ ծուխ թանձրացեալ։ Եւ առ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյն, և ծակոտէր զբազմամթեր աման խորհրդոցըն, ցրուէր և վատնէր զամենայն խորհումն նենգութեանն։ Եւ զոր ոչ երբէք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ։

Երեքկնէր և չորեքկնէր զանսուտ երգումն յարեգակն, և ասէր

---

1 ԵԸԺԼԽՀՏ^2 է փխ *իցէ ԱԲԳԴԵՁԷԹՒԻԼԽԿՀՏ^{1}Տ^2 այլև ոչ կենդանի Ը և այլ ոչ ես կենդանի ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 իսկ* փխ *այլ (եկեղեցիք) 1—2 Դ եկեղեցի 2 ԲԴ* չիք *են ԷԼՏ^{1}Տ^2* չիք *և ոչ (առուեստ) ԲԳԴԵՁԷԹԺԻԼԿՏ^2 արուեստք Հ արհեստք 2—3 ԲԴԼ ճարտարութեան 3 ՎՏ^3 գիտք ԲԴԼՏ^{1}Տ^2* չիք *և ոչ (աւար) Ի* չիք *և ոչ աւար քաջութեան զինուորաց 4 ԲԴԵԼԽ խաբէութեան ԳԸԺ դիւթաց* փխ *դիւաց 4—5 ԲԴ նաև բնաւ զինչ ասիցեն (Դ ասեն) յերկրաւորացս 5 ԼՏ^1 ասես ՁԷԻՎՏ^{3}Վ^{1852}Ա յերկրաւորացն 6 ԲԴԵ ոչ ուրուք ի նոցանէ զտանի եկեղեցի ԳԸԺԼԽՀՏ^2 ի նոցանէ եկեղեցի ոչ գտցի ԳԸԺԼԽՏ^{1}Տ^2 ուրուք* փխ *ուրեք Հ շնորհօք ԲԴ* չիք *մեծին 7 ԲԴ ի նոցանէ* փխ *ի մարդկանէ Բ տուեալ է նա Դ տուեալ են ԸԽ* չիք *ումեք ի մարդկանէ տուեալ է* չիք *«այլ»*—96 էջ տող 1—2 *«որում ցանկացեալ էք» ԵՀ* չիք *ամենայն 7—8 ԲԴ բանաւոր մարդկան ազգաց 8 ԲԴ վիճակեալ են Բ ներքոյ արեգականն ԳԵԽՏ^2 արեգական Դ երկնաւոր արեգականն 9 Բ եղեալ են ԴԽ ներքին 10 Խ վերին ԳԵԺԿՀՏ^{1}Տ^2 դրդուեցուցանեն Գ երկիր և երկինք ԹԻ երկին ԱԹԻ ոչ կարեն զողացուցանել 10—11 ԲԴ զողացուցանեն ՁՎ* չիք *և զոր երկինք և երկիր ոչ զօղացուցանէ 12 ԵԸԺԽՀ Հապա*

է. ո՛չ միայն աստված չէ նա, այլև կենդանի էլ չէ։ Իսկ եկեղեցիները ո՛չ թագավորի պարգև են, ո՛չ ճարտարարվեստների գործ, ո՛չ իմաստունների գյուտ, ո՛չ զինվորների քաջության ավար և ո՛չ էլ դևերի ստապատիր խաբեություն. այլև ինչ էլ որ ասելու լինես երկրավորներից, վեհ բաներից թե վատթարներից, ոչ մի տեղ նրանցից ամենևին եկեղեցի չի ստեղծվի։ Այլ մեծ աստծու շնորհն է այն, որ տվել է ո՛չ թե մարդկանցից որևէ մեկին, այլ բոլոր բանական ազգերին, որոնց վիճակված է այս արեգակի ներքո բնակվել։ Նրա հիմքը դրված է հաստատուն վեմի վրա. ո՛չ ներքինները կարող են [այն] շարժել և ո՛չ էլ վերևինները դրդվեցնել։ Իսկ ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող խախտել, թող մարդկանցից ոչ ոք չխրոխտա հաղթել նրան։ Ուրեմն, ինչ ձևով ուզում ես վարվել՝ վարվի՛ր. բոլորս պատրաստ ենք այն ամեն հարվածների ու տանջանքների մեքենաների համար, որ սպառնացիր, ո՛չ միայն չարչարվելու, այլև մեռնելու։ Եվ եթե դարձյալ նույն բանը հարցնես, ամեն մեկիցս սրանից էլ ավելի [կտրուկ] պատասխան կլսես»։

Այն ժամանակ թագավորը՝ լեղուց ավելի դառնացած փորի մեջ կուտակված կամավոր մաղձի ծովը փուլ էր ածում, և նրա քթից ու բերանից առհասարակ ջերմախառն գոլորշի էր դուրս գալիս, ինչպես սաստիկ հնոցից թանձր ծուխ։ Եվ սիրտը չհամբերելու պատճառով՝ կոտրում էր իր մարմնի զորությունը, ծակոտում մտադրությունների բազմամթեր ամանը և ցրվում-տարածում էր [իր] բոլոր նենգավոր մտածմունքները։ Եվ ինչ որ ամենևին չէր կամենում հայտնել իր սիրելիներին, ակամա արտահայտում էր Քրիստոսի ծառաների առաջ և ամեն ինչ կարգով ասում։

Երեք-չորս անգամ կրկնում էր իր անսուտ երդումն արեգակի ա-

(լուսանցքում՝ *ահա զի կայր) ԲԴ արա և կատարեա 13 ԲԳԴԵԼԽՏ^2 հարուածոց Դ* չիք *հարուածոց 13—14 ԲԴ տանջանացն 14 ԲԴ ի չարչարիլ Բ ի մեռանիլ 15 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2* չիք *ես ԲՏ^2 և եթէ դարձեալ զնոյն բան հարցանես ԴԵԼԽԺ բան ԱԳԵՁԸ ԺԻԼԽԿՀՏ^1 հարցցես 15—16 Դ մինչէ առաւել պատասխանի տան Բ մինչէ զնոյն լուիցես 16 Բ* չիք *առաւել քան զզոյն պատասխանի 17 Դ դառնացաւ ԵԸԺԼԽՏ^2 թագաւորն քան զլեղի Ձ դղեղի Հ դառնացեալ թագաւորն Դ փլուզէր ԲԴԼ անդրէն 18 ԲԴԵՏ^2 ի փորի Բ մաղձոյ Դ մաղձին ԹԻՎՏ^3 մաղձուն ԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և ընդ քիթն 19 Գ գլորշի ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 գոլորշի ԲԴ ջերմեռանդն* փխ *ջերմախառն 20 ԱՁԻԿՎ չհանդարտել ԲԴ ի չժուժել 20—21 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2* չիք *իւրոյ Ա զզօրութիւնս 21 ԲԴ մարմնոյն իւրոյ Դ* չիք *և Բ* չիք *և ծակոտէր Բ զբազմամթերական Բ* չիք *աման ԳԵԸԺԼԽԿ ՀՏ^{1}Տ^2 խորհրդոյն 22 ԱՁԹԻՎ խոտորումն* փխ *խորհումն ԲԴ խորհուրդս ԳԵԺ խորումն ԱԲԴՁԹԻ նենգութեանն Դ զորս 23—24 ԲԴ ոչ երբէք իւր սիրելեացն կամէր ասել՝ առաջի ծառայիցն Քրիստոսի ակամայ Գ սիրելեաց Ի ծառայից 24 Դ մերկենայր 25 Դ երգմունսն։*

այսպէս. «Ո՛չ կարէք ածել զանխափ ամուրս իմ. և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս։ Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք, և զկին և զորդիս ի Խուժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդէմ դարձեալ գտցի, կոխան եղեալ գազանաց՝ անողորմ մեռանիցի։ Եւ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին»։

Եւ վաղվաղակի հրամայէր զպատուական նախարարսն հանել մեծաւ անարգանօք յերեսաց իւրոց. և զգուշութեամբ հրաման տուեալ դահճապետին՝ առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել, և ինքն զատուցեալ անդրէն դառնայր անմխիթար տրտմութեամբ զօթեանս ագանէր։

Իսկ հաւատացեալքն ճշմարտութեամբ ի Քրիստոս՝ ոչ ինչ երկմտութեամբ թերահաւատէին յառաջին խրատուէ սուրբ վարդապետացն իւրեանց. այլ առաւել ի խնդիր էին հնարիցն, թէ ո՛րպէս զանձինս և զսիրելիս հանցեն ի մեծ նեղութենէն։ Եւ բազում անգամ ջանալով, և մեծամեծացն՝ որ օգնականք էին նոցա ի Դրանն արքունի՝ խոստմունս մեծամեծս առաջի դնէին նոցա առ ի յոյս կարասւոյ, և ոչ սակաւ զանձս առ ժամայն ծախէին նոցա։

Եւ իբրև յամենայն կողմանց ելն փակեցաւ անել արգելան նոցա, յայնժամ զխորհուրդն Աբրահամու ի մէջ առեալ՝ աղաղակէին և ասէին ի միտս իւրեանց. «Ամենեցուն մեր նուիրեալ և եղեալ

---

1 Խ ոչ կարէք դուք ԱԳՋԵԸԹԺԻԼԿՀS^1S^2 ածել դուք զանխափ 1—2 ԲԴ ցանկացեալ էք Ե ցանդացեալքդ 2 Դ չիք զձեզ և 2—3 Բ զամենեսեան որ ընդ իս են 3 ԳՋԼԹԻV Սակաստան 4 ԲԸ չիք և ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 որ և 5 ԲԳԴ յերթալն ի խորշակէն սատակեսցին ԵԸԺԼԽՀS^1S^2 սատակեսցին յերթալն 6 ԲԴS^2 ի բանդարգելս անելս Բ աշխարհս 7 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 բազում փղօք Դ փղամբ ԳԻԸԺԼԽԿS^1S^2 չիք տամ 7—8 Ի անցուցանել փխ խաղացուցանել 8 ԲԴ վկայարանս անուանէք, քանդեցից քակեցից ԳԵ անուանէքն ԲԴ չիք և (եթէ) 9 ԵՀ կոխ եղեալ ԲԴ գազանացն 10 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ մեռցի ԳԵԺԼԽԿՀS^1S^2 և ես 11 ԱՋԷԺԻ ասացեալսս ԵS^2 ասացեալս Խ չիք ասացեալս Ը և ես զամենայն արարից 11 ԲԴ առ մնացեալ աշխարհին ԳԵԺԽՀS^2 աշխարհիս 12 ԲԴԿ հրամայէր հանել ԳԵԸԺԼԽՀS^1S^2 հրամայեաց հանել ԳԵԼԽՀ չիք հանել 13 ԲԴ չիք մեծաւ 14 Խ առանց կապանօք ԲԴ տեղիս փխ վանս ԸԽ չիք վանս 15 Խ դառնայր դարձուցանէր 16 ԱԲԳԴԵՋԸԹԺԻԼԽԿՀVS^2S^3Վ^{1852} զօթեանս ագանէր (S^2 յօթեանս) է զօթեանս անարգէր Ծ յօթեանս

ձայնով և ասում էր այսպես. «Չեք կարող խախտել իմ հաստատուն որոշումները, և թույլ չեմ տա, որ դուք շուտով հասնեք ձեր ուզածին. այլ ձեզ բոլորիդ և ովքեր այստեղ զորքի մեջ են, չարաչար կապանքներով Սագաստան[64] վտարել կտամ անճանապարհ տեղերով, այնպես որ ձեզանից շատերը գնալու ժամանակ խորշակից կսատկեն, իսկ մնացածները կգցվեն ամուր բերդերը և անելանելի բանտերը։ Ձեր աշխարհն էլ անթիվ զորք կուղարկեմ փղերի հետ միասին և ձեր կանանց ու որդիներին Խուժաստան[65] քշել կտամ, և ձեր եկեղեցիները և ինչ որ վկայարան եք կոչում, կքանդեմ, կավերեմ և կփչացնեմ, և եթե էլի մեկը ընդդեմ դուրս եկած լինի, գազանների ոտների տակ գցվելով՝ անողորմ մահով կմեռնի։ Այս ամեն ասածներս կանեմ և կկատարեմ [ձեր] աշխարհում մնացածների վերաբերմամբ»։

Եվ անմիջապես հրամայեց պատվական նախարարներին մեծ անարգանքներով հեռացնել իր աչքի առաջից. և զգուշությամբ հրաման տվեց դահճապետին. որ նրանց առանց կապելու յուրաքանչյուրին իր իջևանում պահի, իսկ ինքը՝ իրենից դուրս եկած՝ անմխիթար տրտմությամբ նորից վերադարձավ և հազիվ ընկավ իր օթևանները։

Իսկ Քրիստոսին ճշմարտությամբ հավատացողները ամենևին չէին երկմտում ու թերահավատում իրենց սուրբ վարդապետների առաջին խրատի վերաբերմամբ, այլ ավելի հնարքներ էին մտածում, թե ինչպես իրենց և իրենց սիրելիներին ազատեն այն մեծ նեղությունից։ Շատ էին ջանք գործ դնում և հարստության մեծամեծ խոստումներ ու հույս էին տալիս այն մեծամեծներին, որոնք [արքունի] Դռանը նրանց օգնում էին, և հենց նույն ժամանակ էլ նրանց անհագին գանձեր տվին։

Եվ երբ բոլոր կողմերից փակվեց նրանց անելանելի բանտի մուտքը, այն ժամանակ Աբրահամի օրինակը մեջ բերելով աղաղակում և ասում էին իրենց սրտերում. «Մենք բոլորս մեր եղբայրներին ու որդի-

---

անկանէր A յօթեանսն անկանէր 17 ԲԴ ի Քրիստոս ճշմարտութեամբ 18 ԲԴ թերանային փխ թերահաւատէին ԼS^1S^2 չիք երկմտութեամբ ԱԴՋԻԿV խրատուէն ի սուրբ ԲԴS^3Վ^{1852} խրատուէն ի սուրբ Է խրատուէին ի սուրբ Թ խրատատուէն ի սուրբ ԵԸԺԼԽՀS^1S^2 խրատու 18—19 ԲԴS^3Վ^{1852} վարդապետէն 19 ԱԴԵՋԷԸԹԺԻԼԿՀS^1S^2 ի խնդիր էին ԲԴԻ հնարս իրացն գտանել ԺԼԽ չիք իրացն ԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 հնարիցն փխ հնարս իրացն ԽVA խնդրէին հնարս իրացն 20 Դ զսիրելիսն ՋԷV նեղութենէ 21 ԲԴ չիք անգամ չիք և (մեծամեծացն) ԱԲԳԴԵՋԷԹԻV որք ԲԴԵԺԼԽՀS^1S^2 օգնական Ի օգնականքն 22 Բ դրան Ե խոստումնս ԱՋԷԻV մեծ փխ մեծամեծս Ը դնէին առաջի նոցա A չիք նոցա 23 Դ կարասու ԵՀ զանձ ԲԴ նոցա ծախէին ԵԸԺԼԽՀS^1S^2 ի նոսա 24—25 ԲԴ արգելանոց նոցա ԳԵԸS^2 արգելանն 25 ԲԴ զխորհուրդսն ԷԹ խորհուրդն Բ ի միտ առնուին փխ ի մէջ առեալ 26 Դ չիք և ասէին ԲԴ չիք և ԳԵԷԸԺԼԽԿՀS^1S^2 չիք և եղեալ ԲԴ եղեալ է։

զեղբարս և զորդիս և զամենայն սիրելիս ընդ կապանոք իբրև զԻսահակ ի վերայ սուրբ սեղանոյն, ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս մեր, և մի՛ տար զեկեղեցի քո յայպն կատականաց անօրէն իշխանիս այսորիկ»։

Մի ոմն ի ներքին խորհրդակցացն արքայի ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս, քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի, և մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն։ Եւ իբրև ստուգեաց ճշմարտիւ, եթէ զոր սպառնացաւ թագաւորն զամենայն չարիսն՝ կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց, թէպէտ և ոչ ամենեցուն՝ այլ սակաւուց ի նոցանէ ուսոյց զխրատ հնարից, զի առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն։

Եւ մինչդեռ գունդ կազմէին, որ զնոսա շկօթակ արասցեն յանդարձ օտարութիւն, որպէս զբազում նախարարսն ի Վրաց աշխարհէն արարին, ի նմին ժամանակի գուժկան հասանէր ի կողմանցն Քուշանաց, եթէ գունդ հասաւ ի թշնամեացն, որ եկին աւերեցին զգաւառս բազումս արքունի։ Եւ այս լինէր մեծ օգնականութիւն նոցա յերկնից։ Եւ անօրէնն ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակել, և ինքն փութով ստէպ զհետ երթայր. և ի խոր խոցեալ ըզխորհուրդսն՝ ցրուէր զառաջին հաստատուն երդումն։

Իսկ երկիւղածացն Տեառն զայս տեսեալ՝ մեծաւ յուսով աղօթս առնէին և ասէին միաբան. «Դու Տէ՛ր ամենայնի, որ գիտես զծածկեալս՝ սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ամենայն աներևոյթք խորհրդոց, և ոչ ինչ խնդրես վկայութիւն յերևելացս, որպէս զի և զանգործս մեր տեսանեն աչք քո, արդ առաջի քո հեղումք

ներին և բոլոր սիրելիներին նվիրել ենք և Իսահակի պես կապած դրել սուրբ սեղանի վրա. ընդունի՛ր, Տե՛ր, մեր այս կամավոր նվերը և մի՛ թույլ տա, որ այս անօրեն իշխանը քո եկեղեցին ծաղրուծանակի ենթարկի»։

Թագավորի ներքին խորհրդակիցներից մեկը գաղտնի կապված էր Քրիստոսի անքակ սիրով, որովհետև նույնիսկ մկրտված էր կենդանի ավազանի մեջ, և մեծապես հոգ էր տանում վշտացածների կյանքը փրկելու։ Եվ երբ հաստատապես ստուգեց, որ թագավորն իր սպառնացած բազմաթիվ չարիքները բոլորն ուզում է կատարել Հայոց աշխարհի գլխին, թեպետև նրանցից ոչ բոլորին, բայց մի քանիսին խրատ տվեց և սովորեցրեց, թե ինչ հնարք գործ դնեն, որ առժամանակ իրենց փրկեն այն նեղ դրությունից։

Եվ մինչդեռ զորք էին պատրաստում, որ նրանց անդարձ օտարություն քշեն, ինչպես քշել էին Վրաց աշխարհի բազմաթիվ նախարարներին, հենց այդ ժամանակ գուժկան հասավ Քուշանների կողմերից, թե թշնամիներից մի գունդ անջատվեց ու արքունի շատ գավառներ ավերեց։ Այս բանը երկնային մի մեծ օգնություն եղավ նրանց համար։ Անօրենն շտապով տագնապում էր հեծելազորն առաջ ուղարկել, և ինքն էլ անհապաղ նրա հետևից գնաց. և խոր խոցվելով իր մտադրությունների մեջ՝ խափանեց իր առաջին հաստատուն երդումը։

Իսկ աստվածապաշտներն այս տեսնելով՝ մեծ հույսով աղոթք էին անում և ասում էին միաբան. «Դո՛ւ, ամենքի Տե՛ր, որ գիտես մարդկանց սրտի գաղտնիքը, և հայտնի է քեզ ամեն մի աներևույթ մտադրություն, և կարոտ չես տեսանելի բաների ոչ մի վկայության, այնպես որ մեր չգործածներն էլ տեսնում է քո աչքը, այժմ քո առաջ ենք զեղում

---

1 ՁԷՎ զեղբարս 1—2 ԲԴ Իսահակ S^3A զՍահակ 2 ԴԵԸԺԽԿՀS^1S^2 զբանաւոր փխ զկամաւոր 3 ԲԴ չիք մեր ԵԺԽ մի՛ տալ ԲԴ այպն 5 ԱԲԴՁԷՎS^3Վ^{1852} մի ոմն ի ներքին խորհրդակցացն Գ ի ներքնոց Թ մի ոմն ի ներքինի խորհրդակցացն Ի մի ոմն ի ներքին խորհրդականացն Կ ի ներքինի խորհրդականացն Հ ներքնոց ի խորհրդակցացն Ըխ չիք ի ԵԺԼՄAS^2 մի ոմն ներքինի ի խորհրդակցացն ԲԴ արքունի փխ արքայի Բ որ և ի ծածուկ Դ և ծածուկ 6 Բ սէրն որ ի Քրիստոս ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 Քրիստոսի 7 Ա կենդանի ԲԴ չիք և ԱՁԷԹԻVS^3 խնամից փխ հնարից ԲԴ չիք կենաց 8 ԱԻVS^3 ճշգրտիւ Հ ճշտիւ ԱՁԷԹԻVS^3A բազում (սպառնացաւ թագաւորն) 8—9 Ը չիք զամենայն ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԿՀV$S^1S^2S^3$Վ^{1852} զամենայն չարիսն A չարիս՝ զամենայն 9 ԲԴ անցուցանել կամի 10 ԲԴ բազմաց փխ ամենեցուն ԱՁԷԹԻԿVS^3Վ^{1852} ուսոյց զխրատ հնարից ԵԸԺԼԽԾA խրատ ետ և ուսոյց ելս հնարից Ա չիք ետ և ելս Գ չիք խրատ ետ և ԲԳԴ ի նոցանէ ուսոյց զխրատ հնարիցն Գ չիք ելս 11 Դ զի առ անկամի ԲԳԵԸԺԼԽS^1S^2 չիք անտի Բ զանձինս ի նենգութենէն Դ զանձինս ի նեղութենէն ԲԴ ապրեցուցանիցեն Կ ապրեցուցանեն Խ ապրեցուսցեն զանձինս 12 Կ իբրև փխ մինչդեռ ԲԴ զգունդն ԳԿ շկապթակ Դ շկաւթակն ԵԸԹԺԽՀ շկօթակ (Թ շկօթակս) (լուսանցքում՝ տարաշխարհիկ) 13 ԳԵԽԿS^2 որպէս և ԸԺՀ և զբազում Է և բազում ԲԳԴԵԺԼ նախարարս V աշխարհին 14 ԲԺ կողմանց 15 ԵԺԼԽՀS^2 թէ ԱՁԷԹԻV հասաւ փխ հասաւ ԲԴ ի թշնամեաց որք ԳԵԸԺԼԽՀS^2 եկին աւերել 16 ԲԳԵԸԺԼԽՀS^1S^2 զբազում գաւառս Կ չիք բազումս 16—17 ԲԴ և այս լինէր նոցա Թ չիք մեծ Ը և այսպէս ԵԸԺԼԽՀS^1S^2 օգնութիւն Բ չիք նոցա 17 Լ երկնից 17—18 A արձակեալ ԲԴ զայրուձին արձակէր Է չիք տագնապէր զայրուձին յառաջ արձակել 18 ԱԳՁԷԸԹԺԻԽԾԿV$S^1S^2S^3$ փութով ստէպ (Ը սըտիպ) զհետ երթայր ԲԴ փութով զհետ երթայր ԵՀ փութով ստէպ երթայր Լ փութով ստիպէր զհետ երթայր A փութայր ստիպաւ զհետ երթալ 18—19 ԱՁԷԹԻԿVS^3Վ^{1852} զխորհուրդսն ԳԼS^1S^2 զխորհուրդն ԵԺԽՀ զխորհն ԲԴ զխորհուրդս A ի խորհուրդսն 19 ԲԴ և զառաջին ԱԴՁԷԹԻ երդումնն ԳԵԸԺԼԿՀS^1S^3 երդմունսն Խ զերդմունսն 20 Դ աղաւթ AS^3 աղօթելով առէին 21 ԲԴ չիք ամենայնի 21—22 ԲԴԵԸԺԼԽՀS^1S^2 զծածուկս 23 VS^3A յերևելեաց 24 ԲԴ չիք զի և ԲԳԴ չիք մեր Ի տեսանին VS^3A տեսին ԲԴ չիք արդ։

զխնդրուածս մեր։ Ընկալ, Տէր, զծածկութիւն աղօթից մերոց, և կատարեա զմեզ ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամաչեսցէ չարն, որ խրոխտացեալ մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին։ Շարժեա, Տէր, զկամակոր խորհուրդս նենգաւորին և խափանեսցես ըզկամս ամբարշտութեան նորա, և դարձո զմեզ խաղաղական խորհրդով անդրէն ի սուրբ եկեղեցին. զի մի՛ յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարաչար ի թշնամեաց»։

Եւ անձամբք իւրեանց զայս ուխտ եդեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ, զի հաստատուն կացցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ ի ներքս յղէին զնոյն խրատուն իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա։

Զայն իբրև լուաւ թագաւորն՝ յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զդիսն հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ. և ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինօք մոգութեանն։

Եւ զայն ոչ կարաց իմանալ ցնորեալն, եթէ անստուեր լոյսն արեգականն արդարութեան սպառէր և մաշէր զխաւարային խորհուրդս նորա, և եղծեալ ապականէին զամենայն խեղաթիւր կամս նորա։ Եւ կուրացեալ ի ճշմարիտ յայտնութենէն՝ ոչ ինչ իմացաւ զպատրանս խաբէութեանն, որով վրիպեացն։ Հեղոյր արկանէր առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահս նորոգէր, յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն։ Եւ անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միում միում նոցա յարքունուստ շնորհէր. սի-

---

1 Թ զխորհուրդս փխ զխնդրուածս ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք մեր Բ զաղաչանս մեր ծածկութեան աղօթիցս Դ զաղաչանս ծածկութեան աղօթից ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 զծածուկ աղօթս մեր է մեզ 2 ԲԴ և փխ զի Թ ամաչեսցի 3 ԵԸԺԼՀՏ^{1}Տ^2 խրոխտեալ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 անօրինիս 4 ՁէVՏ^{3}Վ^{1852} խորհուրդսն ԲԴ թագաւորին փխ նենգաւորին ԲԴԵԸԹԺԼԽՀՏ^{1}Տ^2 և խափանեա (Տ^2 խարանեա) 5—6 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք նորա ԵԸԺԼԽԾՀՏ^{1}Տ^2 խաղաղական խորհրդով VAՏ^3 խաղաղութեամբ խորհրդոցն ԱԲԳԴՁէԹԻԿ խաղաղութեամբ խորհրդով 6 Դ եկեղեցիսն Խ չիք մի՛ ԲԴ չիք յանկարծակի 7 ԱՁէԹԻV աւերեսցին Լ չիք չարաչար Բ ի թշնամեացն Է չիք ի 8 Է չիք Եւ ԵԸԺԼԽՀՏ^2 անձամբ Դ անքակ միաբանութեամբ 9 ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք զի Դ կացին ԱՁԹԻVՏ^{3}Վ^{1852} կալցեն ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 կային ԲԴ կարգին փխ խորհրդոցն 10 Բ պատգամս Բ ի ներքս Բ ըստ առաջին խորհրդոցն իւրեանց փխ զնոյն խրատուն իւրեանց Գ խրատատուքն Դ պատգամս առաքէին ի ներս ըստ առաջին խորհրդոյն իւրեանց ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 խրատատուքն ՁէԹԻV խրատուն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 իբրու թէ 11 ԲԴ անօրէնութեան նորա կամքն 12 ԲԸԿ զայս ԲԴԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 չիք թագաւորն ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 զայն իբրև լուաւ՝ յոյժ ցնծացեալ բարձրացաւ թագաւորն ԲԴՏ^2 բերկրեցաւ թագաւորն 13 ԲԴ չիք նմա ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 յօգնութիւն Հ օգնութիւն Է յօգնականութեան Թ օգնականութիւն ԱԻ շրջել և աւերեալ ԳԴԵԸԹԺԼԽՀՏ^{1}Տ^2 շրջել և աւերել 14 ԲԴ չիք զհաստատուն Դ զխորհուրդսն A զի փխ և ԲԴ չիք և 15 Դ արեգականն ԱԳԴԵՁէԸԹԺԻԼԿՀVՏ^2 պատուել 16 ԲԴԵԷ մոգութեան 17 ԲԳԴԵԸԺԼԿՀ և զայս Լ կարացաք(!) Ի ցնորեալ ԵԺԼԽ թէ ԲԴ անստւեր փխ անստուեր ԲԴԵՏ^2 լոյս 18 ԲԴԾՏ^{1}Տ^2 զխաւար խորհուրդս 18—19 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ զխաւար խորհրդոց նորա 19 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ապականէր A ամենայն A կամք 20 Հ և կորացեալ A ի ճշմարտին յայտնութենէ ԳԿ իմացեալ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ոչ իմացեալ Տ^{1}Տ^2 չիք ինչ 20—21 Դ զպատիր 21 Բէ խաբէութեան Դ վրիպեաց Լ վրիպեցան ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք արկանէր 22 Լ նորա Բ զպատիւս փխ զպարգևս Դ երկրաւոր Խ երկնաւորս ԵԺԼԽՀ չիք ամենեցուն 22—23 ԲԴ գահս և պատիւս ԵԺԼԽՀ զպատիւ և զգահս A զգահսն 23 ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք և Դ երանելի փխ երևելի ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 առնել 24 Ե իշխանութիւն Տ^1 իշխանութեանն 25 V յակարակս Ըխ չիք և ԲԴ ի միում միում ԲԴ ի նոցանէ փխ նոցա։

մեր խնդրվածքը։ Ընդունի՛ր, Տե՛ր, մեր ծածուկ աղոթքները և մեզ կատարյալ դարձրու քո պատվիրանների համաձայն, որպեսզի ամաչի չարը, որ խրոխտացած մարտնչում է մեր դեմ անօրենի իշխանությամբ։ Տարուբերի՛ր, Տե՛ր, նենգավորի կամակոր մտադրությունները, և խափանի՛ր նրա ամբարիշտ կամքը և մեզ խաղաղ մտադրությամբ հետ դարձրու դեպի մեր սուրբ եկեղեցին, որպեսզի չլինի թե հանկարծակի հափշտակվելով՝ չարաչար ավերվի թշնամիների ձեռքով»։

Եվ ամենքն այս անքակտելի ուխտը դնելով աստծու հետ, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրության վրա, իրենց միևնույն խրատատուին պատգամավոր ուղարկեցին ներս, իբր թե կատարվելու է նրա անօրեն կամքը։

Երբ այս լսեց թագավորը՝ չափազանց ցնծաց և ուրախացավ, կարծելով թե աստվածներն իրեն օգնության են հասել, շրջելով և ոչնչացնելով աստծու ծառաների հաստատուն մտադրությունները, և ահա երկրպագություն են մատուցանում արեգակին, պատվելով նրան զոհերով և մոգության բոլոր օրենքներով։

Բայց այս բանը չկարողացավ հասկանալ ցնորվածը, թե արդարության արեգակի անստվեր լույսը մաշում և ոչնչացնում էր նրա խավարային մտադրությունները և եղծում-ապականում էր նրա ամբողջ խեղաթյուր կամքը։ Եվ ճշմարիտ հայտնությունից զրկված՝ ամենևին չհասկացավ այն պատրանքն ու խաբեությունը, որով սխալեցրին նրան։ Նրանց առաջ երկրավոր պարգևներ էր թափում և նորից բոլորին վերադարձնում էր իրենց պատիվն ու գահը, առաջ քաշելով և երևելի դարձնելով նրանց իր ամբողջ տիեզերական իշխանության մեջ։ Եվ նրանցից յուրաքանչյուրին անչափ առատությամբ ագարակներ ու ավաններ էր *րելիս և բարեկամս կարգայր զնոսա, և առ հպարտ յանդգնութեան մտացն կամակորութեան՝ կարծէր եթէ փոխանակիցի ճշմարտութիւնն ընդ ստութեան։*

Եւ զայս արարեալ, բազում այրուձի գումարէր ընդ նոսա, և ի մոգուցն ոչ սակաւս, աւելի քան զեւթն հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա, և զմեծ ոմն իշխան մոգպետ կացուցանէր ի վերայ նոցա։ Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութեամբ, ձեր արարեալ և կատարեալ իցէ զամենայն ըստ կամաց իմոց։ Եւ այսպէս շքով և պատուով առաջնորդէր նոցա զերկայնութիւն ճանապարհին անդրէն յերկիրն Հայոց։ Եւ ինքն աւետիս խնդալիս առաքէր յատրուշանս բազումս, գրէր և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամենայն մեծամեծաց կողմանց կողմանց աշխարհամ՝ ո՛րպէս դիցն օգնականութեամբ զգործ քաջութեան իմոյ յառաջ մատուցեալ։

Իսկ խոհեմականքն այնուհետև յուրայեալ յիւրաքանչիւր խաւարային դարանաց՝ իղձք լինէին վաղվաղակի զհրամանն կատարել. ձայն արարեալ յաշխարհս հեռաւորս՝ միանգամայն խաղալ գնալ յերկիրն արևմտից։ Եւ մինչ չև հասեալ էին մեծ աշխարհն Հայոց, փայտ ընկենուին և վիճակս արկանէին, թէ ո՛ր լեզու որո՛ւմ դասու հասցէ յաշակերտութիւն։ Զի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասն և որ այլ ևս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնէութիւն։

Եւ անզգալ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն, և իբրև զդես՝ այնուհետև միմեանց պատահէին։ Եւ լինէր գունդ զօրաց բազմաց, և չարասէրն սատանայ իբրև

---

1 ԳԵԸԺԼԽՀS^{2} և սիրելիս ԲԴ հպարտութեանն 2 ԲԴ չիք կամակորութեան ԷԹ չիք մտացն կամակորութեան ԻV կամակարութեան ԴԵԸԺԼԽԿՀ թէ ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2} փոխանակեսցի Թ փոխանակ լիցի 2—3 ԵԷՀ ճշմարտութիւն 3 ԱՁԻS^{3}վ^{1852} ընդ ստութեանն 4 Դ զնոսա Բ զկնի նոցա փխ ընդ նոսա 4—5 ԱԲԴՁԷԹԻVS^{3}վ^{1852} ի մոգացն 5 ԳԿ մոգաց ԵԺԽՀ մոգուց Դ ոչ սակաւ ԳԻ վարդապետ ԲԴ յղարկէր 6 ԲԴ չիք և 7 Կ պատուիրէր ԲԳԵԸԺԼԽՀS^{1}S^{2} եթէ Կ չիք թէ ԲԴԹ ի պատերազմէն 8 Կ դառնամ ԸԽ և հաստատեալ փխ կատարեալ 9 ԳԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2} իցէք 10 ԱՁԷԹԻVS^{3}վ^{1852} զերկարութիւն Թ անդէն 11 Բ խնդալից աւետիս արձակէր S^{2} աւետիսս Դ խնդալից արձակէր Թ յատրուշանս (լուսանցքում՝ կրակարան) 12 ԳԵԸԺԼՀS^{1}S^{2} մեծամեծ 13 ԸԿ չիք կողմանց Դ աշխարհին Գ դից 14 ԱՁԷԹԻV մատուցից ԲԴ մատուցի 15 ՁԷV խորհրդականքն Ը ըստ հերականքն(!) ԸԺԽՀS^{2} յարուցեալք Ե յարուցեալքն ԲԴ չիք խաւարային 16 ԳԵԸԺԼԽՀS^{2} դարանացն A իղձ Գ վաղվաղակ

շնորհում արքունիքից, սիրելիներ և բարեկամներ էր անվանում նրանց և կամակոր մտքի հպարտ հանդգնությամբ կարծում էր, թե ճշմարտությունը կփոխանակվի ստության հետ։

Եվ այս անելուց հետո՝ շատ այրուձի ուղարկեց նրանց հետ, և մոգերից էլ ոչ պակաս, քան յոթ հարյուրից ավելի ուսուցիչներ հղեց նրանց հետ և մի մեծ իշխանի էլ նրանց վրա մոգպետ կարգեց։ Խոնարհվում էր և աղաչում պատվիրելով, թե մինչև ես այս պատերազմից խաղաղությամբ հետ դառնամ, դուք ամեն բան արեք ու կատարեցեք իմ կամքի համաձայն։ Եվ այսպես շքով ու պատվով երկար ճանապարհ էր դնում նրանց դեպի Հայոց երկիրը։ Իսկ ինքն ուրախալի ավետիս ուղարկեց շատ ատրուշանների, գրեց և հայտնեց մոգերին ու մոգպետներին և զանազան երկրամասերի բոլոր մեծամեծներին, թե ինչպես աստվածների օգնականությամբ իմ առաքինի գործը առաջ տարա։

Իսկ այն գարշելիներն այնուհետև դուրս գալով յուրաքանչյուրն իր խավար դարանից՝ փափագում էին շուտով կատարել [թագավորի] հրամանը. ձայն տվին հեռավոր երկրները, որ վեր կենան, գնան արևմտյան աշխարհը։ Եվ դեռ չէին հասել Հայոց մեծ աշխարհը, որ փայտի միջոցով վիճակ էին գցում, թե ո՛ր ժողովուրդը [մոգերի] ո՛ր դասին է բաժին ընկնելու աշակերտելու համար։ Որովհետև առհասարակ հրաման էին առել արքունիքից մտնել ինչպես Հայոց, այնպես էլ Վրաց և Աղվանից և Լփնաց, Աղձնյաց և Կորդվաց և Ծավդեից և Դասն[66] աշխարհները, և դարձյալ ուր որ զանազան տեղեր Պարսից իշխանության մեջ ծածուկ պաշտում էին քրիստոնեությունը։

Եվ անակնկալ հարձակվելով՝ շտապում էին կողոպտել սուրբ եկեղեցիների գանձերը. և այնուհետև ինչպես դևեր հանդիպում էին իրար։ Եվ հավաքվեց մեծ զորաբանակ, և չարասեր սատանան իբրև զո-

---

17 ԲԴ ձայն արկեալ ԲԴԿ հեռաւորս և մերձաւորս 18 ԲԴԹԻ արևելից փխ արևմտից ՁԷV յերկիրն յարևելից ԲԴ չիք ի մեծ 18—19 ԳԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2} յաշխարհն մեծ Հայոց A յաշխարհն ԱՁԷԹԻVS^{3}վ^{1852} յերկիրն փխ ի մեծ աշխարհն 19 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2} փայտս ԲԴ չիք և ԵԼԽԿՀ եթէ է չիք «արկանէին—որում» 21 ԱԲԴՁԷԹԻVS^{3}վ^{1852} որպէս աշխարհին Հայոց ԴԵԽ չիք և (Վրաց) 22 V Լփանաց ԸԽ Փլնաց Դ չիք և (Ծաւդէից) ԲԴԼԾS^{1}S^{2} Ծաւդէից և Առասան ԵՀ և Դարսն S^{3}վ^{1852} Դասան A Դարսան ԱԳՁԷԸԹԺԻԽԿV և Դասն 23 Դ չիք այլ ԼԽԾ և այլ որ ևս Դ ուրուք փխ ուրեք ուրեք Բ ծածուկ փխ ի ծածուկ Բ ի յիշխանութեանն Ե յիշխանութեան 24 ԲԳԴԺԽ զքրիստոնէութիւնն 25 ԱՁԷԹVS^{3}վ^{1852} և յանզգալ Խ զանզգա Բ չիք յարձակմամբ Դ փութային առնուլ 26 Դ եկեղեցւոյ Բ եկեղեցեաց ԲԴ չիք և Ը չիք և իբրև զդես 26—27 ԲԴ միմեանց հանդիպէին Է միմեանց պահէին ԵԸԺԼԽS^{1}S^{2} միմեանց պատահէին իբրև զդես A առ միմեանս հասանէին։

զօրավար ի մէջ նոցա երէէր, և անդադար յորդորելով զամենեսեան ճեպեալ փութացուցանէր։ Կէտ եդեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ, տագնապէին և ստիպէին արքունի հրամանաւ։

«Մինչև ի Նաւասարդէ ի Նաւասարդ, ասէ, յամենայն տեղիս՝ որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին և կնքեսցին դրունք սուրբ տաճարացն, գրով համարով առցին նուիրեալ սպասքն յարքունիս, լռեսցեն ձայնք սաղմոսացն և դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն։ Քահանայք մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, և հաւատացեալքն ի Քրիստոս՝ արք և կանայք, որ բնակեալ են յիւրաքանչիւր մենանոցս, փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց։

«Դարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն։ Ուստերք և դստերք ազատաց և շինականաց կրթեսցին ի հրահանգս նոցուն մոգաց։ Կարճեսցին և արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն. զի աճեցեալ բազմասցին ազգք Հայոց։ Դստերք հարանց լինիցին, և քորք՝ եղբարց, մարք մի՛ ելցեն յորդւոց, այլ և թոռունք ելցեն յանկողինս հաւուց։

«Պատրուճակք մի՛ մնացին անյազ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց։ Հայսք առանց փանդամի մի՛ զանգցին. ծիւք և քակորք ի կրակ մի՛ եկես-

րավար երևաց նրանց մեջ, և անդադար հորդորելով՝ բոլորին սաստիկ շտապեցնում էր։ [Գործն սկսելու] ժամկետ նշանակելով վեցերորդ ամիսը՝ տագնապի մեջ էին և շտապեցնում էին արքունի հրամանով։

«Նավասարդից մինչև Նավասարդ, ասում է, մեծ թագավորի իշխանության տակ գտնված բոլոր վայրերում պետք է վերանան եկեղեցու արարողությունները, պետք է փակվեն և կնքվեն սուրբ տաճարների դռները, նվիրական անոթները պետք է գրով ու համարով հարքունիս գրավվեն, լռեն սաղմոսերգության ձայները և դադարեն անսուտ մարգարեների ընթերցվածները։ Քահանաները չվստահանան իրենց տներում ուսուցանել ժողովրդին, և Քրիստոսին հավատացող այն տղամարդիկ ու կանայք, որոնք բնակված են մենանոցներում, փոխեն իրենց հագուստը՝ աշխարհական կարգի համաձայն։

«Նույնպես և նախարարների կանայք պետք է ընդունեն մոգերի ուսմունքն ու վարդապետությունը։ Ազատների և շինականների տղաներն ու աղջիկները պետք է կրթվեն նույն մոգերի հրահանգների համաձայն։ Պետք է կարճվի և արգելվի սուրբ ամուսնության օրենքը, որ ունեին նախնիքներից քրիստոնեության սովորության համաձայն. մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք առնեն, որպեսզի Հայոց ազգն աճի-բազմանա։ Աղջիկներն ամուսնանան [իրենց] հայրերի հետ, և քույրերը՝ եղբայրների հետ. մայրերը չխորշեն [իրենց] որդիներից, այլև թոռները մտնեն [իրենց] պապերի անկողինը։

Զոհելու կենդանիները չմորթվեն առանց [աստվածներին] նվիրվելու, թե՛ ոչխար լինի, թե՛ այծ, թե՛ արջառ, թե՛ թռչուն և թե՛ խոզ։ Խըմորն առանց փանդամի[67] չհունցվի. ծիրտն ու քակորը կրակի մեջ չը-

---

1 ԴԵՁԹԺՀ զզօրավար է զզօրաւար(!) ԲԴ լինէր փխ երէէր Թ երկիր Զ զամենենեայն 2 ԲԴ ժամանակ Ի զամիսս 3 ԲԴ տագնապէին ստիպով 4 ԱՁԷԹԻV S^3վ^{1852} ի Նաւասարդէ Նաւասարդ ԵԸԿՀ մինչև ի Նաւասարդ, ասէ ԳԺ ի Նաւասարդ Նաւասարդ ԸԿՀ չիք ի Նաւասարդէ Խ չիք ի Նաւասարդ ԲԴԼԾ մինչև ի Նաւասարդէ ի Նաւասարդ 5 ԱԲԴԹԻVS^3վ^{1852} ուր փխ որ ԴS^3վ^{1852} կարդ 6 ԲԴ չիք և կնքեսցին ԳԵԺԽS^2 տաճարաց 7 ԵԸԼԽ համարեսցին S^1S^2 գրով համարեսցին ԵԸԺԼԽS^2 չիք առցին ԺՀ համարեսցին Նուիրեալ Բ սպասմ Դ սպասն ԲԴԷԸԿ լռեսցին 8 ԱԳԴԵԺԻԽԿՀ սաղմոսաց ԲԴԷՀ դադարեսցին Բ մարգարէից 9 է մի՛ յիշեսցեն 9—10 Բ զժողովուրդսն 10 ԱԲԳԴԵՁԸԹԻԽՀS^1S^2 հաւատացեալք 11 ԲԴ մենաստանս ԳԿ միայնանոցս ԵԸԺԼԽՀS^1S^2 մենարանս 12 է ըստ աշխարհականաց կախարդաց(!) 13 Գ նախարարաց Զ նախարացն(!) ԴԸ կալցեն 13—14 ԱՁV վարդապետութիւն ԲԴ զվարդապետութեան ուսումն մոգացն 14 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 մոգաց ԲԴ չիք և դստերք 15 V կրթեսցեն ԱԵՁԷԹԺԻԼԽS^1S^2 ի հրահանկս (S^2 հրահանգս) VS^3A ի հրապարակս փխ ի հրահանգս S^2 մոգացն Խ նոցին մոգուց ԺԿՀ նոցուն մոգուցն ԳԵԸԼԿS^1 մոգուց ԲԳԴԷԸԿՀ նոցին մոգացն 16 ԲԴ ամուսնութեանն S^1 ունին ԲԴԵԼ ի նախնեացն 17 ԳԵՀ քրիստոնէութեան ԱԲՁԷԺԻԼԽԿ ընդ միոյ կնոջ ԳԴԵԸԹՀS^1S^2 փոխանակ միոյ կնոջ 18 Ծ արասցեն ազգ Հայոց ԲԴ կալցին փխ արասցեն S^1 արասցին ԲԴ ազգն Թ ազգ V ազգզ (!) ԲԴԵԸԹԺԼԽՀS_1S^2 Յարց ԲԴԵՀ լիցին 19 ԱԳԴՁԷԻV քոյրք Բ քվերք ԳԼ և մարք ԵՁԷԸԺԽՀ և մայրք ԲԴ չիք այլ 20 ՁԻV հաւոց է հաւատոց(!) 21 ԱԹԻ անյազ մի՛ մնացին ԲS^2 անյաշտք մի՛ մնացին ԳԿS^1 անյազք մի՛ մնացին ԴԵԸԺԽՀ պատրուճակք անյազգք մի՛ մնացին Ծ անյազգք(!) ՁԷV անյաչ(!) ԳԴԵԸԺS^1S^2 չիք իցէ և 22 Ա յայծեաց եթէ յարջառոց A յարջառաց Բ եթէ յարջառոց, եթէ ի հաւուց եթէ ի յաւգեաց, եթէ ի յայծեաց, եթէ ի խոզից ԴԸԺԼԽԿՀS^1S^2 խոզից է խոզոց է հայք(!) 23 Հ չիք առանց Բ փաղամի Գ փաղանի Կ փաղամի S^2 փաքամի ԵԸԹԺԽՀ փանդամի (ԵՀ փանդանի) (լուսանցքում՝ կոզպատ երեսացն) A փանամի ԱԲԳԴԵԸԺԼԽՀS^2 ծիւ (Ա այլ թանաքով ուղղված է՝ ծիւղք) Դ ծիվք ՁԷԹԻVS^3վ^{1852} ծիւղք Կ ծիւրք S^1A ծիրտք ԲԴS^2 մի՛ այրեսցին փխ մի՛ եկեսցեն Ծ մի՛ ծխեսցին

ցեն. ձեռք առանց գումիզոյ մի՛ լուացին. շնչրիք և աղուէսք և նապաստակք մի՛ մեռցին։ Օձք և մողէսք, գորտք և մրջմունք, և որ այլ ևս խառնափնդոր բազմաճճիք են, մի՛ կայցեն, այլ վաղ թուով համարով ի մէջ բերցեն ըստ արքունի չափոյն։ Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տոնական կարգին՝ տարևոր թուականին, և ըստ կայճաթիւ մոխրաշափ կարգին։

«Զայս ամենայն զոր ասացաք՝ առ ժամանակ մի մինչև ի գլուխ տարւոյ կատարեսցեն ամենեքեան. և զայլն ամենայն առ յապա պատրաստեսցեն»։

Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մոգաց և մոգպետաց, զտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց. և առ յոյժ խնդութեանն ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին։

գցվեն. ձեռքերն առանց գումիզի[66] *չլվացվեն, ջրշուններն, աղվեսներն ու նապաստակները չսպանվեն։ Օձերն ու մողեսները, գորտերն ու մրջյուններն և էլի ինչ-որ խառնափնթոր ճճիներ կան, ոչնչացվեն, և թվով ու համարով մեջ բերվեն արքունի չափի համեմատ։ Եվ էլի ինչ-որ այսպիսի ծառայություններ կան՝ զոհելու կամ մորթելու վերաբերյալ, ըստ տարեկան տոների և կայճաթիվ մոխրաչափ*[69] *կարգով [պետք է կատարվեն]։*

«Այս ամենը, ինչ որ ասացինք, միաժամանակ թող բոլորը կատարեն մինչև տարվա վերջը. իսկ մնացած բոլոր բաները հետագայում կպատրաստեն»։

Մոգերն ու մոգպետներն այս բոլոր հրամաններն ու պատվերները ստանալով՝ գիշեր ու ցերեկ շտապում էին հասնել Հայոց աշխարհը. և անչափ ուրախությունից բնավ չէին ձանձրանում ճանապարհի երկարությունից։

---

1 ԱԶԷԹԻՎՏ^{3}Վ^{1852} գումիզոյ մի՛ լուասցեն ԲԴ գումիզի Հ կումիզոյ Տ^1 կովմիզոյ Տ^2 քումիզի Թ գումիզոյ (լուսանցքում՝ շօշան) ԾԸԺԽՀ գումիզոյ (լուսանցքում՝ աւնան խառն է) Բ ճնչրիք   2 ԱԹԴԿՏ^{3}Վ^{1852} մողէզք ԳԾԺԼԽՀՏ^{1}Տ^2 մողիզք Դ մողէզք և գորտք և մողիզք և գորտք   3 ԳԴԾԸԺՀԼՏ^1 խառնարնդոր Թ խառնափնդորք Բ ճճիք Դ ճիճիք ԲԴ չիք մի կայցեն այլ A մի՛ կացցեն   4 ԲԴ չիք համարով ԳԾԸԺԼԽԿՀՏ^1 չիք վաղ   3—4 Է վաղդ թուով(!) ԾԸԺԽՄՀՏ^2 այլ թուով և համարով A բերցին ԱԶԷԹԻՎ չափսն   4—5 ԲԴ և որ այլ ևս արքունի սպասք են   5 Ի օգնական փխ տօնական Լ տօնականին Տ^1 ըստ տօնականին   6 ԼՏ^1 չիք

կարգին՝ տարևոր թուականին Գ տօնականին փխ թուականին Ծ կարևոր տօնականին և ընդ ԸԺԽՀ կարևոր տօնականին ԲԴ չիք ըստ ԳԿ ընդ փխ ըստ Զ մոխրաչափին   8. Տ^{3}A որ փխ զոր   9 ԲԳԴԾԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 տարոյն ԳԴ ամենիքեան Զ ամենեքեայն   10 ԹԽ կատարեսցին փխ պատրաստեսցեն ԾՀՏ^3 պատրաստեսցին Կ պատրաստեն   11 ԲԴ չիք իսկ A մոգացն   12 Խ փութանային ԸԽ չիք հասանել   13 Տ^1 չիք առ ԾԷԽՀ խնդութեան Տ^2 խնդութենէն Բ յայգէին   13—14 ԲԴ երկայն ճանապարհաւն Ի երկայնութիւն Խ երկայնութեան։

ԵՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցք անցին անդէն ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք՝ ծածկելով զվիշտս նեղութեանն այլ ասասցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնցիկ, որք դառնապէս զմեզ ողբային. զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արտասուս հեղուցուս ի վերայ ազգիս թշուառութեան։

Զի ահա անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց որք էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի, իբրև տեսին զչար յանձնառութիւնն Հայոց, յոյժ հարան ի միտս իւրեանց, և կործանեցան անկան ի վերայ դիմաց իւրեանց։ Բազումք ի նոցանէ թաղծեալ ի սուգ ծանրութեան, հարեալ յոգիս և դառնացեալ յարտասուս, եկին և յանդիմանեցին զնախարարեանն, և յոյժ դսրովեցին զուխտ քահանայութեանն։

Զգուէին զամենեսեան և ասէին. «Զի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ, և կամ յո՞ տանիցիք զսպաս տէրունեան սեղանոյն. մոռանայցէ՞ք արդեւք զհոգևոր օրհնութիւնսդ. և կամ լռեալ դադարիցէ՞ք ի մարգարէական ձայնիցդ։ Կափուցէք զաչս յընթերցուածոց, և խցէք զականջս ի լսելոյ. միթէ զմտացդ անմոռացութիւն ո՞չ յիշի-

---

Վերնագիր *ԱԲԳԴԵՋԹԻԾԿVS^1S^3 Երրորդ՝ (V Երկրորդ) (S^3A Երրորդ յեղանակ) վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ (Բ հաւատոյ* փխ *եկեղեցւոյ) Է Երրորդ վասն միաբան ուխտին եկեղեցւոյ ԸԺԽՀS^2 Երրորդ վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ Լ Երրորդ վասն միաբանութեան վասն ուխտին եկեղեցւոյ S^1S^2 Գլուխ Գ. (Երրորդ վասն...)* 1 *V իցեմ ԸԽ չարիս Թ որք* A *չիք անցք* 2 *S^2 անդրէն Բ անդստին Է այլ գունդքն Հայոց* 3 *ԲԴ ոչ լռեմք* փխ *ոչ լռել կամիմք ԵԷ նեղութեան* 4 *ԵԸԽԿՀ ձայնակից Դ այժմիկ* փխ *այնոցիկ Խ որ Բ որ զմեզ դառնացուցին* A *զմեզն Դ որ զմեզ դառնապէս լացին* 5 *ԲԴ յորժամ լսիցես* փխ *իբրև լուիցես ԲԴ արտասւս ԵԸԼԽՀS^1S^2 հեղուս* 6 *ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ազգիս* A *ազգին ԽS^1S^2 թշուառութեանն* 7 *Ի անդրէն Հ սանակին* փխ *բանակին Է յազգաց ազգս ԺԽ յազգաց յազգաց Հ չիք յազգաց Դ ազգաց ազգաց S^3*A *եւ* 8 *ԲԴԸԽ հաւատացեալք ի Քրիստոս ԻԿ չիք տեսին*

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻ[70] ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թեպետև չենք կարող պատմել այն բոլոր չարիքները, որ բանակի մեջ անցան Հայոց զորամասի գլխով, սակայն չենք էլ կամենում լռել և ծածկել [մեր] վիշտն ու նեղությունը, այլ փոքրիշատե կասենք, որպեսզի ձայնակից լինենք նրանց, ովքեր դառնապես ողբում էին մեզ[71], որպեսզի դու էլ, երբ լսել, շատ արտասուք թափես մեր ազգի թշվառության վրա։

Որովհետև ահա Պարսից մեծ բանակում զանազան ազգությունների մարդիկ, որոնք հավատացել էին Քրիստոսի սուրբ ավետարանին, երբ տեսան Հայերի չար հանձնառությունը, սաստիկ խոցվեցին իրենց մտքերում և կործանվեցին-գետին ընկան իրենց երեսների վրա։ Նրանցից շատերը ծանր սուգի թախծի մեջ՝ վշտացած հոգով ու դառն արտասուքով եկան ու հանդիմանեցին նախարարներին և խիստ պախարակեցին քահանաների խմբին։

Բոլորին խայտառակում էին և ասում. «Ի՞նչ պիտի անեք այդ սուրբ կտակարանները կամ թե ո՞ւր պիտի տանեք տերունական սեղանի անոթները. մի՞թե պիտի մոռանաք ձեր հոգևոր օրհնությունները և կամ պիտի լռեք ու դադարեցնեք մարգարեական ձայնը։ Աչքերդ փակեցիք՝ չկարդալու համար և ականջներդ խցեցիք՝ չլսելու համար. մի՞թե պիտի

---

9 *ԵԷ յանձնառութիւն ԲԴ չիք և* 10 *ԲԴԼS^1 ի վերայ երեսաց Կ չիք իւրեանց Թ բազում* 11 *ԱԴՋԷԹԿS^3 թաղծեալք ԲԴ թախծեալք ԲԴ հարեալք ի յոգիս իւրեանց և դառնացեալք ԵԸԺԼԽՀ հարեալք S^2 յարեալք (!) ԹԻ յոգիս Հ հոգիս* 12 *ԵԸԺԼԽՀS^1S^2 չիք և Ի անդիմանեցին ԲԴԸԹԺԻԼԽS^1S^2 զնախարարսն ԵՀ զնախարարս* 12—13 *ԳԴԹԻ դրսովեցին* 13 *Է զուխտք Ե քահանայութեան* 14 *ԲԴ զգվեցին* 15 *ԲԳԴԸԺԼԽԿՀS^2 չիք կամ ԴԸԺԼԽԿVS^3Վ^{1852} տանիցէք ԸԽ զսպասս ԲԴԿ տէրունական* 15—16 *ԲԴ մոռացայք* 16 *ԵԷԺԼԽS^1S^2 օրհնութիւնդ Ի օրհնութիւնս ԲԴ դադարեցէք* 17 *ԲԴ ձայնիցն Է ձայնից ԱԸ ընթերցուածոց Բ ընդերցուածոց* 18 *Ը լսելոյ Ի ի մտացդ ԲԴ մի՞թէ զմոռացութիւն (Դ մոռացութիւն) ոչ յիշեցէք ԳԵԸԺԼԽ ո՞չ յիշեցէք Է ոչ յիշէք։*

ցէք։ Զի՞նչ առնիցէք զպատուիրեալսն ի Տեառնէ. «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, յուրաստ եղէց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ, որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց»։

«Վարդապետք էիք առաքելական քարոզութեանն. արդ աշակե՞րտք լինիցիք մոլար խաբէութեանն։ Ուսուցիչք էին ճշմարտութեանն, արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խաբէութիւն մոգաց։ Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուա՞ծս խոստովանիք։ Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զսուտն ստազո՞յնք լինիցիք։ Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճի՞ւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճե՞ր զոհից և ի շարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք։ Տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւա՞ց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաբար արեգակա՞ն կաքաւիցէք։

«Ժառանգք էին արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք ժառանգ գեհենին։ Նոցա՛ է սպառնացեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք. նոցա՛ պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին նոցա՛ թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք՝ ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար։ Նոքա ի վաղընջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զիա՞րդ զկնի կուրացն կուրացարուք։ Նոցա՛ էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն։ Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն

---

1 A զպատուիրեալն ԲԴ արդեօք զպատուիրեալսն է յուրասցի 2 S^3A չիք զնմանէ 3 ԳԵԺԿՀS^1S^2 չիք որ Բ յերկինսն ԳԵԺԼԽS^1S^2 չիք է 4 Խ վարդապետ ԲԴ մարգարէական փխ առաքելական ԵՀ քարոզութեան VS^3A քարոզութեանցն 5 ԲԴ լինիք Հ լիցիք Ե խաբէութեան Դ զմոլոր խաբէութիւնն ԳԸԹԼԽ խաբէութիւնն 4—5 է չիք արդ աշակերտք լինիցիք մոլար խաբէութեանն 5—6 ԵՀ ճշմարտութեան 6 ԱՋԷԹԻVS^3 ուսուցանէք ԲԳԴԿ ուսանիցիք ԵԸԺԼԽՀS^1S^2 ուսանիք Բ խաբէութիւնս մոգացն ԵԸԹԼԽՀS^1S^2 մոգուց 7 ԱՋԷԻV զօրութեանցն ԵՀ զօրութեան Խ զտարերքս ԳԴԵԸԻԼԽԿՀ աստուած 7—8 ԲԴ խոստովանիցէք ԳԿ խոստովանիցիք ԲԳԴԸԽ ստութեանն ԴԷԸԽ չիք և ԱԲԹԻԿ զսուտն 8—9 Բ ստագոյն ես Դ ստագոյն 9 Բ մկրեալ փխ մըկրտեալք Դխ մկրտեալ 10 Բ թաթաւիցէք ԵԺԼԽՀS^1S^2 թաւալիցիք ԲԴS^2 կենդանական փխ կենդանի ԲԴS^2 մարմնովն ԲԴS^2 և անմահական արեամբն Գ և անմահութեամբ Քրիստոսի փխ անմահ արեամբ ԵԺԼԽՀS^1 անմահութեամբ 11 Դ չիք ի ԲԴԵԾՀS^1S^2 ճենճերս ԵԺԼԽՀS^1 չիք զոհից Դ աղտեղս 12 ԲԴ սուրբ հոգւոյն 12—13 Ա քըրիստոնազգեցք ԲԳԵԺԽԿՀS^1S^2 քրիստոսազգեստք ԴՀ քրիստոսազգեստ Լ քրիստոսազգեստք 13 ԳԴԵԷԸԺԽԿՀ մերկացեալ ԳԵԸԺԿՀ ի փառաց 14 V արեգակն (!) Բ երկիրպագանէք փխ կաքաւիցէք Դ երկիրպագէք Գի կաքաւիցիք 15 S^3A ժառանգ ԴՋ ժա-

չհիշեք այն, ինչ որ անմոռաց կա ձեր մտքում։ Ի՞նչ պիտի անեք Տիրոջ պատվիրածը՝ «Ով ինձ ուրանա մարդկանց առաջ, ես էլ նրան կուրանամ իմ երկնավոր Հոր ու սուրբ հրեշտակների առաջ»։

«Առաքելական քարոզության վարդապետներ էիք, այժմ այն մոլար խաբեության աշակե՞րտ պիտի լինիք։ Ճշմարտության ուսուցիչներ էիք, այժմ մոգերի սուտ խաբեությո՞ւնը պիտի սովորեցնեք։ Արարչական զորության քարոզիչներ էիք, այժմ տարրերին աստվա՞ծ եք դավանում։ Ստությունը հանդիմանողներ էիք, այժմ ստից էլ ավելի՞ սուտ պիտի լինեք։ Հրով և հոգով էիք մկրտված, այժմ պետք է մոխրի և փոշո՞ւ մեջ թաթախվեք։ Կենդանի մարմնով և անմահ արյունով էիք սնված, այժմ զոհերի ճարպի և կեղտոտ արյունի՞ մեջ պիտի աղտոտվեք։ Սուրբ Հոգու տաճար էիք, այժմ դևերի զոհարա՞ն պիտի լինեք։ Քրիստոսազգյաց էիք մանկությունից, այժմ այդ փառքերից զրկված՝ դևերի նման արեգակի առա՞ջ պիտի պարեք։

Արքայության ժառանգ էիք, այժմ ինքներդ ձեզ Գեհենի ժառանգ դարձրիք։ Նրա՛նց է սպառնացած անշեջ հուրը, դուք ինչո՞ւ եք նրանց հետ այրվում-խորովվում։ Նրա՛նց համար է գիրանում անմահ որդը, իսկ այժմ դո՞ւք եք ձեր մարմինները գիրացնում նրան կերակրելու համար։ Նրա՛նց համար է թանձրացված պահվում արտաքին խավարը, դուք՝ լուսազգեստներդ՝ ինչո՞ւ նրանց հետ դեպի նույն խավարն ուղևորվեցիք։ Նրանք վաղուց արդեն կուրացած էին, դո՞ւք ինչու կուրացաք կույրերի հետևից։ Նրա՛նց համար էր փորված խորխորատը, ինչո՞ւ նախ դուք ընկաք նրա մեջ։ Ե՞րբ պիտի սովորեք նրանց աստվածների

ռանկք S^1 որդիք և ժառանգ S^2 որդիք և ժառանգք ԵՀ արքայութեան ԱՋԷԹԻVS^3 արկէք ի ժառանգ 16 Դ ժառանկ ԸՀ գեհենի ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 էր ԳԵԺԽS^1S^2 զհուրն 17 ԲԴ և դուք ԱԲԳԴԵՋԷԸԹԺԻԽԿՀVS^2S^3 տոչորեցայք ԼS^1 տոչորիք A տոչորեցիք ԲԴS^2 նոցա էր պատրաստեալ փխ նոցա պարարի Դ որդնն 17—18 ԳԵԸԺԼԽՀS^1 անքուն փխ անմահ Դ չիք իսկ Է չիք պարարի որդն անմահ, իսկ արդ դուք 18 S^2 պատրաստիցէք փխ պարարիցէք Դ պարարեցէք ԲԴS^2 զանձինս փխ զմարմինս։ չիք ի Բ դուք պատրաստիցէք զանձինս ձեր նմա կերակուր Դ նորա փխ նմա 19 Բ պահէր Դ պահիւր ԵԸԺԼԽՀ պահի նոցա ԳԵԺԼԽՀS^1 լուսազգեստդ V լուսազգեստ 20 Բ յղարկեցայք ԱԳԴԵ յուղարկեցայք Խ չիք նոյն ԲԴ ի խաւարն ի նոյն ԵԺՀ խաւարն 21 ԲԴ չիք իսկ ԳԴԸԺԼԽԿՀ չիք հետէ ԳԵԸԿ իսկ էին ԲԴ կուրացեալսն կուրացայք Դ կուրացեալ 20—22 բոլոր ձեռագրերն անխտիր տալիս են վերև դրված դասավորությունը, բացի A-ից, որը նախ դնում է՝ «Նոցա էր փորեալ...» և ապա՝ «Նոքա ի վաղնջուց հետէ էին...» 21—22 ԵԸԺԼԽՀS^1S^2 զհետ կուրացն և դուք կուրացայք ԱՋԷԹԻV կուրացարուք 22 Բ խորխորատն Դ խորխորակն Թ լցիք 21 ոչ մի ձեռագիր չունի զիարդ բառը, որ ունի A-ն 23 ԱԲԴՋԷԹԻV զբազմութիւն ԳԵԸԺԼԽԾԿՀS^3 զբազմաթիւ ԱԳԵՋԷԸԹԺԻԼԽԾԿՀVS^3 անուանս ԲԴ անուանց ԳԵԺՀ աստուածոց Դ չաստուածոցն։

նոցա, այն որ չիք ուրեք ի միջի և ոչ մի։ Թեթևացեալք ի ծանր բեռանց՝ անձամբ անձին առէք զբեռն ծանրութեան. ազատեալք ի ծառայութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն։

«Եթէ գիտէիք և երևէր ձեզ յայտնի, սուգ առին երկինք ի վերայ ձեր, և թաղծեցաւ երկիրս ի ներքոյ ոտից ձերոց։ Հրեշտակք ի վերուստ են ձեզ բարկացեալք, և ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք։ Ողորմի՜մ, ողորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց։ Զի թէ մարդոյ փրկեալ էր զձեզ ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում ի ծառայութիւն արկանէիք, ի մեծ բարկութիւն բրդէիք զառաջին տէրն ձեր. իսկ արդ զի՞նչ առնիցէք զաստուածաասաց հրամանն. «Ես եմ Աստուած, և չիք այլ ոք բաց յինէն, և ոչ զկնի իմ այլ ոք լիցի Աստուած. Աստուած նախանձոտ եմ ես, հատուցանեմ զմեղս հարց յորդիս մինչև յեւթն դարս։ Իսկ եթէ որդիքն արդարք՝ վասն հարցն մեղաց ընդունին զպատակումն, յորժամ ինքեանք որդիքն իսկ մեղիցեն, ո՛չ ահա միանգամայն զանձանց և զհարց տայցեն ի միասին։

«Դո՛ւք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յորժամ աստի վտանգ հասանէր, առ ձեզ յանդորր ելանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ։ Դո՛ւք էիք մեր պարծանս առ թշնամիսն ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս։ Ցայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին. և արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին։ Ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլև բազմաց ամենեցուն՝ որք ձեր պատճառս և զնոսա ես չարչարեսցեն»։

---

1 ԲԴ չիք Նոցա այն ԸԽ չիք ուրեք ԲԴ Թեթևացեալ էիք 2 ԲԺԻ յանձին Դ յանձինս VS³ անձին անձամբ Ը առնէք Թ առիք A բեռն Դ ազատեալ էիք Հ ազատեալք ԳԵԹ ԺԻԾԿS¹S² ազատեալքդ 3 VS³A ի մանկութենէ փխ ի ծառայութենէ Դ ընդ անազատելի ԱԲԵՁէՀ ծառայութիւն 4 ԳԵԸԺԼԽԿՀS¹S² գիտէիք դուք և Խ չիք և Թ երևիր 5 ԲԴ չիք և թաղծեցաւ երկիրս ի ներքոյ ոտից ձերոց ԵԸԺԼԽ երկիր 6 ԲԳԴԵԺԼԽԿՀ բարկացեալ ԲԴԸS¹S² չիք ի ԳԵԺ և յերկրէս ԱԲՁԻ մարտիրոսք 7—8 ԲԳԴԵԺԼԽՀ ցասուցեալ է չիք և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց 8 ԲԳԴԵԸԼԽԿՀS¹S² դի եթէ 9—10 Բ արկանէիք ի ծառայութիւն այլում Դ ի ծառայութիւն արկանէիք այլում 10 ԳԵԸS¹ բարկութեան Ը բերդէիք (!) 11 ԲԴԺS² զաստուածասաց է զաստուածաւու 12 ԲԳԴԼԸԻԼԽԿV բայց փխ բաց ԳԵ չիք ոչ ԸԺԼԽՀS¹ չիք ոք ԲԴ լինիցի 12—13 չիք աստուած (Նախանձոտ) է այլ (նախանձոտ) փխ աստուած 14 ԴՀ ցեւթն S¹ ցը եօթն ԾS¹S² դարս S² որդիք ԱԹԻ արդար ԲԴ արդարք են և վասն հարցն մեղացն Խ հարց մեղաց Թ մեղացն ՁէV չիք իսկ եթէ որդիքն արդարք 14—15 ԱէԹԻ ընդունէին 15 ԲԳԴԵԸԺԻԼԽS¹S² չիք իսկ ԳԸԺԼԽԿՀ ինքեանք իսկ որդիքն Ե իսկ որդիքն ԱՁէԹԻVS³A

բազմաթիվ անունները. այն աստվածների, որոնցից ո՛չ մեկն էլ մեջտեղում չկա։ Ծանր բեռներից թեթևացած էիք, ինքներդ ծանր բեռ վերցրիք ձեզ վրա։ Ծառայությունից ազատված էիք, չարաչար կերպով մտաք անազատելի ծառայության տակ։

«Ի՜նչ կլիներ, գիտենայիք և հայտնի լիներ ձեզ, որ երկինքը սուգ մտավ ձեզ վրա, և երկիրը վշտացավ ձեր ոտների տակ։ Վերևից հրեշտակներն են բարկացած ձեզ վրա, իսկ երկրից մարտիրոսներն[72] են զայրացած ձեզ վրա։ Խղճո՜ւմ եմ, խղճո՜ւմ եմ ձեր սիրելիներին և ավելի շատ խղճում եմ հենց ձեզ։ Որովհետև եթե մա՛րդ ազատեր ձեզ ծառայությունից, և դուք ինքներդ ձեզ ուրիշի ծառայության ներքո գցեիք, սաստիկ կբարկացնեիք ձեր առաջին տիրոջը։ Իսկ այժմ ի՞նչ պիտի անեք այն աստվածաասաց հրամանը, թե՝ «Ե՛ս եմ աստված, և բացի ինձանից չկա ոչ մի ուրիշը, և ո՛չ էլ ինձանից հետո ուրիշ որևէ աստված է լինելու. Նախանձոտ աստված եմ ես, հայրերի մեղքը հատուցանում եմ որդիներին մինչև յոթը դար»։ Եթե ուրեմն արդար որդիները հայրերի մեղքերի համար մահ են ստանում, հապա երբ իրենք որդիները մեղք գործեն, չէ՞ որ թե՛ իրենց և թե՛ հայրերի փոխարեն միանգամայն պետք է պատասխան տան։

«Դո՛ւք էիք մեր ապաստանի ամուր պարիսպը. երբ այստեղից վտանգ էր սպառնում, ձեզ մոտ էինք ապահովություն գտնում. այժմ այդ մեծ ամրությունը հիմնահատակ տապալվեց։ Դո՛ւք էիք մեր պարծանքը ճշմարտության թշնամիների առաջ, այժմ դո՛ւք եք մեր նախատինքը նույն թշնամիների մոտ։ Մինչև այժմ ձեր ճշմարիտ հավատի համար մեզ էլ փոքրիշատե խնայում էին. իսկ այժմ ձեր պատճառով մեզ էլ են անողորմ կերպով դատում։ Ո՛չ միայն ձեր անձերի համար եք պատասխան տալու աստծու ահեղ ատենի առաջ, այլև այն բոլոր բազմաթիվ մարդկանց համար, որոնց նույնպես չարչարելու են ձեր պատճառով»։

իսկ յորժամ ինքեանք որդիքն իսկ Բ չիք ոչ 16 ԲԴ ահա զանձանց և զհարց տացեն վրէժս Բ չիք միանգամայն ԳԴԵԸԺԿՀ զհարցն ԸԽ զանձանցն և զհարցն ԳԵԸԹԺԽՀ տացեն Կ տարցեն 17 ԲԳԴԵԸԺԽԿՀS¹S² չիք պարիսպ 17—18 Դ աստ վտանգ 18 ԵԸԺԼԽՀS² հասանէր մեզ Դ և արդ 19 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS² պարծանք 20 ԲԴ չիք մեր Հ մեզ ԵԸԺԼԽՀS¹S² դուք եղէք մեզ նախատինք (S² դուք եղեաք) 20—21 ԲԴԵԸԹԽԿՀ թշնամիսն 21 ԲԴ հաւատոցդ 22 ԳՁէV խնամէին փխ խնայէին ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք և (արդ) Բ ի պատճառսդ Լ մեզ V չիք ան(ողորմ) 22—23 ԲԴԹ դատեն 23 է զանանց փխ զանձանց 24 ԲԴԿ Քրիստոսի փխ աստուծոյ ԱԲԳԴՁէԹԺԽԿ զբազմաց Դ չիք ամենեցուն 25 ԴԼ չիք և (զնոսա) Թ չիք և զնոսա եւ ԲԴԿ զնոսա չարչարեցին։

Ձայն և առաւել քան զայն խօսեցան ընդ մեծամեծս աւագանւոյն, և յաւելին ցաւս ի վերայ ցաւոց։ Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կարէին, լռել և չառնել պատասխանի անհնար էր. հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին։ Ընդ նոսին դառնացեալ լսողք և տեսողք յանմխիթար սուգ լինէին ամենեքեան։

Յայնմ ժամանակի քահանայքն որ անդէն ի զօրուն էին, առ չժուժալ սրտիցն բարկութեան՝ քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն. և զմի ոմն դեսպան ձիով փութապէս առաքեցին յաշխարհն Հայոց։ Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն։

Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գիօղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի։

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։ Օրէնք աստուածայինք կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»։

---

1 Դ զսոյնս ԲԳԵԸԹԺԽՀS^2 մեծամեծ   2 Ի ցաւ Բ ցաւս ցաւոց ի վերայ ԳԴԵԺԼԽԿՀS^1S^2 ցաւս ի ցաւոց վերայ Ը ցաւս ի ցաւոց ի վերայ ԴԵՀ չիք նոցա ԱՁԷԹԻV նմա փխ նոցա Բ չիք նոցա   2—3 Բ ցուցանել զխորհուրդ ոչ կարէին   3 ԱԳՁԷԹԻVA ոչ կամէին ԲԴԵԸԺԼԽՀS^1S^2 ոչ կարէին   4 Դ չիք մեծապէս Ը՛ի յարտասուս Դ ընդ նոցսայ   5 ԲԴ չիք լսողք Բ և տեսողքն անմխիթար Գ չիք և տեսողք Բ չիք սուգ Դ ամենիքեան   5—6 Կ ամենեքեան քահանայքն որ էին   6 Հ որ էին ԱԳԵՁԷԸԹԺԼԽV $S^1S^2S^3$ որ էին անդէն ի զօրուն   6—7 ԲԴՁԸԹԼԽS^2 առ ի չժուժել VS^2 չժուժեալ   6—8 Ի չիք «յայնմ ժամանակի—բազմութենէն»   8 Ե ամենայն   8—9 VS^3A առաքեցին փութապէս ԲԴ արձակեցին յաշխարհն Հայոց փութապէս (Դ յարձակեցին) Հ ձիով փութով առաքեցին   9 Դ գուժ Հ չիք ի բերան առեալ ԲԴ չիք և   10 ԲԴ և ի ժողովս եպիսկոպոսացն հասեալ   10—11 ԲԴ մեծապէս հարեալ կայր յարտասուս և պատմէր   12 ԲԴ զծածուկ խորհուրդսն ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 խորհրդոյն   13 ԲԴ եպիսկոպոսունքն   14 ԱԻ զքորիսկոպոս (!) ԼS^1 չիք և առաքեցին զքորեպիսկոպոս ԲS^2 զքորեպիսկոպոսունքն Դ զքորեպիսկոպոսքն Բ ի գեղս   15 ԲԴ լեառնային Ժ դղրդեցին փխ դրդեցին   16 ԵԸԺԼԽՀS^1 զշինականաց և զազատաց Կ զազատաց   17 ԲԴԼS^1S^2 զմիայնակեցաց Գ զամենայնկեցաց (!) Ձ զմենակեցայց է զմիակնակեցայց ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 խրատեցին Թ և պնդեցին   17—18 ԲԴ զամենայն փխ զամենեսեան Ձ զամենեսեայն   18 ԴԷԸ S^1 զինաւորս   19 ԱԲԳԴԵԸԹԺԻԼS^1S^2 առաջին Խ առաջի   20 Դ չիք ի ԱԴՁԷԹԻV չիք իւր Բ ի ձեռն եղբօր հարազատի մերձաւոր մի՛ լիցի ԲԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 է փխ իցէ   20—21 ԲԴ զպատուիրանաւն   21 ԳԵԺԼԽԿՀS^1S^2 չիք և (մի՛ խնայեսցէ)   21—22 ԲԴ առցէ   22 ԲԴ ի հօր պատուոյ ԳԵԸԺS^1 պատուոյ ԼS^1 չիք կռուեսցի ընդ առն ամուսնոյ ԲԴS^2 ամուսնոյ իւրոյ Ի ընդ ամուսնոյն   23 ԲԳԴԵԸԹԼԽՄԿS^1S^2 աստուածայինք ԱՁԷԺԻՄVS^3A աստուածային   23—24 ԱՁԷԹԻV կայցեն   24 Դ թագաւորք ամենայնի Խ ի վերայ ամենայն երկրի Բ չիք ի վերայ   25 ԳԵԺԽԿ յանցաւորքն ԳԴԵԸԺ ԼԽԿS^1 զպատիժ Ը դատապարտութեան

Այս և սրանից է՛լ ավելին խոսեցին մեծամեծ իշխանների հետ և ցավերի վրա ցավեր ավելացրին։ Հայտնել և պարզել նրանց իրենց մտադրությունը՝ չէին կարող, լռել և պատասխան չտալն էլ անհնար էր. սրտերը պատռվում էր, և հորդ արտասուք էին թափում։ Նրանց հետ միասին՝ լսողներն ու տեսնողներն էլ դառնացած բոլորը անմխիթար սուգի մեջ էին ընկնում։

Այն ժամանակ այնտեղ զորքի մեջ եղած քահանաները, սրտերի բարկությունից այլևս չկարողանալով համբերել, անջատվեցին հեռացան նախարարներից և ամբողջ բազմությունից և մեկին շտապով սուրհանդակ ուղարկեցին ձիով Հայոց աշխարհը։ Սա գույժը բերանն առած և օձիքը պատառելով հասավ եպիսկոպոսների ժողովին, սաստիկ արտասվելով կանգնել-պատմում էր չարչարանքների բոլոր անցուդարձը, բայց նրանց չէր հայտնում ծածուկ մտադրությունը։

Այն ժամանակ եպիսկոպոսները ցրվեցին ամեն մեկն իր իշխանությունը, և քորեպիսկոպոսներ ուղարկեցին գյուղերն ու ագարակները և լեռնային գավառների բազմաթիվ ամրոցները։ Դրդեցին հավաքեցին մեծ բազմությամբ այր և կին, շինական և ազատ, քահանա և միայնակյաց. խրատեցին, ամրապնդեցին և բոլորին Քրիստոսի զինվոր դարձրին։

Եվ խորհրդի առաջին վճիռն այս հաստատվեց. «Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստծու պատվիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, և որդին չակնածի հոր պատվից։ Կինը կռվի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը։ Աստվածային օրենքը թագավորի ամեն բանում, և նույն օրենքից հանցավորներն ստանան իրենց դատապարտությունն ու պատիժը»։

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց։

Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ և մոգացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց, ի գիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր Անգղ։ Բանակեցան, բոլորեցան, զետեղեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն։

Եւ եղև յետ աւուրց քսան և հնգից մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն. զփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն։ Իսկ սուրբն Ղևոնդ երէց միաբանութեամբ առաջին խորհրդակցօքն և բազում ուխտիւ ի տեղւոջ անդ պատրաստական դիպեցաւ։ Թէպէտ և ոչ էր տեղեկագոյն մտաց ամենեցուն նախարարացն, և ոչ զօրութեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց մնաց ամենայն եպիսկոպոսացն, և ոչ առ սակաւ մի համբեր անօրէն իշխանին թողացուցանել. այլ բազում ամբոխ աղաղակի զօրացն և մոգացն հասուցանէր։ Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունական կանոնն կատարէին, մինչև ի նոյն միաշաբաթին անդադար լինելով։

Եւ յետ այսր տագնապի խռովութեան՝ յամենայն կողմանց

---

1 V չիք այս ԲԴ հաստատութեամբ կազմեցաւ 1—2 Զ ամենեքեայն 3 ԲԴS² քաջ արանց ԱՁԻVS³ կանաց ԲԴԺS²A առնականացն 4 Հ չիք ամենայն Ի չիք հանդերձ ԵԸԺԼԽՀS¹S² և ամենայն մոգուցն (S² մոգացն) 5 Է բազմութիւն ԲԴ բազմութեամբն ի յամսեանն Զ յամսեայն Բ ի յաշխարհն 6 Բ ի գեղաքաղաքագեաղ(!) Է գեղաքաղաք ԵԸԺԼԽՀS¹ չիք մեծ Բ Անգղ ԴԹԼԽ Անկղ Ե ընակեցան փխ բանակեցան 7 ԲԴ չիք զետեղեցան ԳԵԸԺԼԽԿS¹ չիք և Թ չիք և յամենայն կողմանց անդր ժողովեցան 7—8 ԲԴ չիք և էին ԳԵԸԺԼԽԿՀS¹S² և եղէն փխ և էին 9 Գ քսանեհինգ ԲԴ չիք ինքնին 10 ԼS¹ չիք հանդերձ ԱՁԻVS³ զդրունսն ԲԴ սուրբ եկեղեցւոյն 11 ԲԴ միաշաբաթոջ Գ միաշաբաթւոյ ԲԴ առաջարկութեան ԱՁԷԹԻV դառաջարկութիւն 12—13 ԲԴ խորհրդոյն փխ խորհրդակցօքն ԳԵԸԺԼԽԿՀS¹S² խորհրդովն 13 ԲԴԳԵԸԺԼԽԿՀ չիք և (բազում) 13—14 Բ ի տեղւոջն դիպեցաւ Դ ի տեղւոջն հանդիպեցաւ Խ ի տեղւոջն անդր Ը անդր ԲԴS² չիք անդ պատրաստական ՁԷV պատրաստակ ԱՁԷԹԻVS³A դիպեցաւ ոչ ետ թոյլ 14 Բ տեղեակագոյն ԱԳԵՁԹԺԻVS³ մտացն ԲԴ ամենայն 15 ԱՁԷԹԻV զօրութիւն ուշոյ (!) ԲԴ և ուժոյ մոգպետին զօրութեանն ԳԵԸԺԼԽԿՀS¹ և ոչ ուժոյ մոգ-

Երբ այս այսպես հաստատվեց ու կարգավորվեց, բոլորն էլ զինված դուրս եկան՝ սաղավարտները գլխներին, սրերը մեջքներին և վահանները ձեռներին, ո՛չ միայն քաջ տղամարդիկ, այլև արիասիրտ կանայք։

Իսկ Հայոց զորագունդը բոլոր օգնականներով ու բազմաթիվ մոգերով չորրորդ ամսին[73] եկան հասան Հայոց աշխարհը, մի մեծ գյուղաքաղաք, որի անունն էր Անգղ[74]։ Այդտեղ բանակ դրին, հավաքվեցին, տեղավորվեցին և ամեն կողմերից անթիվ բազմություն ժողովվեց այնտեղ։

Եվ այնպես պատահեց, որ քսանհինգ օրից հետո մի կիրակի օր մոգպետն ինքը մոգերի հետ միասին եկավ մեծ ուժով, որպեսզի քանդի եկեղեցու դռները. ուզում էր փորձել, թե գործն ինչ ընթացք կստանա։ Իսկ սուրբ Ղևոնդ երեցը առաջին խորհրդակիցների և բազմաթիվ ուխտակիցների հետ միաբան այնտեղ պատրաստ գտնվեց։ Թեպետև լավ տեղյակ չէր բոլոր նախարարների մտադրություններին և ո՛չ էլ մոգպետի ուժին ու զորությանը, ամենևին չսպասեց բոլոր եպիսկոպոսներին և նույնիսկ մի քիչ էլ չհամբերեց ու չներեց անօրեն իշխանին, այլ մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զորքերի և մոգերի մեջ։ Որովհետև դագանակները ձեռքերն առած՝ մոգերի և մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ կիրակնօրյա կարգն էին կատարում, շարունակելով այն ամբողջ նույն կիրակի օրը։

Այս խռովահույզ տագնապից հետո՝ Հայոց աշխարհի բոլոր կողմե-

պետին զօրութեան ԵԸԺԼԽՀS¹ չիք ինչ 16 Խ չիք առ S¹S² առ սակաւիկ ԲԳԺԼԽԿ սակաւիկ մի փխ առ սակաւ մի Դ և ոչինչ սակաւիկ մի ԲS² համբերել ԴԼS¹ համբերեալ V օրէն փխ անօրէն 17 ԵԸԺԼԽՀS¹ թուլացուցանել ԲS² թողացուցանէր ԱԳԵՁԷԹԺԻS³ ամբոխ A աղմուկ փխ ամբոխ ԸԽԿ բազմամբոխ (!) Հ բազում ամբոխ վաղվաղակի ԲԴS² բազում ամբոխիւ աղաղակ 18 A մոգաց Է վիգոյ փխ վիրգս ԳԵԺԼS¹S² ի ձեռս Ի ի ձեռին 19 ԲԴ մոգպետացն ջարդէին և Գ մոգաց ԲԳԴԵԸԺԼԽԿS¹S² ջարդէին ԵԸԼԽS² զմոգպետին 18—19 Դ զկառապմունս մոգպետացն ԹՀ զմոգպետացն Լ մոգուցն 20 Բ զպաշտօն ԲԴ բարձրացուցանէին 20—21 Բ յեկեղեցւոջ՝ տէրունական կատարէին Է չիք և ինքեանք—կատարէին 21 Դ տէրունականս չիք կանոնն ԳԵԸԺԼԽԿՀS¹S² զտէրունի ԸԽ կանն (!) A յերեկոյն փխ ի նոյն Խ ի սոյն ԱԳԵS² միաշաբաթի (Ե միաշաբաթ) 22 S² լինելոյ 23 ԼԽ չիք յետ ԱԹԻS³ այս փխ այսր ԲԴ և ի յայսմ տագնապ նեղութեան (Դ չիք ի) ԳԺԿS² և յայս տագնապ խռովութեան (S² խռովութեանց) ՁS³ խռովութեանն ԵԸՀ և այս ԺԼԽS¹S² յայս ԵԸԺԼԽՀS¹S² տագնապ խռովութեանց։

յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց ի տեղին հասանէին։ Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգեբարտոսր արձակելով իբր յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց. այլքն բարձրաճիչ աղաղակաւ՝ իբր այն թէ զերկինս դողացուցանէին, իսկ կէսքն խիզախելով և ի զէնս ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին։ Իսկ ոմանք ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետարանն ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարդային. և այլք ըղձանային զպատառումն երկրին, զի անձանց լիցի գերեզման։ Եւ այսպէս շտապ տագնապի ի վերայ մոգպետին հասուցանէին։ Բազում անգամ աղաչէր զօգնականսն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել, և ողջանդամ անդէն յարքունիս հասուցանել։

Այլ վասն գործոյն յոր եկեալն էր՝ ստիպէր զնոսա և ասէր. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողցէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ և ինքեանք աստուածքն եկեսցեն մեզ յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս զփորձ առի զմիաբանութեան ուխտին եկեղեցւոյ։ Զի թէ էին զօրք աշխարհիս մոգք, ոչ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նաև ոչ յանձինս իւրեանց։ Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի ստացուածոց պատկառին, և որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել։

---

1 Ա կանաց ԵԸԺԼԽՀS^1S^2 ի տեղւոջն 2 ԲԴ աղէտս տարակուսանաց 3 ԱԲԳ ԴԹ արձակելով յաչաց իւրեանց (Գ չիք իւրեանց) իբր (ԲԴ իբրև) յաղբերականց հոսէին (Գ յաղբերաց ականց ԲԴ հոսեալ) 2—3 Դ զվիրարտոսր արձակէին S^1 զարտօսրն ԳԵՁVS^3 զգերարտօսրն ԵԸԺԿՀS^1S^2 զգերարտօսրն արձակելով յաչացն իբրև յաղբերականաց հոսէին (S^1S^2 աղբերականց) Ի զգերարտօսրն արձակելով յաչաց իւրեանց որ յաղբերականս հոսէին Լխ չիք յաչաց իւրեանց ՁէVS^3 չիք արձակելով 4 A այլք ԲԳԴ իբրու այն եթէ ԵԸԺԼԽՀ իբրու այն Կ իբրու եթէ Դ զերկիրս 5 Գ չիք իսկ ԲԴ խիզախելով ի զէնս ընթանային ԳԵԺԽԿՀ ի զէն Դ չիք և 6 Դ ուխտ 7 Բ այլքն 7—8 ԵԸԺԻԼԽS^1S^2 ըղձային Հ ղձացին (!) 10 Բ զօգնականն Գ զնա կարասցեն 11 ԲԴ ապրեցուցանել զնա ԲԳԴԵԸԺԼԿՀS^1 և անդէն յարքունիսն (ԳԵԸԼԿՀS^1 յարքունիս) ողջանդամ հասուցանել Խ և անդէն ողջանդամ Թ յարքունիսն 12 Հ որ V ուր որ փխ *յոր Դ ասէր* փխ *ստիպէր 13 ԲԴ թող գրեմ մեծ թագաւորին և ցուցանեմ ԱՁէԻ թողացուցէ Բ թողու ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 թողցէ Դ թողուցու Թ թողացուսցէ VA թողացուցանէ 14 Բ քանզի ԲԳԵէԹԺS^2* չիք *և ԱՁԻ զի թէ ինքեանք ԳԵԸԺԽԿՀ ինքեանք իսկ Դ ինքեանքն ԳԵԺԼՀS^1 աստուածքն մեր Թ չաստուածքն 14—15 ԲԳԵԸԼԽԿՀS^2 եկեսցեն մեզ 15 ԱՁէԹԻS^3*A չիք *մեզ Դ յօգնականութիւն մեզ ԲԴ չէ հնար ի Հայք օրինաց մոգութեանն ԳԵԼԽԿՀS^2 օրինաց Թ*

րից տղամարդկանց ու կանանց մեծ բազմություն հասավ նույն տեղը։ Պետք էր տեսնել, թե ինչպիսի՜ աղետալի իրարանցում ընկավ. ոմանք աղբյուրի պես հորդ արտասուք էին թափում իրենց աչքերից. ուրիշները բարձր ճչալով կարծես թե երկինքն էին դողացնում, իսկ կեսն էլ խիզախելով ու դեպի զենքը վազելով՝ նախընտրում էին մեռնել, քան թե ապրել։ Իսկ սուրբ եկեղեցու ուխտից ոմանք, ավետարանը ձեռներն առած, աղոթքներով աստված էին կանչում։ Ուրիշներն էլ փափագում էին, որ երկիրը պատռվի, որպեսզի իրենց համար գերեզման դառնա։ Եվ այսպես մեծ սարսափ էին գցում մոգպետի վրա։ Նա ստեպ-ստեպ աղաչում էր իր օգնականներին, որ հնար գտնեն իրեն մահից փրկելու և ողջ-առողջ նորից արքունիք հասցնելու։

Իսկ այն գործի մասին, որի համար եկել էր, ստիպում էր նրանց և ասում. «Թողեք գրեմ և ցույց տամ մեծ թագավորին, որ ձեռք վերցնի այսպիսի առաջարկություններից. որովհետև եթե աստվածներն իրենք էլ մեզ օգնության գան, հնարավոր չէ, որ Հայաստանում հաստատություն գտնի մոգական կրոնը, ինչպես որ փորձեցի եկեղեցու ուխտի միաբանությունը։ Որովհետև եթե այս աշխարհի զորքն էլ մոգեր լինեին, նրանք ամենևին չէին խնայի և սրանց էլ կոտորեին, ո՛չ միայն դրսից եկածներին, այլև իրենց եղբայրներին, որդիներին և բոլոր մերձավորներին, ինչպես նաև հենց իրենց։ Մարդիկ, որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկյուղ կրում և ո՛չ հարստությունը բանի տեղ դնում և, վերջապես, որ բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կյանքից, ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել։

օրինացն Կ մոգութեանն 16 Դ որպէս ես է զփորձութիւն ԱՁԹV ի միաբանութիւն ԵԻ միաբանութիւն ԺԽԿՀS^3 միաբանութեան Լ միաբանութեանն Է չիք *զմիաբանութեան 16—17 ԳԵԽԿՀ ուխտի 17 ԲԳԴԵԺԼԽԿՀ եկեղեցւոյն ԲԴԿ զի եթէ Գ զի եթէ և ԵԸՀ զի թէև էին Լ և էին Բ ինչ ոչ խնայէին նոքա Դ նոցա ԵԸԺԼԽS^1S^2* չիք *սոքա Ի և նոցա* փխ *ի նոսա ԱՁԻV ոչ ինչ միայն 18 Դ յօտարս* փխ *զարտաքինսն 18—19 Ձ յեղբայրս Է եղբայրս Բ ոչ միայն յօտարս, այլ և յազգս և յեղբարս և յամենայն մերձաւորս իւրեանց Դ այլ և յորդիս և յեղբայրս ԵԸԺԼԽՀS^1S^2 զեղբայրս և զորդիս 19 Թ* չիք *իւրեանց 19—20 ԲԴ յանձինս իւրեանց խնայեն 20 Բ մարդիկ Դ մարդիք ԱՁէԹ VS^3 որք Խ կապանաց* փխ *տանջանաց ԲԴ* չիք *և (ոչ) 21 ԳԿ պատկառեն ԳԵԺԼԽԿՀ չարն Ի ինչ չարն է 22 ԱՁէԹԻV մահ* փխ *զմահ 22—23 ԲԴ ո՞վ է որ դոցա դիմադարձ (Դ դիմակաց) կարէ լինել ԳԵԺԿՀS^1 ո՞ ԸԽ ո՞ կարէ 23 ԳԵԺԼԽԿՀS^1 դոցա Գ ընդդիմակաց Ծ դիմակաց*

Ծանոթագրություն.—Գ ձեռագրում նախ պետք է կարդալ 55-րդ թերթը, ապա 54-րդը, թերթերը խառնված են։

«Լուեալ իսկ էր իմ ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ արքայից արքայի, իբրև սկսաւ ուսումնդ այդ աճել և բազմանալ և լնուլ զամենայն երկիրն Պարսից, և ևս անդր յարևելս հասանել, իսկ որ վարդապետքն էին օրինացն մերոց՝ յորդորեցին զթագաւորն, զի մի՛ բնաւ ամենևին բարձցին օրէնք մոգութեան յաշխարհէն, եւ հրաման սաստիկ, զի լռեալ դադարեսցէ քրիստոնէութիւն։ Եւ որչափ նա կարճելով արգելուլ կամեցաւ, նոքա ևս քան զևս աճեցին և բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քուշանաց, և անտի ի Հարաւակողմն մինչև ի Հնդիկս տարածեցաւ։

«Եւ այնպես աներկիւղ և համարձակք էին յաշխարհին Պարսից, մինչև յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցիս շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորարնակ արքունեօքն։ Շինէին և վկայարանս իմն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս անապատս միայնանոցս շինէին։ Եւ իբրև ոչ ինչ երևէր յայտնի օգնութիւն ուստեք, աճելով աճէին և բազմանալով բազմանային, և մարմնաւոր մեծութեամբք մեծանային։ Զպատճառս հարստութեանն մեք ինչ ոչ գիտէաք, բայց այսչափ ինչ ճշգրտիւ իմանայաք, զի տիեզերք ամենայն զկնի ուսմանց նոցա գնային։

«Թէպէտ և էարկ ի նոսա թագաւորն զձեռն իւր խստութեամբ, և զբազումս կալաւ և չարչարեաց ի նոցանէ, և զևս բազումս մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանել ի բազմութենէն։ Դարձեալ թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տուն եկեղեցի արարին, և յամենայն

---

1 ԲԴ լուեալ իսկ է իմ նախնեացն ԳԵԺԼԿՀՏ¹Տ² իսկ էր իմ Ըխ լուեալ իսկ իցէր իմ ԱՋԷԹԻVՏ³A լուեալ իսկ իմ էր Թ լուեալ իսկ է մեր ԳԵԺ նախնեացն ԳԵԺԽ յաւուրսն 2 ԱՋԷԻV ուսումդ ԲԴ ուսումս այս 3 ԲԴ չիք զամենայն Դ զերկիրն Դ չիք յարևելս ԷV այդր փխ անդր ԲԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² անցանել փխ հասանել A չիք իսկ 4 Թ որք Դ վարդապետք Գ օրինաց 5 ԳԵԸԺԼԽԿՀՏ¹ չիք ամենևին ԲԴ մոգութեանն ԲԴ չիք յաշխարհէն Գ յաշխարհէս 6 Ը լռեսցէ Խ զի լռեսցեն ԱԲԴԻ դադարեսցի ԱԲԴՋԻ VՏ³ քրիստոնէութիւնն Ըխ զքրիստոնէութիւն 7 Զ կարճելով կամեցաւ է կամեցաւ կարճելով արգելուլ VՏ³A կամեցաւ արգելուլ։ չիք կարճելով A չիք նոքա 8 Թ մինչ 8—9 է չիք «յաշխարհն—մինչև» 9 Թ ի Հարաւակողմ 10 ԲԴԼ այպէս Տ¹Տ² և այպէս ԲԴ աներկիւղք 11 Բ և փխ մինչև ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² եկեղեցիս մեծամեծս A եկեղեցի 12 ԲԴ զանցանէր Բ զթագաւորական արքունեացն Դ արքունովքն 13 Զ վկարանս ԳԴԵԺԼ անուանեալ ԲԳԴԵԺԼԽ եկեղեցեացն 14 ԲԴ տեղիս՝ անապատս

«Ես լսել էի մեր նախնիքներից, թե արքայից արքա Շապուհի⁷⁵ օրերում, երբ այդ ուսմունքն սկսեց աճել ու բազմանալ և լցնել Պարսից ամբողջ երկիրը և նույնիսկ մինչև արևելք հասնել, մեր կրոնի վարդապետները հորդորեցին թագավորին [այնպես անել], որ մոգության կրոնը բոլորովին չվերանա աշխարհից. նա էլ սաստիկ հրաման ավեց, որ քրիստոնեությունը բոլորովին դադարի։ Բայց որքան նա կամեցավ արգելքներ հարուցել, նրանք ավելի ու ավելի աճեցին ու բազմացան և հասան մինչև Քուշանների աշխարհը, և այնտեղից էլ [քրիստոնեությունը] տարածվեց դեպի հարավ մինչև Հնդկաստան։

«Եվ այնպես աներկյուղ ու համարձակ էին նրանք Պարսից աշխարհում, որ մինչև անգամ երկրի բոլոր քաղաքներում այնպիսի եկեղեցիներ շինեցին, որոնք իրենց պայծառությամբ գերազանցում էին թագավորաբնակ պալատներից։ Շինում էին նաև վկայարան կոչվածները և նույնպես զարդարում էին եկեղեցիների նման, և բոլոր տեղերում անապատներ, միաբանոցներ էին շինում։ Եվ թեև ոչ մի տեղից հայտնի օգնություն չէր երևում, բայց նրանք շարունակ աճում ու անընդհատ բազմանում էին և մարմնավոր մեծությամբ ճոխանում։ Հարստության պատճառների մասին մենք ոչինչ չգիտեինք. բայց այսքանը միայն ճշգրիտ իմանում էինք, որ ամբողջ տիեզերքը նրանց ուսմունքի հետևից էր գնում։

«Թեպետև թագավորն սկսեց խստություններ գործ դնել նրանց վերաբերմամբ և նրանցից շատերին բռնեց ու չարչարեց, և շատ շատերին էլ մահով սպանեց, բայց նա դառնացավ ու ինքն իրեն ձանձրացավ, իսկ նրանց բազմությունը չկարողացավ նվազեցնել։ Նույնպես և թեպետ փակեց ու կնքեց եկեղեցիների դռներն ամբողջ Պարսից աշխարհում,

---

մենանոցս շինէին Տ² և յամենայն տեղիս անապատս միայնանոցս Տ³A յապատս և յանապատս ԱՋԷԹԻV և յանապատս միայնոցս ԳԵԸԺԽԿՀ շինեցին 15 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք և (իբրև) Թ երևիր ՀՏ¹ չիք յայտնի ԱՋԷԹV օգնութիւնք ԳԻԿ օգնականութիւնք ԲԴԵԸԺԼԽՀՏ¹Տ² օգնականութիւն (ԽՀ յօգնականութիւն) ԵԸԺԼԽՀՏ¹Տ² ուստիք յայտնի 16 ԲԴԵ մեծութեամբ 17 Բ հաստութեանն փխ հարստութեանն Դ հաստատութեանն ԴԹ գիտեմք 17—18 ԲԴ բայց միայն այնչափ գիտեմք (Դ գիտեմ) ճշմարտութեամբ 18 ԳՋԷԹԻԿVՏ³ ճշմարտիւ Հ ճշկրտիւ Տ¹ ուսման 19 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹ գնացին 20 ՋԷԹԻ չիք և A արկ ԲԴ թագաւորն ի նոսա ձեռն խստութեամբ ԳԺԼԽԿՏ¹Տ² զձեռս ԵՀ ձեռս Դ չիք իւր 21 ԲԴԵԸԺԼԽՀ կալաւ ի նոցանէ և չարչարեաց ԲԴ և զբազմագոյնս փխ և զևս բազումս 22 ԲԴ դառնացեալ ձանձրացաւ ԲԴՏ³ յանձն իւր թագաւորն 23 V չիք կարաց ԱԳԴԵՋԷԻV նուազեցուցանել ԲԼ թէպէտև 24 Լ չիք փակեաց ԳԵԺԿ եկեղեցեաց 25 ԲԴ տունս Կ չիք և։

տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին, և զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնսն հաշուէին։ Սուրք սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան. աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օր քան զօր աճեցեալ բազմացաւ։ Տրտմեալ էր թագաւորն, և յոյժ դառնացեալ դահիճք բարկութեանն. իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յափշտակութիւն ընչից իւրեանց։

«Իբրև ետես թագաւորն, եթէ գոհ տուեալ դիմեցին ի մահ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և կարճեաց ի նոցանէ զհարուածս տանջանացն և հրաման ետ մոգաց և մոգպետաց, զի մի՛ ամենևին ոք խռեսցէ զնոսա, այլ հաստատեալ կայցեն աներկիւղութեամբ յիւրաքանչիւր ուսմունս, մոգն և զանդիկն և հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում կեշտք են ի կողմանս կողմանս աշխարհին Պարսից։ Եւ ապա էառ երկիրն զխաղաղութիւն հաստատութեամբ, և լռեալ դադարեցին ամենայն խռովութիւնք յուզմանց։ Քանզի ընդ մերոյ աշխարհին շարժման՝ և արևմուտք ևս մեծապէս շարժեցան, և ամենայն Տաճկաստան ընդ նոսին խռովեցան։

«Զայն ահա ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես ինձէն աչօք տեսի, թուի ինձ՝ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն։ Արդ դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ փոյթ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս, ո՛րպէս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի։ Եւ եթէ չէր մեր աճապարեալ և ի փախուստ դարձեալ, մնում ի մէջն ոչ տա-

---

1 Բ օրէնս Գ զօրէնսն ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 օրէնքն ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 կատարեցին 1—2 ԲԴ **չիք** և զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին 2 ԲԴԽ մարմնեղէնս Ը մարմնեղէն 3 ԲԶԷԹVՏ^3 զհողեղէնս ԳԵ զհողեղէնսն Դ զհողեղէնս Դ բժեցան **փխ** բթեցան Հ բթացան Թի րդեցան ԶԷV դրդեցան 3—4 ԲԳ պարանոցն 4 Ի աւարառուք 4—5 ԶԷ յաշխատեցան 5 ԲԳԴ աճեալ ԲԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 բազմանայր 6 ԲԴ **չիք** էր ԲԴԼ բարկութեամբ A դահիճքն բարկութեան 7 ԲԴ խնդալիցք Գ **չիք** և 8 ԳԴԵԺԼ ԿՀՏ^1 տանջանաց ԲԴ ընդունէին **փխ** տանէին ԲԴ **չիք** զամենայն ԲԴ զյափշտակութիւն Թ յափշտակութիւնն 9 ԳԿ ընչիցն 10 Լ և իբրև Դ թագաւոր ԵԼԽԿ թէ ԳԴԺ դոռհ Կ գոռթ ՀՏ^2 գոհ ԲԴ դիմեալ Գ ի մահն 11 ԱԴ սուրր է յաղեղնաւոր (!) ԸԽ **չիք** յաղն երկնաւոր ԲԴՏ^2 կարճեաց զնոսա ի չարչարանացն Գ ի նոցանէն ԵԸԺԼԽՏ^1 ճախրեաց **փխ** կարճեաց 12 ԶԷV հրամանաւ **փխ** հրաման ետ Λ մոգպետացն 13 ԲԴ մի՛ ոք ամենևին ԱԶԷԹԻV խուզեսցէ ԲԴ խռովեսցուցէ ԵԼԽՀ խըռեսցէ ԲԹ կացցեն Գ կալցեն Հ գայցեն 14 Բ յիւրաքանչիւր ուսումնս աներկեղութեամբ Գ իւրաքանչիւր ուսմունս աներկիւղութեամբ Բ զանգիկն Տ^1 անդիկն (!) Թ զանդիկն (լուսանցքում՝ այսատոր) Գ հնդիկն **փխ** զանդիկն ԲԴ **չիք** և (հրեայն) ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 հայն **փխ** հրեայն Է

բայց նրանք ամեն տուն եկեղեցի դարձրին և ամեն տեղ իրենց պաշտամունքն էին կատարում, և ամեն մեկն իր անձը վկայարան էր համարում, և մարդկեղեն շինվածքն ավելի լավ էին հաշվում, քան հողեղենը։ Սպանողների սրերը բթացան, իսկ նրանց պարանոցները չհոգնեցին, նրանց ստացվածքն ավարի առնողները հոգնեցին, իսկ ավարը օրեցօր աճեց ու բազմացավ։ Թագավորը զայրացած էր, և բարկացած դահիճները խիստ դառնացած, իսկ նրանք արթուն ու զվարթ՝ ուրախությամբ էին ընդունում ամեն հարված ու տանջանք և սիրով տանում էին իրենց գույքի ամեն մի հափշտակությունը։

«Երբ թագավորը տեսավ, որ գոհ տալով դեպի մահ դիմեցին, ինչպես սուրբ զոհացուները դեպի երկնավոր աղը, արգելեց և վերջ տվեց նրանց հարվածներին ու տանջանքներին. և հրաման տվեց մոգերին ու մոգպետներին, որ ոչ ոք ամենևին նեղություն չտա նրանց, այլ ամեն մեկն աներկյուղությամբ հաստատ մնա իր հավատին—մոգն ու զանդիկը[76] և հրեան և քրիստոնյան, և էլի ինչ բազմաթիվ դավանություններ որ կան Պարսից աշխարհի զանազան կողմերում։ Եվ այնուհետև երկիրը հաստատուն խաղաղություն ձեռք բերեց, և բոլոր խռովություններն ու հուզմունքները դադարեցին։ Որովհետև մեր աշխարհի խռովության հետ՝ Արևմուտքն ևս մեծապես շարժվեց և ամբողջ Տաճկաստանն էլ նրանց հետ հուզվեց։

«Այն ահա լսելով գիտենք. բայց այս, որ ես իմ աչքով տեսա, ինձ թվում է, թե է՛լ ավելի մեծ պիտի լինի, քան առաջվանը։ Արդ, դո՛ւ, որ այս աշխարհի մարզպանն[77] ես, պարտավոր ես հոգ տանել, գրել և ցույց տալ արքունիքին սրանց միաբան ուժը, թե ինչպե՛ս աներկյուղաբար բանի տեղ չդրին արքունական հրամանը։ Եվ եթե մենք չշտապեինք

հրեայքն 15 ԳԿ կէշք ԵԹԺՀ կեշտք (լուսանցքում՝ կրանք Հ կրօն) ԶԷV **չիք** կողմանս 16 ԲԴ Պարսից աշխարհին Լ յաշխարհին Տ^{2}Տ^{3}A առ 16—17 ԲԼԽՏ^{1}Տ^2 հաստատութեան Գ **չիք** հաստատութեամբ 17 Է լուեալ **փխ** լռեալ ԲԴՏ^2 խռովութեանցն յուզմունքն (Տ^2 յուզմունք) ԳԵԺՀՏ^1 յուղմանցն 18 ԴՀ միոյ **փխ** մերոյ Տ^1 ընդ մեր ԲԳ աշխարհի ԱԳԶԹԻԿVՏ^3 շարժմանն ԲԴ շարժեցան մեծապէս 19 ԲԴ ընդ նմին խռովեցաւ 20 ԲԴ բայց զայս **փխ** զայն ահա ԲԴ **չիք** ահա ԱԶԷV ի լսելոց Դ գիտեմ ԵԼԽԿՀ զոր ԳԵԺԿՀ աչօքս 21 Ի **չիք** տեսի ԵԺԿՀ եթէ Դ լիցի 22 Հ մարզբանդ ԲԳԴԵԸԺԼԽԿՀ պարտ էր քեզ ԱԶԷԹԻV հոգ **փխ** փոյթ Բ հոգի (!) Տ^3 հոգ յանձին Դ հոգս յանձին առնել 23 Բ ի յարքունիս ԲԴ **չիք** բռնութեանս ԵՀ թէպէտ **փխ** որպէս ԸԹԼԽՏ^{1}Տ^2 թէ որպէս 23—24 ԺԼ աներկեղութեամբ 24 ԲԴ **չիք** առ ԲԳԹԻ զհրաման Դ զհրամանաւ թագաւորին ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 **չիք** և (եթէ) 25 ԲԴ ոչ էր **փխ** չէր Է ճարպեալ(!) **փխ** աճապարեալ Դ ոչ էին տուեալ։

Ծանոթագրություն.—Գ ձեռագրում նախ պետք է կարդալ 57-րդ թերթը, ապա 56-րդը. թերթերը խառնված են: Տե՛ս նաև էջ 118:

յին ապրել։ Եւ եթէ անզէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս եւ ընդ ինքեանս միաբանեսցեն, ո՞ կարիցէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակմանց։

«Ես ահա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ ի միմեանց. զի ա՛յլ է՝ զոր լսէ մարդ, և այլ է՝ զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք։ Դու որ ի մանկութենէ յայդմ օրէնս սնեալ էիր, և ճշմարտեալ գիտէիր զպնդութիւն մարդկանց, եթէ առանց բազում արեան հեղլոյ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ, ընդէ՞ր զայդ ամենայն հաւաստեաւ յանդիման չասացեր թագաւորին։ Քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարզպանութեամբ. ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարար յանձն քո։ Զի յայլ ժամս իմաստուն էիր, և ես գիտէի. զայս գործ ոչ իմաստութեամբ գործեցեր։ Ապա եթէ ոչ, յայտ է եթէ և դու ի նոցա բանի ես, և քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս։

«Արդ եթէ այդ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմոգութիւն, մի՛ ինչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ. ես գրեմ և ցուցանեմ ի դուռն մովպետան մովպետի և դարանդարձապետի և մեծ հազարապետին, զի ածցեն զարքայ ի հաւանութիւն, որպէս զի ի բաց թողացուսցէ ըստ առաջին հրամանին, և ի կամս մարդկան ապատան արասցեն, զի առ սակաւ սակաւ ընդելցին ընդ օրէնս մոգութեանս. զի որք կայցին՝ սիրով երևեսցին կատարեալ զհրամանն արքունի։ Քանզի մարզ է աշխարհս. գուցէ յորժամ վնաս ինչ առնի-

---

1 Թ ապրիլ ԲԴ այնպէս ԳԸԺԿ մարդիկդ ԵՀ մարդիկք Խ մարդիկքդ ԲԴ այնպէս S^1 բռնեցան 1—2 Դէ զինաորս Ը անզործ(!) զզինուորսն ԲԴ եթէ զզինուորս եւ ընդ իւրեանս յանկարծ միաբանեսցեն 2 ԵԺԼԽԿՀ զզինուորսն Կ չիք եւ ընդ Լ ինքեան Ծ ինքեանս Կ յինքեանս ԱՋԷԹԻVS^3A միաբանեցուցանեն ԳԵԺԼԿՀS^1 միաբանեցուցեն ԸԽS^2 միաբանեսցեն ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ո՞ կարէ ԸԽԿ կեալ 3 ԲԴ նոցա Դ յանդուգն Զ յանդուգն ԲԴS^2 յարձակմանն 4 Բ անտեղեակ իսկ էի անքակութեամբ ուխտիդ եկեղեցւոյ Դ անքակութեան ուխտիդ եկեղեցւոյ 4—5 ԲԴ չիք ի միմեանց զի 5 Թ որ 6 Դ իւր աչաւքն Թ իւրով ԲԴ չիք որ ԲԴ լեալ փխ սնեալ 7 S^3 զպնդութիւնդ 8 ԲԴԵԸԺԼԽՀS^1S^2 արեան ԲԴ նոքա ԲԴ չտան մեզ Ը չիք մեզ Ը ոչ տան մեզ Դ յեկեղեցի Խ զեկեղեցիսդ 9 A ընդէ՞ր ոչ Թ այդ 9—10 ԲS^2 A չասացէր յանդիման թագաւորին (A յանդիման չասացեր) 10 Դ զի փխ քանզի 11 ԲԴS^2 քեզ առեալ էր և յանձն արարեալ մարզպանութեամբ Կ յանձնեալ էր Դ չիք էր 12 է հոգս ԲԴ զի ցայժմ փխ յայլ ժամս 12—13 ԲԴ և ես գիտեմ. բայց զայս գործ իմաստութեամբ առնել ոչ գիտացեր (Դ իմաստութեամբ ոչ գործեցեր) 13 A չիք գործ Թ զայս գործ իմաստութեամբ ոչ գիտէիր ԱՋԻVS^3 զայս գործ իմաստութեամբ (VS^3 իմաստութեան) ոչ գործեցեր է զայս ոչ իմաստութեամբ գործեցեր ԳԸԺԼԽԿՀS^1S^2 զայս գործ ոչ իմաստուն գործեցեր ՁԷԸԹԼԽՀVS^3 ապա թէ ոչ Ի ապա ոչ 14 ԵԺԼԽՀ թէ փխ եթէ ԱԴՁԹS^3 չիք

ու փախուստի չդիմեինք, մեզանից ոչ մեկին էլ կենդանի չէին թողնի։ Եթե անզեն մարդիկ այսպիսի ուժ ցույց տվին, հապա եթե հանկարծ զինվորներին էլ իրենց հետ միացնեն, ո՞վ կարող է դրանց հանդուգն հարձակման առաջ կանգնել։

«Ես ահա անտեղյակ էի, որ դու եկեղեցու ուխտը անքակտելի է միմյանցից. որովհետև ուրի՛շ բան է, երբ մարդ լսում է, և ուրի՛շ բան է, երբ հաստատ կերպով իր աչքով է տեսնում։ Դո՛ւ, որ մանկությունից այդ կրոնի մեջ էիր սնված,և հավաստիորեն գիտեիր այդ մարդկանց համառությունը, որ առանց շատ արյուն թափելու դրանք մեզ թույլ չեն տա ձեռք տալու եկեղեցիներին, ինչո՞ւ այդ ամենը ճշտությամբ չասացիր թագավորին իրեն։ Քանի որ բոլոր նախարարներից մեծը դո՛ւ էիր, և այս ամբողջ երկիրը քեզ էր հանձնված որպես մարզպանի, ինչո՞ւ դու ինքդ հոգ չտարար մեծապես։ Որովհետև ուրիշ ժամանակ իմաստուն էիր, և ես այդ գիտեի, բայց այս բանն իմաստությամբ չարիր։ Եթե այդպես չէ, ապա հայտնի է, որ դու էլ նրանց համամիտ ես, և [նրանք] քո խորհրդով բերին այս անցքերը իմ ու զորքի գլխին։

«Արդ, եթե այդ այդպես է, և դու չես կամենում մոգություն ընդունել, ամենևին մի՛ քաշվի և մի՛ վախենա արքայից. ես կգրեմ ու ցույց կտամ մովպետան մովպետին[78] և դարանդարձապետին[79] և մեծ հազարապետին[80], որ թագավորին համաձայնեցնեն, որպեսզի թույլ տա [վարվելու] առաջին հրամանի համեմատ, և մարդկանց կամքին թողնվի, որպեսզի փոքր առ փոքր ընտելանան մոգական կրոնին, որպեսզի ովքեր ընդունեն այն, սիրով կատարած լինեն արքունի հրամանը։ Որովհե-

---

և Բ յայտ է եթէ ի նոցա բանի ես դու ԲԴ և քո խորհրդիդ Գ և քո խրատով ԵԺԼԽՀS^1S^2 և քո խորհրդովք Կ քո ԲԴ անցուցին նոքա 15 Խ զայս բանքս Կ չիք անցս 16 ԳԵԸԺԼԽԿՀS^1 չիք այդ ԳԵԸԺԼԽԿՀ չեն ԲԴ և քեզ կամք են չունել է կամք ոչ ունել ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 զմոգութիւնդ Ջ զմոգութիւնն 17 Թ չիք դու Դ չիք երկիւղիւ 18 Գ չիք դուռն ԲԴ մովպետին ԵԸԺԽՀ մովպետան մովպետի (լուսանցքում՝ պարսնաց պարոնի) Թ մովպետան մովպետի (լուսանցքում՝ իշխանաց իշխանի) Բ դարանդարձպետին ԴԼ դարանդերձպետին Ե դերանդարձայպետի (լուսանցքում՝ փառաշ) ԸԺՀ դերանդերձապետի (լուսանցքում՝ փառաշ) S^1S^2 դերանդերձապետի Թ դարանդարձապետի (լուսանցքում՝ ֆառաշ սալահարար) Խ դերանդարձապատի (լուսանցքում՝ պարսնաց պարոնի. փառաշի) Ի և ի դարձապետի(!) 19 Թ արքայ Խ զարքայն ԲԴ ի հաւան Ե չիք ի 20 ԲԴ չիք և 21 ԲԴS^2 արասցէ Հ արասցես Ի չիք առ ԲԴS^2 ընտելեսցին ԵԷ ընդելցեն 21—22 Բ մոգութեանն A մոգութեան 22 ԲԳԴԵԸԺԽԿՀS^1S^2 կատարել Ժ զհրաման VS^3A զհրամանս 23 ԲԴԾS^1S^2 Քանզի ի մեր ձեռն է փխ քանզի մարզ է ԸԽA մարդ փխ մարզ Թ մարզ (լուսանցքում՝ հարկ կամ առ)։

ցեն, և ինքեանք ցրուեալ վատնեսցին յօտարութիւն։ Իսկ յորժամ աշխարհս թափուր լինիցի ի մարդկանէս, յայնժամ և քեզ գլխովին մեծապէս վիշտ հասանէ յարքունուստ»։

Եւ պատասխանի մարզպանն մոգպետին, և ասէ. «Ամենայն բանք խրատուդ զոր ասացեր՝ ճշմարիտ են. բայց զառաջինն զոր չիմացաք՝ տեսեր, և մեծապէս զղջացաք այժմ։ Բայց դու արդ զոր ասեմս արա, և բարիոք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո արգել ի բազմաց. բայց արանց՝ որոց ես ասեմ՝ նոցա յայտնեա, մինչև ես ինձ ոյժ ժողովեցից՝ զօր ի թիկունս ածելոյ, և զուխտ եկեղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել։ Եւ եթէ զայդ այդպէս արարից, գիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել»։

Եւ անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն, զիւր գունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոգաց և մոգպետին։ Եւ ապա սկսաւ ասել. «Աղէ դու անգամ մի հրովարտակ ի դուռն տուր վասն այրուձիոյն՝ որ յԱղուանսն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայս եկեսցեն. և յորժամ զնոսա ի ձեռին ունիցիմք, չիք ոք որ եղծանել կարէ զհրամանն արքունի»։

Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. «Այդ խորհուրդ դարձեալ իմոց բանիցս ընդդէմ է. քանզի մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս ի բաց քանդի, և մեք ի պատուհասէ չապրիմք. անձանց վնաս, և արքունի մեծապէս զեան»։

Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն, զի սրտի մտօք կալեալ էր զպարսկական օրէնսն։ Սկսաւ այնուհետև պատրել զոմանս կարասեաւ և զոմանս ողոքական բանիւք. զոա-

տև այս աշխարհը մի ծայրերկիր է. գուցե՝ երբ [նրանց] որևէ վնաս հասցնեն, նրանք էլ վեր կենան ցրվեն օտարություն։ Իսկ երբ այս երկիրը մարդկանցից դատարկվի, այն ժամանակ քեզ էլ գլխովին մեծ վըտանգ կհասնի արքունիքից»։

Մարզպանը պատասխան տվեց մոգպետին և ասաց. «Այդ բոլոր խրատներդ, որ ասացիր, ճշմարիտ են. բայց ինչ որ մենք սկզբում չհասկացանք, դու տեսար, և այժմ սաստիկ զղջացինք։ Իսկ այժմ ինչ որ ասում եմ, արա՛ և քեզ լավ կթվա։ Մի քիչ համբերություն ունեցիր և քո այս խորհուրդը ծածկի՛ր շատերից. բայց հայտնի՛ր այն մարդկանց, որոնց ես կասեմ, մինչև որ ես ուժ հավաքեմ, օգնական զորք կանչեմ, գուցե կարողանամ եկեղեցու այդ ուխտը երկփեղկել։ Եվ եթե այդ այդպես անեմ, այնուհետև գիտեմ, որ արքայական հրամանն էլ կարող եմ կատարել»։

Եվ անմիջապես զորք հանեց Սյունյաց աշխարհից, իր զորամասն ստվարացրեց՝ մոգերին ու մոգպետին օգնության հասնելու համար։ Եվ ապա սկսեց ասել. «Հապա դու մի թուղթ ուղարկիր Դուռը, որ Աղվանից աշխարհում գտնված տասը հազար այրուձին Հայաստան գա ձմեռն անցկացնելու համար. երբ նրանց մեր ձեռքի տակ ունենանք, էլ ոչ ոք չի կարողանա արհամարհել արքունի հրամանը»։

Մոգպետը պատասխան տվեց և ասաց մարզպանին. «Այդ խորհուրդը դարձյալ հակառակ է իմ խոսքերին, որովհետև եթե մենք բռնությամբ կռվենք այս երկրի հետ, ապա երկիրը կքանդվի, մենք էլ պատուհասից չենք փրկվի, մեր անձերին վնաս [կլինի] և պետությանն էլ մեծ կորուստ»։

Բայց մարզպանն ամենևին չկամեցավ նրան լսել, որովհետև սրտանց էր ընդունել պարսկական կրոնը։ Այնուհետև սկսեց ոմանց խաբել գույքով, ոմանց՝ հորդորական խոսքերով. բոլոր ռամիկներին էլ ահեղ

---

1 A նոցա առնիցեն ԸԽ առնեն Ի ոչ առնիցեն (!) ԲԴ վատնեալ ցրուեսցին Խ ցրուեալք ԳԵԺԼԽԿՏ^{1}Տ^2 վատնիցին Դ յօտարութիւն և աշխարհս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք իսկ 2 Լ թաքօր Ծ թափոր ԲԴ և աշխարհս թափուր մնասցէ ի մարդկանէ Բ չիք յորժամ Դ չիք իսկ յորժամ է լիցի ԳԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 լինի ԵԹՀ ի մարդկանէ, Բ և քեզ իսկ ԵԸԺԼԽՀՏ^2 քեղ իսկ փխ և քեզ 3 ԱՋԷԹԻՎՏ^{3}Λ վնաս փխ վիշտ Թ հասանի 4 ԲԴ մարզպանն և ասէ զմոգպետն 5 Թ խրատոյդ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 զոր դու 6 ԲԴ ա: իմացաք ԲԴ չիք դու ԵԸԺԼԽՀ բայց արդ դու Ժ չիք արդ 7 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք արա և Բ եթէ բարիոք Թ բարուոք 8 ՋԷՎ սրբել փխ արգել Կ բաց յարանց 9 ԲԴ պատուիրեմ փխ ասեմ Ժ մինչ չև ԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^2 ինձէն ԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^2 չիք ոյժ Գ ոյն (!) ԷԹ յոյժ փխ ոյժ 9—10 ԲԴ մինչև ես զօր ի թիկունս ժողովեցից և զուխտ 10 Խ ինձէն ժողովեցից զօր Ե կատարեցից փխ կարացից Բ երկփեղկեալ 11 ԵԺԾ այսպէս Լ այնպէս ԲԴ չիք ապա ԲԴ զհրաման 12 ԲԴ կարացից փխ կարող եմ 13 Գ չիք անդէն ԱԳԵԷԺ հանել ԲԴՏ^2 աշխարհն փխ աշխարհէն 14 ԳԿ մոգացն Գ մոգպետաց 15 ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 չիք ապա ԲԴ անգամ (Դ անկամ) մի դու ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 առ անգամ մի ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի դուռն արքունի 16 է այրուձիուն Դ յԱղուանս 16—17 ԲԴ զի ձմերոց Գ զի ձմերոցի 17 Տ^{3}A Հայոս ԲԴԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^2 ունիմք փխ ունիցիմք Գ չիք ոք 18 Դ եղծել ԱԲԴՋԹԻՎ զհրաման 20 ԲԴ չիք դարձեալ ԸԻԽ իմոցս Դ խորհրդոցս փխ բանիցս Լ բանից ԸԻԽ չիք բանիցս ԲԳԴԵԸԺԽԿ յորժամ մեք ԼՏ^1 չիք մեք 21 ԲԴ կռուիմք Հ չիք աշխարհս ԳԿ չիք և 22 ԲԴ վնաս է 23 ՋԷՎ զեայն Թ զեան (լուսանցքում՝ վնաս) Թ չիք և 24 ԲԴ կամեցաւ մարզպանն ունկն դնել նմա Բ չիք ամենևին Վ պարզպանն (!) 25 ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 ընկալեալ էր 26 է պարտել ԱՋԹԻՎՏ^3 կարասւով ԵՀ զոմանս ողոքական (Հ ողոգական) բանիւք և զոմանս կարասեաւ ԲԴ չիք և ԲԴՏ^2 զորկ (Դ ողորկ) փխ ողոքական ԲԴ և զռամիկն ԵԺԼԽ Տ^{1}Տ^2 զռամիկսն է զռամեկն Հ ռամիկսն։

մինչ ամենայն՝ ահեղ բանիւք սպառնացեալ սրտաթափ առնէր։ Հանապազորդ առատացոյց զռոճիկն տաճարին, և յերկարէր զնուագսն ուրախութեան, մաշելով զերկայնութիւն գիշերացն յերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան, քաղցրացուցանէր ոմանց ըզկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս մեծապէս զովութիւն մատուցանէր օրինաց թագաւորին։ Բերեալ էր և յարքունուստ բազմութիւն կարասոյ, և միում միում կաշառ գաղտ խթէր ի պատճառս պարգևի և պատուոյ. և բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր։

Իսկ զայս ամենայն իբրև տեսին սուրբ եպիսկոպոսունքն, ևս քաջ դրդեալ յորդորեցան ի նոյն միաբանութիւն. և հնարագէտ իմաստութեամբ ընդ երկուս բաժանեցին զբանակն։ Մանաւանդ իբրև հաստատեալ գիտացին ի միտս իւրեանց, եթէ անօրէն իշխանն Սիւնեաց զօրհասական վէրսն ի յոգին ընկալեալ էր, խորշեցան մերժեցան և ի բաց փախեան ի նմանէ։

Խորհուրդ արարեալ ի գիշերի միում ամենայն ուխտին բազմութեամբ՝ կոչեցին և զսպարապետն զօրուն ի խորհուրդն, հարցին և քննեցին և ի վերայ հասին մտացն անշարժութեան, որոյ ոչ և առ սակաւ մի թերացեալ էր ի սիրոյն Քրիստոսի։ Եւ միաբան աղօթս արարեալ ի վերայ նորա, վերստին ընկալան զնա յառաջինութիւն։ Եւ նովաւ որսացան զբազումս ի նոյն միաբանութիւն, որք ոչ էին քակեալ յառաջին միաբանութենէն. եկին և ժողովեցան գունդ զօրաց բազմաց։ Եւ ևս առաւել հեռագոյն զատան ի մոգացն և ի մոգպետէն և յանօրինէն Վասակայ։

Իսկ նա այնչափ յիմարեցոյց ափշեցոյց զմիտս մոգպետին, մինչև չետ նմա իմանալ զելս իրացն։ Սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն և մեծամեծ ռոճիկս կարգել, զոհել պատրուճակս,

---

1 ԳԴԿ արտաթափս 2 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 առատացուցանէր ԲԴԵԽՀ զռոճիկս ԳԿ զռոճիկ Թ երկարէր 2—3 ԱԲԳԴԵԽԿ զնուագս 3 ԱԳԶԸԿ ուրախութեանն ԲԴ գիշերոյն ի յերգս 5 ԱԳԶԷԹԻԿV չիք երաժշտական և զերգս ԲԴ չիք երաժշտական և զերգս հեթանոսականս Դ զկարգս հեթանոսաց 5—6 ԱԲԻV զոհութիւն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զովութիւնս 6 Խ զօրինաց ԵԸԼՀ չիք էր 7 Լ զբազում կարասոյ ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 կաշառաբար 8 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 պատուի և պարգևաց 8—9 Դ մարդիկք 9 ԲԴՏ^2 պատրէր փխ հրապուրէր 10 Դ չիք իսկ Բ չիք իբրև Դ իբրև զայս ամենայն ԲԳԴԵԸ Տ^{1}Տ^2 եպիսկոպոսքն 11 Գ քան փխ քաջ ԴԼ քաջորդեալ յորդորեցան Տ^1 յորդեալ յորդորեցան Գ միաբանութիւնն 11—12 Դ իմաստութեամբն յերկուս բաժանեալ 12 Բ յերկուս փխ ընդ երկուս Բ բարժանեալ փխ բաժանեցին Գ բաժանեցան Բ իբրև յորժամ 13—14 ԲԴՏ^2 Սիւնեաց Վասակ 1 ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 իշխանին 14 ԲԴ զվէրսն ԳԵՏ^1 չիք

խոսքերով սպառնալով՝ վախեցնում էր։ Մշտապես շատացրեց սեղանատան մթերքները և երկարացնում էր ուրախության ժամերը, գիշերների երկարատևությունը մաշելով արբեցության երգերով ու լկտի պարերով. ոմանց համար սիրելի էր դարձնում երաժշտական կարգերն ու հեթանոսական երգերը, մեծամեծ գովեստներ էր տալիս թագավորի կրոնին։ Արքունիքից բերել էր նաև շատ դրամ և սրա-նրա գրպանը գաղտնի կաշառք էր խոթում, իբր թե պարգև ու պատիվ է տալիս. և մեծ նենգությամբ անմեղ մարդկանց հրապուրում էր և իր կողմը քաշում։

Իսկ երբ այս ամենը տեսան սուրբ եպիսկոպոսները, է՛լ ավելի ուժեղ կերպով ամրապնդվեցին իրենց միաբանության մեջ և հնարագետ իմաստությամբ բանակը երկու մասի բաժանեցին։ Մանավանդ երբ հաստատ կերպով՝ իմացան ու հասկացան, որ Սյունյաց անօրեն իշխանն ստացել էր այն օրհասական վերքն իր հոգու մեջ, խորշելով հեռացան և փախան նրանից։

Մի գիշեր ուխտի ամբողջ բազմությունը խորհուրդ կազմեց և զորքերի սպարապետին[81] էլ կանչեցին խորհրդի. հարցրին, քննեցին և տեղեկացան, որ նրա դիտավորությունն անշարժ է և մի փոքր անգամ չի թերացել Քրիստոսի սիրուց։ Եվ միաբան աղոթք անելով նրա համար, նրան կրկին ընդունեցին առաքինիների շարքը։ Նրա միջոցով շատերին էլ գրավեցին նույն միաբանության մեջ, ովքեր առաջին միաբանությունից անջատված չէին. եկան-հավաքվեցին և մեծ զորագունդ կազմեցին։ Եվ է՛լ ավելի զատվեցին-հեռացան մոգերից ու մոգպետից և անօրեն Վասակից։

Իսկ նա այնքան հիմարացրեց ու շվարեցրեց մոգպետի միտքը, որ նույնիսկ չթողեց, որ նա գործի հետևանքները հասկանա։ Սկսեց մոգեր բաժանել նախարարների տները և մեծ-մեծ ռոճիկներ նշանակել, կենդա-

---

ի Բ ի յոգիս Դ յոգիսն ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 յոգին Գ բնակեալ փխ ընկալեալ ԲԻ խորհեցան փխ խորշեցան 15 Զէ փախեայն 17 ԲԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 զսպարապետ զօրուն ԱԳԶԷԹԻԿ VՏ^{3}A զօրաց 18 Բ մտիցն Դ անշարժութեանն ԲԴ որ ոչ ԳԵԼԽԿ ոչ ես փխ ոչ և ԱԲԹԻ չիք և 18—19 ԶԷVՏ^3 չիք և առ 19 Դ սակաւիկ մի Խ վերացեալ էր (|) ԲԳԴԵԸ ԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և (միաբան) 20 Թ չիք զնա 21 ԴԶԷՏ^{3}A որսացեալ ԲԴ զի փխ որք 22 ԲԴՏ^1 չիք և ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 23 չիք առաւել ԲԴ զատան հեռացան փխ հեռագոյն զատան Գ զատեցան ԵԺԼԽՀՏ^1 զատեան Լ ի մոգուցն Գ ի մոգաց 24 ԲԴԼ յանօրէն ԳԵԺԾԿՀՏ^1 յանօրէնն Խ ի Վասակայ յանօրինէն 25 Տ^{3}A յիմարեցոյց և ափշեցոյց ԶԷԻ յափշեցոյց V յարմարեցոյց փխ յիմարեցոյց 26 Թ մինչ ԲԴՏ^2 ոչ ետ Գ ես նմա ԲԴՏ^2 սկսաւ այնուհետև ԲԳԴԿՏ^2 մոգս բաշխել 26—27 ԱԶԷԹԻV չիք սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն 27 Զ կարգէր ԵԸԺԽՀ պատրուճակս (լուսանցքում՝ ոչխար Հ ոչխարհ)։

և բռնաբար կնքաւոր մարդկանն տալ ուտել միս յաղածոյ, և երկիր պագանել արեգականն։ Իբրև սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան և ևս կանայք փշտիպանացն յաւուր կիւրակէի անցուցանել զճրագունս եկեղեցւոյն և պատառել զհանդերձս հաւատաւոր կանանցն։

Զայս գուժկան աղմկի իբրև տեսին միաբան սուրբ եպիսկոպոսունքն, զաւետարանն ի ձեռն առեալ հասին և անկան առանց հարցանելոյ ի վանս սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց։ Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. «Աղաչեմք զձեզ զամենեսեան սուրբ աւետարանաւս. եթէ ձերով խորհրդիւ գործեն զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք։ Ապա թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարիսն գործեն, այսօր խնդրեսցի վրէժ այդ ի նոցանէ»։

Իսկ որք էին ի ներքս ի վանս սպարապետին՝ յոտն կացին, միաբան Համբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն. «Դու Տէր սրտագէտ ամենեցուն, ոչ ինչ պիտի քեզ վկայութիւն ի մարդկանէ. եթէ խոտորեալ իցեմք ի քէն սրտի մտօք, զայն դու ինքնին քաջ գիտես. այսօր իսկ դատեա զմեզ ըստ մեղաց մերոց։ Ապա եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ աւետարանիս, դո՛ւ Տէր, լեր մեր օգնական այսօր, և տուր զթշնամիսն ճշմարտութեան ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նոսա ըստ կամաց մերոց»։

Զայս իբրև ասացին, ամենեքեան զգլուխ զգետնի հարկանէին,

---

1 ԲԴ բռնաւոր փխ բռնաբար Դ կնքաւորս մարդկան ԸԺ տան փխ տալ ԲԴՏ^2 յաղածոյ միս տալ ուտել է արածոյ փխ յաղածոյ 2 ԳԵՏ^{1}Տ^2 արեգական ԲԴ եւ իբրև 3 ԱԹ աշխարհս ԳԵԺԼՀՏ^1 այսպիսի 2—3 ԲԴ այնպիսի (Դ այսպիսի) պիղծ խառնակութիւն ընդ ամենայն աշխարհն է չիք «իբրև սկսան—յանդգնեցան» Թ ԼՏ^2 չիք և ԲԴՏ^2 չիք ևս ԳԵԸԺԽԿՀ ևս և 4 ԳԿ փուշտիպանացն Թ փշտիպանացն (լուսանցքում՝ մարմնապահ կանայք մոգաց) ԵԸԺԽՀ փստիպանացն (լուսանցքում՝ մարմնապահ(ք) կանայք մոգուցն Ժ արքայապահ) ԵԺԼ յաւուրն Բ կիւրակէին Դ կիրակէին ԼՏ^3 կիրակէի Դ զճրագունսն ԲՏ^2 5 եկեղեցեացն Բ չիք և ԱԻԽ պատառեալ Գ զհանդերձ Ի զհանդերձն Լ հաւատար փխ հաւատաւոր ԲԳԿՏ^{1}Տ^2 կանանց 6 Վ յայս փխ զայս Ա ԲԴՁԹՏ^3 գույժ Վ գուշ Ե գուժական Ի գուժ է յոյժ փխ գուժկան ԳԴԵԸԺԼԽՀՏ^2 չիք աղմկի ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 միաբանեալ 6—7 ԲԴ միաբան եկեալ սուրբ եպիսկոպոսքն ԳԵԸՏ^{1}Տ^2 եպիսկոպոսքն 7 ԲԴ չիք և Բ առանց ուրուք 7—8 Դ անկան ի վանս սպարապետին առանց ուրուք հարցանելոյ 8 Բ ամբարապետին փխ սպարապետին Ի է փխ էին Գ զօրք 10 է աղաչեմ 11 ԵԸԼԽՀՏ^2 գործեն ԱԳԴՁԷԹԺԻԿՎՏ^{3}A գործէ Ժ գործէն Դ խորհրդովդ Ը չիք զայն 12 Ե անօրէնութիւն Ը զանօրէնութեան 11—12 Բ խորհրդովդ գործեն զանօրէնութիւն և

նիներ զոհել և բռնությամբ ստիպել կնքված մարդկանց, որ զոհած միս ուտեն և արեգակին երկրպագություն տան։ Երբ այսպիսի պիղծ խառնակությունն սկսեց շատանալ ամբողջ երկրում, այն ժամանակ մինչև իսկ փշտիպանների[82] կանայք հանդգնեցին կիրակի օրը եկեղեցու ճրագները հանգցնել և հավատավոր կանանց[83] շորերը պատառոտել։

Այս աղմուկն ու վայնասունը երբ տեսան միաբան սուրբ եպիսկոպոսները, ավետարանը ձեռներն առնելով գնացին և առանց հարցնելու մտան սպարապետի կայանը, որտեղ ժողովված էր Հայոց զորքը։

Իրենց ձայները բարձրացրին և ասացին. «Ձեզ բոլորիդ աղաչում ենք այս սուրբ ավետարանով. եթե մարզպանն ու մոգպետը ձեր խորհրդով են գործում այն անօրեն չարագործությունները, նախ մեր պարանոցները կտրեցեք և հետո ձեռք տվեք եկեղեցուն։ Իսկ եթե նրանք առանց ձեր կամքի են կատարում այն չարագործությունները, թո՛ղ այսօր ևեթ դրա վրեժը պահանջվի նրանցից»։

Իսկ ովքեր գտնվում էին ներսում, սպարապետի կացարանում, ոտքի ելան, միաբան իրենց ձայները բարձրացրին առ աստված և ասացին. «Դո՛ւ, Տե՛ր, որ բոլորի սրտերը գիտես, քեզ ամենևին պետք չէ մարդկանց վկայությունը. Եթե մենք սրտանց խոտորված լինենք քեզանից, այն դու ինքդ լավ գիտես. հենց այսօր էլ պատժի՛ր մեզ մեր մեղքերի համաձայն. իսկ եթե հաստատ ենք մնացել այս ավետարանի սուրբ ուխտին, դո՛ւ, Տե՛ր, մեր օգնականը եղի՛ր այսօր և ճշմարտության թշնամիներին տո՛ւր մեր ձեռքը, որպեսզի նրանց հետ վարվենք մեր կամքի համաձայն։

Երբ այս բանն ասացին, բոլորը գլուխները գետնին էին խփում, և

զչարիսն Դ զայն անօրէնութիւնն և զչարիսն Թ չարիք 12—13 Լ պարանոցն 13 ԲԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 յեկեղեցիսն ԳԷԿ ձեռն արկէք Խ ձեռնարկիցէք ԲԴ ձեռն արկանէք 13—14 ԲԴ ապա եթէ նոքա առանց ձեր կամացդ ԳԵԸԺԼԽՀՏ^2 ապա եթէ Ի ձերոց 14 ԱԲԳԹԻ չարիս ԴԵԸԺԼԿՀՏ^2 չարիսն Խ չարիքն Λ չարն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 գործեցին ԳԵԸԺԼԽԿՀ այսօր իսկ 16 ԳԵԺԿՀ որ Դ ինքս Բ ասպարապետին ԲԴՏ^2 յոտն կացին ամենեքեան 17 ԲԴԸԽՏ^2 չիք միաբան ԵԺԼՀՏ^1 համբարձին միաբան ԲԴԸ չիք առ Աստուած 18 է սրտոց գէտ ԲԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 պիտոյ Լ ԱԳՁԷԹԻԿՎՏ^{3}A պիտի 18—19 Բ ի մարդկանէ վկայութիւն Դ մարդկան 19 Խ խոտորեալք ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 սրտիւ և մտօք Բ զայդ Բ ընքնին 20 ԵՀ չիք «քաջ գիտես—այսօր իսկ» Դ չիք իսկ ԸԺԼԽՏ^{1}Տ^2 դու ինքնին դատեա ԴԿ վասն փխ ըստ 21 Բ ի յուխտի ԲԴ չիք սուրբ 21—22 ԲԴ տէր աստուած մեր, օգնական լեր այսօր ԸԽՏ^2 մեզ փխ մեր Ը չիք այսօր Ի չիք լեր ԱՁԷԹԻՎ զթշնամին ԳԿ զթշնամիս է ճշմարտութեամբ 23 A ըստ կամաց քոց սրբոց 24 Դ զայս ասէին ամենեքեան ԲԴ զգլուխսն ԳԵԺԽԵԿՀՏ^{1}Տ^2 զգլուխս Թ գլուխ Լ գլուխս Գ գետնի ԻԽԿՏ^1 ի գետնի։

և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն։

Իսկ մի ոմն ի նախարարացն որ անդր դիպեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միաբանեաց ընդ նոսա ի մեծ վկայութիւնն. և անդէն առ ժամայն ի նոցունց ի տեղւոջն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն։

Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչև ամենայն տեսողացն երիկամունքն դողային, որք առ ոչ ինչ համարեցան զպարգևս արքունի, և առ ոտն հարին զհրամանս ահագինս։ Ընթացան վաղվաղակի ի զէնս իւրեանց, վառեցան կազմեցան զգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին։ Գունդն առաջին յարևելից կուսէ, և գունդն երկրորդ յարևմտից կողմանէ, և գունդն երրորդ ի հիւսիսոյ կողմանէ, շուրջանակի ի մէջ առեալ փակեցին զբազմութիւն բանակին. և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս կապեցին զերևելի մարդիկ, և արկին ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ։ Եւ զառ և զապուռ և զաւար բանակին ի մի վայր ժողովեալ պահէին իբր հրամանաւ արքունի։

Իսկ զմարզպանն ձերբակալ արարեալ, և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին, զզջանայր զառաջին քակումն ի նոցանէ։ Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, և աղաչէր խաղապատելով՝ զի մի՛ մերժեալ ընկեցի առ ի նոցանէ։ Կրկնէր և երեքկրնէր զանսուտ երդումն առաջի բազմութեանն ի սուրբ աւետարանն, գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն. և աղաչէր՝ զի յԱստուծոյ խնդրեսցի վրէժխնդրութիւնն, և մի՛ նոքա մարդկաբար սատակեսցեն զնա։

---

1 ԱԴԶV յաւետարանն Լ աւետարանէն Գ յաւետարանն և յեպիսկոպոսն V յաւետարանն Ի աւետարանն ԹԼ եպիսկոպոսացն 2 ԲԴ չիք ոմն Բ անդն ԵԸԺԼԽՀS^2 անդ 2—3 ԲԴ էր ի Վասակայ խորհրդին ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 որ էր ի նորա խորհրդի 3 ԲԴ ի մեծի վկայութեանն Ե վկայութիւն 3—4 Ը չիք «և ոչ միաբանեաց—ի տեղւոջն» 4 Թ ի տեղւոջս S^2 չիք ի տեղւոջն ԵԺԼԽՀS^1S^2 քարկոծեցաւ ի նոցունց Է քարկոծեցան Ը կոծեցաւ փխ քարկոծեցաւ 5 ԱԲԴԶԻV ամենեցունց Գ նոցա ամենեցուն Խ չիք ի վերայ 6 Բ նախանց ԼS^1 դրդեցան 7 ԱԻ իրիկամունքն ԳԵԼԽ երիկամունք Բ դողացան Գ դողացին ԲԴ չիք առ 8 Խ զպարգևսն ԵԺԼԽՀS^1S^2 հարկանէին փխ հարին Ը առ ոտն արկանէին 8—9 Դ ահագին 9 ԼS^1 ընթացեալ ԲԴ վաղվաղակի ի զէնս (Դ զէնսն) իւրեանց ընթացան Ի ի զէն Ի չիք իւրեանց 10 Ի ի գիշերն ԲԴ արևուն Դ ընդ երիս Թ երիս 11 Ի չիք բաժանեալ ԱԶԹԻV զբանակն 12 ԲԴ կողմանէ փխ կուսէ ԲԳԿ չիք կողմանէ ԸԺԼԽՀS^1S^2 կուսէ փխ կողմանէ 12—13 Է չիք և գունդն երրորդ ի հիւսիսոյ կողմանէ 13 Գ հիւսըսո ԴԵ հիւսուսոյ ԲԴ չիք առեալ 14 ԲԳԴԿ չիք և (զբազումս) ԵԸԺԼԽՀ չիք և զբազումս կոտորեցին Բ և զբազմագոյնս Գ

ողջույն ստացան ավետարանից ու եպիսկոպոսներից։

Իսկ նախարարներից մեկը, որ այնտեղ պատահեց, նրանց խորհրդի մեջ էր. սա չմիաբանվեց նրանց հետ այն մեծ վկայության գործում և իսկույն տեղնուտեղը նրանց կողմից քարկոծվեց, և մեծ սարսափ ընկավ բոլորի վրա։

Այն ժամանակ բոլորն այնպես բորբոքվեցին զայրույթով, որ մինչև անգամ բոլոր տեսնողների երիկամները դողում էին. նրանք ոչինչի տեղ դրին արքունի պարգևները և ոտնատակ տվին ահռելի հրամանները։ Շտապով վազեցին դեպի իրենց զենքերը, ամբողջ գիշերը սպառազինվեցին՝ պատրաստվեցին և արևը ծագելուն պես զորքը երեք մասի բաժանելով՝ վրա տվին բանակին։ Առաջին գունդն արևելյան կողմից, երկրորդ գունդն արևմտյան կողմից և երրորդ գունդը հյուսիսային կողմից շուրջանակի իրենց մեջ առան-փակեցին մեծաթիվ բանակը[84]. շատերին կոտորեցին, է՛լ ավելի շատերին երևելի մարդկանցից կապեցին և ամուր բերդերում բանտարկեցին իրենց իշխանության տակ։ Եվ բանակի կողոպուտը, թալանն ու ավարը մի տեղ ժողոված պահում էին իբր թագավորի հրամանով։

Իսկ երբ մարզպանին էլ ձերբակալեցին, նա երդումով միաբանվեց նրանց հետ, որ հաստատ կմնա ուխտին, զղջում էր, որ առաջ բաժանվել էր նրանցից։ Ապաշխարելով ընկնում էր սուրբ եպիսկոպոսների ոտները և աղաչանք-պաղատանք էր անում, որ չմերժեն ու չհեռացնեն նրան իրենցից։ Երկու-երեք անգամ անսուտ երդում տվեց սուրբ ավետարանի վրա բազմության առաջ, երդումը գրեց, կնքեց և կապեց ավետարանից. և աղաչում էր, որ աստվա՛ծ վրեժխնդիր լինի [իրենից] և ո՛չ թե նրանք մարդկաբար սատկեցնեն իրեն։

բազմագոյնսն Դ և զբազմագոյն 15 Բ մարդիկն Դ մարդիք. արկանէին 16 Գ և զառ զապուռ զաւար Դ չիք զապուռ ԵԼԿՀ չիք (և զապուռ) S^2 զապուր A չիք և (զաւար) 17 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 արքունի հրամանաւ 18 Է զմարզմանն (!) Հ մարզպանն Բ և նա միաբանեալ Դ և նա S^2 և նա միաբանէր 18—19 ԲԴ երդմամբ և խոստէր ընդ նոսա հաստատուն կալ 19 ԱԲԴԶԷԹԻV զղջանալ ԳԿ և զղջանալ ԵԸԺԼԽՀS^1S^2 և զղջանայր ԲԴԵԹԺԼԽՀS^2 քակտումն 20 ԲԴ ապաշաւանօք Բ ի յոտս ԴԵԸԺԼԽՀS^1S^2 չիք սուրբ 20—21 Է եպիսկոպոսին 21 ԲԴ չիք առ 22 ԲԴS^2 զսուտ փխ զանսուտ Բ երդումնն Դ երդմունսն ԸԽ չիք և երեքկնէր 22—23 Ե բազմութեան 23 Դ աւետարանին ԱԶԷԹԻV դնէր փխ գրէր ԱԲԴԶԷԹԻ զերդումնն 23—24 ԸԽS^2 կապէր ի սուրբ աւետարանէն 24 Դ չիք և (աղաչէր) ԱԳԶԷԹԻԿ աստուծոյ յայտնեսցի Թ չիք զի ԲԴ աստուծոյ յանձն լիցի վրէժխնդրութիւնն ԵԸԺԼԽՀS^1S^2 աստուծոյ վրէժխնդրութիւնն (ԵՀS^1 վրէժխնդրութիւն) 25 ԲԴ մարդկաբար նոքա ԷS^1 մարդաբար ԹԻ կատակեսցեն (!)։

Իսկ նոքա թէպէտ և հաստատեալ գիտէին զնենգաւոր կեղծաւորութիւն նորա, եթէ խաբէութեամբ դառնայ անդրէն ի հին մոլորութիւնն, ոչ ինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ աւետարանին թողին ի դատապարտութիւն։ Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զսուրբ գանձս եկեղեցւոյն, ակամայ եդին զանձինս և զաւար իւրեանց առաջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն զօրացն. և եղծաւ ապականեցաւ հրաման թագաւորին։ Եւ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նեղութիւնս և ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնաք ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս. ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս։ Քանզի հայր մեր զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի՛ ոք չար անջրպետ ի մէջ անկեալ՝ զմեզ քակեսցէ ի սմանէ»։

Ոչ երեւէր այնուհետև առաւել տէր քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ ոք քան զոք նուաղեալ ի յարութենէ։ Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս։ Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան և զմի ագան զրահս հաւատոյ պատուիրանին Քրիստոսի. միով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կանայք։ Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ

Իսկ նրանք թեպետև հաստատ գիտեին նրա նենգավոր կեղծավորությունը, և թե խաբեությամբ նորից դառնալու է էլի առաջվա մոլորությանը, ամենևին հոգ չտարան նրա վրա ձեռք բարձրացնելու նախորդ հանցանքի համար, այլ նրա դատապարտությունը թողին սուրբ ավետարանին։

Իսկ նրանք, ովքեր եկել էին եկեղեցու սուրբ գանձերը կողոպտելու համար, իրենց անձերն ու ավարը ակամա դրին սուրբ եպիսկոպոսների և ամբողջ զորքի առաջ. և թագավորի հրամանը ջնջվեց-ոչնչացավ։ Եվ աստծու զորությամբ հաջողություն գտնելով՝ տղամարդիկ և կանայք և ամբողջ ռամիկ բազմությունը աղաղակում և ասում էին գոհանալով. «Պատրաստ ենք հալածվելու և մեռնելու և ամեն տեսակ նեղություն ու չարչարանք կրելու այն սուրբ եկեղեցիների համար, որ ավանդեցին մեզ մեր նախահայրերը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան զորությամբ, որով նորից ծնվեցինք մի հավատի հույսով, մկրտվելով Հիսուս Քրիստոսի անունով. նույն նմանությամբ կամենում ենք չարչարանքներով և արյունով նորոգել մեր անձերը։ Որովհետև մեզ հայր ենք ճանաչում սուրբ ավետարանը, և մայր՝ առաքելական կաթողիկե եկեղեցին. թո՛ղ ոչ ոք իբրև չար անջրպետ մեջ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի»։

Այնուհետև տերը ծառայից ավելի չէր երևում, և ո՛չ էլ փափուկ մեծացած ազատը՝ տառապյալ գեղջուկից, և ո՛չ էլ մեկը մյուսից ավելի պակաս քաջության մեջ։ Միևնույն հոժար սիրտն ունեին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղա և Քրիստոսի անունով բոլոր միաբանվածները։ Որովհետև առհասարակ [բոլորն էլ] միևնույն զենքով զինվորվեցին և Քրիստոսի հավատի պատվիրանի միևնույն զրահը հագան, ճշմարտության միևնույն գոտիով ամրացրին իրենց մեջքերը թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք։

Այնուհետև վեր ընկած էր մնում ոսկին, և ոչ ոք հատկապես իր համար արծաթ չէր վերցնում, և առանց ագահության արհամարհված, ա-

---

1 ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 հաստատուն A նենգութիւն Դ զնենկաւոր Թ զնենգուոր 1—2 կեղծաւորութիւն 2 ՁէՏ^2 և թէ A և եթէ 2—3 Դ չիք եթէ խաբէութեամբ դառնայ անդրէն ի հին մոլորութիւնն ԲՏ^2 սովորութիւնն Ե մոլորութիւն 3 ԸՏ^{1}Տ^2 ձեռնարկել ԱԳՁԷԹԻԿV չիք ի նա 4 Ի անցանացն Բ թողոյին ԳԿՏ^2 թողուին ԲԴԼՏ^{1}Տ^2 զվրէժխնդրութիւնն փխ ի դատապարտութիւն 5 ԲԴԺԽ զգանձս սուրբ եկեղեցեացն (ԺԽ եկեղեցւոյն) Հ գանձս յեկեղեցւոյն էA գանձն 6 ԲԴ ակամայ զանձինս և զաւարն (Դ զաւար) իւրեանց եդին ԳԵԸԺԼԽԿՀ չիք և զաւար 7 ԱՁԷԹԻVA եղծեալ Խ եղծաւ և ապականեցաւ ԲՏ^2 չիք և 8 ԲՏ^2 յաջողեալ Դ աջողեալ 9 Հ ռամիկ Ե բազմութիւն V բազմութեանն 10 ԱԲԴՁԷԻVՏ^3 ի հալածել և ի մեռանել Թ ի հալածիլ և ի մեռանիլ 10—11 Բ յամենայն ի չարչարանս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և ի չարչարանս Դ չիք նեղութիւնս և ի 11 ԲԴ եկեղեցեացն 12 ԱԴԷ գալստեամբ ԵՀ չիք տեառն մերոյ 13 Դ հաւատոյ ԵԺԼԽ հաւատոց 14 ԲԴ նմանութեանն 15 Խ արեամբն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զանձինս մեր Տ^1 չիք քանզի 15—16 ԼՏ^1 սուրբ զաւետարանն գիտեմք մեզ հայր 16 ԵԸԺԼԽՀՏ^1 կաթողիկէ եկեղեցի սուրբ ԲԴ և մայր զկաթողիկէ զառաքելական եկեղեցի ԴԹ մայր մեր ԼՏ^1 և զառաքելական կաթուղիկէ եկեղեցի սուրբ մայր Թի կաթուղիկէ 17 Բ ի մէնջ լեալ փխ ի մէջ անկեալ Բ չիք զմեզ Բ քակեսցի 18 Թ երեւիւր ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 այնուհետև երևէր Բ ոչ էր փխ ոչ երեւէր Թ չիք առաւել A տէրն 19—20 A նուաղեալ յարութենէ 20 ՀՏ^{1}Տ^2 ի յարիութենէ ԲԴ ի քաջութենէ ԲԴ այլ մի սիրտ ԺԼԽ յօժարութիւն էր 20—21 Ա կանաց ԵԸՀ էր ամենեցուն 21 ԲԳԴԵԿ չիք և (ամենայն) ԳԵ միաբանելոցն 22 Բ զինեցան 22—23 ԲԴՏ^2 զմի զրահ զգեցան 23 ԺԽ զզրահս ԲԴՏ^2 զհաւատոց ԳԵԸԺԼԽԿՀ և միով ԲԴ գօտով 24 ԲՏ^2 ճշմարտութեանն Դ ճշմարտութեամբ պնդեալ 25 Բ առնէր ԲԴ չիք և 25—26 Գ առանձինն։

պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանաց։ Նա՝ իւրաքանչիւր ստացուածք ոչ ինչ համարէին յաչս ստացողաց իւրեանց։ Տեսանէին զանձինս իւրեանց իբրև զմեռեալ դիականս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին, և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց անշուշտ կեանք։

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք, զի կենդանի իցէ ի մեզ Քրիստոս, որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ի հողոյ և զամենայն զյառաջագոյն զննջեցեալսն, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»։

Զայս և առաւել քան զայնս խօսելով, և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանգամ զինուորքն պատրաստեցին զզէնս իւրեանց, և աղօթականքն անդադար լինէին յաղօթսն իւրեանց, և պահողքն ճգնէին ի պահս իւրեանց։ Ձայնք պաշտօնէիցն ի տուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսսն. ընթերցուածք աստուածային կտակարանացն ոչ երբէք առնուին դադարումն յամենայն ժամ. սոյնպէս և մեկնիչքն ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեանն։

Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զբնակութիւնս նոցա։ Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զաւանս իւրեանց. զԵրկայնորդսն և զԱրխնին և զաւանս իւրեանց. զԲարձրաբերդն,

---

1 ԲԴ հանդերձ ԲԴ ի զարդ ԲԴԵԸԺԼԽՀS^1S^2 նաև ԵԺԽՀS^1S^2 1—2 իւրաքանչիւր ամեք Լ յիւրաքանչիւր   2 ԲԴ ստացուած ԱԶԹԻ ստացողին իւրեանց VS^3A իւրեանց ստացողին ԲԵԸԺԼԽՀS^1S^2 ստացողաց իւրեանց ԳԿ ստացողացն իւրեանց Դ տեսողացն փխ իւրեանց ստացողին ԲԴ տեսին Դ չիք իւրեանց   3 ԲԴ որպէս մեռեալ Գ մեռեալ ԵԺԼԽՀS^1 մեռեալ դիակունք   4 ԲԴS^2 գերեզման Ա ինքեանք (յուսանցում՝ ց=ինքեանց) Գ ինքեանց Բ նոցա փխ իւրեանց   4—5 Դ նոցա արհամարհեալ էին փխ իւրեանց ի մահ համարեալ էին ԼS^1 համարէին ԱԼԿA մահ   5 ԲԴ զանշուշտ կեանս ԵԸԺԽՀ անշուշտ (յուսանցում՝ անսուտ)   6 Գ ստէպ փխ ստէպ ստէպ   7 ԲԴԸ չիք միայն Բ զոգի ԳԵԸԺԼԿՀS^1S^2 զհոգիս Դ չիք ևեթ   8 ԲԴ է փխ իցէ   9 ԲԳԴ զմեզ ի հողոյ զմեզ և զյառաջագոյն զամենայն ԼԽS^1S^2 ի հողոյ զմեզ ԵԸԺԿՀ զմեզ և զամենայն Թ զառաջագոյն Գ չիք զյառաջագոյն   10 ԱԲԴԶԷԹԻVS^3 ըստ իւրաքանչիւր ԱԶԸԹՀVS^3 զգործս ԲԴ գործոց իւրեանց Ժ գործս իւր Ի զգործս իւրեանց ԵԶԼԽՀS^1S^2 իւր Թ իւրեանց   11 ԱԲԴԹԻԼ զայն Դ խորհելով   12 ԱԶ և զինուորքն Բ զինուորքն միւսանգամ է և զինուորքն   12—13 ԲԴS^2 պատրաստէին   13 ԲԳԴԵԺԼԽԿՀ յաղօթս

նարգված էին զարդարանքի ու մեծարանքի համար հատկացված պատվական հագուստները։ Ինչպես և ամեն մի գույք ոչինչ էր համարվում իր տերերի աչքում։ Իրենց անձերի վրա նայում էին ինչպես մեռած դիակների վրա, և ամեն մեկն իր գերեզմանն ինքն էր փորում. իրենց կյանքը մահ էին համարում, իսկ մահը՝ հավատի կյանք։

Բայց շուտ-շուտ այս խոսքն էր լսվում. «Միայն թե քաջությամբ մեռնենք, միայն թե անուն և հոգի ժառանգենք, որ մեր մեջ կենդանի լինի Քրիստոսը, որի համար հեշտ է մյուս անգամ նորոգել մեզ հողից, ինչպես և նախկին բոլոր մեռածներին, և յուրաքանչյուրին հատուցանել իր գործերի համեմատ»։

Այս և սրանից էլ ավելին խոսելով և իրենց ու միմյանց մխիթարելով՝ զինվորները մի անգամ էլ պատրաստեցին իրենց զենքերը, և աղոթավորները շարունակում էին իրենց աղոթքները, և պահեցողները ճգնում էին իրենց պահքի մեջ։ Պաշտոնյաների ձայները գիշեր-ցերեկ անպակաս էին սուրբ սաղմոսները կարդալու մեջ. աստվածային կտակարանների ընթերցումը երբեք չէր դադարում ոչ մի ժամ, այդպես էլ՝ մեկնիչների երկնավոր վարդապետությամբ մխիթարելը։

Այն ժամանակ նորից հարձակվեցին այն բերդերի և ավանների վրա, որ երկրի զանազան ամուր տեղերում գրավել էին պարսիկները. կործանեցին-քանդեցին նրանց բնակությունները։ Նախ՝ մեծ Արտաշատը իր ավաններով. և առան անմատչելի ամրոցները՝ Գառնի քաղաքը, Անին, Արտագերսը և իրենց ավանները. Երկայնորդն ու Արխնին և իրենց ավանները, Բարձրաբերդը, Խորանիստը, Ծախանիստը, ապահով Ողականը

---

14 Դ պահողքն պահէին զպահս ԲԴS^2 և ձայնք   14—15 ԳԵԼ պաշտօնէից   15 Գ լինէին փխ էին ԲԴ չիք սուրբ ԲԴ ի սաղմոսս ԱԶԽVS^1S^3 սաղմոսն ԼS^1 ի պահս և ի սուրբ սաղմոսսն   16 Դ կտակարանաց Բ առնոյին   16—17 Դ դադար ԲԴ մեկնիչք մխիթարութեան ԳԵԸԺԼԽԿՀ մեկնիչք   18 Ե վարդապետութեան   19 ԲԴ յայնժամ յարձակեցան։ չիք դարձեալ ԳԵԸԺԼԽԿS^1S^2 յարձակէին Հ արձակէին ԲԳԴԵԼԿ բերդից   20 Թ աւանացն ԵԺS^1S^2 զոր առեալ էին ԲԳԴԵԺԻԼԿՀS^1S^2 պարսիկք ԲԴ չիք պարսիկքն ԲԴ ի յամուրս   21 ԵԺԼԽԾՀS^1 զբնակութիւն Լ զբնակութիւն իւրեանց   22 Է Արշատ ԲԴ չիք հանդերձ ԳԵԼԽ աւանօքն (Ե օանօքն) Կ աւանօքն իւրեանց Բ առնոյին   22—23 ԲԴ զանմատոյց ամուրն զԳառնի և քաղաք զԱնի ԱԹ ամուրն զԳառնի քաղաք ԳԴԶԻԿV ամուրն   23 ԵԺԼԽ քաղաք է զԳառնի(!) S^2 և զքաղաք զԱնի ԵՀ զԱնի ԲԴ զԱրտաքերս ԵՀ զԱրտագերանսն և զաւանսն իւր Է զԱրտագերս Ը զԱրտագերսն և զաւանս իւր ԺԼԽ զԱնի, զԱրտագերսն և զաւանսն իւր S^1S^2 իւր   24 ԱԶԷԹԻVS^3A զԱրհնին ԲԳԴԵԸԺԼԽԾՀS^1S^2 զԱրխնին ԵԺԼԽՀ չիք և (զԱրխնին) Կ զԱրդնին ԸԺԼԽՀ զԱրխընին և զաւանսն (Հ զաւարսն) իւր ԵԼԽS^1S^2 իւր ԱԲԳԴԶԷԹԻԿV զԲարձրաբերդն ԵԸԺԼԽԾS^3A զԲարձրաբեռուղն

զԽորանիստն, զԾախանիստն, զանկասկածելի Ողականն, և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր. զԳոեալն և զԿապոյտն, զՈրոտն և զՎաշակաշատն։

Զամենեսին զայս իւրաքանչիւր գեղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք ի նմին ամի առեալ տապալեցին, և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուածովք, հանդերձ պատուական գանձիւք և նոցին սպասուք։ Տապալէին քանդէին զշինուածս նոցա, և այրէին կիզուին զտունս պաշտաման կրակի։ Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն, և առնուին զկահ և զկազմածս ատրուշանացն, բերէին և դնէին ի սուրբ եկեղեցւոջն, և ի ձեռն սուրբ քահանայիցն նուիրէին ի սպաս տէրունական սեղանոյն։ Եւ փոխանակ մնոտի պաշտամանցն, զոր տապալեցին յամենայն տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն Քրիստոսի կանգնէին, զամենասուրբ սեղանն ուղղէին, և զկենդանարար խորհուրդն կատարէին սրբութեամբ. պաշտօնեայս և քահանայս ի տեղւոջն կացուցանէին։ Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առ հասարակ։

Եւ մինչդեռ յայսմ մեծի առաքինութեան կատարեալ գործէին ըզգործ նահատակութեանն, երևէր իմն ի վերայ ամենեցուն աստուածային շնորհք. քանզի առանց հրամանի ի զօրացն Հայոց, յարևելից կողմանէ աշխարհին յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհէն, և ի տեղիս տեղիս բազում վնաս արարին՝ առնլով և աւերելով և քանդելով զբազում ատրուշանս։

---

1 Կ զԽորանանիստն ԱԳԵՋԷԹԺԻԼԿՀS^1S^2 զԾախանիստն (Գ Ծախայնիստն է զԾախայնիստոն) A զԾախանիստն ԸԽV չիք զԾախանիստն Ծ զՈղականն S^1 զՈղականն ընդ նմին ԱՋԷԹԻV Ողորկանն Բ Ողոկանն 1—2 Դ Ողկանն և ընդ նմին զաւանս ԲԼԽ և ընդ նմին զաւանս ԵԺՀ Ողականն ընդ նմին և 2 ԱՋԹԻԿ և զԱրփանեալն և զՎանն աւան և ընդ նոսին Դ զԱրփնեալն և Դէ և ընդ նոսին Գ ընդ նոսին ԵԼԽՀS^1S^2 իւր փխ իւրեանց ԸV չիք «զԱրփանեալն—զաւանսն իւր» ԱԳԴՋԿ և զաւանս իւրեանց 3 ԳԴԵԺԼԽԿՀ չիք և (զԿապոյտն) S^2 զԳովեալն, զԿապոյտ 2—3 ԾS^1 զԳոեալն, զԿապոյտն, զՈրոտն, զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր ԲԴ իւրեանց Գովեալն, զԿապոյտ և զաւանս իւրեանց, ընդ նոսին զՈրոտն ԹԻ իւրեանց փխ իւր Հ զաւարսն(!) ԱԳՋԷԹԻԿV զՎաշակաշատն ԲS^2 զՎաշակաշտն ԴS^1 զՊաշտակաշտն A զՎասակաշատն ԳԵԺԼԽԿՀ չիք և 4 ԲԳԴՀ զամենեսեան ԵԸԺԼԽՀS^1S^2 զսոսա փխ զայս Բ գեղանք Դ գեղովք 5—6 ԲԴ զարս և կանայս ի գերութիւն վարեցին Գ ի գերութեան 6 ԴԻ ընչօք 7 Գ գանձուք ԲԴ սպասիւքն Ի և ի նոցին սպասիւք ԼԿՀ սպասիւք Բ տապալեցին 8 ԳԵԺԼԽ չիք և Խ կիզուին ԹԻ զտունն Դ պաշտաման ԱՋԷԻԹVS^3A պաշտօնարկի

և նրանց հետ իրենց ավանները. Արփանյալը, Վան ավանը, նրա հետ նաև իր ավանները. Գոյալն ու Կապույտը, Որոտն ու Վաշակաշատը[85]։

Այս բոլորն ամեն մեկն իր գյուղերով ու ագարակներով, զորքերով ու զորագլուխներով նույն տարին առան ու կործանեցին և տղամարդկանց ու կանանց գերի տարան իրենց գույքերով ու ստացվածքներով, թանկագին գանձերով ու կահ-կարասիով։ Տապալում-քանդում էին նրանց շենքերը և հրկիզում էին կրակի պաշտամունքի տեղերը։ Մաքրում էին կռապաշտությունների պղծությունը և գրավում էին ատրուշանների սարք ու կարգը, բերում-դնում էին սուրբ եկեղեցում և սուրբ քահանաների միջոցով նվիրում էին ի ծառայություն տերունական սեղանի։ Եվ սնոտի պաշտամունքների փոխարեն, որ տապալեցին հեթանոսների բոլոր վայրերում, կանգնեցնում էին Քրիստոսի փրկական խաչը. ամենասուրբ սեղան էին շինում և սրբությամբ կատարում կենդանարար խորհուրդը, պաշտոնյաներ ու քահանաներ էին նշանակում այն տեղերում։ Ամբողջ երկիրն առհասարակ ուրախանում էր հաստատուն հույսով։

Եվ մինչդեռ այս մեծ առաքինությամբ կատարյալ էին դարձնում իրենց նահատակության գործը, կարծես մի տեսակ աստվածային շնորհ էր երևում բոլորի վրա. որովհետև առանց հայոց զորքերից հրաման ունենալու՝ աշխարհի արևելյան կողմից ոմանք հարձակվեցին Ատրպատական[86] աշխարհի վրա և զանազան տեղերում մեծ վնասներ տվին՝ բազմաթիվ ատրուշաններ առնելով, ավերելով ու կործանելով։

և պաշտաման ԲԳԴԵ կրակին ԲԳԴԺԼԽԿՀS^1S^2 եւ սրբէին 9 ԲԳԴԸԺԽS^1S_2 կռապաշտութեանն ԱՋԷԹԻVAS^3 կռապաշտութեանցն ԵԿՀ կռապաշտութեան ԳԵԸԺԽԿՀ առնուին եւ ԳԴԵԺԽԾԿՀS^1S^2 զկազմած Լ զկազմուած Հ զզահ և զկազմ 10 Թ ատրուշանացն (լուսանցքում՝ կրակարանաց) ԲԴ բերէին դնէին ԲԴ ի ձեռս 11 ԱԳԵՋԼԸԹԽԿՀ քահանայապետիցն Լ քահանայից ԱՋ և ի սպաս ԳԵԸԺԼԽԿՀ սուրբ փխ տէրունական ԾS^1 ի սպաս սուրբ եկեղեցւոյն 12 Հ պաշտմանցն ԲԴ տապալեալ էին ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 տապալէին 13 Դ հեթանոսաց ԲԴ զխաչն Դ չիք Քրիստոսի 13—14 ԲԴS^2 և զամենասուրբ Գ չիք զամենասուրբ սեղանն ուղղէին 14 ԸԺԼԽԾՀS^1 զկենարար (Լ զկենարարն) 15 Ի պաշտօնեայս 16 Դ չիք յուսով հաստատեալ Գ հաստատել ԵՀ հաստատութեամբ ԸԽ հաստատնով ԼS^1 հաստատելով Ժ հաւատով փխ հաստատեալ ԲԴS^2 և խնդայր 18 ԳԵԺԼԽՀ յայս Ը առաքինութեանս է կատարեալ էին 19 ԲԳԴԵԺՀ նահատակութեան ԱԴՋԷ և երևէր Թ և երևիր է չիք իմն 20 Դ շնորհքն Լ շնորհ ԱԹ ԴՋԹԻV չիք ի 21—22 ԲԴ չիք յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհն և է յԱպատրական աշխարհին Ե աշխարհ ԳԴԵԸԺԼԽԿ չիք և 22 է և ի տեղիս ԳԴԵԸԺԽԾՀ վնասս ԲԼՀ առնելով A չիք և (քանդելով) 23 Հ և զբազում է արտաւանս Թ ատրուշանս (լուսանցքում՝ կրակարանս)։

Իսկ որ ի մեծ ամուրսն անկանէին՝ խաչանշան արարեալ՝ ի վերայ զօրուն յարձակէին. որ և երկու մեծամեծ բերդացն պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչև ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին. ուրանալով զօրէնս մոգութեանն՝ խոստովանէին ի սուրբ աւետարանն։

Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկալութիւն, եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ նոցա, և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս և զարմանալիս։ Սոյնպէս և աստեղք ի յերկինս երևէին յոյժ լուսալիր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն։ Եւ ամենայն տղայք աշխարհին իբրև զարս պատերազմողս խիզախէին։

Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն ասելով. «Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. և բազում ևս և այլ այրուձի որ ի դրանէ եկն։ Եւ թող զայս ամենայն, այլ երեք հարեւր մոգ վարդապետ ածեալ ընդ իւրանս, պառակտեցին զաշխարհն, և զոմանս ոմանս յինքեանս արկին, և կամէին յեկեղեցին ձեռն արկանել. և հրամանաւ թագաւորին ստիպէին զամենեսեան և ասէին. «Եթէ կամօք յանձն առնուք զօրէնսն, պարգևս և պատիւս գտանէք ի նմանէ, և թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ, ապա թէ կամօք զայդ չառնէք, հրաման ունիմք ի գեօղս և ի քաղաքս շինել ատրուշանս, և զվռամական կրակն ի ներքս

---

1 Գվ ամուրս ԲԴ և խաչանիշս Գ խաչնշան   1—2 ԱՋԷԹԻV ի վերայ զօրուն անկանէին (է արկանէին) յարձակելով   2 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք որ ԲԴ երկուց մեծամեծաց պարիսպքն բերդիցն ԳԿ և երկուց է բերդոյն Հ բերդիցն պարիսպն Գ պարիսպ ԵԸԺԼԽ S^1S^2 բերդից   4 Դ բնակիչք   4—5 Բ և իւրեանց ձեռօքն Թ յինքեանց Դ և իւրեանց ձեռօքն   5 է մեռօք փխ ձեռօք A զկրակատունս ԲԳԴԿ աւերէին փխ այրէին Ե մոգութեան   6 Լ ի սուրբ աւետարանին   7 ԲԴ և այլ բազում զօրութիւնք կատարէին ԵԸԺԼԽՀS^1S^2 զօրութիւնք և յաջողութիւնք ԳԿ յաջողութիւնք Գ զօրականացն   8 Ե զանունն ԳԿ յիշիցէ ԼԽ իշխեսցէ(!)   10 ԲԴ զտեսիլ նոր զարմանալեացն ԳԵԺԼԽԿՀS^1S^2 զտեսիլս Գ զզարմանալիս   10—11 Գ չիք և (աստեղք) ԳԴԵԸԺԿ չիք ի Հ աստեղս յերկինս   11 ՁԷV երևին ԲԴ յերկնից յոյժ լուսալիր պայծառացեալ երևէին   11—12 ԲԴ չունէին   12 S^1 յառաջ ի բնութենէ Դ յառաջ բնութեանն ԺԽS^2 յառաջ ի բնութեանն   14 ԲԴ եւ ապա ԲԴ չիք բազմաց   15 ԳԵԸԼԽS^1 եպիսկոպոսապետաւ ԱԲՋԷԹԻVS^2S^3A եպիսկոպոսաւ ԺՄ եպսպաւ (եպիսկոպոսապետաւ?)   15—16 ԲԴ փութացուցանէին   16 ԲԴ զզօրսն և ասէին ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 և ասէր ԱՋԷԹԻVS^3 գունդ

Իսկ ովքեր դեպի մեծ ամրոցներն էին դիմում, երեաները խաչակնքելով հարձակվում էին զորքի վրա. այդպիսով երկու մեծ բերդերի պարիսպներ՝ դեռ ոչ ոք չմոտեցած՝ կործանվեցին-ընկան. այնպես որ երկրի բոլոր բնակիչները այդ մեծ հրաշքից զարհուրած՝ իրենք իրենց ձեռքով այրում էին կրակատները. ուրանալով մոգության կրոնը՝ հավատում էին սուրբ ավետարանին։

Ուրիշ մեծ-մեծ հաջողություններ էլ էին կատարվում զորականների միջոցով. որովհետև ուր ամենևին հույս չկար, թե որևէ մեկը աստծու անունը կտա, այնտեղ մեծ արհավիրքներ էին թափվում նրանց վրա, և ամեն մարդ նոր ու զարմանալի տեսիլներ էր պատմում իր ընկերոջը։ Նույնպես և աստղերը երկնքում սաստիկ լուսավոր ու պայծառ էին երևում, մի բան, որ նրանց առաջին բնությանը հատուկ չէր։ Եվ այդ երկրի բոլոր տղաները խիզախում էին պատերազմող տղամարդկանց նման։

Եվ ահա շատ օրեր անցնելուց հետո եկավ-հասավ Աղվանից հազարապետը նույն աշխարհի սուրբ եպիսկոպոսի հետ միասին, մեծ տագնապով շտապեցնում էր զորքին՝ ասելով. «Հոների աշխարհի կողմերը գտնված Պարսից զորքը ետ դարձավ այս կողմը, եկավ-մտավ մեր երկիրը. և շատ ուրիշ այրուձի էլ արքունիքից եկավ։ Եվ բացի այս ամենից՝ հետները բերել են նաև երեք հարյուր մոգ վարդապետներ, պառակտեցին աշխարհը և ոմանց իրենց կողմը գրավեցին և կամենում էին եկեղեցու վրա ձեռք բարձրացնել. թագավորի հրամանով ստիպում էին բոլորին և ասում էին. «Եթե հոժարակամ հանձն առնեք [մոգական] կրոնը, պարգևներ ու պատիվներ կստանաք նրանից, և արքունիքը կների ձեր հարկերը. իսկ եթե [ձեր] կամքով հանձն չառնեք այդ, մեզ հրամայված է գյուղերում և քաղաքներում ատրուշաններ շինել, և Վռամա-

---

ԲԴ չիք էր   17 Հ յունաց (!) Դ և եկն ԲԴ յաշխարհն Բ չիք և (բազում)   18 ԲԳԵԽS^2 չիք և (այլ) ԲԴ այրուձի այլն որ եկն ի դրանէ թող զառաջինսն ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 և թող զերկոսեան փխ և թող զայս ամենայն Թ զայլ փխ զայս   19 A այլև Դ մոգք ԲԴ մարդպետն փխ վարդապետ Կ վարդապետ մոգ ածեալ էր ԲԳԴ ածեալ էր ԹԻ առեալ է ԵԸԺԼԽՀS^1S^2 ածեալ են Ա ածեալ (ուղղված է՝ առեալ)   19—20 ԲԴ և պառակտեցին   20 ԲԴ չիք ոմանս Ե զոմանս Թ ինքեանս ԲԴԻ յիւրեանս արկին   20—21 ԲԴ կամէին և յեկեղեցի ԳԵԸԺԽՄԿՀS^1S^2 կամին յեկեղեցիս(ն)   21 ԳԵԹԺԼԽՀԿS^1 ձեռնարկել ԵԸԺԼԽԿՀS^1S^2 ստիպեն   22 ԳԵԸԺԼԽՄԿՀS^1S^2 և ասեն Բ առնոյք ԲԴԵԺԽ զօրէնս   23 Բ չիք և (թողութիւն) ԴԺ հարկաց   23—24 ԲԴ թողութիւն հարկաց լինի ձեզ ԳԴ չիք յարքունուստ ԵԸԺԼԽԿՀS^1S^2 արքունի   24 ԱԵՋԸԹԺԻԿՀ լինիցի S^2 լինի ԲԴ ապա եթէ կամօք զայն չառնէք ԵԸԺԼԽԿՀS^1S^2 զայդ չառնէք ԱՋԷԹԻVS^3A չիք զայդ Գ չառնիցէք զայդ Գ հրամանս Բ ի գեաւղս Դ գիւղս ՁԷ ի գեղս   25 Թ ատրուշանս (լուսանցքում՝ կրակարանս) Հ վռամկական (!) ԲԴ զկրակն Հ չիք կրակն Դ ի ներս։

դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիր ամենայն աշխարհիս։ Եւ եթէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսույն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս երթիցեն։

Իսկ գունդն Հայոց իբրև լուաւ զայս զօյժ դառնութեան, ոչ ինչ թուլացեալ լքան ի քաջութենէն. այլ դարձեալ համագունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գուժաբեր հրեշտակացն, որ հասին առ նոսա։ Եւ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի զնոսա պատիր խաբէութեամբ կալցեն, զի խափանեսցին ի չար կամացն՝ չձեռնարկել ի սուրբ ուխտ եկեղեցւոյն իւրեանց. և ինքեանք զօրութեամբն Աստուծոյ խորհուրդ ի մէջ առեալ՝ հնարիւք ելս իրացն խնդրէին։

Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծ նախարարացն ի տոհմէն Գնունեաց՝ Ատոմ, ճեպով առաքեցին յերկիրն Արևմտից, ցուցանել զայս ամենայն խորհուրդ զչարիմաց թագաւորին Արևելից, միանգամայն և պատմել զիւրեանց քաջութիւն արութեանցն, զոր գործովք կատարեցին՝ առ ոտն հարկանելով զհրամանն ահեղ, և մեծապէս սաստկումն ի վերայ մոգացն հաստուցանել, խնդրել ի նմանէ օգնականութիւն սատարութեան, և եթէ նա կամեսցի՝ նմա իսկ մտանել ի ծառայութիւն։

Եւ այս է պատճէն հրովարտակին, զոր գրեցին առ Թէոդոս կայսր.

«ՅՈՎՍԷՓ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրօք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսեան հանդերձ սպարապետաւ և ամենայն մեծամեծ նախարարօքս առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմացի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձեռովդ

---

1 Դ դնել ԲԴ օրէնս դնել ԳԿ օրէնսդիրս Բ յօրէնսդիր 1—2 ԲԳԵԼԽԿՀՏ^{1}Տ^{2} աշխարհիս Դ աշխարհին 2 Լ ոք ստամբակեալ 3 Բ յնաշխարհիկս ԳԵԺԿՏ^{2} անաշխարհիկք Դ յանաշխարհիկս 4 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1} երթայցեն Դ երթայցէ 5 ԲԴ լուան է յոյժ փխ զօյժ 6 ԼՏ^{1} թուլացուցեալ ԳԵԺԽԿՀՏ^{1} քաջ արութենէն ԲԴ ժողովէին 7 Բ չիք աշխարհին Գ աշխարհի Դ չիք ամենայն աշխարհին Բ գոյժաբեր 8 ԵԸԺԼԽՀՏ^{1} առեալ փխ տուեալ 9 A պատիր խաբէութեամբ զնոսա ԳԴԵԺԼԽԿՀ կալցին 10 ԱԳՋԹԻV խափանեսցեն Է խարանեսցեն ԱՋԷV չձեռնարկեալ ԲԴ չարկանել ձեռն 10—11 Գ եկեղեցւոյ և իւրեանց ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք իւրեանց ԴԿ եկեղեցւոյ ԱՋԷԹԻVՏ^{3}A եկեղեցւոյն իւրեանց 11 Տ^{1} և ինքեան ԱՋԷԹԻVՏ^{3}A չիք ինքեանք 12 ԱՋԷԻԹVՏ^{3}A իրացն հնարիւք ելս խնդրէին 13 Լ չիք մեծ Հ մի զոմն 14 Լ Գունեաց Հ Կնունեաց ԱԲԴՋԷԹԻV չիք Ատոմ Գ ճեպելով ԲԳԴԵԿ առաքէին ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} առաքէին ճիպով Բ յԱրևմտից 15 ԱԲԴՋԷԹԻV չարիմաց Ի յԱրևելից ԲԴ Պարսից փխ արևելից 16

կան կրակը[87] դնել նրանց մեջ և ձեր ամբողջ երկրի վրա մոգեր ու մոգպետներ կարգել օրենսդիր։ Եվ եթե որևէ մեկը անհնազանդ գտնվի և դիմադրի, ինքը մահվան պատիժ կկրի, իսկ նրա կինն ու որդիները երկրից արտաքսվելով՝ արքունի [կալվածներում աշխատելու] կգնան»։

Իսկ Հայոց զորքը երբ լսեց այս դառն գույժը, ամենևին չթուլացավ քաջությունից և չլքվեց, այլ դարձյալ ամբողջ երկրից համագունդ ժողով արին այն բոթաբեր պատգամավորների վերաբերմամբ, որոնք եկել էին նրանց մոտ։ Եվ միաբանությամբ քաջալերելով՝ արձակեցին նրանց, որպեսզի միաժամանակ սուտ խաբեությամբ ետ պահեն նրանց իրենց չար կամքը կատարելուց, թույլ չտան իրենց եկեղեցու սուրբ ուխտին դիպչելու. իսկ իրենք աստծու օգնությամբ խորհուրդ անելով մի ելք էին փնտրում գործի համար։

Այն ժամանակ մեծ նախարարներից մեկին Գնունյաց տոհմից՝ Ատոմ անունով, շտապով ուղարկեցին Արևմտյան երկիրը, որ Արևելքի չարամիտ թագավորի այս բոլոր մտադրությունները հայտնի, միաժամանակ պատմի նաև իրենց քաջությունները, որ կատարեցին գործով, ոտնատակ տալով ահեղ հրամանը, և մոգերին մեծապես սաստկեցնելը, և նրանից օգնություն ու օժանդակություն խնդրի, և եթե նա կամենա, նրա ծառայության տակ մտնեն։

Եվ այս է այն գրության պատճենը, որ գրեցին Թեոդոս կայսրին.

«Հովսեփ եպիսկոպոս իմ բազմաթիվ եպիսկոպոսակիցներով և Հայոց ամբողջ զորքով, Վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսյան, սպարապետի հետ միասին և բոլոր մեծամեծ նախարարներով՝ մեծանուն Թեոդոս կայսրիդ շատ ողջույն հասնի մեր կողմից քեզ ու քո բոլոր զորքերին, որ ձեր խաղաղասեր մարդասիրությամբ տիրում եք ծովին ու

ԳԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^{2} պատմել և ԲԴ չիք միանգամայն և պատմել ԲԴ և զիւրեանց քաջութիւն արութեանն 16—17 ԲԴ չիք գործովք 17 Լ առ ոտս համարելով Ծ առ ոտս հարկանելով ԲԴ չիք ահեղ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} զահեղ հրամանն 17—18 Տ^{1}Տ^{2} զմեծապէս 18 ԲԴ մոգուցն ի վերայ հաստուցանել Տ^{2} ի վերայ մոգուց հաստուցանել A հաստուցանելով ԵԸԺԼԽՀ մոգուցն Տ^{1}Տ^{2} մոգուց 18—19 ԲԴ ի նոցանէ 19 ԷԼ օգնութիւն ԲԴ նա իսկ կամեսցի Հ նախ փխ նա ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} չիք իսկ (մտանել) 19—20 ԲԴ նմա մըտցեն 21 ԳԴԿ և այս պատճէն Դ հրովարտակին է հրովարտակ ԲԴԿ առ երանելին Թէոդոս 21—22 ԲԴ չիք կայսր ԵԸԺԼԽՀՏ^{2} երանելի կայսր (Ե երանելին) ԾՏ^{1} Թէոդոս երանելի կայսրն 23 Բ Յովսէփ ԲԴ իւրովք փխ իմովք 24 ԱԳՋԹԻVՏ^{3} զօրք Բ մարզպանն Ջի մարձպան Է մարցպան ԱԲԳԴՋԷԹԻV և Մերշապուհ Կ Մերշապուհ 24—25 ԲԴ Ռոսբերան ԳԵԷ ըռըմբոսեան 25 Բ սպարապետաւն միայն A սպարապետաւ Վարդանաւ Բ մեծ փխ մեծամեծ Բ նախարարօքն Լ նախարարքս 26 ԲԴ մեծանուն Հ Թէոդոս ԲԳԴ ձեզ փխ քեզ 27 ԲԴ զօրաց Հայոց փխ զօրաց քոց։

տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս, որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ։

«Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաջինի նախնեացն ձերոց, ունելով զԵւրոպէ՝ անցին և տիրեցին և Ասիացւոց կողմանցն ի սահմանացն Սէիրայ մինչև ի կողմանս Գադերովնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա։

«Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին։ Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արեւելից։

«Եւ մեք ի ձեր քաջութիւն արութեանդ խիզախեալ, էր ինչ, որ ընդդէմ դարձաք նոցա հրամանացն, և բազում այն է, որ արդ առաջի պատրաստեալ եմք։ Ընտրեցաք զմահ աստուածպաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ. եթէ դուք ևս ի ձեռն առջիք զմեզ, ահա կրկին կենաց դիպեցաք և ոչ մի անգամ մահու։ Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք, գուցէ բազում և այլոց աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա»։

Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մէջք եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին։

1—2 ԲԴ չիք անարգել 2 ԲԳԴԵԺԼԿՀՏ^1 դառնայ 3 ԲԳԴԵԸԺԼԿՀՏ^1 որպէս և ԲԳ չիք իսկ ԲԴ յիշատակարանս 3—4 Է զառաջինութիւն 4 Ա և զրօպէ ՁԼԹԻV և զրովպէ Դ զԵրովպ ԵԸԼԽՀ զրոպէ ԳԿ Զերովպէ Բ զԵրովպայեցին Տ^3 զԵւրովպէ ԲԳԴԼ չիք և (Ասիացւոց) 4—5 Ի Ասիացւոցն 5 ԱՁԷԹԻVՏ^3 Սէիրայ 5—6 Բ Սեերայ ԳԵ ԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 Սերայ Դ Սեերեա A Սերայ ԲԴ ի սահմանս փխ ի կողմանս ԲԴ Կադիրովնի Գ Գեդերովնի ԵԹԺ Գադերոնի Տ^2 Գադիրոնի 6 ԲԴ չիք ոք Դ ստամբակել ԵԸԺԽ և ելեալ Հ և եկեալ ԳԵԸԺԽԿՀ ընդ փխ ըստ ԱՁԷԻV նորա ԵԸԺԽՀ չիք նոցա 7 Ի այնչափ ԺԽ ՀՏ^1 դաստակէ որ (!) 8 Ե Հայոց ԽՀ չիք և 9 ԲԳԴ չիք որ ԲԴՏ^2 ի տղայութեան հասակին Ը ի տղայութենէ 10 ԲԴ հօրեղբարց V նստաւ փխ սնաւ 11 Ե ի յերկրիդ ԵԸԼԽՀՏ^1 թագաւորեցուցեալ Թ չիք տիրէր 11—12 ԲԴ աշխարհիս հայրենի ԸԽ չիք հայրենի 12 Բ զհաւատս Ե Քրիստոսն 12—13 ԲԴՏ^{2}A եպիսկոպոսէն 13 ԳԵԸԼԽԿՀՏ^1 ի Հռովմէ (ԵԸԺԽՀ ի Հռոմէ) ԱԲԳՁԷԹԻV որ լուսաւորեաց Բ չիք զխաւարային 13—14 ԲԴ զկողմանս հիւսիսոյ 14 Գ հիւսըսոյ Դ հիւսիսու Ե հիւսու-

ցամաքին, և երկրավորներիցս չկա մեկը, որ դեմ գնա ձեր խոչընդոտներ չունեցող տերությանը։

«Ինչպես որ մենք էլ ունենք ձեր առաջինի նախնիների մասին անսուտ հիշատակարաններ, նրանք Եվրոպան նվաճելով՝ անցան և տիրեցին Ասիացիների երկրներին ևս Սերայի սահմաններից մինչև Գադերովնի[88] կողմերը, և ոչ ոք չգտնվեց, որ ըմբոստանար և նրանց ձեռքի տակից դուրս գար։

«Եվ այնչափ մեծ իշխանության մեջ մեծ ու սիրելի դաստակերտ էին անվանում Հայոց աշխարհը։ Այս պատճառով էլ մեր նախնին՝ Տրդատիոսը, հիշելով ձեր առաջին սերը, որ մանկության ժամանակ իր հորն սպանող մարդախողխող հորեղբայրների ձեռքից փախցրած՝ փրկվել ու սնվել էր հույների երկրում և ձեր օգնությամբ թագավորելով տիրեց իր հայրենի աշխարհին, սույնպես և Քրիստոսի հավատն ընդունելով Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից, լուսավորեց հյուսիսի խավար կողմերը, որ և ահա արևելքի խավարասեր որդիներն ուզում են խլել, կորզել մեր ձեռքից։

«Եվ մենք հույս դնելով ձեր արիության ու քաջության վրա, բաներ կային, որ ընդդիմացանք նրանց հրամաններին, բայց է՛լ ավելի շատ բան կա, որին պատրաստվել ենք այսուհետև [ընդդիմանալու]։ Գերադասեցինք մահն աստվածպաշտությամբ, քան կյանքն ուրացությամբ. եթե դուք էլ պաշտպանեք մեզ, ահա կրկին կյանքի հանդիպեցինք և ոչ թե մահվան։ Իսկ եթե մի քիչ էլ դանդաղեք, գուցե այս կրակի բոցը ուրիշ շատ աշխարհների էլ հասնի»։

Եվ երբ ներկայացան մեծ թագավորին և կարդացին Հայոց աշխարհի աղաչական գրությունն ու նախնիքների հիշատակարանները, շատ գրքեր մեջ բերին՝ կարդացին և նրանց մեջ էլ գտան նույն հաստատուն ուխտը։

սոյ ԲԴ զոր այժմ կամին կորզել հանել ի մէնջ Գ մերժել և հանել Տ^2 կորզել հանել ի մէնջ Խ կորզել և խանել(!) ԵԸԺԼՀՏ^1 կորզել և հանել ԱԲԳԴՁԷԹԻԿV խաւարային փխ խաւարասէր 15 ԻՀ յարեւելից 16 ԲԳԴԵԸԺԼԽՀԿ և մեր Բ ի ձեր քաջութիւնդ արութեամբ Գ ի քաջութիւնդ ձեր խիզախեալ 17 Դ չիք հրամանացն Դ չիք և ԲԴ չիք արդ 17—18 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 առաջոյ 19 Է ուրախութեամբ փխ ուրացութեամբ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 և եթէ Կ Ե փխ եթէ Խ չիք ի ձեռն Բ յանձն առնոյք Դ յանձն առնուք 20 ԲԴ հանդիպեցաք ԲԴՏ^2 և մահու և ոչ մի անգամ 21 ԲԳԴԿ և այլոց ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 դուցէ և այլոց աշխարհաց բազմաց ԱՁԷԹԻVՏ^{3}A բազում և այլ աշխարհաց 22 ԱՁԹԻV հասանիցի Կ բոցոյս ԲԴ նոցա փխ սորա 23 ԲԴ եղև ԲԴՏ^2 զգիրս 24 ԳԵԸԺԼԽՀԿՏ^{1}Տ^2 աշխարհին Հայոց ԲԴ չիք և Ե յիշատակարանսն ՁVՏ^3 զյիշատակարանսն ԲԴՏ^2 նախնեաց իւրոց Խ ի նախնեացն 25 ԲԴ և բազում 25—26 ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 ուխտ գտանէին հաստատութեամբ Դ ի ներս ԸԼԽԿՀ չիք ի ներքս։

Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն, և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ, զի մի՛ եկեղեցիքն արևելից յափշտակեսցին յանօրէն հեթանոսացն, ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեան։

Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս կայսր, և ի ձեռն վատթար արանց խրատտուաց իւրոց ծառայից, Անատոլեայ՝ որ սպարապետն էր, և Եղփարիոս ասորի, երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և անաստուածք, ի նոցա բանս եկեալ թագաւորն, ոչ կամէր անսալ միաբան ուխտին Հայոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն հեթանոսաց։ Իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան՝ քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան։Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից զնոյն Եղփարիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ։

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ, և հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս և զօրսն Հայոց։ Թէպէտ և հայէին յիւրեանց սակաւութիւնն և յերկոցունց թագաւորացն միաբանութիւն, ոչ ինչ վատասրտեալ դողային, այլ ըստ առաջին ուխտին խիզախէին և ասէին. «Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել. դիւրին է Աստուծոյ սակաւուք զբազմաց գործ գործել, և անարգօք զմեծամեծ

---

1 Ս Թէոդորոս Հ Թէոթոս 1—2 ԱՋԹԻV սինկղիտոսն է սնկղիտոսն Դ զսինկիտոսն ԸԺԽ զսինկղիտոսքն Ե զսինկղիտոսքն ԳՍԿ զսինկղիտոսսն ԲՀ սինկղիտոսքն Լ զսինկղերիկոսքն 2 ԼS^1 հնար 3 ԲԴ զի եկեղեցիք արևելից մի՛ (Դ եկեղեցիքն) է յարևելից 4 ԳԴԵԽԿՀ հեթանոսաց Լ անդրէն 4—5 VS^3 հա անդէն վաղվաղակի 5 ԲԴ չիք կատարածի 6 ԱԳԵՋէԹԺԻVS^3 խափան լինէր (ՁV խափանելինէր է խաբանելինէր) Հ չարախափան Բ օգնականութեանն 7 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1 թագաւորէր S^1 Մարկինոս 8 A խրատտուացն Հ խրատտուած S^1 խրատտաուաց Թ խրատտատուացն ԲԴ չիք իւրոց ԸԺԼԽՀS^1S^2 ծառայից իւրոց ԱԳՋէԹVS^3 Անատողեայ ԵԸԺԼԽՀ Անատոլայ 9 Բ ապարապետն ԱԳՋէԹԻԿVS^2S^3 Եղփարիոս Բ Նխփարի Դ Եփխարիս ԵԸԺԼԽՀS^1 Եփլարիոս Λ Փղորենտիոս ԲԵԸԼԽ երկոքեանն 9—10 ԲԴ վատթարք յարանց ԳԵԸԺԼԽԿS^1 ի վաս Հ անարգ և ի վատ առանց 10 ԲԴS^2 ի սոցա բան ԺԼS^2 եղեալ 11 ԳԵԸԺԼԽԿՀS^2 թագաւորին ԲԴ կամեցաւ ԲԴ միաբանութեան ԵԸԺԼԽՀS^1S^2 միաբանել ԱՋէԹԻVS^3 հաւատոց փխ Հայոց 12 ԲԳԴԵԺԼԽ ուժով ԲԴԵՍ չարութեան հեթանոսացն Լ չիք չարութեանն 13 ԲԳԴԵԸԼԽԿՀS^2 չիք Իսկ ԲԴ համարեցաւ զուխտ

Եվ մինչդեռ երանելի Թեոդոսը հարցուփորձ էր անում ամբողջ Սինկղիտոսին[89] և կամենում էր գործի համար մի հնար գտնել, խաղաղությամբ և մեծ հոժարությամբ հոգ էր տանում, որ Արևելքի եկեղեցիները չհափշտակվեն անօրեն հեթանոսների կողմից, այդ նույն ժամանակ շուտով հասավ նրա կյանքի վախճանը և օգնության գործը չարաչար խափանվեց։

Եվ նրա փոխարեն թագավորեց Մարկիանոս կայսրը[90]. սա իր խրատտու վատթար ծառաների շնորհիվ, այն է՝ Անատոլ սպարապետի և Եղփարիոս ասորու,— երկուսն էլ անարգ ու վատթար, միևնույն ժամանակ և անաստված մարդիկ,— նրանց կողմն անցնելով թագավորը՝ չկամեցավ ուշադրություն դարձնել Հայերի միաբան ուխտին, որ իրենց ամբողջ ուժով ընդդիմացրել էին հեթանոսների չարությանը։ Իսկ այս անարի մարդը ավելի լավ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ[91] մարմնական խաղաղության համար, քան թե քրիստոնեության ուխտին պատերազմակից լինել։ Այդ պատճառով էլ շտապեց, դեսպաններ ուղարկեց Պարսից թագավորի մոտ նույն Եղփարիոսին և հաստատուն դաշն կնքեց նրա հետ՝ օգնություն ցույց չտալ Հայոց զորքին ո՛չ զորքով և ո՛չ էլ զենքով ու ամեն տեսակ օժանդակությամբ։

Եվ երբ այս այսպես կատարվեց-պրծավ, և նրանց հույսը կտրվեց մարդկային օգնությունից, դարձյալ սուրբ եպիսկոպոսներն սկսեցին քաջալերել իրենց և Հայոց զորքին։ Թեպետև տեսնում էին իրենց սակավությունն ու երկու թագավորների միաբանությունը, բայց և այնպես ամենևին չէին վհատվում ու դողում, այլ նախկին ուխտադրության համաձայն խիզախում էին և ասում. «Պատրաստ ենք սպանելու և մեռնելու. աստծու համար հեշտ է քիչ մարդկանցով շատերի գործ կատարել և ա-

---

հեթանոսացն պահել ԻԸԺԼԽS^1S^2 զուխտն հեթանոսաց պահել (S^2 զուխտ հեթանոսացն պահել) 14 Բ խաղաղութեանն 15 Ջ քրիստոնէութեանն ԲԳԴԵԸԺՍԿS^2 վասն այնորիկ ԳԴԵԸԺԼԽԿՀS^1 դեսպան 16 Ի զնոյն ԱԳՋէԹԻԿVS^2S^3 Եղփարիոսն Բ Փղարիոսն Դ Եփղխարիսն ԵԸԺԼԽՀS^1 Եփլարիոսն Λ Փղորենտիոսն Բ ընդ նոսա փխ ընդ նմա ԹԻ ուխտ 17 ԲԴ և ձեռնթափ լինէր Դ ձեռնթափա (!) Դ չիք ի ԳԿ և զօրու 19 A չիք այս է հատաւ փխ հատաւ ԱՋV օգնականութեան 20 Կ նորա փխ նոցա 20—21 Դ եպիսկոպոսն քաջալերել սկսաւ 21 ԲԴ և զամենայն զունդն փխ և զօրսն Կ զզօրսն ԵԸԺԼԽՀS^2 և զզօրսն ամենայն S^1 զօրսն ամենայն ԻԼԽՀS^1S^2 չիք Հայոց Դ հային փխ հայէին 22 Ե սակաւութիւն ԲԳԵԺԼԽԿՀS^1S^2 և յերկուց ԲԵ թագաւորաց միաբանութիւնն Դ չիք և յերկոցունց թագաւորացն միաբանութիւն 23 Հ խիզախէին (լուսանցքում՝ համարձակէին) 23—24 Թ չիք և ասէին 24 ԲԴ չիք ի սպանանել և ԹՀ ի սպանանել և ի մեռանել 25 ԲԸԼԽ անարգանաւք Դ և զմեծամեծաց Թ չիք «և անարգօք—կատարել» իրս կատարել»։

Թէպէտ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ արտաքուստ օգնական զօր յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետացն մխիթարութեամբ՝ համագունդ ամենայն նախարարքն զօրօքն իւրեանց յիւրաքանչիւր տանէ ի մի վայր գային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուձի, որ յարքունի տանէ անտի էր։

Եւ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանէին։

Զգունդն առաջին տային ցՆերշապուհ Ռմբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ատրպատական աշխարհին։

Եւ զգունդն երկրորդ տային ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից։

Իսկ զգունդն երրորդ տային ի ձեռս Վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոցն իւրոց։

Ընտրեաց և էառ ընդ իւր՝ զորոց գիտէր զթուլութիւն հաւատոց նոցա.

Զիշխանն **Բագրատունեաց** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Խորխոռունեաց** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Ապահունեաց** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Վահնունեաց** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Պալունեաց** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Գաբեղենից** զօրօքն իւրովք։
Զիշխանն **Ուրծայ** զօրօքն իւրովք։

Եւ զայլ բազում զօրս յարքունի տանէն արկ յինքն, և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ։ Եւ խորամանկ խաբէութեամբ դարանա-

---

2 Կ թէև Հ թագաւոր և առաջնորդ Կ թագաւորս ԱՋԹԻV յարտաքուստ ԲԴ չիք արտաքուստ 2—3 ԲԴ և ոչ յօտարաց զօր օգնական 3 Կ զօգնական ոք 4 ԱՋէ ԹԻV վարդապետաց 5 ԱՋէԻ զօրք նախարարացն ԳԹԿS^3 զօրօք(ն) նախարարացն Բ զօրօքն Հայոց փխ նախարարքն զօրօքն իւրեանց Դ զօրքն Հայոց ԱԲԳՋէԹԻԿVS^3 չիք իւրեանց V զօրօք նախարարացն յիւրաքանչիւր տանէ Դ չիք մի 5—6 Հ կային փխ գային 7 ԲԴ տանէ էին փխ տանէ անտի էր 8 Գ զզօրսն Թ երիս գունդս A բաժանեցին 9 Բ ցՄերշապուհ Ռօսբեան Դ ցՄերշապուհ Ռբոսեան Կ Ներշապուհ Գ Ըռմբոսեան Խ Ըմբոսեան 10 Գ չիք աշխարհին (մերձ) 10—11 Բ Ատրպատականի փխ Ատրպատական աշխարհին Հ Ատրպատական (յուսանցքում՝ Հերբշան) 12 ԻՀ գունդն ԼS^1S^2 չիք և 13 Խ սահմանսն Հ մարզպանին Ջորայ 14 ԱՋ աւ-

նարգների միջոցով՝ մեծամեծ բաներ անել»։

Թեպետև թագավոր չունեին իրենց առաջնորդ և ո՛չ էլ դրսից որևէ օգնական օտարներից, բայց բոլոր նախարարներն անձնական առաքինությամբ և սուրբ վարդապետների մխիթարությամբ իրենց բոլոր զորքերի հետ միասին ամեն մեկն իր տնից շտապով եկան, մի տեղ հավաքվեցին, նաև ուրիշ շատ հեծելազոր, որոնք թագավորական տնից էին։

Եվ ամբողջ զորքը երեք գնդի բաժանեցին։

Առաջին գունդը տվին Ներշապուհ Ռմբոսյանին և ուղարկեցին նրան երկիրը պահպանելու Ատրպատական աշխարհի սահմաններին մոտիկ։

Երկրորդ գունդը տվին Հայոց Վարդան զորավարի ձեռքը, որ անցնի Վրաց սահմանից Ճորա մարզպանի վրա, որ եկել էր Աղվանից եկեղեցիներն ավերելու։

Իսկ երրորդ գունդը հանձնեցին Սյունյաց Վասակ իշխանին, որն իր ներքին մտադրություններով հեռացած չէր հեթանոսների ուխտից։

[Նա] ընտրեց և իր հետ վերցրեց այնպիսի մարդիկ, որոնց հավատի թուլությունը գիտեր.

Բագրատունյաց իշխանին իր զորքով.
Խորխոռունյաց իշխանին իր զորքով.
Ապահունյաց իշխանին իր զորքով.
Վահնունյաց իշխանին իր զորքով.
Պալունյաց իշխանին իր զորքով.
Գաբեղենից իշխանին իր զորքով.
Ուրծա իշխանին իր զորքով։

Եվ ուրիշ բազմաթիվ զորք էլ արքունի տնից իր կողմը գրավեց, նույնպես և ուրիշ տոհմից մի քանի սեպուհների։ Եվ խորամանկ խա-

---

րեալ Բ աւարել ԳԵԼԽԿ զեկեղեցիս 15 ԲԴԵԺԼԽՀ ի ձեռն 16 ԵԺԼՀ որ ոչ էր ի բաց կացեալ ԵԺԼԽ չիք էր Ի ուխտին 17 ԲԳԴԵԼԽԿՀ խորհրդոց 18 A առ նա ընդ իւր փխ էառ ընդ իւր ԳԵԸԺԼԽԿՀS^2 ընդ իւր զարս Բ և ընտրեաց առ իւր զարս զոր Դ և ընտրեաց առ ընդ իւր զարս զորոց ԼԽԿՀ զորոց S^2 ընտրեաց և առ ընդ իւր զարս որոց Դ հաւատոցն 19 Դ չիք նոցա 20 Ա Բագարատունեաց Հ Պագրատունեաց ԲS^2 զօրօքն Կ զօրօք 21 ԲS^2 զօրօքն Կ զաւրօք V չիք զիշխանն Խորխոռունեաց զօրօք իւրովք 22 ԱՋԻԺS^2 զօրօքն է զօրօք Թ զօրօքն իւրեանց ԲԴ չիք զիշխանն Ապահունեաց զօրօք իւրովք 23 Բ Վահանունեաց ԳԵԸԺԽԿՀ Վահաւունեաց զօրօք ԼS^1 Վահունեաց ԴS^1 զօրօք Թ իւր 24 ԳԴԵԸԹԺԼԽԿՀ զօրօք 25 ԲԽ Գարեղինից ԳԿ Գաբաղենից ԱՋԻ զօրօքն էԿ զօրօք 26 ԳԵԸԺԼԽԿՀS^1 չիք զիշխանն Ուրծայ զօրօքն իւրովք Դ զօրօք 27 ԱԹS^3 զայլս Ի այլ ԲԴ զօրս բազումս Թ արքունի ԲԳԴԵԺ տանէ ԱՋէԹՀV էարկ ԲԳԴԵԸԺԼՑԿ արկ Ի էարք (!) 28 Դ ովմանս Խ յայլ ԲԴ տանէ փխ տոհմէ Բ դարանմուտ

մուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին, ի պատճառս կեղծաւորութեան՝ եթէ ընդ ճապուկ անդր անցանէ ի վերայ գնդին Պարսից՝ հալածականս առնել յաշխարհէն Աղուանից։

Իսկ նա յամրածածուկ հաւալոցէն ճեպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից. «Ահաւադիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին Հայոց, և ընդ երիս կողմանս զգունդն քակեալ բաժանեցի։ Զգունդն առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Զարևանդայ. և գունդս երկրորդ ընդ իմով ձեռամբ է, որոց ոչ ինչ տամ վնաս առնել զօրաց արքունի։ Եւ զայլ ամենայն, որ այր կռուոյ յաշխարհի աստ գտանէր, ցանեցի ցրուեցի ընդ ամենայն միջոցս աշխարհիս։ Բայց զգունդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱղուանս՝ սակաւաձեռն և ոչ բազմաթիւ։ Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ ինչ զանգիտեր ամենևին տալ պատերազմ. գիտեմ՝ զի ի պարտութիւն մատնին առաջի քոյոյ մեծի զօրութեանդ»։

Զայս գրեաց և եյոյց մարզպանին՝ որում անունն էր Սեբուխտ։ Իսկ նա իբրև լուաւ զայս ամենայն զքաջալերս ի Վասակայ, և ստուգեալ հաստատեաց ի միտս իւր, եթէ սակաւաձեռն գնդաւ գայ սպարապետն Հայոց ի վերայ նորա, ոչ եկաց մնաց ի կողմանս Ճորայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն, և պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից։ Անցանէր բաւանդակէր ամենայն զօրօք իւրովք. տագմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր. զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց։

---

1 ԲԴ ի յամուրս իւրոյ իշխանութեանն 3 ԲԴ հալածա՛կան Թ առնելով ԽԿ առնէր Դ Աղանից(!) 4 Գ սա փխ նա Հ ամրածածուկ ԳԴԿ դեսպան է զեսպանս(!) ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 առաքէր փխ արձակէր 5 ԲԴՏ^2 առ գունդն Պարսից և ասէր ԲԴ ահաւադիկ ԳԵԸԺԼԽԿՏ^{1}Տ^2 ահաւասիկ A ահա աւադիկ Հ թէ աւադիկ Կ զմիաբանութիւնս ԱԳԵԹԺԼԿՀVՏ^3 ուխտիս 6 Բ հաւատոց փխ հայոց Դ հաւատոյ Բ և յերիս Կ զգունդս A գունդս գունդս փխ զգունդն Դ զգունդս բաժանեալ քաքանցի Դ և յերիս մասունս զգունդն քաքանալ ԲԵԸԺԼԽԾԿՀ քայքայեալ Լխ քարայեալ Բ բարժանեցի ԲԳԵԻԼՏ^2 և զգունդն ԸԺԽԿՀ գունդն 7 ԲԴ Զարևընդա Դ Հիրայ և Զարաւանդայ ԵԸԺԼԽԿՀՏ^1 Խիրայ և Զարաւանդայ (Ժ Զարանդայ) ԶԷԹԻVՏ^3 Զարաւանդա(յ) (Ի Զաւանդայ) 8 Բ ձեռամբս Դ ձեռօքս Բ չիք է ԵԸԼԽԿՀՏ^2 ոչինչ վնաս տամ Ժ չիք տամ 8—9 ԲԳԵԽԿՀ զօրացն Դ առնել վնաս զօրացն Ժ վնաս տամ առնել զօրանց ԵԼԽԿՀ չիք վնաս 9 Խ և այլ զամենայն ԱԶԹԻV որ է այր կռուոյ ԲԴՏ^{1}Տ^2 որ այր կռուոյ գտանէր յաշխարհիս ցանեալ ԳԼ գտանէր յաշխարհի աստ Ծ չիք աստ 10 ԵԸԺԼԽՀ գտանիւր ԲԴՀ չիք ամենայն ԳԵԹԺԿՀ միջոց Հ Եւ փխ Բայց 11—12 ԲՏ^2 բազմաւ փխ բազմաթիւ ԴԼՏ^1 և

քեությամբ դարան էր մտնում իր երկրի բերդերում, կեղծավորությամբ պատճառ բերելով, թե ճեպընթաց պիտի անցնի-հարձակվի Պարսից զորքի վրա՝ Աղվանից երկրից նրանց հալածելու համար։

Իսկ նա [իր] ամրածածուկ թաքստոցից շտապով դեսպաններ ուղարկեց Պարսից զորքերի մոտ, թե «Ահա քանդեցի Հայոց ուխտի միաբանությունը և երեք կողմերի վրա զորքը քանդելով բաժանեցի։ Առաջին գունդը հեռացրի Հերի և Զարևանդի[92] կողմերը. երկրորդ գունդը իմ ձեռքի տակ է, որոնց թույլ չեմ տա որևէ վնաս հասցնելու արքունական զորքին։ Եվ էլի որքան պատերազմող մարդ որ կար այս աշխարհում, ցիրուցան արի այս երկրի զանազան կողմերը։ Իսկ երրորդ գունդը Վարդանի հետ Աղվանք ուղարկեցի՝ փոքրաթիվ և ոչ թե բազմաթիվ։ Համարձակ դուրս արի նրա առաջ և ամենևին մի՛ վախենա նրա դեմ պատերազմի ելնելուց. գիտեմ, որ պարտություն պիտի կրեն քո մեծ զորության առաջ»։

Այս բանը գրեց և հասկացրեց մարզպանին, որի անունը Սեբուխտ էր։ Իսկ նա, երբ լսեց Վասակից այս բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզվեց, որ Հայոց սպարապետը սակավաթիվ գնդով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Ճորա կողմերում, այլ հավաքեց իր ամբողջ բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր անունով մեծ գետը և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մոտիկ Խաղխաղ[93] քաղաքի հանդեպ, որ Աղվանների թագավորների ձմեռոցն էր։ Անցավ սփռվեց իր ամբողջ զորքով, բանակ դրեց և դաշտի ամբողջ մեծությունը բռնեց. զինված ու լիովին սպառազեն դուրս եկան կռվելու Հայոց զորքի դեմ։

ոչ բազկաւ փխ և ոչ բազմաթիւ 12 ԵԸԺԽԿՀ ընդ առաջ ել նմա համարձակ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 և մի՛ ինչ ԱԶԷԹԻVՏ^{3}A չիք ինչ 12—13 ԵԸԺԽՀ զանգիտել ամենևին 13—14 ԲՏ^2 մատնիցի ԴԼ մատնեսցի Խ մատնին (!) 14 Դ տէրութեանդ փխ զօրութեանդ ԼՏ^1 տէրութեան 15 Ի յորում ԱԳԵԶ անուն ԴԼՏ^{1}Տ^2 մարզպանին Սեբոխտայ Բ Եբոխտա ԵԽԿՀ Սեպուխտ 16 Գ իբրև զայս ամենայն լուաւ Դ զայն ԳԴԼ չիք ամենայն ԲԴ քաջալերս ԵԸԺԽԿՀ իսկ նա իբրև զայս ամենայն քաջալերս լուաւ Ի Վասակայ Կ չիք քաջալերս Թ չիք ի 17 ԲԴԼՏ^{1}Տ^2 գիտաց փխ հաստատեաց Ի չիք իւր ԳԵԸԺԽԿ թէ ԴԾ գնդիւ 18 Բ ասպարապետն Բ չիք Հայոց ԵԸԺԽՀՏ^2 ի սահմանս փխ ի կողմանս 19 է Ճորոց Բ զբազմութիւն զօրացն փխ բազմութիւն զօրու իւրոյ Դ զօրացն։ չիք իւրոյ Թ զօրաց իւրոց 20 Բ անցանել ԲԴ չիք անուն Խ պատահէր նոցա 21 Թ չիք հանդէպ ԲՀ խաղաղ 22 ԱԶԷԻV թագաւորաց ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 թագաւորութեանն Աղուանից ԲԴՏ^2 բովանդակ ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 բովանդակէր ԱԶԷԹԻVՏ^{3}A բաւանդակէր ԲԳԴԵԸԺԽԿ զօրօքն 23—24 ԲԴ դաշտին մեծութիւնն ի ներքս փակեալ 24 ԲՏ^2 զինեալ և վառեալ ԼՏ^1 չիք և վառեալք 25 ԲԴՏ^2 Վարդանայ փխ Հայոց։

Իսկ քաջն Վարդան և ամենայն զօրքն, որ ընդ նմա էին, իբրև տեսին զբազմութիւն պատրաստութեան գնդին հեթանոսաց, հայեցան և յիւրեանց սակաւութիւնն. թէպէտ և կարի յոյժ նուազունք էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտեցին առ ի յոյժ բազմութենէն, այլ առ հասարակ միաբան համբարձին յերկինս զձեռս իւրեանց, աղաղակէին և ասէին.

«Դատեա, Տէր, զայնոսիկ, ոյք դատին զմեզ. մարտիր ընդ այնոսիկ, որ մարտնչինս ընդ մեզ. զինու և ասպարաւ քով օգնեա մեզ։ Շարժեա և դողացո զգունդագունդ բազմութիւն անօրինացս. ցրուեա և վատնեա զչար միաբանութիւն Թշնամեաց քոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս, և տուր ի ձեռն սակաւուցս զքաջութիւն յաղթութեան ի վերայ անհնարին բազմութեանս։ Ոչ ի պարծանս անոտի փառասիրութեան անօգուտ վաստակոց ինչ աղաչեմք, կամ յագահութիւն ընչասիրութեան զանցաւոր մեծութիւն կայտելոյ, այլ զի ծանիցեն և գիտասցեն ամենեքեան այնոքիկ, որ ոչն հնազանդին սուրբ աւետարանին քարոզութեան, եթէ դու ես Տէր կենաց և մահու, և ի ձեռն քո է յաղթութիւն և պարտութիւն։ Եւ մեք պատրաստ եմք ի մեռանել վասն քո սիրոյդ. և եթէ սպանանել կա հասանէ զնոսա, եղիցուք վրէժխնդիրք ճշմարտութեանն»։

Եւ զայս ասելով՝ խումբ արարեալ յարձակէին, և զաջ թեւն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկեալ, սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ։ Ուր ընդդէմ դարձեալ Թագաւորազանց ումանց Բաղասական արքայի, ընկեցին զոմն ի ձիոյ ի նախարարացն Հայոց, ի գնդէն Դիմաքսե-

---

1 ԲԴ չիք էին 2 չիք տեսին Դ զպատրաստութիւն բազմութեանն ԲԴ չիք հեթանոսաց 3 ԹԻ իւրեանց Ե սակաւութիւն ԲԴ չիք կարի ԲԳԴԵԿ Նուազք Ը նուազ ԺԼԽՀՏ^2 նուազ 4 ԵՀ զանգիտացին ՁԹԻՎՏ^3 չիք ի 5 ԱԲԴԵԷԸԹԺԻԼԾՀՏ^{1}Տ^2 առհասարակ ԳՁՎՏ^{3}A հասարակ ԱՁԷԹԻՎՏ^3 միաբանեցին և ԲԳԴԿ միաբանեցան և Բ ի յերկինս ԳԵԸԺԼԽԿՀՏ^2 զձայնս փխ զձեռս 5—6 Բ աղաղակեցին և ասեն 6 ԲԴԷ որ փխ ոյք ԳԵԺԼԽԿՀ որ (Հ որք) դատին ընդ մեզ ԷԹԾՏ^1 դատեն ԸՏ^1 ընդ մեզ փխ զմեզ ԳԵԸԺԼԽՀ և մարտիր ընդ սոսա 8 ԲԴ մարտնչին է մարտնչին զմեզ Գ զինու քո ՁԷԹՎ ասպարօք Բ քոյով ՁԷՎ չիք քով Թ քո 9 Խ չիք մեզ Դ զգունդ բազմութեան ԱՁ զբազմութիւն ԲԴ անօրինացն 10 Բ զչարութիւն փխ զչար միաբանութիւն 10—11 Դ վատնեա զզօրութիւն թշնամեացն առաջի քո փրկական նշանիս Բ քո փխ քոյոյ Տ^2 չիք և վատնեա ԳԸ թշնամեացս Գ փրկական քոյոյ նշանիս մեծի ԵԺԼԽԿՏ^2 թշնամեացս քոց ԾԿՀՏ^1 չիք քոց 12 ԲԴ այսչափ բազմութեան փխ անհնարին բազմութեանս Ի

Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնված ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների գնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից, այլ բոլորը միասին իրենց ձեռքերը դեպի երկինք բարձրացրին, աղաղակում էին և ասում.

«Դատի՛ր, Տե՛ր, նրանց, ովքեր դատում են մեզ. կռվի ելիր նրանց դեմ, ովքեր ահա մարտնչում են մեր դեմ. քո զենքով ու ասպարով օգնի՛ր մեզ։ Թափահարիր և դողացրո՛ւ այս անօրենների գունդագունդ բազմությունը. ցրի՛ր և ոչնչացրո՛ւ քո թշնամիների չար միաբանությունը այս քո փրկական մեծ նշանի առջև և մեր՝ սակավաթիվներիս ձեռքով քաջություն ու հաղթություն պարգևի՛ր այս անհամար բազմության դեմ։ Ո՛չ թե անօգուտ վաստակների սնոտի փառասիրությամբ պարծենալու համար ենք աղաչում կամ թե ընչասեր ագահությամբ անցավոր հարստություն կողոպտելու, այլ որպեսզի ճանաչեն ու իմանան այն բոլորը, ովքեր չեն հնազանդվում սուրբ ավետարանի քարոզությանը, թե դո՛ւ ես կյանքի ու մահվան տերը, և քո՛ ձեռին է հաղթությունն ու պարտությունը։ Իսկ մենք պատրաստ ենք մեռնելու քո սիրո համար. և եթե պետք լինի նրանց սպանել էլ, ճշմարտության համար վրեժխնդիր կլինենք»։

Այս ասելով՝ խումբ կազմեցին ու հարձակվեցին, և աջ թևը ճեղքելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախցրին մինչև անտառի ամուր տեղերը՝ Լոփնաս գետի[94] խոր ձորերի մոտ։ Այստեղ Բաղասական[95] թագավորի թագավորազներից ոմանք ետ դարձան, Հայոց նախարարներից մեկին ձիուց վայր գցեցին,

---

բազմութեանն 13 ԱՁԷՎ փառաւորութեան 14 ԱԲԴՁԷԹԻՎՏ^3 չիք կամ ԳԸԺԼԽԿՀ Տ^{1}Տ^2 և ոչ փխ կամ Ե ընչասիրութիւն Հ ինչասիրութիւն 15 ԲԴ չիք զի 16 ԱԳԵՁ ԷԸԹԺԻԼԽԿՀՎՏ^{1}Տ^2 չիք ոչն ԲԴ չիք այնոքիկ ԴՏ^2 ոչ ԲԴ քարոզութեանն ԳԵԺԼԽԿՀ թէ 17 ԱԲԳԴՁԷԹԻԿՎՏ^3 ի ձեռս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և ի քո ձեռս է Ի չիք է 18 Թ ի մեռանիլ Բ սիրոյդ քո Դ վասն անուան քո փխ վասն քո սիրոյդ ԸՀ և թէ 19 ԲԳԴԵԸԺԼԽԿՏ^1 հասցէ ԲԴԷԸԼԽՏ^{1}Տ^2 վրէժխնդիր ԵԷՀՏ^1 ճշմարտութեան միայն A ոչ եթէ մեզ ինչ, այլ ճշմարտութեանն եղիցուք վրէժխնդիրք 20 ԲԴԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 ասացեալ Ը և զայս ասացեալ ԲԴ յարձակէին ի վերայ նոցա է չիք և 21 Ժ բերեալ փխ բեկեալ Գ և զձախով է ձախու ԱՁԷՎ և սրոյ ճարակ ԲԴՏ^2 զձախակողմամբն արկանէին և ԳԹԻԿՎՏ^3 և սրոյ ԵԸԺԼԽ ՀՏ^1 արկանէին և սրոյ 22 Ե երես ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք և ԳԵԸԺԽԿՀ փախստականս 23 Խ չիք տեղիս ԲԴ դարիւք ԵԼԽ դարուքն Հ տարուքն ԲԴԹ Լփնաս ԳԵԸԺԼԽԿՏ^1 Լոքնաս Հ Լոքնազ է Լուփնաս Տ^2 Լընաս ԲԴ որ փխ ուր 24 Բ Բաղասակա 24—25 ԲԳԴԵԸ ԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ընկեցին ի ձիոյ զոմն 25 ՎՏ^3 ի նախարարաց։

նից զՄուշ սպանին, և զԳազրիկ վիրաւորեցին։

Յայնմ տեղւոջ դէտակն ի վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի, գոչէր առիւծաբար և յարձակէր վարազաբար, հարկանէր և սատակէր զՎուրկն քաջ զեղբայր թագաւորին Լփնաց, և զբազում համհարզս նորին ընդ նմին սատակէր։ Եւ այնպէս ամենեքեան առհասարակ այր զախոյեան իւր յերկիր կործանէր։ Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն յոլովագոյն այն էր զոր գետամոյնս առնէին քան զանկեալսն սրոյ ի ցամաքի։ Եւ ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յատակ ջուրց գետոյն յարիւն դառնային, և ոչ գտանէր ոք ամենևին ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դալարացն։ Բայց մի ումն ի զօրականէ թշնամեացն՝ զինու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն, մազապուր պրծեալ ի պատերազմէն՝ գոյժ տանէր ի մնացեալ բուն բանակն, որք փախստական անկանէին ի մեծ շահաստանն։

Յայնմ ժամանակի զօրքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին՝ դիակապուտ դառնային, ժողովէին զբազում աւար բանակին, և կողոպտէին զանկեալ դիակունսն. և կուտէին բազում արծաթ և ոսկի, զզէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց։

Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն և քաղաքաց, զոր ունէին Պարսիկքն յաշխարհին Աղուանից, հզօրապէս մարտնչելով այրէին զամուրս արգելանաց նոցա, և զերամս երամս մոգացն, զոր պատրաստական ածեալ էին աշխարհին գայթակղութիւն, ո՛ւր և գտանէին յամուրս ամուրս վայրացն, սրոյ ճարակ տուեալ՝ դնէին դէշ թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Սրբէին զտեղիսն յամենայն պղծագործ զոհիցն, և փրկեալ ազա-

---

1 ԵԺԼԽՀ Դիմաքսեան զՄուշն և սպանին ԳԿS^2 զՄուշն Դ Դիմաքսենից ԸԺ Դիմաքսեան Բ զՄուշկանն Դ զՄուշկեանն ԳԵԸԼԽԿS^2 զԳազրիկն Դ զԳազրիկեանն ԲS^2 զԳազրիկ անդր վիրաւորեցին 2 ԲԴ յայնժամ փխ յայնմ տեղւոջ ԲԴ դիտակն Է դիգակն Հ համբառնայր ԲԴԵԺԽԿՀ Արշաւիրն 2—3 Դ Արշարունեաց 3 Է յարկակէր (!) ԿՀ արձակէր ԵՀ վարդանման ԸԺԽ վարազանման Լ չիք վարազաբար հարկանէր ԲԴ չիք և 3—4 Ծ չիք սատակէր S^1 չիք վարազաբար հարկանէր և սատակէր 4 ԲԴ զՎրուկն ԲԴ և զեղբայր ԱՋԷVS^3 թագաւորին Լփննաց արքային ԲԴ զԼփնաց արքային ԳԿ Լփնաց արքայի Թ թագաւորին Լփնաց արքային Ի Լոփննաց արքային Բ չիք և զբազում 5 Գ զհամհարզս ԲԴ համհարզս զօրս ընդ նմին սատակէր Գ սատակեաց է և այսպէս 5—6 ԲԴ չիք «և այնպէս—յերկիր կործանէր» 6 Գ զահոյեան իւր 7 Հ անդուգն փխ յանդուգն ԱՋԷԹԻV գետամնացս Բ գետասոյզ Դ գետագոյզ ԳԿ գետամացն Լ գետամոյսն (!) Ծ գետամոյնն 8 Դ զանկեալսն Ի ի սրոյ S^2 սրով ԱՋԷԹԻVS^3 չիք և 9 Բ անգելոցն Ե յատակ փխ յատակ Դ ջուր յարիւն դառնայր 9—10 Բ չիք և ԲԴ և ոչ ոք ի նոցանէ ամենևին գտանէր 10 ԳԿ ապրեալք և ԱԳՋԷԹԻԿV թաքուցեալք Ա

Դիմաքսյան գնդից Մուշին սպանեցին և Գազրիկին վիրավորեցին։

Այնտեղ աչքը վեր բարձրացրեց Արշավիր Արշարունին, մռնչաց առյուծի պես և հարձակվեց վարազի նման, խփեց սատկեցրեց Լփնաց թագավորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիվ համհարզներին էլ նրա հետ սպանեց։ Եվ այսպես առհասարակ յուրաքանչյուրն իր ախոյանին գետին էր գլորում։ Եվ սաստիկ հանդուգն հարձակման պատճառով գետը թափածների թիվն ավելի շատ էր, քան թե ցամաքի վրա սրի անցրածներինը։ Եվ ընկած դիակների բազմությունից գետի հատակ ջրերը արյուն դարձան, և նրանցից ոչ ոք չկարողացավ փրկվել և թաք կենալ դաշտերի խիտ անտառներում։ Բայց թշնամիների զորականներից մեկը իր զենքերով միասին բարձրանալով ձիու մեջքին՝ անցավ մեծ գետը, մազապուր պրծավ պատերազմից՝ գույժ տարավ մնացած բուն բանակին, որոնք փախան գնացին մեծ շահաստանը[96]։

Այն ժամանակ Հայոց զորքերը պատերազմի մեծ գործն ավարտելով՝ սկսեցին դիակների կողոպուտը, հավաքեցին բանակի մեծ ավարը և կողոպտեցին ընկած դիակները. ժողովեցին շատ արծաթ ու ոսկի, արի մարդկանց և լավ երիվարների զենքերն ու զարդերը։

Դարձյալ ոչ պակաս քաջությամբ հարձակվեցին այն բերդերի և քաղաքների վրա, որ գրավել էին պարսիկներն Աղվանների աշխարհում, հզորապես մարտնչելով հրդեհում էին նրանց ամուր բերդերը. և մոգերի այն խմբերը, որոնց պատրաստել-բերել էին երկրում գայթակղություն գցելու համար, ո՛ւր էլ գտնում էին ամուր-ամուր տեղերում, սրի ճարակ դարձնելով՝ թողնում էին երկնքի թռչուններին և երկրի գազաններին կերակուր։ Այն տեղերը մաքրեցին բոլոր պիղծ զոհերից և եկեղեցի-

---

յանտառախիթ 10—11 ԵԺԽՀ յանտառախիտս մայրից դալարացն 11 Բ ի զօրականէն ԵԸԺԼԽՀS^1 ի զօրաց ԲԴ զինուն 12 ԲԳԵԺԼԽԿ ի նուս ԸՀS^1S^2 ի յուս Դ երիվարին իւրոյ Գ ընդ գետն մեծ Է մեծագետն 13 Դ գուժ ԵԸԺԼԽՀS^1S^2 գոյժ արկանէր ԲԴԾ չիք մնացեալ 13—14 ԲԴ ի բուն բանակն 14 Բ անգան Դ անկան ԷS^2 արկանէին 16 A ի դիակապուտս ԼS^1 չիք դիակապուտ դառնային ԲԴ զբազմութիւն փխ զբազում 17 ԲԴ չիք և կողոպտէին զյանկեալ դիակունսն Դ չիք բազում 17—18 ԲԴ արծաթ և ոսկի բազում յոյժ, զէնս և զարդս զանգելոցն 18 Ե զարդս Ժ զզէնսն S^2 զզարդս զանկելոցն զարի արանց Դ զզարդս անկելոցն զարի ԲԴ և զերիվարացն 19 ԳԵԸԺԼԽԿՀS^1 յարձակէր Ի արձակէին ԲԴ չիք ոչ սակաւ ԲԳԴԵԺԽԿՀ բերդից 20 ՋԷԹԻVS^3 քաղաքացն Դ որ ԴԺԻԽԿՀ պարսիկք 21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 այրէին ԱՋԷԹԻVS^3A և այրելով ԱՋԷԹV արգելաց Ի արգելեաց ԳԾ արգելանացն 22 ԵԸԺԼԽՀ մոգուցն ԲԴ զօրս պատրաստականս ԲԴ ածեալ էին առ ի յաշխարհին A չիք էին Ի յաշխարհին 22—23 Է գայթագղութեան ԵԸԺԼԽՀS^1 ի գայթակղութիւն 23 ԲԴ մայրեացն փխ վայրացն 24 ԱԳԵԸԹԺԻԽԾԿՀS^1S^2 դէշ դնէին (Հ տայրն՝ դէշ դնէին) ԲԴ արարեալ՝ դէշ տուեալ թռչնոց Է թռչնոցն 25 ԲԴ և սրբէին զտեղիս Ի ամենայն։

տէին զեկեղեցիսն յանհնարին նեղութենէն։

Եւ բազումք ի նախարարացն Աղուանից և յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ և վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, իբրև տեսին զաջողութիւն գործոյն, զոր կատարէր Աստուած ի ձեռն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա, և խառնէին ի զօրս նոցա, և միաբանք և հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեանն։ Խաղային գնային այնուհետև ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկքն. առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զզօրսն, որ ի ներքս բնակեալ էին, որ զդուռնն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից։ Եւ յայսր ամենայն քաջութեան վերայ ոչ ոք անկեալ վիրաւորեցաւ ամենևին ի նոցանէ, բայց ի միոյ երանելւոյ, որ կատարեցաւ նահատակութեամբ ի մեծ պատերազմին։

Եւ անդէն ի նմին տեղւոջ զայրն՝ որում զդուռնն յանձն արարին՝ զնոյն դեսպան արձակեցին յաշխարհն Հոնաց, և ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ համագործք էին Հոնաց աշխարհին, բանս դնել ընդ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութեամբ ունել զմիաբանութիւնն։ Իսկ նոքա իբրև զայն ամենայն լուան, փութապէս վաղվաղակի հասանէին ի տեղին, և ականատեսք լինէին գործոյն յաղթութեանն։ Եւ ոչ ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց, յանձն առին և զերդումն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն։

Իսկ իբրև զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն, և դեռ անդէն ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութեամբ, գուժկան հասանէր յաշխարհէն Հայոց, զճակատ հարեալ և

---

1 ԲԴ յամենայն նեղութեանց փխ յանհնարին նեղութենէն 2 Ի ամենայն 3 ԲԴ ցրուեալ էին և վատնեալ 4 Ի չիք լերանց ԳԵԸԺԼԽԿՀՏ¹ լերանցն Կապկոխի ԲԴ լերանցն Կովկաս Տ² Կովկասայ ԲԴ և իբրև տեսանէին ԼՏ¹Տ² իբրև տեսանէին ԵԸԺԽԿՀ տեսանէին զյաջողումն ԱՁԳՏ² զյաջողութիւն է զյաջողութեան ԸԺԽ գործոցն 4—7 Կ չիք «զոր կատարէր—գործոյն» 6 ԲԴ և միաբանութեամբ կցորդ ԳԻ կցորդ ԵԸԺԼԽՀՏ¹Տ² և միաբան հաւասարեալ կցորդ 7 Բ լեալ փխ լինէին ԲԴ գործոյ նահատակութեանն Գ գործոյ Ծ գործոց ԵԸԺԼԽՀՏ¹Տ² գործոյ նահատակութեան նոցա Բ խաղացին գնացին 8 ԲԳԴԵԿՀ Պարսիկք 9 ԱՁԷ զպահակըն Հ չիք և 9—10 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² զզօրսն որք (ԼՏ¹Տ² որ) բնակեալ էին ի նմա Դ ներս 10 ԱՁԷԹԻՎ և զդունդն փխ զդուռնն ԲԳԺԿ զդուռն Դ տայր ԳԿ ի ձեռս 11 Խ յայսմ Հ այսր Բ ամենայնի Դ քաջութեանց 12 Բ մի փխ միոյ 13 A կատարեցաւն 14 ԲԴ չիք ի

ները փրկեցին-ազատեցին անտանելի նեղությունից։

Աղվանից նախարարներից ու բոլոր շինականներից շատերն էլ, որոնք աստծու անվան համար ցիրուցան էին եղել Կապկոհ լեռների[97] ամուր տեղերում, երբ տեսան այդ գործի հաջողությունը, որ աստված կատարում էր Հայոց զորագնդի միջոցով, նույնպես եկան-ժողովվեցին և խառնվեցին Հայոց զորքի հետ և նրանց հետ միաբան ու հավասար մասնակցեցին քաջության գործին։ Այնուհետև գնացին-արշավեցին Հոների պահակի[98] վրա, որ բռնությամբ գրավել էին պարսիկները. առան, քանդեցին պահակը և կոտորեցին ներսում բնակված զորքը և Դուռը հանձնեցին Վահանին, որ Աղվանների թագավորների ցեղից էր։ Եվ այս բոլոր քաջագործություններն անելիս՝ նրանցից ամենևին ոչ ոք չվիրավորվեց, բացի մեկ երանելուց, որ նահատակվեց մեծ պատերազմի մեջ։

Եվ տեղնուտեղը այն մարդուն, որին հանձնել էին Դուռը, հենց նրան էլ դեսպան ուղարկեցին Հոների երկիրը և Հոների երկրին գործակից ուրիշ շատ բարբարոս ազգերի մոտ՝ նրանց հետ բանակցելու և դաշն կնքելու, որ հաստատ մնան այդ միաբանության վրա։ Իսկ նրանք երբ այս բոլորը լսեցին, շտապով եկան-հասան այնտեղ և իրենց աչքով տեսան հաղթության գործը։ Եվ չհապաղեցին երդումով դաշն կնքել իրենց օրենքով ու կարգով. ընդունեցին նաև քրիստոնյաների երդումը՝ հաստատ պահելու միաբանությունը նրանց հետ։

Երբ այս բանն ավարտեցին և իրենց համար մեծ ապահովություն ձեռք բերին, և դեռևս նույն վայրում տեղավորված էին հանգիստ կերպով, Հայոց աշխարհից մի գուժկան հասավ, ճակատը վիրավորված ու

նմին տեղւոջ ԱԲԳԴՁԷԹԻԿՎΛ զդուռն 15 ԱՁԷԹԻՎՏ³ դեսպանս ԲԴ առաքեցին փխ արձակեցին Հ Յոնաց ԱԲԴՁԷԹԻՎ չիք ի 16 ԱՁԷԹԻՎ և որ համագործք Լ էին համագործ ԵԸԺԽՀՏ¹Տ² էին համագործք Λ համագործքն 17 Դ ուխտս 17—18 ԱԲԴԵՁ ԹԻԿՀ զմիաբանութիւն 18 ԱԻ զայս Թ չիք զայն Թ զամենայն Ի չիք ամենայն ԲԴ փութով փխ փութապէս 19 ԲԴ ի տեղին հասանէին ԴԵԸԺԼԽՀ ականատես 19—20 ԲԳԿ յաջողութեան Դ աջողութեան փխ յաղթութեան ԵԸԺԼԽՀ ամենայն աջողութեան գործոյն Տ¹Տ² ամենայն յաջողութեան գործոյն 20 ԲԳԴԵԸԹԺԽԾԿՀՏ² չիք և ԲԴ ուխտ հաստատել Թ ուխտ Ի չիք յուխտ 21 ԲԳԴԵ օրինացն Բ յանձն առնոյին ԴԵԸԺԽԾՀՏ² առնուին 21—22 ԲԴ չիք ընդ նոսա Ի ընդ նոսին ԲԴ քրիստոնէիցն պահել հաստատութեամբ զմիաբանութիւնն 22 ԳԴԺԼԿ զմիաբանութիւն 23 Խ զայս ամենայն ԲԴ արարին և կատարեցին և արարին 24 ԳԿ ի տեղւոջ ԲԴ չիք զետեղեալ Ը զտեղեալ 25 ԳԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² յերկրէն փխ յաշխարհէն։

զօձիս պատառեալ վասն ապստամբին Վասակայ. «Յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամաւնս և զԴրասխանակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զՍարդեանսն, զՋողակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն ռամն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ։ Ձեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և զսուրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ. գերի վարեալ զընտանիս քահանայից, և զնոսին կապեալ և եդեալ ի բանդի. և ինքն սփռեալ տարածեալ ապստամբաւ աւերէ զերկիրն ամենայն։ Եւ զունդն, որ էր ի կողմանս Ատրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ ի միջոց աշխարհին։ Եւ զօրքն, որ անդ մնացեալ էին. խոյս տուեալ յանօրինէէն մերժեցան յեզր աշխարհին, և դեռ պահեն ընդ ձեզ զուխտ միաբանութեան սիրոյն Քրիստոսի։ Բայց այն որ ընդ նմայն էին՝ են ոմանք, որ փախեան յիւրաքանչիւր տեղիս, և բազումք այն են, որ զհետ մոլորեցան նորա ամբարշտութեանն»։

Ձու արարեալ ի տեղւոջէ անտի՝ դառնալ անդրէն յաշխարհն

օձիքը պատառոտված [և պատմեց] ապստամբ Վասակի մասին. «Հեռացել է քրիստոնեության ուխտից և ավերել Հայոց աշխարհի շատ տեղերը, մանավանդ արքունի ձմեռոցները, որոնք զորքի կայաններն էին, Գառնին և Երամոնսը և Դրասխանակերտը՝ մեծ դաստակերտը, Վարդանաշատը և Օշական ամրոցը, Փառախոտը, Սարդյանքը, Ջողակերտ ավանը և Արմավիրի բերդը, Կուաշ ավանը, Արուճը, Աշնակը և ամբողջ Արագածոտնը, Արտաշատի նահանգը և նույնիսկ Արտաշատն[99] ամբողջովին, ինչպես և նրա շուրջը գտնված բոլոր գյուղերն ու ավանները՝ առել, ավերել և կրակ է տվել և ձեր բոլորի ընտանիքները փախցրել-հեռացրել է իրենց բնակությունից։ Ձեռք է տվել նաև սուրբ եկեղեցիներին. տարել է նաև եկեղեցու սեղանի սուրբ անոթները. գերել է քահանաների ընտանիքներին, իսկ նրանց կապել ու բանտ է դրել. և ինքը ապստամբ սփռելով ու տարածելով ամեն կողմ՝ ամբողջ երկիրն ավերում է։ Եվ այն գունդը, որ Ատրպատականի կողմերում էր, չկարողացավ օգնության ձեռք մեկնել Միջնաշխարհին[100]։ Իսկ այնտեղ մնացած զորքը՝ փախուստ տալով այդ անօրենից՝ քաշվել է երկրի մի ծայրը և դեռևս պահում է Քրիստոսի սիրո միաբանության ուխտը ձեզ հետ։ Իսկ նրանք, ովքեր նրա հետ էին, ոմանք փախան ամեն մեկն իր տեղը, բայց ավելի բազմաթիվ են նրանք, ովքեր մոլորվեցին և հետևեցին նրա ամբարշտությանը»։

[Հայոց զորքը] խիստ շտապով չվեց այնտեղից՝ մեծ ավարով և ան-

---

1 է զանձինս փխ զօձիս ԲԴ ապստամբին ԳԵԺԼԿՀ ապստամբն ՄՏ^1 ապստամբութեանն 1—2 Ե յուխտէ ԲԴ յետս կացելոցն Կ յետս դարձեալ 2 Ա քրիստոնէութեան ԲԴ քրիստոնէից Դ և աւարեալ 3 Բ զձմերանոցն ԳԴԵԸԺԼԿ զձմերոցսն Հ զձմերնոցսն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ուր 4—5 ԳԵԸԺԽԿՀ զԱռնին և ԱՋԷԹԻV զԵրամաւանս ԲԳԵԸԺԽՀ Տ^{2}Տ^3 զԵրամաւնս Կ զԵրամանս ԴԼ զԵրամայինս A զԵրամայիս ԱԳԴԵՋԷԿՀ չիք և (զԴրասխանակերտն) ԱՋԷԹԻVՏ^3 զԴրսհանակերտն ԲՏ^2 չիք զԴրասխանակերտն Ժ զԴրսխանակերտն, զՎարդանաշատն, զՓառախոտն ԳԵԼԿ զԴրսխանակերտն Ը զԴրոնակերտն Խ զԴրսնակերտն Հ զՏրսխանակերտն ԵԸԼԽՀ չիք զմեծ դաստակերտն Բ զդաստակերտն մեծ, զՎարդանաշատն Դ զդաստակերտն մեծ զդաստակերտն 5 Կ զՎարդաշատն ԳԵԸԺԼԽԿ ՀՏ^{1}Տ^2 «Ոսյական» դնում են Արմաւրից հետո 5—6 ԱՋԷԹԻV զԱրդեանիսն, զՋողակերտ (ՋԷԻV զՋողկերտ(ն)) Լխ զԱրդեօնսն, զՋողակերն Գ զԱրդեաւնսն, զՋողկերն Դ զՍարդեաւսն, զՋողակերտաւն Կ զԱրդեանսն զՋողկերն աւան Հ զԱրդեօնսն, զՋողակերն Բ Սարդեաւսն, զՋաւղակերտօն, զբերդն Ամուր և զամուրն Օշական A զՑոլակերտն Թ Արմօրի 6—7 ԳԵԸԼԽԿ Արմարուիր և զամուրն Օշական, զԱրուճն և զԱշնակն, զԿուաշն աւան և Դ զբերդն Ամուր և զամուրն Օշական, զԱրուճն և զԱշնակն, զԿորշ աւան և Ժ զԱրդեօնսն, զՋողակերն աւան և զբերդն Արմաւիր և զամուրն Ուշական, զԱրուճն և զԱշնակն, զԿուաշն աւան և զամենայն ռամն Արագածու և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն Հ Արմարուիր։ չիք զԱրուճն և զԱշնակն Տ^2 զՍարդեօսն, զՋողակերտ Տ^3 զԱրդեանսն, զՋողակերտն Բ չիք զԿուաշն աւան Բ զԱշնակն, զԿորշն աւան և Գ ռամն Բ Արագածոյ 7—8 Բ զԱրտաշատ Դ Արտաշատ 8 Գ ինքն փխ ինքնին Բ զգեաւղս ԱՋ գեւղ Կ գեղս 9 Դ զնովաւն ԲԴ առեալ և աւերեալ 10 Դ փախուցեալ և մերժեալ 11 Գ ձեռնարկել 11—12 ԲԴ և տարեալ զսպաս սուրբ եկեղեցեացն ԳԿ չիք և ԵԸԺԼԽՀ և տարեալ զսպաս սուրբ սեղանոյն 12 է չիք սպաս Բ չիք սեղանոյ Կ սեղանոյն ԳԴԿ եկեղեցիս Հ յեկեղեցիս ԳԼԽԿ չիք եկեղեցւոյն ԲԳԴ քահանայիցն 13 Տ^{1}Տ^2 զնոսա ԲԴ և ինքեանք 14 է ապստամբեալ ԱԴԵՋԷԹԿՀ աւերէր Բ աւերեն Գ աւերել Թ զունդն 14—15 ԲԴ չիք էր ի կողմանս 15 է Անտրպատականի ԲԴ որ յԱտրպատականի ԵԸ ԺԽՀ ի միջոցս 16 Թ որք ԳԵԺԼԽԿՀ անդէն ԲԴ և զօրքն որ ընդ նմա անցեալ էին Ի կացեալ փխ մնացեալ 17 Ա յեզերս ԻԹ եզերս է յերզս V յեզրս ԳԿ չիք և է պահէին Բ ընդ քեզ փխ ընդ ձեզ ԱՋԷԹԿV ուխտ Գ ընդ մեզ ուխտ 17—18 Բ ուխտ միաբանութեամբ 18 ԲԴ չիք այն ԵԸԺԽՄՀՏ^{1}Տ^2 այնք ԵԺԽՄՀ նմա 19 ԲԳԹ բազում 20 ԲԴ մոլորեցան զհետ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 նորա ամբարշտութեան մոլորեցան ԸԽ չիք նորա 21 ԲԴՏ^2 Զայս յուեալ ԲԴ չու արարեալ ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չու առարարին Բ գնալ փխ դառնալ Բ չիք անդրէն Բ յաշխարհ Դ զնայր յաշխարհն Հայոց։

Հայոց մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ, և անտրտում ուրախութեամբ երգս ի բերան առեալ և սաէին ձայնիւ. «Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ո՛եհար զազգս մեծամեծս և սպան զիշխանս հզօրս, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա»։ Եւ զայս սաղմոս երգելով մինչև ի վախճան կատարեալ աղօթիւք փառատրրութիւն սուրբ Երրորդութեանն մատուցանէին։ Անդ յանձանձէր ածէր զօրավարն զկաց և զմնաց զօրականին առաջապահօք և վերջապահօք, կողմապահօք ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս հայրենի աշխարհին։

Ազդ եղև ուրացելոյն Վասակայ և իշխանացն որ ընդ նմա էին՝ քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշխարհին Աղուանից, և միաբանութիւնն ևս Հոնաց։ Մինչչև յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստեայ անկանէր յամուրս իւրոյ աշխարհին. և այնպէս տագնապաւ մերժեցաւ, զգերի և զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ, ակամայ զիւրն ևս ի վերայ եթող և փախեաւ։

Եւ քանզի ժամանակ ձմերայնոյ հասեալ էր, և զռոճիկս՝ թըշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զօրսն զարմանել. այս սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհի առ ի հանգիստ ձմերոցին։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութեամբ առ ժամանակ գարնայնոյն։ Եւ զսակաւս ի գնդէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ, բռնանայր ի վերայ՝ ունելով զթագաւորանիստ տեղիսն։

---

1 Տ^1 մեծութեամբ փխ մեծաւ ստիպով ԳԵԸԺԿՀ չիք և Լ չիք մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ Տ^1 չիք և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ 1—2 ԳԵ ԸԺԼԽԿՀ չիք և (անտրտում) ԲԴ մեծաւ աւարաւ և բազում փութով և ուրախութեամբ երգս Թ չիք և անտրտում ուրախութեամբ 2—3 ԴԵԸԺԼԽՀ չիք և Բ սաէին փխ և սաէին ձայնիւ Խ երգէին փխ սաէին 3 ԲԴ քաղցր է փխ բարի է 3—4 ԱԳ ողորմ փխ ողորմութիւն Լ չիք ողորմութիւն նորա ԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 որ փխ ո ԱԴԻ հար 4 ԲԳԴԵԸԺԼԽԿ ՀՏ^{1}Տ^2 բազումս փխ մեծամեծս Թ էսպան ԲԴ չիք և սպան 5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մեծամեծս փխ հզօրս ԲԴ չիք զի բարի է ԱԳ ողորմ Լ չիք ողորմութիւն նորա 6 ԱԳԵԶ ԸԺԻԼԽԿՀՏ^3 սաղմոսս ԳԵ վախճանն Դ չիք աղօթիւք 7 Թ սրբոյ ԲԴԽ արդ փխ անդ Ի անձանձէր 8 ԲԴ չիք ածէր Ե զզօրավարն V առաջապահօք 8—9 ԲԴԵԼՏ^1 չիք և վերջապահօք ԳԸԺԽՀ չիք և ԳԵԸԺԽ կողմնապահօք է չիք և վերջապահօք կողմապահօք 9 Կ կողմապահօք վերջապահօք ԲԴ հասուցանել է ցաւուրս Հ աւուրս 11 է ազդել (!) Թ ասա փխ ազդ ԲԴ ուրացողին ԵՀ ուրացելոյն Խ ուրացելոյն Վասակայ և ամենայն իշխանացն ԱԶԳէ նմայն Դ չիք էին 13 ԱԳԴԶԹԻԿ^1 զմիաբանութիւն Բ զմիաբանութիւնն Հոնաց է և զմիաբանութենէ ԵԸԺԼԽՀՏ^2 ևս և ԲԴԵԸԺԽՀՏ^2 չիք ևս Լ Հայոց փխ Հոնաց Հ Ցոնաց 13—14 Բ ելեալ միմեանց Դ չիք էին 14 ԲԴ նմա փխ նորա ԱԳԶէ

չափ հարստությամբ նորից Հայոց աշխարհը վերադառնալու համար. և անտրտում ուրախությամբ բարձր ձայնով երգում էին և ասում. «Գոհություն մատուցեք Տիրոջը, որովհետև նա բարի է, որովհետև նրա ողորմությունը հավիտենական է. ո՛վ ջարդեց մեծամեծ ազգերին և սպանեց հզոր իշխաններին, որովհետև նա բարի է, որովհետև նրա ողորմությունը հավիտենական է»։ Եվ այս սաղմոսը մինչև վերջը երգելով՝ կատարյալ աղոթքով փառք էին տալիս Սուրբ Երրորդությանը։ Այնտեղ զորավարը խնամքով հոգում-կարգավորում էր զորքի դրությունը առաջապահներով, վերջապահներով ու կողմնապահներով և երեսուն օրվա մեջ ողջ ու առողջ հասցրեց հայրենի երկրի սահմանները։

Լուր հասավ ուրացյալ Վասակին և նրա հետ եղած իշխաններին Վարդանի զորախմբի արիության ու քաջության մասին Աղվանից աշխարհում, ինչպես նաև հոների միաբանվելու մասին։ Դեռ միմյանց չէին հանդիպել, նա մի գիշերից օգուտ քաղելով՝ փախավ-ընկավ իր երկրի ամրոցները և այնպիսի տագնապի մեջ հեռացավ, որ Այրարատ գավառից վերցրած գերին ու ավարը, իրն էլ ակամա վրան ավելացրած, թողեց ու փախավ։

Եվ որովհետև ձմեռ ժամանակը վրա էր հասել, և պաշարները թշնամիների գունդն ավարել էր, [Վարդանը] չկարողացավ ամբողջ զորքը մի տեղում պահել ու մատակարարել, այլ սփռեց-տարածեց երկրի զանազան գավառները՝ ձմեռը հանգստանալու համար։ Պատվեր տվեց, որ կազմ ու պատրաստ լինեն գարնան պահին։ Եվ ավագ նախարարների խմբից քչերին իրեն գործակից թողնելով՝ ուժեղացավ և գրավեց թագավորանիստ տեղերը։

ԹԻԿ փախստական Դ չիք անկան[էր] (մնացել է միայն էր-ը) V արկանէր 15 Կ յամուրն Թ մերձեցաւ Դ և այսպէս տագնապաւ մերժեցաւ զի զգերի ԲԴ 15—16 զի զգերի և զաւար 16 ԳԵ աւարն Կ չիք և Դ յԱյրատ (!) Բ յԱյրարատեան Խ ակամա և Դ զիւր 17 V չիք ի վերայ 18 ԲԴԵԻԿՀ ժամանակն ևս Գ ժամանակն ձմերայնոյ Տ^2 ժամանակ ևս Բ և ռոճիկս Կ զռոճիկսն 18—19 Գ չիք ևս զռոճիկս—հարեալ էր» 19 ԲԴԹԻՏ^2 հատեալ փխ հարեալ 19—20 ԲԴ ոչ կարէր համագունդ զմիով տեղեաւ զզօրսն գումարել (Դ գումարեալ) ԵՀ ոչ կամէր ԵԼԽՀ միով Ժ միով տեղեաւ ԳԿ զզօրն 20 ԲԴ սփռեալ Լ տարածէր 20—21 Դ ընդ ամենայն աշխարհին Բ ընդ ամենայն գաւառս աշխարհին Հ աշխարհիս 21 Լ ձմերային Խ ձմերոցն Λ ձմերոցի Դ և պատուէր տուեալ Բ չիք հրամանի 22 ԲԴ կազմ փխ պատրաստական Ի լինիլ Բ չիք կազմութեամբ Ե կազմութեան ԲԴ առ ի ժամանակ ԴԵՕ գարնանոյն Լ գարնանային 23 ԲԴ սակաւս ի յաւագ նախարարացն ԷՀ սակաւս ԲԴ չիք ի գնդէն Դ առ իւր ժողովեալ գործակից ԱԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 առ իւր Բ առ իւր գործակից ժողովեալ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 թողոյր փխ թողեալ 24 Ը բռանայր (!) Դ չիք ունելով Բ բռնանայր ի վերայ թագաւորանիստ տեղեացն։

Եւ գունդս գունդս արձակէր յաշխարհն Սիւնեաց, առնոյր և աւերէր զբազում գաւառս. և այնպէս ի նեղ արկանէր զնա և զամենայն զօրսն որ ընդ նմա էին. զի զէշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին։ Եւ բազում հարուածս հասուցանէր ի վերայ ուրացելոյն. մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս հեղուցանէին ի վերայ չարաչար վշտացելոցն, որ բռնի և հետի վարէին զարս և զկանայս փափկասունս, և բազում աղայք զքարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց։

Իբրև այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած, և զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին։

Եւ զսոյն վայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երևեցաւ, գրեցին սուրբ եպիսկոպոսունքն և ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն. զի և նոքա աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, որպէս սկսաք ի նմին և կատարեսցուք։

Եւ զմի յառաջին կապելոցն Պարսկաց լուծեալ և ածեալ զառաջեաւ նախարարացն, խօսէին ընդ նմա և ցուցանէին զամենայն վնասն որ եղև, կամ աշխարհացն աւերել, կամ զօրացն արքունի հարկանել, և կամ որ այլ իրք առաջոյ լինելոց էին։ Եւ իբրև զայս ամենայն բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր ամբաստանութիւն երկոցունց կողմանցն՝ զառաքինեացն և զյետս կացելոցն.

---

1 Գ և գունդ ի գունդս յարձակէր ԲԴ ի յաշխարհն 3 Գ զօրս Հ որք ԲԴՏ² ընդ նմայն ԱԳՁԷԹVՏ³ էր փխ էին Ի չիք էին Գ զէշ և զձի Ե էշս Λ մեռելոտի 4 ԱV վտանգի Λ հասուցանէին Բ անցուցանէր Դ անցուցանէ 5 Λ ուրացելոցն ԲԴՏ² ուրացելոյն Վասակայ ԲԴ չիք սուրբ է ուխտի 6 Ե քահանայութեան 7 Բ վտանգելոցն Դ վտանգելոցն Թ վշտացն փխ վշտացելոցն է հետևակ Հ յետևս Դ զարս 8 ԱՁԷԻV զփափկասունս Թ աղայս Ի հարեալք ԵԸԺԼԽՀՏ¹ ընկեցեալ 10 Դ եւ իբրև Բ եւ իբրև այս ամենայն յաջողեցաւ Դ աջողացաւ ԴԾԿ յաջողութիւն Թ աջողութիւնք 11 ԱԴԵՁԷ ԸԹԻՏ¹Տ² եպիսկոպոսք Բ ամենայն երիցունքն և եպիսկոպոսունքն Դ եպիսկոպոս Հ երիցունք 11—12 ԲԴ չիք պատուէր հրամանի տուեալ աշխարհին 12 Խ Քաղոց 13 ԲԴԵԸԺԽԿՀՏ² մեծապէս խնդրուածս է մեծամեծ խնդրուածս ԳԸԺԼԽԿՀՏ¹ յԱստուծոյ 13—14 ԲԴ յաջողութեանն Դ աջողութեանն ԵԸԺԼ աջողութեան ԽԾԿՏ¹Տ² յաջողութեան փխ յաղթութեանն ԲԴ խառնէին Թ ի տօն սուրբ Դ տօնն Հ չիք ս յաղթութեանն—Քրիստոսի զիս 14 ԵԷ յայտնութեան Ժ չիք զի 15 Բ կացցեն ԲԴ բառ փխ ընդ չիք անանց

Եվ գունդ-գունդ զորք էր ուղարկում Սյունյաց երկիրը, առնում ու ավերում էր շատ գավառներ. և այնպես նեղը լծեց [Վասակին] և նրա հետ եղած ամբողջ զորքին, որ սովի վտանգից անխտիր սատկած էշերի և ձիերի միս էին ուտում։ Եվ շատ հարվածներ էր հասցնում ուրացյալին. այնպես որ սուրբ եպիսկոպոսների ժողովն ու քահանայության ամբողջ ուխտը դառն արտասուք էին թափում չարաչար տանջվածների վրա, որովհետև բռնի ու ոտքով էին քշում տղամարդկանց ու փափկասուն կանանց և շատ տղաների քարերին խփելով սպանեցին-գցեցին ճանապարհների վրա։

Երբ աստծու երկյուղածներն այս ամեն հաջողությունները ունեցան, բոլոր եպիսկոպոսներն ու երեցները հրաման արձակեցին ժողովրդին՝ ամբողջ Քաղոց ամիսը[101] պահքով ու աղոթքով խնդրվածք անել աստծուն, և պատերազմների հաղթության տոնը խառնել Քրիստոսի Հայտնության սուրբ տոնին, որպեսզի այս մեծ հիշատակը անխափան մնա աստվածային անանց տոնի հետ։

Եվ աստծու այս բոլոր այցելությունները, որոնք մեծապես երևացին Հայոց աշխարհի վրա, սուրբ եպիսկոպոսները գրեցին և ուղարկեցին Հույների երկիրը, մեծ քաղաքը՝ եկեղեցու սուրբ ուխտին, որպեսզի նրանք էլ աղոթք անեն և աստծուց խնդրեն՝ որ ինչպես սկսել ենք, այնպես էլ ավարտենք։

Եվ նախկին բռնված պարսիկներից մեկին [կապանքներից] ազատեցին ու բերին նախարարների առաջ. նրա հետ խոսում էին և ցույց էին տալիս այն բոլոր վնասները, որ եղան. թե՛ երկրների ավերվելը, թե՛ արքունի զորքերի ջարդվելը և թե՛ այն բաները, որ դեռ պետք է լինեին առաջիկայում։ Եվ երբ այս բոլորը լրիվ հասկացրին նրան, երկու կողմերն էլ՝ թե՛ առաքինիները և թե՛ հետ կացածները՝ միաբան-

---

16 Կ չիք տօնին 17 Դ սոյն Կ չիք զայս Կ զամենայն ԱԵՁԷԹԺԿ զայցելութիւնս 18 Բ Հայոց աշխարհիս ԳԻԵԸԺԽԿՀՏ² Հայոց աշխարհին ԼԾՏ¹ Հոնաց(՞) աշխարհին 18—19 ԱԲԳԻԵՁԷԹԻՀՏ² եպիսկոպոսքն 19 Թ տանել 19—20 Բ և սուրբ եկեղեցիսն Դ ի սուրբ եկեղեցիսն 20 Բ արասցեն խնդրելով 21 Բ զի որպէս սկսաք Դ զի որպէս կամք և որպէս և 22 Տ³ կապելոց Դ պարսկացն 22—23 ԲԴ լուծեալ ածեն առաջի Տ¹ առաջի 23 ԲԴ ցուցանէին նմա 24 ԵԸԺԽ վնասսն ԲԴ որ եղեն ԱԲԴՁԷԹVՏ³ աւերելն 24—25 ԳԵԸԺԼԽԾԿՀՏ¹Տ³A աւերել։ հարկանել ի աշխարհաց աւերին ԳԵԸԺԽԿՀ և կամ զօրացն ԱՁԹԻVՏ³ հարկանելն ԲԴ չիք կամ զօրացն արքունի հարկանել 25 ԲԴ առաջի ԲԴ լինելոց էր Գ զայն ԵԸԺԼԽԵՏ¹ չիք զայս 26 ԵԸԽ զամենայն ԲԴ չիք բովանդակ ԲԴՏ² ցուցանէին Թ չիք նմա 26—27 է ամբաստանութեան (՞) Կ ապստամբութիւն ԲԴՏ² ամբաստան զերկոցունց կողմանցն 27 ԳԵԸ ԺԼԿՀ զերկոցունց Λ առաքինեացն և յետս կացելոց։

ո՞րպէս զուր և տարապարտուց նեղեաց զնոսա ի հայրենի օրինացն յետս կալ, և զխաբէութիւն ապստամբին Վասակայ, որպէս Հայոց բանիւ խաբեաց զթագաւորն, յանձն առնուլ զմոգութիւն. իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ, նա յանձնէ սուտակապաս լինէր։

Իբրև լիով զայս ամենայն իմացուցին, արձակեցին զնա հրեշտակութեամբ յաղերս ապարանութեան և ի հնարս հայթայթանաց, թերևս կարասցեն զեղբայրս իւրեանց ի նեղութենէն զողանալ։

Այլ առ նա՝ անօրէնն Վասակայ գուժկանքն յառաջագոյն հասեալ էին, պատմել զաղէտս տարակուսանացն, զոր անցուցեալ էր ընդ զօրսն արքունի. և ամենայն ամբաստանութիւնն ի սուրբ ուխտ եկեղեցւոյն կրթեալ էր։ Քանզի այն իսկ կամք էին անօրինին, եթէ զմիաբանութիւն եպիսկոպոսացն քակտեսցէ ի նախարարացն. և զայս ոչ էր տեղեկացեալ ռամկաւին, եթէ հոգի և մարմին բաժանիցին առ ժամանակ մի՝ գոյ տեսանել ի բնութեանս, այլ որ սիրովն Աստուծոյ յուխտ մտեալ է՝ այսմ անհնար է լինել։

Արդ երթեալ այրն ի տեղի ձմերոցին, պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին, շարժեալ դողացոյց, որ և յամենայն զօրութենէն պակասեալ լռաւ. մանաւանդ զի յարևելից պատերազմէն կորակոր և ոչ բարձրագլուխ էր դարձեալ։ Իբրև ստուգեալ հաստատեաց ի վերջին հրեշտակէն, որ եհաս առ նա, զամենայն վնասս զիւր գործոցն զխորհրդակցօքն արկանէր։ Եւ անդէն շիջանէր ի բազմարոյ բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատտուացն, որ անդադար յորդորէին զնա ի գործ դառնութեան։ Խոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն, և զվայրենացեալ սիրան դարձոյց ի մարդկային բնութիւն. հայեցաւ և ետես զինքն լի տկա-

---

1 ԲԴ չիք զուր A նեղեցան 2 ԲԴ կացուցանել փխ կալ Հ յետս կացեալ Բ և խաբէութիւն ապստամբութիւնն Դ և խաբէութեամբն ապստամբութեամբն Վասակա թէ ԱԹ ապստամբ ԳԵԺԼԽՀ ապստամբն 3 V խաբանեաց(!) ԲԳԴԿ զմոգութիւնն Ժ մոգութիւնն 4 ԳԿ ընդ նոսա ԲԴ ուրուք բանս եդեալ ընդ նմա՝ այլ նա ԳԿ սուտապատակ Ե սուտակապատակն ԸԺԼԽՀ սուտապատակ Թ սուտապատս S^1 սուտապատակ լինել 5 Դ իբրև զայս ամենայն ծանուցին ԵԸԺԼԽՀS^1S^2 եւ իբրև ԵԸԺԼԽՀS^2 իմացուցին նմա 5—6 ԲԴS^2 հրեշտակութեամբ յաղերսաբանութիւնս 6 ԱՋԷԸԹԻV յաղերսաբանութեան ԳԵԺԼԽԾԿՀS^3A յաղերս ապարանութեան ԲԳԵԸԺԼԽԿՀS^2 չիք և Կ խայթայթանաց 7 ԴԷ ԸԼԽ զեղբարս ԲԴS^2Ի մեծ նեղութենէն Ի զողանալ ի նեղութենէն ԵԸԺԼԽՀS^1S^2 ի նեղութենէն զողանալ զեղբարս իւրեանց 8 Բ յանօրէն Դ այլ յանօրինէն Վասակա գուժկանք հասեալ էին յառաջագոյն Ի անօրինին Խ հասեալ էին յառաջագոյն 9 ԲԳԴԵԸ ԺԼԽՀS^1S^2 պատմելով ԵԸԺԼԽՀS^1 որ անցեալ էին ԲԴS^2 զոր անցուցեալ էին Դ զօրս 10 ԵԷԺՀ ամբաստանութիւն Կ ապստամբութիւնն 10—11 ԲԴ եկեղեցին փխ ուխտ եկեղեցւոյն 11 ԲԴ կրթէր ԸԽ չիք քանզի Ժ չիք այն իսկ Դ չիք իսկ ԵԼԽՀ քանզի կամք

վեցին ու ամբաստանեցին, թե ինչպե՞ս զուր և անտեղի ստիպեց նրանց հայրենի կրոնից հրաժարվել, և ապստամբ Վասակի խաբեությունը, որը թագավորին խաբեց՝ որպես թե հայերը հանձն են առնում մոգությունը, մինչդեռ ոչ ոք նրան խոսք չէր տվել, այլ նա ինքն իրենից քծնելով խաբել էր։

Երբ այս ամենը լիովին հասկացրին, նրան պատգամավոր ուղարկեցին [թագավորի մոտ]՝ եղածն արդարացնելու և հնարքներ գտնելու, որ թերևս կարողանան իրենց եղբայրներին նեղությունից ազատել։

Բայց նրա մոտ անօրեն Վասակի գուժկաններն ավելի առաջ էին հասել, որ պատմեն արքունի զորքի գլխով անցած բոլոր աղետները, և ամբողջ մեղքը գցել էր եկեղեցու սուրբ ուխտի վրա։ Որովհետև անօրենի կամքն հենց այն էր, որ եպիսկոպոսների միաբանությունն անջատի նախարարներից. բայց այն բանը դեռ չէր իմացել, որ բնության մեջ պատահում է, որ հոգին ու մարմինն առժամանակ բաժանվում են միմյանցից, բայց ով որ աստծու սիրով է ուխտ կապել, այդ բանը չի կարող լինել։

Արդ, այն մարդը գնալով ձմեռոցի տեղը[102], այս ամենը պատմեց թագավորին, շարժեց-դողացրեց նրան, և նա իր բոլոր ուժը կորցրեց-թուլացավ. մանավանդ որ արևելքի պատերազմից կորագլուխ էր վերադարձել և ոչ թե բարձրագլուխ։ Երբ իրեն մոտ հասած վերջին պատգամավորից ստուգեց ու հաստատեց ամեն ինչ, իր գործերի անհաջողության ամբողջ մեղքը խորհրդակիցների վրա գցեց։ Եվ այն ժամանակ մարեց նրա բոցավառ բորբոքումը, որովհետև փակվեց չար խրատտուների բերանը, որոնք անդադար հորդորում էին նրան դժնդակ գործեր կատարել։ Խոնարհվեց իր բարձր հպարտությունից և վայրենացած սիրտը մարդկային բնության փոխարկեց. նայեց ու տեսավ, որ ինքը լի է տկա-

---

անօրինին այն իսկ էին ԲS^2 կամք էին առէ անօրինին ԸԺS^1 կամք անօրինին այն իսկ էին ԳԵԸԺԿՀ թէ 12 A քակեսցէ ԲԴS^2 քակել կարասցէ 12—13 ԲԳԴԸԺԼԽԿՀS^2 և զայն 13 ԱՋ տեղակացեալ ԸՀ տեղեկացեալ նորա ԵԸԺԼԽՀ նորա ռամկաւին Բ և եթէ ոգի Ի չիք հոգի ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ոգի 13—14 Բ բարժանեսցեն ԴԵ բաժանեսցին 14 Բ ի բնութիւնս Դ զբնութիւնս Ը բնակութեանս (!) Դ չիք որ 15 Գ չիք Աստուծոյ Թ ուխտ Ի լինիլ 16 ԲԴ զայն 17 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք որ 18 Դ զօրութենէ 19 ԲԴS^2 կորիկոր ԲԴ ոչ բարձրիգլուխ դարձեալ էր ԲԴ եւ իբրև 20 Բ ի նա փխ առ նա 21 Ա զվնասս ԳԿ վնաս ԲԹ իւր ԵԸԺԼԽS^1S^2 իւրոյ գործոյն 22 Դ խցան բերանք 22—23 Խ խրատտուացն Բ չարախրատտուացն ՀS^2 խրատատուացն Թ խրատուացն (!) A խրատուցն ԳԸԺԿ դառնութեանն 23—24 Է խորհեցաւ փխ խոնարհեցաւ 24 Է զվայրեացեալ 25 Բ բնութիւնս ԲԴ հայեցեալ ետես ԲԴ ի տկարութեան փխ լի տկարութեամբ է լիակատարութեամբ (!)։

րութեամբ. գիտաց եթէ զամենայն զոր կամի առնել՝ ոչ կարէ կատարել. վասն այնորիկ և դադարեաց յանդուգն յարձակմանէն, և լռեցոյց զմոլեգնոտաբար գոչումնն։

Եւ որ մեծաձայն բարբառով որոտայր, և ես ահագին հրամանօքն զհեռաւորս և զմերձաւորս դողացուցանէր, սկսաւ քաղցր և աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան և ասել «Զի՞նչ ինչ վնաս գործեալ է իմ, և զո՞ր յանցս յանցուցեալ կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր։ Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Արեաց, և իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են. ո՞ երբէք նեղեաց պնդեաց դարձուցանել ի մի օրէնս մոգութեան. մանաւանդ վասն օրինաց քրիստոնէութեանն, որպէս հաստատուն և ճշմարիտ կացեալ են յիւրեանց դենին, նոյնպէս և առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշտսն նոքա երևեալ են։ Եւ բիծ իսկ ոչ կարէ ոք դնել ընտրեալ օրինաց նոցա. այլ զոյգ և հաւասար համարիմ դենիս մազդեզանց, որպէս և յարգեալ իսկ էին նոքա առ նախնիօքն մերովք, զոր ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն իմով, որ նստէր ի մեծ գահոյս յայսմ։ Յորժամ սկսաւ անդաճել և քննել զամենայն ուսմունս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զամենեցուն. վասն այսորիկ մեծարեալք շրջէին ի Դրան արքունի, և առատաձեռն պարգևօք երահիկք լինէին ի նմանէ, և համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն երկիր։ Նա և որ գլխաւորքն էին քրիստոնէից, զոր և եպիսկոպոս անուանեն, ընծայից և պատարագաց արժանիս առնէր զնոսա։ Եւ իբրև հաւատարիմ ոստիկանս յանձն առնէր նոցա զհեռաւոր մարզ-

---

1 Դ գիտացեալ ԲԴՏ² զոր ինչ Գ ոչ կամի փխ ոչ կարէ Դ   1—2 կամի առնել՝ ոչ կատարեալ կարասցէ   2 ԳԵԸԺԽՏ¹Տ² այսորիկ ԲԴ չիք և ԲԳԵԸԺԼԽԿՀՏ² ի յանդուգն ՁV յանդուգն է յանդունդքն(!)   3 ԵԺԼԽՀՏ¹Տ² զմոլեգնաբար գոչումն ԲԴ դգոչումնն ԳԻ գոչումն V գոչմունն   4 ԲԴ չիք եւ ԵԸԺԼԽՀՏ¹Տ² մեծաբարբառ ձայնիւ ԲԳԴԿ բարբառովն ԲԴ չիք ես   4—5 Բ հրամանաւ Դ հրամանաւն   5 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² առհասարակ դողացուցանէր   6 Դ աղերսաբանութեամբ Ի խօսիլ ԼՏ¹ չիք խօսել ԲԴ և ասէ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ² չիք ինչ ԱՁԷԹԻVՏ³A զինչ ինչ   7 ԳԵԸԺԼԽՀ էր փխ է ԳԵԺԼԽՀ չիք իմ ԱԳՁԷԻV և կամ և զոր Թ չիք և (զո՞ր) Տ² յանցուցեալ է իմ Բ և կամ զո՞ր վնաս և զանցս յանցեալ է իմ V անցուցեալ ԹԵՁԷ յանցանս Ի և կամ զո՞ր յանցանս յանցուցեալ Դ և կամ զո՞ր վնաս և զյանցանս անցեալ եմ ԳԵԺԼԽԿՀ յանցանս յանցուցեալ էր   7—8 ԲԴ և կամ առ անձն   8 Ը անձին   9 Ը Այրեաց ՁԹԻV չիք են ԲԴ ուսմունք փխ պաշտամունք ԲԴ ո՞վ   10 Տ² չիք երբէք Ե մոգութեանն   11 ԲԳԴԵԺԿՀ քրիստոնէութեան ԳԿ չիք և   12 ԲՏ² չիք են ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ² սոյնպէս   13 ԳԵԸԺԼԿՀՏ¹Տ² զայլ փխ զամենայն ԵՀ կեշտն (լուսանցքում՝ կրօնսն) ԸԺԽ կեշտն (լուսանցքում՝ կրօնսն) Թ կեշտսն (լուսանցքում՝ կրօնք) ԲԴ նոքա լաւագոյն են Բ քան զայլ կեշտս A երևեալն Դ չիք նոքա երևեալ են   13—14 ԳԺ ոչ ոք կարէ դնել Կ չիք ոք ԲԴ և ոչ ոք կարէ բիծ

րությամբ. հասկացավ, որ չի կարող կատարել այն ամենը, ինչ որ կամենում է. այդ պատճառով էլ ետ կացավ այն հանդուգն հարձակումից և վերջ տվեց մոլեգնոտ գոռում-գոչումին։

Եվ նա, որ ահագին ձայնով որոտում էր և է՛լ ավելի ահեղ հրամաններով դողացնում էր հեռավորներին ու մերձավորներին, սկսեց քաղցր և աղերսական խոսքերով խոսել բոլորի հետ և ասել. «Ես ի՞նչ մի վնաս եմ տվել կամ ի՞նչ հանցանք եմ գործել որևէ ազգի կամ ժողովրդի կամ առանձին անձի դեմ։ Չէ՞ որ Արյաց աշխարհում ահա բազմաթիվ կրոններ կան, և յուրաքանչյուրի պաշտամունքը հայտնի է։ Ո՞վ երբևիցե նեղեց-ստիպեց [նրանց]՝ մոգության կրոնին դարձնելու համար. մանավանդ քրիստոնեական կրոնի վերաբերմամբ. ինչպես որ հաստատ ու հավատարիմ են մնացել իրենց հավատին, այնպես էլ մեր աչքում բոլոր կրոններից բարձր նրանք են երևացել։ Եվ ոչ ոք չի կարող որևէ բիծ դնել նրանց ընտիր կրոնին, այլ զուգահավասար եմ համարում մեր մազդեզանց հավատին, ինչպես որ նրանք հարգված էլ էին մեր նախնիքների օրով, որը և ես ինքս էլ հիշում եմ իմ հոր[103] ժամանակից, որը նստած էր այս մեծ գահի վրա։ «Երբ նա սկսեց հետազոտել և քննել բոլոր կրոնները և հաստատ կերպով վերահասու եղավ, ամենից վեհը գտավ բոլորի մեջ քրիստոնեական կրոնը. այս պատճառով էլ մեծարանքներով շրջում էին արքունի պալատում և նրանից առատաձեռն պարգևներ ստանալով ուրախանում էին և ազատ-համարձակ շրջում ամբողջ երկրում։ Նույնիսկ քրիստոնյաների գլխավորներին, որոնց եպիսկոպոս են կոչում, ընծաների և պարգևների էր արժանացնում։ Եվ ինչպես հավատարիմ ոստիկանների՝ նրանց էր հանձնում հեռավոր մարզերը

դնել ԵԸԼԽՀՏ¹Տ² ոչ ոք կարէ   14 Բ ընտրութեան փխ ընտրեալ   15 ԵԸԹԺԽՀ մազդեզանց (լուսանցքում՝ ԵՀ հաւատոյ հաւատոյն ԸԺ հաւատոյ հաւատոյս Թ հաւատոյս հաւատ Խ հաւատոյ հաւատ) Դ կարգեալ փխ յարգեալ Բ չիք իսկ   16 ԲԳԼ զոր և Դ և ես իսկ ինձէն ԵԺԽՀ և ես   17 ԲԴ չիք մեծ Բ ի գահոցս յայսմ Դ ի գահոյս յայս Գ գահուս Կ այսմ ԸԽ այս փխ յայսմ ԵԺԼԽՀ գահիս յայս Տ² գահիս յայսմ Տ¹ ի մեծ գահս յայս Հ յայնժամ ԲԴՏ² ընդաճել   18 ԸԽ չիք առաւել   19 ԲԳԴԵԸԺԽԿՀՏ² այնորիկ   19—20 ԱԲՁԷԹԻVՏ³ մեծարեալք և պատուեալք շրջէին ի դրան արքունի ԵԺ մեծարեալ շրջէին Դ մեծարանօք և պատուովք շրջէին ի դրան արքունի   20 Հ լինէին փխ շրջէին A եկանէին փխ շրջէին   20—21 ԲԴ և առատաձեռն լինէին պարգևօք ի նմանէ նոցա ԱՁԷԹԻԼVՏ³ երահիկք ԳԵԸԺԽԿ երաիհք Ծ երագհք Բ չիք երահիկք A երահք   22 ԱԳԴՁԷԿ քրիստոնէիցն ԳԴԽ չիք և   22—23 ԲԴ զոր եպիսկոպոսքն ասեն Գ եպիսկոպոսս ԴՀ եպիսկոպոսք ԵԺԿ եպիսկոպոսն է անուանեցին   23 ԴԼՏ¹ պարգևաց փխ պատարագաց ԲԳԴԽԿ արժանի Ե արժանին   23—24 ԵԼԿՀ եւ իբրև ԷԹԻA չիք եւ A իբր   24 ԸԽ և յանձն առնէր ԸԽ չիք իբրև հաւատարիմ ոստիկանս ԵԸԼԽՀ չիք նոցա։

ցին, և ոչ երբէք սխալ լինէր ի մեծամեծ իրացն արքունի։

«Եւ դուք զմի զայն երբէք ոչ յիշեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ, խօսելով զնոցանէ զամենայն չարութիւն։ Տեսէք՝ զի նոքօք գործել ինձ զոր ինչ ոչ կամէի, և եղեն վնասք մեծամեծք ի սահմանսն ի մէջ երկուց անհաշտ թշնամեացս։ Եւ մեք դեռ ի հեռաւոր ճանապարհի, և ոչ մի ինչ գործ պատերազմիս ի գլուխ երթեալ, և դուք առաջին յիմում տանս յարուցէք ի վերայ իմ պատերազմ, որոյ չարագոյն ևս լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն»։

Զայս ամենայն և առաւել քան զսոյն խօսէր ընդ ամենայն աւագանին, և զվնասս յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն։ Եւ ամենայն վզուրկքն և պատուական նախարարքն, որ ներքոյին յատենին և ունկն դնէին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին, և զգլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ։

Բայց սակաւք ի նոցանէ զմիտս հաճելով՝ ասէին զայս. «Այո, արքայ քաջ, այդ այդպէս է որպէս ասացերդ, և արդ կարես զամենայն ուղղութեամբ նուաճել. չիք ինչ այն որ ըստ քո կամաց արտաքս կարէ ելանել. զի տուեալ է քեզ աստուածոցն, զի զամենայն զոր և կամիս՝ կարես առնել։ Մի՛ նեղեալ տագնապիր յանձն քո և հարկաներ զմիտս մեր ամենեցուն. Թէպէտ և դիւր իցեն հնարք իրացն կատարածի։ Երկայնամիտ լեր, և համբերութեամբ թողացո մարդկանց անդրէն զքրիստոնէութիւն, և դոքօք զատամբակսն ածցես ի հաւանութիւն»։

---

1 ԲԳԵԼԽԿՀ մարգն Դ մարձն Թ մարզսն (լուսանցքում՝ հաձ կամ հարկն) ԺՏ^{1}Տ^2 արժանի առնէր զնոսա և իբրև հաւատարիմ ոստիկանս յանձն առնէր զհեռաւոր մարզն Դ աշխ. ԲԳԴԵԺԼԿՀՏ^2 չիք ի և չիք ի մեծամեծ   2 ԲԴ չիք երբէք Ը ոչ երբէք է յիշէք և ոչ յիշեցէք երբէք ԲԳԴԺ հանապազ   2—3 Ի ձանձրացուցիք   3 Թ զլսելիքս է զնմանէ   3—4 ԲԴԸԼԽԿՏ^{1}Տ^2 տեսանէք Ի տեսիք ԵՀ տեսանէր զի   4 Դ գործել զամենայն։ չիք ինձ ԵՀ նոքօք ինձ գործել ԸԺԽՄՏ^2 ինձ գործել   4—5 ԽՏ^2 եղէն ինձ մեծամեծ վնասք ԵԸԺԼԽՀ մեծամեծ վնասք   5 ԲԴ և ի մէջ ԲԳԵԺԽ թշնամեացն   6 ԲԴ ճանապարհի էաք ԳԿ մեծ գործ A ի պատերազմիս   6—7 Բ ի գլուխ չէր երթեալ   7 Դ երթեալ է Ըխ չիք և դուք առանձն յիմում տանս ԹԻ յարուցիք A չիք իմ   8 ԲԴ կատարած ԲԴ չիք իւր Դ կատարածն իւրաքանչիւր   10 ԵԸԺԼԽՀ զսոյնս   11 ԲԳԴԽԿ զվնաս Դ զմոգպետին   11—12 ԼՏ^1 զմոգօքն և զմոգպետաւն   12 Ըխ չիք ամենայն ԵՎ զամենայն ԱՁԻԼՀՎՏ^{1}Տ^3 վզրուկքն ԲԴէ վզրուկ Թ վզրուկքն (լուսանցքում՝ մեծ)՛ ԵԺՀ վզուրկքն (լուսանցքում՝ մեծքն) A նախարարք ԲԴ որք   13 Ը յեղուկ ԳԵԸԺԽԿՀ ամաչեալ   14 Բ չիք և Գ զգլուխսն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 և զգլուխս ԱԲՁԷԹԻՎՏ^{3}A զգլուխ Գ ոչ իշխէին   14—15 ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ամբառնալ   16 Բ բայց սակայն ոմանք ի նո-

և երբեք չէր սխալվում արքունի մեծամեծ գործերը [նրանց հանձնելով]։

«Իսկ դուք այս բաներից ոչ մեկը երբեք չհիշեցիք, այլ ամեն օր ականջներս ձանձրացրիք՝ ամեն տեսակ չարություն խոսելով նրանց մասին։ Տեսեք, որ ինձ գործել տվիք այն, ինչ որ չէի ուզում, և մեծամեծ վնասներ եղան երկու անհաշտ թշնամիների միջև եղած սահմաններում։ Եվ մինչդեռ մենք դեռ հեռավոր ճանապարհին ենք և այս պատերազմի ոչ մի գործը գլուխ չենք հանել, դուք այստեղ իմ տան մեջ պատերազմ հարուցիք իմ դեմ, որի վերջն ավելի վատթար է լինելու, քան արտաքին թշնամիների դեմ մղած պատերազմինը»։

Այս ամենը և սրանից էլ ավելին էր խոսում բոլոր մեծամեծների հետ և մեղքն ու հանցանքը գցում էր մոգպետի ու մոգերի վրա։ Եվ բոլոր վզուրկներն ու պատվավոր նախարարները, որոնք նստած էին ատյանում և ականջ էին դնում նրա հեղհեղուկ խոսքերին, ամաչելով գլուխները կորացնում էին և գետնին էին նայում, և չէին կարողանում գլուխները վեր բարձրացնել։

Բայց նրանցից մի քանիսը թագավորին հաճոյանալու համար այսպես ասացին. «Այո՛, քա՛ջ արքա, այդ այդպես է, ինչպես ասացիր, և այժմ կարող ես ամեն ինչ ճշմարտապես նվաճել. չկա այնպիսի մեկը, որ կարողանա քո կամքից դուրս գալ. որովհետև աստվածները քեզ այնպիսի [իշխանություն] են տվել, որ ինչ կամենում ես, կարող ես անել։ Մի՛ սրտնեղիր ու տագնապիր ինքդ քո մեջ և մի՛ կտրիր մեր բոլորիս սիրտը. գուցե գործերին վերջ տալու համար մի հեշտ հնարք գտնվի։ Սիրտդ լայն պահիր և համբերությամբ թույլ տուր այդ մարդկանց նորից քրիստոնեական կրոնը պաշտելու, և դրանց միջոցով ապստամբներին հավանության կբերես»։

ցանէ ԲԴԵԺԼԽՀ զմիտսն ԳԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք զայս ԲԴ չիք այո   17 A արքայ քաջ, արքայից արքայ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 այս, քաջ և մեծ արքայ ԲԳԴԵԸԺԿՀ զոր փխ որպէս Լ այսպէս է զոր և որ այդպէս է ԽՏ^{1}Տ^2 զոր ասացերդ ԲԴ բայց և արդ   17—18 ԲԴ զամենայնն   18 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 վճարել փխ նուաճել ԵԸԺԼՀՏ^{1}Տ^2 այն որ փխ ինչ այն և չիք ինչ ԳԵԸԺԻԽՄԿ ՀՏ^{1}Տ^2 կամս Զ կամաց (!)   18—19 Դ կարէ ելանել արտաքս Ժ ըստ քո կամս արտաքս ելանել կարէ   19 Տ^{1}Տ^2 յաստուածոցն ԲԳԴԵԺԼԽՀՏ^2 չիք զի (զամենայն)   20 Դ զոր ինչ փխ զոր և ԲԳԵԸԺՀ չիք և Գ կարող ես Դ չիք կարես   19—20 Ի տուեալ է քեզ աստուածոցն՝ զամենայն ուղղութեամբ վճարել և զամենայն զոր կամիս՝ կարես առնել Դ մի՛ նեղիս տագնապել   21 Գ չիք մեր Բ թերևս դիւրին իցեն Դ թերևս դիւրին իցէ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 թերևս դիւրին ևս իցեն Թ դիւրք ԱԳԵԺԻԼԽԿՀ   21—22 իրացդ   22—23 ԱՁԷՎՏ^3 զքրիստոնէութիւն ԲԴ անդէն (Դ անդրէն) թողացո զքրիստոնէութիւն մարդկանն (Դ մարդկան) և այդոքիւք ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 անդրէն թողացո (Տ^2 դողացո) զքրիստոնէութիւն մարդկանց   23 ԱՁԷԹԻՎՏ^3 զապստամբսն ԵԸԺԽՀ զատամբակսն (լուսանցքում՝ ղանիրասն)   23—24 ԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^2 ածես։

Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին. և անդէն վաղվաղակի կոչէր զառաջեաւ յամենայն ազգացն որ ունէին զքրիստոնէութիւնն, որ ի զօրու նորա էին, և բռնաբար արգելեալ էր զնոսա, զի մի՛ ոք իշխան լիցի յանդիման պաշտել զԱստուած։ Քանզի որ ընդդէմ կացին, չարչարեաց և արգել ի նոցանէ զյայտնի պաշտօնն, և ոմանց ոմանց ակամայ երկիր ետ պագանել արեգական, և նստոյց ի սուգ տրտմութեան զամենայն զօրականսն։

Իսկ այն օր հրամայէր անդրէն համարձակութեամբ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոնէութեանն։ Իսկ որք յանցաւորքն էին, ոչ կամէին վաղվաղակի առանց մեծի ապաշխարութեան գալ և խառնել ի կարգ քրիստոնէութեան, հրամայէր թագաւորն՝ զի բռնի կալցին և տարցեն յեկեղեցին իւրեանց։ Եւ երիցանցն համարձակէր, որպէս զիարդ և գիտիցեն՝ ըստ կարգին իւրեանց արասցեն։ Եւ զհատեալ ռոճիկսն կարգէր անդրէն իւրաքանչիւր, և զարգելեալ բազմականսն ի նոցանէ՝ ի տեղի հրամայէր մատուցանել, և հանապազորդ յարքունիս մտանել ոչ արգելույր զնոսա. և զամենայն որ զիարդ և կարգեալ էին յառաջագոյն՝ անդրէն յօրինէր։ Խոնարհէր և խօսէր ընդ նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն։

Եւ իբրև զայս ամենայն արար և կարգեաց, յանդիման նոցա թողութեան հրովարտակս առաքէր ընդ ամենայն երկիր իշխանութեան տէրութեան իւրոյ վասն քրիստոնէից։

«Եթէ ի կապանս ոք կայցէ, արքունի հրամանաւ արձակեալ լիցի. և եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն։ Սոյնպէս և երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգևականք և եթէ քակագինք, և հանեալ ուրուք իցէ, հրամայեցաք զի դարձցին»։

Այս խոսքը հաճելի եղավ թագավորին. և անմիջապես իր առջև կանչեց իր զորքի մեջ գտնված ամեն ազգի պատկանող քրիստոնյաներին, որոնց բռնությամբ արգելել էր, որ ոչ ոք չհամարձակվի իր ներկայությամբ աստծուն պաշտել։ Որովհետև ովքեր ընդդիմացան, չարչարեց և արգելեց նրանց հայտնի պաշտամունք կատարել, ոմանց էլ ակամա երկրպագել տվեց արեգակին և բոլոր զորականներին տրտմության ու սգի մեջ գցեց։

Իսկ այն օրը նորից հրամայեց, որ համարձակորեն առաջվա պես հաստատ մնան քրիստոնեական կրոնի մեջ։ Իսկ ովքեր հանցավոր էին, չէին կամենում անմիջապես, առանց մեծ ապաշխարության, գալ ու խառնվել քրիստոնեության շարքին, թագավորը հրամայում էր այդպիսիներին բռնությամբ վերցնել և տանել իրենց եկեղեցին։ Եվ երեցներին էլ իրավունք տվեց, որ ինչպես գիտեն, իրենց կարգի համեմատ վարվեն։ Ում ռոճիկը կտրել էր, կրկին սահմանեց ամեն մեկին, և ում բարձն ու աստիճանը, խլել էր, հրամայեց վերադարձնել և նրանց չէր արգելում ամեն օր արքունիք մտնել. և ամեն բան, ինչ և ինչպես առաջ կարգված էր, կրկին այնպես կարգավորեց։ Խոնարհվում և սիրով խոսում էր նրանց հետ նախկին սովորության համաձայն։

Եվ երբ այս ամենն արեց ու կարգադրեց, նրանց ներկայությամբ թողության հրովարտակներ ուղարկեց իր իշխանության ու տերության բոլոր կողմերը քրիստոնյաների վերաբերմամբ։

«Եթե մեկը կապանքի մեջ է, թող արքունի հրամանով արձակվի. և եթե մեկի գույքը հափշտակված է, թող վերադարձվի։ Այդպես էլ հողերը — թե՛ հայրական, թե՛ պարգև ստացած և թե՛ փողով գնած — եթե որևէ մեկը խլել է, հրամայեցինք, որ վերադարձվեն»։

---

1 ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 եւ հաճոյ թուեցաւ բանն A թուեցան բանքն   2 Դ չիք առաջի Գ զառաջաւ ԲԻ ազգաց Դ յազգաց ազգաց փխ յամենայն ազգացն   2—3 Ա զքրիստոնէութիւն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ազգացն որ ի զօրուն էին և ունէին զքրիստոնէութիւնն ԳԿ չիք և Կ որ ի զօրուն էին նորա   3 է իցեն փխ էին ԲԴ նեղէր փխ արգելեալ էր   4 Ի իշխօղ ԲԴ իշխեսցէ փխ իշխան լիցի   4—5 ԲԴ քանզի որք ընդդէմ կային ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 քանզի և որք ընդդիմացան   5 Գ պաշտօն   6 ԵԸԺԼԽՀՏ^2 ետ երկրպագանել Կ չիք ետ ԱԴՁԷԹԻՎՏ^3 արեգականն   7 Կ զօրականն   8 Դ չիք անդրէն ԵԸԺԼԽՀ անդէն Ե համարձակութեան   9 Հ կալ հաստատուն է յօրէնսն քրիստոնէութեան ԱՁԷ քրիստոնէութեանն ԳԴԵԺԼ որ փխ որք   10 Դ կարէին փխ կամէին   10—11 Հ ապաշխարութեամբ ՎՏ^{2}A ապաշխարութեանն   11 ԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^2 խառնել Ի ի կարգս ԱՁ քրիստոնէութեան Թ քրիստոնէութեանն ԲԴ և հրամայեաց   12 ԲԹԻՀ կալցեն ԳԵԸԺԼԿՏ^{1}Տ^2 տարցին Կ յեկեղեցիս ԴԾ իւրեանցն   13 Դ համարձակաբար ԲԴ գիտասցեն ԲԻԿ և արասցեն   14 Դ զպատեալ փխ զհատեալ Ե ռոճիկսն   15 ԷԻ բազմականս Ը ի տեղիս Գ հրամայէր ի տեղի   16 ԲԴ հանապազ Դ մտանելոյ Գ արգելույ   17 Բ և զամենայն զինչ և կարգք ԳԵԸԺԼԽԿ զիարդ ինչ և կարգք ՀՏ^{1}Տ^2 զիարդ ինչ և կարգ   17—18 Դ և զամենայն ինչ որ կարգ էին յօրինէր   18 ԲԴ չիք և ԲԴ չիք սիրով   19 Ե սովորութեան   20 ԲԴԻՏ^2 և կատարեաց փխ և կարգեաց   21 ԲԴԵԺԼԽՀՏ^1 հրովարտակ (Դ հրովարտաք) Դ երկիրն   21—22 Գ իշխանութեան և տէրութեան   22 ԱՁԷ քրիստոնէից ԲԴ քրիստոնէութեան   23 ԲԴ եթէ կապեալ ոք իցէ ԵՀ կայցէ ԳԵԸԺԼԽԿՀ յարքունի հրամանէ ԾՏ^{1}Տ^2 յարքունի հրամանէն   24 Ե յափշտակեալք Դ իցէ Կ տացեն փխ դարձցին   25 Տ^{3}A Այնպէս և ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և ԲԴ երկիր Ը երկիրս ԱԳԵՁԷԹԺԻՀ չիք և   25—26 ԳԿ սակագինք Թ հանեալք ԲԴ հանեալ ուրուք իցէ և կամ թէ քակագինք   26 Բ շնորհեսցէք զի անդրէն դարձցին ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 շնորհեցաք փխ հրամայեցաք Դ անդրէն դարձցին։

Եւ իբրև այսմ ամենայնի զնոսա տեղեակս առնէր, խնդրէր ի նոցանէ վկայութիւն հաւատարմութեան յերկիրն Հայոց, և երդմամբ յուխտ մտանէր առաջի նոցա՝ հաստատութեամբ ամենայն մեծամեծաց իւրոց, եթէ «Ոչ ինչ յիշեցից ամենևին զքէն վրիժուցն խնդրելոյ։ Որպէս ունէիք յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր, այսուհետև առաւել կալարուք. բայց միայն ի ծառայութենէ մերմէ մի՛ ելանէք»։

Զայս ամենայն գրէր և ցուցանէր յերկիրն Հայոց և ի բազում յայլ աշխարհս, որ ունէին զօրէնս քրիստոնէութեան. և ինքն գաղտ խորամանկեալ փութացեալ դեսպանս առաքէր առ Մարկիանոս կայսր։ Եւ իբրև ստուգեալ ճշմարտեաց, եթէ Հոռոմք ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէութեանն ոչ զօրու օգնականութեամբ և ոչ այլ իրօք, դարձեալ անդրէն ի նոյն յառաջին կարծիս մոլորութեանն շրջեցաւ։ Զի զյաջողութիւն իրացն ի ձեռն իւրոց պաշտօնէիցն հրամայէր. և այնպէս ածէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարեսցեն զամենայն։

Իսկ Հայք թէպէտ և ընկալան զգիրն խաբեբայ ողոքանաց թագաւորին, որ ի վերոյ ունէր զաւետիս կենաց և ի ներքոյ զդառնութիւն մահու, զարմացեալ ընդ թերի խորհուրդսն՝ առէին ցմիմեանս. «Քանի՜ լիրբ է խորամանկ խաբէութիւն նորա, զի երկիցս և երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ և ոչ ամաչէ։ Եւ տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութեանս, տակաւին լրբի և լկնի. զհետ մտեալ՝ կամի զմեզ լքուցանել։

«Իսկ հաւատասցո՞ւք անհաստատ հրամանի նորա. զո՞ր բարեգործութիւն տեսաք առ ամենայն եկեղեցիս, որ են յաշխարհին Պարսից։ Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ

---

1 ԱՁԹՎ այս ԲԴ այսր է զայս (!) Ի այսու ԲԴ չիք զնոսա ԱՁԷԹԻՎS^3Ա տեղեակ 1—2 ԲԴԵԸԺԽԾԿՀS^2 և ի նոցանէ 2 ԲԴS^2 հաւատարմութեամբ ԵԺԼԽՀS^1 հաստատութեան փխ հաւատարմութեան Է երկիրն ԾS^1 երկրին 3 Ի ուխտ ԱԷԹԻՎ մտանել 3—4 ԲԴ մտանէր նոցա հաստատութեամբ առաջի մեծամեծաց իւրոց և ԲԴ չիք ամենայն 4 ԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք ինչ 5 Թ առաջ 5—6 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 առաւել այսուհետև 6 ԲԴ առաւել ևս այժմ կալջիք ԳԵԺԼԽԿՀS^2 ի ծառայութենէն է չիք մի՛ 8 ԷԽՀ երկիրն ՎS^3Ա յերկրին 8—9 ԲԴ և յայլ բազում աշխարհս որք 9 ԵԺՀS^2 աշխարհ Հ զոր (!) ԱՁ քրիստոնէութեան ԲՎS^3 քրիստոնէութեանն 10 ԵԸԺԼԽՀS^1S^2 փութայէս ԳԿ դեսպան ԳԵԸԺԼՀS^1S^2 արձակէր փխ առաքէր Կ 11 կայսրն ՎS^3 Հոռոմք 12 ԲԴ ձեռնատու Ի լինիլ ԵՀ քրիստոնէութեան ԱԻS^2 օգնականութեան ԲԴ և ոչ զօրու օգնական եղէն 12—13 ԱԲԳԴՁԷԹԻԿՎ չիք և ոչ այլ իրօք ԵԸԺԽՀ այլ ինչ իրօք 13 Բ անդէն ԲԴԵԸԼԽՀS^1S^2 չիք յառաջին Թ առաջին 14 ԱՁԷԹՎS^3 Զի յաջողութեան ԲԴ և զաջողու-

Եվ երբ նրանց տեղեկացնում էր այս ամենը, նրանցից խնդրում էր հավատարիմ վկայություն ուղարկել Հայոց երկիրը, և երդումով ուխտում էր նրանց առաջ՝ իր բոլոր մեծամեծների հաստատությամբ, թե «Ամենևին մտքովս չեմ անցկացնի վրեժխնդիր լինել։ Ինչպես առաջները ճշմարտությամբ պահում էիք ձեր կրոնը, այսուհետև ավելի՛ պահեցեք. միայն թե ծառայությունից դուրս մի՛ գաք»։

Այս ամենը գրում և ցույց էր տալիս թե՛ Հայոց երկրին և թե՛ ուրիշ շատ աշխարհների, որոնք քրիստոնեական կրոնին էին հետևում։ Իսկ ինքը ծածուկ խորամանկությամբ շտապով դեսպաններ ուղարկեց Մարկիանոս կայսեր մոտ։ Եվ երբ ստուգեց-իմացավ, որ Հոռոմները հրաժարվել են քրիստոնյաներին օգնական զորքով և որևէ այլ բանով օժանդակելուց, նորից դարձավ իր նախկին մոլար կարծիքին։ Գործերի հաջողությունը վերագրում էր իր պաշտոնյաներին և մտքովն անց էր կացնում, թե առաջվա մտածածի համեմատ կկատարեն ամեն ինչ։

Իսկ հայերը թեպետև ստացան թագավորի խաբեբայական սիրալիր գրությունը, որը երեսանց կյանքի ավետիս էր բերում, իսկ ներսից լի էր մահի դառնությամբ, զարմացած էին նրա թերակատար մտածմունքների վրա և ասում էին միմյանց. «Որքան լիրբ է նա իր խորամանկ խաբեբայությամբ, որ երկու-երեք անգամ փորձ անելով՝ կշտամբվեց և չի ամաչում։ Եվ տեղյակ լինելով մեր անքակտելի միաբանությանը՝ դեռևս լրբանում ու լկտիանում է. հետևներիցս ընկած՝ կամենում է վհատեցնել մեզ։

«Բայց հավատա՞նք նրա հեղհեղուկ հրամանին. նրա ո՞ր բարեգործությունը տեսանք Պարսից աշխարհում գտնված բոլոր եկեղեցիների վերաբերմամբ։ Որովհետև ով որ ինքն իրեն համար չար է, ուրիշի համար չի կարող բարի լինել. և ով որ ինքը խավարի մեջ է շրջում, նա

թիւն ԳԸԺԻԽԿ զի յաջողութիւն S^2 և զյաջողութիւն Ա զանյաջողութիւն 15 Ա համարէր փխ հրամայէր Ը չիք և Խ որոց (!) փխ եթէ Կ չիք առաջին է կործանեացն փխ կարծեացն 16 Հ կատարեսցին ԳԵԸԺԼԽԿS^1 կատարիցեն Ա կատարեցից 17 ԲԴ իսկ Հայք իբրև լուան է հարք փխ Հայք է չիք և Բ չիք թէպէտև ԲԴ խարող փխ խաբեբայ 18 Հ զի փխ որ ԲԴ ի վեր փխ ի վերոյ 18—19 ԲԴ զբանութիւն փխ զդառնութիւն 19 ԲԴ և զարմացեալ ընդ ԱՁԷԹԻՎS^3Ա զարմացեալ էին 20 ԷԸԺԼԽԿՀS^1 քանզի փխ քանի ԲԴ խորամանկութիւն փխ խորամանկ խաբէութիւն ԲԴ չիք խաբէութիւն ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չարութիւն փխ խաբէութիւն ԲԴ զերկից և զերից 21 ԵԸԺԼԽՀS^2 նա և (տեղեակ) ԲԴ չիք և (տեղեակ) ԲԴ մերոց 22 ԲԴ և զհետ մտեալ 24 ԲԴ իսկ արդ զիա՞րդ ԲԴ անհաւատ փխ անհաստատ Ի իսկ զի՞ հաւատացուք ԵԸԺԼԽԿՀS^1S^2 իսկ մեք մի՛ հաւատասցուք Գ սորա ԵԸԺԼԽԿՀS^1S^2 զի զո՞ր 25 ԲԴ եկեղեցիսն ԳԵԸԽՀ էին փխ են Թ աշխարհին 26 է ինքն իւրաշանչիւր չար է (!) Դ այլոց Ի լինիլ Թ չիք և Գ չիք որ։

ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով։ Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս և ոչ ի ստութենէ ճշմարտութիւն, սոյնպէս և ի խռովասէր մտաց՝ ընկալութիւն խաղաղութեան։

«Այլ մեք ապրեալքս զօրութեամբն Աստուծոյ, և հաստատեալք հաւատովքն ի յոյսն Քրիստոսի, որ եկն և էառ ի սուրբ կուսէն զմարմին մերոյ բնութեանս, և միացեալ անբաժանելի աստուածութեամբն՝ ընկալաւ զչարչարանս մերոյ մեղաց ի յիւր մարմինն, և նովին խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երևեցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեանն, զսոյն հաւատամք Աստուած ճշմարիտ, և նմին ակն ունիմք, որ փառօք Հօր և զօրութեամբ գայ յարուցանել զամենայն ննջեցեալս, և նորոգել զհնութիւն արարածոց, առնել համառօտ յաւիտենից ի մէջ արդարոց և մեղաւորաց։

«Ոչ պատրիմք իբրև զտղայս, և ոչ մոլորիմք իբրև զանտեղեակս, և ոչ խաբիմք իբրև զտգէտս, այլ պատրաստ եմք ամենայն փորձութեանց։ Եւ աղաչեմք զԱստուած, և անդադար խնդրեմք ի բազում ողորմութենէ նորա, զի յորում սկսաք՝ ի նմին և կատարեսցուք քաջութեամբ, և ոչ վատութեամբ։ Զի արդ արևելք և արևմուտք գիտացին զձեր աստուածամարտ լինել, և զմեզ ի զուր սպանանել ի վերայ ամենայն վաստակոցն մերոց։ Վկայեն մեզ երկինք երկնաւորօք և երկիր երկրաւորօք, եթէ չեմք ինչ մեղուցեալ ի միտս մեր անգամ. և ի վերայ պարգևաց և բարիս առնելոյ մեզ՝

1—2 ԲԴ ճշմարտութեամբ չիք լուսով 2 ԲԴ յանօրէնութենէ փխ յանիրաւութենէ Ի չիք և Հ չիք այսպէս Տ^1 չիք այսպէս և 2—3 Ա այսպէս ի ստութենէ Ծ և ի ստութենէ ԵԸԺԼԽՏ^2 չիք այսպէս և ոչ ԶԷԹԻՎՏ^3 չիք և ոչ 3 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 սոյնպէս և ոչ ի ԳՀԿ չիք ոչ ԲԴ և ոչ ի խռովութենէ մտաց փխ սոյնպէս և ի խռովասէր մտաց ԶԷՎ չիք ի (խռովասէր) 5 ԲԴՏ^2 ապրեալք 5—6 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 հաստատեալքս հաւատովն 6 ԲԵԼԽՀ հաւատով ԳԴԿ հաւատովք ԵԸԼԽՀ Քրիստոս 6—7 Բ մարմին ի սուրբ կուսէն ըստ ԸԾՏ^{1}Տ^2 որբոյ ԵԸԼԽՀ մարմին Դ էառ մարմին ի որբոյ կուսէն ըստ մերում բնութեանս 7 ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 ըստ մերոյ Հ ըստ միոյ (!) ԲՏ^2 և մնացեալ փխ և միացեալ Բ անբարժանելի 8 Դ և ընկալաւ Բ չարչարանս 8—9 Հ զչարչարանս վասն մեղաց մերոց ի մարմինն իւր և նովին մարմնով ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 մեղաց մերոց ԲԴ մեղացս իւրով մարմնովն ԳԿ չիք ի ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 ի մարմինն իւր 9 ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 նովին մարմնովն 9 ԲԴ չիք և (թաղեցաւ) 10 ԲԴ չիք իւր 11 ԲԴ զօրութեանցն Ե զօրութեան ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^2 զնոյն ԲԴ յաստուած 12 ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք որ ԳԵԽ չիք և ԲԳԴԺՀՏ^2 գալ 13 Բ զննջեցեալսն ԴԹ ննջեցեալսն ԵԸԺԼԽՏ^2 արարածոցս 13—14 ԲԴ համառօտ 14 ԳԿ և ի մէջ մեղաւորաց Ե չիք և 15—16 ԱԶԷԹԻՎ ոչ

ուրիշին չի կարող ճշմարտության լույսով առաջնորդել։ Ինչպես որ անիրավությունից արդարություն չի լինի, այնպես էլ ստությունից ճշմարտություն չի լինի, նմանապես և խռովասեր մտքից՝ խաղաղության ակընկալություն։

«Բայց մենք, որ փրկված ենք աստծու զորությամբ և հաստատված Քրիստոսի տված հույսի հավատով, որ եկավ և մեր բնությունն ունեցող մարմին առավ սուրբ կույսից և անբաժանելի աստվածությամբ միացած՝ իր մարմնով կրեց մեր մեղքերի չարչարանքը, և նույն մարմնով խաչվեց ու թաղվեց և հարություն առնելով շատերին երևաց, և աշակերտների ներկայությամբ բարձրացավ իր հոր մոտ, և նստեց զորության աջ կողմը, հենց սրան ենք մենք ճշմարիտ աստված դավանում և նրան ենք սպասում, որ Հոր փառքով ու զորությամբ գալու է հարություն տալու բոլոր ննջեցյալներին, և նորոգելու արարածների հնությունը, հավիտենական դատաստան անելու արդարների և մեղավորների միջև։

«Չենք խաբվի երեխաների նման և չենք մոլորվի անտեղյակ մարդկանց նման և չենք խաբվի ինչպես տգետներ, այլ պատրաստ ենք ամեն տեսակ փորձությունների։ Եվ աղաչում ենք աստծուն և անդադար խընդրում նրա անչափ ողորմությունից, որ ինչով սկսել ենք, նրանով էլ ավարտենք՝ քաջությամբ և ո՛չ թե վախկոտությամբ։ Որովհետև հիմա Արևելքն ու Արևմուտքն իմացան ձեր աստվածամարտ լինելը և մեզ զուր տեղը սպանելը, չնայած մեր բոլոր ծառայություններին։ Մեզ վկա են երկինքը երկնավորներով և երկիրը երկրավորներով, որ մինչև իսկ մեր մտքերում էլ ամենևին չենք մեղանչել. և փոխանակ մեզ պարգևներ տա-

---

խաբիմք ԲԴ արդ ոչ պատրիմք (!) A զտղայ ԱԶԷԹՎ որպէս զանտեղեակս 16 ԲԴ և ոչ որպէս զտգէտս խաբիմք 16—17 Է չիք ամենայն Գ փորձութեան 17 Դ այլ աղաչեմք ԲԴ և խնդրեմք անդադար Է չիք և 18 Ը զթութիւն փխ ողորմութենէ Է որում ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 սկսաքս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի նմին 19 Գ վատթարութեամբ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 քանզի 20 ԲԴԵԸԹԺԼԽՀՏ^{1}Տ^2 զձեզ աստուածամարտ Գ զաստուածամարտ ԱԶԷԻՎՏ^{3}A զձեր աստուածամարտ Թ զձեր աստուածամարտ Ի լինիլ ԱԲԳԴԵԶԷԸԹԻԿՀ չիք ի (զուր) 21 ԲԴԵԺՀ վաստակոց 22 ԱԲԳԴԶԷԹԻ երկինքն երկնաւորօքն Վ երկինքն երկնաւորօք Հ երկնաւորօքս ԲԳԴԵԺԸԽԿՀՏ^2 և երկիրս երկրաւորօքս ԼՀՏ^1 չիք և երկիր երկրաւորօք 22—23 ԳԵԺԼԽԿՀ և ի (միտս) Բ մեղուցեալ և ոչ ի միտս մեր անգամ 23 Դ և ի միտս անգամ Տ^2 և ոչ ի միտս ԲԴ բարիս զճշմարիտ կեանս կամիք հանել ի մէնջ, որում չիք հնար, և այլ մի՛ լիցի։

«Իսկ արդ հաւատասցո՞ւք անարժան բերանոյ նորա, որ ստիպէր չարաչար յուրացութիւն, և այսօր առանց մի ինչ բարիս գործելոյ լինիցի՞ նա քարոզիչ աւետեաց։ Եւ որ հայհոյէրն զՔրիստոս, և ուրացուցանէր ի նմանէ զհաւատացեալս, այսօր ակամայ խոստովանութեանն ոչ կարեմք վաղվաղակի յանձն առնուլ։ Եւ որ երդնոյրն ի սնոտի պաշտամունս իւրոյ մոլորութեանն՝ անցուցանել զամենայն չարչարանս ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ, արդ եկեալ գողանալով գոհութիւն մատուցանէ, և այնու կամի զամենայն չարութիւն իւր ի մեզ հեղուլ։ Ոչ այդմ հաւատամք, և ոչ զսուտ հրամանդ յանձն առնումք»։

Իսկ նա իբրև գիտաց, եթէ ոչ կարեմ քակել զհաստատութիւն միաբանելոցն, յայնժամ քակեաց յինքենէ զծերն լի դառնութեամբ, յորում հանգուցեալ էր սատանայ զօրութեամբ իւրով, և բազում գործեալ էր նորա նախճիրս. որոյ կերակուր կամաց իւրոց էր ի մանկութենէ անարատ մարմին սրբոց, և ըմպելի անյագութեան նորին՝ արիւն անմեղացն։ Յաւելոյր ևս ի վերայ չարութեան նորա և գիր մահաբեր հրամանն. գունդս գունդս յամենայն աշխարհացն գումարէր ընդ նմա, և բազում երամակս փղաց յղէր ընդ նմա։

Հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մտանէր ի քաղաքն Փայտակարան, և զզօրսն ամենայն սփռէր տարածանէր շուրջ զքաղաքաւն առ ի զգուշութիւն պատրաստութեան իւրոյ չարահնար խորհրդոցն։ Եւ յամուր որջն մտեալ հին վիշապն չարաթոյն, և բազում կեղծաւորութեամբ զինքն թաքուցանելով յանկրկիւղութիւն, հեռաւորացն

---

1 Բ զկեանսն Դ կեանսն ԳԿ կեանսս կամին ի մէնջ հանել ԵԸԺԼԽՀՏ² կեանս մեր կամին ի մէնջ հանել Ը ի մէնջ հանել ԽԿՀ չիք հանել ի մէնջ 1—2 Դ և մի՛ այլ լիցի 3 ԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² իսկ արդ մի՛ հաւատասցուք Ի չիք իսկ արդ Ի զի՞ հաւատասցուք 4 ԲԴ ուրացուցանել ԸԽՏ² լիցի Կ օրինաց փխ աւետեաց ԵԸԺԼԽՀ չիք և 6 ԱԶԷԹԻ ուրացուցանէրն ԵԺԽԼՀՏ¹Տ² զամենայն հաւատացեալս 6—7 ԵՀ խոստովանութիւն Է խոստովանութեան 7 ԲԴ չիք վաղվաղակի 7—8 ԴԻՀ երդնոյր 8 ԲԵՀ պաշտամունսն ՎՏ³ պաշտամունս Տ² իւր ԳԵԸԺԼԽԿՀՏ¹ չիք իւրոյ 9 ԲԳԵԸԼԽԿՀՏ¹Տ² ընդ սուրբ Թ պաշտօնեայսն ԲԿ եկեղեցւոյն Դ սուրբ եկեղեցւոյ 10 ԲԴ գողութեամբ փխ գողանալով Բ գողութիւն փխ գոհութիւն Դ գովութիւն Ը մատուցանէր ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² չիք այնու Է այնուհետև փխ այնու 10—11 ԲԳԴԺԿ չարութիւնն 11 ԲԳԴԵԺԼԽԿՀՏ¹Տ² չիք իւր Բ չիք ոչ (զսուտ) 11—12 ԳԵԸԽԾԿՀ սուտ հրամանիս(՞) ԼՏ¹ սուտ հրամանիդ Դ հրամանօդ Ժ հրամանիդ 13 Խ չիք նա ԲԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² եւես փխ գիտաց ԸԺԻ թէ ԵԸԺԼԽՀՏ¹Տ² ոչ կարաց Գ կարէր Բ քակտել Դ խախտել փխ քակել 15—16 ԲԴՏ² և բազում ոճիրս գործեալ էր նովաւ 16—17 ԲԴ ի մանկութենէ էր 17 Խ չիք էր ԲԳԴԸԺԼԽԿՀՏ¹Տ² մարմինք ԲԳԴԿ սրբոցն Թ անյագութիւն 17—18 ԲԴ չիք նորին ԲԴԵԸԺՀ անմեղաց Լ չիք նորին՝ արիւն անմեղացն յաւելոյր 18 Է չիք վերայ ԲԳԸԺԼԽՏ¹Տ² նորա չարութեանն ԵՀ նորա չարութեան 19 ԲԳԸԺԼԽՀԿՏ¹ հրամանսն և Գ հրամանս ԲԴ աշխարհաց 20 ԶԷՎ չիք և բազում երամակս փղաց յղէր ընդ նմա ԱԹԻ երամս Գ փղեաց 21 ԲԳ մինչև ի սահմանս ԲԴ և մտանէր 21—22 ԱԶԷՎ Փայտակարանն 22 Հ զզօրս Է չիք և ԲԴ չիք ամենայն ԲԴ և զզօրսն տարածանէր և սփռէր Խ տարածէր 23 Թ խորհրդոյն 24 ԲԴ մտանէր ԲԴ չարութեան փխ չարաթոյն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² չիք և 25 ԱԶԻՎՏ³ յանկրկեղութիւն ԳԸԿՀՏ¹Տ² յանկրկիւղութեան ԵԺԼ յանկրկեղութեան Խ յանկրկիւղութեամբ։

լու և բարիք անելու՝ կամենում եք մեր ճշմարիտ կյանքը խլել մեզնից. այդ անհնար բան է և այլևս չի լինելու։

«Իսկ այժմ հավատա՞նք նրա անարժան բերանին, որ չարաչար ստիպում էր ուրացություն [հանձն առնել]. այսօր առանց որևէ բարիք անելու նա կարո՞ղ է ավետիքի քարոզիչ լինել։ Եվ նա, որ հայհոյում էր Քրիստոսին և հավատացողներին ստիպում էր ուրանալ նրան, այսօր չենք կարող նրա ակամա խոստովանությանն անմիջապես վստահել։ Նա, որ երդվում էր իր սուտ ու սնոտի հավատով՝ եկեղեցու պաշտոնյաներին ամեն տեսակ չարչարանքների ենթարկելու, այժմ եկել է գողեգող շնորհակալություն է հայտնում և դրանով կամենում է իր ամբողջ չարությունը մեզ վրա թափել։ Ո՛չ դրան ենք հավատում և ո՛չ էլ այդ սուտ հրամանն ենք ընդունում»։

Իսկ նա երբ հասկացավ, թե չի կարող քանդել միաբանվածների հաստատակամությունը, այն ժամանակ իր մոտից արձակեց դառնությամբ լցված ծերին[104], որի մեջ սատանան բույն էր դրել իր զորությամբ, և նա շատ արյունհեղություններ էր գործել. Նրա ցանկալի կերակուրը մանկությունից սրբերի անարատ մարմինն էր, և նրա ագահության ըմպելիքը՝ անմեղների արյունը։ Նրա չարության վրա ավելացրեց նաև իր մահաբեր հրամանը — բոլոր երկրներից կազմված գնդեր էր դնում նրա հետ, ինչպես և փղերի բազմաթիվ երամակներ էր ուղարկում նրա հետ։

Երբ [սա] հասավ Հայաստանի սահմանների մոտ, մտավ Փայտակարան[105] քաղաքը և ամբողջ զորքը սփռեց-տարածեց քաղաքի շուրջը՝ իբրև զգուշություն, իր չարահնար մտադրությունների համար պատրաստություն տեսնելու նպատակով։ [Այս] հին չարաթույն վիշապը ամուր որջի մեջ մտած և մեծ կեղծավորությամբ իրեն անվախ ձևացնելով՝

ահագին ձայնիւ սաստէր. և ի մերձաւորսն իբրև զօձ սողալով փչէր։ Սա էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անուն էր Միհրններսեհ, և չէր ոք ամենևին, որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել։ Եւ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսայր. որոյ և ձախող իրացն իսկ բուռն հարեալ էր նորա։

հեռավորներին սաստում էր ահակու ձայնով, իսկ մերձավորների վրա օձի նման ֆշշացնում էր սողալով։ Սա ամբողջ Պարսից պետության իշխանն ու հրամանատարն էր, որի անունն էր Միհրններսեհ, և ամենևին ոչ մեկը չկար, որ համարձակվեր նրա խոսքից դուրս գալ։ Եվ ո՛չ միայն մեծամեծներն ու փոքրերը, այլև թագավորն ինքը լսում էր նրա խոսքին, որը և հենց ձեռնարկել էր այն ձախողակ գործերը։

---

1 Թ չիք ի ԲԴ և մերձաւորացն սողելով (Դ սողալով) իբրև զօձ փչէր ԱԲԳԵԸԺԻԼԽ ԿՀՏ^{1}Տ^2 սողելով իբրև զօձ փչէր ԳԵԺԼԿՀՏ^1 չիք և   2 Դ հրամանատու ի հրամատար Ը իշխան ամենայն հրամանատար ԵԷՀ տէրութեան   3 ՋՏ^{3}V անունն ԳԵԸԺԽԾԿՀՏ^2 Միրններսեհ է Միրհններսեհ Ըխ չիք ոք փխ չէր ոք   4—5 Բ որ ամենեքին իշխէր ընդ նորա ձեռն ելանել Դ որ իշխէր ամենեքին ըստ նորա ձեռն ելանել է իշխան էր փխ իշխէր   5 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^3 չիք և Ե ինք իսկ ԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ինքն իսկ   6 A հրամանի քերանոյ նորա ԲԴ լսէր փխ անսայր ԳԵԸԺԽԿՀ զձախող ԲԴ որոյ զձախողակի իրացն չիք իսկ   7 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 բուռն նորա հարեալ էր։

ՉՈՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՎԱՍՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ ԻՒՐՈՑ

Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտէի պատմել զհարուածըս ազգիս մերոյ, որ յարտաքին թշնամեացն ճշմարտութեան չարաչար յարեան ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեզ, և յոլովագոյնք հարեալ գտան ի մէնջ, քանզի դեռ ևս միաբանք և հաւասարք էաք։ Թէպէտ և ոմանք ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեանն, սակայն յայտ արտաքնոցն ահաւոր երևէր միաբանութիւնն. որպէս յերկուս և յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի։

Արդ յայսմ հետէ և անդր, ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտիրք լինելով՝ յոյժ բազմանայ յալումն ողբոյս։ Քանզի հատեալ անկեալ անդամքն, որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոյս էին, դառնայ մարդ յարտասուս առաջի մերձակայ դիականն. ես առաւել լնու դառնութեամբ ի վերայ այնորիկ, որ յոգի և ի մարմին առ հասարակ դիականանայ։ Եւ

Վերնագիր *ԱՋԹԻVS³ Չորրորդ յեղանակն (S² յեղանակ) վասն երկպառակութեանն իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց (Ջ չորրորդ Ի յեղանակ։ Երկպառակութեան) Թ նորա ԲԳԴԵԺԿՀ Չորրորդ վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց (ԴԿ նորա) ԷԸ Չորրորդ յեղանակն վասն երկրպագութեան (!) իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց (Ը չիք յեղանակն Ը չիք անօրէն) ԼԽԾ Չորրորդ վասն երկպառութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա (Խ իւրոց) S¹S² Գլ. Դ. Չորրորդ՝ վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա* A *Չորրորդ յեղանակ երկպառակութիւն բաժանելոցն ի սուրբ ուխտէն* 1 *ԱՋԹէԻ մէնչ Է յայս Լ այս* V *զինչ այս Հ* չիք *կարի ԲԴS² կամէի* փխ *կարի ԲԳԼS¹S² զանգիտել և* 2 *Է յազգիս ԳԵԸԺԿՀ թըշնամեաց ԱԳԸԹԺԻԿVS³ ճշմարտութեանն* 2—3 *ԲԴ որ չարաչար* 3 *Դ սակաւագոյն Լ թէև հարին Լ* չիք *և* 4 *ԵԽ յոլովագոյն ԲԴ հարան ԳԿ հարեալք S¹ գտանին*

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆԻ ԵՎ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մինչև այստեղ շատ էլ չէի վախենում պատմել մեր ազգի այն հարվածները, որ ճշմարտության արտաքին թշնամիները չարաչար կերպով հարուցին մեզ վրա. որոնցից քչերը մեզ ջարդեցին, և շատերը ջարդ կրեցին մեզանից, որովհետև դեռևս միաբան և ընկերակիցներ էինք։ Թեպետև ոմանք ծածուկ նենգավոր երկմտության մեջ էին, սակայն արտաքինների աչքում միաբանությունն ահավոր էր երևում, ինչպես որ երկու-երեք տեղ չկարողացան էլ դեմ կանգնել [մեզ]։

Արդ՝ այստեղից արդեն, երբ ներս է սպրդում երկպառակությունը, միաբանությունը քանդվելու հետ հեռանում է նաև երկնավոր առաքինությունը, և անձնասիրությունն ավելանալով՝ խիստ շատանում է լացն ու ողբը։ Որովհետև կտրվեցին-ընկան այն անդամները, որոնք առաջներում այս սուրբ մարմնին էին պատկանում, ուստի մարդու լացը գալիս է իր առջև այդ դիակը տեսնելիս. է՛լ ավելի դառնությամբ է լցվում [սիրտը] այն մարդու պատճառով, որ հոգով ու մարմնով առհասարակ դիակ է

---

5 *ԲԴ զերկպառակութիւն* փխ *զերկմտութիւն* 6 *Ի նենգութեան ԱՋէԹԻV սակայն և ԹԻ երևիր* 7 *Ը որպէս և ԲԳԴԺԽԿ տեղիսն ԽԿ կեալ* 8 *ԲԴ ուր և անդր Գ* չիք *և անդր* 8—9 *ԵԺԽS¹ երկպառակութիւնս ԲԴ անկաւ ի ներքս երկպառակութիւնն* 9 *ԱԲԳԹ քակեալ Ի քակիլ ԵԺԽԾԿՀ ընդ հակել* փխ *ընդ քակել ԳԵԺՀ միաբանութեանս* 9—10 *Ե առաքինութիւն* 10 *Բ յանձնընտիր ԴS² անձնընտիր Ը բարձրանայ* փխ *բազմանայ* 11 *ԲS² ողբոյ Դ ողբոց ԵԸ անգձայ* A *անկան Խ հակեալ անկեալ* 12 *ԲԹS² նորուն Դ նորոյ Ի սորին ԲS² մարմնոյն ԱԹԻ մարմնոց ԳԵԸԺԽԾԿՀS¹ մարմնոցս ԴՋէV մարմնոցն* A *վասն որոյ (դառնայ) Դ դառնալ յարտասուս Դ* չիք *մարդ* 13 *Բ դիական մերձակաց Ի լնանի* 14 *Բ այսորիկ որ ի հոգի և ի մարմին Դ այսորիկ որ ի յոգի Հ ոգի և ի մարմին* A *հոգի* VS³A չիք *ի (մարմին) ԲԴ* չիք *առհասարակ Թ դիականաց։*

եթէ ի վերայ միոյ անձին այսպէս, ո՞րչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոջ։

Այլ յայսմ տեղւոջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումն մեր, այլ ի վերայ ազգաց և աշխարհաց. զոր և յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդութեան մտօք։ Ահա ակամայ ճառագրեմ զբազումս որպէս կորեան ոմանք ի ճշմարիտ կենացն իւրեանց, և պատճառք եղեն բազմաց կորստեանն, ոմանց՝ երևելեացս միայն, և այլոց երևելեաց և աներևութից։ Եւ այն՝ ևս չար է քան զամենայն. զուռն՝ զոր բացին կորստեան, Աստուծո՛յ միայն կարողութիւն է փակել զնա. այլ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է հնար։

Այս անօրէն Միհրներսեհ, քանզի յառաջագոյն ստուգեալ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի ևս յղէր և կոչէր զնա առ ինքն։ Որպէս նորա իսկ յառաջագոյն զատեալ և որոշեալ էր ի միաբանութենէ Հայոց, եկն և յանդիման եղև. և ստուգէր զիւր հաւատարմութիւնն և զՀայոց անիրաւ ապստամբութիւնն։ Յաւել և պատմեաց ևս առաւելաբանութեամբ զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընտանեբար ընդ միտ մտանել անօրինին։

Բայց նա թէպէտ և ի ներքոյ լոյծ զարովէր զնա. այլ արտաքին դիմօք մեծարեաց, և եդ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս։ Եւ խոստացաւ նմա իշխանութիւն աւելի քան զոր ունէրն, և հայեցոյց զնա ի կարծիս սնոտիս, որ ի վեր էր քան զիւր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեսցէ, թէ ո՛րպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարես-

---

1 Գ ասյա ո՞րչափ ևս 1—2 Կ որչափ ևս առաւել ընու զանութեամբ ողջոյն ազգի միոջ ԱՁէԹԻ միոյ ԲԴ ազգի ողջոյն միոջ 2 V մերոյ փխ միոջ 3 Դ յայսր ԲԴ ի վերայ ազգի միոյ է ԱԵՁէV ողբումս Ի ողբայս Խ ողբումս այս 3—4 Խ չի՟ մեր ԲԴS^2 ես փխ և 5 է չի՟ ոչ ԲԴ խնդութեամբ 5—6 Դ այլ ակամայ Ի յակամայ S^2 չի՟ ակամայ 6 A նշանագրեմ փխ ճառագրեմ ԳԵԺԼԽԿՀ բազումս A որ կորեան A չի՟ ոմանք ԲԳԴԵԺԼԽԿՀS^2 առ ի (ճշմարիտ) 6—7 ԴԵ կենաց 7 A և այլոց ((բազմաց) ԴԵՁէ կորստեան Բ ոմանք փխ ոմանց 8 ԲԴS^2 երևելեացն 9 ԳԵԺԽԿՀS^1 դուռնն Բ որ S^3 կորստեանն 10 ԲԳԴԵԸԼԽԿՀS^1S^3 միայն է (կարողութիւն) Դ փրկել զնոսա փխ փակել զնա 10—11 ԲԴS^2 այլ ըստ մարդկան հնարս ահա անցանէ ԵԸԺԻԼԽS^1 սահմանի 11 ԳԵԼԽԿՀS^1 չի՟ ահա ԳԵԸԺԻԼԽԿS^1 հնարս 12 ԳԵԸԺԽԾԿՀ Միրներսեհ 12—13 Դ գիտաց 13 Գ զամենայն ամբարշտութիւնն Ե զամբարշտութիւն Թ զապստամբութիւնն ԲԴ չի՟ ևս ԲԴ չի՟ և 14 ԲԳԴԵԸԹԺԼԽԿՀS^1S^2 չի՟ զնա ԲԳԴԵԺԼԽԾԿՀ որպէս և ԵԺԽԾS^1 յառաջն 14—15 ԵԸԺԼԽԿՀS^1S^2 զատեալ

դառնում։ Եվ եթե մի անձի վերաբերմամբ այսպես է, որքա՜ն ավելի կլինի մի ամբողջ ազգի վերաբերմամբ։

Բայց այստեղ մեր ողբը ո՛չ թե միայն մի ազգի համար է, այլ [շատ] ազգերի ու երկրների. որ և շարունակելով կպատմեմ կարգով, թեպետև ոչ ուրախ սրտով։ Ահա ակամա գրում եմ այն շատերի մասին, որոնք զրկվեցին իրենց ճշմարիտ կյանքից և ուրիշ շատերի էլ կորստյան պատճառ եղան, ոմանց միայն այս երևացող բաների, իսկ մյուսների՝ թե՛ երևացող և թե՛ աներևույթ։ Եվ ամենից վատն այն է, որ նրանց բաց արած կորստյան դուռը միայն Աստված կարող է փակել, իսկ մարդու [կարողության] սահմանից անցել է և այլևս հնար չկա։

Այս անօրեն Միհրներսեհը, քանի որ առաջուց ստույգ գիտեր Վասակի ամբարշտությունը, այն ժամանակ էլ մարդ ուղարկեց և նրան իր մոտ կանչեց։ Նա էլ, քանի որ առաջուց անջատվել ու բաժանվել էր Հայերի միաբանությունից, եկավ-ներկայացավ նրան. և ապացուցում էր իր հավատարմությունը և Հայերի անիրավ ապստամբությունը։ Դեռ այնպիսի բաներ էլ ավելացրեց ու պատմեց, որ հայերը բնավ չէին արել, և կամենում էր ընտանեբար հաճոյանալ անօրենին։

Իսկ նա թեպետև ներքուստ սաստիկ պախարակում էր նրան, բայց արտաքուստ պատիվ տվեց և երկրավոր մեծամեծ պարգևներ առաջարկեց նրան։ Եվ խոստացավ նրան ավելի մեծ իշխանություն, քան թե ուներ, և նրա ուշքը դարձրեց այնպիսի սնոտի բաների վրա, որ իր իշխանությունից վեր էր, իբր թե նրան վայել է թագավորական վիճակի հասնել. միայն թե այս գործի հնարը գտնի, թե ինչպես պետք է քանդել Հայոց ուխտի միաբանությունը, և թագավորի կամքը կատարվի այն

և հատեալ էր (Կ հատուցեալ էր) 15 Գ հատուցեալ փխ որոշեալ ԲԴ չի՟ և (յանդիման) 16 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 ստուգէր նմա Ե հաւատարմութիւն 16—17 Բ ապստամբութիւն Դ ապստամբութիւնն 18 ԲԴ գործեալ էր Դ պատմէր փխ կամէր ՁS^3 ընտանեբար ՁէԹԻV ընդ միտս 20 Դ թէև Կ չի՟ և ԱԹԿ զրսովէր Բ զարովեաց Դ զարավեաց 21 ԲԴ դիմօքն ԳԿ դիմօքս 20—21 ՁէV չի՟ այլ արտաքին դիմօք մեծարեաց և ԱԳԵԸԹԺԻԼԽԿՀ$S^1S^2S^3$ մեծարեաց զնա ԱԲԴԹԻ չի՟ և ԸԹԽ մեծամեծ Հ չի՟ եւ 22 ԲԴ առաւել փխ աւելի 23 ԳԽՀ է փխ էր 23—24 Գ քան զամենայն տէրութիւն իւր 24 ԳԴԿ իբրև թէ ԵԸԺԼԽS^1S^2 իբրու թէ S^1 յանկ S^2 չի՟ անկ իցէ Ա իցեն փխ իցէ ԴS^2 տացէ նմա Բ իբրև եթէ տացէ նմա հասանել Կ հասանել նմա մինչև ԲԳԴԵԸԺԼԽՀ մինչև 25 ԲԴ հնարս արասցէ իրացն ԳԵԸԺԼԽԿS^1S^2 իրացն հնարս Դ բայց միայն թէ Հ չի՟ իրացն Կ և թէ Գ եթէ Դ չի՟ թէ որպէս 25—26 Գ քանտեսցի (!) Հ քակեսցի ՁէԻV քակտեսցէ Թ քակտեսցեն Դ քակել զուխտ միաբանութեանն Հայոց 26 Թ չի՟ «միաբանութիւն—կատարեսցին» Գ կամք ԵԸԺԼԽԿՀS^1S^2 և կամք թագաւորին կատարեսցի ԲS^2 յաշխարհին Հայոց։

ցին յաշխարհին։

Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն դառնացեալ, եթէ թմբրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս, և էած զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմ որսալ յանգիւտ կորուստ։ Եւ իւրոյ հնարագիտութեանն տայր զիմաստութիւնն, և այնմ ոչ էր տեղեակ, թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է ի սուրբ եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ ի սիրոյն Քրիստոսի։

Քանզի մոռացօնք եղեն նմա գալուստ որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքարոզութիւն սուրբ աւետարանին. և ոչ ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետիսն մխիթարեցաւ։ Ուրացաւ զաւազանն՝ որ յղացաւ զնա, և ոչ յիշեաց զընկալուչ սուրբ Հոգին՝ որ ծնաւ զնա։ Անարգեաց զմարմինն պատուական՝ որով սրբեցաւ, և առ ոտն եհար զարիւնն կենդանի՝ որով և քաւեցաւ ի մեղաց։ Ջնջեաց զգիր որդէգրութեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհաստատուն կնիք մատանւոյն։ Ել ի թուոյ երանելեացն, և ապստամբեցոյց ընդ իւր զբազումս։

Ձեռն էարկ կամակորութեամբ և եմուտ յորդէգրութիւն դիւապաշտութեանն, և եղև աման չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ։ Ի ձեռն էառ իբրև զվահան, և ագաւ զնա իբրև զզրահ, և եղև իբր զինուոր կատարեալ կամաց նորա։ Մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեղս, և ի ծածուկ ընդ խորհրդականս. ձեռն էարկ և եհան զբազումս ի գնդէն Քրիստոսի, և խառնեաց ի գունդս դիւաց։ Եւ ի բազում յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ իբրև զօձ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափրշ-

---

1 Դ չիք յաշխարհին   2 Հ չիք ինչ Դ երթեալ ԲԴ զհետ փխ զկնի ԸԽ նոցա   3 A թմբեալ է չիք և (ցնորեալ) Դ ցնորեալ է և քակտեալ է ԲՍS^1S^2 և քակտեալ   4 Գ միաբանութեանցն ԴԵԽՀԻ միտսն ԳԵԸԺԼԽՀS^1 չիք իւր   5 ԱՁԷԹԻV տրտմեալն A ած ԳԴԵԺԼԽ եթէ Բ չիք թէ և VS^3A կարիցեմք   5—6 Բ այսպէս եթէ կարասցէ որսալ S^2 կարասցէ Դ կարեմ   6 ԳԽ կորուստ Ե չիք եւ Ե հնարագիտութեան   7 ԵԷԿՀ զիմաստութիւն A զանիմաստութիւն առնն փխ զիմաստութիւնն է և այսմ ԵԸԺԼԽԿՀS^2 եթէ ԱՁԷԹԻV թէ նա որ ԳԿS^2 եթէ նորա ԲԴ նորա իւրովին ԵԸԺԼԽՄՀS^1S^3A նա իւրովի Դ անձնն   7—8 Բ զատեալ և որոշեալ է զանձն իւր Դ էր   8 Լ չիք է   8—9 ԱՁԷԹԻV օտարացեալ է   9 Դ ի Քրիստոսէ   10 ԴԼԿ մոռացումնք Ե մոռացօնք (օնք-ը ջնջված է՝ վրան գրված է՝ ումն) Հ մոռացումն Խ մոռացօք(!) ԼS^1 չիք և   11 Է զգալուստ փխ զքարոզութիւն ԲԳԴԵԺԼԽԿՀS^1S^2 չիք և   12 Գ զաւետարանն փխ զաւազանն   13

երկրում։

Եվ երբ ամեն բանի հանձնառու եղավ՝ Նրա կամքի համաձայն վարվել, դառնացած ծերն էլ հասկացավ, որ նա թմրել ու ցնորվել և անջատվել է միաբանվածների հաստատությունից. իր տրտմած սրտում շատ մխիթարվեց և մտքով անցկացրեց, որ կկարողանա բոլորին էլ այս ձևով որսալ դեպի անգյուտ կորուստը։ Եվ իր հնարագիտությանն էր վերագրում խելացի գործունեությունը, և տեղյակ չէր այն բանին, որ նա իր կամքով է իր անձը զրկել ու անջատել սուրբ եկեղեցուց, հեռացել ու օտարացել Քրիստոսի սիրուց։

Որովհետև նա մոռացության էր տվել աստծու որդու գալուստը և չհիշեց սուրբ ավետարանի քարոզությունը, ո՛չ սպառնալիքներից վախեցավ և ո՛չ էլ ավետիսով մխիթարվեց։ Ուրացավ այն ավազանը, որ հղացավ նրան[106] և չհիշեց ընկալուչ սուրբ հոգին[107], որ ծնեց նրան։ Անարգեց այն պատվական մարմինը, որով սրբվեց, և ոտնահարեց այն կենդանի արյունը, որով մեղքերի քավություն ստացավ։ Ջնջեց որդեգրության գիրը և իր ձեռքով խորտակեց մատանու հաստատուն կնիքը[108], դուրս եկավ երանելիների թվից և շատերին ապստամբեցրեց իր հետ։

Կամակորությամբ ձեռնարկեց և դիվապաշտության որդեգիր մտավ, չարի անոթ դարձավ, և սատանան նրան լցրեց ամեն տեսակ խորամանկությամբ։ Իր ձեռքն առավ ինչպես վահան և հագավ նրան ինչպես զրահ, և դարձավ Նրա կամքի կատարյալ զինվորը։ Հնարներով կռիվ մղեց իմաստունների դեմ և մեծ խորագիտությամբ՝ գիտունների դեմ, հայտնի կերպով՝ անմեղների դեմ և ծածկաբար՝ խորագետների դեմ. ձեռնարկեց և շատերին դուրս հանեց Քրիստոսի գնդից և խառնեց դևերի գնդերին։ Շատ ուրիշ տեղեր էլ գողաբար սողոսկեց և օձի նման ներս մտավ ամրացածների մեջ. և ցանկապատի մեջ ճեղքվածք

ԲԳԵԺS^2 որ ծնաւն զնա փխ որ յղացաւ զնա   13—14 ԲS^2 որ լուսաւորեացն զնա փխ որ ծնաւ զնա Դ զընկալուչն ԺԼԽԿՀS^1 ծնաւն   14 Դ սրբեցաւ   15 ԲԳԴԵԺԼԿՀS^1S^2 չիք և (քաւեցաւն) Դ քաւեցաւ   15 ԴԻ իւրով ԳԹ ձեռօքն Թ ձեռագրօք   17 ԵՀ մատենոյն   17—18 Ջէ զընդ ի-ր   19 AS^2S^3 արկ ԲԴ կամակարութեամբ   19—20 ԲS^2 դիցապաշտութեան Գ°Ե դիւապաշտութեան Ժ դիւապաշտ մոլորութեանն   20 ԲԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք և Դ եղև նա Բ չարի Դ չիք և   21 Դ եհար փխ էառ Հ չիք իբրև Ի չիք զնա   22 ԲԳVS^2S^3 զրահս Դ զզրահ ԲԷԹ իբրև ԳԴԵԸԺԼԽԿՀS^1 չիք իբր   22—23 Բ եւ մարտեաւ   23 ԲԵԸՀ խորամանգութեամբ ԺԼԽS^1S^2 խորամանկութեամբ   24 Բ չիք ի   25 ԴԵԹԺԼԽՀS^1 ի գունդն   26 ԳԴԵԼԽԿՀS^1S^2 և յայլ Ե և ի բազում և յայլ Դ չիք և Խ ի յայլ   26—27 Բ և յայլ բազում տեղիս սողացաւ և եմուտ ԲԽ չիք գողաբար S^2 սողացաւ   27 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք իբրև զօձ ԲS^2 և խրամատեաց Դ խրամատեալ է խրամ խատեալ։

տակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զբազմագոյնս ի շինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայից։

Որոց անուանքն են այս՝ գործակցաց նորա.
Իշխան Ռշտունեաց՝ ԱՐՏԱԿ անուն.
Իշխանն Խորխոռունեաց՝ ԳԱԴԻՇՈՅ անուն.
Իշխանն Վահեւունեաց՝ ԳԻՒՏ անուն.
Իշխանն Բագրատունեաց՝ ՏԻՐՈՑ անուն.
Իշխանն Ապահունեաց՝ ՄԱՆԷՃ անուն.
Իշխանն Գաբեղէնից՝ ԱՐՏԷՆ անուն.
Իշխանն Ակէոյ՝ ԸՆՋՈՒՂ անուն.
Իշխանն Ուրծայ՝ ՆԵՐՍԵՀ անուն.
Իշխանն միւս ևս Պալունեաց՝ ՎԱՐԱԶՇԱՊՈՒՀ անուն.
Սեպուհ մի Ամատունեաց ՄԱՆԷՆ անուն.

Բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկսն անուանեն՝ յարքունի տանէ։

Եւ բովանդակ զիւր բոլոր աշխարհն ապստամբեցոյց յուրացութիւն, ոչ միայն ըստ աշխարհական բազմութեանն, այլ և զբազումս ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն. մանաւանդ սուտ երիցամբքն՝ որով գործէր զչարիսն. երէց մի Ջանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւագ մի Սահակ անուն, սարկաւագ մի Մուշի անուն, զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր. սուրբ աւետարանաւն երդնուին և ասէին, եթէ «ի թագաւորէն շնորհեսցի ամենեցունց քրիստոնէութիւնդ»։ Եւ այսպէս խորամանկ խաբեութեամբ հանէին զբազումս ի սուրբ միաբանութենէն, անէին և խառնէին ի գունդս ուրացողացն։

---

1 Դ յափշտակեաց առաւել յայտնութեամբ ԵԸԺԼԽԿՀՏ^1 յափշտակեաց էառ և եւ յայտնի (Կ յայտնութեամբ) ԲԳ չիք և (էառ) Դ չիք և էառ և եհան Գ եւ փխ եհան և յազատաց անտի և գլոլովս 2 Գ զբազմագոյն ԵԸԺԼՀՏ^1 զլոլովագոյնս և ի շինականաց անտի ԶԷՎՏ^3 իշխանաց փխ ի շինականաց ԳԵԸԺԼԽՏ^1 և զայլս 4 ԲԳ անուանք ԳԴԵ գործակցացն 5 ԳԴԵԸԽ Ըռշտունեաց Գ Ատակ 6 ԲԳ Գադեշ ԵԸԺԼԽԿՀՏ^1 Գադեշոյ 7 ԳԵԸԺԼԽԿՀ Վահաւունեաց ԾՏ^1 Վահունեաց ԱԳԴԶԷԹԻԾԿՎՏ^3 Գիտ ԲԵԸԺԼԽՀA Գիւտ 7—8 ԲՏ^2 Հաջորդ տողին հետևում է «իշխանն Ամատունեաց Մանաճիհ անուն» 8 ԲՏ^2 Տիրան է Տիրոյ 9 Բ չիք իշխանն Ապահունեաց Մանէճ անուն Դ Մանաճիհ 10 Գ Գաբաղենից ԵԺԼԽՏ^{1}Տ^2 Գաբեղինաց Ը Գաբեղենաց Հ Գաբեղինեաց Դ Արտակ ԵՀ Արտէ 11 ԱԶԷԹԻՎՏ^3 Ակեաց (ԶԷ Ակէաց) ԳԴԵԸԺԽԾԿ Ընձուղ 12 Բ Արծրունեաց փխ Ուրծայ է Ուրծոց և Ուրծոյ ԿԳ Ներսոհ 13 Գ իշխան Բ չիք միւս ևս ԳԴԵԺԼԿՀՏ^1 Վարաշապուհ Ըև Վադարշապուհ 14 Բ յԱմատունեաց Դ Ամատունի

առաջացնելով՝ հայտնապես հափշտակեց-առավ ու դուրս հանեց բազմաթիվ ազատների և է՛լ ավելի բազմաթիվ շինականների, ինչպես և ուրիշ ոմանց, որոնք միայն անունով էին քահանա։

Նրա գործակիցների անունները սրանք են[109].
Ռշտունյաց ԱՐՏԱԿ անունով իշխանը.
Խորխոռունյաց ԳԱԴԻՇՈ անունով իշխանը.
Վահևունյաց ԳՅՈՒՏ անունով իշխանը.
Բագրատունյաց ՏԻՐՈՑ անունով իշխանը.
Ապահունյաց ՄԱՆԵՃ անունով իշխանը.
Գաբեղենից ԱՐՏԵՆ անունով իշխանը.
Ակեայի ԸՆՋՈՒՂ անունով իշխանը.
Ուրծի ՆԵՐՍԵՀ անունով իշխանը.
Պալունյաց մյուս մասի ՎԱՐԱԶՇԱՊՈՒՀ անունով իշխանը.
Ամատունյաց մի սեպուհ ՄԱՆԵՆ անունով։

Եվ ուրիշ շատ ազատ մարդիկ արքունի տնից, որոնց ոստանիկ են անվանում։

Եվ իր ամբողջ երկիրը լիովին ապստամբեցրեց և ուրանալ տվեց ո՛չ միայն բազմաթիվ աշխարհականների, այլև շատերին եկեղեցու սուրբ ուխտից, մանավանդ սուտ երեցների միջոցով, որոնց ձեռքով գործում էր այն չարիքները. այն է՝ մի երեց Ջանգակ անունով, մի երեց Պետրոս անունով, մի սարկավագ Սահակ անունով, մի սարկավագ Մուշի անունով. սրանց ուղարկում էր անմեղ մարդկանց մոտ, խաբում էր ու մոլորեցնում. երդվում էին սուրբ ավետարանով և ասում, թե «Թագավորի կողմից ամենքին պետք է շնորհվի քրիստոնեությունը»։ Եվ այսպես խորամանկ խաբեությամբ շատերին անջատում էին սուրբ միաբանությունից, անում ու խառնում էին ուրացողների խմբերին։

Հ Մանուն 15 A որ ԴԶԷՎ չիք ազատ ԹԼԽ մարդիկք ԱԶԷԹԻԽՎ ոստիկանսն ԳԵԺԼԾԿՀՏ^{1}Տ^{2}Տ^{3}A ոստանիկսն ԲԴԸԽ ոստիկանս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 անուանէին 17 ԲՏ^2 և զիւր աշխարհն բովանդակ ԵԸԺԼԽՀՏ^1 և բոլորովին ԵԸԺ չիք բոլոր 17—18 Է չիք «ապստամբեցոյց—աշխարհականն» 18 ՎՏ^3 ըստ աշխարհին A աշխարհիկ ԲՏ^2 կարգին փխ բազմութեանն ԲԳ չիք և 19 A յուխտէ փխ ի սուրբ ուխտէ Դ երիցամբք Հ երիցամբն ԵԸԺՀ որովք 20 Գ զչարութիւն ԸԹԽ էրէց Դ Ջանկակ 20—21 ԶԷՎ չիք երէց մի Պետրոս անուն 21 ԲՏ^2 սարկաւագ մի Մուշի անուն մյուս բոլոր ձեռագրերը չունեն այս) 22 Դ մարդիք Բ և խաբէր 23 Բ չիք և ասէին Դ թէ 23—24 Բ շնորհեսցեն զքրիստոնէութիւնն Բ չիք ամենեցունց ԳԵԸԼԽ ամենեցուն զքրիստոնէութիւն Տ^2 ամենեցուն քրիստոնէութիւն 24 ԺԿՀ զքրիստոնէութիւն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 խորախորամանկ խաբէութեամբ (ԲՀ խորամանգ) ԷԹԻՎՏ^{3}A խորամանկութեամբ ԱԶ խորամանկութեամբ 25 Բ չիք զբազումս Հ ի սուրբ ուխտէն և միաբանութենէն Ըև խառնակէին 25—26 ԳԴ ի գունդ 26 Դ ուրացելոցն։

Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւն, և արար գունդ զօրաց բազմաց. գրեաց և եցոյց զբազումս ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով՝ ո՛րպէս աշակերտեաց ի մոլորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկցեղս երևեցոյց զզօրսն Հայոց։

Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոց ստութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց։ Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք։ Եգիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն՝ զոր միաբանեցին երկոքեանն։

Գրէր նա և ցուցանէր հանապազորդ, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին։ Եւ զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի Թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զսուրբ եպիսկոպոսացն զմիտս եւ ուծացոյց ի նոցանէ ,և զամենայն զօրսն Յունաց յերկբայս արար յուխտէն։

Մանաւանդ զի ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր և խաբէր իբրև ճշմարիտ մարդովք. աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սատանայական ստութիւնն նոքօք ծածկէր։

---

1 ԵԸԺԼԽՀՏ^1 չիք և։ ԲՏ^2 զգայթակղեալս ԱՁԷԹԻՎՏ^{1}Տ^3 գայթակղութիւն ԳԵԼԽԿՀ գայթագղութիւնս ԴԸԺ գայթակղութիւնս Դ գունդս 2 Բ չիք յականէ 2—3 Բ եցոյց մեծ հազարապետին զբազումս ի նոցանէ յանուանէ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մեծ հազարապետին զբազումս ի նոցանէ յականէ և յանուանէ (Դ չիք և ԺԼ չիք մեծ ԸԽ չիք յականէ յանուանէ) 3 Ե արութեան Տ^2 արիութեանն 4 ԲՏ^2 որպէս ԲՏ^2 աշակերտեացն ի մոլար խաբէութիւնն ԴԿ խաբէութեանն 4—5 Բ և բարժանեալ երկցեղս 5 է զզօրսն 6 Թ չարիքս ԲՏ^2 յաջողեցաւ Դ աջողեցան է չիք և 7 Բ և զՀայոց և զԱղուանից և ոչ ետ Դ Աղուանից Ե ոչ յետ 8 Դ չիք իսկ Բ ըստ նմին օրինակի և զաշխարհն Աղձնեաց 8—9 Բ չիք յետս կալաւ ԹԽ յետս ընկալաւ 9 ԳԿ հրովարտակս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 գրեաց և հրովարտակս և յղեաց (Լ գրեցաւ) ԲԴԻ գրեաց և հրովարտակ (Դ հրովարտակս) ԼԽՀ աշխարհն ԱԲԳԵԹԺՑԿՏ^{1}Տ^2 յաշխարհն ՁԷՎ յաշխարհին 9—10 Բ չիք նոցա 10 Բ չիք ստութեամբ Գ որ Դ չիք որոյ ԵԺԼԽԿՀՏ^1 որում ԵԼԺԽԿՀ անուանիւր Տ^3 անուանէր 10—11 ՑՏ^1 անուն Վասակ ԲԴՏ^2 որոյ անուն էր (ԴՏ^2 չիք էր) Վասակ Մամիկոնեան որ կայր 11 ԳԴ այնց ԵԸԺԻԼԽՀ Մամիկոնէից ԴԻ ի ծառայութիւն 11—12 է թշնամութեան փխ թշուառութեան ԵԸԺԼԽԿՀՏ^1 չուառութեան 12 Բ ասպարապետ Բ տոհմին փխ ստորին Դ երկրին փխ ստորին 13 ԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 հաւատարիմ էր Լ զօրացն Հոռմաց ԻՑՀՏ^1 Հոռմոց Բ ի սահմանս 13—14 ԳԴԵԸԺԼԽՏ^1 արտաքին էր ԿՀ արտաքին 14 Բ չիք էր Ե օրինացն յաստուծոյ ԸԽ նոցա փխ աստուծոյ Թ չիք իւրովք Դ այս Վասակս մյուս բոլորը՝ այս Վասակ 14—15 ԱԲՁԷԻԹՎ (զայն) Վասակն ԳԴԵԸԹԻԼԽՑԿՀՏ^{1}Տ^{2}Տ^3 զայն Վասակ 15 Բ ի մեծ չարիսն Դ չարիս A յոր 15—16 ԲԴՏ^2 միաբանեցին երկոքին Գ միաբանին Կ երկոքեան 17 ԱԳԵՁԸԹԺԻԼԽԿՀՎՏ^{1}Տ^2 հանապազորդ նա Բ գրէր և ցուցանէր հանապազ որպէս Տ^2 գրէր և ցուցանէր հանապազ իբրու ԽԿՀՏ^3 գրէր և ցուցանէր ԵԸԼԽ իբրու թէ ԳԿ իբրև Դ նաև փխ իբր թէ 15—18 է չիք «երկոքեանն—միաբանեցին» 18 Ը չիք իւր Խ նորա փխ իւր ԲՏ^2 միաբանեցան 19 Բ Վասակ 20 ԱԹԻՎՏ^3 միտսն Գ եւ զմիտս ԵԸԼԽՀՏ^1 զմիտսն ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^1 չիք եւ 21 Բ զզօրսն Կ երկբայս ԲՏ^2 ի սուրբ ուխտէն 22 Բ չիք զի Ը չիք սուտ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և խաբէր 23—24 Դ աւետարան և խաչ տայր տանել ՁՎ աւետարանն 24 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 և զամենայնզիւր Բ և զամենայն զիւր սատանայական խորհուրդն Դ և զամենայն զիւր զսատանայական ստութիւնն Ե ստութիւն Տ^2 խորհուրդն փխ ստութիւնն Բ չիք Նոքօք Ե զինք։

Նա ժողովեց բոլոր գայթակղվածներին և մի մեծ զորագունդ կազմեց. նրանցից շատերի անունները մեկ առ մեկ գրեց և ցույց տվեց մեծ հազարապետին, ինչպես և իր արիությունն ու քաջությունը, մեծապես պարծենալով, թե ինչպես աշակերտեցրեց մոլար խաբեությանը. և այնպես ցույց տվեց, թե Հայոց զորքը բաժան-բաժան է եղել և պառակտված է։

Եվ երբ այս բոլոր չարիքները հաջողվեցին նրան, քանդեց նաև Վրաց աշխարհի միաբանությունը[110] Հայերից, Աղվանիցն էլ չթողեց առաջ շարժվել. նույն ձևով ետ պահեց նաև Աղձնյաց երկիրը։ Թուղթ գրեց նաև Հունաց երկիրը Վասակ անունով մի մարդու այն Մամիկոնյաններից, որոնք Հույների ծառայության մեջ են գտնվում, ցույց տալով [ամեն ինչ] հեղաշրջված և սուտ ու սխալ։ Այս թշվառության ժամանակ այն մարդը Ստորին Հայքի[111] սպարապետ էր և Հոռոմների զորքերին հավատարիմ մի անձ Պարսից սահմանի վրա, և իր գործերով Աստծու օրենքներին հակառակ գործող մարդ էր։ Այս Վասակն իրեն գործակից գտավ այն Վասակին այն մեծամեծ չարիքների մեջ, որի համար երկուսը միաբանվեցին։

Նա գրում և շարունակ ապացուցում էր, իբր թե ամբողջ Հայաստանը միաբանվել է իր հետ։ Այս միևնույն գիրը ներքին Վասակը[112] մեծ զգուշությամբ ուղարկում էր կայսեր թագավորանիստ քաղաքը, մինչև որ սուրբ եպիսկոպոսների միտքն էլ սառեցրեց նրանցից և հույների ամբողջ զորքի մեջ էլ կասկած գցեց ուխտի վերաբերմամբ։

Մանավանդ որ այն սուտ քահանաների ձեռքով խաբում ու մոլորեցնում էր ինչպես ճշմարիտ մարդկանցով. ավետարան էր ուղարկում խաչի հետ միասին և իր ամբողջ սատանայական ստությունը ծածկում էր

Դնէր զինքն յաստուածպաշտութեան կարգի և զամենայն կողմ ուրացելոցն. առաւել զինքն հաւաստէր հաստատուն քան զամենայն զօրսն Հայոց. երդնոյր և հաստատէր, ես և զամենայն հրամանս թողութեան յարքունուստ ցուցանէր։

Այն էին և կամք Յունաց աշխարհին, լսել զայն ախորժութեամբ. այլ ի ձեռն նորա առաւել ևս ի նոյն յեղեալ տապալեցան։

Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն խաղտեաց. յղէր պնդէր, զի ասպնջականութեան ոք արժանի մի՛ արասցէ։

Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել ևս ժամանակն եբեր նմա զյաջողութիւն իրացն. զի ամենևին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ գնդին Հայոց, բաց յայնց Հոնաց, որոց բանս եղեալ էր։ Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այրուձին Արեաց, արգել և փակեաց զդրունս ելին նոցա։ Քանզի ոչ տայր դադար ամենևին թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր գունդս բազումս ի պահակն Ճորայ, և զՎրաց աշխարհն բովանդակ անդ գումարէր, զզօրսն Լփնաց և զՃղբաց, և զՎատն, զԳաւն և զԳղուարն և զԽրսանն և զՀեճմատակն, զՓասխն և զՓոխն, և զՓիւքուան և զամենայն զօրսն Թաւասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն, և զամենայն ամրակողմն լերանցն։ Էր զոր կարասեաւ, մեծաւ պարգևօք և առատաձեռն բաշխելով զգանձսն արքունի, և էր զոր հրամանաւ թագաւորին սաստիւ տագնապէր։

---

1 ԱՁԷԹԻV ի կողմ Գ կողմն Դ յամենայն կողմն ԵԸԺԽՀS^1 և քան զամենայն կողմն 1—3 S^2 կողմն ուրացելոցն ինքն հաստատէր՝ առաւել քան զզօրսն Հայոց 2 Դ զինքն հաստատէր քան ԱԲԳԴՁԷԼԽԿՀ հաստատէր ԸԹԺԻVS^1S^3 հաստատէր հաստատուն 3 ԳԴԵԸԾ զզօրսն 2—3 ԵԺԼԽՀS^1 քան զզօրսն ամենայն Հայոց Ի զօրէնսն փխ զզօրսն Ը չիք զամենայն 3—4 ԲS^2 հաւատարմացուցանէր զամենայն հրամանս արքունի 4 ԳԴ թողութեանն ԵԸԺԼԽՀS^1S^2 թագաւորութեան փխ թողութեան Բ չիք ցուցանէր 5 ԵԸԺԽ չիք այն ԲԳԼԿS^1S^2 էին էին Հ էին և կամք Դ չիք և Գ կամք և Բ աշխարհին Յունաց ԲS^2 զամենայնն փխ զայն Դ զայն ամենայն 5—6 ԲS^2 ախորժելով 6 ԵԸԺԽ ԾՀS^1 սորա փխ նորա ԵՁԷԹԻV և փխ ևս Գ չիք ևս ի նոյն յեղեալ ԵԸԺԼԽԿ չիք ի նոյն ԸԺԽԾ եղեղեալ ԲS^2 յեղելով S^1 առաւել ևս յեղեղեալ 7 Բ չիք առնէր ԳԿ կողմանսն 7—8 ԲS^2 ընդ ամենայն կողմն աշխարհին ամրականացն առնէր Ի Սորպատականաց փխ ամրականաց 8 ԱԷԻV Տզմորիսն Բ ի Տմորիս, ի Կորիք, յԱրձախ, յԱղուանս Գ չիք և ի Կորդիսն Դ Կորդուսիսն S^2 Կորդրիսն ԵԸԺԼԽՀS^1 Կորրիսն ԳԴԵԸԺԼԽՀS^1 յԱրձախն Կ յԱրձաղն Դ չիք և (յԱղուանսն) ԵԺԼՀS^1 և ի Վիրս Խ և ի Վիրն Կ ի Վիրսն 9 Կ Խախտեաց S^2 Եաղտեաց ԲS^2 յղէր և պնդէր ԲԳԿS^2 զի և է մի փխ զի ԲS^2 զոք 10 Գ չիք արժանի ԲS^2 արասցեն 11 ԱՁԹԻ չարութեանն Բ մեծութեան չարութեան ԲԴ չիք ևս 12 Բ չիք նմա ԴԵԸԺԽԾՀ յաջողութիւն Դ զաջողութիւն Է զբաջո.թիւն փխ զյաջողութիւն 12—13 Բ ոչ ոք 13 ԲԳԴԵԷԹԺԽVS^3 բայց փխ բաց ԲԴ յայնմ փխ յայնց ԳԴԵԺ Հոնացն Խ Հոնաեացն Դ բանս ՁԷV չիք էր 14 Դ չիք և ԲԳԴԵԺԼԽԿՀS^1S^2 այրուձի բազում Արեաց 15 ԱԳԴԵՁԷԸԹԺԼԽԾԿՀVS^3 ելին ԲS^2 ելից ԻԱ ելս ԱՁԷԹԻV և քանզի ԲԻS^2 ամենևին դադար 16 Դ չիք թագաւորին S^3Λ գգունդս 17 Գ Ճարայ Դ չիք և Հ ի Վրաց ԳԴԵԿ աշխարհն ԱԲԸԹԺԻԼԽS^1S^2 աշխարհն բովանդակ անդ գումարէր (Բ անդր գումարեաց) Λ զՎրաց աշխարհին բովանդակ գումարէր ԴԴԵԸԺԻԼԽԿՀS^1S^2 անդր 18 ԲԽ զզօրս Դ զզօրն ԵԸԼԾՀS^1S^2 Լբնաց Խ Լբնոց Բ զՃղփաց ԲԴ չիք և (զՎատն) Բ զԳղաւորն, զԳաւն Է զԳողուարն S^2 զԳղաւորն 19 ԲS^2 զԽարասփարանն փխ զԽրսանն Բ զՀլրճմատակն S^2 զՀեճմատակն ԱԷԹԻV զՀեճմատանն Բ չիք զՓասխն ԲԳԸԺԼԿS^1S^2 զՓոխսն ԴԷ զՓախսն Ե Փոխսն Թ զՓարխն Է չիք և զՓոխն Խ Փոզոն Ա զՓիւքանիան Բ զՓիւքուանն Դ Փիքանակն ԳԵԹԺԼԿՀS^1S^3 զՓիւքուանան ՁԷV զՓիլքանիան ԸԽ զՓիւրրօնան Ի զՓիւքայինան 20 Բ զԹաւասփարանն ԳԴԿ զԹաւապարանն Է Թաւասպարանն ԸԺԼԽՀS^1 Թօսպարանն S^2 Թաւափարանն Գ զլեռնայինն Դ լեառնայինն և դաշտայինն ԵԸԺԼԽԿՀ լեռնայինն և դաշտայինն 21 ԲԴԼԾ լերանց (Ծ լերանցն) ԲԴ և մեծամեծ փխ մեծաւ 22 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^2 չիք և Բ զգանձս ԸԽ չիք և 23 ԲԴS^2 սաստիկ Բ տագնապէին

նրանցով։ Իրեն և բոլոր ուրացողներին աստվածապաշտների կարգն էր դասում. իրեն ավելի հաստատուն էր ցույց տալիս, քան ամբողջ Հայոց զորքը. երդվում էր ու հաստատում և ցույց էր տալիս արքունիքից ստացած թողության բոլոր հրամանները։

Հույների երկրի կամքն էլ հենց այս էր— հաճությամբ լսել այս ամենը. բայց նրա [Վասակի] շնորհիվ է՛լ ավելի փոխվելով՝ նույն մտքի մեջ գլորվեցին։

Այսպես էր վարվում նաև աշխարհի բոլոր ամուր կողմերում, Տմորիքում[113] և Կորդվաց աշխարհում, Արցախում և Աղվանքում, Վրաստանում և Խաղտյաց աշխարհում[114]. մարդիկ էր ուղարկում, պնդացնում էր, որ ո՛չ ոք նրանց հյուրընկալության արժանի չհամարի։

Եվ նրա մեծ չարության համաձայն էլ առավելապես ժամանակը հաջողեցրեց նրա գործերը, որովհետև Հայոց զորքին դրսից ոչ մի օգնող չեղավ, բացի այն հոներից, որոնց հետ խոսք էին կապել։ Սակայն նրանց դեմ էլ հավաքեց Արյաց բազմաթիվ հեծելազորը, արգելեց և փակեց նրանց ելքի ճանապարհը. որովհետև նա ամենևին հանգիստ չէր տալիս Պարսից թագավորին, այլ ուղարկում-կանչում էր բազմաթիվ զորքեր Ճորա պահակը, հավաքում էր այնտեղ Վրաց աշխարհի ամբողջ զորքը, ինչպես և Լփնաց և Ճղբաց զորքերը. Վատը, Գավը և Գղվարը, Խրսանը և Հեճմատակը, Փասխը, Փոխն ու Փյուքվանը և Թավասպարանի[115] ամբողջ զորքը, լեռնայինն ու դաշտայինը և լեռների բոլոր բերդերին։ Ոմանց գույքով, մեծ պարգևներով և արքունի գանձարանից առատ-առատ պարգևներ բաշխելով, ոմանց էլ թագավորի հրամանով սպառնալով՝ տագնապի մեջ էր գցում։

Զայս ամենայն իբրև արար և կատարեաց ըստ հրամանի թագաւորին, որ ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին Պարսից, որ դողեալ և թաքուցեալ էր ի քաղաքն Փայտակարան։ Համարձակեցաւ այնուհետև և նա ցուցանել զինքն բազում ազգաց, էր՝ որոց ահ արկանէր, և էր՝ որոց սիրով պարգևս բաշխէր։ Կոչէ առ ինքն զՎասակ, և որք ընդ նմա իշխանքն ամենեքեան, բազում պարգևս շնորհէր նոցա յարքունուստ, և զօրացն՝ որ ի նորա բանի էին։ Տանէր զառաջեաւ և զուրացեալ երիցունսն. ցուցանէր, հաստատէր և յայտ առնէր, եթէ սոքօք որսացայց զնոսա՝ քակել ի միաբան ուխտէն։ Իսկ հազարապետն իբրև զայն լսէր՝ յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն, և յոյս առաջի դնէր նոցա. «Եթէ լիցի մեր յաղթութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դոցա ցուցից թագաւորին»։

Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև ըզբազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց, ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն։

Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին եղբօրորդիք երկու էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. գրեաց և եցոյց վասն նոցա յարքունիս, և էառ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա, մերժեաց և եհան զնոսա յաշխարհէն, զի մի՛ այլ դարձցին անդրէն։ Հալածեաց և փախոյց զամենայն միայնակեացս աշխարհին, ոյք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա։ Արար և կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ ճշմարտութեանն. և զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն՝ իմացուցանէր նոցա, և վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ որպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց։

Երբ այս ամենն արեց ու ավարտեց թագավորի հրամանի համաձայն, ամեն օր գրում ու ցույց էր տալիս Պարսից մեծ հազարապետին, որ ծածկվել-թաք էր կացել Փայտակարան քաղաքում։ Այնուհետև նա [Միհրներսեհն] էլ համարձակվեց իրեն ցույց տալ շատ ազգերի. ոմանց ահ էր տալիս և ոմանց էլ սիրով պարգևներ էր բաշխում։ Իր մոտ կանչեց Վասակին և նրա հետ եղած բոլոր իշխաններին, շատ պարգևներ շընորհեց նրանց արքունի գանձարանից, նույնպես և այն զորքերին, որ նրան համամիտ էին։ [Վասակը] նրա առջև տարավ նաև ուրացող երեցներին. ապացուցում էր, հաստատում և հայտարարում, թե սրանց միջոցով պիտի որսամ նրանց ու բաժանեմ միաբան ուխտից։ Իսկ հազարապետը երբ այդ լսեց, շատ շնորհակալ եղավ երկուսից էլ և հուսադրեց նրանց. «Եթե հաղթությունը մեր կողմը լինի, մյուս քահանաների ունեցած-չունեցածը դրանց եմ շնորհելու և դրանց մեծ ծառայության մասին հայտնելու եմ թագավորին»։

Եվ այսպես [Վասակը] շարժեց ու շփոթեց Հայոց աշխարհը, մինչև իսկ բազմաթիվ հարազատ եղբայրների բաժանեց միմյանցից. հորն ու որդուն միաբան չթողեց և խաղաղության մեջ խռովություն գցեց։

Նույնիսկ հենց իր երկրում նա երկու եղբորորդի ուներ առաքինության սուրբ ուխտի մեջ. նրանց մասին գրեց և հայտնեց արքունիքին և իրավունք ստացավ նրանց ստացվածքի վրա. նրանց հեռացրեց-քշեց երկրից, որպեսզի այլևս այնտեղ չվերադառնան։ Հալածեց ու փախցրեց աշխարհի բոլոր միայնակյացներին, որոնք նախատում էին նրա անդարձ ամբարշտությունը։ Ամեն չարիք արեց-պրծավ ճշմարտության դեմ. և ինչ էլ որ չէին իմանում անօրեն հեթանոսները, հասկացնում էր նրանց, նաև քրիստոնեության ուխտի վերաբերյալ, թե ի՞նչ հնարքներով կարող է այն վերացնել Հայոց աշխարհից։

---

1 Դ չիք իբրև է չիք և ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 կամաց Բ զկամս փխ *ըստ հրամանի 3 Գ զուղեալ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^1 չիք և ԲԴՏ^2 ի քաղաքին 4 Բ և նա այնուհետև և ցուցանէր ԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ապա այնուհետև նա Բ բազմաց* փխ *բազում ազգաց* **Մյուս բոլորը՝** *բազում ազգաց 5 Ըն հարկանէր* փխ *ահ արկանէր է չիք և Բ չիք սիրով V ոչ էր* փխ *կոչէր 6 Ե զՎասակն ԵԸԺԽԿՏ^2 ընդ նմայն էին Բ զՎասակ և զամենայն իշխանսն որ ընդ նմայն էին ԱԴՁԷԹVՏ^3 և որք ընդ նմա իշխանքն ամենեքեան ԳԻԼԾՀՏ^1 ընդ նմա էին Դ ամենայն 7 ԱՁԷԹԻVՏ^3 բաշխէր* փխ *շնորհէր ԲԳԴԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 յարքունեաւ շնորհէր նոցա ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 նոցա* փխ *նորա Գ բանին 8* A *տարեալ էր* փխ *տանէր Կ տանէին Գ զառաջաւ Դ իրիցունսն ԳԴԵԽԾՀ ցուցանէր և հաստատէր Բ չիք հաստատէր 9 Բ և յայտնէր է ,այտնի առնէր ԲՏ^2 նոքօք ԲԴ որսացայ Ժ որսացոյց ԲԴՀ քակել 9—10 ԲԴ ի միաբանութենէ քրիստոնէութեանն ԳԵԺԼԽԿՀՏ^1 ուխտէն քրիստոնէութեան Ը ուխտէն քրիստոնէից Տ^2 քակտեալ ի միաբանութենէ քրիստոնէութեան Ի ի միաբանութենէն* փխ *ի միաբան ուխտէն 10 Տ^3 յուխտէն Դ զայս Դ չիք յոյժ 10—11 Կ չիք լինէր ԴԼԿ երկոցունց ԲԴՏ^2 լինէր նմա և երիցանցն 11* A *երիցանցն* փխ *երկոցունցն Բ նոցա և առէր ԳԵԺԼԿՀ թէ 11—12 Բ մեր լիցի յաղթութիւնն* A *յաղթութիւնդ 12 Դ զայլոյ Բ քահանայիցն զկեանսն Խ զկեանս 12—13 ԲԴԵԸԺԽԾՀՏ^1 վաստակս Գ վաստակդ Կ վաստակով 14 ԲԴ չիք և Դ շփոյթեաց 14—15 Խ բազում եղբայրս 15 Բ չիք հարազատս ԲԴ և ոչ եթող 15—16 Բ զհայր և զորդի միաբան 16 Լ չիք և ԳԴԵԸԺԼԽԾԿՀՏ^1 արկանէր* փխ *արար ԲՏ^2 խռովութիւն բազում 17 Բ ի յիւրում ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 երկու եղբօրորդիք էին Բ էին նորա երկու Ե չիք երկու 18 Ը քրիստոնէութեան* փխ *առաքինութեան Գ չիք և 19 Ի յարքունիս Դ յարքունիսն Դ առ Ը զիշխանութիւն Գ վասն* փխ *ի վերայ Բ չիք կենաց 20 ԳԿ չիք և ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք այլ 21 Դ չիք և ԲՏ^2 զմիայնակեացսն յաշխարհէն որ ԴԺԻԼ որք 21—22 Ա հայհոյին 22 V որ արար Բ զչարիսն 23 Եէ ճշմարտութեան Բ ոչինչ* փխ *ինչ ոչ 24 Բ հեթանոսք՝ նա իմացուցանէր նոցա վասն Ի հեթանոսք ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք նոցա և ԳԴ չիք և 24—25 ԱՁ քրիստոնէութեան 25 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ թէ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 որպիսի ԴԻ կարէ։*

Զայս ամենայն չարիս իբրև ետես ի նմա Միհրներսեհ, քան յանձն իւր՝ առաւել ի նա էր յուսացեալ։ Հարցանէր և ստուգէր՝ թէ քանի՞ այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն։ Իբրև լուաւ ի նմանէ՝ թէ աւելի քան զվաթսուն հազար են, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի՛ այն որ իցեն՝ որ սպառազէնքն իցեն, և կամ քանի՛ այն որ իցեն՝ որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս և վասն վահանաւոր հետևակացն։

Եւ իբրև լուաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել ևս փութացաւ ուսանել՝ թէ քանի՛ք իցեն պարագլուխք քաջ նահատակացըն, զի երիս ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի ի նոցանէ, թող զայլն ամենայն։ Այլ և դրօշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր ի նմանէ. և թէ քանի՛ գունդ զզօրսն բաժանիցեն, և ո՛ր ոք ի նոցանէ սաղարք լինիցին, և ո՛ր զօրագլուխ յորմէ կողմանէ յաղմ մտանիցէ, և զինչ անուանք իւրաքանչիւր համհարզացն իցեն, և քանի՛ փողահարք ի մէջ գնդին ձայնիցեն։ Ղակի՞չ գործիցեն արդեւք, եթէ արձակ բանակեսցին. ճակատ առ ճակա՞տ գործիցեն, եթէ համագունդ ընդ մի տեղի դրդիցեն։ Ո՛ ոք ի նոցանէ երկրայս կայցէ, և կամ ո՛ ոք ի նոցանէ զանձն ի մահ դնելով գուն գործիցէ։

Եւ իբրև զայս ամենայն տեղեկացաւ ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլխեանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա լուիցեն ամենեքեան։ Եւ զամենայն

---

1 Բ չիք ի նմա ԵԺԼԽՏ^1 ի նա ԳԵԸԺԽԾՀ Միրներսեհ 1—2 ԲՏ^2 առաւել քան յանձն իւր 2 Դ ի նա յուսացեալ էր ԲԳԴԵԺԼԿՀ եթէ 3 Բ ի յաշխարհին Հայոց Ե ի Հայոց գնդին աշխարհին Վարդանայ 4 Ե բազմութիւն Բ և իբրև ԲԳԴԿ եթէ 4—5 ԵԸԺԼԽՀՏ^1 աւելի են 5 Է էին փխ են ԲՏ^2 տեղեկացոյն 6 ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀ Տ^{1}Տ^2 այնոքիկ փխ այն որ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 են փխ իցեն ԸԽՀ չիք «որ սպառազէնքն—այն որ իցեն» ԲԵԺԼԿ են փխ իցեն 7 ԲԳԴԺՏ^{1}Տ^2 այնոքիկ իցեն Դ որք Դ մերկք 7—8 ԲԴՏ^2 աղեղնաւորքն 8 ԲՏ^2 նոյնպէս ԼՏ^1 չիք վասն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^1 հետևակաց Ա հետևակացն 9 ԲՏ^2 ստուգեաց փխ լուաւ ԳԴԵԸԼԽԿՀՏ^1 ուսաւ փխ լուաւ Գ համարոց ԾՏ^1 զանթիւ(!) Ե բազմութեան Բ չիք ևս 10 Է առնուլ փխ ուսանել Թ ուսանիլ ԲԳԴԿ եթէ ԲԼ քանի Բ պարագլուխ 11 Է պատրաստիցէ 12 ԱՋԹՎՏ^3 զայլ փխ զայլն Գ չիք զայլն Գ զամենայն Բ չիք այլ ԳԿ դրօշուց Դ զդրօշուց ԲԴ չիք անգամ ԲԳԴԵԸԺԼԽԿ ՀՏ^{1}Տ^2 իւրաքանչիւր Է իւրաքանչիւրոյ 13 Բ ի նոցանէ փխ ի նմանէ Բ չիք և Բ եթէ ի քանի գունդ զօրքն բաժանեսցին Ե ո՛ ոք ԳԿ զօրքն ԳԿ բաժանիցին ԸՀ բաժանեսցին ԴԺ

Երբ այս բոլոր չարագործությունները Միհրներսեհը տեսավ նրա մեջ, իր անձից ավելի հույսը նրա վրա դրեց։ Հարցնում և ստուգում էր, թե ընդամենը քանի՞ մարդ կա Հայոց աշխարհում Վարդանի գնդի մեջ։ Երբ նրանից լսեց, թե վաթսուն հազարից ավելի են, նաև տեղեկություններ պահանջեց յուրաքանչյուրի քաջության մասին, կամ թե՝ նրանցից քանի՞ հոգի են սպառազեն, և կամ քանի՞ հոգի են առանց զենքի լոկ աղեղնավորներ. նույնպես և վահանավոր հետևակների մասին։

Եվ երբ լսեց բազմության թիվն ու համարը, է՛լ ավելի շտապեց իմանալ, թե քանի՞սն են քաջ զինվորների պարագլուխները, որպեսզի նրանցից յուրաքանչյուրի դեմ երեքը պատրաստի, բացի բոլոր մնացած բաներից։ Մինչև անգամ նրանցից ամեն մեկի դրոշների[116] մասին էլ էր տեղեկություն հարցնում, և թե զորքը քանի՛ գնդի են բաժանելու և նրանցից ովքեր պետք է հրամանատար լինեն, և ո՛ր զորագլուխը ո՛ր կողմից պետք է պատերազմի մեջ մտնի, և ի՛նչ են յուրաքանչյուր համհարզների անունները, և քանի՛ փողահար պետք է ձայն արձակեն գնդի մեջ։ Արդյոք [ցցապատնեշներով ու խրամով շրջապատված] բանա՞կ պիտի դնեն, թե արձակ դաշտում տեղավորվեն. ճակատ առ ճակա՞տ պիտի գործեն, թե համագունդ մի տեղի վրա պիտի գրոհ տան։ Նրանցից ո՛րը պետք է տատանման մեջ մնա և կամ նրանցից ո՛րը ջանք թափի՝ իր անձը մահվան ենթարկելով։

Եվ երբ այս ամենի մասին տեղեկացավ նրանից, կանչեց բոլոր զորագլուխներին, նրա ներկայությամբ բոլորին հրաման տվեց, որ բոլորը կատարեն նրա հրահանգները։ Եվ ամբողջ զորքը զորագլուխների հետ

գունդք զօրք բաժանիցին ԵԸԾՀ զօրք Տ^2 բաժանեսցին ԳԵԸԺԼԽՀՏ^2 և ո՛րք 14 ԵԸԺԽՀ սաղաւարք (լուսանցքում՝ զօրագլուխ) Ծ սաղաւարք Տ^1 սաղաւարտօք (!) ՋԷ լինիցի Բ զօրագլուխք 15 Բ յաղմ ոք Թ ռազմ Տ^{1}Տ^2 ի ռազմ ԻԾՏ^{1}Տ^2 համհազարացն 15—16 Վ համհազար անցանիցեն (!) Տ^5 համհարզ անցանիցեն 16 Դ և կամ (քանի) Է ձայնեն ԵԸԺԽՀ ղակիչ (լուսանցքում՝ համագունդ) Ի ղակիշ Թ ղակիշ (լուսանցքում՝ համագունդ կամ միաժողով) 17 ԱՋԷԹԻՎՏ^3 բանակեսցեն ԲԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 թէ արձակ բանակիցեն ԳԿ բանակիցին 17—18 Տ^2 չիք գործիցեն 18 Բ ընդ միմեանս դրդեսցեն ԳՏ^2 միմեանս փխ մի տեղի Տ^2 դրդեսցին 19 ԲԳԴԿ զայցէ փխ կայցէ ԳԴԵԸԺԽ ԿՀՏ^{1}Տ^2 չիք ի նոցանէ 19—20 Բ դիցէ գուն գործելով 21 Բ չիք Եւ ԱԳԴՋԷԹԻԿ ՎՏ^3 տեղեկացեալ Բ չիք ի նմանէ 22 ԲԵԸԺԼԽԾՀՏ^{1}Տ^2 զօրագլուխսն (Ըխ զօրագլուխն) ԱԳԴՋԷԹԻԿՎՏ^3 զօրագլխեանն 22—23 Բ յանդիման լինելով փխ յանդիման նորա 23 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 նմա փխ նորա Գ ամենիքեան։

զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն, որում անուն էր Մուշկան Նիւսալաւուրտ։

Եւ ինքն խաղայր անդէն գնայր յերկիրն Արևելից. և յանդիման եղեալ մեծի Թագաւորին, պատմէր զամենայն անցս իրացն. զիւր հնարաւոր իմաստութիւնն և զՎասակայ խաբէբայ պատրանս հայթայթանացն. ո՛րպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն Հայոց։

Իբրև լուաւ զայս ամենայն Թագաւորն ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր, և ասէ անսուտ երդմամբ. «Եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»։

---

1 Գ չիք «առն միում—անուն էր» V աւագացն 2 ԲԴ Մուշկիան Բ Նիլաւաւուրտ Գ Նիւսաղաւուրտ Է Նիասալաւուրտ A Նիսալաւուրտ 3 ԱԴՁԷԹԻ գնայր անդրէն V անդրէն գնայր ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք անդէն Ե յԱրևելից 4 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1} մեծ փխ մեծի ԲԵԸԺԼԽՀ և զիւր 5 Ե իմաստութիւն Է զիմաստութիւն ԵԸԺԼԽԿՀՏ^{1} զխաբեբայ ԱԴՁԷԹԻԿVՏ^{3} պատրանսն Հ զպատրանս 5—6 ԲՏ^{2} հայթաթանս պատրանացն 6

միասին հանձնեց ավագներից մեկին, որի անունը Մուշկան Նյուսալավուրտ էր։

Իսկ ինքն այնտեղից ելավ-գնաց Արևելյան երկիրը. և ներկայանալով մեծ Թագավորին՝ պատմեց նրան գործի բոլոր հանգամանքները, իր հնարագետ իմաստությունը և Վասակի խաբեբա ճար ու հնարները. թե ինչպես նա իր նախկին ամբարշտությունը կամեցավ ծածկել նրանով, որ քանդեց-երկպառակեց Հայոց զորքը։

Երբ Թագավորն այս ամենը լսեց մեծ հազարապետի բերանից, դառնացավ ինքն իր մեջ և անսուտ երդմամբ ասաց. «Եթե այն անօրենը ողջ ազատվի մեծ պատերազմից, մեծ անարգանքով նրան պետք է խըմացնեմ մահվան դառն բաժակը»։

ԱՁԹԻV զյառաջինն Բ ամպարշտութիւնն ԳԿ ամբարշտութիւնսն ԴԺԼԽ ամբարշտութիւնն ԵՀ ամբարշտութիւն Է զամբարշտութիւն 6—7 Թ կատարեցաւ փխ կամեցաւ 7 Բ այն փխ այնու ԲՏ^{2} քակեաց երկպառակեաց 8 ԵԸԺԼՀՏ^{1} թագաւորն զայս ամենայն 9 Ա յանձ 10 Դ պատերազմին 11 Դ ըմբել նմա Է տալ ըմբել Ը տալ ըմպել նմա ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1} զբաժակ Դ չիք մահու

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԸՆԴԴԷՄ ԿԱԼ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկևուղս առնէ զմարդիկ՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց, որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս։ Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին վանգիտելով իբրև զանարի՝ գոլով վատասիրտք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն յօտարութեան. առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. և ամենայն երևելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց։ Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդա-

---

Վերնագիր ԱԳԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀV վեցերորդ կրկին անգամ ընդդէմ կալ (V գալ) Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից (Ը ընդդէմ Հայոց կալ Հ պատերազմին Ժ երկու բաց թերթ) ԲԴՃ^{1}Ճ^{2}α Հինգերորդ կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսիս (!) (α պարսից) (Դ հինգերորդ) (Ճ^{2} հինգերորդ անգամ ընդդէմ կալ) S^{1} Գլուխ Ե. հինգերորդ յարձակումն յԱրևելից S^{2} Գլ. Ե. հինգերորդ յարձակումն յԱրևելից S^{3} A հինգերորդ յեղանակ. յարձակումն Արևելեայց ոչ մի ձեռագիր չունի «Յարձակումն արևելեայց» բառերը։

Բոլոր ձեռագրերը, բացի Ճ^{1}Ճ^{2}α-ից վերնագիր ունեն՝ «Վկայաբանութիւն սրբոց Վարդանանց» կամ «Վկայութիւն սրբոյն Վարդանայ և ամենայն զօրավարացն (կամ և այլոց նախարարացն) Հայոց» Ճ^{9} «Պատմութիւն պատերազմին սրբոց Վարդանանցն» Ճ$^{23-24}$ «Պատմութիւն սրբոց Վարդանանց զօրականացն ի մեծ պատերազմին»։

1 ԲԴS^{2}Ճ^{1}Ճ^{2}α մեծութիւնս երկրաւորս 2 ԴՃ^{1}Ճ^{2}α աներկիւղ ԶԷV առնէր ԳԴ զօրսն Կ զանմարմին զզօրսն 3 ԳԵԺԼԽԿՀ որպէս և ԲԳԴԿՃ^{1}Ճ^{2}α չիք զբազումս ԵԸԺԼԽՀS^{1}S^{2} չիք զբազումս բազում անգամ 4—5 Ե ի բազում տեղիս ԵԸԺԼԽՀS^{1}S^{2} բազում անգամ զինու չիք իբրև 4 Դ մարդիք Խ չիք մարդիկ 5 ԱԶԷԹԻV չիք խնայեցին Բ և ոչինչ 6 ԱԶԷԹԺԻV անարի ԲՃ^{1}Ճ^{2}α զանարի վատասիրտս ԳԵՃ^{4}Ճ^{5} անարի վատասիրտք ԳԴԸԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{1}Ճ^{2}αγՃ^{7}Ճ^{9}—Ճ^{14} և այլք չիք գոլով S^{2}γ վատասիրտս ԼՀS^{1} չիք կամ ի մահ անձանց 6—7 ԲԳԴԵԺԽԿS^{1}S^{2} ի յափշտակութիւն 7—8 ԲԴ կամ ելանել 8 Ի անկանել է ի ստուգութիւն փխ ի ստրկութիւն 9 ԲԴS^{2}Ճ^{1}Ճ^{2}α օտարութեան ԲՃ^{2}α զայն Դ համարելով զայն 9—10 ԳԴԵԶԷԹԺԻ չարչարանաց 10 ԲՃ^{1}Ճ^{2}α միաբանեցան ԸԹՀS^{2}Ճ^{20}γ միաբանեալ 11 ԲS^{2}Ճ^{1}Ճ^{2}α գերեսցին ԲS^{2}Ճ^{1}Ճ^{2}αγ և քան զամենայն երևելի մեծութիւնս Թ մեծութիւն ԼԾ գրել ի մեծութեանս (!) S^{1} գրել ի մեծութենէս(!) Դ գերի մի՛ ելցեն 11—12 ԶԷV բաւականս 12 ԲԴԸԺԿS^{2} ընտրել ԳԵՀ ընդրել Ծ չիք ընտրեալ ԴԵ զուրացութիւն Լ զուրախութիւնն փխ զուրացութիւնն Դ համարեցան 13 ԳԵԸԺԿՀS^{1} վարկան ԼԾγ մեռելութեան վարկան ԳԴԿ Ճ^{4}Ճ^{5}Ճ^{6}Ճ^{7}Ճ$^{9-18}$ զմահն α և զուրացութեան մեծութիւն չար համարեցան ԲԵԸԺԼՀS^{1}S^{2}Ճ^{6}α զմահն որ Ե կենդանութեան Բα չիք եւ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅԵՐԻ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԴԻՄԱԴՐԵԼԸ

Աստծու սերն ավելի մեծ է, քան ամեն երկրավոր մեծություն. և այնպես աներկյուղ է դարձնում մարդկանց, ինչպես հրեշտակների անմարմին զորքերը, ինչպես որ աշխարհի հենց սկզբից կարելի է տեսնել շատերին շատ անգամ և շատ տեղերում։ Այն մարդիկ, որոնք աստծու սիրով ինչպես զենքով սպառազինված էին, ամենևին չխնայեցին և անարի վատասիրտների նման չվախեցան ո՛չ մահից, ո՛չ գույքի հափշտակությունից, ո՛չ սիրելիների խողխողումից և ո՛չ էլ ընտանիքների գերությունից, հայրենի երկրից դուրս գալուց և օտար երկրում ստրկության մեջ ընկնելուց. Նրանք բանի տեղ չդրին այս բոլոր չարչարանքները, միայն թե միաբան մնան աստծու հետ, որպեսզի միմիայն նրանցից չմերժվեն, և նրան իրենց մտքում գերադասեցին բոլոր տեսանելի մեծություններից։ Եվ ուրացությունը մեռելություն էին համարում, իսկ աստծու համար մեռնելը՝ անանց կենդանություն. երկրիս վրա ծառայելը՝ իրենց *նութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիտից։*

Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց։

Քանզի իբրև ետես մեծ Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ. ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց։ Թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց ևս զերկմտութիւն, որ դեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղին միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն։ Հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրս տայր նոցա, զի դեռ ևս ինքն ունէր զամենայն աշխարհն։

Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն։

Ներշապուհ Արծրունի,
Եւ Խորէն Խորխոռունի,
Եւ ինքն Սպարապետն,
Եւ Արտակ Պալունի,
Եւ Վահան Ամատունի,
Եւ Գիւտն Վահևունեաց,
Եւ Թաթուլ Դիմաքսեան,
Եւ Արշաւիր Արշարունի,
Եւ Շմաւոն Անձաւացի,
Եւ Տաճատ Գնթունի,
Եւ Ատոմ Գնունի,

---

1 α յազատութիւն իւրեանց   2 ԳԴԵԸԺԼԽԿՀՃ$^{4-6,10-14,18,23,27}$ յօտարութիւն՝ ընտանութիւն ընդ աստուծոյ գիտացին Տ^{1}Տ^2 գիտացին ԲՃ^{1}Ճ^{2}Ա ընտանի աստուծոյ գիտացին   3 Բα որպէս և α չիք զի   4 Թ չիք և   5 Դ չիք իբրև Լխ զերկպառութիւն   5—6 ԲՃ^{1}Ճ^2 իւրոց աշխարհին α իւրոյ աշխարհին   6 Թ չիք իւրոյ ԲՏ^{2}Ճ^{1}Ճ^{2}α թերահաւատեաց տկարութեամբ   7 է ստուգեաց Բα զբազում Դα չիք ևս ԲԳԴՏ^1 երկմտութիւն α երկմտութիւնն   8 ԲՏ^{2}Ճ^{1}Ճ^{2}α միաբանք   9 Բα զզօրս Տ^2 և զզօրսն Բ քանզի դեռ α քանզի դեռ իսկ ինքն ԳԴԵԸԺՃ^{6}Ճ^{20} ինքն իսկ դեռ Ի չիք ինքն ԼԽԿՀՏ^{1}Տ^2 դեռ բռնացեալ Հα որք ԼԽՏ^{2}Ճ^{1}Ճ^{14}γ քակտեցան   11 Ըխ հրաման առեալ է զամենայն   12 ԲԹ որք Ը էին փխ ելին   13 ԱԲԴՁԷԹԻVՃ^{1}Ճ^{2}Ճ^{6}Ճ^{10}Ճ^{12}αγ չիք կամ զեղբարցն որդիս Գ զեղբարցնիս(!) փխ զեղբարցն որդիս Դ զեղբարսն Կ կամ զեղբարցն իսկ   13—14 Գ ի

կյանքի ազատություն, և իրենց անձերն օտարության մատնելը՝ աստծու հետ գտնվել։

Ինչպես որ այս ժամանակ մեր աչքերով տեսանք, որովհետև Հայոց աշխարհն էլ նույն նահատակությամբ նահատակվեց։

Որովհետև մեր մեծ Վարդանը տեսավ իր աշխարհի երկպառակությունը, ամենևին չվախեցավ թերահավատությամբ։ Թեպետև ստուգեցիմացավ դեռևս իրեն միաբանվածներից շատերի երկմտությունն էլ, այնուամենայնիվ ինքն իրեն սիրտ տվեց և իր զորքերին էլ քաջալերեց, քանի որ հենց ինքը դեռ գրաված էր պահում թագավորանիստ տեղերն այն նախարարների հետ միասին, որոնք չանջատվեցին սուրբ ուխտից։ Հրաման տվեց ամբողջ զորքին հավաքվել Արտաշատ քաղաքը. այն ետ կացածների փոխարեն, որոնք գնացին Սյունյաց իշխանի հետևից, կարգեց նրանց եղբայրներին կամ որդիներին կամ եղբորորդիներին և ամեն մեկին տվեց նրանց զորքերը, որովհետև ամբողջ երկիրը դեռ նրա իշխանության տակ էր։

Եվ նրանք բոլորը շտապով եկան-հասան պատերազմի վայրը, յուրաքանչյուրն իր զորքով ու ամբողջ պատրաստությամբ, նրանք և ովքեր ի բնե հաստատ էին մնացել իրենց տեղում։

Ներշապուհ Արծրունին,
և Խորեն Խորխոռունին,
և ինքը սպարապետը,
և Արտակ Պալունին,
և Վահան Ամատունին,
և Վահևունյաց Գյուտը,
և Թաթուլ Դիմաքսյանը,
և Արշավիր Արշարունին,
և Շմավոն Անձավացին,
և Տաճատ Գնթունին,
և Ատոմ Գնունին.

տեղիս տուեալ ԵՁԸԺԽԾԻα ի տեղիս է ի տեսիլ փխ ի տեղիս   14 ԱԲՁԹԺԻ և զիւրաքանչիւր զաւրարս տայ նոցա ԳԵԽԾԿՀՏ^{1}Տ^2 տան փխ տայր է զզօրս տայ Կ և փխ զի α քանզի փխ զի   15 Դ բռնացեալ ունէր   15—17 Ը չիք «զամենայն—հասանէին»   16 ԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 և ամենեքեան փութով   17 ԲԹ չիք զօրօք ԳԿ չիք և   18 ԲԹ բուն   17—18 Ա չիք «և ամենայն—ի տեղւոջն»   18 Բ հաստատեալ էին Խ հաստատութեամբ   19 ԱԲԳԴԹԻԿՃ^{1}Ճ^{2}Ճ$^{4-13}$Ճ$^{17-19}$Ճ^{26}αγ Մերշապուհ (α Մերշափուհ)   20 α Խորխոռունի   22—23 Ա և Վահան Ամատունի և Արտակ Պալունի   24 Տ^2 և Գիւտն Վահեւունեաց ճմմտ. էջ 186 տող 7։ Մյուս բոլորը՝ Գուղն   26 Դα Աշարունի   27 ԲԴՃ$^{4-5}$Ճ^{12,14,27} Անձեացի   28 Դ Քթունի Ճ^{1}Ճ^{2}α Քնթունի ԽՀՃ^{12} Գրթունի   29 Դ Ատոմն Հ Կնունի։

Եւ Խոսրով Գաբեղեան,
Եւ Կարէն Սահառունի,
Եւ Հմայեակ Դիմաքսեան,
Եւ միւս ևս այլ Գազրիկ Դիմաքսեան,
Եւ Ներսեհ Քաջբերունի,
Եւ Փարսման Մանդակունի,
Եւ Արսէն Ընծայացի,
Եւ Այրուկ Սղկունի,
Եւ Վրէն Տաշրացի,
Եւ Ապրսամ Արծրունեացն,
Եւ Շահխոռապետն արքունի,
Եւ Խուրս Սրուանձտեաց,

Եւ Քաղեանքն և Ակէացիքն և Տրպատունիքն, և զօրքն Ռշտունեաց, և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ:

Սոքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ։

Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփ և Ղևոնդ երէց, և բազում և այլ քահանայք, և ևս բազմագոյն պաշտօնեայք։ Քանզի ոչ ինչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսին ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն այլ հոգևոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն։

Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ.

«Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա

---

1 ԳԿ Գաբաղեան 2 ԳԿՃ^{11,13,18,26} Սախառունի 2—3 ա չիք Կարէն Սահառունի և Հմայակ Դիմաքսեան 3 Հ Դիպաքսեան 4 ԱԲԳԴՁԷԹԻԿՀVՏ^{3}Ճ^{1}Ճ^{2}Ճ$^{4-9,11,13-14}$ա Գազրիկ Դիմաքսեան ԵԸԺԼԽՄՀՏ^{1}Տ^2 եւ Գազրիկ Դիմաքսեան Է զազրիկ Դիմաքսեան A Դիմաքսեան Գազրիկ 5 Դա չիք և 6 Դ չիք և Բ Փարսամ Ջ Փարսիման Ը Փասրման V Փարս 7 ԳԿՏ^{2}Ճ$^{4,7,11,17-19,23,26}$ Ընծային ԴՃ^{1}Ճ^{2}ա Ընծայունի ԵԸԺԼԽՀ Ճ^{5,12,14,27} Ընձային Տ^1 ընձայային 8 ԵԼՏ^{2}Ճ^5 Ողկունի A Սլկունի ԼՄՏ^{1}Ճ^6 չիք Այրուկ Սլկունի 10 ԲԳԴԵԸԹԺԼՄԿՀ Արծրունեաց ա Արծրունի 11 ԱԲՁԷԹԻVՏ^3 Շահախոռապետն ԳԿՃ$^{5-8,9,1-13,18,26,27}$ Շախոռապետն Ժ Շախոռապետն Լ Շախուրապետն ԵՏ^{1}Տ^2 Շախուռապետն 12 ԱԲԹԻ Սրուանձեաց ՁԷ Ոսրուանձեաց ԳԿՏ^2 Սրուանձտեայ ԸՏ^1 Սաւանձտեայ ԴՃ$^{13-14}$γ Սրուանձտեա Ժ Սրւանձտեաց V Ուրուանձեաց (!) Խ Սուանձտեայ Ե Խուր Սնուանձտեաց ա և Խոսրով Ընծայացի 13 Հ Քաղեանքն ԱԲԹ չիք և (Քաղեանքն) ԲԻ Ակէցիքն Ը Էակացիքն Թ և Ակէցիքն Դ Ատրպատունիքն ա և բոլեանքն

և Խոսրով Գաբեղյանը,
և Կարեն Սահառունին,
և Հմայակ Դիմաքսյանը,
և էլի մի ուրիշ Դիմաքսյան՝ Գազրիկը,
և Ներսեհ Քաջբերունին,
և Փարսման Մանդակունին,
և Արսեն Ընծայացին,
և Այրուկ Սղկունին,
և Վրեն Տաշրացին,
և Ապրսամ Արծրունին,
և արքունի Շահխոռապետը,
և Խուրս Սրվանձտյացը,

և Քողյանները, և Ակեացիները, և Տրպատունիները, և Ռշտունիների զորքը, և արքունի բոլոր գործակալներն ամեն մեկն իր զորքերի հետ միասին[117]:

Սրանք բոլորը համախմբված հասան պատերազմի գործի համար Արտազու դաշտը[118], և նրանց ընդհանուր թիվը եղավ վաթսունվեց հազար մարդ ձիավոր և հետևակ։

Նրանց հետ եկան սուրբ Հովսեփը, սուրբ Ղևոնդ երեցը և բազմաթիվ այլ քահանաներ և է՛լ ավելի բազմաթիվ [հոգևոր] պաշտոնյաներ։ Որովհետև նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի գալ նրանց հետ, քանի որ ո՛չ թե մարմնական էին համարում այն կռիվը, այլ հոգևոր առաքինության կռիվ. ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել։

Սպարապետը նախարարների միաբանությամբ սկսեց խոսել զորքի հետ և ասաց.

«Շատ պատերազմներ եմ մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղ-

---

13—14 ԴԺ ըՌշտունեաց Ը ըՌշտունեաց 14 Դ գործակալք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 զօրու Ի զօրօք 16 ԳԴԵԺԼԽՀՏ^2 համագունդ ա նոքա ամենեքեան հասանէին 16—17 ԳԴԹԺՏ^2 պատերազմի 17 Բ լինիր ԴԸ համարոյն ա համարու 18 ԲՁԷԻVա չիք այր Ժ չիք ընդ հեծեալ և ընդ հետևակ 19 Խ եկին և ևս ընդ նոսա ԳԴԸԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}Ճ^{2}աγ Ճ^{18,20,23,27} սուրբն 19—20 ա բազում և այլ ԳԴԵԸԼԽԿ չիք և (բազում) ԵԴԺՀ բազում և այլ ևս 20 Բ այք Խ չիք ևս ԵԸԺԼԽՀՏ^1 չիք ինչ Խ բազմագոյն քահանայք և պաշտօնեայք ա ևս բազում պաշտօնեայք 21 ԱԲՁԷԹԻV չիք գալ ԱԲԳԴԵԸԺՏ^{2}Տ^{3}Ճ^{1}Ճ^2 ընդ նոսա Կ ընդ նոսին գալ 22 ա մարմնական ինչ ԱՁԷV առաքինութեամբք ԲԹԻ առաքինութիւնք Ճ^{1}ա առաքինութիւն Տ^3 առաքինութեամբ 23 էի ցանկանային Գ մահակիցք ԼՄ նահատակացս 24 Ի խօսիլ γ չիք միաբանութեամբ նախարարացն 25 ա ընդ զօրս 26 ԵՏ^2 չիք ի ԵԸԺԼԽՀՏ^1 ընդ իմ 27 ա և է զի նոքա մեզ ԲՑ յաղթեցին մեզ Դ զի և նոքա։*

մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք։ Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք։ Որ փախչէր, վատանուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր, իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր։ Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ և պարգևս մեծամեծս։ Անարգ և անօգուտ զքաջութիւնսն համարիմ, և առ ոչինչ զպարգևսն բազումս. վասն զի ամենեքեան խափանելոց են։

«Իսկ արդ եթէ վասն մահականացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, ո՛րչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց և մեռելոց, և դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց։ Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ ևս ելանիցեմք ի նմանէ։

«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց։ Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ

---

1 ԳԵԼԽԿՀՏ^{1}Տ^2 ուր փխ որ   1—2 ԳՀ չիք և ոչ յաղթեալք   2 Գ ընդ ամենայն փխ այն ամենայն Դ և միանգամ ընդ ամենայնն էին Ը չիք ամենայն ԵԸԺԼԽՀՏ^2 մարմնոյ պարծանք էին Ճ^{1}Ճ^{2}α մարմնոյ էին   3 α երկրաւոր փխ անցաւոր ԳԴԺՏ^2 թագաւորի   3—4 ԲԹ փախչիր* ԵԸԺԼԽՀՏ^2 և որ   4 α յերկրի փխ յաշխարհի Բ երևիր* Ի անողորմն   5 Գ քաջութեամբն Բ մատչիր*   5—6 Դ ժառանկէր   6 Դ չիք և ի մահկանացու   7 α չիք և ԲԴԽ չիք իսկ Գ մեծ փխ մեք α ահաւասիկ   8 ԳԽԾ վէր փխ վէրս Դ քաջութիւնն ԵԺՏ^{1}Տ^2 քաջութեան   8—9 ԵՀ չիք վասն որոյ առեալ իցէ և   9 Դ չիք իցէ և Ճ^{1}Ճ^{2}αβ չիք իցէ Ը առեալ է ԽՏ^2 է փխ իցէ ԱԴԵԹԺԻԼԽԿՏ^2 չիք և է առաւել իցէ փխ առեալ իցէ Դ չիք անարգ է չիք և (անօգուտ)   9—10 ԲԴ զքաջութիւնն Ե զքաջութիւնս α զքաջութիւն Ի համարիմ զքաջութիւնսն   10 Դ զպարգևսն բազում Գ զբազում պարգևսն ԺՃ^{1}αβ զպարգևս ԱՋԻՎՏ^3 զբազումս Բ պարգևս   10—11 Բ ամենեքին Դ ամենեքեան   11 Գ խափանելոցք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 խափանելոց են ամենեքեան   12 Թ հրամանատուին α թագաւորին   13 Գ արութիւնսն Տ^2 արիութիւնս α զայս արութիւնս ԴԻՃ^5 կատարեցաք ԲՃ^{1}αβ չիք որչափ   14 ԳԴԿ է տէր ԵԺԼԽՏ^2 տէր է   15 Թ ապա թէ փխ ապաքէն ԵԻԼ ԴԼԽԿՀ թէ   16 Ե ի մարմնի   17 Բ չիք ևս ԱԲՋԷԹԻ ԼՎα ելանելոց եմք   18 Ի չիք արդ ԲԴԴԵԸԺԼԽՀαՏ^{1}Տ^2 չիք ով   19 ԲԴԵԺԼԽԿՏ^2 յաւագոյն են ԸՀՏ^{1}Ճ^{1}Ճ^{6}αβγ են փխ էք Ե արութեան   19—20 Բ գահոյք ի վեր α գահիւ   20 ԱԲԴԴՋԹԻԿ պատուոյ է պատուոյ Բα կամաւ   21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,4-6,11,13-19,23-25}$αβγ զօրավար Դ ձեր ԲԹԻ կացուցիք   22 Բ թուիցին բանքս ԳԵԸԺԽԿՀՏ^{1}Տ^2 բանքս ԱՋԷԹԻՎՏ^3 բանք իմ ԼՌ բանքս իմ Տ^2 թուեսցի Դ թուիցի բանքս Դ ի լսելիս ձեր α չիք ի լսելիս ԲՃ^{1}αβ մեծամեծացդ և փոքունցդ Λ Ե ի փոքունց   23 Դ հեթանոսաց   24 ԱՋԹՎ յառն ԵԺԼ առնն α մահկանացուի առն   25 է զյաղթութիւն Բ ի ձեռն Ըևα զզօրութիւնս   26 ԱԴԴՋՎՏ^{3}αβ ճշմարտութեանն

թեցին մեզ. բայց ավելի շատ այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված։ Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտնչում։ Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում. իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցավոր ու մահկանացու թագավորից։ Եվ մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել։ Անարգ և անօգուտ եմ համարում այդ քաջությունները և ոչինչ բաներ՝ այդ բազմաթիվ պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են։

«Իսկ արդ՝ եթե մահկանացու հրամանատուի համար այնպիսի քաջ գործեր էինք կատարում, ինչքա՛ն ավելի ևս [պետք է կատարենք] մեր անմահ թագավորի համար, որ տերն է կենդանիների և մեռելների և բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ։ Չէ՞ որ եթե խիստ շատ ապրելով ծերանամ, միևնույն է՝ այս մարմնից պետք է բաժանվենք, որպեսզի մտնենք կենդանի Աստծու մոտ, որից այլևս չպետք է բաժանվենք։

«Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին։ Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահեղ սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթություն մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձկենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք։

---

* Աստղանիշ ձևերը (լինիր, փախչիր, երևիր, մատչիր) գտնվում են Բ ձեռագրի Զաքարիա սարկավագի ձեռով նորոգված թերթում։

«Մանաւանդ զի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց ի ձէնջ, ի ժամանակին՝ զի հանօրէն իշխանն խաբեցաք պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան. իբր այն եթէ ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, ո՛րպէս անբաժ կացեալ եմք ի նմանէ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք. վասն սիրելեաց մերոց, որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ, զի նոքօք հանդերձ մարտ եդեալ կռուեսցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն։ Եւ իբրև նոցա ոչ ինչ կարացաք օգնել, անհնար լիցի այս՝ եթէ վասն մարմնաւոր սիրոյ զԱստուած ընդ մարդկան փոխանակիցեմք։

«Իսկ արդ յերկուս և յերիս կռիւս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն արքունի չարաչար հարաք, և զմոգսն անողորմ սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեռնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, գազանացեալ սրտմտութիւնն դադարեաց։ Որ ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր գտաւ՝ ընդ մեզ խօսելով։ Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի։ Որ իբրև զհանդերձ կարծէր

---

2 ԲԴ ի յարութիւնս Դ ի յայրութիւնս ՋԻ արութիւնս ԽՀ արութիւն α յարիութիւնս ԳԹԺԾՏ^{1}Տ^2 յարութիւն Կ յարութեան ԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 քաջութեանս Բ վատնութիւն ՋVβ վատութեան 4 Դ զիս և զումանց Ե զոմանս 5 ԲԳԴԵ ի ժամանակի ԵԻ իշխանն A զանօրէնն իշխան ԵԸԺԽՀ խաբեցաք և պատրեցաք 6 Հ տղայ մի α չիք մ ԲՃ^{1}Ճ^{5}αβ և անպիտան ԲԳԴαβ իբրև ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 իբրու այն թէ Հ իբրու 7 Ե ամբարշտութեան ԸՃ^{14} կատարեսցուք 7—8 α զծածուկս սրտից մերոց Բ զծածուկ խորհրդոց մերոց 8 ԳԴԿ զխորհուրդ մեր ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 խորհուրդս մեր ԺԼ տէրն Դ ինքնին տէր վկայէր մեզ ԲԵԸԺԽԾՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}αβ թէ որպէս ԼՏ^1 չիք եմք 9 ԲՃ^{1}αβ վկայէք փխ իսկ գիտէք ԲՃ^{1}Ճ^{14}αβ զի վասն ԱԳԴԵԹԺԼԽ սիրելեացն 10 Բ ի մեծի նեղութեանն ԳԴԵԺՀα մեծ ԳԴԵՀՏ^2 նեղութեանն 10—11 Բ խնդրէաք յանդորր հանել ԳԴԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1,5,6}αβ յանգորր հանել (ԳԿ յանդոյրր) ԴՃ^{14} խնդրեցաք ԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք վասն Բ չիք հանդերձ 11 ԳԴԵԺԼԿՀՏ^{1}Տ^2 կռուիցիմք ԸԽ կռիցեմք 12 Ա հայրենի Տ^2 չիք աստուածատուր 11—12 ԲՃ^{1}αβ աստուածատուր օրինացն զոր անօրէն իշխանն կամէր հանել ի մէնջ 12 ԲՃ^{1}αβ չիք և 13 Բ ինչ ոչ կամեցաք փխ ոչինչ կարացաք Բ չիք այս 14 Բ

րանս ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք։

«Մանավանդ ես չեմ մոռացել և հիշում եմ, թե ինչպես ես և ձեզանից ոմանք այն ժամանակ անօրեն իշխանին խաբեցինք-մոլորեցրինք, ինչպես մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսանց նրա ամբարիշտ կամքը իբր կատարեցինք, բայց Տերն ինքը վկա է մեզ, թե ծածուկ մտադրություններով ինչպե՛ս անբաժան ենք մնացել նրանից։ Այս դուք ինքներդ էլ գիտեք, որ հնարներ էինք փնտրում ազատելու մեր սիրելիներին, որոնք մեծ նեղության մեջ էին, որպեսզի նրանց հետ միասին մարտի մեջ մտնելով՝ կռվենք անօրեն իշխանի դեմ հայրենի աստվածատուր օրենքների համար։ Եվ երբ նրանց չկարողացանք որևէ կերպ օգնել, թող անհնար լինի, որ մարմնավոր սիրո համար աստծուն մարդկանց հետ փոխանակենք։

«Իսկ արդ՝ երկու և երեք կռիվների մեջ ինքը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը ջնջեցինք-ոչնչացրինք, ծովի խռովությունն իջեցրինք. լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադեզ փրփուրն սպառվեց, գազանացած զայրույթը դադարեց։ Նա, որ ամպերի վրայից էր որոտում, ընկճված՝ իր սովորական բնությունից էլ ցած իջավ՝ մեզ հետ խոսելով։ Նա, որ խոսքով ու հրամանով էր ուզում կատարել իր չարությունը սուրբ եկեղեցու վերաբերմամբ, այժմ աղեղով ու նիզակով ու սրով է կռվում։ Նա, որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զգեստ ունենք

Ճ^{1}αβ մարդոյ փոխանակեսցուք ԳԿՃ$^{5-6,12-14}$ մարդոյ Դ փոխանակեսցուք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ընդ մարդոյ փոխանակեմք 15 Թ չիք արդ Դ ինքնին տէր ԵԼԽՏ^2 տէրն Ի յօժարութեամբ փխ զօրութեամբ 16 ԵՀ չիք որպէս զի զանուն քաջութեան ԸԽ չիք զի ԴԸՃ^{13} ժառանգեսցուք ԲԳԵԺԼԽԿՏ^1 չիք և 17 Ա անողորմ Դ չիք անողորմ 18 ԲԵα կռապաշտութեան Հ տեղաց տեղաց 18—19 Բ և զանօրէն զթագաւորին զհրամանս Ճ^{1}α և զանօրէն թագաւորին հրամանսն 19 ԲՃ^{16}αβ չիք ապականեցաք 19—20 ԲՃ^{1}αβ զխռովութիւնն ցածուցաք։ 20 չիք ծովուն Ա ծովու ԱԺԻԼՏ^{1}Ճ^{1}Ճ^{27}α լեռնացեալ ԱՋԷԹԻ ԾV բարձրացեալ 21 ԲՏ^{2}Ճ^{1}αβ պայթեաց փխ սպառեցաւ Է գազանացաւ V սրտմութիւնն (!) Ի դադարեցաւ 22 Է որպէս փխ որ Բ ամպոցն Դ ամբոցն 22—23 ԲԳԴ ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,5-6,12-14}$αβ նկուն եղեալ գտաւ ի ներքոյ քան զսովորական բնութիւնն (Ե բնութեան) 23 ԲՃ^{1}αβ չիք ընդ մեզ խօսելով 23—24 ԲՏ^{2}Ճ^{1}αβ կամէր զմեզ կորուսանել և կատարեալ (α կատարել) զչարութիւն ի վերայ սուրբ եկեղեցւոյն Դ չիք հրամանաւ ԵԸԺԼԽՀՏ^1 բանիւ և հրամանաւ 24 Ե զչարութիւն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճαβ չիք իւր 25 ԳԿ չիք և (նիզակաւ) ԲԴՃ^{1}αβ կռուի ընդ մեզ Հ հանդերձ։

ունել մեզ զքրիստոնէութիւնն, որ իբրև զգոյն ի մարմնոյ չկարէ շրջել, Թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ի կատարած։ Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եդեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ո՛չ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս, ուր ոչ անձրևք իջանեն և ոչ հողմք շնչեն և ոչ հեղեղս յարուցանեն։ Եւ մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատով յերկինս եմք շինեալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քրիստոսի։

«Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբէք մոռասցի զգործս նահատակութեան ձերոյ։ Ո՛վ քաջք, մեզ այս մեծապէս է, զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեանս, յորում և զօրութիւնն Աստուծոյ մեծապէս երևի։ Զի եթէ զայլս կոտորելով ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ, և վարձուց ակնկալութիւն ի Տեառն է, որ պահի իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըստ սրտին յօժարութեան և ըստ գործոց առաջարկութեան, որչափ ևս առաւել՝ եթէ մեք մեռանիցիմք ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում և երկնաւորքն են ցանկացեալ, եթէ գոյր հնար։ Եւ զի այս պարգևք ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի ի բարերար Տեառնէն, և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարգևատուէն. որպէս և ասէ իսկ ի սուրբ կտակարանին. «Ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ»։

«Եւ մեզ կարի քաջ ի դէպ եկեալ է հրաման պատասխանւոյս այսորիկ. որպէս և առաւելապէս եղեաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւելապէս եղեաք արդարացեալք մարդկան և հրեշտակաց և Հօրն ամենեցուն։ Զի որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ ի գործ ամբարշտութեանն, արտասուս բազում հեղան ի

---

1 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 մեզ ունել ԳԵԼՀՏ^1 զքրիստոնէութիւնս ԲՃ^{1}αβ ոչ կարէ Գ ոչ կարէ ոք 1—2 Բα կարասցէ շրջել 2 Ի շրջել է շարժել 3—4 ԲՃ^{1}αβ նորա հաստատեալ են ի վերայ վիմի հաստատութեանն αՏ^2 նորա 5 ԲՃ^{1}αβ շարժեն փխ շնչեն Ը հնչեն փխ շնչեն ԲՃ^1 չիք ոչ 6 ԶԵՎ էաք փխ եմք (այլ) ԳԵԸԺԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α հաւատովք ԲԳԻԽ ԿՀՃ^{1}αβ շինեալք 7 Հ չիք կարէ α չիք ոք ԽՃ^1 շինուածն Գ չիք Քրիստոսի 8 Բ ոչն 9 ԲԴԵԸԺԼԽՏ^{2}β զգործ α զգուժ փխ զգործս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 նահատակութեանս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք ձերոյ Դβ ո քաջք ԲՃ^{1}αβ այս առ փխ այս 10 Ը չիք է Բ կատարեացն Դ Քրիստոս փխ Աստուած 11 Հ որում Ե զօրութիւն Ե զայս փխ զայլս 12 α ժառանգ 13 Բ չիք և Ը ազգատոհմիս α զքաջատոհմ ազգի և եկեղեցւոյ թողաք Բ զքաջ անուն ազգի և եկեղեցւոյ թողաք 14 ԲՃ^{1}αβ որպէս փխ որ պահի 15 ԼՏ^2 ի ձէնջ Գ սրտի ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ըստ յօժարութեան սրտին և ըստ առաջարկութեան գոր-

հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպես մարմնի գույնը [չի կարելի փոխել], գուցե այլևս չկարողանա էլ մինչև վերջը։ Որովհետև սրա հիմքերը հաստատ կերպով դրված են անշարժ վեմի վրա, ո՛չ թե երկրի վրա, այլ վերևում՝ երկնքում, ուր ո՛չ անձրևներ են գալիս, ո՛չ քամիներ են փչում և ո՛չ էլ հեղեղներ հարուցանում։ Եվ մենք էլ, թեպետև մարմնով երկրի վրա ենք, բայց հավատով երկնքում ենք հաստատված, որտեղ ոչ ոք չի կարող հասնել Քրիստոսի անձեռագործ շինվածքին։

«Հաստատ մնացեք մեր անզրդվելի զորավարի վրա, որ երբեք չի մոռանա ձեր քաջագործությունները։ Ո՜վ քաջեր, մեզ համար մեծ շնորհ է այս, որ աստված կատարեց մեր բնության միջոցով, որի մեջ և մեծապես երևում է աստծու զորությունը։ Որովհետև եթե ուրիշներին կոտորելով աստվածային օրենքի համար՝ մեզ պարծանք ժառանգեցինք և մեր ազգատոհմի քաջ անունը եկեղեցուն թողինք, և վարձի ակնկալությունը Տիրոջից է, որ պահված է մեզնից ամեն մեկի համար իր սրտի հոժարության և կատարած գործերի համեմատ, ինչքա՜ն ավելի ևս, եթե մենք մեռնենք մեր տեր Հիսուս Քրիստոսի մեծ վկայության համար, որ նույնիսկ երկնավոր հրեշտակներն են ցանկանում եթե հնար լիներ։ Եվ որովհետև այս պարգևները ո՛չ թե բոլորին է պատշաճ, այլ ում համար պատրաստում է բարերար Տերը, մեզ էլ այս պատահեց ո՛չ թե մեր արդար գործերի համար, այլ աննախանձ պարգևատուի կողմից. ինչպես որ ասում էլ է սուրբ կտակարանում. «Ուր ավելի եղավ մեղքը, այնտեղ էլ ավելացան աստծու շնորհները»։

«Եվ խիստ հարմար է գալիս մեզ այս պատգամը. ինչպես որ մեծ չափով ամբարիշտ երևացինք մարդկանց, կրկնապատիկ չափով արդարացած երևանք մարդկանց ու հրեշտակներին և ամենքի Հորը։ Որովհետև չէ՞ որ այն օրը, երբ մարդիկ լսեցին մեր ամբարիշտ գործը, շատ արտասուք թափվեց սուրբ եկեղեցում, և է՛լ ավելի շատ՝ մեր սիրելինե-

---

ծոց ԻՃ^5 չիք և ըստ գործոց առաջարկութեան α յառաջարկութեան 16 Ըև չիք մեք ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}αβ մեռանիմք Դ չիք մեծի 16—17 Գ վկայութեանն 17 Ի երկնաւորք 18 ԲԳԴԵԸԺԼՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α չիք զի և և այսպէս փխ և զի այս Բ պարգևս Բժ են փխ է ևա չիք է 18—19 ԳԵԼՀՏ^1 են անկ Դ են ակն (!) 19 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 որոց փխ որում Բα պատրաստին ԲՃ^{1}αβ տեառնէ մերմէ 20 Դ չիք ինչ Ի պատահեցաւ 21 ԲՃ^{1}αβ որպէս ասէ ի սուրբ 22 Գ մեղք ԲՃ^{1}αβ ևս առաւելան փխ անդէն առաւելան Բ շնորհն 23 Ե չիք ի 24 ԲԴԸԽՏ^{2}Ճ^{1}α չիք և 24—25 Դ ամբարշտեալ 25 Դ արդարացեալ 25—26 ԲՃ^{1}αβ հրեշտակաց և մարդկան 26 ԲԳԴԿՀՃ^{1}β չիք զի Բ չիք օր Բα զմէնջ ապաքէն Դ չիք զմէնջ Ըև զձէնջ փխ զմէնջ Հ ի մէնջ 27 Դ մարդիք ի գործս ԱԴԵԶԷ ամբարշտութեան ԳԴԵԸԺԾԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^5 արտասուք Բ հեղլով բազում Ծ չիք բազում Դ հեղին Ը հեղուն։

սուրբ եկեղեցւոյն, և ևս բազմագոյն ի մէջ սիրելեացն մերոց։ Նա և ընկերք մեր սրով սրտմտեալ սպառնային մեզ, և մահ դատնութեան ի վերայ հատուցանել կամէին. և ծառայքն մեր սարտուցեալ փախչէին ի մէնջ։ Եւ հեռաւորաց, որոց լուեալ էր զանուն քրիստոնէութեան մերոյ, քանզի ոչ էին տեղեակ խորհրդոցն մերոց, ողբս ի բերան առեալ անդադար աշխարհէին զմեզ, և անգիտութեամբ հայհոյութիւնս բազումս խօսէին զմէնջ։ Եւ որ մեծն քան զամենայն ասացից. ո՛չ միայն մարդիկ յերկրի՝ այլ և հրեշտակք յերկինս զերեսս իւրեանց դարձուցին ի մէնջ, զի մի տխուր դիմօք հայեսցին ի մեզ։

«Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մէնջ ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրև զթախծեալ սգաւոր՝ յոգի և ի մարմին էաք տրտմեալք, այսօր զուարթացեալք և զգաստացեալք յերկոսեան առ հասարակ եմք լրջացեալք. քանզի և զՏէրն բարեբար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն. չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց։ Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»։

Զայս ամենայն առաքինի զօրավարն խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն, դարձեալ և զմի մի ի նոցանէ քաջալերէր ի ծածուկ և սրտապնդէր, և զամենայն պակասութիւն աղքատութեան լնոյր։ Որոյ ոչ ինչ գոյր զօրականին, յանձնէ և յընկերաց մատուցանէր. որոյ զէն չէր, զէն պատրաստէր. և որում հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր, և որում երիվար պիտոյ էր, երիվար տայր։ Եւ առատ ռոճկօք ուրախ առնէր զամենեսեան, և զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն։ Եւ ըստ պատերազմական կարգին՝ զքաջ ա-

---

1 ԲԳԴԼ սիրելեաց 2 ԲԴԼԿ ընկերքն ԱԶV սրով փխ սրով Դ սպառնացան Բ չիք և 2—3 ԴԺԽS^1S^2 դատնութեամբ 3 ԵԸԺԼԽՀS^1S^2 ի վերայ կամէին հատուցանել Գα ծառայք ԲԴԱՃ^{1}αβ սարտուցեալ ԱԳԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀVS^1 մարտուցեալ փխ սարտուցեալ 4 Բα հեռաւորացն 4—5 Գ քրիստոնէութեանն 5 ԵԸԺԼԽS^1S^2 և քանզի ԲՃ^{1}αβ լինէին փխ էին ԳԴ խորհրդոց ԽS^2 ողբ 6 Բ աշխարհէին զմեզ անդադար α ողբային զմեզ անդադար V չիք անդադար 7 Գ չիք բազումս Ը զձէնջ (!) ԲՃ^{1}αβ մեծն է Դ մեծ 8 ԴԽV մարդիկք Բ ի յերկրի V հրեշտակ Բ ի յերկինս 11 ԲԳԴԵԸԺԼԽԿՀαS^1S^2 Եւ արդ փխ և ահա Բα ժամանակն Խ ամենայն ԳԴԵԺԽԿ կեղտ ԵԸԺԼԽԿՀS^1S^2 անունդ 11—12 Ը ի ձէնջ փխ ի մէնջ 12 Գ դիցուք փխ բարձցուք Բ չիք իբրև ԲS^1S^2 սգաւորք 12—13 ԱԲԳԴԵԹԺԻԼԽԿVS^1S^2Ճ$^{1,5-6,13-14}$αβ յոգի և ի մարմին ԶԷԸ յոգի Հ ոգի Ա հոգի և մարմին ԲՃ^{1}α ընդ նմին և երկիւղն փախիցէ յայնժամ թախծեալք սգաւորք ԳԴԵԺԼԽԿ թախծեալ սգաւորք (α թախցեալ զգաւորք) Է թախանձեալ Ը թախծեալ Թ զթախածեալ Հ չիք զթախծեալ 13 Դ տրտմեալ ԲԳԴԵԸԺԼԽԿՀαS^1S^2 և այսօր զարթուցալք Ա զուարթացեալ ԲԳԴԵԸԺԽԿαS^2 զուարթացեալք փխ զգաստացեալք 14 Բ յեր-

րի մեջ։ Մինչև անգամ մեր ընկերները զայրացած՝ սրով էին սպառնում մեզ և կամենում էին դատ մահով պատժել մեզ, և մեր ծառաները խրտնում-փախչում էին մեզանից։ Հեռավոր մարդիկ էլ, որոնք լսել էին մեր քրիստոնեության անունը, տեղյակ չլինելով մեր մտադրություններին, ողբ ասելով՝ անդադար սուգ էին անում մեզ վրա և անգիտությամբ շատ անարգական բաներ էին խոսում մեր մասին։ Եվ ինչ որ ամենից մեծն է՝ կասեմ. ո՛չ միայն մարդիկ երկրի վրա, այլև հրեշտակները երկնքում իրենց երեսները շուռ տվին մեզանից, որպեսզի տխուր դեմքերով չնայեին մեզ։

«Եվ ահա եկել-հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզանից։ Այն ժամանակ իբրև մի վշտալից սգավոր՝ հոգով ու մարմնով տրտմած էինք, այսօր երկուսով էլ զվարթացած ու զգաստացած՝ առհասարակ խելամիտ ենք դարձել, որովհետև բարերար տիրոջն էլ տեսնում ենք մեզ հետ իբրև առաջնորդ. մեր զորավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների զորագլուխը։ Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»։

Առաքինի զորավարն այս ամենը խոսեց ամբողջ բազմության առաջ. դարձյալ և նրանցից սրան-նրան ծածուկ քաջալերում էր ու սիրտ տալիս և բոլոր պակասություններն ու թերությունները լրացնում։ Զորականներից ո՛րը ոչինչ չուներ, հոգում էր իր սեփականությունից և ընկերներից. ով զենք չուներ, զենք էր հայթայթում նրան, ում զգեստ էր պետք, զգեստ էր հագցնում, և ում ձի էր պետք, ձի էր տալիս։ Եվ առատ պարգևով ուրախացնում էր բոլորին, և ինքն իրեն զվարթ էր ցույց տալիս ամենքին։ Եվ պատերազմական կարգի համաձայն՝ քաջ տղամարդկանց

կոսեանն ԲՃ^{14} զղջացեալք փխ լրջացեալք ԳԵԺԼS լրջացեալ Դ չիք և 14—15 ԲՃ^{1}αβ զբարերարն ԵԸԺԼԽՀS^1S^2 զբարեբար տէրն 15 ԳԵԺԽԿՀS^1 յառաջնորդութեան ԵԸԺԼԽS^1S^2 չէ մեզ 16 ԲՃ^{1}α մարտիրոսաց 16—17 ԲԳԴԸԺԾԿՃ^{1}αβ զթերահաւատութիւնն Թ զի թերահաւատութիւն S^1S^2 թերահաւատութիւնն Լ չիք զթերահաւատութիւն 18 Դ և ընդ նմին երկիւղն S^1 ըստ նմին Գ երկիւղ Դ ի խորհրդոց և ի մտաց մերոց Բ չիք մերոց 19 Դ չիք ամենայն 19—20 α խօսեցաւ ընդ ամենայն բազմութիւնն 20 Գ չիք ի ծածուկ ԴԵԸԼԿՀS^1S^2 ի ծածուկ քաջալերէր 21 Դ աղքատութիւն պակասութեանն Բα աղքատութեանն ԳԴԵԺԼԽԿՀS^1S^2 չիք լնոյր 22 ԲԴα յընկերացն Դ և ընկերացն 23 Լ չիք որոյ զէն չէր՝ զէն պատրաստէր Դ որոց ԽԸS^2 որոյ զէն ոչ գոյր ԵԺԾՀS^1 որոյ զէն զգոյր ԳԿ պիտէր փխ պիտոյ էր 24 ԱԶԷV ազեցուցանէր ԲԶԷԻV չիք և ԳՃ^{7,11} երիվար պիտէր Կ երիվարս պիտէր Ա չիք պիտոյ էր ԱԲԴԶԹԻVՃ$^{1,3,8,10,12-15}$αβ որում երիվար պիտոյ էր V երիվար տայր նմա 25 Զ ռոճկովք 26 α զպատերազմական կարգին փխ ըստ պատերազմական կարգին ԳԵԸԺԼԽԿS^1S^2 զքաջաց Հ զքաջանց։

րանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա. զի և ինքն իսկ տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ կտակարանաց։ Զոր և ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն Մակաբայեցւոց՝ ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն, և յորդառատ բանիւք զելս իրացն իմացուցանէր նոցա, ո՛րպէս մարտուցեալ կռուեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացւոց։ Զի թէպէտ և ի նմին կատարեցար մահուամբ, սակայն անուն քաջութեան եկաց մինչև ցայսօր ժամանակի, ո՛չ միայն յերկրի, այլ և անմոռաց յերկինս։ Նա և զայն յուշ առնէր զօրականին, ո՛րպէս ազգատոհմն Մատաթեայ քակտեալ բաժանեցան ի միաբանութենէ նորա, դարձան ի հրաման թագաւորին, շինեցին մեհեանս, մատուցին զոհս պղծութեան, խոտորեցան յԱստուծոյ և ընկալան զպատիժս պատուհասի մահուան ի սուրբ միաբանելոցն. իսկ Մատաթի և որք ընդ նմայն էին, ոչ ինչ լքեալ թուլացան, այլ ևս առաւելապէս պնդեցան, և ձեռնամուխ եղեն ի գործ պատերազմին բազում ժամանակս։ Զայս ասէր, և անդէն ի դաշտին զտեղի առեալ՝ զզօրսն զետեղէր, և յամենայն կողմանց տակաւ զայրուձին կազմէր։

Իսկ յետ բազում աւուրց զօրագլուխն Պարսից խաղայր գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն. և եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Զարևանդ գաւառ։ Եւ անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա՝ բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք ամենայն պատրաստութեամբ։ Գունդ բազում հատանէր ի զօրաց նորա, ասպատակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս։

Զայն իբրև լուան զօրքն Հայոց, սեպուհ մի յազգէն Ամատունեաց՝ Առանձար անուն ընտրեցին յամենայն զօրականէն՝ լի իմաս-

---

1 Բαβ արանցն զյիշատակարանսն (α զյիշատակարանս) Թ չիք հանապազ   2 Դ չիք իսկ α կտակարանացն   3 Բα նկարագիր ԱԲԳԶԷVS^3 մակաբայեցւոցն   4 ԲՃ$^{1,5,7,12-14}$αβ յորդ և առատ բանիւք   4—5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ$^{1,5,7,12-14,27}$αβ գիտէր (Հ գիտէր!) զելս իրացն իմացուցանել ժ իմացուցանել նոցա, թէ   5 ԵԸԼԽՀ թէ որպէս Բ կռուէին   5—6 ԴՃ^{1,12}αβ աստուածային   6 Բα Անտիոքայ Դ Անտիոքացւոցն ԵԸԺԼԽՀS^1S^2 Անտիոքոսի   7 ԴՃ^1 քաջութեանն   9 ԱԻV նա ևս ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}αβ նա և զայն ևս Դ յայժ առնէր (!) ԵԸԺԻԼԽՀS^1S^2 զօրականացն թէ որպէս   10 ԲՃ^{1}β **Մատաթիայն** α Մատաթեան Բα բաժանեցան ԱԲԳԴԵԷԸԹԺԻԼԽԿՀS^1S^2Ճ$^{1,5,6,12-14,27}$αβ ի միաբանութենէ Ա ի միութենէ ԲՃ$^{1,5,6,12-14,27}$αβ նոցա փխ նորա   10—11 Դ և դարձան   11 Դ մեհեան   12 ԳԵԸԺԼԽՀ զպատիժ   13 ԲՃ^{1}αβ մահուամբ է միաբանիցն Բ Մատաթիէ α Մատաթիայ Դ Մատաթէի ԵՀ իմաստութիւն (!) փխ Մատաթի Գ որոց փխ որք   14 ԴԸ ընդ նմա Դ ոչ լքեալ ինչ ԵԸԺԼԽS^1S^2Ճ^3 թուլացեալ լքան

հիշատակության արժանի գործերը շարունակ կրկնում էր նրանց առաջ, որովհետև հենց ինքն էլ մանկությունից տեղյակ էր սուրբ կտակարաններին։ Եվ ձեռքն առնելով Մակաբայեցոց քաջ նկարագիրը՝ կարդում էր, որ բոլորը լսեն, և հորդառատ խոսքերով նրանց հասկացնում էր գործերի հանգամանքները, թե ինչպես մարտնչելով կռվեցին աստվածատուր օրենքների համար Անտիոքացիների թագավորի դեմ։ Թեպետև նրանք նույն պատերազմի մեջ իրենց մահը գտան, բայց նրանց քաջ անունն անմոռաց մնաց մինչև այսօր ո՛չ միայն երկրի վրա, այլև երկնքում։ Հիշեցնում էր զորականներին նաև այն, թե ինչպես Մատաթիայի ազգատոհմը քակտվեց-անջատվեց նրա միաբանությունից, հնազանդվեցին թագավորի հրամանին, մեհյաններ շինեցին, պիղծ զոհեր մատուցին, աստծուց շեղվեցին և մահվան պատիժ ստացան սուրբ միաբանվածների ձեռքով։ Իսկ Մատաթին և նրա հետ եղածները ամենևին չվհատվեցին և չթուլացան, այլ է՛լ ավելի զորացան և երկար ժամանակ ձեռնամուխ եղան պատերազմի գործին։ Այս պատմում էր և տեղնուտեղը դաշտում տեղավորում զորքը և բոլոր կողմերից հետզհետե կարգավորում այրուձին։

Մի քանի օրից հետո Պարսից զորագլուխը առաջ խաղաց ամբողջ հեթանոս բազմության հետ. եկավ-հասավ Հայոց երկիրը՝ Հեր և Զարևանդ գավառը։ Այնտեղ՝ գավառում կանգ առնելով, բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատերով փակեց և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քաղաք։ Նրա զորքերից մեծաթիվ գունդ բաժանվեց, ասպատակելով արշավեց և կամենում էր բազմաթիվ գավառներ կողոպտել։

Երբ այդ բանը լսեց Հայոց զորքը, բոլոր զորականների միջից ընտրեցին Ամատունյաց ցեղից մի սեպուհի Առանձար անունով, որ իմաս-

---

Հ թուլացուցեալ լքան   15 Դ պատերազմի ԱԲԶԹԻVՃ^{1}αβ ի բազում   15—16 Գ ժամանակաւ   16 Դ չիք զտեղի առեալ Բ զզօրս   16—17 Խ զետեղէր զօրսն   17 ԲԹ տակաւին ԲԴ զայրուձին գումարէր (Դ անդր գումարէր) Ի զյարուձի ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ$^{1,5-7,10-15,17,19-20,26-27}$αβγ գումարէր փխ կազմէր   18 Ա յետ ոչ բազում աւուրց ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԿՀV$S^1S^2S^3$Ճ$^{1,4-7,9-15,17,19-20,25-26}$αβγ չիք ոչ Ե պարսիցն Է$S^1$Ճ^{1,20}αβγ գնայր   19 ԲԳԴԵԸԺԼԽՀS^1αβ չիք և   20 ԱԳԶԷԹԼVS^1S^3 Զարաւանդ Բ չիք ի (Զար...) ԲԳԴԵԸԺԼԽՀ չիք եւ (անդէն)   20—21 ԱԶԷԹԻVՃ$^{1,5-6}$αβ և անդէն ի գաւառին զտեղի առեալ նորա և ԲS^2 անդէն ի գաւառին զտեղի առեալ և զբանակս բոլորեալ (S^2 բանակս) ԳԴԵԸԺԼԽԿՀ զտեղի առեալ և նորա α բանակս Ա զտեղի առեալ նորա ի գաւառին   21 ԲՃ^{1}α փոսս ԲS^2Ճ^{1}α պատնէշս   22 ԲS^2Ճ^{1}αβ շերտաւորս ԲS^2Ճ^{1}αβ զքաղաք մի ամուր   23 ԲS^2Ճ^{1}αβ գունդս բազումս ԲԳԵԺԼԽ ի զօրացն   25 α զայս ԳԿ սեպուհ   25—26 ԲՃ^{1}αβ յԱմատունեաց ազգէն։

տութեամբ և քաջութեամբ։ Ել ընդ առաջ նորա հազարօք երկու, հար սատակեաց զբազմութիւն գնդին, և զմնացեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի բանակն արկանէր։ Եւ ինքն ողջանդամ այսրէն դառնայր, և լինէր տօն ուրախութեան մեծ յաւուրն յայնմիկ զօրացն Հայոց։

Դարձեալ միւսանգամ ուրացեալն Վասակ անդրէն ի հնարս հայթայթանաց մտանէր ըստ առաջին կեղծաւորութեանն իւրոյ. շրջեցաւ ի ձեռն սուտ երիցանցն, զոր յառաջագոյն ասացաք, նոքօք հրամանաւ արքունի ի պատգամաւորութիւն խօսէր, և երդմամբ հաստատէր զքրիստոնէութիւնն անդրէն ունել։

Եւ զայս արարեալ զբազում աւուրս՝ ոչ կարաց զմիաբանութիւնն քակտել, մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ ի զօրականէն։

Որպէս երանելի երէցն Ղեւոնդ հրաման առեալ ի սուրբ ընկերացն՝ ի մեծէն Յովսէփայ և յամենայն մեծամեծացն, ի քահանայիցն և ի զօրագլխացն, եբաց զբերան իւր և ասէ բարձր բարբառով առաջի հրեշտակացն.

«Յիշեցէ՛ք ամենեքեան զհարսն մեր զառաջինսն, որ յառաջ քան զծագումն Որդւոյն Աստուծոյ լիւրաքանչիւր ժամանակի։

«Քանզի իբրև մերժեաց և ընկէց զմեզ չարն յաստուածային տեղւոյն, գտաք մեք անկեալք ընդ անողորմ դատաստանօք ըստ մեղացն յանցաւորութեան, որ ի կամս ազատութեան մերոյ գործեցաք զանարժանս, և զարարչական զօրութիւնն շարժեցաք ի վերայ մեր ի ցասումն բարկութեան, և զողորմած դատաւորն յուզեցաք վրէժ առնուլ անաչառութեամբ յարարածոցս. մինչև հրաման տուեալ երկնային ծովուն հեղուլ ի վերայ ցամաքիս, և հաստատուն յատակք երկրիս ծակոտեալ՝ ընդդէմ զհակառակսն գործեցին։ Վե-

---

1 ԲՃ^{1}αβ ելանէր ԲԴՏ^{2}Ճ^{1}αβ նոցա փխ նորա ԵԸԺԼԽՀՏ^{2} յառաջ նորա երկու հազարօք ի հազարաւ ԳԿ երկուք ԹԻՄՀՏ^{1} եհար 1—2 ԲՃ^{1}αβ սատակէր փխ հար սատակեաց 2 Բ զմնացեալն Թ անդէն 2—3 α չիք ի նոցանէ անդրէն փախստական 3 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} ի բանակն փախստական արկանէր ԲԴα անդրէն փխ այսրէն 4 ԿՏ^{1} չիք մեծ 4—5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1,18,20,27}αβ յաւուրն մեծի զօրացն Հայոց է մեծ աւուրն (1) Կ չիք մեծ ԸՃ$^{1-27}$αβ չիք յայնմիկ 6 α չիք միւսանգամ Թ չիք հնարս 7 Ե կեղծաւորութեան Դ չիք իւրոյ 8 ԲՃ^{1}α որ շրջեցաւ Դ երիցանց α յառաջագոյնն Բ ասացաւ 8—9 ԲՃ^{1}αβ զի նոքօք 9 Բ չիք ի 10 ԲԴՏ^{2}Ճ^{1,14}α հաստատէր շնորհել (α շնորհէր) Ե զքրիստոնէութիւն ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք ունել 11 ԸԽՏ^{2} ի բազում աւուրս ԺՀՏ^{1} բազում 11—12 ԵՀ զմիաբանութիւն 12 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1} քակել Տ^{2} մանաւանդ զի ԲԴՃ^{1}αβ զի սուրբ Գ սուրբ ուխտ Կ զուխտ ԲՏ^{2}α չիք որ α ոչ էր մեկնեալ 13 ԵԸԺԻԼԽՀՏ^{1}Տ^{2}γ ի զօրականացն 14 ԲՏ^{2}αβ որպէս և ԳՃ^{1}β ԸԹՀՎ

տությամբ ու քաջությամբ լցված մի մարդ էր։ Սա երկու հազարով դուրս եկավ նրա դեմ, ջարդեց-սատկեցրեց նրա գնդից շատերին, իսկ մնացածներին փախցրեց-հասցրեց նրանց բանակը։ Իսկ ինքը ողջ և առողջ վերադարձավ, և այն օրը մեծ ուրախության տոն եղավ Հայոց զորքի համար։

Ուրացյալ Վասակը մի անգամ էլ սկսեց իր առաջին կեղծավորության համեմատ հնարներ գործ դնել. վերևում հիշված սուտ երեցների հետ շրջում էր, նրանց միջոցով արքայի կողմից պատգամներ էր հայտնում և երդմամբ հավատացնում էր, որ կարող են նորից քրիստոնեությունը պաշտել։

Եվ այս բանը շատ օրեր կատարելով՝ չկարողացավ միաբանությունը քանդել, մանավանդ եկեղեցու սուրբ ուխտը, որ զորքից հեռացած չէր։

Ինչպես երանելի Ղևոնդ երեցը հրաման առնելով իր սուրբ ընկերներից՝ մեծ Հովսեփից և բոլոր մեծամեծներից, քահանաներից և զորագլուխներից, բաց արեց իր բերանը և բարձր ձայնով ասաց [զորքի] պատգամավորների առաջ։

«Բոլորդ հիշեցե՛ք մեր առաջին հայրերին, որոնք նախքան Աստծու որդու ծնունդը [ապրել են] զանազան ժամանակներում։

«Որովհետև երբ չարը մեզ հեռացրեց ու դուրս գցեց աստվածային տեղից[119], անողորմ դատաստանի տակ ընկանք այն հանցանքի ու մեղքի համար, որ մեր ազատ կամքով գործեցինք անարժանաբար և գրգռեցինք արարչական զորության զայրույթն ու բարկությունը մեզ վրա, և ողորմած դատավորին դրդեցինք անաչառ կերպով վրեժ առնելու արարածներիցս, մինչև այն աստիճան, որ նա հրաման տվեց երկնային ծովին թափվել ցամաքի վրա, և երկրիս հաստատուն հատակները ծակվելով՝ հակառակ կողմից նույնը գործեցին։ Վերևիններն ու ներ-

---

երէցն Դ երանելի սուրբ երէցն 14—15 ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{5} ընկերակցացն 15 ԼՏ^{1} ի մեծն Ճ^{5} Յովսիփայ β Յուսեփա Ե ամենայն 15—16 ԲՏ^{2}Ճ^{1}αβ և ի քահանայիցն Կ ի քահանայից ԳԴ ի քահանայից և ի զօրագլխաց 16 Թγ էբաց զբերանն Ճ^{6} չիք և ասէ 17 ԲՏ^{2}Ճ^{1}αβ հրեշտակացն պարսից Դ չիք առաջի հրեշտակացն 18 ԱԳԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Ճ^{4,5,17,19,27} զհարսն մեր ԲԴՏ^{2}Ճ^{1}αβ զհարսն ձեր զառաջինսն A չիք մեր ԳԴԵԺԼԽԿՀ որք 18—19 ԳԵԸԺԼԽԿՀՃ$^{5-7,11-13}$γ յառաջագոյն փխ յառաջ քան 19 ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,6-7,11-14}$αβ ժամանակի A ժամանակս 20 Դ չիք և Խ ընկեաց 21 ԴԵԼԽ անկեալ Ե անողորմն 22 Բα մեղաց է մերոցն փխ մեղացն Ե յանցաւորութիւն ԳԴ ազատութեանն 23 ԲԴ զանարժանն Դ զարարչականն 23—24 α զարարչական զօրութիւնն մեր շարժեցաք ի ցասումն 24 Ը թագաւորն փխ դատաւորն 25 Ե յարարածոցն 26 ի հեղանիլ Խ հեղեալ ԴԵԺԼԽ ցամաքի Հ ցամաք 27 Դ ծակոտեալք։

րինք և ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց՝ առանց բարեխօսի վրէժ առնուլ յանցանաց մերոց։

«Այպաքէն արդարն Նոյ միայն գտաւ կատարեալ յազգի մարդկութեանս, որ ցածոյց զսրտմտութիւն բարկութեան տերունեան ցասմանն, և եղև սկիզբն առաջարկութեան առ աճումն բազմութեան մարդկային ազգիս։ Դարձեալ և Աբրահամ ի փորձութեանն իւրում գտաւ առաքինի, և զընկալեալ պարգևսն յԱստուծոյ՝ ինքեան ձեռօք փոխ անդրէն նմին մատուցանէր. վասն այսորիկ և յառակս ընկալաւ զնա Աստուած, զի ի նմա տպաւորեալ տեսանէր զաներեւոյթ գալուստ Որդւոյն Աստուծոյ. և զըմբռնումն անըմբռնելւոյն և զզենումն անմահին, որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանութիւն մահու։ Եւ եթէ մահուամբ մահ մեռանի, մի՛ երկիցուք մահակիցք լինել Քրիստոսի. զի ընդ որում մեք մեռանիմք, ընդ նմին և կենդանանամք։

«Յիշեցէք, առաքինիք, զմեծն Մովսէս, որ մինչև հասեալ էր յարութեան հասակն՝ խորհուրդ սուրբ նահատակութեանն ի տիտղայութեանն երևէր նմա. և տուն թագաւորին Եգիպտացւոց ի ծառայութիւն մատանէր նմա, և ակամայ դայեկութեամբ սնուցանէր զնա. և ի ժամ փրկելոյ զժողովուրդն ի նեղութենէն՝ միջնորդ եղև երկնի և երկրի, միանգամայն և աստուած անուանեցաւ ի վերայ Եգիպտացւոցն։ Քանզի ուր գտաւ սուրբ խորհուրդն զօրացեալ՝ անձամբ իւրով վրէժ առնոյր յԵգիպտացւոցն. իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ նորա լինէր, ի ձեռն գաւազանին գործէր զմեծամեծ սքանչելիսն։ Եւ վասն սուրբ նախանձուն, զոր ունէր, եհար զԵգիպտացին և ընդաւաղեաց. վասն որոյ մեծ անուն դնէր նմա, և առաջնորդն ժողովրդեանն զնա կացուցանէր։ Եւ բազում այն է, որ հեղմամբ արեանն արդարացաւ, և անուանեցաւ մեծ քան զամենայն մարգարէս. ո՛չ միայն զարտաքին թշնամիսն կոտորելով, այլ և զազգատոհմսն, որ փոխանակեցին զԱստուած ընդ որ-

---

1 α և առանց 2 ԵԸԼԽ յանցանացն 3 Հ չիք արդարն Բβ ի յազգիս α յազգիս 4 ԲՃ¹α տէրունեայն Դ տէրունական 5—6 ԱՁԷԹԻՎ մարդկութեան Փ մարդկայինս ԴՃ⁶ չիք բազմութեան Բαβ ընութեան մարդկան ազգիս 6 Լ Աբրաամ Եα ի փորձութեան 7 Դ պարգև է նոցա փխ յԱստուծոյ Գ ընքեան ԲԴՃ¹α ձեռօքն Դ նմա 8 Կ դարձուցանէր փխ մատուցանէր Ը վասն այնորիկ ԲԴα չիք և 9 Ի տեսանիւր 9—10 α աներևոյթ զգալուստ 11 ԱՁԸԻՎՃ¹αβ զենումն 12—13 ԴԵԹԺԼՀα մահակից Ի լինիլ Խ չիք լինել 13 Ժ ընդ ում ԲՃ¹αβ չիք մեք Դ մեքն է մեռանիցիմք α և մեռանիմք 15 Ժ Մօսէս Բ չիք հասեալ էր 16 ԵԺՍՀՏ¹ ի յարիութեան ԽՏ² յարիութեան ՁԻՎ արութեան Հ ի յարիութեան ժամանակն Ե նահատակութեան Բ ի միտս փխ ի տիս 16—17 Դ տղայութեան ԸԽ չիք ի տիս տղայութեանն 17 Ի երևիւր

քերինները մեզ համար տանջանքի գործիք դարձան, որ առանց բարեխոսի մեր հանցանքի վրեժն առնեն։

«Չէ՞ որ միայն արդար Նոյը կատարյալ գտնվեց մարդկային ազգի մեջ, որ իջեցրեց տերունական ցասումի սրտմտությունն ու բարկությունը և սկիզբ դարձավ մարդկային ազգի աճելուն ու բազմանալուն։ Նույնպես և Աբրահամը առաքինի գտնվեց փորձության ժամանակ և աստծուց ստացած պարգևները իր իսկ ձեռքով նորից նրան էր մատուցում. այդ պատճառով էլ աստված նրան որպես օրինակ ընդունեց, որովհետև նրա մեջ տպավորված էր տեսնում աստծու որդու աներևույթ գալուստը, անըմբռնելիի ըմբռնումը և անմահի զենումը, որ իր մահով խափանեց մահի իշխանությունը։ Եթե ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսին մահակից լինել, որովհետև ում հետ որ մեռնենք մենք, նրա հետ էլ կկենդանանանք։

«Հիշեցե՛ք, առաքինինե՛ր, մեծ Մովսեսին, որ դեռ այրական հասակին չհասած՝ սուրբ նահատակության խորհուրդը տղայության հասակում երևաց նրան. և եգիպտացիների թագավորի տունը նրան ծառայություն էր մատուցանում և ակամա դայակությամբ սնուցանում նրան. և ժողովրդին նեղությունից փրկելու ժամանակ երկնքի ու երկրի միջնորդ եղավ, միևնույն ժամանակ նաև եգիպտացիների աստված անվանվեց։ Որովհետև ուր սուրբ խորհուրդը զորացավ, իր անձով վրեժ լուծեց եգիպտացիներից, իսկ ուր աստվածային հայտնությունն եղավ նրա վրա, գավազանի միջոցով էր մեծամեծ հրաշքները գործում։ Եվ իր ունեցած սուրբ նախանձախնդրության պատճառով սպանեց եգիպտացուն և ավազի տակ թաղեց. դրա համար էլ նրան մեծ անուն տվեց և ժողովրդին առաջնորդ կարգեց։ Եվ գլխավորն այն է, որ արյուն թափելով արդարացավ և բոլոր մարգարեներից ավելի մեծ կոչվեց, ո՛չ միայն արտաքին թշնամիներին կոտորելով, այլև [իր] ազգակիցներին, որոնք անապա-

---

ԵԺԼԽՀՏ¹Տ²Ճ⁶,¹⁴ ի նմա α երևէր նմա և ակամա դայեկութեամբ Բ եգիպտացւոցն 18 α չիք և տուն թագաւորին եգիպտացւոց ի ծառայութիւն մատանէր նմա 18—19 ԱՁԷԹԻՎՃ¹⁴ չիք ակամայ դայեկութեամբ սնուցանէր զնա 19 Բ զժողովուրդսն 22 ԵՀ առնոյր զվրէժ ԸԺԼԽՏ¹Տ² առնոյր վրէժ 23 ԲՃ¹αβ օգնականութիւնն փխ յայտնութիւնն Ե յայտնութիւն Ը յարութիւնն փխ յայտնութիւնն ԲԼՏ²Ճ¹αβ չիք նորա 24 Բαβ չիք Եւ 25 ԲԵԸԺԼՀ մեծ Դ և զմեծ 27 ԲԴՃ²,¹²αβ արեանն ԱՁԷԹԻՏ³ՎԱ հեղմամբ արեամբն ԵԸԼԽՍՀՏ¹ հեղման արեամբ ԴԿ արեանս Ժ արեամբ Տ² արեան 27—28 Բ չիք զամենայն ԲՃ¹β մեծ քան զմարգարէսն 28 ԵԺԼԽՀՏ¹α մարգարէսն α զարտաքին զթշնամիսն ԸԽ զարտաքինսն Ը չիք թշնամիսն ԲՃ¹αβ կոտորեաց ԱԳՁՎ չիք և Բ զազգատոհմ իւր 29 ԵԸԺԼԽՀՏ¹Տ²Ճ¹αβ այլ զազգատոհմն իւր (Յ⁸α այլև) ԴԵ որթոյն։

թուն յանապատին։

«Եւ եթէ նա ի հեռաստ այնպիսի վրէժ խնդրէր զալստեան Որդւոյն Աստուծոյ, մեք, որ ականատեսք եղաք և մեծապէս վայելեցաք յերկնաւոր պարգևսն շնորհաց նորա, ևս առաւել պարտիմք վրէժխնդիր լինել մօտակայ ճշմարտութեանս։ Որ եդ մահուամբ զանձն իւր ի վերայ մեղաց մերոց և արդարացոյց զմեզ յանհնարին դատապարտութենէն, դիցուք և մեք զանձինս մեր մահուամբ ի վերայ անմահ զօրութեանն, զի մի՛ նուազք քան զվրեժխնդիրսն գտանիցիմք։

«Յիշեցէք զմեծ քահանայն Փենեհէզ, որ սպանմամբ եբարձ զպղծութիւնն ի ժամ պատերազմին, և յազգէ յազգ երդմամբ հաստատեաց զքահանայութիւնն։ Մի՛ մոռանայք և զսուրբ մարգարէն զԵղիաս, որ ոչ կարէր հանդարտել հայել ի կռապաշտութիւնն Աքաբու. և արդար նախանձուն իւրոյ զութ հարիւրսն ինքեան ձեռօք սատակեաց, և զերկուս յիսունսն անշէջ հրոյն մատուցանէր լուցկիս, և զաստուածային վրէժն խնդրելով՝ անըմբռնելի և ահագին կառօքն յերկրէ ի յերկինս վերացաւ։ Դուք՝ ե՛ւս մեծի մասին վիճակի հասեալ էք, զի ոչ ևս կառք առաքին ձեզ ի վերացումն, այլ ինքնին Տէրն կառաց և երիվարաց հզօր զօրութեամբ և սրբովք հրեշտակօք ընդ առաջ եկեալ՝ ձեզ իւրաքանչիւր թևս բուսուցանէ. զի նորա ուղեկիցք լինիցիք և նմին քաղաքակիցք։

«Եւ այլ զի՞նչ ես երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք սուրբ կտակարանացն։ Դաւիթ ի մանկութեան ժամանակին քարիւ կործանեաց զմեծ բլուրն մսեղէն, և ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային. ցրուեաց զգունդս այլազգեացն, և ապրեցոյց զզօրսն ի

---

2 ԳԻ այնպէս փխ այնպիսի ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{6,10,17-18}$ վրէժխնդիր էր 3 ԲՃ^{1}αβ որք ԴԵԸԺԼԽՀ ականատես ԱՋԷԻVՏ^2 մեծամեծ փխ մեծապէս 4 ԲՃ^{1}αβ յերկնային պարգևացն (α պարգևաց) ԳԵԺԼԽՃ^2 պարգևս ԲՃ^{1}αβ ես առաւելապէս 5 Ի լինիլ ԲԳԴԵԼԽԿՀՏ^{2}Ճ^5 մօտակաց 6 Բ չիք իւր ԲԴՃ^{1}αβ վասն փխ ի վերայ α զանձն վասն մեղաց իմոց ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}αβ և արդարացոյց ԱՋԷԹԻVՏ^{3}A չիք և (արդ...) 7 Դ չիք մահուամբ 8 ԲՃ^{1}α անմահութեանն փխ անմահ զօրութեանն ԲԴԵԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}αβ նուազեալ ՋԷԻV նուազք Թ նուազ ԴԸԿՃ^{5,27} նուազեալ Բ զվրէժխնդիրքն Դ քան զվրէժխնդիրն լինիցիմք A զվրէժխնդիրսն առաջինս 10 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{27} և զմեծ ԲԿՃ^1 զՓենէհեզ 11 Եα զպղծութիւն ԲԳԴԷԸԺԼԿA ազգէ յազգ 11—12 Դ հաստատեաց երդմամբ Հ չիք երդմամբ 12 Ե զքահանայութիւն ԲՃ^{1}αβ չիք և զսուրբ 13 Գ զԵղիայ ԴԵՀ Եղիա Ժ Էղիա α Եղիայ ԲՃ^{1}αβ կամէր փխ կարէր Ի հայիլ 13—14 ԲԵԻԿՀՏ^{2}Ճ$^{1,4,7,9,12-14,16,17,19,23,25,28}$ Աքայաբու ԳԴՃ^{5,11,26,27} Ախաբու ԸԺԼԽՏ^1 Ախայաբու Թ Ագաաբու 14 ԲՃ^{1}αβ իւրոյ զոր ունէր ԳԴ իւրով Բ ձեռօքն 14—15 ԲԳԴԵԸԺԼԽԾԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,4-7,9,16,27}$αβ կոտորեաց 15 Գ զերկու ՋԷԻVՏ^3 յսունսն α և զերկու յիսունսն

տում աստծուն փոխանակեցին հորթի հետ։

«Եվ եթե նա հեռվից այդպիսի վրեժ էր լուծում աստծու որդու գալստյան համար, մենք որ ականատես եղանք ու մեծապես վայելեցինք նրա շնորհների երկնավոր պարգևները, է՛լ ավելի պարտավոր ենք վրեժխնդիր լինել մոտակա ժամանակի այս ճշմարտության համար։ Նա մահվամբ իր անձը զոհեց մեր մեղքերի համար և մեզ արդարացրեց չափազանց ծանր դատապարտությունից. մենք էլ ուրեմն մահվամբ մեր անձը զոհենք նրա անմահ զորության համար, որպեսզի վրեժխնդիրներից ավելի պակաս չգտնվենք։

«Հիշեցե՛ք մեծ քահանա Փենեհեզին, որ սպանությամբ վերացրեց պղծությունը պատերազմի ժամանակ և քահանայությունը ցեղից ցեղ երդումով հաստատեց։ Մի՛ մոռանաք նաև սուրբ մարգարե Եղիային, որ չէր կարողանում դիմանալ Աքաբի կռապաշտությանը նայելիս, և արդար նախանձախնդրությամբ ութ հարյուր հոգուն իր ձեռքով սպանեց, և երկու հիսնյակին էլ անշեջ հրի կերակուր դարձրեց, և աստվածային վրեժը լուծելով՝ չըմբռնվող և ահեղ կառքով երկրից երկինք վերացավ։ Դուք հասել եք է՛լ ավելի մեծ բախտի, որովհետև ձեզ համար այլևս կառք չի ուղարկվի, որ վերանաք, այլ կառքերի և երիվարների տերն ինքը հզոր զորությամբ և սուրբ հրեշտակներով ընդառաջ գալով՝ ձեզ յուրաքանչյուրիդ թևեր կբուսցնի, որպեսզի նրա ուղեկիցներն ու քաղաքակիցները լինեք։

«Էլ ի՞նչ կրկնեմ ձեր քաջ կտրիճության առաջ, քանի որ ինձնից ավելի տեղյակ և հմուտ եք սուրբ կտակարաններին։ Դավիթը մանկության ժամանակ քարով կործանեց մսեղեն մեծ բլուրը[120] և ամենևին չըվախեցավ հսկայի ահագին սրից. ցրեց այլազգիների գնդերը, և զորքը

Գ հրայ ԲՃ^{1}αβ լուցկիք ԹԻ լուցիկս 16 Բ վրէժս α վրէժսն 16—17 Բα և անըմբռնելի ահագին կառօք ի յերկրէ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և ԳԴԼԵՀ կառօք 17 ԱԲԴՋԷԹԻԿVՃ^{1}α մասին մեծի վիճակի ԳԴԵԸԺԿ չիք ի Ժ ի մեծի Դ չիք վիճակի Կ վիճակեալ էք 18 ԲՃ^{1}αβ ի վերուստ փխ ի վերացումն V ի ձեզ վերացումն ՋԷ չիք ի 18—19 Ը ինքն 19 Բ տէր 19—20 α սրբովք հրեշտակաց Ա հրշտակօք 20 Ի յառաջ ԷԼV թերևս փխ թևս ԲԴՃ^{1,5}αβ բուսուցէ 21 ԱԹԻV լինիցիմք Ը չիք լինիցիք ԲԳԴԵԺԼԽԿՏ^{1}Տ^{2}Ճ^{1}αβ ուղեկից և նմին քաղաքակիցք լինիցիմք (ԳԵԺԼԽԿՏ^{1}Տ^2 նորա ուղեկիցք) ԴՋԷV ուղղեկիցք Ի ուղղեկից Դ չիք նմին Ը քաղաքակից լինիցիմք Հ զի նորա ուղեկիցք և արքայակից լինիցիմք 22 ԸԽՏ^2 եւ արդ Հ չիք առաջի ԲՃ^{1}α ձեր փխ ձերոյ 23 ԲՃ^{1}αβ գիտակ փխ հմուտք ԵԸԺԽՏ^{1}Տ^2 տեղեակ և հմուտ էք ԼՀ տեղեակ Թ էք և հմուտք էք 23—24 Դ կտակարանաց 24 ԲՃ^{1}αβ ի մանկութեանն իւրում։ չիք ժամանակին α քարիւ 25 ԼՏ^1 չիք զմեծ 25—26 ԱԲԳԴβ սկային (Ա լուսանցքում՝ «հս—հսկային») 26 α զգունդ ԲՃ^{1}αβ և զզօրսն ապրեցոյց ԳՃ^{6,27}γ զզօրս իւր ԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զզօրսն իւր։

մահուանէ և զժողովուրդն ի գերութենէ. և եղև անդրանիկ թագաւորացն Իսրայէլի, և անուանեցաւ հայր Որդւոյն Աստուծոյ։ Նա անուանեցաւ առ ի պէտս ժամանակին, և դուք ճշմարիտ ծնեալք ի սուրբ Հոգւոյն՝ որդիք էք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի։ Մի՛ ոք զձեր բաժինն ի ձէնջ հատանիցէ, և զձեզ օտարախորթս արարեալ՝ տարաբաժին հանիցէ։

«Յիշեցէք զամենայն զօրավարսն զառաջինսն Իսրայէլի՝ զՅեսու, զԳեդէոն, զՅեփթայեա և զայլս ամենեսեան, որք ճշմարիտ հաւատովք էին. հարին կոտորեցին զզօրսն հեթանոսաց, և սրբեցին զերկիրն ի պիղծ կռապաշտութենէն։ Եւ վասն հաստատուն արդարագործութեանն, որ ոչ ինչ երկմտեցին ի խորհուրդս իւրեանց, արեգակն և լուսին առանց ականջաց լուան և կատարեցին զբան հրամանի նոցա. ծով և գետք ճանապարհ գործեցին առաջի նոցա ըստ ոչ սովորութեան։ Եւ բարձրացեալ պարիսպք քաղաքին ձայնիւ լոկով անկեալ կործանեցան ի վրէժխնդրութիւն օրինացն արդարութեան։ Եւ այլքն ամենայն, որ ըստ հաւատոց քաջութիւնս կատարեցին ի դարս իւրաքանչիւր, գովեցան ի մարդկանէ և արդարացան յԱստուծոյ։

«Ապաքէն նոյն Տէր է ի սկզբանէ և մինչև ցայսօր և առ յապա, և յաւիտենից յաւիտենաս, և անդր քան զամենայն յաւիտեանս։ Ոչ նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ փոփոխի անյեղեղուկ բնութիւնն Աստուծոյ. որպէս և ինքն ասէր բերանով սուրբ մարգարէիցն. «Ես եմ, ես եմ, ես նոյն եմ ի սկզբանէ մինչև յաւիտեան. ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց»*

---

1 ԳԴԵԺԼԽԿՀS^{1}Ճ^{1}αβ զժողովուրդն ԳԵՁԷԹԺԻԼԽՀV չիք և (եղև) 2 ԳԹԺԿ Իսրայէղի 3 է առ ի դէպ փխ առ ի պէտս Հ չիք առ Բ չիք և դուք ճշմարիտ ծնեալք Դ ճշմարտեք ծնեալ Գ ճշմարիտք 3—4 ԲՃ^{1}αβ առ ի պէտս ժողովրդեանն ժամանակին արդ դուք ի սուրբ հոգւոյն որդիք էք աստուծոյ 4 ԲՃ^{1}αβ չիք և ժառանգակիցք Քրիստոսի 5 Գ բաժին ԲՃ^{1}Ճ^{6}αβ հանիցէ փխ հատանիցէ Գ ի մէնջ (!) Դ հատանիցէ ի ձէնջ 5—6 Դ օտարախորթս արասցէ ԳԷԻVS^3 օտար խորթս ԸԺՀ յօտարս և խորթս (ԺՀ խորդս) ԵԼԽS^{1}S^2 օտարս և խորթս 6 Բ տարաբարժին 7 A զառաջինս ՁԹԺ Իսրայեղի 7—8 Գ զՅսուն, զԳեդևոնն, զյԵփթայէն և զայլսն Կ զՅեշուն Թ զԵփթայի և զայլսն ԵԸԺԼԽՀS^2 զՅեսուն, զԳեդէոնն, զԵփթաինն և զայլսն S^1 զԵփթաինն Բ զԵփթայեա և զայլսն զամենեսեան α զԳեդեոն զԵփթայայ և զայլսն ամենեսին 8 ԳԿ ամենեսին Թ զամենեսեան ԵԺԼԽ զամենեսին ԳԵԼԽ որ փխ որք 9 Գ հաւատովքն ՁԷV չիք էին. 10 ԱԹ զերկիր Ա պիւղծ ԲՃ^{1}α կռապաշտութենէ 10—11 Դ արդարագործութեան նորա ոչինչ 11 Խ չիք որ Թ չիք իւրեանց 12 Ի արեգակնն և լուսինն α լուսին ԲՃ^{1}αβ զբանս 13 ԱԹԿՀ ծովք ԴԽα ճանապարհորդեցին Բ յորդեցին ԸS^2 հորդեցին ԲՃ^{1}β չիք առաջի 14 Ը չիք ոչ ԱԲԴα սովորութեանն Բ չիք Եւ ԲՃ^{1,14}αβ ամրացեալ փխ բարձրացեալ Գα պարիսպ ԴԼ պարիսպքն Երիքովի։ չիք քաղաքին ԱԲԳԵԸԹԺԻԽԿՀՃ^1,

---

փրկեց մահվանից ու ժողովրդին՝ գերությունից. և եղավ Իսրայելի թագավորների անդրանիկն ու աստծու որդու հայր կոչվեց։ Նա [այդպես] կոչվեց ժամանակի պետքի համար, իսկ դուք, սուրբ հոգուց ճշմարտապես ծնվածներդ, աստծու որդիներ եք և Քրիստոսի ժառանգակիցներ։ Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեզնից չկտրի, և ձեզ օտար ու խորթ դարձնելով բաժնից զրկի։

«Հիշեցե՛ք Իսրայելի բոլոր նախկին զորավարներին՝ Հեսուին, Գեդեոնին, Եփթայային և բոլոր մյուսներին, որոնք ճշմարիտ հավատ ունեին. Նրանք ջարդեցին-կոտորեցին հեթանոսների զորքը և երկիրը պիղծ կռապաշտությունից մաքրեցին։ Եվ իրենց հաստատուն և արդար գործունեության համար, որ ամենևին չերկմտեցին իրենց մտքերի մեջ, արեգակն ու լուսինն՝ ականջներ չունենալով՝ լսեցին ու կատարեցին նրանց պատվերը. ծովն ու գետերը ճանապարհ բաց արին նրանց առաջ հակառակ իրենց սովորության։ Եվ [Երիքով] քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնից ընկան-կործանվեցին՝ արդարության օրենքների վրեժխնդրության համար։ Եվ բոլոր մյուսները, որոնք յուրաքանչյուրն իր դարում հավատի համեմատ քաջություններ կատարեցին, գովաբանվեցին մարդկանց կողմից, և աստված էլ նրանց արդարացրեց։

«Չէ՞ որ նույն Տերն է սկզբից մինչև այսօր և հետո էլ, հավիտյանս հավիտենից և բոլոր հավիտյաններից էլ այն կողմ։ Չի նորոգվում, որովհետև չի հնանում. չի մանկանում, որովհետև չի ծերանում. աստծու անհեղհեղուկ բնությունը չի փոխվում, ինչպես որ ինքն էլ ասում էր սուրբ մարգարեների բերանով. «Ես եմ, ես եմ, ես նույնն եմ սկզբից մինչև հավիտյան. իմ փառքը ուրիշին չեմ տա և ոչ էլ իմ քաջությունները՝ կուռքերին»։

$^{5-6,12-13,18,27}$αβ չիք Երիքովի A քաղաքին Երիքովի 15 ԲՃ^{1}αβ չիք անկեալ ԲS^{1}S^{2}S^{3}αβ կործանեցաւ 15—16 ԵԸԺԽՄՀS^{1}S^{2}S^3 չիք ի վրէժխնդրութիւն օրինացն արդարութեան 16 Թ այլք ԱԲԳԴԹ որք ԲՃ^{1}αβ ըստ օրինացն փխ ըստ հաւատոց Դ ըստ հաւատոցն 14—17 Լ չիք «ձայնիւ լոկով—կատարեցին» 17 ԲԴα իւրաքանչիւրս 17—18 Թ յարդարացան 19 ԱԹԻ տէր է որ ի սկզբանէ ԵՀ տէրն ԱԲԴԵԹԺS^{2}α չիք և 19—20 ԱԹԻԿ առ յապա մինչև յաւիտեանս և յաւիտենից յաւիտեանս ԵԸ յաւիտեան ԳԿ չիք առ ԲՃ^{1}αβ և առ յապա մինչև յաւիտեանս յաւիտենից Գ յապա և մինչև յաւիտեանս և յաւիտենից յաւիտեան Դ և յապա և մինչև յաւիտեան և յաւիտեան և անդր քան զամենայն յաւիտեան յաւիտեանս ԼS^1 չիք և անդր քան զամենայն յաւիտեանս 21 Բαβ և ոչ (փոփ...) 22 Գ անյեղլեղուկ բնութիւն Խ անյեղուկ(!) ԲՃ^{1}αβ չիք աստուծոյ ԱԴԿ ինքն իսկ ասէ 22—23 ԲՃ^{1}αβ ինքն իսկ ասէ ի բերանոյ սուրբ Գ ասէ 23 ԱԲԹԻՃ^{1,6}αβ մարգարէին Ա ես եմ, ես եմ նոյն ի սկզբանէ ԲՃ^{1}αβ չիք ես նոյն եմ Գ ես եմ. ես եմ նոյն, ես եմ ի Ը նոյն ի սկզբանէ ԹԻ նոյն փխ ես նոյն եմ ԴԵԺԼԽԿՀS^{1}S^{2}S^3 չիք ես (նոյն եմ) 24 ԱԹԻ յաւիտեանս Բ ցյաւիտեան α ցյաւիտեանս Թ քաջութիւնս α զքաջութիւն 25 Բ դրօշելեաց։

* ՁԷV ձեռագրերը չունեն էջ 218, տող 10—էջ 220, տող 10—11 «էին—և կռ նմա անուն»։

«Զայս գիտելով, եղբարք, մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտի և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ գան ի վերայ մեր։ Մեր յոյսն մեզ կրկին երևի. եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան։ Յիշեսցուք զբանն Առաքելոյ, որ ասէ, թէ [Փոխանակ ուրախութեան, որ նմա առաջի կայր, յանձն էառ զհամբերութիւն մահու, և մահու խաչի] վասն այսորիկ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և ետ նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց»։

[«Եւ քանզի որ ճշմարտութեամբ միացեալ է ընդ սիրոյն Քրիստոսի, հոգւոյն աչօք տեսանէ զաներևոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական] որ յամենայն ժամ և յամենայն օր գեր ի վերոյ ծագեալ երևի ամենեցուն. և սրբատեսիլ և սրբահայեացս անպղտոր յստակութեամբ ձգտեցուցանէ զհայեցուածս, և թափանցանց եղեալ ընդ երկինս՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ, և կորովութեամբ կշռէ զերկրպագութիւն զերից հաստուածոցն միաւոր զօրութեանն։ Եւ արդ որ ընդ Աստուծոյ աստիճանսն ոտնփոխ եղեալ իցէ, և բարձրութեամբ յարքունիսն հասեալ ,և զամենայն մեծութիւն բովանդակ տեսեալ, նա միայն է, որ ժառանգէ զանանց ուրախութիւնն և զանսպառական մխիթարութիւնն։

«Մի՛, տեարք իմ պատուականք, յետ այսչափ ի բարձունս վերանալոյ՝ այսրէն, յերկիր անկեալ թաւալեսցիմք, այլ զտեղի առեալ

---

1 ԲՁ^{1}αβ եղբարք իմ Խ եղբայրք ԲՁ^{1} թուլութեամբ մի՛ լքանիցիմք αβ մի՛ լքանիցուք 2 ԲԴα հաւատով Լ կամակոր (!) 3 ԱԲԳԴԹԻԿՁ^{1}αβ ի վերայ յարուցեալ թշնամեացն (ԱԳԴԹԻԿ թշնամւոյն) ԱԲԳԴԹԻ չիք որ յարուցեալ գան ի վերայ մեր 4 ԱԲԳԴԹԻԿՀՁ$^{1,5-10,12-20,23-28}$αβ կեամք ԵԸԺԼԽS^{1}S^{2}S^{3}A կեանք Դ մեռանիցիմք 5 Ի չիք մեզ ԳԼS^{1} կեանքն ԱԹԻ նոյն կեանք առաջի կա մեզ ԲՁ^{1}αβ նոյն կենդանութիւն առաջի կա մեզ 5—6 ԲԽՁ^{1}αβ յիշեցէք զբան առաքելոյն 6 Բ եթէ ԱԲԳԴԻα ուրախութեանն ԱԳԴԹԻԿ պատրաստեալ էր փխ կայր 6—7 ԲՁ^{1}αβ կայր պատրաստեալ էր յանձն առ 7 ԱԴ առ Ա զհամբերութիւն մահու խաչի ԳԸԹԽS^{1}S^{2} չիք մահու Թ չիք մահու և Ի չիք և մահու ԳԼԽ մահու և խաչի ԱԲԴՁ^{1}α այնորիկ 8 Լ չիք և (Աստ...) ԱԳԴԹԻԼԿS^{1} չիք առաւել ԲՁ^{1}αβ և շնորհեաց փխ և ետ 8—9 Հ չիք որ ի վեր է քան զամենայն անուն 9 Գ յանունն S^{2} չիք ամենայն 12 ԳԼS^{1} չիք որ 12—13 ԱԿՁ$^{5-6,12-14,18}$ սիրոյն աստուծոյ A որդւոյն աստուծոյ փխ սիրոյն Քրիստոսի ԳԹԻ սիրոյն 13 ԳԴԵԺԼԽՀ հոգւոյն ԳԵԺԼԽՀ աչօքն ԵԺՀ տեսանեն α որդւոյն ահաւոր 13—14 ԲՁ^{1}αβ լոյսն յստակ ճառագայթիցն 14 ԱԳԴԵԸԺԻԼԽԿS^{3}α արեգականն Բ արեգակինն Դ չիք և α չիք յամենայն ժամ և 15 Բαβ չիք և ԲՁ^{1,14}αβ սրատեսիլ և

«Այս գիտենալով, եղբայրնե՛ր, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել-գալիս են մեզ վրա։ Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ։ Հիշենք առաքյալի խոսքը, որ ասում է, թե՝ «Այն ուրախության փոխարեն, որ սպասում էր նրան, նա հանձն առավ համբերել մահվան, այն էլ՝ խաչի մահվան. այդ պատճառով էլ աստված նրան ավելի ևս բարձրացրեց և այնպիսի մի անուն տվեց նրան, որ բոլոր անուններից վեր է. որովհետև Հիսուս Քրիստոսի անվանը ծունր պիտի դնեն բոլոր երկնավորներն ու երկրավորները և սանդարամետականները»։

«Որովհետև ով ճշմարտությամբ միացած է Քրիստոսի սիրո հետ, հոգու աչքով տեսնում է իմանալի արեգակի[121] ճառագայթների անտեսանելի հստակ լույսը, որ ամեն ժամ և ամեն օր շատ ավելի պայծառ ծագելով երևում է բոլորին. և սրբատեսիլ ու մաքուր հայացքներն անպղտոր հստակությամբ դեպի ինքն է ձգում և թափանցելով երկնքի միջով՝ մոտեցնում է անմերձենալի պատկերին և զորավոր մտքով որոշում է երկրպագել միասնական զորության երեք մասերին։ Եվ արդ, ով աստվածային աստիճաններով ելած լինի և բարձրությամբ [աստվածային] արքունիքին հասած ու նրա ամբողջ մեծությունը լիովին տեսած, միայն նա կժառանգի անանցանելի ուրախությունն ու անսպառ մխիթարությունը։

«Ո՛չ, իմ պատվական տերե՛ր, այսչափ վեր բարձրանալուց հետո՝ նորից այստեղ երկիր չընկնենք ու թավալվենք, այլ այդ նույն բարձրու-

---

սրահայեաց է որոց տեսիլ է ԸԽS^{2} սրբահայեաց ԼS^{1} չիք և սրբատեսիլ Դ չիք և 16 Ա ձգտեցուցանէ Ը ձգեցուցանէ ԲԴՁ^{1}αβ զհայեցուածսն ԵԼՀ զհայցուածս 16—17 αS^{2} թափանցիկ 17 ԲԵՁ^{1}αβ յերկինս 18 Կ կորութեամբ (!) ԲԳԺ զերկրպագութիւնն α զերիս ԱԴՋԷԸԹԺԻԿ հաստածացն ԲԳԼՁ^{1}αβ հաստուածացն ԵՀ հաստուածն 19 ԱՋԷԹԻ զօրութիւն ԲԺS^{3}α զօրութեանն ԳԴԼԿS^{1} զօրութիւնն 18—19 V չիք զերից հաստուածոցն միաւոր զօրութեան 19 ԱՋ աշտիճանսն ԲՁ^{1}αβ ընդ այս աշտիճան փխ ընդ աստուծոյ աստիճանսն Բ ոտին ոտնփոխեալ Ձ^{1}αβ ոտն ոտնփոխեալ ԵԸԺԼԿՀS^{1}S^{2} ոտնափոխ S^{3} ոտնկոխ 19—20 Է չիք «աստիճանսն—բարձրութեամբ» 20 ԱԳԹԺԻԽՄS^{1}S^{3}V իցեն ԳԼ չիք իցէ α բարձրութեամբ անդ յարքունիսն Բ ընդ արքունիսն Դ յարքունիս ԲՁ^{1}αβ հասեալ կա ԵԸԺԽ հանեալ փխ հասեալ 20—21 Բ չիք և ԳԴԺ մեծութիւնն α զամենայն զմեծութիւն 21 ԲՁ^{1}α տեսանել Ա զանայնց (!) Լ չիք զանանց 22 ԱՋԷԹԻV չիք և զանսպառական մխիթարութիւնն ԳԴԿ ուրախութիւնն ԵԸԺԽՀ ուրախութիւնսն ԵԼՀ մխիթարութիւն 23 Թ չիք իմ Ի մաերիմք փխ մի՛ տեարք իմ A մի յետ ԲՁ^{1}αβ այսչափ յերկինս փխ այսչափ ի բարձունս 24 ԲՁ^{1}αβ անդրէն փխ այսրէն Ի մի՛ այսրէն Դα չիք անկեալ ԸԽՄS^{1} թաւալեսցիմք α անդրէն յերկիր թաւալեսցիմք ԱՋԷԹV տեղի։

անդրէն ի բարձրութեանն հաստատեսցուք։ Թէպէտ և հայեսցուք ի ստորին կողմ՝ երկրիս, տեսանեմք զսա լի ամենայն ապականութեամբ և անսուրբ պղծութեամբք։ Քանզի զի՞նչ աղէտք տարակուսի են, որ ոչ գործին յերկրայինս ախտարբերս. թշուառութիւնք աղքատաց և անթիւ չարչարանք նոցուն, աղցաւոր ծանրութիւնք հարկահանաց, զզուանք և կռփանք ի բռնաւոր ընկերակցաց, քաղց և ծարաւ ըստ կարօտութեան բնութեանս։ Սառնամանիք ձմերայնւոյ և խորշակք ամարայնւոյ, հիւանդութիւնք տարաժամք և ախտք մահաբերք հանապազ տանջեն զմարդիկ. երկեւղ արտաքնոց, արհաւիրք ի ներքնոց անդադար ի վերայ հասանեն, ցանկան մահու յառաջ քան զժամանակն, և ոչ գտանեն. և բազումք են, որ փորեն և խնդրեն, և խնդալից լինին յորժամ գտանեն։ Իսկ որ թուին մեզ, եթէ յաջողեալ իցեն ի մեծութեան և փափկանան ուրախութեամբ ի պակասելի կեանս, մեծամտեալ հպարտանան յանցաւոր մասունս աշխարհիս. նոքա են, որ կուրացեալ են ի ճշմարիտ կենացն։ Իսկ արդ զի՞նչ այն չարիք իցեն, որ ի նոսա ոչ գործիցին. ընդ մեծութիւն խառնեալ է յափշտակութիւն ընչից աղքատաց, ընդ սուրբ ամուսնութիւնն՝ գէճ պղծութիւն։ Յորս վայելեն ընտրութեամբ, նոցուն երկրպագութիւնս իբրև Աստուծոյ մատուցանեն, մոլորեալք ի ճշմարիտ կենացն։

«Ո՞չ ահա ամենայն աշխարհս արարչին բոլորեցուն է գոյացութիւն. և զոր նոքայն պաշտեն և պատուեն՝ ապաքէն ի մին նիւթոյ է մասն. իսկ արդ մասունքն մասանց կան ի ծառայութիւն։ Զի եթէ մի մասն աշխարհիս ապականացու է, հարկ է թէ և

---

1 ԳԴ անդէն Բα ի բարձրութիւնն հաստատիցիմք Ի հաստատիցուք ԵԺԽՀ թէև ԲՃ^{1}αβ հայիցիմք 2 ԳԵԺԻԽԿՀ կողմն 2—3 ԱՋԷԹԻVՃ^{5}α ապականութեամբք Բβ լի ապականութեամբ և անսրբութեամբ 3 Դ պղծութեամբ ԵՀ և պղծութեամբք լսեալ ԸԺԽ անսուրբ և պղծութիւնք լսեալ Դ զինչ ինչ 4 Բ չիք են ԲՃ^{1}αβ յերկրաւորս փխ յերկրայինս ախտարբերս ԳԼԿS^{1}S^2 յերկրայինսս ախտարբեր ԳԵԸԺԽՀS^{1}S^2 ախտարբեր α անբաւ են թշուառութիւնք 5 ԳԵԸԺԼՀS^{1}S^2 չիք և ԲS^{1}αβ նոցունց ԲԴԽՃ^{1}αβ անցաւոր փխ աղցաւոր Հ ծանրաւորութիւնք 6 Ի զրկանք փխ զզուանք ԽՀ բռնաւոր (!) 7 ԳԴ ԼS^{1}S^2 չիք և Ի ծարաւի ԱԴՋԹԻV բնութեանս փխ բնութեանս Բ բնութեանցն αβ բնութեանց է բնութիւնս 7—8 Բ սառնամանիկք ձմերայնի և խորշակք ամարանի Գ ձմերանւոյ α ձմերայնի, հիւանդութիւնք 8 Դ խորշակ Գ ամարանոյ Դ տարաժամ ախտք 9 Դ զմեզ փխ զմարդիկ Ը զմարդիկք Խ տանջեն զմեզ և մարդիկք ԳԵԸԺԼԽՀ S^{1}S^2 երկիւղք 9—10 ՀՃ^{1}αβ չիք արհաւիրք ի ներքնոց ԱՋԷԹԻVS^3 և արհաւիրք ԳԵԸԺ ԽԿS^{1}S^2 և ահք ներքնոց Դ ահ ներքնոց Լ ահք։ 10 չիք ի ներքնոց Կ չիք անդադար ԲՃ^1 հանապազ փխ անդադար Դ հասցեն ԲՋԷ հասանեն V հասանին Հ չիք մահու 11 ԱՋԷԹ բազում 11—12 ԱՋԷԹԻ փորեն և խորեն և խնդրեն ԸV չիք «և բազումք են—

թյան վրա հաստատ կանգնած մնանք։ Եթե նայելու լինենք դեպի ցած՝ երկիր, այն կտեսնենք լի ամեն ապականությամբ և անսուրբ պղծություններով։ Որովհետև ի՞նչ աղետալի բաներ ասես, որ չեն գործվում այս ախտաբեր երկրայինների մեջ. աղքատների թշվառություններ և նրանց անթիվ չարչարանքներ. հարկահանների կողմից ծանր նեղություններ, բռնավոր ընկերների կողմից զրկանք և խոշտանգում, քաղց ու ծարավ մեր բնության կարոտության համեմատ։ Ձմեռվա սառնամանիք և ամառվա խորշակ, տարաժամ հիվանդություններ ու մահաբեր ցավեր շարունակ տանջում են մարդկանց. անդադար վրա են հասնում երկյուղ արտաքիններից և արհավիրք ներքիններից. ժամանակից առաջ մահ են ցանկանում, բայց չեն գտնում. և շատերը կան, որ հետամուտ են լինում ու փնտրում են, և երբ գտնում են՝ ուրախանում են։ Իսկ ովքեր մեզ թվում է, թե հաջողված են հարստության մեջ և փափկակյաց ուրախությամբ են անցկացնում այս անցավոր կյանքը, մեծամտում-հպարտանում են այն աշխարհի դատարակ գործերով, հենց նրանք են, որ կուրացած՝ ճշմարիտ կյանքը չեն տեսնում։ Իսկ արդ, ի՞նչ չարիքներ կան, որ չեն գործվում նրանց մեջ. հարստության հետ խառնված է աղքատների գույքի հափշտակությունը, սուրբ ամուսնության հետ վատթար պղծությունը։ Ճշմարիտ կյանքից շեղված՝ ինչ որ վայելում են ընտրությամբ, նրանց էլ երկրպագություն են մատուցանում իբրև աստծու։

«Չէ՞ որ այս ամբողջ աշխարհը ամենքի արարչի ստեղծածն է, և ինչ որ նրանք պաշտում են ու պատվում, միևնույն նյութի մասն է, ապա ուրեմն մասերը մասերին են ծառայություն մատուցանում։ Որովհետև եթե այս աշխարհի մի մասն ապականացու է, պետք է որ բոլոր մա-

---

յորժամ գտանեն» 12 ԲՃ^{1}αβ և յորժամ գտանեն՝ խնդալից լինին ՋԷԻ խնդակից Բ թուի 13 ԲԳԵԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{12} յաջողեալք Դα աջողեալք ԲԳԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{1}αβ ի մեծութիւն 14 ԱԴՋԷԹԻV ի պակասեալ ի կեանս ԲՃ^{1}αβ պակասեալ ի կեանս աշխարհիս ՈS^1 պակասեալ ԳԵԺԼԽ հպարտանայ ԳԵԺԿՀS^2 ի յանցաւոր Բ յանցաւոր իմաստունս α ի մասունս 15 ԲՃ^{1}αβ չիք աշխարհիս Գ աշխարհի ԲԳԴԵԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{1}αβ սոքա Հ ուրացեալ են 16 ԲՃ^{1}α են փխ իցեն ԻԽ չարք ԳԵԺԽԿՀ չիք ոչ ԲԴՃ^{1}αβ գործեցան ԵՀ գործիցին 16—17 ԲԺԽαβ ընդ մեծութիւնն 17 α խառն է 18 ԳԵԼԽ ամուսնութիւն ԲԳԵ գէջ Բ պղծութիւնն 19 ԱԳԴԵՋԷԸԹԺԻԼԽԿՀVS^{1}S^{2}S^3 յորս վայելեն ընտրութեամբ A վայելէնն անընտրութեամբ ԲՃ^{1}αβ յորս վայելէն ուէրութեամբ 18—19 ԲՃ^{1}αβ նոցունց Դ երկրպագութիւն α յերկրպագութիւն ԵԸԺԼԽՀS^{1}S^2 մոլորեալքն 21 ԱՋԷV յամենայն 21—22 Բ արարչին են գոյացութիւնք Դ ամենեցուն ԲՃ^{1}αβ չիք բոլորեցուն 22 Բαβ նոքա Բβ պատուեն և պաշտեն Դ ի նոյն ԵԸԺԼՀS^1 ի նմին α չիք ապաքեն Բ չիք ի 23 ԱՋԷԹԻVS^3 նիւթոց ԲԴՋԷԹα մասունք Գ մասնն ԵԺԼԽՀ մասանցն 23—24 ԲԳ ի ծառայութեան 24 Բα մին մասն Դ հարկ է եթէ Ի եթէ։

ամենայն մասունքն ընդ նմին ապականին։ Նա և ի մասանց անտի՝ պարտ է թէ և ընտրութիւնք երևեսցին. իսկ արդ որ լաւ է՝ յայտնի է ամենեցուն, և որ գիտէն իմանալ՝ նա է ընտիր ի մասանցն։ Ապա թէ այդ այդպէս է, քան զամենայն պաշտամունս հեթանոսաց, որում երկիր պագանեն, երկրպագուքն են առաւելեալք քան զանբան տարերսն, որոց չարաչար կան ի ծառայութեան. և զէն Աստուած, որ ի մարդ կերպարանեցաւ, չպաշտեն, այլ արարածոց տանին երկրպագութիւն. որոց մեղաց չիք քաւութիւն յարդար ատենին։

«Ո՞ն անդր ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորելոցն. եղկելիս և ողորմելիս քան զամենայն մարդիկ զնոսա համարեսցուք. մանաւանդ զի կամօք են կուրացեալք և ոչ ի հարկէ, և ոչ երբէք գտցեն զճանապարհն ճշմարտութեան։ Այլ մեր բացահայեաց աչօք տեսեալ զլոյսն երկնաւոր, մի՛ պատահեսցէ մեզ խաւարն արտաքին։ Զի ոյք էին ի խաւարի, եկն առ նոսա լոյսն ճշմարիտ կուրացեալք վրիպեցան ի կենացն, իսկ որք ընկալայքդ հաւատովք, որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանորդք և ժառանգորդք վերին իմանալի քաղաքին։

«Անդ է առաջնորդ փրկութեան մերոյ. աստ քաջութեամբ նահատակեցաւ, և զնոյն ուսոյց ամենայն նիզակակից գործակցաց իւրոց Առաքելոց. ընդ որս և դուք էք այսօր կրկին երևալ, օրհնեալք հաւատովք ընդդէմ աներևոյթ թշնամւոյն, պատենազէն զրահիւք դէմ ընդդէմ ընկերակից սատանայական գործոյն։ Եւ եթէ այսպէս և եթէ այնպէս, զերկոսեան կողմանսն ի պարտութիւն

---

1 ԳԴV մասունք ԲՃ^{1}β ընդ միոյն փխ ընդ նմին ԲՃ^{1,2}αβ ապականեսցին Թ ի մասանցն 1—2 Ը իմաստնոց անտի ԳԴԿ չիք ի 2 Դ եթէ փխ թէ և ԳԵԺԼԿՀS^1S^2 չիք և ԱԳՁԷԹԻV ընտրութիւն α ընտրութիւնքն α չիք արդ Բα լաւն է 3 Լ չիք և ԲՃ^{1}αβ գիտէ ԳԵԺS^3 գիտէն 3—4 Դ նա է տուիչ մասանց փխ նա է ընտիր ի մասանցն α մասանց ԸԽ իմաստնոցն փխ ի մասանցն 4 Եα ապա եթէ ԲԳԸԺԼԽԿՀS^1S^2 եթէ Բ զպաշտամունս 4—5 α զամենայն զպաշտամունս հեթանոսացն Բ հեթանոսացն 5 ՁԷV յորում ԱV երկրպագուեսցն Դ երկրպագունք α և երկրպագուք ԲԴ առաւելեալ 6 ԲԴՃ^{1,2}αβ քան զամենայն զտարերսն որում Գβ տարերս որ Թ տարերցն ԴԼԿS^1β ի ծառայութիւն 7 ԵՀՃ^1 զէնն ԻԿ զայն փխ զէն ԳԴ կերպանայ ԵԺԼԽՀS^1S^2 կերպարանայ ԲՃ^{1}αβ ոչ պաշտեն ԳԵԺԼԽՀS^2Ճ^6 չիք չպաշտեն այլ ԴՃ^{1}αβ և փխ այլ 8 Բ տան ԲԴ զերկրպագութիւն ԵS^1 յերկրպագութիւն Դ որոյ ԲԴαβ մեղացն Խ քաւութիւնք 8—9 ԲՃ^{1}αβ յարդարադատ Դ յարդարադատէն փխ յարդար ատենին Թ արդար 10 ԲԳԴ

սերն էլ նրա հետ փչանան։ Նաև այն մասերի մեջ էլ պետք է ընտրություն լինի. արդ, թե ո՛րն է լավը, այդ հայտնի է բոլորին, և ով որ կարող է հասկանալ, նա՛ է մասերի մեջ ընտիրը։ Իսկ եթե այդ այդպես է, ապա ուրեմն հեթանոսների պաշտած ու երկրպագած բոլոր բաներից՝ երկրպագուներն ավելի գերազանց են, քան անբան տարրերը, որոնց նրանք չարաչար կերպով ծառայում են. և չեն պաշտում է աստծուն, որ մարդու կերպարանք առավ, այլ երկրպագում են արարածներին. նրանց մեղքերին քավություն չկա արդար ատյանում։

«Եկե՛ք դեն գցենք մոլորվածների խավարային խորհուրդները, նրանց համարենք բոլոր մարդկանցից ավելի խղճալի և ողորմելի. մանավանդ որ իրենց կամքով են կուրացած և ոչ հարկից ստիպված և երբեք չեն գտնի ճշմարիտ ճանապարհը։ Իսկ մենք, որ բացահայտ աչքով տեսել ենք երկնավոր լույսը, թող չպատահի մեզ արտաքին խավարը։ Որովհետև ովքեր խավարի մեջ էին, նրանց մոտ եկավ ճշմարիտ լույսը. նրանք կուրացած՝ զրկվեցին կյանքից։ Իսկ դուք, որ հավատով ընդունեցիք, որդիներ եք և ոչ թե օտար ու խորթ մարդիկ, սիրելիներ եք և ոչ թե թշնամիներ, վերին իմանալի քաղաքի մասնակիցներ և ժառանգորդներ։

«Այնտեղ է մեր փրկության առաջնորդը. նա այստեղ քաջությամբ նահատակվեց և միևնույն բանը սովորեցրեց իր նիզակակից ու գործակից բոլոր առաքյալներին. նրանց հետ այսօր դուք էլ եք կրկին երևում, հավատով օրհնված՝ աներևույթ թշնամու դեմ, որ զրահապատված կանգնած է դեմառդեմ իբրև սատանայական գործի ընկերակից։ Այսպես թե այնպես, երկու կողմերին էլ պարտություն կպատճառեք, ինչպես որ ին-

---

ԵԸԺԼԽԿS^1S^2Ճ$^{5-6,12-13,27}$ արդ փխ օն Կ ի բաց թողումք Հ ի բաց թողուցուք 10—11 ԲՃαβ մոլորութեանն (β մոլորութեան) 11 Խ մարդիկք է զնա փխ զնոսա 12 ԲԵԼ ԽԿՀS^1S^2α կուրացեալ է կորուսեալք փխ կուրացեալք ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^5 չիք և 13 ԳS^1 զճանապարհս Դ արդ փխ այլ 15 ԲԴՃ^{1,6}αβ որք ԳԴԵԺS^2 խաւարին ԳԴԵԺS^1S^2 և եկն 16 Բαβ և կուրացեալքն ԼS^1 կուրացեալ Դ կուրացեալ վրիպեցին ի կենաց ԳԵԺ ի կենաց ԲԴ ընկալայք α ընկալաք Ի հաւատով 17 α որդիք եմք ԵԸ օտարխորթք Խ խորթք փխ օտարախորթք 19 ԲԳԵԸԺԼԽՀ առաջնորդն ԱԴՁ փրկութեանն 20 ԱԳՁԷԹԻԿV և զնոսա փխ զնոյն Ժ զնոյնն Ե զամենայն 20—21 α նիզակակցաց իւրոց 21 ԲԴαβ սրբոց առաքելոցն Գ առաքելոցն ԲԳԴԵԺԼԽԿՀS^1S^2Ճ$^{1,5,13-14,18,27}$αβ յորում և փխ ընդ որս և 21—22 α դուք այսօր կրկին երևիցիք զինունք հաւատովք ԱՁԷԹԻVՃ^{12}S^3 յորմէ ԱԳԵՁԸԹԺԻԼԽԿՀVS^3 երևեալք ԲԴ երևելիք Բ զինովք և հաւատովք Ի օրհնեալ հաւատով Ճ^{1}α զինուք փխ օրհնեալք 22 ԲՃ^{1}αβ իսկ պատենազէն է պատմեն ազգէն(!) 23 ԳԴԵԸԺԽԾԿՀS^1S^2 զրահիւքդ ԲԳԴԵԸԺԾԿՀԽՃ^{1}αβ չիք դէմ α չիք ընկերակից ԳԴԵԸԺԽԾԿՀS^1S^2α գործոցն 23—24 է չիք և եթէ այնպէս 24 ԴԵԺԻ զերկոսին ԱՁԹ պարտութիւն(!) է ի պատրաստութիւն (!)։

մատնէր, որպէս և Տէրն ինքնին արար աշխարհի թուեցաւ թէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակութիւնն. զախոյեանն ընկէց, զպատերազմն եհար, զթշնամիսն ցրուեաց, զաւարն ժողովեաց, զգերիսն դարձոյց, զպարգևսն բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց ի ձեռն իւրաքանչիւր առաքինութեան։

«Գիտէք դուք ամենեքեան, յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել ի մէջ բանակիս, ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոջ թողուիք զնոսա, իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբր վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութեան։ Եւ եթէ մեռանել ես հասանէ ի նոցանէ, սակայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց. քանզի յաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն։

«Որպէս զի կրկին աչս ստացեալ ունիցին. հաւատոյ աչօք ըզքարկոծանս մարգարէիցն տեսանեն, և մարմնոյ աչօք զքաջութիւն ձերոյ նահատակութեանդ։ Մանաւանդ թէ ի ձեզ զերկոսեան իսկ տեսանեմք. քանզի և դուք իսկ տեսանէք զչարչարանս սուրբ առաքելոցն և զպանմունս զամենայն սուրբ մարտիրոսացն, որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ եկեղեցի, և հեղումն արեան իւրեանց եղև ի պարծանս վերնոցն և ներքնոց։ Արդ մինչև ի գալուստն երկրորդ՝ նոյն նահատակութիւն կատարի չարչարանօք»։

---

1 Է մատնէր ԲԳS²Ճ¹αβ տէր իսկ ԳԵԸԺԼԽԿՀS¹ ինքնին իսկ ԲS²Ճ¹αβ ինքն ԱՁԷԹԻV յաշխարհի ԲԳԴԵԸԺԼԽԾԿՀS¹S²S³A աշխարհի ԳԴԼԿ եթէ 2 ԱՁԷԹԻV զկատարեալ նահատակ առաքինութիւնն AS³ զկատարեալ նահատակ առաքինութեանն 3 α զպատերազմնն α զթշնամին Բ չիք զթշնամիսն ցրուեաց 4 Ի զաւար ԲԳԴԵԺԼԿՀS¹Ճ¹⁶α զգերին 4—5 ԴՃ⁵ չիք ամենայն 5 ԲՃ¹,¹⁴αβ բառ իւրաքանչիւր ԲԳԴԵԸԹԺԼԽԿՀS¹Ճ¹,¹⁴αβ առաքինութեան ԱՁԵԹԻVS³A առաքինութեանց 6 Դ ամենիքեան 7 ԲԴ պատերազմին Բ ի քահանայից 8 α հանապազորդիլ ՁԷԹԻV հանապազորդեալ Բ բանակն α ի մեծ բանակիս ԲԴ ճակատուն Բ յանձն առեալ ԱՁԹV յանձնել Ի յանձնիլ 9 α ձեր փխ ձեզ Բ ի յամուր 10 α եպիսկոպոսունք Հ իրիցունք ԲՃ¹,²αβ չիք և սարկաւագունք Դ սաղմոսասացք ԵԸԺԽՀ սաղմոսերգուք ԳԿՃ⁵,²⁷ սաղմոսողգք Թ չիք սաղմոսերգողք 11 ԸS² կարգաւ ԳԼS¹ կանոնաւք իբրև ԵS² կանոնաւն ԲՃ¹αβ իբրու ԴԸԺԽՀ իբրև 12 ԲՃ¹αβ չիք և Ի չիք կամին 13 Խ չիք հարկանել Խ ի թշնամիսն Կ զթշնամիս ճշմարտութեանն Դ և եթէ ուրուք թէ մեռանիլ Դ չիք ես ԲՃ¹,¹²,¹⁴αβ հասանիցէ ԳԸԺԼԽԿՀS¹S²Ճ⁵ հասցէ 14 ԲՃ¹αβ սակայն ես յայսմանէ Դ չիք սակայն և

քը Տերն էլ արեց աշխարհի նկատմամբ. թվաց, թե մեռավ, բայց նա այն ժամանակ տարավ հաղթության կատարյալ մրցանակը. ախոյանին տապալեց, պատերազմում ջարդեց, թշնամիներին ցրեց, ավարը ժողովեց, գերիներին հետ դարձրեց, պարգևները բաշխեց իր բոլոր սիրելիներին՝ յուրաքանչյուրի առաքինության համեմատ։

«Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետև սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին, որևէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին։ Եվ եթե նույնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենալու, որովհետև ավելի սիրով մեռնել են ուզում, քան մեռցնել։

Կարծես թե կրկնակի աչքեր ստացած լինեն. հավատի աչքերով տեսնում են մարգարեների քարկոծվելը, իսկ մարմնի աչքերով՝ ձեր քաջ սխրագործությունը։ Մանավանդ որ ձեր մեջ տեսնում ենք երկուսն էլ. որովհետև դուք էլ տեսնում եք սուրբ առաքյալների չարչարանքները և բոլոր սուրբ մարտիրոսների սպանվելը, որոնց մահով հաստատվեց սուրբ եկեղեցին, և նրանց արյունը թափվելը պարծանք եղավ վերինների ու ներքինների համար։ Արդ, մինչև երկրորդ գալուստը նույն քաջագործությունն է կատարվում չարչարանքներով»։

յայսմանէ ԲՃ¹β եմք փխ են α զի փխ քանզի 15 Բ զմեռանելն կամիմք ԹԻ զմեռանիլն Դ և ոչ զմեռուցանելն 16 ԲՃ¹αβ քանզի փխ որպէսզի ԲԳԴԵԸԺԼԽԿՀS¹S²Ճ¹,⁶,¹⁴,²³β ունին α ունի ԳԼS¹ հաւատոց 17 ԲԼԿS¹S² մարմնոց ԲԵԺԼԽԿS¹S² այսօր 18 ԳԴԵԺԿՀα եթէ ԱՁԷԹVS³ ի ձէնջ փխ ի ձեզ ԲԳԵ զերկոսեանն ԲԼԿS¹Ճ⁶β չիք իսկ (տեսանէք) 19 Գ քանզի և դուք տեսանէք Խ չիք սուրբ 20 ԲԵԸԺԼԽԿՀՃ¹S¹S²αβ զպանումն Կ զամենասուրբ ԵԸԼԽՀ ամենայն Λ քաջ փխ սուրբ 21 Է չիք և ԱԳԴԵՁ ԸԹV արեանն Հ սուրբ արեանն ԲՃ¹αβ նոցա փխ իւրեանց 22 ԲՃ¹,⁶αβγ պարծանք Դ չիք ի ԲՃ¹α և ներքնոցս ԳԴԵԼԽԿՀ վերնոց ԹS³ ներքնոցն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՃ¹α եւ արդ 23 α նոցա փխ նոյն Բ նահատակութիւնն Դ կատարի

Բոլոր ձեռագրերը, ճառընտիրները և տպագրությունները վերջանում են *«չարչարանօք»* բառով, միայն Λ-ն ավելացնում է՝ *«առաքինեացն և ընտրելոց նահատակաց, յորոց միջի և դուք էք հանդիսացեալ այսօր, և հրաւիրեալ ի լուսաւորչացն ձեր սրբոց հասանել ի գունդս նոցա և ժառանգորդս խոստացելոցն լինել անանց բարութեանց ի Քրիստոսէ Յիսուսէ, որ է օրհնեալ յաւիտեանս»։*

Յայս վայր խօսեցաւ ի գիշերին յայնմիկ սուրբ երէցն Ղեւոնդ, և փառաւորելով կատարեաց՝ զԱմէնն ասելով։ Եւ սկզան ուղղեալ՝ զամենասուրբ խորհուրդն կատարեցին. ուղղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երեխայ ի բազմութեան զօրուն՝ զգիշերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւօտս սուրբ օրհնացն հաղորդեցան, և այնպէս լուսազգեստք եղեն՝ որպէս ի տերունեան մեծի սուրբ զատկին։

Եւ մեծաւ զուարճութեամբ և յոյժ խնդութեամբ աղաղակեաց ամենայն բազմութիւն զօրացն և ասեն. «Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու արդարոցն, և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրոսացն, և հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւս, և մի՛ տացէ զեկեղեցի իւր ի ձեռս հեթանոսաց»։

* Յետ այսորիկ իբրև ետես զօրավար գնդին Պարսից, եթէ հատան պատգամաւորքն ի միջոյ խաբել զնոսա, և բարձաւ յոյս ակընկալութեան իւրոյ ցրուել զնոսա յանքակ միաբանութենէն, յայնժամ ժամանակի յառաջ կոչէր զանօրէնն Վասակ և զամենայն ուրացեալ իշխանսն, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցնէր ըզնոսա, և ուսանէր ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեանն։ Եւ իբրև ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր և զբազումս ի զօրագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ, և հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն, և ի գունդս գունդս

---

Որովհետև շատերը մեծ նախարարների ցեղից էին, եղբայրներ, որդիներ ու դուստրեր, իրենց բոլոր սիրելիների հետ միասին այդ ամուր վայրերում էին, ոմանք Խաղտյաց անկույս երկրում և ուրիշ շատերը հարավային կողմերում՝ Տմորիքի անմատչելի ամրոցներում, մի մասն էլ Արցախի խիտ անտառներում, և ուրիշ ոմանք այնտեղ Միջնաշխարհում տիրեցին շատ ամրոցների։ Բոլորն էլ մեծ համբերությամբ տանում էին բազմաթիվ նեղություններ Քրիստոսի սիրո համար և միայն մի բան էին աղաչելով խնդրում աստծուց, որ սուրբ եկեղեցիների ավերվելը չտեսնեն։

Բայց ինչպես որ շատ անգամ արդեն ցույց ենք տվել ամբարիշտ [Վասակի] չարամտությունը, հորդորում և ստիպում էր մոտիկ վայրերում գտնվող Պարսից զորքերին, որ թագավորի հրամանով նրանց օգ-

---

ԿՀ չիք *և (եղբարք) 15 ԳԴԺ սիրելեօքն 16 ԳԵԸԼԽԾԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^6 վայրենեացն* փխ *վայրացն Դ վայրեացն Դ ոմանք Բ յանկոյս յերկիրն Տ^{2}Ճ^{1}α յայսկոյս* փխ *յանկոյս ԳԴ երկրին Ա խառեաց (!) ԲԺ այլք 17 Գ ի կողմանսն α յանմատոյ Բ յամուրս Դ ամուրս Թ ամուրն 18 ԲԳ կէսք Ե և կէսք α ի թանձրախիթ ԲԴ մայրիս Արձախայ Թ Արցախու Λ Արցախոյ ԳԴԵԸԺԼԽԿՀՃ^1 Արձախա ԲՃ^1 այլք ԳԵԺԽԾԿՀՏ^{1}Տ^2 ոմանք ոմանք 18—19 ԲՃ^{1}α ի միջոցս Ը միջոցի ԳԴԵԹԺԻԼԽԿՏ^{1}Տ^2 ի միջոցի 19 Բα բնանային Գ* չիք *վերայ Գ ամրոցն* փխ *ամրոցացն Դ ամրոցաց(!) ԲՃ^{1}α բազում աշխարհաց* փխ *բազում ամրոցացն 19—20 ԲԳԵ ամենեքեան Դ ամենիքեան 20 α* չիք *համբերութեամբ ԳԼՏ^1 բազում նեղութեանն ԲԴՀα նեղութիւնս է նեղութիւն ԺԽԿՏ^2 նեղութիւնսն 21 ԱԲԳԴՋԷԹԻԼԿVՏ^{3}α աղաչելով զայս միայն և ԱԲԳԴԵՋԷԺԼԽԿՀVα* չիք *և ԵԸՏ^2* չիք *աղաչելով ԵԸԺԽՀ խնդրէին յաստուծոյ աղաչելով VՏ^3 և խնդրէին 22 Բα* չիք *նոցա ԲԳԵA* չիք *սուրբ ԿՀՏ^2 եկեղեցեացն է եկեղեցւոյն 23 ԱՋԷԹԻVՏ^3 դամբարշութիւն չարին ԲԴ գամբարշտին չարութիւնն α գամբարշտին գչարութիւնն 24—25 ԲՃ^{1}α կողմանս աշխարհին առաքէր 25 Դ զօր եկեացեն նոցա յօգնականութիւն։*

Եւ Հասեալ բազում այրուձի՝ յաւելոյր ի թիւ անկելոցն, և լինէր գունդ բազմութեան իբրև զառաջինն։ Եւ յառաջ խաղային ի միջոց աշխարհին, մարտ եղեալ կռուէին ընդ մեծ ամուրս Կապոյտ լերինն։ Իսկ որ ի ներքսն էին, քաջութեամբ մարտուցեալ հարկանէին զբազումս ի գնդէն Պարսից, և զմնացեալսն փախստական ի բանակն արկանէին։ Իսկ նոքա դարձեալ յողորմս մատուցեալ՝ նուաճել խաբէութեամբ կամէին։

Իբրև ոչ ոք հաւատաց իջանել առ նոսա, զի մի՛ մատնեսցին չարաչար ի ձեռս թշնամեացն, սակայն վասն երդմանցն հարկ եղեւ քահանայի մի իջանել առ նոսա, որում անունն էր Արշէն։ Խօսէր ընդ նոսա յաղերս ընտանեութեամբ, և ցուցանէր զանվնաս փախուստ անմեղացն, արկանէր գութ առաջի ուրացելոյն Վասակայ, և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին կարգ ուխտին քրիստոնէութեան, զի թերևս սակաւիկ մի քաղցրասցի յանհնարին դառնութենէն։ Այլ նա ոչ ինչ լուաւ և անսաց բազում բանիցն նորա, կալեալ և խաղացոյց զերանելին և որք ընդ նմա իջեալ էին։ Մանաւանդ իբրև ետես, եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կամաց նորա, սկսաւ այնուհետև ի բազում տեղիս արձակել զասպատակաւորս, և զոր արտաքոյ քան զամուրսն գտանէին զբազմութիւն մարդկանն, վարեցին ի գերութիւն, և զամբար ի ձեռն առեալ հրձիգ առնէին զբազում տեղիս։

Իսկ որք էին յամուրս Տմորեաց, իբրև լուան զայս ամենայն չարիս, զոր գործեցին զօրքն արքունի, ոչինչ շահ օգտի համարէին զկեալն ի մէջ ամրականացն։ Քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանխնայ կոտորելով՝ նախճիրս արեան գործէին, և զմնացեալսն գերի առեալ տանէին, և անդէն յամուրսն արկանէին,

---

1 Գ անկելոց   2 Բ բազմութեանն Բ չիք եւ α խաղայր   3 ԲՃ^{1}α չիք մեծ S^2 Կապուտ ԲԳԼԿ   4 որք ԲԳԵԻՀ ի ներքս Դ ի ներս Բα մարտուցեալք   5 ԲՃ^1 զբազմութիւն գնդին Պարսից α զբազմութիւն Պարսից   6 ԵԸԺԽՀS^2 իսկ նոցա Թ մտեալ փխ մատուցեալ   8 ԲՃ^{1}α եւ իբրև ԳԼ իբր   9 Գ թշնամեաց   10 ԳԸԽՀ քահանային փխ քահանայի մի ԴS^{1}S^2 քահանայիցն ԴԸԺԽԿՀ չիք մի ԱԳԴՁ անուն է անուն է նորա α անուն էր Արսէն փխ Արշէն   11 ԱԹԻS^1 ընտանութեան ԸԺS^2 ընդանութեան Բ յաղերսաբանութիւն α աղերսաբանութիւն փխ յաղերս ընտանութեամբ Խ աղերս ընտանութեան Ծ յաղերս ընտանութեան Դ ընդանեացն Կ յընտանութեան   11—12 α և ցուցանէր զաղէտս անվնաս փախստեան անմեղացն   12 Բ անմեղաց α արկանէր և գութ ԳԸԺԿS^2 ուրացեալն Թ չիք և   13—14 ԲՃ^{1}α զառաջին ուխտն կարգին քրիստոնէութեանն Զ քրիստավնէութեան   14 ԲՃ^{1}α սակաւ մի Խ սակաւ Լ քաղցրասցի սակաւիկ մի   15 Բα անսաց և լուաւ   16 ԲԳԴԼα բանից ԵԽ նա փխ նմա ԲԿՃ^{1}α

նելու համար զորք գա։ Եվ շատ հեծելազոր եկավ՝ ավելացավ սպանվածների տեղը, և զորքի թիվն էլի առաջվա չափ եղավ։ Սրանք առաջ շարժվեցին դեպի Միջնաշխարհը և պատերազմ սկսեցին Կապույտ լեռան մեծ ամրոցների դեմ։ Իսկ ներսում գտնվողները քաջությամբ կռվելով ջարդեցին Պարսից զորքից շատերին և մնացածներին փախցրին-հասցրին բանակը։ Իսկ նրանք դարձյալ անուշ խոսքերի դիմելով՝ ուզում էին խաբեությամբ նվաճել նրանց։

Երբ ոչ ոք չհավատաց ու չիջավ նրանց մոտ, որպեսզի չարաչար կերպով չմատնվեն թշնամիների ձեռքը, հարկ եղավ, որ երդումների պատճառով նրանց մոտ մի քահանա իջնի, որի անունն Արշեն էր։ Սա խոսում էր նրանց հետ մտերմաբար ու աղերսելով, ապացուցում էր անմեղների փախուստի անվնաս լինելը, աշխատում էր շարժել ուրացող Վասակի գութը և պաղատելով հիշեցնում էր նրա քրիստոնեության առաջին ուխտը, որպեսզի նա թերևս մի քիչ մեղմանա անչափ դաժանությունից։ Բայց նա ամենևին չլսեց և ականջ չդրեց նրա բազմաթիվ խոսքերին, կապեց ու տարավ երանելուն և նրա հետ իջած մարդկանց։ Մանավանդ երբ տեսավ, որ զորավարը նրա խրատին է հետևում, այնուհետև սկսեց շատ տեղեր ասպատակներ ուղարկել, և մարդկանց ինչ բազմություն էլ գտնում էին ամրոցներից դուրս, գերի տարան և ջահը ձեռքներն առած՝ շատ տեղեր կրակ տվին։

Իսկ ովքեր Տմորիքի ամրոցներում էին, երբ լսեցին արքունի զորքի կատարած այս բոլոր չարագործությունները, էլ ամենևին օգտակար չըհամարեցին ամրոցներում նստելը։ Քաջությամբ դուրս եկան և հարձակվեցին ամրոցականների օգնությամբ, և հասնելով պարսիկների մոտակա երկիրը, անխնա կոտորելով՝ արյան նախճիրներ գործեցին, մնա-

---

իջեալն   16—17 Դ մանաւանդ իբրև ետես զօրավարն եթէ երթայր զհետ...   17—18 Ճ^{1}α նորա կամացն   18 Բ իւրոց փխ նորա Բ և ի բազում   18—19 ԲԴ ասպատակաւորս ԳԵԸԺԼԽՀS^{1}S^2 զասպատակաւորսն Ճ^{1}α ասպատակաւորս արձակել ԱՁԷԹԻV S^{3}A զասպատակաւորն   19 ԲՃ^{1}α և զորս Բ զմուտսն փխ զամուրսն ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 Ճ^{1}α գտանէին ԱՁԷԹԻVS^{3}A գտանէր   20 ԸԺՀα մարդկան Իα վարէին ԵԸԺԽՀS^2 ի գերութիւն վարեցին Խ զամպար Բ ձեռս   21 ԲՃ^{1}α արարեալ փխ առնէին   22 ԲԴα որ ԲՃ^{1}α յամուր տեղիսն փխ յամուրս Տմորեաց ԳԵԸԺԼԿՀS^2 յամուրսն Դ Տմորեացն   22—23 α զայս ամենայն չարիս   23 ԳԼS^1 արարին փխ գործեցին ԵԺԽԿՀ չիք զոր գործեցին Ե օգտի   24 ԱՁԷԸԹԺԻԽVS^3 զկեալն ԳԼԿS^{1}α զկալն և զկեալն Դ զկալն զկեալն ԵՀ զկեալն և զմէջ ԲA զկալն ԲՃ^{1}α ամրականին   24—25 ԲVՃ^{2}α չիք քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն   25 Հ չիք և հասեալ α հասեալք Բα աշխարհս   26 ԵԸԺԽՀS^{2}α Պարսից ԲՃ^{1}α կոտորէին և   27 ԳԼ ԿS^{1}S^2 անդրէն ԲԳԴԵԸԺԽԾԿՀS^{1}S^2 անկանէին (ԵԸ անգանէին)։

և զշինուածն աշխարհին զամբար ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային։

Դարձեալ և որք էին ի լերինս Խաղտեաց, իբրև տեսին եթէ յանդգնաբար զօրքն Պարսկաց յանկրկնելս իջանեն յամուրս աշխարհին Հայոց, յարձակեցան և նոքա մեծաւ զօրութեամբ ի ձորագաւառն Տայոց։ Եւ գտին անդ գունդ բազում ի զօրացն արքունի, որ զերի առնուլ կամէին զամրականս աշխարհին. դարձեալ և կարծէին ևս, եթէ զանձք նախարարացն անդ իցեն, վասն այնորիկ և յանխնայ յուզէին զվայրսն։

Նա և տեսին ևս անդ ի գեւղս երկուս, որ զեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել ևս վասն այնր ի նախանձ բարկութեան բրդեցան։ Յարձակեցան, հարան ի դիմի միմեանց, և կամակարութեամբ յաղթեալ, բեկեալ արկին զզօրութիւն գնդին Պարսից, և կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զմնացեալսն փախստական հանէին յաշխարհէն։

Եւ յայնչափ յանդուգն յարձակմանէն՝ միայն երանելին Հմայեակ, եղբայր սպարապետին Հայոց Վարդանայ, յանխնայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նահատակութեամբ ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան։ Եւ այլքն ամենայն ողջանդամ ապրեալք երթային զհետ փախստականին։

Եւ իբրև այս այսպէս կատարեցաւ, դադարեցին զօրք Թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխտրութեամբ, և ևս առաւել ձեռնպահ լինել եկեղեցեացն։ Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան յարքունիսն։

Նա և որ յԱրձախայ մայրիսն անկեալն էին փախստականք, ոչ ինչ լռեալ դադարեցին խաղաղութեամբ. այլ հանապազ յղէին յաշխարհն Հոնաց, շարժէին և յորդորէին զգունդն Հոնաց, և յիշե-

---

1 ԱԲԳԵԺα զշինուածս է շինուածս ԲՃ^{1}α չիք զամբար ի ձեռն առեալ Հ ի ձեռս 1—2 Դ տային ճարակ է հրաճարակ 3 Բα ի լերինս Խաղտեացն էին ԳԵԺՄԿՀ ի լերինսն Լ ի լերինն Դ յամուրս փխ ի լերինս է իբրև տեսեալ ԳԵԺԻԼԽԿՀ թէ 4 Դ անկրկնուզ Ը յանկրկնուզք Բ ի յամուրս 4—5 α յանկրկնուզս յամուրս աշխարհին Ձէ VS^{3}A իջանէին 5 Բ արձակեցան 5—6 ԲՃ^{1}α ձորագաւառին ԳԴԵԸԺԼԽԿՏ^1 ի ձորագաւառն է ի ձորոց գաւառն 6 ԲՃ^{1}α գունդս բազումս 7 Լ զամրականսն Դ չիք և Բα չիք ևս 8 ԳԵԺՏ^2 զանձ α անտ իցէ ՁէV առնիցեն փխ անդ իցեն Դէ չիք և 9 Բ ուղէին փխ յուզէին 10 Խα չիք ևս ԲՃ^{1}α չիք անդ Բ գեաւղս α գի ի գեաւղս Դα չիք որ ԲԳԵԸԺԼԽԿՀՃ^{1}Տ^1 զի փխ որ 10—11 α այրեալ էր զեկեղեցիսն 11 ԳՄՏ^2 էին Դ չիք էր ԳԵԸԺԼԽԿՀ չիք ևս Բα այնորիկ փխ այնր ԱԻ բարկութիւն բրդեցան ԲԳԴԵԸԺԼԽԿՀՃ^{1}Տ^{1}Տ^2 ի նախանձ բարկութեան բրդեցան Թ չիք բարկութեան ՁէԻVS^{3}A բրդեցան բարկութեամբ α ի նախանձ բարկութեան դրդեալ 12 ԲԴՃ^{1}α ընդդէմ փխ ի

ցածներին էլ գերի վերցնելով՝ տարան-գցեցին ամրոցները և չահը ձեռքներն առած՝ այն երկրի շինությունները հրի ճարակ դարձրին։

Նույնպես և Խաղտյաց լեռներում գտնվածները՝ երբ տեսան, որ Պարսից զորքը հանդգնաբար և աներկյուղ դիմում է Հայոց աշխարհի ամրոցների վրա, նրանք էլ մեծ զորությամբ հարձակվեցին Տայքի ձորագավառի[128] վրա։ Այնտեղ նրանք գտան արքունի զորքերից մի մեծ գունդ, որոնք ուզում էին այն երկրում ամրացած մարդկանց գերի առնել. նմանապես և կարծում էին, թե նախարարների գանձերն այնտեղ են, ուստի և անխնա հետախուզում էին այն վայրերը։

Այնտեղ տեսան նաև, որ երկու գյուղերում այրել են եկեղեցիները. այս բանի պատճառով է՛լ ավելի բարկացան ու նախանձախնդրությամբ լցվեցին։ Հարձակվեցին, բախվեցին միմյանց և հզորապես հաղթելով՝ ջարդեցին Պարսից գնդի զորությունը. նրանցից շատերին կոտորեցին, իսկ մնացածներին քշեցին-փախցրին երկրից։

Եվ այնչափ հանդուգն հարձակումից միմիայն Հայոց Վարդան սպարապետի եղբայր երանելի Հմայակը՝ անձնազոհ քաջությամբ կռվելով՝ նահատակությամբ վախճանվեց միաբանության սուրբ ուխտի համար։ Իսկ մնացած բոլորը ողջ ու առողջ փրկվելով [կռվից]՝ հալածում էին փախստականներին։

Եվ երբ այս այսպես կատարվեց, Թագավորի զորքը դադարեց անխտիր կերպով ամեն տեղ գործի մեջ խառնվելուց, և մանավանդ զգուշանում էին եկեղեցիներին ձեռք տալուց։ Նորից մի անգամ էլ սկսեցին հարցնել արքունիքին։

Նմանապես և ովքեր փախել-ընկել էին Արցախի անտառները, իրենց տեղերում ամենևին հանգիստ չմնացին, այլ շարունակ մարդ էին ուղարկում Հոնաց աշխարհը, գրգռում և հորդորում էին Հոների զորքին

դիմի ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 կամակորութեամբ 12—13 ԲՃ^{2}α չիք յաղթեալ 13 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α բեկին արկին ԲՃ^{1}α զզօրութիւնս Ի զզօրութիւնն Լ զօրութիւն 14 է զմնացեալսն ԳԴԵԸԺԼԽՀՏ^2 հանին 16 է այնչափ Ձէ յանդուգն ԲՃ^{1}α չիք յանդուգն 17 ԲՃ^{1,5} ասպարապետին ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{2,5}α չիք Վարդանայ 17—18 է քաջ նահատակութեամբ: չիք յանխնայ քաջութեամբ մարտուցեալ կատարեցաւ 19 Դ չիք սուրբ Բ եւ այլք ԲԴԼԿՀՏ^1 ողջանդամք 19—20 ԺԼԿՀՏ^1 ապրեալ Խ արարեալ (!) զհետ երթային 20 ԳԼՏ^1 փախստականիցն ԵԸԺԽՀՏ^2 փախստականացն 21 ԲՃ^{1}α զօրքն Պարսից Ի զօրքն 22 ԲՃ^{1}α ձեռնամուխ փխ խառնամուխ Ի լինիլ α տեղիսն ԲԹα չիք և 23 ԳԴԹԺԽ ձեռնպահ Ի լինիլ Դ եկեղեցեաց A յեկեղեցեացն 23—24 ԲԴ չիք անդրէն α չիք «դարձեալ—յարքունիսն» 24 ԳԵԸԺՀ յարքունիս 25 Դ յԱրծախա ԱԳէԸԹԺԻԼԽԿ անկեալք Դ անկեալ ԲՃ^{1}α բնակեալ փխ անկեալքն 27 Բ յաշխարհէն Հայոց փխ յաշխարհն Հոնաց α յաշխարհն Հայոց Ի չիք շարժէին և յորդորէին զգունդն Հոնաց։

ցուցանէին նոցա զուխտն, զոր եդեալ էր ընդ Հայս և անսուտ երդմամբ հաստատեալ։ Հաճոյ թուէր բազմաց ի նոցանէ լսել զբանսն քաղցրութեամբ։ Նա և մեղադիր ևս լինէին նոցա, եթէ «Ի կռուի ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ»։ Եւ իբրև յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, ապա զօրս բազում գումարէին, և անդէն յարձակեալ հասանէին ի սահմանս տէրութեանն Պարսից, և զբազում գաւառս հարեալ, բազմագոյն ևս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց, և յայտնի ցուցանէին թագաւորին զմիաբանութիւնն զոր ունէին ընդ գնդին Հայոց։

Իսկ իբրև այս ամենայն ազդումն հասանէր առ զօրավարն Պարսից, սրտմտեալ զայրանայր, և մեծաւ բարկութեամբ կուտէր զվնասն ի վերայ անօրինին Վասակայ, իբր թէ նա իցէ սկիզբն և առաջնորդ ամենայն չարեացն, որ գործեցան։ Եւ անդէն չու արարեալ խաղայր գնայր հասանէր յաշխարհն Պարսից. գրէր և ցուցանէր յարքունիս զամենայն ստուգութեամբ, և զվնաս գործոյն արկանէր զուրացելովն։

Իբրև լուաւ թագաւորն զամենայն աւեր աշխարհին. և ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր ի մեծ խռովութեան, և լռեալ դադարէր ի հանապազորդ և ի խարերայ խորհրդոցն. յուզէր և քննէր զվրիպումն անհանճար գործոյն, և կամէր տեսանել՝ ասելով. «Ո՞ ոք իցէ, որ զիս ճշմարտութեամբ ի վերայ իրացդ հասուսցէ»։ Իսկ որ էր գիտակ անօրէն գործոյն անդէն ի դրան արքունի, նոյն հազարապետն Միհրներսեհ, յառաջ մատուցեալ ասէ ցթագաւորն. «Զայդ ես ասեմ քեզ, արքայ քաջ. եթէ կամիս ստուգութեամբ լսել զարդարն, որք գլխաւորք քրիստոնէիցն են ի Հայս, տուր կոչել, և զան յօժարութեամբ և ասեն քեզ զամենայն արդարութեամբ»։

---

1 ԵԸԺԽՀՏ² չիք նոցա Գ զուխտ ԲԴα եդեալ էին Ի ի Հայս 2 ԵԸԺԽՀՃ²α թուեցաւ ԵՀ բանսն է դրանս 3 ԳԵԸԹԺԼԽԿՀՏ¹Տ² քաղցրութեամբ փխ քաղցրութեամբ Ի չիք ևս ԵԸԺԽՀ չիք յոյժ ԲՃ¹α ի կռուն իսկ Դ ի կռիւն Ե չիք ի 4 Դ չիք եւ ԳԼՒ առաջնումն 5 α չիք զմիմեանս հաւանեցուցանել. ապա Բ հաւանեցուցանէին ԳԵԸԽ հաւանեցուցեալ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ² չիք ապա 6 ԲՃ¹α չիք յարձակեալ Հ չիք յարձակեալ հասանէին Ի յարձակէին։ չիք հասանէին Ե չիք և անդէն յարձակեալ հասանէին Ի տէրութեան 7 ԵԷ բազում Բ առեալ փխ հարեալ Բ զբազմագոյնն Դ և զբազմագոյն ԵՀ յոլովագոյն ԸԺԽ յոլովագոյն ևս α չիք բազմագոյն ևս գերի առեալ 8 ԵԸԺԽՀՏ² և թագաւորին յայտնի ցուցանէին Բ կացուցանէին փխ ցուցանէին 9 ԳԵԷԸԼԽՀ զմիաբանութիւն 11 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ճ¹,¹⁴α և մեծ բարկութիւն Գ մեծ փխ մեծաւ 12 է զվնաս ԲԸԺԻԼԽԿՀՏ¹Տ²α չիք զվնասն ԱԸԹԺԿ անօրէնն ԲԳԷԿα իբրև ԵԸԺԽՏ² իբրու Դ-

և նրանց հիշեցնում էին այն ուխտը, որ դրել էին հայերի հետ և անսուտ երդումով հաստատել։ Նրանցից շատերին հաճելի էր թվում քաղցրությամբ լսել այս խոսքերը։ Նաև նրանց սաստիկ մեղադրում էլ էին, թե «Պատերազմի ժամանակ ինչո՞ւ պատրաստված չեկաք»։ Եվ թեպետ սկզբում չկարողացան միմյանց հետ համաձայնել, բայց հետո մեծ զորք հավաքեցին և անմիջապես հարձակվելով հասան Պարսից տերության սահմանները. և շատ գավառներ ավերելով՝ է՛լ ավելի շատ գերիներ տարան իրենց աշխարհը, և հայտնապես ցույց տվին թագավորին այն միաբանությունը, որ ունեին Հայոց զորքի հետ։

Իսկ երբ այս բոլորի լուրը հասավ Պարսից զորավարին, սրտմտեց ու զայրացավ և մեծ բարկությամբ մեղքը գցում էր անօրեն Վասակի վրա, որպես թե նա է այն բոլոր չարիքների սկիզբն ու առաջնորդը, որոնք գործվեցին։ Եվ այնտեղից վեր կացավ, առաջ խաղաց, գնաց-հասավ Պարսից աշխարհը. գրեց և ցույց տվեց թագավորին ամեն ինչ ստուգությամբ և գործի մեղքը ուրացողի վրա գցեց։

Երբ թագավորը լսեց աշխարհի ամբողջ ավերածությունը և ստուգեց մեծ պատերազմի հանգամանքները, սիրտը կոտրվեց-իջավ մեծ-մեծ խռովությունից, և լռեց ու դադարեց մշտական խաբեբա մտադրություններից. հարցուփորձ էր անում և քննում այդ անհանճար գործի վրիպման պատճառները և ուզում էր իմանալ, թե «Ո՞վ կարող է այդ գործերի մասին իրեն ստույգ տեղեկություններ տալ»։ Իսկ նույն Միհրներսեհ հազարապետը, որ այնտեղ արքունի դռանն էր և այդ անօրեն գործին գիտակ էր, առաջ եկավ և ասաց թագավորին. «Այդ բանը ե՛ս կասեմ քեզ, քա՛ջ թագավոր. եթե ուզում ես ստույգ լսել ճշմարիտը, կանչել տուր քրիստոնյաների գլխավորներին, որոնք Հայաստանում են. նրանք հոժարությամբ կգան և ամեն բան քեզ կպատմեն արդարությամբ»։

թուի թէ 12—13 ԲՃ¹ չիք ամենայն α առաջնորդ և սկիզբն 13 Դ և այնպէս փխ և անդէն 14 VՏ³Դ գնայր խաղայր Բα չիք հասանէր ԲՃ¹α յերկիրն փխ յաշխարհն 15 ԱՋԻ զամենայնն Դ ամենայն ԲՃ¹α զամենայնն ստուգութեամբ յարքունիս ԵԸԺԽՀ զամենայն իրսն է և զվնասս 17 Բ իսկ իբրև Դ չիք զամենայն Դ զաւեր 17—18 ԵԺԽՀ ստուգէր 18 Բ մեծ 19 Ի դադարիր ԱԲԳԴՋԷԹԻԿՃ¹α չիք և ի V չիք և ի խարերայ Գ խարեբեա 20 Ի վրիպումն ԱՋԷԻV գործոցն Խ խորհրդոյն փխ գործոյն 21 Բ ո՞վ ոք Բα ճշմարտութեամբ զիս 22 ԲՃ¹α հասուցանիցէ Դ հասուցանէ ԺԽՏ² գիտակն էր ԳԵԾՀՏ¹ գիտակ էր Է գիտակ է Ե անօրէնն գործոյն ԱԲՋԷԹԻV անդրէն 23 ԳԵԺ դրանն ԳԺԾԿ Միհրներսեհ ԵՀ Մերներսեհ 25—26 ԲԵԺԽՀՃ¹Տ² գլխաւորք են քրիստոնէից ի Հայս ԴԱ քրիստոնէից 26—27 ԱԲՋԻVα զամենայնն 27 ԲՃ¹α ստուգութեամբ փխ արդարութեամբ Կ յօժարութեամբ և արդարութեամբ։

Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն՝ Ատրորմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին և գործակից էր զօրավարին ի նմին պատերազմի, գրէր և յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ։ Եւ զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիբիովան, և յամենայն ամրականս, զորս աւերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց։ Որպէս և յոյժ իսկ տրտմեալ էր թագաւորն, ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին, զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. և յայնմ ժամանակի դիւրեաւ առեալ քանդեցաւ, որում և չէր իսկ ակնկալութիւն շինութեանն։ Իսկ զՎասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն ի Դուռն հրամայեաց կոչել։

Արդ եկն եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղութեամբ։ Հրամանաւ արքունի կոչեաց առ ինքն զՍահակ սուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց, ուսանել ի նմանէ զերացն ամբաստանութիւն։ Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի, և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին։

Դարձեալ և ի տանէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն, որ առաջնորդ էր աշխարհին Արծրունեաց, աւերեալ էր և նորա զկրակատուն մի, և կապանօք և տանջանօք բազում չարչարանս անցուցեալ էր ընդ մոգսն. և սա ոչ ինչ զանգիտեաց, այլ կամաւ եկն և յանդիման եղև մարզպանին։

---

1 ԲԻԿα որ փխ ոմն Դ նախարարաց անդի Հ զմի որ նախարարացն աւագ Բ Աստրմիզդ α Արդորմիսդ Դ Ատրոմիզդ անանուն(!) Հ Ատրոմիստ 2 Ե իշխանութիւն ԴՃ¹ չիք իսկ ԽԾՏ¹ խառնեալ էր Բ աշխարհին Հայոց 3 պատերազմին Դ ի մեծ պատերազմին Լ յանձնէր 3—4 Տ¹ յանձնէր նմա 4 Հ չիք նմա Հ զամենայն աշխարհն V չիք զաշխարհն Հայոց α զաշխարհ Հայոց Բ զՄուշկիան ԳԵԽ Մուշկան Կ Մուշիանն 4—5 ԵԸԹԺԻVՏ²Տ³ Նիւսալաւուրտ 5 α չիք մնացեալ Բ զօրօքն Գ յաշխարհն 6 ԸԽ փլնաց է լփանաց Դ ի լփնաց և ի Ճորաց Բ Փրղբաց փխ Ճղբաց ԳԿ ի Ճղբաց ԲԵԸԺԼԽՀՃ¹α չիք ի (Հեճմատակաց) ԲՃ¹α չիք և ի Թաւասպարաց ԳԿ Թաւսպարաց ԸԺԼԽՀ Թօսպարաց 6—7 Տ² Թօսփարաց Դ և Թեսապարաց և ի Խիբիովան 7 ԱԻ և ի Փիրրիոնան ԲՃ¹α և ի Հեղբիովան (α չիք ի) ՁԷV Փիրիոնան Ը Խիբովան Թ Փիփրիոնեան ԲԴՃ¹α ամրականն ՁԷVՏ³A ամրականն ԸԽՏ²α զոր փխ զորս 8 է չիք Հոնաց վասն ուխտին ԲՃ¹α որպէսզի փխ որպէս և 8—9 Դ Թագաւոր 9 Ի չիք ընդ (աւեր) ԲԴԵԸԺԽՀՏ²Ճ¹α աշխարհին Բα չիք ընդ ԲԵԸ անդանել Ի անկանիլ A անկանելն 10 α ընդ աւեր պահակին ԼԱ վասն պահակին Դ ժամանակս 10—11 ԲԳ հազիւ հազ α ի բազում ժամանակաց հեռէ հազիւ 11 ԱՁԷԹԻVՏ³A որ և ԱԲԴԹԻ դիւրաւ ԳԵԸԺԼԽԿՀ Տ¹Տ² չիք դիւրեաւ 11—12 ԲՃ¹α առաւ և քանդեցաւ ԴՏ² առաւել քանդեցաւ

Այն ժամանակ [թագավորը] Հայոց աշխարհի մարզպանությունը հանձնեց իր ավագ նախարարներից մեկին՝ Ատրորմիզդ անունով, որի իշխանությունը սահմանակից էր Հայոց աշխարհին և զորավարի գործակիցն էր նույն պատերազմում։ Իսկ Մուշկան-Նիսալավուրտին մնացած բոլոր զորքի հետ ուղարկեց Աղվանից, Լփնաց, Ճղբաց և Հեճմատակների, Թավասպարների և Խիբիովան[129] երկրները և այն բոլոր ամրոցները, որ ավերել էր Հոնաց գունդը՝ Հայերի հետ ունեցած դաշինքի պատճառով։ Այդպես էլ՝ թագավորը սաստիկ տրտմել էր ո՛չ միայն երկրների ավերվելու և զորքերի ջարդվելու համար, այլ առավել ևս այն պահակի ավերվելու համար, որ շատ ժամանակներից ի վեր հազիվ էին կարողացել շինել. այդ պահակն այն ժամանակ հեշտությամբ առնվել էր ու քանդվել, և այլևս հույս չկար, թե այն կշինվի։ Իսկ Վասակին գլխավոր քրիստոնյաների հետ միասին հրամայեց կանչել Դուռը։

Արդ, Ատրորմիզդ մարզպանը եկավ, Հայոց աշխարհը մտավ սիրով և խաղաղությամբ։ Արքունի հրամանով իր մոտ կանչեց Ռշտունյաց սուրբ եպիսկոպոս Սահակին, որ նրանից տեղեկանա ամբաստանության հանգամանքները։ Բայց նա, թեպետև ավերել էր մի ատրուշան և մեծ չարչարանքներ էր տվել կրակի պաշտոնյաներին, ամենևին չվախեցավ գալ ներկայանալ հրապարակային ատյանին։

Նույնպես և Արծրունյաց տնից մի բարեպաշտոն երեց Մուշե անունով, որ Արծրունյաց երկրի առաջնորդ էր, նա էլ ավերել էր մի կրակատուն և կապանքներով ու տանջանքներով շատ չարչարանք էր տվել մոգերին. սա էլ ամենևին չվախեցավ, այլ հոժարակամ եկավ և ներկայացավ մարզպանին։

---

12 ԲԳԵԺԼԿՀ չիք և Բ չիք իսկ (ակնկալութիւն) ԼՏ¹ ակնկալութեան իսկ 13 ԴԹ քրիստոնէիւք α քրիստոնեաւքն ԲԴԿՃ¹α ածել փխ կոչել ԵԸԺԽՀՏ² հրամայեաց ի Դուռն ածել 14 ԳԼՏ¹ եկեալ փխ եկն Դα Ատրորմիզդ անուն է Ատրորմիզդն 14—15 ԵԸԺԽՀՏ² սիրով և խաղաղութեամբ 15 Ի չիք հրամանաւ արքունի Ի կոչէ 16 ԱՁԷԹԻ զսուրբ ԲԴԵԸԺԼԽՀՏ¹Տ²Ճ¹α չիք սուրբ ԳԿVՏ³A սուրբ եպիսկոպոսն Բ եպիսկոպոս ԳՀ ըՌշտունեաց Ե ըՌըշտունեաց ԹԻ ուսանիլ 17 ԱԴՁVՏ³ ամբաստանութիւնն Հ ապստամբութիւն(!) ԳԴԵԸԺԼԽԿՀՏ² բայց նորա թէպէտ և ԲՃ¹ բայց նորա թէպէտ և աւերեալ էր զատրուշանան Դ ատրուշանս α բայց նա թէպէտ և աւերեալ էր զատրուշանն 18 ԳԴ զպաշտօնեայսն Դ կրակի 19 Բ ի յատեան 20 ԲԴα չիք և ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ճ¹α բարեպաշտ ԸԹV էրէց Ը անուն Մուշէ 21 է յառաջնորդէր ԾՏ¹Տ² Արծրունեաց աշխարհին ԳԼԿ չիք և 22 ԲԴ կրակատուն Ա և կապանօք և տանջանօք և բազում Ը չիք տանջանօք ԴՁԹԽVՏ¹ չիք և (տանջանօք) ԳԼԿ չիք և և 22—23 է կապանօք տանջանօք և բազում և չարչարանս անցուցանէր α կրակատուն մի և կապանօք և չարչարանօք բազում տանջանս անցուցեալ 23 Aα ինչ ոչ 23—24 ԲԴՃ¹α կամաւք։

Եւ երկու ևս այլ քահանայք երանելիք, որոց անուանքն են Սամուէլ և Աբրահամ. քանդեալ էր և սոցա զատրուշանն յԱրտաշատ և յառաջագոյն ըմբռնեալ էին ի կապանս յուրացեալն Վասակայ. ածին և զնոսա առ առաքինի ընկերսն։

Եւ ժողովեցին ևս ի նոյն տեղի զմեծն Յովսէփ և զՂևոնդ և զՔաջաջ և զԱրշէն։ Եւ իբրև ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն, գրեաց և եցոյց յարքունիս զամենայն ճշմարտութեամբ, որպէս զիարդ լուաւ ի բերանոյ նոցա։

Բայց Վասակ թէպէտ և յառաջագոյն հասեալ էր ի Դուռն, ըստ կամաց իւրոց այլ ընդ այլոյ երթեալ պատմէր զամենայն ստութեամբ, սակայն ի միտս թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել. այլ պատասխանի արար նմա և ասէ. «Յորժամ քրիստոնեայքն ևս եկեսցեն՝ հաւասարակաց լուայց յատենի»։

Իսկ զսուրբ քահանայսն՝ վասն զի կապանօք տանէին, յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի։ Իբրև լուաւ մեծ հազարապետն, եթէ ածին զնոսա ի քաղաքն, ինքնին իսկ ականատես լինէր նոցա։ Բայց թէպէտ և տեղեկութեամբ լսէր ի նոցանէ զամենայն, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնոսա, քանզի բազումք ի նախարարացն Հայոց դեռ ևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին, և դեռ ևս մարզպանն յերկիւղի էր։ Վասն որոյ զգուշութեամբ հրամայեաց պահել զսուրբսն, և զաշխարհն հրամայէր սիրով նուաճել, վասն որոյ և ինքն իսկ շրջէր և ժողովէր և շինէր ուխտիւ հաստատութեան։

Եւ եպիսկոպոսացն հրաման տայր ունել զիւրաքանչիւր իշխանութիւնս, և ըստ առաջին սովորութեանն պաշտել յայտնութեամբ, և համարձակ ևս գալ ի հրապարակ։ Նա և ընծայից և պատարա-

---

1 ԳԴԼԽԿ չիք և ԲՃ^{1}α այլևս ԵԸԽՀ երկու և այլ Դ երկուք Ը չիք ևս Լ երկու այլևս քահանայք Բα անուանք են այս ԳԴԿ անուանք 2 Դ Սամուէլ ԼԿ Աբրաամ Բα չիք և ԲԹα նոցա 2—3 ԲՃ^{1}α զատրուշանն որ յԱրտաշատ ԵԸԺԽՀ զատրուշանսն 3 Բ չիք էին ԲՃ^{1}α ըմբռնեալ էին ի տանջանս և ի կապանս ԲԻԽՀՃ^{1}α յուրացելոյն 4 ԱՁԷԹԻV չիք և S^{3}A յառաքինի փխ առ առաքինի ԲԴՃ^{1}α զառաքինիսն և այլ ընկերս նոցին 5 ԲԴ չիք և Բ և ի սոյն V զնոյն α ժողովեցին և իսկոյն զմեծն Գ զՂևոնդ իբրև 6—7 ԸS^{1}S^2 իսկ մարզպանին իբրև ուսաւ ԵԺԼԽ իսկ մարզպանն իբրև լուաւ և տեղեկացաւ յամենեցունց Դ ստուգեաց և ուսաւ 7 ՁՃ^1 զամենայնն 7—8 է ճշտութեամբ 8 ԱԻ զիարդ և լուաւ իսկ Գ և լուաւ ԹԿ զիարդ և լուաւ ԲՁԷVՃ^{1}α չիք որպէս զիարդ լուաւ ի բերանոյ նոցա 9 Հ չիք և 10—11 Ժ զամենայնն այլ ընդ այլոյ երթեալ պատմէր ստութեամբ Հ իւրոց զամենայնն Ե ըստ կամաց իւրոց զամենայնն այլ ընդ այլոյ ԸԼS^{1}S^2 զամենայնն այլ ընդ այլոյ Ձ յերթեալ ԵԸԽՀ ստուգութեամբ փխ զամենայն ստութեամբ Դ պատմեաց ԲՃ^{1}α զամենայն երթեալ պատմէր ստութեամբ ԸԼՀ չիք զամենայն 11 Գ զանձն 12 ԳԴԵԸԺԼԽԿՀS^2 չիք այլ ԲՃ^{1}α չիք այլ պատասխանի արար նմա և

Երկու ուրիշ երանելի քահանաներ էլ, որոնց անուններն են Սամվել և Աբրահամ, սրանք էլ քանդել էին Արտաշատի կրակատունը, և ուրացող Վասակը նրանց առաջուց բռնել ու կապել էր տվել. սրանց էլ բերին առաքինի ընկերների մոտ։

Նույն տեղը բերին նաև մեծ Հովսեփին ու Ղևոնդին, Քաջաջին և Արշենին[130]։ Եվ երբ մարզպանը բոլորից լսեց ու տեղեկացավ, ամեն ինչ գրեց և ցույց տվեց արքունիքին ճշմարտությամբ, ինչպես որ լսել էր նրանց բերանից։

Բայց Վասակը թեպետև առաջուց էր հասել Դուռը և ամեն ինչ իր ուզածի պես էր պատմել վայրիվերո և սուտ, սակայն չէր կարողանում իր անձն արդարացնել թագավորի առաջ, որը պատասխան տվեց նրան և ասաց. «Երբ որ քրիստոնյաներն էլ կգան, բոլորից միասին կլսեմ ատյանում»։

Իսկ որովհետև սուրբ քահանաներին կապանքներով էին տանում, երկու ամիս և քանի օրից հետո միայն հասան արքունի ձմեռոցը։ Երբ մեծ հազարապետը լսեց, որ նրանց քաղաք են բերել, անձամբ այցելեց նրանց։ Բայց թեպետև ամեն ինչ մանրամասնորեն լսեց նրանցից, սակայն չկարողացավ ձեռք տալ նրանց և չարչարել, որովհետև Հայոց նախարարներից շատերը դեռևս ուժով գրաված էին պահում աշխարհի ամուր տեղերը, և մարզպանը դեռևս երկյուղի մեջ էր։ Դրա համար էլ հրամայեց զգուշությամբ պահել սրբերին և պատվիրեց աշխարհը սիրով նվաճել։ Այդ պատճառով էլ հենց ինքը [մարզպանը] շրջում էր, ժողովում ու վերաշինում հաստատ խոստումներով։

Եպիսկոպոսներին էլ հրաման տվեց, որ ամեն մեկն իր իշխանությունն ստանձնի և նախկին սովորության համաձայն հայտնի կերպով պաշտոն կատարի, և ազատ համարձակ հրապարակ դուրս գա։ Մինչև

ասէ 12—13 Թα չիք ևս ԲՃ^{1}α ասէ. լուայց յատենին 13 ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^1, ^{13}α հաւասարակաց ԱՁԷԹVS^{3}A հաւասարակ ԳԺԿS^{2}α յատենին Ը ատենին 14 ԹԾ սուրբ Թ քահանայս ԵԸԽՀ կամօք փխ կապանօք Դ չիք յետ 14—15 Դ յերկուց 15 Դ և ի քսան աւուրց Թ աւուրց Դα հասուցանէին Բ ձմերոց ԵԸԺԽS^2 ձմերոցսն ԲԴՃ^{1}α իսկ իբրև 16 Բ և ինքնին իսկ ԵԸԽՀS^2 ինքն իսկ 17—18 Դ զամենայն ի նոցանէ 18 Թ ոչ կամէր փխ ոչ կարէր 19 α չիք զնոսա 20 Բ յերկեղի էր 20—21 ԲԳԵԺԼԽԿՀS^{2}α վասն որոյ և 21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2}α հրամայէր 22 Ե հրամէր Լ սիրով հրամայէր ԲՃ^{1}α ինքնին փխ ինքն իսկ 23 ԱԲԳԵԹԺԻԾԿՀS^{1}S^{2}α հաստատութեամբ Դ խաղաղութեամբ փխ հաստատութեան 24 Գ եպիսկոպոսաց ԲՃ^{1}α տայր հրաման 24—25 ԱԲԳԴԵԸԺԻԼԽԿՀα իշխանութիւն ՁV իշխանութիւնն 25 Ի սովորութեան 25—26 ԲՃ^{1}α չիք և համարձակ ևս ԲՃ^{1}α պաշտել յայտնապէս և գալ ի հրապարակն 26 Դ չիք ևս ԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 համարձակութեամբ Հ չիք նա Բα ևս և α պարգևաց փխ պատարագաց։

գաց արժանի առնէր թողուլ զառաջեաւ։ Եւ քանզի բազում գաւառս առեալ և աւերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր զհարկս աշխարհին. և զայրումն ևս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի։ Եւ միայնակեացք, որք ելեալ և կորուսեալ էին, հրամայէր գալ և ունել զիւրաքանչիւր տեղիսն։

«Եւ զամենայն կարգս աստուածպաշտութեանն, որպէս զհարդ և ունէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն, նոյնպէս և այժմ, ասէ, կալցին։ Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուստ, ասէ մարզպանն, եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցեն, եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս»։

Երդմունս կնքէր և առաքէր ի կողմանս կողմանս։ Որ և բազումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածս։

Նա և որ մեծն է քան զամենայն, որ ի բռնութենէ ոք ակամայ կալեալ էր զմոգութիւնն, հրովարտակս առաքէր յարքունուստ՝ անդրէն ունել զքրիստոնէութիւնն։ Եւ յանդիման խօսէր թագաւորն, որք էին ի տանն արքունի, եթէ «Որք ոչ սիրով ունին զդենի մազդեզն, այնպիսեաց և աստուածքն են ցասուցեալ, և ես ոչ ինչ եմ շնորհակալ. և այսօր զնոյն հրաման տամ ամենեցուն՝ ի կամս մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց, որպէս զինչ և կամի պաշտել՝ պաշտեսցէ. ամենեքեան իմ ծառայք են»։ Զայս ասէր, և գրով հրաման տայր ամենայն աշխարհին։

Իբրև զայս լուան և տեսին բազումք, որ էին ցանեալ և ցրուեալք ի հեռաւոր տեղիս, գային և ունէին զիւրաքանչիւր արարս։

---

1 A զառաջեաւ կոչելով փխ թողուլ զառաջեաւ Գ թողուլ զառաջաւ 2 ԲԻԹα զհարկ 3 Բ զայր և զձի ԲՃ¹α չիք ևս ԲԵ արքունի α և զայրումն արքունի թեթևացուցանէր առ ժամանակ մի 4 ԳԴԸα որ ելեալ է հրամայեաց 5 ԲԳԴԵԹԺԿՀՃ¹ տեղիս α զիւրաքանչիւր տեղին 6 A չիք Եւ ԲԳԼ կարգ ԱՋԷԹԻV գործս փխ կարգս Դ աստուածպաշտութեան Դ չիք և α զհարդ փխ որպէս զհարդ 6—7 Բ զոր և արդ ունէին 7 Բ առ նախնեօք նորին α առ նախնեօքն որ էին ԲԴԺՀα չիք ասէ 7—8 ԱԳՋԷԻԼԿ նոյնպէս ասէ և այժմ կալցին ԵԸԺԽՀՏ² կալցեն, ասէ 8 Բ կալցեն ԲՃ¹α ի հեռաւոր VS³ չիք ի ԲԸԽՃ¹α չիք ուրեք ԲՃ¹α է փխ իցեն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ² իցէ 8—9 ԵԺԽՀՏ² իմ իշխանութիւն է α ունի իշխանութիւն 9 A չիք ասէ մարզպանն 9—10 ԲՃ¹α յազատաց ոք իցէ և եթէ ԳԵԸԺԻԿՏ² իցէ ԳԼՏ¹ չիք եթէ ի շինականաց իցեն Գ և եթէ ի շինականաց ԲԴԵԸԺԽՏ²Aα չիք իցեն ԲԴԿ և եթէ Կ իցէ 10 ԱՋԷԹԻV յեկելոց փխ յեկեղեցւոյ ԵԸԺԽԿ չիք կեանս Հ եթէ իշխանականաց զինչ որ թողեալ իցեն A իցէ 11 ԳԴԺԵԻԼԿՀ կալցին ԲԳԴԵԸԺԼԽՀՏ²α արարս 12 A զայս ասէր և երդմունս կնքէր ԱԷԹԻVS³ երդմամբ կնքէր և առաքէր փխ երդմունս կնքէր և առաքէր Թ չիք որ Խ ոչ S² ուր և 12—13 ԳԼ չիք իսկ α որք և 13 Խ շինեալս փխ կալուածս

իսկ իր մոտ կանչելով՝ ընծաների և պարգևների արժանացրեց նրանց։ Եվ որովհետև զորականներն առել ու ավերել էին շատ գավառներ, ուստի հրամայեց երկրի հարկերը ներել. արքունի այրումն էլ միառժամանակ թեթևացրեց։ Հրամայեց նաև, որ միայնակյացները, որ փախել-անհետացել էին, գան և ամենքն իրենց տեղերը բռնեն։

«Աստվածպաշտության բոլոր կարգերը, ասում էր, հիմա էլ այնպես կատարեն, ինչպես որ կատարում էին առաջվա ժամանակները, նախնիքների օրով։ Եվ եթե մեկը որևէ հեռու աշխարհ է գնացել, արքունիքից իրավունք եմ ստացել, ասում էր մարզպանը, որ, ազատ լինեն նրանք, թե՛ շինական, թե՛ եկեղեցական, ինչ կայք էլ թողած լինեն, թող գան և յուրաքանչյուրն իր ունեցածին տեր կանգնի»։

Երդումներ էր կնքում ու ուղարկում զանազան կողմեր։ Հենց շատերն էլ եկան հավաքվեցին, և ամեն մեկը իր կալվածքին տեր դարձավ։

Նաև, որ ամենից մեծ բանն է, եթե որևէ մեկը բռնությամբ էր մոգություն ընդունել իր կամքի հակառակ, արքունիքից հրովարտակներ ուղարկեց՝ նոր քրիստոնյա դառնալու։ Եվ թագավորը խոսում էր արքունիքում եղածների դեմ հանդիման, թե՝ «Ովքեր սիրով չեն ընդունում մազդեզն կրոնը, այդպիսիների վրա աստվածներն էլ են զայրանում, և ես էլ ամենևին շնորհակալ չեմ. և այսօր նույն հրամանն եմ տալիս բոլորին՝ ամեն մարդու թողնել իր կամքի համաձայն վարվելու. ով ինչ կամենում է, թող այն պաշտի. բոլորն էլ իմ ծառաներն են»։ Այս ասում էր և գրավոր հրաման տալիս ամբողջ աշխարհին։

Երբ այս լսեցին ու տեսան շատերը, որոնք ցիրուցան էին եղել հեռավոր տեղեր, եկան և տեր կանգնեցին իրենց սեփականությանը։ Իսկ

---

14 Բα մեծ ԲՃ¹α ասէ որ ի Ի յակամայ ԲԴՃ¹α չիք ակամայ 15 ԱԹԻԿ զմոգութիւն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² զմոգութիւն կալեալ էր Բα ոք կալաւ զմոգութիւնն ԱԲԳԴԵԺԻԼԽԿՀՏ¹Ճ¹α հրովարտակ Դ հրովարտաք Զէ հրովարտաքս 16 ԲԵԺα անդէն ԴԵէ զքրիստոնէութիւն Զ քրիստոնէութիւնն 17 Բ որ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ճ¹,¹⁴α ի դրանն Խ չիք եթէ Բ չիք սիրով ԵԸԺԽՀՏ² ունիցին A զօրէնս դենի 17—18 ԱՋԻVS³ զդէնի մազդէսն է զդէնի մազդէնան ԼՍ մազդէն ԳԴՍ ունէին զդէնի մազդէզն (Դ մազդէզնն) ԵԸԹԺԽՀ զդէնի մազդէն (լուսանցում՝ հաւատոյ հաւատ) ԲՃ¹α որք ունին զդէնս (α զդէն) մազդեզանց 18 ԱԳԴԵՁԷԹVS³ այնպիսեացն ԲՃ¹α այնպիսոյն A աստուածք Թ իցեն փխ են Բ չիք ես 18—19 α չեմ ինչ Բ ոչ եմ ինչ Խ ինչ ոչ եմ 19 Ա շնորհակալ (!) ԲՃ¹α չիք զնոյն 20 Գ մարդոյ Ի մարդկան ԲԴՃ¹⁴α թողուլ ԳԵԺԿՀՏ² չիք և ԲՃ¹α կամեսցի 22 Բ և ամենեցուն գրով Բ չիք ամենայն ԱԳՏ³ աշխարհի α աշխարհին ամենեցուն 23 ԱԳԴՋԷԹԻԿVS¹S²S³ զայս լուան ԲՃ¹α իսկ իբրև զայս տեսին և լուան որք ԵԸԺԼԽՀ լուան զայս A զայն ԵԸԺԽՀ չիք և տեսին ԱՋԷԹԻV յանցեալ փխ ցանեալ (է անցեալ Թ յանցեալք) 23—24 Բα ցրուեալ ԳԴԵԸԼԽԿՀՏ² ցանեալք 24 է գնային։

Իսկ նախարարքն, որ էին յամուրս աշխարհին և կամ ի հեռաւոր օտարութեան, իբրև տեսին, զշինութիւն երկրին, մանաւանդ զեկեղեցւոյն հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային։ Վասն որոյ և պատգամ յղեցին առ մարզպան աշխարհին, զի ի Դուռն ցուցցէ զբանս նախարարացն։ Իսկ նա վաղվաղակի յարքունուստ գիր ողորմանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա հրամանաւ արքունի։ Բայց թէպէտ և գիտէին նոքա զդառնութիւն ուրացութեանն՝ թէ սուտն յամենայնի, կամեցան չարչարակից լինել սրբոցն. զի եթէ մահ ևս առաջի կայցէ. ոչ ինչ զանգիտեսցեն երկիւղիւ։

Եւ զայս լուեալ թագաւորին՝ ոչ կապանօք, այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել։ Ածին վաղվաղակի զկին և զորդիս, և զինչս իւրաքանչիւր տուեալ ի ձեռս մարզպանին, և ինքեանք փութանակի գնացին ի ձմերոցն արքունի։

Եւ մինչդեռ անդէն ի ձմերոցին էր թագաւորն, առեալ հարցափորձ ի մէջ նոցա հրամայէր լինել։ Եւ նստաւ հազարապետն՝ զի լուիցէ կողմանցն երկոցունց։ Եւ իբրև յերկարեցաւ ամբաստանութիւնն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կողմ ուրացելոցն։

Քանզի ցուցանէին զթուղթսն՝ զոր տուեալ էր Վասակայ և ամենեցուն որ ընդ նմա էին, զի միաբանք իցեն ընդ նմա յուխտ ապստամբութեանն. թուղթ մի ի Վրաց աշխարհն, և թուղթ մի յԱղուանից աշխարհն. սոյնպէս և թուղթ մի յԱղձնիս, և հրովարտակ մի առ թագաւորն Յունաց, և թուղթ մի առ մեծ սպարապետն Անտիոքայ։ Եւ ի բոլորեսին յայսոսիկ թուղթսն վաւերական մա-

---

1 Բ յամուրան Բ չիք և 1—2 Ի չիք և կամ ի հեռաւոր օտարութեան α աշխարհին կամ ի հեռաւոր օտարութիւն 2 ԳՃ^{14} հեռի փխ հեռաւոր ԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 ի հեռի Տ^1 յօտարութեան 2—3 ԲԴՃ^{1}α աշխարհին փխ երկրին 3 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α զեկեղեցեացն հաստատութիւն 4 Ի լինել արքայի 5 Դ չիք և Դ պատգամս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^2 պատգամաւորս 6 ԲԴԵ դուռնն Դ ցուցեն (!) ԲՃ^{1}α իսկ նորա 7 ԲՃ^{1}α չիք յարքունուստ Ըխ ուղարկեաց (!) 7—8 ԲԴՃ^{1}α հրամանաւ արքունի տայր տանել առ նոսա 8 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք հրամանաւ արքունի ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α բայց նոքա թէպէտ և գիտէին ՋԷV չիք գիտէին Թ նոքա գիտէին 9 ԲՃ^{1}α զդառն ուրացութիւնն եթէ Ե ուրացութեան 10 ԲԴՃ^2 մահն առաջի կայցէ Դ թէև փխ եթէ ԷՃ^1 կացցէ α մահն ևս 10—11 Բα զանգիտէին ԵՀ զանգիտացին ԳԴԺՄՏ^2 զանգիտեցին 11 Ե երկիւղի Բ երկեղիւ 12 ԵԸԺԼՀ թագաւորն 12—13 ԲՃ^{1}α չիք և արձակ ձեռօք հրամայեաց Մ արձակ ոտիւք և ձեռօք հրամայեաց 13 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 հրամայէր ԲՃ^{1}α տայր ածել փխ կոչել 14 Տ^2 զորդիսն ԱՋԷV զինչ Ըխ ի ձեռն 15 ԵԸԺԼԽՀՏ^1

այն նախարարները, որոնք գտնվում էին երկրի ամրոցներում կամ հեռավոր օտարության մեջ, երբ տեսան երկրի շինանալը, մանավանդ եկեղեցու ապահովությունը, նրանք էլ սիրտ առան և համարձակվեցին ներկայանալ թագավորին։ Ուստի և պատգամ ուղարկեցին երկրի մարզպանին, որ նախարարների խոսքերը հայտնի արքունիքին։ Իսկ նա շտապով արքունիքի կողմից և արքունի հրամանով մի հորդորական և ապահով դաշինքի գիր ուղարկեց նրանց։ Բայց նրանք, թեպետև գիտեին ուրացության դաժանությունը, որ ամեն բանի մեջ կեղծ են, ուզեցին մասնակից լինել սրբերի չարչարանքին. այնպես որ եթե մահ էլ սպասելու լինի նրանց, ամենևին երկյուղ չկրեն և չվախենան։

Այս որ լսեց թագավորը, հրամայեց նրանց իրեն մոտ կանչել ո՛չ թե կապանքներով, այլ արձակ ձեռներով ու ոտներով։ Նրանք շուտով բերին իրենց կանանց ու որդիներին և ունեցած գույքը հանձնեցին մարզպանի ձեռքը, և իրենք շտապով գնացին արքունի ձմեռոցը։

Եվ մինչդեռ թագավորը այնտեղ ձմեռոցում էր, հրամայեց հարցուփորձի ատյան կազմել նրանց միջև։ Եվ հազարապետը նստեց, որ երկու կողմերին էլ լսի։ Եվ երբ ամբաստանությունը երկար օրեր շարունակվեց, ուրացողների կողմը հանցավոր ճանաչվեց։

Որովհետև ցույց տվին այն թղթերը, որ Վասակը և բոլոր նրա հետ եղածները տվել էին, թե նրա հետ միաբան են ապստամբության ուխտի մեջ. մի թուղթ Վրաց աշխարհը և մի թուղթ Աղվանից աշխարհը. նույնպես և Աղձնիք գրած մի թուղթ և մի գրություն Հունաց թագավորին և մի թուղթ էլ Անտիոքի մեծ սպարապետին։ Այս բոլոր թղթերի վրա

Տ^2 փութապէս Ի ձմերոց Հ ի ձմերանոցն 16 Բα չիք անդէն ԳԻԿ ի ձմերոցի Լ ի ձմերոց Մ ի ձմերոցն Հ ի ձմերանոցի α և մինչդեռ ի ձմերոցն էր 16—17 Խ հրափորձ (!) 17 Դ հրաման տայր առնել ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α առնել փխ լինել Ի լինիլ 18 ԴԵԸԺԽՀՏ^2 երկոցունց կողմանցն ԲՃ^1 յամեցաւ α յամեաց փխ յերկարեցաւ Մ երկարեցաւ Լ երկարացաւ Դ յերկարացաւ 18—19 Ե ամբաստանութիւն Է ամբարտաւանութիւն (!) 19 Բ աւուրս Հ չիք բազումս ԲՃ^{1}α պարտեցաւ ԴԵԺԻԼԿՀՏ^{1}Տ^2 կողմն Ա ուրացելոյն 20 ԳԼ զթուղթս Դ Վասակ և Ա չիք և 21 Ա չիք էին զի միաբանք իցեն ընդ նմա ԲԿՃ^{1}α ընդ նմայն էին զի միաբան (Կ միաբանք) էին ընդ նմա յուխտ ԳԵ միաբան 22 ԽՀ Ճ^{1}α ամբաստանութեանն ԲՃ^{1}Ճ^{14}α ի Վրաց աշխարհն ԳԸԼԽԿ չիք և 22—23 ԻՀՃ^1 չիք և թուղթ մի յԱղուանից աշխարհն Ճ^{2}Ճ^{14}α և թուղթ մի յԱղուանից աշխարհն մյուս բոլորը՝ Վրաց աշխարհէն... Աղուանից աշխարհէն 23 Դ յԱղձնեաց 24—25 ԱՋԷԻ սպարապետն յԱնտիոքոս ԳԴԵԸԺԼԽԿՀՃ^2 յԱնտիոք ԹVՏ^3 Անտիոքոս Տ^{1}Տ^2 Անտիոք ԲՃ^{1}α սպարապետն Անտիոքու 25 ԲԹ չիք ի ԲՃ^{1}α յայս թուղթս ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 յայն թուղթս (Դ յայս) Ա թուղթսս ԲՃ^{1}α չիք վաւերական Ա վաւերականն ԱԳԴԸԼԿVՏ^3 վավերականի ԵՋԷԺԽՀ վաւերականի (լուսանցքում՝ ընդգծված)։

տանի Վասակայ եդեալ էր։ Սոյնպէս խառն էր նա և ի մահ մոգուցն ի Ջարեհաւանի։ Եւ զբազում բերդս՝ զոր հանին ի Պարսկաց, յայտ առնէին զնորա թուղթսն և զհրամանսն. քանզի նա էր մարզպան ի ժամանակին։

Որպէս և հրեշտակութեամբ յղեալ իսկ էր նորա առ Յոյնս նախարար մի, որում անունն էր Ատոմ՝ յազգէն Գնունեաց. սա մատուցեալ յանդիմանէր զնա առաջի մեծի ատենին հրովարտակաւն իսկ, զոր տուեալ էր նորա իւրով մատանեաւ։

Նա և ի մէջ իսկ բերէր զամբաստանութիւն նորա Մուշկան Նիւսալաւուրտ, և յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, որ և յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն ետ հեղուլ Վասակ. թէ որպէս սուտ երդմամբք խաբէր և իջուցանէր յամրոցաց անտի. էր՝ զոր կոտորէր, և էր՝ զոր գերի վարէր զծառայս և զաղախնայս արքունի։ Եւ ի վերայ այսր ամենայնի վնասու, և գող ևս գտանէր հարկի աշխարհին, որ յարքունիսն երթայր։

Նա և յուրացեալ ընկերացն նորա բազումք էին, որ յայտ արարին զչարիս նորա, զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց։ Եւ ի մնացեալ մոգացն և ի փշտիպանացն, որք ի կապանսն ապրեալ էին և ապա ածին յարքունիս, հարցին և զնոսա վասն նորա և ասեն. «Դուք է՞ք ինչ տեղեակ վասն չարութեան նորա»։ Ետուն պատասխանի և ասեն. «Ամենայն անցք չարչարանաց, որ անցին ընդ մեզ, և բազում հարուածք, որ եղեն ի զօրսն արքունի, և աւեր և գերութիւն աշխարհին Հայոց, և կորուստ հարկացն արքունի, ըսկիզբն և առաջնորդ չարեաց այրդ այդ եղեւ»։

---

1 Ըխ չիք եդեալ էր α եդեալ էր ի վերայ Բα սոյնպէս և նա խառն էր Խ Նոյնպէս Գ չիք և   1—2 ԼՏ^1 սոյնպէս և ի մահ մոգացն խառն էր նա ի Ջարեհաւանի α ի Ջարեհանի Բ մոգացն ի Ջարեհաւան ԳԴԿ մոգացն   2 ԲԾ^{1}α և ի բազում Գ չիք բերդս ԳԵԿ ի պարսկացն   2—3 α յայտնի առնէին   3 Ա առ այն թուղթսն Բ զհրամանս ԳԵԺԼԽ թուղթս և դհրամանս Դ զի Տ^1 մարզպան Ե չիք ի   3—4 ԲԾ^{1}α ի ժամանակին յայնմիկ   5 Գ հրեշտակութեամբ   5—6 ԲԾ^1 նորա նախարար մի Ա իսկ զոր յղէր ԳԴԿՀ յղեալ էր Դ չիք իսկ ԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2}α յղեալ էր նորա առ յոյնս ԳԴԿ առ յոյնս նորա Ե յոյն   6 ԲԳԴԻα անուն   6—7 Է մատուցանէր   7 Բ զնոսա փխ զնա ԲԳԴԵԸԺԼԽԿՀα մեծ   8 ԲԴԾα չիք իսկ Գ տուեալն α տուեալ էր նմա իւրով մատանեաւն   9 ԱԲԻՎ զամբաստանութիւնն Հ զպայստամբութիւն (!) Բ զամբաստանութիւնն որ առ Բ Մուշկիան Կ Մուշկանն   10 ԵԸԹԺԻԽՎՏ^{2}Տ^3 Նիւսալաւուրտ Գ ընկերովքն   11 ԲԾ^{1}α չիք որև ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք և Բα ի պատերազմէն ԴԵԸԼԽԿՀՏ^2 արիւնս Ը զամենայն արիւն ետ հեղուլ ՁԷՎ հեղել   12 ԲԳԴԵԺԼԽՀՏ^{2}α չիք թէ ԴԵԻՏ^2 երդմամբ ԲԾ^{1}α երդմամբքն և խաբեալ երիցամբքն խաբէր   13 Բ որ փխ զոր Դ չիք և ՁԷՎԱ տանէր փխ վարէր

գրված էր Վասակի վավերական մատանին[131]։ Նմանապես և նա խառն էր մոգերի կոտորածին Ջարեհավանում։ Պարսիկներից խլված շատ բերդերի վերաբերմամբ էլ նրա թղթերն ու հրամաններն էին մեջտեղ բերում, որովհետև նա էր այն ժամանակվա մարզպանը։

Ինչպես նաև մի նախարար, որի անունն Ատոմ էր, Գնունյաց ցեղից, որին նա պատգամավոր էր ուղարկել հույների մոտ, առաջ եկավ և մեղադրեց նրան մեծ ատյանի առաջ հենց այն հրովարտակով, որ նա տվել էր՝ կնքած իր մատանիով։

Նրան ամբաստանում էր նաև Մուշկան-Նիսալավուրտը և իր պատերազմակից ընկերների հետ միասին հայտարարում էր, թե պատերազմը վերջանալուց հետո էլ Վասակը շատ արյուն թափել տվեց. թե ինչպես սուտ երդումներով խաբում ու ցած էր իջեցնում ամրոցներից. արքունի ծառաներից ու աղախիններից ոմանց կոտորում էր, ոմանց էլ գերի էր տանում։ Եվ բացի այս բոլոր վնասներից՝ նա գող դուրս եկավ նաև երկրի այն հարկի վերաբերմամբ, որ արքունիք էր գնում։

Նույնպես և նրա ուրացող ընկերներից շատերը կային, որոնք բաց արին այն չարիքները, որ նա գործել էր Հայոց աշխարհի վերաբերմամբ։ Նրա մասին հարցրին նաև այն մոգերին ու փշտիպաններին, որոնք եղել էին կապանքների մեջ և փրկվել և ապա բերվել արքունիք, և ասացին. «Դուք որևէ բան գիտե՞ք նրա չարագործության մասին»։ Պատասխան տվին և ասացին. «Այն բոլոր անցքերն ու չարչարանքները, որ անցան մեր գլխով, և այն բազմաթիվ հարվածները, որ թափվեցին արքունի զորքի վրա, և Հայոց աշխարհի ավերն ու գերությունը, այլև արքունի հարկերի կորուստը,— այդ բոլոր չարիքների սկզբնապատճառն ու առաջնորդն այդ մարդը եղավ»։

13—14 ԲԾ^{1}α զծառայսն և զաղախնայսն   14 Է որ փխ Եւ Դα այս ամենայն Բ չիք և գող   15 ԹԻ գտանիւր ԲԾ^{1}Տ^{2}α հարկացն արքունի աշխարհին Արեաց α չիք և ԻԼ յարքունիս α չիք յարքունիսն երթայր   16 Ի ուրացեալ ԼՄՏ^1 յարուցեալ (!) ԲԳԴԵԺԽα ընկերաց Ըխ ի յայտ   17 ԲԾ^{1}α զչարիսն ԲԾ^{1}α գործեալ էր նորա   17—18 Գ իմացեալ փխ ի մնացեալ Ի չիք ի   18 Գ ի մոգացն Տ^{2}α մոգուցն ԵԹԺԽՀ փշտիպանացն (լուսանցքում՝ մարմնապահ կանանցն) ԲԵ որ փխ որք   18—19 ԲԾ^{1}α ի կապանս արգելեալ էին Դ որ ապրեալ էին ի կապանսն Խ որ ի կապանսն ապրեալք էին ԵՏ^2 ապրեալք Գ ի կապանս արքունի   19 ԲԴα յարքունիսն, եհարց զնոսա ԳԴ չիք և (զնոսա)   19—20 Բα վասն նոցա և ասէ Ի և ասեն զնոսա վասն նորա   20 Գ տեղեակ ինչ ԺՄՏ^1 դուք զի՞նչ տեղեակ էք ԵԸԼԽՀՏ^2 դուք ինչ տեղեակ էք (Ը տեգակ) ԱԳԴՁԷԻԿԱՏ^3 սորա ԵԸԺԼՏ^2 դորա   21 Բ անցս փխ անցք V անցանք փխ անցք   22 ԱԳԴԵՁԸԹԿ Vα հարուածքն Բ հարուածս ԱՁԷԹVՏ^3 ի զօրքն ԲԾ^{1}α ընդ զօրս Դ ի զօրուն Ի ի զօրն Է չիք և աւեր   22—23 Ըխ չիք «և աւեր—արքունի»   24 ԲԾ^{1}α չիք չարեաց α է փխ եղեւ

Եւ մինչդեռ այս ամենայն ամբաստանութիւն զնմանէ էր զայնչափ բազում աւուրս, յառաջ մատեան և իւր ազգականքն, որ եւ յառաջագոյն դատախազ լեալ էին զնմանէ առաջի արքային, սկսան կարգաւ ցուցանել և յայտ առնել, որպէս զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ Բաղասական արքային, ի ժամանակին՝ զի կոտորեաց Հեռանն այն զզօրսն Պարսից յԱղուանս, և աւերատակ եհաս յերկիրն Յունաց, և բազում գերի և աւար խաղացոյց ի Հոռոմոց և ի Հայոց և ի Վրաց և յԱղուանից. որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ թագաւորն, և սպան զԲաղասական արքայ։ Եւ Վասակ մարզպան էր Հայոց ի ժամանակին, և թշնամեացն արքունի խորհրդակից գտաւ։ Ցուցին և յայտ արարին ազգականքն նորա, որպէս զի հմուտ և տեղեակ իսկ էին չար խորհրդոցն նորա. զամենայն ցուցանէին և յայտ առնէին առաջի թագաւորին. և զայլ ևս բազմագոյն խարդախութիւնսն, որ առաւելեամբ վարէր զկեանս իւր՝ ո՛չ միայն առ ընկերս, այլ և առ թագաւորն ինքնին զկնովին. զի ոչ երբէք արդարութեամբ վաստակեալ էր ի մանկութենէ։

Յայնմ ժամանակի հրաման ետ հազարապետն և ասէ. «Ածէք այսր և ի կապելոցն, որք են ի բանտի անդ»։ Լուծին և ածին յերանելեացն զՍահակ եպիսկոպոսն Ռշտունեաց, և զսուրբն Յովսէփ և զՂևոնդ երէց։

Եւ իբրև մերկացան ամենայն բանք ատենին առաջի նոցա, ետ պատասխանի Սահակ եպիսկոպոսն և ասէ. «Որ յայտնի ուրացեալն են ի Ճշմարիտ Աստուծոյ, ոչ գիտեն զինչ գործեն և կամ զինչ խօսին. բանզի խաւարային են խորհուրդք նոցա զտեարս պաշտեն սուտ պատճառանօք, և ընդ ընկերս մատնեն յուխտ առա-

---

1 ԲՃ^{1}α չիք այս ամենայն Գ չիք ամենայն ԽՏ^2 ամբաստանութիւնս Ի եղև փխ էր A կուտէր փխ էր 1—2 Եα չիք զայնչափ Հ զանչափ 2 Գ չիք բազում Դ մատուցեալ ԲՃ^1 իւր իսկ 2—3 Բα որ և յառաջագոյն իսկ 3 Գ դատայհազ Գ լեեալ Դ առ արքայն Տ^{1}Տ^2 չիք առաջի α առաջի արքայի ԳԽԾ սկսաւ 4 Բ յայտնել Գ չիք և յայտ առնել 4—5 Դ բարեկամացեալ նորա 5 ԲԳԽԸԺԽԾԿՃ^1 նորա փխ նա Հ չիք նա Բα Խոռենայ Դ Խեռենա ԲԴՃ^{1}α Բաղասակայ արքայի 6 ԲՃ^{1}α ի ժամանակի իբրև ԳԴԽԾ ի ժամանակի է զոր փխ զի Լ չիք զի Բ Խոռեանն α Խոռենն Դ Խեռանն ԽԾ զզօրս 6—7 Ժ ի յԱղուանս 7 Դ Հոնաց փխ Յունաց 7—8 ԲԻα աւար և գերի 8 Գ Հոռմոց Հ և Հոռմոց ԳԽՀ չիք ն (ի Վրաց) ԲՃ^{1}α չիք և ի Վրաց 9 ԳԽԸԺԼԽԿՀՏ^2 չիք իսկ Բ խորհրդոց ԳԽԺԼԽԿՀՏ^2 խորհրդոյն α չիք խորհրդոցն α ինքնին փխ ինքն իսկ ԲԳԴԽԸԺԼԽԿՀ չիք իսկ 10 Թ և էսպան ԻԼ Բաղասական A զԲաղասականն ԲՃ^{2}α չիք Հայոց 10—11 Բ ի ժամանակի յայնմ α էր ի ժամանակին յայնմիկ և 11 Լ թշնամեաց 12 Ի արարին նմա ԳԴ ազգականք ԳԽԸԺԼԽԿՀՏ^2 չիք զի 12—13

Եվ մինչդեռ այս բոլոր ամբաստանությունները այնքան երկար օրեր լինում էին նրա վրա, առաջ եկան նրա ազգականները[132], որ ավելի առաջ էլ գանգատվել էին նրա վրա թագավորին, սկսեցին կարգով ցույց տալ և հայտնել, թե ինչպես նա բարեկամացել էր Հոն Հեռանի հետ Բաղասական թագավորի հետ միաբանած, այն ժամանակները, երբ այդ Հեռանը կոտորեց Պարսից զորքերին Աղվանքում, ասպատակելով հասավ Հունաց երկիրը և բազմաթիվ գերիներ ու շատ ավար տարավ Հոռոմներից, Հայերից, Վրացիներից և Աղվաններից. այնպես որ թագավորն ինքն էլ հասկացավ այդ մտադրությունները ու սպանեց Բաղասական թագավորին։ Իսկ Վասակն այն ժամանակ Հայոց մարզպանն էր և արքայի թշնամիներին խորհրդակից դուրս եկավ։ Նրա ազգականները ցույց տվին և հայտնեցին, թե ինչպես իրենք հմուտ և տեղյակ էին նրա չար մտադրություններին, ամեն ինչ ցույց էին տալիս և հայտնում թագավորին, և էլի ուրիշ բազմաթիվ խարդախություններ, որ կեղծությամբ էր վարում իր կյանքը ո՛չ միայն ընկերների վերաբերմամբ, այլև ամբողջովին հենց իրեն իսկ թագավորի նկատմամբ, որովհետև մանկությունից ի վեր երբեք արդարությամբ չէր գործել։

Այն ժամանակ հազարապետը հրաման տվեց և ասաց. «Այստեղ բերեք նաև կապյալներից, որոնք բանտում են փակվում»։ [Կապանքներից] արձակեցին և բերին երանելիներից Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսին, սուրբ Հովսեփին և Ղևոնդ երեցին։

Երբ ատյանում խոսած բոլոր բաները հայտնեցին նրանց, Սահակ եպիսկոպոսը[133] պատասխան տվեց և ասաց. «Ովքեր հայտնի կերպով ուրացել են ճշմարիտ Աստծուն, չգիտեն՝ թե ինչ են անում և կամ ինչ են խոսում, որովհետև նրանց միտքը խավարած է. տերերին ծառայում

ԲՃ^{1}α տեղեակ էին իսկ (α չիք իսկ) ամենայն չարեաց նորա խորհրդոցն 13 ԼՏ^{1}Տ^2 ամենայն չար խորհրդոց (Տ^2 խորհրդոցն) նորա ԽԸԺԿՀ ամենայն չար ԳԴ խորհրդոց ԱՁէ ԹԻV ցուցին 13—14 ԱՁէԻԹV և յայտ արարին 14 ԱԿ և զայլս ևս Ե և զայս ևս ԲԴՃ^{1}α բազում փխ բազմագոյն 15 ԱՁէԻV և փխ որ Բα որով փխ որ α առ ընկերսն 16 Բα թագաւորն իսկ Դ չիք ինքնին ԲՃ^{1}α զի ոչ իսկ երբէք 16—17 ԲՃ^{1}α վաստակեալ էր ի մանկութենէ իւրմէ արդարութեամբ 18 Դ չիք հազարապետն ԱՁէԹԻV չիք և ասէ 19 Բα որ են Դ որ էին ԳԽԼԽ որ փխ որք ԲՃ^{1}α չիք անդ 19—20 α չիք յերանելեացն 20 Գ սուրբ եպիսկոպոս Գ ըՌշտունեաց ԵԿ ըՌըշտունեաց 21 A Ղևոնդ Գ զՂևոնտ Դ և զսուրբն Ղևոնդ երէց 22 Դ նորա փխ նոցա 23 ԲԳԻԿ եպիսկոպոս 23—24 ԲԴՃ^{1}α ուրացեալքն ԳԽԸԽԿ ուրացեալ 24 Բ ի ճշմարտին ԽԻՀՏ^{1}Ճ^{1}α ի ճշմարտէն Ը աստուած Տ^2 ի ճշմարիտն աստուած ԲՃ^{1}α առնեն փխ գործեն ԸԽՏ^2 չիք կամ 25 ԱՁէԻV խաւարեալ են A խաւարեալ է Դ խաւարին են Բ զտէրս Տ^{2}Ճ^{2}α զտարերս 26 V ընդ երեկս (!) փխ ընդ ընկերս Դ յուխտս α յուխտ արդարութեան (!)։

թեան։ Եւ են նոքա գարանք սատանայի, զի նոքօք իսկ կատարէ զդառնութիւն կամացն իւրոց. որպէս երևի իսկ ի դոյն յայդ Վասակէ։ Քանզի մինչ ունէր զանուն քրիստոնէութեան, վերին երեսօք կարծէր ծածկել և թագուցանել զամենայն չարութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տէրութեանդ, և զամենայն նենգութիւնն իւր քրիստոնէութեամբն ծածկէր։ Ուստի և ձեր իսկ կարծեցեալ՝ մեծապէս պատուեցէք զդա առաւել քան զարժանն իւր։ Հաւատացէք դմա զաշխարհն Վրաց. հարցէք զաշխարհն, եթէ զո՞հ իցեն զդմանէ։ Ետուք դմա զտէրութիւնն Սիւնեաց. լուարո՛ւք յազգականաց այտի դորա, զի՞նչ պատմեն զդմանէ։ Արարէք զդա մարզպան Հայոց. զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն։ Տեսէ՞ք, իբրև բարձաւ ի դմանէ պատուական անունն Աստուածոյ, զոր ունէր ստութեամբ, մերկ երևեցաւ ամենայն չարագործութիւն դորա։ Զի եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ, առ ո՞ ոք ի մահկանացուաց աստի դա արդար գտցի։

«Արդ ամենայն ամբաստանութիւն՝ որ այժմ յայտնի եղև զդմանէ, ո՞չ ահա ձեր իսկ յառաջագոյն լուեալ էր. բայց յոր դէմս ծածկեցէքն՝ դուք ձեզէն իսկ քաջ գիտէք։ Ինձ այսպէս թուի, եթէ սուտ յուսով դա զձեզ խնդացոյց։ Այլ ոչ դուք և ոչ դա և ոչ որ զկնի ձեր գալոցն է. զայն ի մեզ ոչ կարէ տեսանել։ Արդ արարէք որպէս և կամիք. զմեզ զի՞ հարցանէք»։

Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր, և ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին։ Քանզի հասեալ էր ի վերայ, եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն ըստ անարժան գործոցն իւրոց. եմուտ և եցոյց զամենայն բանս ատենին յարքունիս։ Եւ իբրև լուաւ

---

1 ԲԴα զարան Բ սոքօք ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²α չիք իսկ Թ կատարէն 2 ԲԳԵԼԽԿՀՃ¹α կամաց Դ ամենայն իրաց փխ կամացն իւրոց ԲԴԿα որպէս և Ժ ի դոյն իսկ 3 ԳԴԿ մինչև ԲԳԴα քրիստոնէութեանն Տ³ վերինն ԲαՏ² երեսօքն ԼԾ չիք կարծէր 4 Դ կորուսանել փխ թագուցանել α ուստի և թաքուցանել ԳԴ չարութիւնն Բ չիք իւր Դ ձերոց 4—5 α զամենայն առաջի ձերոց անգէտ տէրութեանդ 5 Ե նենգութիւն Բα չիք իւր 5—6 ԴԵԸα քրիստոնէութեամբ Բ քրիստոնէութեան կամէր ծածկել 6 α կամէր ծածկել Դ չիք և α ուստի և կարծեցեալ ձեր մեծապէս 6—7 Թի պատուեցիք 7 ԳԴԿ առելի քան փխ առաւել քան Թի հաւատացիք 8 ԱՁԹԻ հարցէք յաշխարհն՝ եթէ զոհ իցեն ԲԴԷՃ¹α հարցէք զաշխարհն VՏ³A չիք զաշխարհն Գ են փխ իցեն ԴԻԽՀ թէ Թ ի դմանէ Գ և ետուք 9 Ե տէրութիւն ԲՃ¹α չիք այտի ԵԸԺԼԽՏ¹Տ² անտի Հ անդի 10 Թի արարիք 10—11 ԲՃ¹α որ ի նախնեացն 11 ԲՃ¹α բազում փխ մեծաւ Ը չիք մեծաւ ԲՃα ամուր փխ ամի 12 ԲՃ²α զամենայն երկիրն է զարձաւ փխ բարձաւ 13 Բ անուն Դ այն փխ աստուծոյ ԲՃ¹α երկմտութեամբ փխ ստութեամբ 14 α չարագործութիւնն դորա ԱԹԻ զի որ փխ զի եթէ ԲԴ թէ փխ եթէ 15 ԲՃ¹α

են սուտ պատճառանքներով և ընկերների հետ էլ կեղծ ուխտ են կապում։ Նրանք սատանայի զարաններ են, որովհետև հենց նրանց միջոցով է կատարում իր դաժան կամքը, ինչպես որ երևում է հենց այդ Վասակի վերաբերմամբ։ Որովհետև քանի դեռ նա քրիստոնեության անունն էր կրում, կարծում էր, թե արտաքուստ ծածկում ու թաքցնում է իր ամբողջ չարությունը ձեր անգետ տերության առաջ ,և իր ամբողջ նենգությունը քրիստոնեությամբ էր ծածկում։ Ուստի և դուք էլ նրան վստահելով՝ մեծապես պատվեցիք դրան, ավելի քան արժանի էր։ Դրա՛ն հավատացիք Վրաց երկիրը[134], հարցրեք այդ երկրին՝ արդյոք գո՞հ են դրանից։ Դրա՛ն տվիք Սյունյաց իշխանությունը. իր ազգականներից լսեցե՛ք, թե ի՛նչ են պատմում դրա մասին։ Դրան Հայոց մարզպան դարձրիք. այն, ինչ որ ձեր նախնիքները մեծ աշխատությամբ էին ձեռք բերել, դա մի տարվա մեջ կորցրեց ամբողջ երկիրը։ Տեսա՞ք, որ երբ դրանից վերացավ աստծու պատվական անունը, որ կեղծությամբ էր կրում, բացեիբաց երևաց դրա ամբողջ չարագործությունը։ Որովհետև եթե իր աստծու մոտ սուտ դուրս եկավ, էլ այս մահկանացուներից որի՞ առջև պետք է դա արդար ճանաչվի։

«Արդ, այն ամբողջ ամբաստանությունը, որ այժմ հայտնի եղավ դրա մասին, չէ՞ որ դուք առաջուց արդեն լսել էիք. բայց թե ի՛նչ դիտումով ծածկեցիք, դուք ինքներդ էլ լա՛վ գիտեք։ Ինձ այնպես է թվում, թե դա ձեզ սուտ հույսով է ուրախացրել[135]։ Բայց ո՛չ դուք, ո՛չ դա և ո՛չ էլ ով ձեզանից հետո գալու է, այդ բանը չի կարող մեր մեջ տեսնել։ Ուրեմն, վարվեցե՛ք, ինչպես կամենում եք. մեզ էլ ի՞նչ եք հարցնում»։

Մեծ հազարապետը զարմացավ իր մտքում և ինքն իր մեջ քննում էր ատյանում ասված բոլոր խոսքերը։ Որովհետև հասկացել էր, որ այդ մարդը իրավացի կերպով դատապարտվեց իր անարժան գործերի հա-

---

ի մարդկանէ փխ ի մահկանացուաց աստի դա Դ չիք աստի Λα գտանիցի 16 ԴՃ² ամբաստանութիւն սորա α ամբաստանութիւնդ որ յայտնի ԴՃ² չիք որ 16—17 Բ նորա յայտնի եղև զդմանէ փխ որ այժմ յայտնի եղև զդմանէ 17 Հ չիք ոչ Դ չիք ահա ԸԺԼԽՀՏ¹Տ² չիք ձեր իսկ ԲՃ¹α լուեալ էր զդմանէ ԳԴԿ յառաջագոյն իսկ Ե ո՞չ ահա յառաջագոյն լուեալ էր ձեր ԸԺԼԽՏ¹Տ² լուեալ էր ձեր Հ լուեալ էր ձեզ 17—18 Թի ծածկեցիք α բայց յոր դէմս ծածկեցէք և ինձ 18 ԴԵԸԺԼԽՀՏ¹Տ² չիք իսկ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ²α Եւ ինձ α չիք դուք ձեզէն իսկ քաջ գիտէք 19 ԳԵԼԽԾԿՀՏ¹Ճ⁴,⁷,⁸,¹⁰ զմեզ փխ զձեզ Խ չիք այլ ոչ դուք ԳԵԺԼԽԿՀՏ² նա փխ դա ԵԺԼԿՏ² չիք ոչ (որ) Դ չիք որ (զկնի) 20 Բα գալոց են՝ ի մեզ զայդ ոչ կարեն տեսանել Դ գալոց Զէ որ գալոցն է Դ կարէք ԱՁԹԻVՏ³ զդա (որպէս և կամիք) A արարէք ընդ դա որպէս 21 Դ չիք և Դ զմեզ 22 ԲՃ¹α ի միտս Բ չիք իւր 23 Դ եհաս փխ հասեալ էր 24 α թէ Բα այրն այն Ը ըստ անարժանի Դ ըստ անօրէն գործոց իւրոց ԲՏ²AՃ¹α ըստ արժանի ԽԾՀ արժան ԲԴԵԼԽα գործոց 25 Գ եմուտ երևեցոյց α չիք եմուտ և եցոյց զամենայն բանս ատենին յարքունիս Դ բանսն Դ ատենին ԱԲԴՁԷԻVՏ³ յարքունիսն ԵԸԺԼԽՀՏ¹ չիք Եւ Հ չիք լուաւ թագաւորն և ստուգեաց ի հազարապետէն զառնն պարտաւորութիւն, բարկացաւ յոյժ և ի խոր խոցեցաւ. բայց երկայնմտութեամբ կամեցաւ հասուցանել զնա ի մեծ անարգութիւն։ Լուռ եկաց աւուրս երկոտասան, մինչ ի գլուխ չոգաւ փուրսիշ ամբաստանութեանն։

Եւ եղև յաւուր միոջ մեծի զամենայն երեւելի զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել։ Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձըն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատուավուրսն և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս. շքեղ և երեւելի քան զամենեսեան երեւէր բազմութեանն։

Իսկ նախարարքն որք կամօք ի Հայոց չոգան՝ անձամբ տուեալ զանձինս ի փորձութիւն, և սուրբքն որ յառաջագոյն հասեալ էին, կապանօք ունէին զամենեսեան առ Դրանն արքունի։ Իբրև տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ, և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, ի միտս իւրեանց սկսան այպանել զնա և ասել. «Ով անմիտ վաճառական, դանմահ և զանանց պատիւն ետուր, և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ ես ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես»։

Եհաս և նստաւ ի Ներքին դահլիճան, որ էր հրապարակ մեծա-

---

1 Ըն չիք և ստուգեաց Ըն զամենայն բանս ի հազարապետէն ԱԹԻՃ^{4,20} պատմութիւն փխ պարտաւորութիւն ԲՃ^{1}α զառն զպարտութիւնն Դ զառն զպարտաւորութիւնն Լ չիք զառն պարտաւորութիւն 2 VS^2Λ բայց միայն ԲԴԳԼԹԿՃ^{1}α երկայնմտութեամբ 3 ԲՃ$^1S^2$γ նմա փխ զնա ԲS^2α չիք ի Դ մեծ անարգութեան Կ անարգութիւնս 3—4 ԱԳՁԷԹԻ^7 աւուրս տասն և երկուս 4 ԲՃ$^1S^1$ տասներկու Դ տասներկուս ԲԴԵԺԼԽԿՀS^1 մինչև α մինչև ի գլուխ չոգաւ փուշիշն ԲԴՀ փուրշիշն ԳԵԸԺԼԽԿS^2 փուրսիշն Թ փուրսիշ (լուսանցում՝ հարցումն) ԲԴԵԼԽԿՀ ամբաստանութեան 5 ԲαS^2 միում ԲԿα երեւելիս Դ երևելեան ԱՁԷԹԻVS^3Λ և զպատուականսն Բα զպատուականս ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 պատուականսն 6 ԲՃ^{1}α չիք հրամայէր Գα յնթրիս ԲՃ^{1}α կոչէր ԲՃ^{1,4}α զուրացեալն Վասակ α չիք նա 6—7 S^3 առաջի 7 Դ կարգին Ե կարգացն օրին(!) 7—8 ԲՃ^{1}α հանդերձսն 8 ԲԴԼԽα չիք և (զպատուավուրսն) ԳԵԸԺԼԽԿՀS^1 զպատմուրսն է զպատուավուրսն Դ զպտիսւ վարսն (լուսանցում՝ զպտուի վարսին) ΛS^2Ճ^1 զպտուի վարսին 9 Ը զկոնակուռ Թ զկռանակուռ (լուսանցում՝ զակնակուռ) 9—10 Բ կամարն ի վերայ ընդելուզեալ 10 Բ մարգարտաւ 10—11 Դ ածեալ 11 ԳԴԵ ԸԼԽԿՀ չիք և Բ յականջին ԳԴԵԼԽԿ զգինդս յականջս Ժ զգինդն յականջս ԲԹ զգումարտակն Կ զգումուտակն (!) ԳԴ զգումարտակն ի պարանոցի 11—12 Ա զսամոյրսն(!) ԲՃ^{1}α

մեմատ. ուստի մտավ արքունիք և ատյանում ասված բոլոր խոսքերը հայտնեց թագավորին։ Եվ երբ թագավորը լսեց և հազարապետից ստուգեց այդ մարդու մեղավորությունը. սաստիկ բարկացավ և խոր խոցվեց, բայց կամեցավ համբերությամբ նրան մեծ անարգանքի հասցնել։ Տասներկու օր լուռ մնաց, մինչև որ ավարտվեց-պրծավ ամբաստանության հարցափորձը։

Եվ մի նշանավոր օր հրամայեց բոլոր երևելի պատվավոր մարդկանց ընթրիքի կանչել։ Կանչեցին նաև ուրացողին. և նա՝ արքունի նախկին կարգերի համաձայն՝ հագավ թագավորից ստացած պատվական հագուստը, կապեց նաև վարսակալը և գլխին դրեց ոսկեղեն խույրը և մարգարտով ու թանկագին ակներով հյուսված կռանակուռ ոսկեձույլ կամարը կապեց մեջքին, գինդերը կախեց ականջներից և մանյակը՝ պարանոցից, սամույրի մուշտակը գցեց ուսերին և թագավորից ստացած բոլոր շքազգեստները վրա առնելով՝ գնաց արքունիք։ Նա բոլորից ավելի շքեղ և երևելի էր երևում բազմության աչքին։

Իսկ Հայաստանից կամավոր կերպով եկած նախարարներին, որոնք անձամբ իրենց անձը փորձության էին տվել, և առաջուց տեղ հասած սրբերին բոլորին շղթայակապ էին պահում Արքունի Դռանը։ Երբ նրան տեսան զարդարված ու շքեղացած և բազմաթիվ խմբով արքունիք գնալիս, իրենց մտքերում սկսեցին ծաղրել նրան և ասել. «Ո՜վ անխելք վաճառական, անմահ և անանց պատիվը տվիր և այդ անցավորը գնեցիր. և այդ էլ մոտ օրերս կորցնելու ես»։

Հասավ և նստեց ներսի դահլիճում, որ մեծամեծների ժողովատեղին

և զսամոյրն Դ զսամոյրսն(!) 12 Թ զթիկամբք Հ ի թիկամբքն Λ զթիկամբն Բ զանձամբն 13 ԲՃ^{1}α յարքունիսն երթայր ԹԻ երեւէր 13—14 ԲԴԵԺԼԿՀS^1S^2Ճ^{1}α ամենայն բազմութեանն 14 Դ ամենեցուն փխ բազմութեանն 15 ԳԴԿ որ փխ որք ԵԸԺԽՀ Իսկ նախարարքն Հայոց որ կամօք իւրեանց չոգան Բα որ կամաւ չոգան ի Հայոց ԼS^1S^2 կամօքն իւրեանց S^2 չոգան ի Հայոց 15—16 Ի չիք «ինք—ի փորձութիւնս» 16 ԲԳԴԵԷԸԺԼԽԾԿS^1S^2α ի փորձութիւն Թ փորձութեանն ԱՁVS^3Λ ի փորձութիւնն α և սուրբք 17 ԲՃ^{1}α վաղվաղի կապանօք զամենեսեան ունէին ԵԸԺԼՀS^2 և կապանօք 18 Գ չիք և շքեղացեալ α շքեղացեալ և զարդարեալ ԲՃ^{1}α գնդին 18—19 ԲՃ^{1}α յարքունիսն 19 Λ չիք զնա 20 Բ զանանց և զանմահ պատիւն ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2α պատիւն ԱՁԷԹԻVS^3Λ պատիւ ԳԴԵԸԺԼԽԿՀ չիք և 20—21 ԲՃ^{1}α զանցաւորս S^2 զանցաւորսդ 21 Բ իբր փխ ես α զայդ խակ ԲՃ^{1}α ի մօտոյ ԼԿՀ ընդ մօտ S^2 մօտ Բ աւուրց Դ ընդ մօտաւորս ԳԵԸԺ ընդ S^2 մօտ աւուրս է կորուսելոց ես 22 V եհաս Տ ի ներքոյ փխ ի ներքին ԱՃ^{1}α դահլիճան ԳԴ դահլիճան ԲՃ$^1S^2$α որ ԲՃ^{1}α հրապարակին մեծամեծացն էր։

մեծացնէ։ Արդ եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր ցնա և ասէ. «Արքայ յղեաց առ քեզ, յորմէ՞ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, ասա ինձ վաղվաղակի, վասն որո՞յ արդար վաստակոց»։ Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս ատենին, յորում դատապարտեցաւ. նա և զոր ոչ ևս անդ խօսեցան՝ զայն ևս յայտնէր նմա։ Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, և յինքն տարաւ զտէրութիւնն՝ իբրև քրպիկար յարքունիս։ Նա և այլ ևս բազում բանիւք դատապարտեցին զնա, որում ամենայն աւագանին վկայ գային։ Պապանձեցաւ ամենևին, և չգտաւ բան ճշմարիտ ի բերան նորա։ Իբրև կրկնեցին և երեքկնեցին ցուցանելով ի ներքս յարքունիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա։

Արդ եկն եւ դահճապետն, և մատեաւ վաղվաղակի առաջի ամենայն մեծամեծացն, մերկացոյց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի։ Կապեցին զոտս և զձեռս, և կանանցաբար նստուցին ի ձի մատակ. տարան և եդուն յայն զընդան, ուր կային մահապարտքն ամենայն։

Իսկ նախարարքն Հայոց և սուրբ եպիսկոպոսքն հանդերձ երիցամբքն, թէպէտ և էին ի մեծի պատուհասի, ոչինչ յիշէին զնեղութիւնսն, որ անցեալ էր ընդ նոսա, և կամ որ այլ ևս ակնկալութիւն էր գալ ի վերայ. այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւնն, որ եղև յԱստուծոյ։ Մխիթարէին զմիմեանս և ասէին. «Քաջութեամբ պատերազմեցաք, առաւել ևս համբերութեամբ ճգնեսցուք։ Լուեալ

---

1 ԲՃ^{1}α չիք եւ ԼԿS^{1}Ճ^{1}α սենեկապետն ԲՃ^{1}α չիք յարքունուստ ԲԳԴԵԸα զնա 2 ԲS^{3}α ասէր ԳԴԵՁԷԾS^2 և ասէր ԲՃ^{1}α Սիւնեաց տէր, սիւնեաց տէր, արքայ... ԱԲԻ յումէ ԿՀS^{1}S^{2}Ճ^{1}α յումմէ 3 ԲՃ^{1}α չիք պատուական Հ պատիւդ պատուական Բ զպատիւդ A չիք ինձ ԵԸԺԼԽՀS^{1}S^2 ո՞ր 4 Ի վաստակոցդ 5 ԲԳα դատապարտեցաւ Դ պարտաւորեցաւ A խօսեցաւ Կ խօսեցան անդ 5—6 ԲՃ^{1}α և զայն ևս յայտնեաց նմա Դ յայտ առնէր նմա 6—7 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^1 զտէրութիւն աշխարհին Սիւնեաց α աշխարհն Սիւնեաց 7 Գ քսութեամբ (!) Բα եւ նա 7—8 ԲԳԴԸԿα զհօրեղբայրն 8 ԱԲԳԴՁԷԹԻԿVS^{3}α և ինքն ԳԵ զտէրութիւն 8—9 A քրտիկեար ԳԴԵԸԹԺԼԽԾԿՀS^{1}S^2 զքրտիկար (ԵՀԺ լուսանցքում՝ պատրող) Թ զքրտիկար (լուսանցքում՝ հոտ զարշութեան) ՃՃ$^{2,4,7-8,10,13,14,18,20}$ զքարտիկար հմմտ. էջ 92 10 ԵԸԺԼԽՀ որում և Դ վկայեցին ԵՃ^{17,19,20} կային 10—11 Բ պապանձեցաւ ոչ գտաւ ամենևին Ճ^{1}α պապանձեցաւ և ոչ գտաւ բան ի բերան նորա ճշմարիտ 11 ԳԴԿ չիք և ԹԻ ոչ գտաւ ԲS^{2}α Եւ իբրև 12 ԲԴՃ^{1}α չիք ցուցանելով է ի ներսն Դ ի ներս ԲԴ ի յարքունիսն ԳԵԺԼԽՀ յարքունիս Հ զվճիռ 14 ԵԸԺԼԽՀS^{1}S^2 չիք արդ չիք մատեաւ ԱԲԳ

էր։ Արդ՝ դուրս եկավ արքունի սենեկապանը, թագավորի կողմից հարցրեց նրան և ասաց. «Թագավորն [ինձ] ուղարկեց քեզ մոտ, թե՝ ումի՞ց ես ստացել այդ բոլոր պատվական շքազգեստները, ասա՛ ինձ շուտով, ո՞ր արդար ծառայությունների համար»։ Եվ հիշեցրեց նրան ատյանում ասված այն բոլոր խոսքերը, որով դատապարտվել էր. նույնիսկ այնպիսի բաներ էլ ասաց նրան, որ այնտեղ խոսված չէին։ Որովհետև նա օրինավոր կարգով չէր ստացել Սյունյաց աշխարհի իշխանությունը, այլ նենգությամբ ու քսությամբ սպանել էր տվել իր հորեղբայր Վաղինակին և ինքը գրավել իշխանությունը ինչպես արքունիքի համար վարձատրության արժանի գործ կատարող[136]։ Էլի ուրիշ շատ խոսքերով դատապարտեցին նրան, և այդ բանին վկա էին բոլոր մեծամեծները։ Նա բոլորովին պապանձվեց, և ոչ մի ճշմարիտ խոսք չգտնվեց նրա բերանում։ Երբ երկու-երեք անգամ կրկնեցին՝ հասկացնելով թագավորին ներսում, մահվան վճիռ տրվեց նրա համար։

Արդ՝ դուրս եկավ դահճապետը, և շտապով մոտեցավ բոլոր մեծամեծների առաջ, հանեց նրանից արքունիքից ստացած շքազգեստները և նրան մահապարտի զգեստ հագցրեց։ Ոտներն ու ձեռները կապեցին և կնոջ նման մատակ ձի նստեցրին տարան և հանձնեցին այն զնդանը, որտեղ բոլոր մահապարտներն էին գտնվում։

Իսկ Հայոց նախարարներն ու սուրբ եպիսկոպոսները երեցների հետ միասին, թեպետև մեծ պատուհասի մեջ էին, ամենևին չէին հիշում այն նեղությունները, որ անցել էին նրանց գլխով և կամ որ սպասվում էին ապագայում էլ, այլ զարմացել էին այն մեծ հայտնության վրա, որ Աստծուց եղավ։ Մխիթարում էին միմյանց և ասում. «Քաջությամբ պատերազմեցինք, է՛լ ավելի մեծ համբերությամբ տանենք չարչարանքները։ Մեր սուրբ հայրերից լսել ենք, որ բոլոր առաքինություններից գըլ-

---

ԴՁԷԹԻԿՃ^1 մատեաւ վաղվաղակի ԵԸԺԼԽՀS^{1}S^{2}S^{3}VA չիք վաղվաղակի 15 ԲԴԵԸԺԼԽԾՀS^{1}S^{2}Ճ$^{2,9,12-13,16,18-19}$ մերկացոյց ԳԿՃ^{1}α մերկացաւ ԱՁԷԹԻVS^{3}A մերկեաց 15—16 ԵԸԺԼԽՀS^{1}S^{2}α վաղվաղակի զպատիւն արքունի ԲԳԴԸԿՃ^{1}α զպատիւն արքունի Ը չիք: զոր ունէր Կ չիք զոր ունէր յարքունուստ 16 Բ հանդերձս 17 Գ զձեռս և զոտս ԲԴα զձեռս նորա ԳԿ կանացեբար S^2 կանացարար Թ նստուցին զնա ԲԳԴԵԸԺԼԿՀS^{1}S^2 մատակի ԲԳԵԸԺԼԿՀS^2 չիք և 17—18 ԱՁԷԻVS^3 յայնմ ԴՃ^{1}α և տարան եդուն զնա ի զնդան 18 ԱԷԻ որ փխ ուր ԲԴՃ^{1}α էին փխ կային ԲԴα ամենայն մահապարտքն ԳԴԸԺԼԽԿՀS^{1}S^2 մահապարտքն ԱՁԷԹԻVS^{3}A մահապարտք ԵԸԺԼS^{1}S^2 չիք ամենայն 19 ԲՃ^{1}α ամենայն փխ սուրբ է չիք սուրբ ԲՃ^{1}α եպիսկոպոսքն որք էին ի բանդին հանդերձ... 19—20 Հ իրիցօքն 20 ԲԸԹα մեծ ԴԽS^2 ի մեծ 20—21 ԲՃ^1 զմեծ նեղութիւնսն Ե զնեղութիւնս ԹԻ զնեղութիւնն α ի մեծ պատուհասին 21 Լα էին Բ ակնկալու էր 21—22 ԲԴՃ^{1}α ի վերայ մեծի յայտնութեանն 22 Ե յայտնութիւն 23 Դ եղեն ԸԽS^2 քաջապէս փխ քաջութեամբ 24 α և առաւել ևս։

է մեր ի սուրբ հարցն մերոց, եթէ գլուխ ամենայն առաքինութեան համբերութիւն է, և իմաստութիւն երկնաւոր՝ կատարեալ աստուածպաշտութիւն. և զայս ոչ ոք կարէ գտանել առանց չարչարանաց։ Իսկ չարչարանքն յորժամ ընդերկարեսցին ի վերայ՝ յայնժամ բազմանայ վարձ հատուցմանց պարգևին։ Ապա եթէ այդ այդպէս է, զայս միայն աղաչեսցուք զԱստուած, զի համբերել կարասցուք ամենայն փորձութեանց. և Տէր ինքնին արասցէ հնարս մերում փրկութեան։

«Լուեալ է մեր զդատաստան քառասուն զինուորացն Քրիստոսի, որք բազում հարուածս տանջանաց ընկալան։ Մինն ի նոցանէ փութացաւ ի բաղանիսն, և վրիպեաց ի պսակէն. իսկ երեսուն և ինն համբերութեամբ կատարեցան, և հասին այնմ աւետեացն, որում ցանկացեալն էին։ Իսկ մեր ընկերակիցն աւանիկ, որ յառաջագոյն որոշեցաւ ի մէնջ, ահա եղև գործակից սատանայի։ Մինչ դեռ ոգիք ի մարմինսն են ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց. որ ո՛չ միայն սրբոց է ողբալի, այլ և ամենայն գազանաբարոյ մարդկան»։

Զայս ասէին, և բազում արտասուս ի վերայ կորուսելոյն հեղուին. և անդէն զերգս հոգևորս ի բերան առեալ ասէին. «Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս. ամենայն ազինք շրջեցան զինև, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա»։ Քաջալերէին զմիմեանս և ասէին. «Զայս գիտելով, եղբարք, մի՛ երկիցուք յանաստուած ազգէս հեթանոսաց, որ քան զմեզուս վատթարագոյն ևս են· ի զայրանալն իւրեանց. զի և նոցա ցասումն ի սատակումն անձանց իւրեանց լիցի. այլ մեք զանուն Տեառն կարդասցուք և վանեսցուք զամենեսեան»։

Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, և զուար-

---

1 Ըխ չիք մեր 2 ԱԲԳԴՁԼԽ համբերութիւնն 2—3 Դ և իմաստութիւն կատարեալ աստուածպաշտութիւն Ի աստուածպաշտութիւնն 3 ԲԴ և զայն 4 ԲՃ^1 ընդերկարասցին Կ ընդյերկարեսցի ԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^7 ընդյերկարեսցին ԱԶԷԹԻՎՏ^{3}A ընդերկարանայ Ի ընդերանայ(!) α յերկարեսցին։ չիք ի վերայ ԲՃ^1 չիք ի վերայ 5 ԲՃ^{1}α վարձք հատուցման պարգևատուին ԳԾԺԼԽԿՀՏ^2 հատուցման Դα վարձք հատուցման ԲԳԴԾ ԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}α ապա եթէ ԱԶԷԹԻՎՏ^{3}A ապա թէ 6 ԱԶԷՎ համբերեալ 7 Բ և ինքն տէր α և ինքնին տեր 7—8 ԲԱ հնար մերոյ փրկութեանն Դ մերոյ փրկութեան Խ փրկութեան մերում 9 Բ ձեր փխ մեր 10 Զ չիք բազում ԲԳԴԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1,4,7,14,18,20}α որք էին ի հարուածս տանջանաց (ԼՏ^{1}Տ^2 որ) Ը չիք ընկալան ԱԳԴԹԻԿ մի փխ մինն ԳԿ ի նոցանէն 11 ԲԳԴԸԺԿՀՃ$^{1,4,7,18-14,18}$α չիք ի բաղանիսն ԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և ԾԸԼԽ փութացաւ վրիպեաց ի սուրբ պսակէն ԺԿՀ ի սուրբ պսակէն α փութացաւ և

խավորը համբերությունն է, և կատարյալ աստվածպաշտությունը՝ երկնավոր իմաստությունը. իսկ այս բանը ոչ ոք չի կարող առանց չարչարանքի ձեռք բերել։ Իսկ երբ չարչարանքը երկարաձգվում է, այն ժամանակ շատանում է նաև պարգևն ու վարձահատուցումը։ Եթե ուրեմն այդ այդպես է, աստծուց միմիայն ա՛յս խնդրենք, որ կարողանանք բոլոր փորձություններին դիմանալ. և Տերն ինքը կգտնի մեր փրկության հնարը»։

«Մենք լսել ենք Քրիստոսի քառասուն զինվորների դատաստանը, որոնք շատ հարվածներ ու տանջանքներ կրեցին։ Նրանցից մեկը շտապեց-գնաց բաղնիք և զրկվեց պսակից. իսկ երեսունինը համբերությամբ նահատակվեցին և հասան այն ավետիքին, որ ցանկանում էին։ Իսկ մեր այն ընկերակիցը, որ առաջուց բաժանվեց մեզանից, ահա սատանայի գործակիցը դարձավ։ Հոգին մարմնից դեռ դուրս չեկած՝ ընդունեց գեհենի տանջանքների առհավատչյան, որ ո՛չ միայն սրբերի համար է ողբալի, այլև բոլոր գազանաբարո մարդկանց»։

Այս ասում էին և շատ արտասուք թափում կորուսյալի վրա. և միաժամանակ հոգևոր երգեր էին երգում և ասում. «Լավ է տիրոջ վրա հույս դնել, քան մարդկանց. լավ է տիրոջ վրա հույս դնել, քան իշխանների. բոլոր ազգերը շրջապատեցին ինձ, և տիրոջ անունով հաղթեցի նրանց»։ Քաջալերում էին միմյանց և ասում. «Քանի որ այս բանը գիտենք, եղբայրնե՛ր, չվախենանք այս անաստված հեթանոս ազգից, որ զայրացած ժամանակ մեզանից շատ ավելի վատ են, որովհետև նրանց զայրույթն էլ սատակումն է լինելու իրենց անձերի համար։ Իսկ մենք Տիրոջ անունը կանչենք և ետ մղենք բոլորին»։

Իսկ ուրացող Վասակը նայում էր սուրբ կապվածների միաբանությանը, որոնք մեծ ուրախությամբ ընդունում էին չարչարանքները և ա-

---

վրիպեցաւ ի սուրբ պսակէն 12 Թ յայնմ ԲԳԴԾԸԼԽα աւետեաց 13 ԲԳ ցանկացեալ Բα ընկերակիցն մեր Ձէ ոչ փխ որ 14 Բ որոշեցան α ուրուշեցաւ ի մէնջ ԱԲԴ ԶԷԹԻԿՎՏ^3 ոգիքն ԳԾԸԺԼՏ^{1}Տ^2 ոգին ԽՀ հոգին 14—15 α ոգին ի մարմնին է 15 ԲԴ ի մարմինն էին ԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի մարմնի է Բα զտանջանացն 15—16 Խ որոց փխ որ ոչ 16 Ա գազանաբարբոյ Ճ^{1}α գազանաբարու 18 ԲՃ^{1}α առեալով փխ ասէին Թα չիք և 18—19 ԲՃ^1 բազում արտասուս հեղլով ի վերայ կորուսելոցն Ճ^{1}α հեղուին ի վերայ կորուսելոյն 19 ԲԳԴԾԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α երգս Դ չիք հոգևորս Թ հոգևոր Լ ի բան փխ ի բերան Բ առեալով փխ ասէին 19—20 ԲՃ^{1,7}α չիք բարի է յուսալ ի տէր քան յուսալ ի մարդիկ 21 Դ մարդիք Ի յիշխանս Թ չիք և 23 Ը եղբայրք ԴԾԸԺԼՏ^{1}Տ^{2}α ազգէն Խ յազգէն 24 ԲԴα զմեզաւ Դ չիք ևս Ծ ի զայրանալ 24—25 ԱԶԹԻ ցասումն ԲՃ^{1}α չիք ոգի և—լիցի) 25 Դ լինիցի Զ լիցին Է լինիցին 26 Դ կարդասցուք և կեցցուք Ե վանեսցուք ԲՃ^{1}α վանեսցուք զթշնամիս մեր 27—28 Ա կապելոց 28 Ի որ է մեծապէս ԹԽ զչարչարանս ԲԳԴՃ^{1}α զուարթագոյնս։

թագոյն և պայծառք երևէին որպէս յառաջագոյն յարքունիսն. հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին։ Եւ օր ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին։ Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն։ Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զզարդս կանանց եւս եդ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Եւ յայն տեղի հասուցին, մինչև հարցանել նմա՝ «Եթէ կայցէ՞ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց»։ Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս, որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ի տուժի։

Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտ դժնդակս անդէն ի կապանսն։ Ջեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա։ Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ ռնգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան շիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին

---

1 Բ որպէս և ԳԵԸԺԼԽՀՏ¹Տ² յառաջ թի յարքունիս | Լ արքունիսն 2 ԲՃ²,¹⁰α խառնէր 3 ԱՋԹԻV կապանօքն Դ բերէին և ընկենուին իբրև զգէշ ԵԸԺԼԽՀՃ¹ և իբրև զգէշ Տ² գէշ ԲՃ¹α և ընկենուին 4 ԹՃ¹ ի մէջ փխ ի մեծ Ի ի մեծի Բα հրապարակն 4—5 α չիք և α տեսիլ զնա առնէին 5 ԼՏ¹ չիք զնա առնէին կողոպտեցին ԵԸԺԼԽԿՀα չիք ինչ 6 Բα ընդ իւր Գ աղքատութեամբն ԲԳԴԵԸԺԽԿՀՃ¹α մինչև 6—7 Բα մուրանային նմա իւր ծառայքն և բերէին Դ մինչև հաց մուրանային ծառայք նորա և բերէին նմա 7 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² ծառայքն իւր Դ չիք Եւ 7—8 ԲՃ¹,²α և այն սաստիկ արարին զպասսերն (α զպասերն) 8 ԳԵԸԽԿՀ զպարսերս ԴԺԻՄՏ¹Տ² զպարտս | զպարտսէրս(!) α հարկաց աշխարհաց Գ տանն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ²α չիք որ 9 Գ զհաւոց ԲԴα զզարդ Ե զարդս Դ չիք եւ 10 ԲՃ¹α չիք և ետ ԳԴԵԸԿՀ չիք և (տուժեցաւ) Ե հատուցանել է զպարգևսն α զպարտսն (!) 11 Բ յայնմ Գ տեսիս փխ տեղի ԴԵԺԽԿՀ տեղիս ԸԽ թէ 11—12 ԲԴԵԿՀ կացցէ 12 ԲՃ¹α գանձս ԴԵ նախնեաց ԲՃ¹α իւրոց փխ մերոց Դ չիք Եւ 12—13 Բα գտանէր փխ գտեալ էր նորա 13 Դ հանեալ և տուեալ էր ԳԵԸԺԽԿ ընդ իւրն 13—14 ԲՃ¹α ընտանեաց իւրում տուգանս և այնպ·

վելի զվարթ ու պայծառ էին երևում, ինչպես և առաջ արքունիքում. նայում և կարոտում էր, բայց ոչ ոք նրան չխառնեց նրանց հետ, այլ առանձին էին պահում միևնույն կապանքներով։ Եվ օր-օրի վրա բերում, ինչպես գեշ գցում էին մեծ հրապարակը, նախատում ու ծաղրում էին և ամբողջ բանակի առաջ խաղք ու խայտառակ անում նրան։ Կողոպտեցին-խլեցին ինչ որ հետն ուներ և ոչինչ չթողին. այնպիսի խայտառակ աղքատության մեջ գցեցին, որ նրա ծառաները մինչև իսկ հաց էին մուրում և բերում նրան։ Եվ երկրի հարկերի այնպիսի ծանր պարտք դրին նրա տան վրա, որ նույնիսկ հայրերի ու պապերի և իր ունեցվածքն ու կանանց զարդերն էլ վրան դրեց, տվեց ու տուժեց, բայց չկարողացավ արքունի պարտքը վճարել։ Այն տեղը հասցրին, որ նույնիսկ հարցնում էր՝ «Մեր նախնիքների գերեզմաններում արդյոք որևէ գանձ մնացե՞լ է»։ Եվ եթե գտներ, կհաներ և տուգանք կտար իրեն և ընտանիքի համար. ինչպես որ շատ մարդիկ էլ տույժի փոխարեն [գերի] գնացին[137]։

Եվ երբ այսպես ամեն կողմից հարվածներ կրեց ու տկարացավ, հենց այնտեղ կապանքների մեջ դժնդակ ցավերի մեջ ընկավ։ Նրա փորը եփ եկավ, նրա ծոցը ճզմվեց ու տրորվեց, և նրա թանձրամսությունը հալվեց-քամվեց։ Որդերը եռացին նրա աչքերի միջից և ցած թափվեցին քթածակերից։ Նրա ականջները ծանրացան, և սաստիկ ծածկվեցին նրա շրթունքները։ Նրա բազուկների ջիլերը քայքայվեցին և ոտների կրունկները դեպի ետ ծռվեցին։ Մահվան հոտ փչեց նրանից և նրա ձեռնասուն ծառաները փախան նրանից։ Միմիայն լեզուն կենդանի մնաց նրա բերանում, բայց խոստովանություն չերևաց նրա շրթունքների վրա։ Ճաշակեց հեղձամղձուկ մահը և անհուն դառնությամբ դժոխք իջավ։ Նրան

չարչարեալ լինէր. որպէսզի բազում իսկ մարդիկ Ե ընտանեաց Դ տուգան Դα չիք իսկ Ը տուգանս 14 Խ չիք մարդիկ Գ չոգաւ ԲԴԵԸԺՄՀՏ²α ի տուժին 15 α չիք իբրև ԱՋէԹԻV այս այսպէս Բ հատեալ փխ հարեալ ԲՃ¹α վիրաւորեցաւ և չարաչար տանջեցաւ փխ վատթարացաւ Տ² և չարաչար տանջեցաւ ԳԵԸԺԼԽԿՏ¹Տ² վատթարեցաւ 16 ԲՃ¹α անգաւ ԲԴՃ¹ յախտ ԵԺԽՄՏ¹Տ² և անդէն ԴԺԿ ի կապանս ԱV փորն 17 ԲԴα գօգ Դ քակեալ փխ քամեալ V մզեցաւ (!) 17—18 V թանձրամսութիւն 18 Դ և եռացին Խ որդունքն Խ յաչս ԱԳՋէԹԻ սորէին 19 ԱԹԻ ընկուճս Բ ունկունս Գ ընգունս Ջ ըռնկունս 18—19 V չիք և ի վայր սորեցին ընդ ունգունս նորա ԲՏ²Ճ¹α խլացան փխ խցան 19—20 Դ շրթունք նորա չարաչար ԲՃ¹α չիք չարաչար 20 ՋէVՏ³ ջիղք | ճիլք ԸԽ չիք լուծան շիլք բազկաց նորա ԲԴԵԼՀՃ¹α յետս Բ կուրացան փխ կորացան 21 ԱՋէԹԼԿV կրունք Դժ կրընկունք ԸԽ կրունկ ԻՄՏ¹Տ² կրունկք 21—22 Դ փախստականք 22 ԱԳԴԹԻԿ չիք ի նմանէ ԳԴՀα ձեռասուն Թ ձեռասունք ԵԺՄ ծառայքն 22—23 Դ կայր կանգուն 23 Կ ի բերան փխ ի շրթունս 24 Գ խեղձամղձուկ Ի ի դժոխս դառնութեամբ։ Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա։

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեզօք Հայոց աշխարհին, ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ։

Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա։

---

1 Դ ոտնհարին նմա ԵԸԼԽԿՏ^{1}Տ^{2} ոտնհարէին Գ լինէին փխ եղէն Դ չիք և 2 ԱԹ ԳԵԸԺԼԽՀα հարուածովք Դ չիք ամենայն 3 ԳԴԵԺԻԼԽԿՀα կամէր Դ չիք մեզօք A մատնութեամբ փխ մեզօք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} աշխարհին Հայոց ԲՃ^{1}α Հայոց և Վրաց աշխարհին 4 A և ոչ գերեզմանի նորա տեղի երևեցաւ ի նմին Թ շուն 5 ԱԴՁԸԹԻԽVՏ^{3} Ճ$^{4,7-8,10;18,7-20,23-24,28}$ զգէշ փխ զէշ է զգիշեր քարշեցաւ (!) 6 ԲՃ^{1}α առաջի փխ ի մէջ Գ չմատեաւ 7 ԲԻα սրբոյ փխ սուրբ Դ սեղանոյ ԲԳԵԸԺԼԽՏ^{2}Ճ^{1}α յեկեղեցւոյ Գ

անարգեցին իր բոլոր սիրելիները, իսկ բոլոր թշնամիները չկշտացան նրան հասած այդ սաստիկ հարվածներից։

Եվ նա, որ հանցագործությամբ ուզում էր Հայոց աշխարհի վրա թագավոր լինել, նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց. որովհետև մեռավ ինչպես շուն և քարշ տրվեց ինչպես էշ։

Նրա անունը չհիշվեց սրբերի շարքում, և նա չհիշատակվեց եկեղեցում սուրբ սեղանի առաջ։ Ոչ մի չարիք չթողեց, որ չգործեր իր կյանքում, և մեծամեծ չարիքներից ոչ մեկն էլ չմնաց, որ նրա գլխով չանցներ մահվան ժամանակ։

Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի։

չիք յեկեղեցւոջն ԲՃ^{1}α (յեկեղեցւոյ) և ոչ եղէն նուէրք պատարագաց նորա ԳԿ զչարիս 8 ԴԸԽ որ է չիք և Բα չիք ինչ Բα չարեացն 9 Դ անցուցին ԲԻՃ^{1}α ընդ նմա ԲՃ^{1}α ի մահուանն իւրում Գ ի մահուանն 10 Հ չիք այս Ի առ ի կշտամբանս 11 ԲՃ^{1}α վասն մեղաց նորա 11—12 Բ իմասցի փխ գիտասցէ 12 ԱԹԻՃ^{4} զհետ արկցէ ԲՃ^{1}α զհետ նորա արձակեսցէ Դ արկանիցէ Հ զի մի՛ լիցի Դ և մի՛ ոք լիցի A-ն ավելացնում է՝ «աւարտեցան եւթն յեղանակքն»։

ԵՒԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ՆՈՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ

Արդ ի վեշտասաներորդի ամի տէրութեան նորին Թագաւորի՝ դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն Քուշանաց մեծաւ սրտմտութեամբ ի գործ պատերազմի։ Եւ գնացեալ ի Վրկանէ, և եկեալ յԱպար աշխարհ, նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել ի դղեկի քաղաքի ի Նիւշապուհ. և զերկուս յերանելի կապելոցն ընդ իւր խաղացոյց։ Ահ արկանէր ամենայն քրիստոնէութեան՝ ընդ որ անցանէր։

Իբրև զայն տեսանէր Հոն մի, որ էր յազգէ Թագաւորացն ի Խայլանդրաց աշխարհէն, Բէլ անուն, և ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայսն, և սիրով յօժարութեամբ ուսանէր ի նոցանէ ըզճշմարտութիւնն, և կամօք իւրովք նուաճեալ էր ընդ իշխանութեամբ Թագաւորին, և կարի յոյժ դառնանայր ի միտս իւր, յորժամ տեսանէր չարչարեալ զսուրբսն։ Եւ իբրև այլ ոչ ինչ էր ձեռնհաս, փախստական անկանէր առ արքայն Քուշանաց։ Երթայր և պատմէր նմա

Վերնագիր *ԱԳԴԵՁԷԸԹԺԻԼԽԾԿՀՎՏ^{1}Տ^{2}Տ^3 Արտաքոյ եւթն եղանակին ութերորդ՝ դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն (է եւթն Ը յեղանակի ԳԸԺԽԿՏ^2 պատերազմի ԼԾՀ եղանակին Ըև յեղանակի Ի եօթներորդ Գ չիք արտաքոյ եւթն յեղանակին Դժ քահանայիցն Ղեւոնդեանց ՁԷՎ քահանայից) Բ արտաքոյ վեց եղանակէն եւթներորդ՝ դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն Ղեւոնդեանց Ա Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ՝ վասն չարչարանաց սուրբ քահանայիցն և նահատակութեան Ճ^{14} եւթներորդ յեղանակ դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն և կատարումն վկայութեամբ ի տէր։* **Մնացած բոլոր ձեռագրերն ունեն վերնագիր՝** *«Վկայաբանութիւն սրբոյ Ղեւոնդեանցն»,* **ոմանք ավելացնում են՝** *«քահանայից»* **կամ սկզբից՝** *«բարեկենդանի երեքշաբաթ օրն»* **կամ** *«ի Հրատից ի Իէ յիշատակ սրբոց քահանայիցն Ղեւոնդեանց»։*

1 ԳԿ վեշտասաներորդ ԱԲԹ չիք ամի ԲԳα տէրութեանն Դ թագաւորին Բ թագաւորին Յազկերտի 2 ԲԺՃ^{1}α յերկիրն փխ *յաշխարհն 3 Դ ուրախութեամբ* փխ *սրտմտութեամբ Լ տրտմութեամբ (!) Բ Վրկանս α ի Վրկանայ 4 ԱՁԷԻՎՏ^3 Ճ$^{4-6,17-19,27-28}$ յԱպր աշխարհ 4 Բα և նովին Բ կապանօքն 4—5 է և սուրբ քահանայսն 5 ՁՎ չիք պահել ԴԵԸԼԽԿՀ քաղաքին 5—6 Գα երկուս ԵԺԽՀՏ^2 և յերանելի կապելոցն երկուս 6 ԲՃ^{1,5}α ահ արկանելով 7 ԱԲԳԴՁԻԼα քրիստոնէութեանն 8 ԲՃ^{1}α Եւ իբրև 8—9 ԱԷՁԻՎ Խալանդրաց ԴԼՏ^1 Թագաւորաց ի Խաղանդրացւոց 9 ԹՃ^{14} Խալանդարաց Բ Շալանդրացոց Ճ^{1}α Շաղանդրացւոց 10 ԳԵ քրիստոնեայս Ը քրիստոնայս ԵԺՀ և սիրով և α ընդունէր* փխ *ուսանէր Գ ի նոցանէն 10—11 Ե զճշմարտութիւն 11—12 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ընդ Թագաւորին իշխանութեամբն (ԵՀ իշխանութեամբ) 12 Ըև չիք յոյժ ԲՃ^{1}α ի սրտի իւրում* փխ *ի միտս իւր 13 Բ չարչարել Բ ձեռնհաս օգնել ԳԵԺԼՀՏ^{1}α այլ ինչ ոչ էր ձեռնհաս Լ չիք ինչ 14 ԽՎ արկանէր ԲՃ^1 երթեալ պատմէր նոցա α երթեալ պատմէր։*

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդ, նույն թագավորի իշխանության տասնվեցերորդ տարում[138] *նորից մեծ բարկությամբ վեր-կացավ գնաց Քուշանների աշխարհը պատերազմելու։ Եվ գնալով Վրկանից*[139]*, անցավ Ապար աշխարհը, հրամայեց նախարարներին ու քահանաներին նույն կապանքներով պահել Նյուշապուհ*[140] *քաղաքի դղյակում. իսկ երանելի կալյալներից երկուսին իր հետ տարավ։ Որտեղից որ անցնում էր, սարսափ էր տարածում բոլոր քրիստոնյաների վրա։*

Երբ այդ տեսնում էր Բել անունով մի հոն, որ Խայլանդուրների երկրի թագավորների ցեղից էր, և գաղտնի կերպով հակված էր քրիստոնյաների կողմը և սիրով ու հոժարությամբ սովորում էր նրանցից ճշմարտությունը, և իր կամքով հնազանդվել էր թագավորի իշխանությանը, անչափ դառնանում էր իր սրտում, երբ տեսնում էր սրբերին չարչարվելիս։ Եվ երբ էլ ուրիշ ոչ մի օգնություն չկարողացավ անել, փախավ-գնաց Քուշանների թագավորի մոտ։ Գնաց և պատմեց նրան այն բոլոր զամենայն անցս չարչարանացն, զոր անցոյց թագաւորն ընդ աշխարհն Հայոց. տեղեակ ևս առնէր զնա վասն խրամատութեանն պահակին Հոնաց. ցուցանէր և զերկպառակութիւն զօրացն, որ բազում ազգք բաժանեցան ի սիրոյ թագաւորին. ազդէր նմա և զտրտունջ զԱրեաց աշխարհին։

Զայս իբրև լուաւ թագաւորն Քուշանաց, ոչ ինչ երկմտութեամբ թերանայր յանէն, և ոչ կարծիք լրտեսի անկանէին ի միտս նորա։ Քանզի սակաւ մի յառաջագոյն նորա լուեալ էր, դարձեալ իբրև ստուգեաց ի Բեղայն զայն ևս, եթէ խաղացեալ գայ ի վերայ աշխարհին Քուշանաց, փութացաւ վաղվաղակի, զօր ժողովէր գունդ կազմէր, ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Զի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա, այլ ի վերջի թևոյն անկեալ՝ բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի։ Եւ այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լաշկարաւ վատախտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր, և ասպատակաւ ըզհետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի, և ինքն ողջանդամ անդրէն յերկիրն իւր դառնայր։

Եւ իբրև ետես թագաւորն, եթէ անարգանօք և վատթարութեամբ դարձեալ եմ ի պատերազմէս, զիջաւ փոքր մի ի հպարտութենէն, և գիտաց եթէ յերկպառակութենէ զօրացն եղեն չարիքն ամենայն։ Եւ առ մղձկել սրտին՝ չգիտէր թէ յո՛ թափէր զթոյնս դառնութեանն։ Իսկ մեծ հազարապետն յոյժ էր յերկիւղի, քանզի ինքն էր պատճառ ամենայն չարեացն որ գործեցան։

Սկսաւ բանս ի բերան դնել մոգպետին և մոգացն, որք մատու-

---

1 ԳԴԵα չարչարանաց 2 ԲԴα խրամատութեան ԳՀ հրամանատութեանն ԵԸԺԽ Ճ⁴,⁷,¹⁷,¹⁹ հրամանատութեան ԼԿ հրամանատրութեանն 3 ԵԺ Հոնայ փխ Հոնաց Բ ցուցանէր նմա և զերկպառութիւն Բ թէ փխ որ α չիք որ 4 ԲՃ¹ բարժանեցան, առէ α բաժանեցան, առէ V ի սրոյ փխ ի սիրոյ Դ ազգ առնէր նմա 5 ԲՃ¹α զարտաց փխ զԱրեաց ԸԽ Արեաց Լ զԱյրեաց 6 ԱԳԴԵԷԸԹԺԻԼԽԿՀS¹S² յաէր փխ լուաւ Բ Քուշանաց է Քուշան 7 Դ անկանէր ի միտս ԲՃ¹α միտս ԳԵԸԺԼԽԿՀS¹S²Ճ⁴,⁶,¹³,¹⁵,¹⁷ ի միտս 8 Բ և սակաւ մի ԲՃ¹α լուեալ էր զայն ԳԵԸԺԼԽԿՀS¹S² լուեալ էր և նորա Դ և նորա 9 ԱԳՁԷԹԻԿV ստուգեաց ևս Ա ի Բեղայ Դ ի Բեղան այն Ը չիք ի Բեղայն ԳԿ այն եթէ Բα չիք զայն ևս Դ չիք ևս ԱՁԷԹԻVS³ յայնմ եթէ փխ զայն ևս 10—11 α Քուշանաց, ելանէր նմա ընդ առաջ հզօր ձեռամբ Բ ժողովեալ α ժողովել α գունդ կազմել 11 ԳԵԼՀՃ¹⁷,²⁷α ելանէր։ Ե յառաջ 12 Դ պատերազմն ԲԵԼԽԿՀS¹S²Ճ¹ չիք այլ 12—13 ԱՁԷԹԻVS³ ի վերջին թևոյն ԲՃ¹,⁴,⁶ ի վերջին թևոյն վերայ Դ վերջին թևոյն հատեալ ԳԵԸԺԼԽԿՀS¹S²Ճ⁴,¹²—¹⁴α վերջի թևոյն անկեալ Ա ի վերջայս թևոցն 13 Գ ար-

չարչարանքները, որ թագավորը բերեց Հայոց աշխարհի գլխին. տեղեկացրեց նրան նաև, որ Հոնաց պահակը քանդված է. հայտնեց նաև թե երկպառակություն կա զորքի մեջ, թե շատ ազգեր արդեն հեռացել են թագավորի բարեկամությունից, հասկացրեց նրան նաև, թե Արյաց աշխարհը ևս տրտնջում է։

Այս որ լսեց Քուշանների թագավորը, ամենևին կասկած չտարավ այդ մարդու վրա և իր մտքում էլ նրան լրտես չհամարեց։ Որովհետև մի քիչ առաջ նա լսել էր [այդ բաները], դարձյալ երբ Բելից այն էլ ստուգեց, թե վեր է կացել գալիս է Քուշանների աշխարհի վրա, շտապեց շուտով զորք ժողովեց, գունդ կազմեց, որպեսզի հզոր զորությամբ դուրս գա նրա դեմ։ Եվ թեպետ դեմուդեմ պատերազմել չէր կարող նրա դեմ, բայց զորամասերի թևերի վերջապահների վրա հարձակվելով՝ մեծ հարվածներ էր հասցնում արքունի զորքերին։ Եվ այնպես նեղեց ու շփոթեցրեց նրանց, որ սակավաթիվ զորքով ձախորդության մեջ գցելով նրանց՝ ետ դարձրեց և ասպատակով հետևից ընկած՝ ավերեց արքունի բազմաթիվ գավառներ, իսկ այնտեղից ողջ-առողջ վերադարձավ իր երկիրը։

Երբ թագավորը տեսավ, որ անարգանքով ու խայտառակությամբ են վերադարձել այս պատերազմից, մի քիչ իջավ հպարտությունից և հասկացավ, որ այդ բոլոր չարիքներն առաջացան զորքերի երկպառակությունից։ Եվ մեծ սրտնեղությունից չգիտեր, թե ո՛ւմ վրա թափի այն դառնությունը։ Իսկ մեծ հազարապետը սաստիկ երկյուղի մեջ էր, որովհետև ինքն էր այն բոլոր չարիքների պատճառը, որ գործվեցին։

Սկսեց խոսք դնել մոգպետի և մոգերի բերանը, որոնք ներկայա-

կանէր փխ հասուցանէր ԲԿՃ¹α չիք ի վերայ 14 ԳԵԺԼՀ և այնպէս Հ նեղէր ԲՃ¹ շտապեալ նեղէր α այնպէս շտապէր ԵԺ անձուկ(!) Ա լաշքարաւ α լաշկարան Բ ղաշկարան ԳԴ ղաշկարաւ Հ լաշկարով 14—15 ԻԸԺԽՀ վատախտարակ (յուանցՙնամՙ մխաժողովիք մի կացեալ!) Թ վատախտարակ (յուանցՙնամՙ ընդ կրունկն) 15 ԲԾՃ¹α անդրէն ԲՃ¹α չիք և Ա և ինքն ասպատակաւ 16 Ա չիք ինքն Դ անդրէն ողջանդամ 17 ԳԿ յիւր երկիրն ԲԵԸԺԼԽՀα յերկիր 18 ԱԳԴՁԷԹԻԿVS³Ճ²⁷ չիք թագաւորն Ա և թագաւորն իբրև ետես 18—19 Դ վատթարանօք ԵԸԺԼԽՀS¹S² անարգեցաւ և վատթարութեամբ դարձաւ 19 ԲՃ¹α էր փխ եմ ԲԳԵԸԺԼՃ¹α ի պատերազմէն 20 Բ գիտաց ի միտս իւր α գիտաց թէ Դ յերկպառակութենէն 20—21 Դ չիք ամենայն 21 ԲԹα մղձկեալ Կ չիք թէ ԴԵԸԺԼԽՀS¹S²Ճ¹α թափեսցէ ԸՀ զթոյնս 21—22 ԲԴԵԻ դառնութեան 22 ԲՃ¹α յերկիւղի էր 23 ԲԳԵԺԻԼԽԾՀS¹S²Ճ¹α պատճառ ԱՁԷԹԻVS³Ա պատճառ ԱՁԷԹԻVS³ զոր գործեաց α չիք որ գործեցան 24 ԱԳԵԹԺԻԼԽՀ VS¹S²S³Ճ²⁷ սկսան ԲՃ¹α արկանել փխ դնել Բα մոգուցն V մարտուցեալ փխ մատուցեալ

ցեալ յանդիման աւէին զԹագաւորն. «Արքայ քաջ, մեք ի դենէ գիտեմք, զի ոչ ոք ի մարդկանէ կարէ կալ առաջի քոյոյ մեծի զօրութեանդ. այլ վասն քրիստոնէից, որ են ընդդէմ օրինաց մերոց, բարկացեալ են մեզ աստուածքն, զի մինչև ցայսօր կենդանի պահեցեր զնոսա»։ Եւ յիշեցուցանէին ևս նմա, եթէ ո՛րպէս նոքա ի բանտի անդ անիծանէին զքեզ։ Եւ բազում և այլ ևս հայհոյութիւնս խօսէին զսրբոցն, և զօր հանապազ զնոսա յաչաց հանէին, և զմիտս Թագաւորին ածէին ի ցասումն բարկութեան. մինչև փութացաւ վաղվաղակի հեղուլ զարիւն անմեղացն։

Ետ հրաման վասն երկուցն որ անդէն ի կարաւանին առ իւրն էին, Սամուէլ և Աբրահամ, զի գաղտ կորուսցեն զնոսա։ Իսկ որք էին ի դղեկ քաղաքին, հեռի էին ի կարաւանէն իբրև օթիւք հնգետասան։ Հրամայեաց համբարակապետին, որում անունն էր Դենշապուհ, զի յառաջ քան զնա երթիցէ ի քաղաքն, ուր էին սուրբ քահանայքն Տեառն, և չարաչար տանջանօք իշխեսցէ դատել և հարցանել, և սրով վախճանել։

Այլ զնոսա մոգպետին յառաջագոյն, որում յանձն արարեալ էր, բազում անգամ աւելի քան զհրամանն արքունի չարչարեալ էր. քանզի իշխան դենպետ էր Ապար աշխարհին, և առաւել ջերմագոյն էր ի մոգութեանն. քան զբազում գիտունս ևս տեղեակ էր զրադեշտական օրինացն։ Նա և զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեանն կարգին, Համակդեն անուն էր. գիտէր և զԱմպարտքաշն, ուսեալ էր և զԲոզպայիտն, ունէր և զՊահլաւիկն

---

1 ԲՃ^{27}Ա չիք յանդիման Դ Թագաւորին Թ դենէ (լուսանցքում՝ հաւատոյ) VS^{2}A ի դենէ իսկ 1—2 Ա գիտեաք փխ գիտեմք 2 ԱՁԷԹԻ մեծի քոյոյ Ա քում 2—3 ԲՃ^{1}Ա Թագաւորութեանդ ԴԺ տէրութեանդ փխ զօրութեանդ 3 ԲԳԴԵԼԽԱ քրիստոնէիցն Բ որ ընդդէմ օրինաց մերոց կան Հ որք 4 ԵԸԺԽԶ ընդ մեզ ՁV չաստուածքն 5 ԳԵԸԺԼԽԿԶS^1S^2 չիք ևս Բ եթէ փխ որպէս Ա թէ փխ որպէս ԲՃ^{1}Ա անդ որպէս ԱՁԷԹԻVS^{3}A չիք եթէ ԵԺԼԿԶ եթէ որպէս ԳԸԽS^2 թէ որպէս Ա որպիսի 6 ԴԻՃ^{1,13} անիծանեն A անիծէին ԴԼ չիք և ԲԸԽS^{2}Ճ^{1,6}Ա և բազում այլ ևս ԳԵԿԶS^1 և այլ ևս ԴԼ այլ ևս հայհոյութիւն ԱՁԷԹԻVS^{3}A չիք ևս 7 Լ չիք և (զօր) ԲՃ^{1}Ա զսիրտ փխ զմիտս 8 Դ փութալ 9 Զ անմեղաց 10 ՁԹ որ անդ էին ի Բ իւր Դ ընդ իւրն Ա չիք առ իւրն 11 Լ Աբրաամ Ա զՍամուէլ և զԱբրահամ ԴԱ որ 12 Ա չիք ի ԵԷ դեղեկ ԹՃ^{2}Ա դղեակ Զ տեղեկ(!) Բ ի հեռի Ա և հեռի ԲՃ^{1,8}Ա աւուրք փխ օթիւք 13 ԳԴԵԸԺԼԿԶS^1 ամբարակապետին ԽS^2 ամբարտակապետին 13—14 ԲՃ$^{5,11,14,25-27}$ ամբարապետին Դենշապհոյ Ա սպարապետին Դենշափհոյ ԳԴԻ անուն ԳԿ Դենշապուրհ 14—15 ԳԴԵԸԺԼԽԿ ԶS$^1S^2$ չիք ուր էին սուրբ քահանայքն Տեառն Ա չիք սուրբ Ա քահանայք 15—16 ԲՃ^{1}Ա զի չարչարեսցէ զնոսա, և եթէ ոչ հաւանեսցին՝ սրով վախճանել 16 Թ վճարել փխ վախճանել 17 որում յառաջագոյն ԵԸԺԼԽԶS$^1S^2$ չիք որում 17—18 Ա չիք «որում— անգամ» Բ չիք բազում անգամ 18 ԸԺS$^1S^2$ որ բազում ԺS$^1S^2$ չիք աւելի ԵԺԼԽԶS$^1S^2$ աւելի չարչարեալ էր Ա զհրամանն 19 Ա զի փխ քանզի Բ իշխանն ԵԸԺԽԶ դենպետ (լուսանցքում՝ գլխաւոր է(ր) Թ դենպետ (լուսանցքում՝ հաւատոյ գլուխ) ԱՁԷԹԻVS^3 Ապր Ի յԱպր Լ յԱպար ԳԵ աշխարհի 20 ԵԶ ի մոգութեան ԲԳԴԵԼԽS$^1S^2$ և փխ ևս ԳԴԵԼԽԶ S^1S^2 գիտունս և տեղեակս ԳԴ չիք էր 21 ԵԸԺԽԶ զրադեշտական (Զ արդեշական(!) (լուսանցքում՝ բուն բան կամ կարևոր ուխտ Ըն բուն բարի կամ կարևոր ուխտ) ԼԽS$^1S^2$ զրադեշական Թ զրադեշտական (լուսանցքում՝ բուն բանք) Ա պարծանքն 22 ԱԲԳԵԶ մոլորութեան ԶԱ կարգի ԵԸԺԽԶ համակդէն (լուսանցքում՝ բոլորից ուսուցիչ) Թ համակդեն (լուսանցքում՝ ամենահաւատ) 24 ԲՃ^{1}Ա զամբարտքաշն ԵԸԺԽ զամպարտքաշն (լուսանցքում՝ յաւամիտ Ե ավելացնում է՝ գերկու մեծամեծաց զգիտութիւն ունէր) ԶS^2 զամպարտքաշն (լուսանցքում՝ յուսամիտ) Թ զամպարտքաշն (լուսանցքում՝ չահակրօն) ԲԳ զԲոզպաիտն ԵԸԺԼԽԶS^1 չիք և զԲոզպայիտն, ունէր Թ Բոզպայիտն (լուսանցքում՝ մեղաց քաւարան) ԲՃ^1 զՊահղաւիկն Գ զՊահղովիկն Ե զՊահլօնիկն (լուսանցքում՝ կրօնք) ԵԸԺԼ ԽԶS^1 Պահլօնիկն Թ զՊալհաւիկն (լուսանցքում՝ մեծ գիտութիւն)։

նալով Թագավորին՝ ասացին նրան. «Քա՛ջ Թագավոր, մենք մեր կրոնից արդեն գիտենք, որ մարդկանցից ոչ ոք չի կարող կանգնել քո մեծ զորության դեմ. բայց աստվածները մեզ վրա բարկացել են քրիստոնյաների պատճառով, որոնք մեր կրոնին դեմ են, որովհետև մինչև այսօր նրանց կենդանի ես պահել»։ Եվ հիշեցնում էին նրան նաև, թե ինչպես նրանք բանտում անիծում էին քեզ։ Ուրիշ շատ հայհոյություններ էլ էին խոսում այն սրբերի մասին և ամեն օր աշխատում էին աչքից գցել տալ և Թագավորի միտքը գրգռում, զայրացնում էին, մինչև որ շտապեց շուտով Թափել այն անմեղների արյունը։

Հրաման տվեց այն երկուսի մասին, որ այնտեղ բանակում իր մոտ էին — Սամվելի և Աբրահամի մասին — որպեսզի գաղտնի կորցնեն նրանց։ Իսկ ովքեր քաղաքի դղյակում էին, բանակից տասնհինգ օթևանի չափ հեռու էին։ Հրամայեց համբարակապետին, որի անունը Դենշապուհ էր, որ իրենից առաջ գնա այն քաղաքը, ուր գտնվում էին Տիրոջ սուրբ քահանաները և իրավունք ունենա չարաչար տանջանքներով դատել և հարցուփորձ անել նրանց, և սրով սպանել։

Բայց դեռ առաջ՝ Թագավորի հրամանից շատ ավելի էր չարչարել նրանց այն մոգպետը, որին հանձնված էին նրանք. որովհետև նա Ապար աշխարհի դենպետ իշխանն էր և ավելի ջերմեռանդ էր մոգության մեջ. նաև շատ գիտուններից ավելի տեղյակ էր զրադաշտական կրոնին։ Այլև, որ մեծ պարծանք էին համարում իրենց մոլորության կարգի համեմատ, Համակդեն[141] անուն էին տալիս նրան. գիտեր նաև Ամպարտաքաշը[142], սովորել էր նաև Բոզպայիտը[143], ծանոթ էր նաև Պահլավիկին և զՊարսկադեննն։ Քանզի այս հինգ կեշտք են, որ զրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն. բայց արտաքոյ սոցա է միւս եւ այլ վեցերորդ, զոր Պեսմոգն կոչեն։

Թուէր իմն անձին, եթէ կատարեալ իցէ ամենայն գիտութեամբ. հայէր ընդ երանելիսն, եթէ առ տգիտութեան մոլորեալ են ի մեծ գիտութենէս մերմէ։ Եդ անոտի կարծիս ի մտի՝ անդադար չարչարել զնոսա, զի թերեւս առ չժուժալ մարմնոյն նեղութեանց՝ լուայց ի նոցանէ բանս ինչ ողոքանաց։ Վասն որոյ զատ և որոշեաց ի նախարարացն զքահանայսն, և հեռացոյց ի նոցանէ բացագոյն, և արկ զնոսա ի ներքնատուն մի գէճ խաւարչտին։ Եւ հրամայէր վեց առն երկու քաշկէնս ժամէ ի ժամ, և դորակ և կէս ջուր. և ամենևին ոչ զոք թողոյր մօտ երթալ ի դուրս բանտին։

Եւ իբրև աւուրս քառասուն այսու նեղէր զնոսա, և ոչ լուաւ ի նոցանէ բան թուլութեան, այլ իմն ած զմտաւ, եթէ ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ ի նոցանէ և ի ծածուկ տայցէ նոցա կերակուր։ Ինքն երթեալ կնքէր զերդ և զդուռն բանդին, և զկարգեալ ռոճիկն տայր յիւր հաւատարիմն տանել նոցա. և արար զայս աւուրս հնգետասան։

Սակայն և այնպէս երանելիքն ոչ ինչ չտապեալ տագնապեցան. այլ մեծաւ համբերութեամբ տանէին զճգնութիւնն, և անդադար սաղմոսիւք կային ի հանապազորդ պաշտամանն. և ի կատարել աղօթիցն զուարթագին գոհանալով՝ սակաւիկ մի հանգչէին ի գետնախշտի յանկողինսն։

Իսկ պահապանքն որ ի վերայ կապելոցն կային, յոյժ էին զար-

---

1 ԳԿ կէշք ԹԺՀ կեշտք (լուսանցքում՝ կրօնք) α զՊարսկադէնն ժ Պարսկադենն (լուսանցքում՝ զերկու մեծամեծաց զգիտութիւն ունէր) ԸԽՏ^2 գրեալ փխ զրաւեալ 1—2 Բ մոգութեանն այն ԴԵ մոգութեան α գրաւեալ ունի 2 Բ նոցա ԲՃ^{1}α այլ միւս եւ ԳԼՀՏ^1 և զմիւս եւ 3 ԲԴՁէԼV զորս ԱՁէԹԻVՏ^3 մոգպետն ԲԳԴՀα Պեսմոգն (ԲԴ Պեսմոգ) Ե զորս Պեսմոգն ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α ասեն 4 ԲԵԺԽα անձինն եթէ 5 ԲԳԴԵԸԼԽ ԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α և հայէր ԲՃ^{1}α յերանելիսն ԲՃ^{1}α առ յոյժ α ագիտութեանն 6 ԲԳԴԵԸԺԼԽԿ ՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α և անդադար լինէր (α լինի) ի չարչարել (Դ չիք ի) 7 ԲԵԸԹԺԼԽՀ առ ի ըն առ ի չչարժել փխ առ չժուժալ ԳԴԵԺՏ^{1}Տ^2 չժուժել α առ ի չժուժել ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α մարմնոցն α նեղութեան մարմնոցն յուրեանց 7—8 ԲԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 լուայց ինչ 8 ԲԳԴԸԺԼԽԿՀ չիք ինչ Հ ողոքանաց ԱՁէԹԻV եզատ (էզատ) α զատեալ որոշեաց ԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք և 8—9 Դ չիք նախարարացն 9 Բα զքահանայսն բացագոյն ԲՃ^{1}α չիք և հեռացոյց ի նոցանէ Դ զատեալ որոշեաց ի նոցանէ 10 ԳԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^2 էարկ Ա գէջ ԲԴՃ^{2}α դէջ և խաւարչտին ԲՃ^{1}α և հրամայեաց 10—11 α վեց առնն 11 ԲԳԴα երկուս քաշկէնս ԵԸԹԺԽՀ քաշկէնս (լուսանցքում՝ ձեռնայոշ) ԱՁէԹԻV ի ժամէ ի ժամ Կ դուրակ α դորակ մի և 12 ԲՃ^{1}α թողոյր զոք ի մօտ ԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ոչ թողոյր զոք Դ

ու Պարսկադենին[144]։ Որովհետև այս հինգ կեշտերն են, որոնց մեջ բովանդակված է մոգության ամբողջ կրոնը. բայց բացի սրանցից՝ մի ուրիշ վեցերորդն էլ կա, որին Պեսմոգ[145] են կոչում։

Ինքն իր մեջ կարծում էր, թե ամբողջ գիտությամբ ճոխացած է. երանելիների վրա այնպես էր նայում, թե նրանք տգիտության պատճառով մոլորված են մեր մեծ գիտությունից։ Մտքում մի անոտի հույս դրեց՝ անդադար չարչարել նրանց, որպեսզի մարմնի նեղություններին չդիմանալով՝ թերևս նրանցից որևէ աղաչական խոսք լսի։ Այս պատճառով էլ քահանաներին զատեց ու բաժանեց նախարարներից և հեռացրեց նրանցից, և գցեց մի խոնավ ու խավար ներքնատուն։ Եվ պատվիրեց վեց մարդու պահեպահ երկու գարեհաց տալ և դորակ ու կես ջուր, և ամենևին ոչ ոքի չէր թողնում մոտենալ բանտի դռներին։

Եվ երբ քառասուն օր սրանով տանջում էր նրանց և նրանցից թուլության խոսք չլսեց, ուրիշ բան անցավ մտքով, չլինի թե իր ծառաներից մեկը գաղտնի բան ստացած լինի նրանցից և ծածուկ կերակուր լինի տանելիս նրանց։ Ինքը գնաց, կնքեց բանտի երդիկն ու դուռը, և նշանակված պարենը իր հավատարիմ մարդկանց ձեռքով էր հասցնում նրանց. այս բանն արեց տասնհինգ օր։

Բայց և այնպես երանելիներն ամենևին իրարանցման ու տագնապի մեջ չընկան, այլ մեծ համբերությամբ կրում էին չարչարանքները և անդադար սաղմոսներ երգելով՝ կատարում էին ամենօրյա պաշտամունքը. և աղոթքը վերջացնելուց հետո զվարթ հոգով գոհանալով՝ մի քիչ պառկում-հանգստանում էին չոր գետնի վրա։

Իսկ կալանավորվածների վրա նշանակված պահապանները սաս-

ոչ թողու զոք Դ երթեալ 13 ԱԴՁԻVՏ^3 քառասուն ԼՏ^1 այսու Տ^{2}α այնու նեղութեամբ նեղէր 14 ԲՃ^{1}α բանս է չիք 14—15 «Բան թուլութեան—ի նոցանէ» ԳԴԵԸԹԺԻԼ ԽԿՀՏ^{1}Տ^2 էած Ա զմտաւ որպէս թէ 15 ժ ի նոցանէ ինչ Գ չիք ի (ծածուկ) α գաղտ ինչ ի նմանէ ի ծածուկ ԱԲԴՁէԹԻՍVՏ^3 տայցէ Հ չիք նոցա 16 ԳԴԵՁէԸԺԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α ինքնին ԲՃ^{1}α երթայր և Բα զերդս և զդուրս ԳԴԵԿՀՏ^{1}Տ^2 զդուրս Դ զերդս և 17 ԲԴԵԸ ԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^1 ռոճիկսն α հացիկն փխ ռոճիկն ԵԸԺԼԽՀ ցիւր ԳԿ ցիւր հաւատարիմս 16 Բ հաւատարիմ ծառայսն տանել ԲԳԿՃ^{2}α չիք նոցա ԵԸԼԽՀ չիք և 18 Դ զաւուրս 19 Դ սակայն երանելիքն և ոչ այնպէս ԲՃ^{1}α չիք ինչ 19—20 Դ չտապեալ տագնապէին, այլ մեծաւ ճգնութեամբ համբերէին 20 ԲՃ^{1}α զճգնութիւնս ԵՀ զճգնութիւն 21 ԲՃ^{2}α ի պաշտամանն հանապազորդ Դ հանապազորդ ի պաշտամանն ԳԵ պաշտաման ԸԼԽՏ^2 պաշտաման 21—22 ԱՁV կատարեալ փխ կատարել 22 Բα սակաւ մի ԱՁէԹԿV հանգչելով 23 ԲՃ^{1}α գետնատարած Դ ի գետնախիշտ է գետնաշխտի(!) ԲԳԵԺԽԿՀ Տ^{1}Տ^{2}Ճ^{1}α անկողինսն ԹՃ^{27} յանկողինս 24 Դ որ ի վերայ կային կապելոցն Դ զարմացեալք ԵԸԺԼԽՀ զարմացեալ էին։

մաշեալ ընդ առողջութիւն անհիւանդութեան նոցա, իբրև լսէին զանդադար հնչումն ձայնիցն։ Վասն այնորիկ պատմեցին յականջս մոգպետին և ասեն. «Ոչ են արքն այն լոկ առանց մեծի զօրութեան. զի եթէ պղնձի մարմինք ունէին նոքա, արդ լուծեալ էր ի գէճ խոնաւոյ անտի։ Բազում ժամանակք են մեր, զի յանձն է մեզ պահպանութիւն բանտիս. ոչ յիշեմք՝ եթէ ի կապելոց ոք ամսօրեայ ժամանակ կեցեալ է ի տանդ յայդմիկ։ Արդ մեք ասեմք քեզ. եթէ առեր հրաման վասն մահու նոցա և սպանանես, դու գիտես. ապա թէ ոչ, պահել յանձն արարաւ քեզ և ոչ դատել զնոսա, չարաչար վտանգ է կապելոցն։ Նա և մեք զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնս»։

Եւ իբրև զայս լուաւ մոգպետն, յարուցեալ ինքնին երթայր ի մէջ գիշերին յերդ բանտին։ Եւ հայեցեալ ի ներքս ընդ մութ գիշերոյն, այն ինչ լինէր նոցա ի պաշտամանէն հանգչել, և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոցն, զի իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր։ Զահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր. «Զի՞նչ է այս մեծ սքանչելիքս. աստուածք մեր ուրեմն եկեալ իջեալ են ի բանտս, և նոցա փառաւորութիւնն լուցեալ բորբոքի։ Եւ եթէ նոքա առ սոսա ոչ մերձենան, մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ զգենուլ։ Իմ այսպէս լուեալ էր վասն կեշտիս այսորիկ, եթէ առ յոյժ յիմարութեանն մոլորեալ են, և ստութեամբ կերպարանին յաչս օտար մարդկան. թերևս և այս տեսիլ այնպէս ինչ երևեցաւ ինձ»։

Եւ ոչ կարէր համօրէն կալ ի վերայ իրացն երևման։ Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր, դարձեալ սուրբքն յիւրաքանչիւր

---

1 Գ անհիւանդութեանն S^{2}Ճ^{2}α անհիւանդութիւն առողջութեան   2 Ե անդադար Բ չիք զանդադար α ձայնից նոցա Խ չիք պատմեցին   3 ԲՃ^1 արքն այնոքիկ ոչ լոկ α արքն այնոքիկ ոչ առանց մեծի զօրութեան են Ժ այնոքիկ Բ զօրութեան են   4 ԳՁ պղնծի ԲՃ^{1}α մարմինս ԳԵԸԿՀ մարմին ԲԻα գէջ   4—5 Բ խոնաւու Դ խոնաւութենէ   5 Թ չիք մեր α ժամանակ է մեր Ի յանձնեալ Լ   6 ԵԸԺԼԽՀS^{1}S^2 յիշեցաք   6—7 ԲS^{2}Ճ^{1}α ժամանակ մի ԳԴԵԸԺԾԿՀS^1 ամսօրեայ մի ժամանակ   7 α կացեալ Լ Ա կեցեալ իցէ Էα ի բանդ փխ ի տանդ ԲՃ^{1}α չիք մեք   8 ԲԳԴԻԸԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{1}α վասն մահու նոցա Ա չիք վասն α չիք և սպանանել Դ սպանանել Գ գիտիցես   8—9 ԲՃ^1 ապա եթէ պահել յանձին Թ եթէ ոչ ԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2}α ապա եթէ պահել   9 ԲՃ^{1}α արարեալ է քեզ   10 ԲՃ^{1}α զարհուրեալ   11 Դ զայսպիսի Ա զոյնպիսի α այսպիսի Լ չիք «և յոյժ—տեսանեմք» Vα նեղութիւնսն   12 ԵԺԼԽՀ չիք Եւ ԲԷԸԼԽՀα լուաւ զայս   13 ԲԴՃ^{1}α յերդ (Դ յերդս) բանդին ի մէջ գիշերին Գ գիշերի Դ ի ներս Ի մութն   13—14 ԲՃ^{1}α գիշերին   14 S^1 լսէր փխ լինէր Դ ի պաշտամանէն է պաշտմանէն Բ հանգչել Թ

տիկ զարմացել էին նրանց չհիվանդանալու և առողջության վրա, երբ լսում էին նրանց ձայների անդադար հնչումը։ Այդ պատճառով ծածուկ պատմեցին մոգպետին և ասացին. «Այդ մարդիկ առանց մեծ զորության չեն. որովհետև եթե պղնձի մարմիններ էլ ունենային նրանք, այնտեղի խոնավությունից արդեն քայքայված պիտի լինեին։ Շատ ժամանակ է, որ այս բանտի պահպանությունը մեզ է հանձնված. չենք հիշում, որ կապվածներից որևէ մեկը մի ամիս ժամանակ ապրած լինի այդ տան մեջ։ Արդ՝ մենք ասում ենք քեզ. եթե նրանց վերաբերմամբ մահվան հրաման ես ստացել և կսպանես. դու գիտես. իսկ եթե ոչ՝ քեզ հանձնարարված է պահել նրանց և ոչ թե պատժել, ապա կալանավորները սաստիկ վտանգի մեջ են։ Մենք ինքներս էլ ահուդողի մեջ ենք և խիստ վախենում ենք, երբ տեսնում ենք այնպիսի անտանելի նեղությունները»։

Երբ այս լսեց մոգպետը, կեսգիշերին ինքը վեր կացավ, գնաց բանտի երդիկը։ Եվ գիշերային մթության մեջ ներս նայելով այն միջոցին, երբ նրանք պաշտամունքից հանգչում էին, տեսավ, որ յուրաքանչյուր կապվածի անձը բորբոքվում էր անշեջ վառված կանթեղի նման։ Մեծ սարսափի մեջ ընկավ և ասում էր իր մտքում. «Ի՞նչ է այս մեծ հրաշքը. ուրեմն մեր աստվածները եկել-իջել են այս բանտը, և նրանց փառավորությունն է վառված-բորբոքվում։ Եվ եթե նրանք սրանց չմոտենան, անկարելի է, որ սոսկական մարդը այսպիսի պայծառ լույսով լուսավորվի։ Ես այսպես էի լսել այս կրոնի մասին, թե սաստիկ հիմարության պատճառով մոլորված են և սուտ կերպարանքներ են ընդունում օտար մարդկանց աչքում. գուցե այս տեսիլն էլ այդպիսի մի բան էր, որ երևաց ինձ»։

Եվ չէր կարողանում առհասարակ հասկանալ այդ տեսիլքը։ Մինչդեռ այսպիսի մտածմունքի մեջ էր, սրբերը նորից ամեն մեկն իր գետնան-

---

հանգչիլ   15 Հ ի յիւրաքանչիւր ԲՃ^{1}α ի կապելոցն ԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 չիք զի ԸԼԽ իբր ԲԴՃ^{1}α զկանթեղս Կ անշիջելի   16 ԲՃ^{1}α բորբոքէին ԹԻ բորբոքիւր ԲԳԴԵԿՀα ասէ   17 Բ զինչ են ԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 զինչ իցեն α չիք զի՞նչ է այս մեծ սքանչելիքս ԳԴԿ սքանչելիք ԱԳԴԵՀα աստուածքն   18 ԲԵ փառաւորութիւն է ցուցեալ(!)   19 ԳԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 ի սոսա Կ մերձեցան ԲՃ^1 անհնար է   19—20 ԲԳα զայս   20 ԴՃ^1 չիք լուսոյ Լ զգենուլ է չիք իմ   20—21 Դ չիք վասն կեշտիս այսորիկ   21 ԵԸԹԺԽՀ կեշտիս (լուսանցքում՝ կրօնիս) ԱԲԳԴԵԻՀα յիմարութեան   22 ԴԷԸԽ ստուգութեամբ փխ ստութեամբ ԲԳԴԵԸԺԼԿՀS^{1}S^{2}α չիք ի ԱՁԷԹԻVS^{3}Ա ի յաչս Ճ^{1}α չիք օտար ԲԳԸԽ չիք և   22—23 ԲՃ^{1}α տեսիլս ԵԺԼS^1 և ինձ է չիք ինձ Հ տեսիլ և այնպէս ինչ երևեցաւ և ինձ   24 Դ երևմանն   24—25 ԷԸԼԽ մինչդեռ նա ԱԲԳԴԵԹԺԻԿՀS^{1}S^2 և մինչդեռ նա յայսր (Բ յայսպիսի ԹՀ այսր Ի այսմ Դ յայսմ) մտաց ԳԵԺՀS^{1}S^2 ի մտաց α մինչդեռ նա յայս իրաց խորհրդի էր։

խշտեկացն կանգնեցան կացին ի սովորական պաշտամանն։ Յայնժամ ճշմարտեալ գիտաց մոգպետն. եթէ ոչ այլ ընդ այլոյ տեսանէր՝ որ երևեցաւն նմա, այլ ի նոցունց յանձանց փայլէր լուսաւորութիւնն։ Յայնժամ կրկին անգամ զահի հարաւ և ասէ. «Ո՞ւմ ի կապելոցն եղեւ այսպիսի յայտնութիւն. ես և ոչ զմի ոք ոչ գիտեմ, և ոչ լուեալ է իմ ի հարցն յառաջնոց»։ Եւ քանզի անհնարին շարժեցաւ ի մեծ սքանչելեացն, և դողացին ամենայն մարմինքն, և թմբրեալ կիսամեռ լինէր ի վերայ տանեացն մինչև յառաւօտն. և ի ծագել լուսոյն իբրև զբազմօրեայ հիւանդ յարուցեալ երթայր ի վանս իւր, այլ և ոչ ումեք իշխեաց ամենևին պատմել զոր ինչ ետեսն։

Կոչեաց առ իւր զպահապանսն և ասէ ցնոսա. «Երթայք հանէք զկապեալսն ի վերնատուն մի ցամաքագոյն, և անդ պահեցէք զնոսա զգուշութեամբ, որպէս և ասացէքն»։ Մի ոմն ի դահճաց անտի, իբրև լուաւ զհրամանս մոգպետին, փութով ընթացեալ երթայր, իբրև մեծ իմն աւետիս տանէր նոցա։ «Հրամայեաց ձեզ, ասէ, ելանել ի ցամաք վերնատուն մի. արիք վաղվաղակի, և մի՛ հեղգայք, քանզի և մեք իսկ պաղատեցաք վասն ձերոյ տառապանացդ»։

Իսկ սուրբն Յովսէփ հեզաբար սկսաւ խօսել ընդ դահճին և ասէ. «Երթ և ասա ցյիմար առաջնորդն ձեր. չէ լուեալ քո վասն հանդերձեալ գալստեան Տեառն մերոյ և կամ վասն հրաշակերտ շինուածոցն, որք մեզ կան պահին ի սկզբանէ պատրաստութեամբ, վասն որոյ դիւրաւ համբերեմք մեծի նեղութեանս առ սէր այնր յուսոյ՝ զոր տեսանեմք։ Դու բարւոք արարեր, զի արգահատեցեր մեծի նեղութեանս մարմնոյ. այլ ոչինչ եմք ձանձրացեալք իբրև զանաս-

---

1 ԱԴα *խշտեկաց* Բ *խեշտակաց* ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 *խշտեաց* (ԵԸԺՀ *լուսանցքում՝ դադարեաց*) ԳԴԵԸԿՀՏ^{1}Տ^2 *և կացին* ԺԼԽ *կանգնեցան և կացին* Դ *պաշտամունսն* ԸԽՏ^{1}Տ^2 *պաշտմանն* 2 Ը *ճշտեալ* 2—3 ԲՃ^{1}α *ընդ այլոյ է տեսիլս* (α *տեսիլն*) *որ երևեցաւ նմա* Դ *է տեսիլն* **փխ** *տեսանէր* 3 ԱԲԴԹα *երևեցաւ* Ի **չիք** *նմա* Բ *անձանցն* ԴԹ *անձանց* Թ *փայլիւր* 3—4 Ե *լուսաւորութիւն* 5 ԱԲα *կապելոց* ԴԹԻ *ի կապելոց* Ե *այսպիսի յայտնութիւն եղև* Բα **չիք** *ոչ* (*զմի*) ԴԺ *զոք* 6 Բ *էր* ԲԵԻ *առաջնոց* ԴԸα *առաջնոցն* ԳԴԿ **չիք** *և* 7 Բα *դողացան* **փխ** *և դողացին* ԳԵԷԸԼԿՀՏ^{1}Տ^2 *դողային* Դ *դողացեալ* ԲՃ^{1}α *մարմինք նորա* 8 Հ *թմրեալ* ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^1 *ցառաւօտն* 9 ԲՋԷԺԻԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α *ընդ ծագել* Ա *և ընդ ծագեալ լուսոյն* Դ *արևուն* **փխ** *լուսոյն* 9—10 ԲՃ^{1}α *ի վանս իւր երթայր* Դ *ի տուն* **փխ** *ի վանս* Հ *ի վանսն իւր* 10 ԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 *և այլ ոչ ումեք* ԱՋԷԹԻVՏ^{3}A *այլև ոչ ումեք* 10—11 ԲՃ^{1}α *պատմել ամենևին զտեսիլն* ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 **չիք** *ինչ* 12 ԲՃ^{1}α *ինքն* **փխ** *իւր* Դ *երթեալ* 13 ԲՃ^1 *ցամաքային նոյնպէս և անդ* ԴՃ^{6,11}α *ցամաք* 14 ԲՃ^1 *ասացաքն* Դ **չիք** *և* Դ *ասացէքդ* Թ *ասացիքն* Ի *ասացիք* Թ *և մի ոմն* 15 ԳԻԿ *զհրաման* ԵԺ *զհրամանան* 15—16 α

կողնից վեր կացավ և սկսեցին սովորական պաշտամունքը։ Այն ժամանակ մոգպետն ստուգեց և իմացավ, որ իրեն երևացածը մի խառնափնթոր տեսիլ չէր, այլ հենց նրանց անձերից էր բխում լուսավորությունը։ Այն ժամանակ նորից սարսափեց և ասաց. «Կալանավորներից ո՞ւմ վրա է տեսնվել այսպիսի հայտնություն. ես ոչ մեկն էլ չգիտեմ և ո՛չ էլ լսել եմ նախնիքներից»։ Եվ որովհետև չափազանց հուզվեց այն մեծ հրաշքից, ուստի ամբողջ մարմնով դողում էր և մինչև առավոտ թմրած ու կիսամեռ մնաց [բանտի] կտուրի վրա և լույսը բացվելու ժամանակ ինչպես մի երկար ժամանակվա հիվանդ վեր կացավ-գնաց իր բնակարանը, բայց իր տեսածը ամենևին չհամարձակվեց պատմել որևէ մեկին։

Իր մոտ կանչեց պահապաններին և ասաց նրանց. «Գնացեք, կապվածներին տեղափոխեցեք մի ավելի չոր վերնատուն, և այնտեղ նրանց զգուշությամբ պահեցեք, ինչպես որ ասացիք»։ Այն դահիճներից մեկը, երբ լսեց մոգպետի հրամանը, շտապեց գնաց՝ իբրև մի մեծ ավետիս տալու նրանց. «Հրամայեց, ասում է, որ դուք տեղափոխվեք մի ավելի չոր վերնատուն. դե՛հ, շուտ եկեք, և մի՛ ուշանաք. որովհետև մենք էլ պաղատեցինք՝ ձեզ տառապանքներից [ազատելու] համար»։

Իսկ սուրբ Հովսեփն սկսեց մեղմաբար խոսել դահճի հետ և ասաց. «Գնա՛ և ասա՛ ձեր անխելք առաջնորդին. դու չե՞ս լսել մեր Տիրոջ ապագա գալստյան մասին և կամ այն հրաշակերտ շինվածքների մասին, որոնք սկզբից պատրաստ պահված են մեզ համար. այդ պատճառով էլ հեշտությամբ ենք դիմանում այս մեծ նեղությանը այն հույսի սիրո համար, որ տեսնում ենք։ Դու լավ արիր, որ խղճացիր [մեր] այս մարմնավոր նեղության համար. բայց մենք ամենևին չենք ձանձրացել իբրև մի անաստված մարդ, որի մտքում ոչ մի այլ հույս չկա, քան այն, ինչ որ

փութացեալ երթայր իբրև թէ 16 ԲՃ^{1}α *տանելով* Դ *տալով* **փխ** *տանէր* 16—17 ԲՃ^{2}α *ի վերնատուն մի ցամաք ելանել* 17 Ի *ի վերնատուն մի* 18 Բ **չիք** *և* (*մեք*) ԲՃ^{1}α *նեղութեանդ* **փխ** *տառապանացդ* Թ *տառապանաց* 19 ԲԴՃ^{1}α *սկսաւ հեզաբար* Ի *խօսել* α *խօսել հեզաբար* ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α *ընդ դահճին* (Լ *դահիճին*) ԱՋԷԹԻVՏ^{3}A *ընդ դահճապետին* 19—20 ԲԳԵԺ **չիք** *և* (*ասա*) 20 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 *Երթ ասա դու* α *երթ ասա յիմար առաջնորդին ձեր* Բ *ընդ յիմար* Դ *ցիմար* ԲՃ$_1$α *ձեր* **փխ** *քո* 21 Բ **չիք** *հանդերձեալ* ԲՃ^{1}α *Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի* VՏ^{3}A *վասն մերոյ հրաշակերտ* 21—22 α *և կամ զհրաշակերտ շինուածոցն, որ ի նմանէ մեզ կան և պահին* 22 Դ *շինուածոյն* ԲԴ *որ* Բ *մեզն, ասէ, կան* ԴԻ *կան և պահին* ԲԳԴՋԷԹԻԿVՏ^{3}Ճ^{1}α *պատրաստութիւնքն* 23 ԲԵԺ *վասն որոյ և* ԸԽՀ *և դիւրեաւ* Ա *նեղութիւնս* ՋԷԻ *նեղութեանցս* 23—24 Բ *յուսոյն* Դ *այն յուսոյն* 24 α *բարիոք* 23—25 V **չիք** *«առ սէր— մարմնոյ»* 24—25 ԱՋԷԹԻԿՃ^{1}α *արգահատեցեր մարմնաւոր նեղութեանս* ԱԳԴՃ^{1}α **չիք** *մեծի* 25 Դ *վասն մարմնաւոր նեղութեանցս* ԲԳ *մարմնաւոր նեղութեանցս* ԲՃ^{1}α *այլ մեք ոչ եմք* ԱԳԴԵԿα *ձանձրացեալ* Հ *թանձրացեալ*(!) Ջ *զանատուածք*։

տուած ոք, որ չիք այլ ինչ յոյս ի միտս նորա քան որ երևինն։ Այլ մեք առ սէր Քրիստոսին մերոյ՝ ընդ այս յոյժ եմք խնդացեալ, և կատարեալ պարգևս զսա իսկ համարիմք, զի ժամանակեայ վըշտօքս զանժամանակեան երանութիւնսն ժառանգեսցուք։

«Եթէ շինուածոց իցեմք ցանկացեալք, ունիմք շինուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչ երևին ձեր արքունիքդ առ նոքօք։ Նոյնպէս և հանդերձից և փառաց և անախտ կերակրոց. զոր եթէ ոք կամեսցի ասել ձեզ, չհանդարտէ լսել ձեր տկարութիւնդ. վասն զի կուրութեան հնութեամբն չտեսանէք և ոչ լսէք և ոչ իմանայք, յայն սակս զմեզ զուր և անիրաւ և առանց յանցանաց անողորմն դատիք։ Այլ մեր թագաւորն առատ է և բարերար, և բաց է դուռն արքայութեան նորա. եթէ կամեսցի ոք դիմել՝ դիմեսցէ համարձակ. ի դարձելոց յապաշխարութիւն չնախանձի և ոչ ընդ ումեք երբէք։

«Բայց վասն դիւրութեանս՝ որ դու հրամայեցեր ասել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում չանկանել մեզ ի ձեռս թագաւորիդ. որպէս և այլքն՝ զի ապրեցան յայսպիսի փորձանաց. այլ որպէս կամօք և յօժարութեամբ եկաք, իբրև թէ գիտէաք զվիշտս վտանգիս, ոչ ինչ զանգիտեցաք յայսպիսի ճգանց, սոյնպէս և կամիմք՝ զի և այլ ևս ծանրացուցես ի վերայ մեր, մինչև քո չարութիւն կամացդ յագեսցի ի մեզ։ Զի թէ Աստուածն մեր, որ է արարիչ երկնի և երկրի և ամենայն երևելեաց և աներևութից, և առ սէր իւրոյ բարերարութեանն խոնարհեցաւ առ ազգս մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և անց ընդ ամենայն հանդէս առա-

---

1 α չիք այլ ԵԸԺԽՀS^1S^2 ինչ այլ ԳԵԸԺԼԽՀS^1S^2 ի միտ ԳԴ երևին   2 ՁԷԽV սէրն Ե ընդ յայս Բα յոյժ խնդացեալք   3 Ա կատարել ԾS^1 զայս իսկ Դ չիք իսկ ԲՃ^1 զի առժամանակեան ԳԸԺԼԽԿS^1S^2 ժամանակեան α ժամանակեա   3—4 ԵՀ չիք ժամանակեայ վշտօքս ԲԸԺԼԽԾՀS^1S^2 զանժամանակեան ԱԳՁԻԾԿS^3A զանժամանակ Գ ժամանակեան վիշտքս զանժամանակեայ Ե անժամանակեան ԹՃ^{1}α զանժամանակեայ է զժամանակ(!) V զանժամանեակ   4 Ե երանութիւնս α երանութիւնն   5 ԲԳԵԸԽԿՀ ցանկացեալ Դ շինուած   5—6 ԲՃ^{1}α չիք յերկինս   6 Ըխ չիք որ Դ ոչ իսկ ԲԳԵԸԺԼԽԿS^1S^2Ճ^{1}α ոչինչ երևին Դ արքունիքս   7 Դ չիք անախտ   8 ԲՃ^{1}α կամեսցի ոք առ ձեզ ասել ԱՁԷԹԻ կամեսցի ոք ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 կամիցի ոք Դ ասել առ ձեզ   8—9 Ե տկարութեանդ α ձեր տկարութիւնդ լսել   9 ԲՃ^{1}α հնութեամբ կուրութեամբ ԳԴԸԺԼԽԿS^1S^2 հնութեան (Գ խնութեան) կուրութեամբն ԵՀ հնութեան կուրութեան Ի հաւանութեամբ փխ հնութեամբ S^2 ոչ տեսանէք   9—10 α ոչ լսէք, և ոչ տեսանէք և ոչ իմանայք   10 ԳԿ չիք ոչ ԲՃ^{1}α այնր աղագաւ ԳS^2Ճ$^{17-19}$ յայն աղագս Դ աղագս ԵԸԺԼԽԿՀS^1 յայն յաղագս   10—11 ԲՃ^{1}α ի զուր, և անողորմ, և անիրաւ առանց յանցանաց իւիք դատէք (α դատիք)   11 ԳS^2 անողորմ ԹԻ անողորմ դատէք ԳԴԵԸԺԿՀ չիք և ԲՃ^{1}α

երևում է։ Բայց մենք մեր Քրիստոսի սիրո համար շատ ուրախ ենք այս բանի վրա. և այս նույնիսկ կատարյալ պարգև ենք համարում, որովհետև այս ժամանակավոր վշտերի շնորհիվ անժամանակ երանություններ ժառանգենք։

«Եթե շինվածքների ցանկացող լինեինք, երկնքում առանց մարմնավոր ձեռագործի շինվածքներ ունենք, որոնց մոտ ձեր արքայական պալատները [բան] չեն երևա։ Նույնպես էլ զգեստների, փառքի և անախտ կերակուրների վերաբերմամբ. այս բանը եթե մեկը կամենա ձեզ ասել, ձեր տկարամտությունը չի կարողանա լսել. որովհետև վաղեմի կուրությունից չեք տեսնում և չեք լսում ու չեք հասկանում, այդ պատճառով էլ մեզ պատժում եք զուր ու անիրավ և անողորմ՝ առանց հանցանքի։ Բայց մեր թագավորն առատաձեռն է և բարերար, և նրա արքայության դուռը բաց է. եթե մեկը կամենա դիմել այնտեղ, թող համարձակ դիմի. դեպի ապաշխարություն դարձողներից և ոչ մեկին երբեք չար աչքով չի նայում։

«Բայց այն դյուրությունների համար, որ դու հրամայեցիր տալ մեզ, մենք մեր աշխարհում հնարավորություն ունեինք քո թագավորի ձեռքը չընկնելու, ինչպես և ուրիշները, որոնք ազատվեցին այսպիսի փորձանքներից. բայց ինչպես որ հոժարակամ եկանք, կարծես գիտենալով այս վիշտն ու վտանգները, և բոլորովին չվախեցանք այսպիսի նեղություններից, այդպես էլ կամենում ենք, որ է՛լ ավելի ծանրացնես դրանք մեզ վրա, մինչև որ քո չար կամքը հագենա մեր վերաբերմամբ։ Որովհետև եթե մեր աստվածը, որ երկնքի ու երկրի և բոլոր երևացող ու աներևույթ բաների արարիչն է, իր բարերարության ու սիրո պատճառով խոնարհվեց-իջավ մարդկային ազգի մոտ և չարչարելի մարմին հագավ,

---

առատ և բարերար է   12 ԲՃ^{1}α ողորմութեան փխ արքայութեան ԳԵԸԺԼԽԿՀS^2 եթէ որ կամի Ի չիք որ Խ չիք դիմել Ա դիմեալ ԵԺՀS^1 դիմեսցի   13 Գ համարձակութեամբ S^2 համապազ փխ համարձակ α չիք ի Դ չիք և ոչ   14 Ա ումեք փխ ումեք ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α չիք երբէք   15 Դ այլ փխ բայց ԲՃ^{1}α զոր փխ որ ԵԸԺԼԽՀS^1S^2 մեզ ասել S^2 ետ մեզ   16 Դ անդէն α չիք անդրէն Բ ի յաշխարհին Ի չանկանիլ Հ չգտանել փխ չանկանել   16—17 ԲԳ ի ձեռն α չանկանել ի ձեռս թագաւորին   17 Գ թագաւորին ԵԸԺԼԽS^1S^2 որ փխ զի ԲԸՃ^{1}α յայնպիսի փխ յայսպիսի Ի այսպիսի   18 Բ չիք այլ ԱԳԴԹԻԽ չիք և է իբր թէ ԲԳԴԵԿՀՃ^1 չիք թէ   18—19 ԵԸԺԼԽԿՀS^1S^2 գիտացաք զվիշտ α իբրև գիտէաք զվիշտս վտանգի   19 Բ վտանգի Ճ զանգիտէաք ԵՀ զանգիտացաք ԲՃ^{1}α ճգնեցս S^1 ճգնեաց Բ նոյնպէս   20 ԲԳԴԵԼα չիք և (կամիմք) ԲԴ չիք և (այլ ևս)   21 ԲԳԴԵԸԺԼԽԿα եթէ Ե չիք է   21—22 ԵԺՀ որ արարիչ է   22—23 ԲՃ^{1}α չիք և (առ սէր)   23 ԵՀα բարերարութեան Բα մարդկութեանս փխ մարդկան   24 Դ զգեցաւ ԹԻՀ անց ԲՃ^{1}α չիք ամենայն Ժ հանդէս (լուսանցում՝ ընտրութիւն)։

քինութեան, և կատարեաց զամենայն գործ անտեսութեան ի կամս իւր, մատնեցաւ ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եդաւ ի գերեզմանի, և զօրութեամբ աստուածութեանն իւրոյ յարուցեալ երեւեցաւ աշակերտացն և այլոց բազմաց, և վերացաւ առ Հայր իւր յերկինս, և նստաւ ընդ աջմէ հայրենի աթոռոյն, և շնորհեաց մեզ զօրութիւն երկնաւոր, զի ըստ նորա անմահութեանն՝ և մեք մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն, և նա ոչ ևս իբրև զմահկանացու համարի զմեր մահն, այլ իբրև անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց, արդ փոքր համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին, զոր էարկ առ ազգս մարդկան»։

Իբրև լուաւ զայս ամենայն բանս մոգպետն ի դահճապետէ անտի, խռովեցաւ, պղտորեցաւ ի միտս իւր, և հատաւ քուն յաչաց նորա զբազում գիշերս։ Իսկ յաւուր միոջ յերեկոյն պահուն յարուցեալ երթայր առ նոսա միայնիկ մնջիկ, և ոչ զոք առնոյր ընդ իւր ի սպասաւորացն։ Եւ իբրև եհաս ի դուրս տանն, հայէր ընդ ծակ մի ի ներքս և տեսանէր ըստ առաջին տեսլեանն, բայց նոքա ի քուն կային խաղաղիկ։ Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր պարսկերէն։ Եկն ի դուրս և հարցանէր. «Ո՞վ ես դու։ —Ես ինքն իսկ եմ, ասէ. կամիմ ի ներքս մտանել և տեսանել զձեզ»։

Եւ իբրև եմուտ ի մէջ սրբոցն, ոչ ևս երեւէր նմա այլ նշանն. և պատմեաց նոցա զերկիցս երևումն սքանչելեացն։ Ետ պատասխանի Ղևոնդ երէցն և ասէ. «Աստուած, որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ և ծագեաց և լուսաւորեաց իմաստութեամբ զաներևոյթ արարածս, նոյն զօրութիւն և այսօր ծագեաց ի խաւարեալ միտս քո,

---

1 Բ զգործ անօրէնութեան ԴԸա գործս Գ անտեսութեանն ա անօրէնութեան 1—3 ԲՃ^{1}ա և կամաւ իւրով մատնեցաւ ՁէV ի ձեռն Դ խաչահանուաց Խ մահուամբ մեռաւ ԴՀ չիք և (եդաւ) 3 Ե չիք և (զօրութեամբ) ԴԵա աստուածութեան 4 Խ աշակերտացն իւրոց ԲԳԴԵԺԽԿՀS^2ա չիք և (վերացաւ) 4—5 Բա հայր ի յերկինս ԲԴԵԼԽՀա չիք իւր 5 Դա աթոռոյն հայրենի 6 ԲՃ^{1}ա զզօրութիւն ԲԸԺԼS^1S^2ա անմահ բնութեանն ԵԽՀ անմահ բնութեան Բա չիք մեք ԱՋէV մերովք 7 Դ չիք մահկանացու Բա չարչարակիցք Ի լինել ԲՃ^{1}ա նորա անմահ 7—8 Գ աստուածութեան նորա Դ մեծութեան նորա Ե աստուածութեան ԸԺԼԽS^1S^2 անմահ աստուածութեանն փխ անմահ մեծութեան 8 Կ չիք նա Բա չիք ևս ԳԵԸԺԽՀ զմահկանացուս ա մահկանացուի Դ մահս ԲՃ^{1}ա զմահս մեր 9 Խ յանմահից A անմահակից Հ մատուցանէ փխ հատուցանէ 10 Բա չիք մեք ԸԽ մեզ փխ մեք Բ զչարչարանքս Գ զչարչարանաս Դ առ միոյ փոխարէնին 11 Դ զոր արկ նա ԱԹԻ էարկ նա Գ էարկն Բ արկ Ա նա առ ազգս մարդկան

ամեն տեսակ առաքինություն կատարեց և ավարտեց նախախնամության բոլոր գործերը, մատնվեց խաչահանների ձեռքը, մահով մեռավ ու գերեզմանի մեջ դրվեց, և իր աստվածության զորությամբ հարություն առնելով երևաց իր աշակերտներին և ուրիշ շատերին, և վերացավ երկինք իր հոր մոտ, և նստեց հայրենի աթոռի աջ կողմը և մեզ երկնավոր զորություն շնորհեց, որպեսզի նրա անմահության համաձայն՝ մենք էլ մեր մահկանացու մարմնով կարողանանք չարչարակից լինել նրա անմահ մեծությանը. և նա մեր մահն այլևս մահկանացու մահ չի համարում, այլ իբրև անմահների՝ հատուցանում է մեզ մեր աշխատությունների վարձը,— արդ՝ մենք փոքր բան ենք համարում մեր այս չարչարանքները այն սիրո փոխարեն, որ նա ցույց տվեց մարդկային ազգին»։

Երբ մոգպետն այս բոլոր խոսքերը լսեց դահճապետից, հուզվեց, նրա միտքը պղտորվեց, և քունը նրա աչքերից փախավ շատ գիշերներ։ Իսկ մի օր երեկոյան պահին վեր կացավ, գնաց նրանց մոտ միայնակ ու մնջիկ և սպասավորներից ոչ ոքի հետը չվերցրեց։ Եվ երբ հասավ տան դռանը, մի ծակով ներս նայեց և տեսավ էլի առաջին տեսիլքի նման. բայց նրանք անդորր քնած էին։ Մեղմորեն կանչեց եպիսկոպոսին անունով, որովհետև նա լավ գիտեր պարսկերեն։ Նա դուրս եկավ և հարցրեց. «Ո՞վ ես դու»։— «Ես հենց ինքն եմ, ասաց, ուզում եմ ներս մտնել և ձեզ տեսնել»։

Եվ երբ մտավ սրբերի մեջ, նշանն այլևս չերևաց նրան, և պատմեց նրանց, թե ինչպես իրեն երկու անգամ հրաշք երևաց։ Ղևոնդ երեցը պատասխան տվեց և ասաց. «Աստված, որ ասաց, թե խավարի մեջ թող լույս ծագի, որ և ծագեց և իմաստությամբ լուսավորեց աներևույթ արարածներին, նույն զորությունն այսօր էլ ծագեց քո խավարած մտքի

---

12 ԲՃ^{1}ա չիք ամենայն ԳԴՃ^{1}ա չիք բանս ԲՃ^{1}ա ի դահճէ 13 ԼS^1 խռովեցաւ և պղտորեցաւ 14 ԲՃ^{1}ա իսկ ի յաւուր միում յերեկոյին պահուն Խ յերեկոյին Դ պահու 15 Գ՝ միանջիկին ԵԺԼՀ մնջկիկ Խ մնջնիկ ԱՋէԹԻVS^3Λ յոիկ փխ մնջիկ Բ առնէր 16 Բա չիք Եւ ԲՃ^{1}ա ի դուռն քանզին փխ ի դուրս տանն 17 է ընդ առաջին 19 ԵԸԺԼԽՀS^2 զի փխ քանզի Ի քանզի նա ԳԴԵ ի դուրսն 20 ԳԴԵԿՀ ինքնին փխ ինքն ԸԽ ես ինքնին ես եմ ԲԺՍS^1S^2Ճ^{1}ա ասէ՝ ես ինքնին իսկ եմ ԱՋէԹԻVS^3A ես ինքն իսկ եմ ԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ասէ մոգպետն (Դ մոգպետն յուսանցում) 21 Խ զքեզ փխ զձեզ 22 Թ եմուտ Թ երեիւր Ը չիք նմա ԵԸԺԽՍՀS^1S^2 նշանն այլ Լ չիք այլ Լ այլ փխ և ԲԳԴԵԽԿՀS^1S^2ա չիք և 23 ԲՃ^1 չիք նոցա Գ զերկից Բա երևումն նոցա ԲՃ^{1}ա չիք սքանչելեացն ԵԺԼՀ զսքանչելեացն 24 Գ Ղևոնս երէց ԱԲԳԴԵԺԻԽS^2ա երէց Թ էրէց ԲԴ ի խաւարէ 25 Բա չիք որ և Գ չիք որ Դա ծագել ա ծագեաց և լուսաւորեաց ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք իմաստութեամբ 25—26 Բ զարարածս 26 Դ և այժմ ԲԳԿՃ^{1,27}ա ծագեալ ուրեմն ԲՃ^1 ի խաւարային ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ի խաւար ԳԴԵԺԼԽԿՀS^1S^2 մտաց քոց փխ միտս քո

և բացան աչք կուրացեալ ոգւոյդ և տեսեր զանշիջանելի լոյս շնորհացն Աստուծոյ. փութա, մի՛ հեղգար. գուցէ դարձեալ կուրացեալ ընդ խաւար գնայցես»։

Եւ զայս իբրև ասաց, յոտն կացին ամենեքեան ասելով ի քառասներորդ երկրորդ սաղմոսէն. «Առաքեա, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն և ածցեն զմեզ ի լեառն սուրբ և յարկս քո»։ Արդարև ճշմարիտ, Տէր, առաջնորդեցեր և ածեր զմոլորեալս զայս յանանց ուրախութիւնդ և յանմերձելի հանգիստդ։ Ահա նմանեալ է օրս այս սուրբ չարչարանացն քոց. որպէս ապրեցուցեր զմահապարտ աւազակն յերկրորդ մահուանէն, և նովաւ բացեր զաղխեալ դուռն Ադենայ, այսպէս զտեր և զայս կորուսեալս. որ էր պատճառք մահու բազմաց, արդ արարեր զնա պատճառք կենաց մեզ և անձին իւրում։ Գոհանամք զքէն, Աստուած, գոհանամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարգարէին. Մի՛ մեզ, Տէր, մի՛ մեզ, այլ անուան քում տուր փառս վասն ողորմութեան և ճշմարտութեան քո. զի մի՛ երբէք ասասցեն ի հեթանոսս, թէ ո՞ւր է Աստուած նոցա. որպէս և այսօր իսկ յայտնի եղև զօրութիւն քո մեծ ի մէջ ապարասան խաւարազգեստ ազգիս»։

Իսկ որ ձրին եգիտ զաստուածատուր շնորհսն, սկսաւ և նա առանձինն ասել. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց». «Քանզի գիտեմ ճշմարտիւ, եթէ բազում են այսուհետև թշնամիք իմ, և կամին մերձենալ և ուտել զմարմինս իմ. այլ դու, Տէր ամենայնի, եկիր վասն

---

1 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 կուրացեալ աչք ԲԿα հոգւոյդ ԼԽՀՏ^2 ոգւոյդ է չիք ոգւոյդ և 1—2 է չիք «տեսեր—կուրացեալ» 2 ԿՀ հեղգայր Բ կուրացեալ դարձեալ Դ չիք կուրացեալ 3 ԲԳԿՃ^{1}α գնասցես 4 Դ չիք Եւ 4—5 Բ ասելով զսաղմոսն ԱՁԷԹԻԼV զքառասներորդ սաղմոսն ԳԴԵԸԺԿՀ ասելով ի սաղմոսէն ի քառասներորդէ (ԴԿ երկրորդէ ԵԸԺՀ յերրորդէ) ԲՏ^3 զքառասներորդ երկրորդ Տ^{1}Տ^2 ի սաղմոսէն ի քառասուներկուերորդէ Խ ասելով ի սաղմոսէն քառասներորդէ յերրորդէ 5 Տ^3 սաղմոսն է առաքեաց ԳԴԼԿՏ^1 չիք Տէր 5—6 ԽՃ^{1}α զճշմարտութիւնս 6 Բα մեզ և հանցեն փխ և ածցեն Տ^2 չիք զմեզ 7 ԱՁԷԹ չիք սուրբ Գ չիք և ի յարկս ԲՃ^{1}α ճշմարիտ (α ճշմարտիւ), տէր աստուած մեր ԲՃ^{1}α չիք առաջնորդեցեր և 8 ԴԵԸԺՀՃ^{1}Տ^2 ուրախութիւնօք 8—9 ԲՃ^1 յանմահ հանգիստ Գ յանմերձ Դ յանմահ հանգիստդ Ա յանանց հանգիստդ 9 ԲԴ Ճ^{1}α նման է ԲԴԵԼα չարչարանաց 9—10 ԸԽα որ փխ որպէս Թ և որպէս 10 ԲԳ ԼՏ^1 չիք յերկրորդ 11 Ա զախեալ Ը դրունս Ժ դուռսն ԳԵԼԽՀՏ^{1}Տ^2 դրունսն Բ դրախտին Եդովմայ Դ Եդենայ Կ դրունս յԱդենայ α զաղխեալ դուռն դրախտին Ադենայ 11—12 ԳԴՀ կորուսեալ Դ կորուսեալ էր այրս այս և զտեր զսա Լ կորուսեալ այրս այս, որ էր Ս և զայս կորուսեալ այրս Տ^1 կորուսեալ այրս 12 ԲԵԽՀՏ^2 պատճառ α պատճառս մահու ԱԲԳԴԵԸԺԻԽՀՃ^{1}Տ^{2}α չիք արդ ԼԿՏ^1 և փխ արդ 13 ԲԳԵԿՀα պատճառս Ի պատ-

մեջ, և քո կուրացած հոգու աչքերը բացվեցին, և տեսար աստծու շնորհքի անշեջ լույսը. շտապի՛ր, մի՛ ծուլանար. գուցե նորից կուրանալով՝ խավարի մեջ խարխափես»։

Եվ երբ այս ասաց, բոլորը ոտքի կանգնեցին, ասելով քառասուներկուերորդ սաղմոսից. «Ուղարկի՛ր, Տե՛ր, քո լույսն ու քո ճշմարտությունը, որ նրանք առաջնորդեն ու տանեն մեզ սուրբ լեռը և քո հարկերը»։ Իսկապես որ, «Տե՛ր, ճշմարտությամբ առաջնորդեցիր այս մոլորվածին և բերիր դեպի քո անանցանելի ուրախությունը և անմերձելի հանգիստը։ Ահա՛ այս օրը նման է քո սուրբ չարչարանքներին. ինչպես որ մահապարտ ավազակին փրկեցիր երկրորդ մահից և նրանով բաց արիր Ադենի[146] կողպած դուռը, այնպես էլ գտար նաև այս կորուսյալին. սա, որ շատերի մահվան պատճառ էր, այժմ սրան դարձրիր կյանքի պատճառ մեզ և իր անձի համար։ Շնորհակալ ենք քեզանից, աստվա՛ծ, շնորհակալ ենք և ձայնակցում ենք սուրբ մարգարեին. «Ո՛չ թե մեզ, Տե՛ր, ո՛չ թե մեզ, այլ քո անվանը փառք տուր՝ քո ողորմության և ճշմարտության համար. որպեսզի հեթանոսների մեջ երբեք չասեն, թե ո՞ւր է նրանց աստվածը. ինչպես որ այսօր էլ հայտնի եղավ քո մեծ զորությունը այն անսանձ խավարասեր ազգի մեջ»։

Իսկ նա, որ ձրի գտավ աստծու տված շնորհները, նա էլ սկսեց ինքն իրեն ասել. «Տերն է իմ լույսն ու կյանքը, ես ումի՞ց պիտի վախենամ։ Տերն է իմ կյանքի ապավենը, ես ո՞ւմից պիտի դողամ։ Որովհետև սույգ գիտեմ, որ այսուհետև իմ թշնամիները բազմաթիվ են և ուզում են մոտենալ ու ուտել իմ մարմինը. բայց դու, բոլորի Տե՛ր, եկար բոլորին կյանք տալու համար, որպեսզի ես դառնամ և ապրեմ քո

ճառ Խ ի պատճառս ԳԴԾՏ^1 և մեզ և անձին մերում (Դ իւրում) Բα իւրոյ ԵԸԺԽՀՏ^2 անձին իւրում և մեզ Կ և մեզ 13—14 Բα տէր աստուած մեր է տէր աստուած A տէր փխ աստուած 14 ԳԴԵԹα ձայնակից ԲԴՃ^1 մարգարէիցն 14—15 Բ մի՛ մեզ տէր, մի՛ մեզ տէր, այլ վասն անուան քում A քո փխ քում ԲԵԷԸԺԼՀα զփառս 15—16 Բ ողորմութեան քում 16 Բ չիք և ճշմարտութեան քո Լα քում ԸԽՏ^2 չիք զի Թ հեթանոսք 17 ԲԴ չիք իսկ 18 ԵԺՀ ապարասան (յաւանցեալ՝ անհաւան) Թ ապարասան (յաւանցեալ՝ անհաւան կամ խիստ) α ապարասան և խեղաթեր և խաւարազգեստ ազգիս այսորիկ ԲՃ^1 և խաւարազգեաց ազգիս այսորիկ ԳԼՏ^1 խաւարազգեաց 19 Բ ձրի Բ շնորհս ԵԸԺԽՀՃ^{1}Տ^2 շնորհն 19—20 ԴՏ^2 առանձին ԼՏ^1 ասել առանձինն 20 Կ չիք իմ (և կեանք) α չիք իմ (ես յումմէ) ԱԲԿ յումէ՞ ԲԳԴ երկեաց Ե երկայց 21 ԲՃ^{1}α տէր օգնական և ապաւէն Բ չիք իմոց ԱԿ յումէ Բ և ես յումէ ԵԸԺԽԿՀ գիտես 21—22 Դ գիտեմ ես այսուհետև ճշմարտիւ 22 Բ բազումք Ժ այնուհետև ԲՃ^{1}α չիք այսուհետև 23 ԲԳԼԽՀՏ^2 զմարմին Տ^1 զմարմինն ԲՃ^{1}α չիք ամենայնի ԲՃ^{1}α եկիր և մեռար ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 որ եկիր։

ամենեցուն կենաց, զի դարձցին և կեցցեն առաջի քոյոյ մարդասիրութեանդ։ Մի՛ որոշեր զիս ի սուրբ գառանցս, յորս խառնեցայ, զի մի՛ բաց ի քո փարախդ արտաքս ելեալ՝ չար գազանն դարձեալ բեկանիցէ զիս։ Մի՛ հայիր, Տէր, ի բազմամեայ ամբարշտութիւնս իմ, զի մի՛ մոլորեալ ի ճշմարիտ կենացդ՝ զբազումս անդրէն ի կորուստ աշակերտիցեմ, այլ որոց եղէ պատճառ մահու, նոցին եղէց և պատճառ կենաց։ Սատանայ՝ որ ինեւ խրոխտացեալ պարծէր ի մէջ մեծի կորստականացս, ինև կորացեալ ամաչեսցէ ի մէջ իւրոց աշակերտացն»։

Եւ զայս իբրև ասացին, նմին իսկ եռուն կատարել զաղօթսն, և դադարեցին նովաւ հանդերձ մինչև ի պահն երրորդ, և այնպէս խաղաղեալ կացին ի քուն ամենեքեան մինչև ի ժամ առաւօտուն։

Իսկ նորա յոտն կացեալ, և ի քուն ոչ մտեալ, այլ զձեռսն իւր ի վեր ամբարձեալ՝ կայր յաղօթս։ Եւ մինչդեռ ընդ երդն պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի տունն լի եղև լուսով. և երևեցան նմա սանդուղք լուսեղէնք, որ կանգնեալ էր յերկրէ ի յերկինս. և գունդք գունդք զօրաց ելանէին ի վեր. և էր ամենեցուն տեսիլն նոր և չքնաղ և ահաւոր և սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց։ Ունէր և զթիւ համարոյ ի միտս իւր զիւրաքանչիւր գնդիցն, զոր տեսանէր. էր որ զհազարի, էր որ զերեսուն և զերից, էր որ զերկերիւրոց և զերեքտասանից։ Եւ այնպէս մօտագոյնս մերձենայր, մինչև ճանաչել նմա զերիս ի նոցանէ, զՎարդան և զԱրտակ և զԽորէն։ Եւ ունէին ինն պսակ ի ձեռին. խօսէին ընդ միմեանս և ասէին. «Ահա եկն եհաս ժամ, զի և սորա խառնեսցին ի գունդս մեր. քանզի և մեք սոցա իսկ մնայաք, և զառհաւատչեայ պատիւ սոցա բերաք»

1—2 ի քոյոյ մեծի ակրութեանդ փխ քոյոյ մարդասիրութեանդ Դ տէրութեանդ 2 Բα Տէր, ի սուրբ V զառանցս(!) ԱԲԳԴԹ յոր փխ յորս 3 ԲՃ^{1}α փարախս ելեալ արտաքս (Ճ^{1}α փարախն) ԵV փարախս ԲԴԵԸԼԽԿՀS^1S^2α գազանն ԱՁԷԹԻVS^3A գազան Գ չարագազանն ԲԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α չիք դարձեալ 4 Աα ամպարշտութիւնս 5 Հ չիք մի՛ 5—6 Ճ^{1}α չիք ի կորուստ 6 ԴԿ եղէն ԲԵԻՀՃ$^1S^2$ պատճառ ԲՃ^{1}α նոցունց Ա եղեաց 6—7 ԲԳԵԸԺԿՀ չիք և Դ չիք նոցին եղէց և պատճառ կենաց 7 ԵԸԻՀ S^2Ճ^1 պատճառ ԲՃ^{2}α ինեւ Թ պարծիւր 8 ԲՃ^{1}α կորստականացն ԲՃ^{1}α չիք մեծի α ինեւ Ե կուրացեալ Թ ամաչեսցի 10 ԲՃ^{1}α իբրև ասաց՝ կատարեցին զաղօթսն բոլոր միաբաններ՝ ասացին ԵԸԺԽՀS^2 և իբրև զայս Բ չիք նմին իսկ եռուն կատարել 11 Դ պահս 12 VS^3A խաղաղացեալ Բ խաղաղիկ ԲԳԴԵԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α կային ԲՃ^1 չիք ի քուն ամենեքեան ԸԼS^2 չիք ամենեքեան 13 VS^3A ի քուն ոչ մտանէր ՁէԼV զձեռն Բ զձեռս Թլ ձեռն ի ձեռս ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α չիք իւր 14 ԲՃ^{1}α չիք ի վեր S^3A համ-

մարդասիրության առաջ։ Ինձ մի՛ զատիր այս սուրբ գառներից, որոնց խառնվեցի, որպեսզի քո փարախից դուրս գալիս չար գազանը նորից չպատառոտի ինձ։ Տե՛ր, մի՛ նայիր իմ բազմամյա ամբարշտություններին, որպեսզի ճշմարիտ կյանքից չմոլորվեմ և կրկին անգամ շատերին կորստյան ճանապարհը սովորեցնեմ, այլ որոնց մահվան պատճառ եղա, նրանց համար էլ կյանքի պատճառ դառնամ։ Սատանան, որ ինձնով խրոխտացած պարծենում էր այս բազմաթիվ կորստյան մատնվածների մեջ, թող ինձնով գլխիկոր ամաչի իր աշակերտների մեջ»։

Այս ասելուց հետո հենց նրան էլ թույլ տվին աղոթքը ավարտել, և նրա հետ միասին հանգստացան մինչև երրորդ պահը, և այդպես խաղաղ քնի մեջ մնացին բոլորը մինչև առավոտյան ժամը։

Իսկ նա ոտքերի վրա կանգնած՝ չքնեց, այլ ձեռները վերև բարձրացրած՝ աղոթում էր։ Եվ մինչդեռ աչքերը երդիկին սևեռած նայում էր երկինք, հանկարծ տունը լույսով լցվեց. և նրան մի լուսեղեն սանդուղք երևաց, որ դրված էր երկրից մինչև երկինք. և խումբ-խումբ զորքեր վեր էին բարձրանում. և բոլորի տեսքը նոր էր ու չքնաղ, ահավոր ու սքանչելի, ինչպես հրեշտակների տեսքը։ Տեսած բոլոր խմբերի թիվն ու համարն էլ մտքում ուներ. կար, որ հազար էր, կար, որ երեսուներեք էր, կար, որ երկու հարյուր և տասներեք էր։ Եվ այնքան շատ մոտեցավ, որ մինչև անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին և Խորենին։ Նրանք իրենց ձեռներին ինն պսակ ունեին. միմյանց հետ խոսում էին և ասում. «Ահա եկավ-հասավ ժամանակը, որ սրանք էլ խառնվեն մեր խմբին, որովհետև մենք էլ հենց սրանց էինք սպասում և սրանց համար ենք բերել առհավատչյա նվերը. իսկ որին չէինք էլ սպասում,

---

բարձեալ Ե նաէր(!) 14—15 Ը նայէր ՁէVS^3A ընդ երդ 15 α ընդ երկինս Դ յանկարծօրէն ԼS^1 տունն յանկարծակի Հ տունն լցեալ լուսով Ըե չիք և ԲԴԼՃ^{1}α երևեցաւ 16 Դα լուսեղէն ԱԲԳԴԵՁԷԹԺԻVS^2 ի յերկրէ յերկինս (ԻVS^3 ի յերկինս) α չիք ի և չիք և 17 Բ զօրացն ԲՃ^{1}α տեսիլն ամենեցուն 18 Դ չքնաղ և նոր ԲԳԴԵԿՀS^2α չիք և (ահաւոր) ԳԿՀ չիք և (սքանչելի) VS^3A հրեշտակի 19 ԳԵԸԹԼԿՀ ետ և α զթիւ համարաց ԵՀS^2 համարոյն 20 Բ հազարից Դժ զհազարից α էր զոր հազարաց է չիք էր որ զհազարի, էր որ զերեսուն և զերից ԳԵԸԺԼԽԿՃ^{1,2} էր ուր ԱԹԻAՃ$^{18,23-25}$ վեցից փխ զերից Ա ձեռա այլ թանաքով կողքի կետով երից բառը ուղղված է վեցից ԳԵԸԺԼ ԽԿՀ էր ուր 21 ԲԴ զերեքտասանց ԳԼ և այսպէս Դ մօտագոյն ԲՃ^{1}α մօտագոյն մերձենայր տեսիլն ԳԵԸԺԼԽԿՀ մինչ 22 ԲԳԴԵԸԺԼԽα զերիսն ԵԸԺԽԿՀ զՎարդանն ԳԵԸԺ ԽԿՀ զԽորէնն 23 ԱՁԷԹԻV չիք ի ձեռին ԴՃ^{1,6}α չիք ինն Բα պսակս ի ձեռս (α ի ձեռինս) իւրեանց 24 ժ չիք զի ԲԴα չիք և 25 Հ չիք մեք A առհաւատչեայ ԱՁԷԹԻ ԼV մնացաք ԲՃ^{1}α զի և ԲՃ^{1}α պատիւն ԱԳԴԻԼԿ պատիւս ԲՃ^{1}α նոցա փխ սոցա։

Եւ որում ոչ ես մնայաք՝ եկն երեւեցաւ և խառնեցաւ, և եղև իբրև զմի ի զինուորացն Քրիստոսի»։

Այս երիցս անգամ երևեցաւ չքնաղ տեսիլս առն երանելւոյ։ Զարթույց զսուրբսն ի քնոյ անտի, և պատմեաց նոցա զամենայն տեսիլն կարգաւ։

Իսկ նոքա յարուցեալ կացին յաղօթս և ասէին. «Տէր, Տէր մեր, զի՞ սքանչելի է անուն քո յամենայն երկրի. համբարձաւ մեծ վայելչութիւն քո ի վերոյ քան զերկինս. ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիացաց հաստատեցեր զօրհնութիւն, զի եղծցի թշնամին և հակառակորդն»։ Զի ոչ ես է այսուհետև ասել, եթէ «Տեսից զերկինս զգործս մատանց քոց», այլ թէ տեսից զքեզ Տէր երկնի և երկրի. որպէս երևեցար իսկ այսօր ի ձեռն սուրբ զօրականացն քոց հեռաւոր օտարիս, որ անցեալ էր ըստ ակնկալութիւն կենաց իւրոց։

«Ահա դու, Տէր, ողորմութեամբ քով պսակեցեր զսիրելիս քո, և գթութեամբ քով եկեր ի խնդիր կորուսելոյս, դարձուցեր և խառնեցեր ի դասս սրբոց քոց։ Ոչ միայն ետես սա զերկինս՝ զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զբնակիչս նորա, և մինչդեռ է յերկրիս՝ խառնեցաւ ի գունդս բիւրաւոր հրեշտակաց քոց։ Ետես և զոգիս արդարոց կատարելոց, ետես և զնմանութիւն փառաց աներևոյթ պատրաստութեանցն, ետես և ի ձեռին նոցա զանշուշտ որունայն՝ որ հանդերձեալ պահի ի ձեռն ճարտարապետին։ Երանի՜ սմա վասն սուրբ տեսլեանս, և երանի՜ է մեզ վասն սորա մերձաւորութեանս առ մեզ. քանզի հաստատեալ գիտացաք սովաւ, եթէ որում այսպիսի սքանչելիք յայտնին, մեծ մասն ընկալաւ սա յանսպառ քոց բարութեանցդ։ Անսպառ են պարգևքն քո, Տէր, և առանց

---

1 Ա ոչ ես ակն ունէաք փխ ոչ ես մնայաք 2 ԲԷԺԻԽV զինուորաց ԳԵՋՀ ի զինուորաց Դ ի զինուորացս 3 ԲԴՃ^{1}Ա չիք անգամ Հ չքնաղատեսիլս(!) Աa տեսիլն ԱԴԵ ԸԹԺԻԼԽՀ առն ԲՃ^{1}Ա առնս այսորիկ երանելւոյ ԵՀ երանելւոյն 4 ԳԼ զսուրբս 4—5 ԲՃ^{1}Ա պատմեաց (Ա պատմեաց նոցա) կարգաւ զամենայն տեսիլն 6 ԲԳԼ նոցա ԳԴԵԸ ԺԼԽԿՀՃ^{1}Ա կային Բ Տէր աստուած մեծ Դ չիք մէր 7 է ի վերայ ամենայն երկրի ԼՏ^{1} չիք յամենայն երկրի 7—8 Բ վայելչութիւն 8 ԲԵՋԷԸԺԻԽՀVՏ^{1}Տ^{2} ի բերանոց 9 ԱՋԷԹԻVՃ$^{5-6}$ ստնդիացոց Գ բստընդիացաց ԴԺԱ ստնդեաց ԵԿՃ^{1} ստնդիեաց Ը ստընդիեցայց Տ^{2} ստինդիեցաց Տ^{1} չիք ստնդիացաց ԱԳԵՋԷԸԹԺԻԼԽԿՀ հաստատեցաւ ԲՃ^{1,5}Ա հաստատեցի ԱԲԳԵՋԷԸԹԺԻԽԿՀՃ^{1}Ա օրհնութիւն Դ զօրհնութիւնս քո ԲՃ^{1}Ա օրհնութիւն քո 10 Հ չիք է ԲԳԴԵԺԼԽԿՏ^{1}Տ^{2}Ա այսուհետև է ասել ԵԷԽՀ թէ Բ յերկինս 11 ԲԳԵԸԺԼԽԿՏ^{1}Տ^{2}Ճ^{1}Ա այլ զի ԴՀ չիք թէ 12 Ի որպէս և Լ երևեցա. Դ չիք իսկ Բ չիք սուրբ ԲՃ^{1}Ա ի ձեռն զօրականին քո Դ զօրականաց 13 Դ ընդ փխ ըստ Տ^{1} ակնկալութեան Բ իմոց փխ իւրոց 14 Դ քոյով Ի չիք պսակեցեր զսիրելիս քո 15 ԲԱ քո փխ քով Ժ

եկավ-երևցավ և խառնվեց, և դարձավ ինչպես Քրիստոսի զինվորներից մեկը»։

Այս չքնաղ տեսիլքը երեք անգամ երևաց երանելի մարդուն։ Քնից զարթնացրեց սրբերին և ամբողջ տեսիլքը կարգով պատմեց նրանց։

Իսկ նրանք վեր կացան, աղոթքի կանգնեցին և ասում էին. «Տե՛ր, տեր մեր, ի՜նչ սքանչելի է քո անունը ամբողջ երկրի վրա. քո մեծ վայելչությունը բարձրացավ երկնքից էլ վեր. ծծկեր մանուկների բերանից օրհնություն հաստատեցիր, որ ոչնչանա թշնամին ու հակառակորդը»։ Որովհետև սրանից հետո այլևս չպետք է ասել՝ «Կտեսնեմ երկինքը, որ քո մատների գործն է», այլ թե՝ քեզ կտեսնեմ երկնքի ու երկրի տեր. ինչպես որ այսօր իսկ երևացիր քո սուրբ զորականների միջոցով այս հեռավոր օտարին, որ իր կյանքի ակնկալությունից ձեռք էր քաշել։

«Ահա դու, Տե՛ր, քո ողորմությամբ պսակեցիր սիրելիներիդ, և քո գթասրտությամբ եկար այս կորածին փնտրելու, դարձրիր և խառնեցիր քո սրբերի դասին։ Սա ո՛չ միայն երկինքը տեսավ, որ քո մատների գործն է, այլ տեսավ երկինքն ու նրա բնակիչներին, և մինչդեռ այս երկրի վրա է, խառնվեց քո բյուրավոր հրեշտակների գնդերին։ Տեսավ նաև նահատակված արդարների հոգիները, տեսավ նաև աներևույթ պատրաստությունների փառքի նմանությունը, տեսավ նրանց ձեռքին նաև անկասկածելի գրավականը[147], որ պատրաստված պահվում է ճարտարապետի ձեռքում։ Երանի՜ սրան այս սուրբ տեսիլքի համար, և երանի՜ է մեզ, որ սա մոտեցավ մեզ. որովհետև սրա միջոցով հաստատապես իմացանք, թե քանի որ սրան այսպիսի սքանչելիքներ են հայտնվում, քո անսպառ բարություններից սա մեծ բաժին ընդունեց։ Քո պարգևներն անսպառ են, Տե՛ր, և առանց խնդրելու տալիս

չիք քով ԴԿ կորուսելոցս 16 Ա ընտրելոց փխ սրբոց ԲՃ^{1}Ա չիք սա զերկինս 17 Բ և ետես զբնակիչս նորա ԴԿ և ետես ԵՀ յերկինս փխ յերկրիս 18 Բ էր յերկրիս ԴԱ էր փխ է ԲԵԸԺԽՀՏ^{2}Ճ$^{1,6,7,8,12,14,17-18}$Ա ի բիւրաւոր բանակս ԳԴԼԿ ի բանակս Տ^{1}Ճ^{27} ի բանակս բիւրաւոր ԲԴՃ^{1}Ա չիք քոց 19 ԳԼՏ^{2} զհոգիս ԲՃ^{1}Ա զհոգիս արանց կատարելոց ԵՀ չիք և (զնմանութիւն) 20 Ի պատրաստութեանց ԳԵԺԽՀԱ ի ձեռս Բ չիք ի ձեռին նոցա ԵԸԺԽՀ զանշուշտ (լուսանցքում՝ զանշարժ) 20—21 ԲԳԼՏ^{1}Ճ$^{2,4,7-8,12}$Ա ռաբունեան(ն) է զանուշ ուրունայն 21 Ա ռաբունայն Թ րբբունայն (լուսանցքում՝ պսակ) ԵԸՀ որունայն պսակն Ժ որունեան պսակն Խ րաբիոնայն պսակն Տ^{2} ռաբունեան պսակն։ «Պսակն» բառն անշուշտ լուսանցքից է անցել տեքստի մեջ։ V և հանդերձեալ ԲԱ պահին 22 Բ երանի է Խ չիք և ԳԴԵԿՀՏ^{2} չիք է 23 Դ որ առ մեզ ԲՃ^{1}Ա գիտեմք Դ թէ 24 Ա ում փխ որում 25 ԲԴՃ^{1}Ա քո բարեացդ ԱԲՀՃ^{1}Ա պարգևք քո ԲԴ տէր, պարգևք քո ԳԼ պարգևքդ ԳԵԸԺԼԽՀՏ^{1} չիք տէր։

Ը ստորին լուսանցքում՝ «Հաւատայն մոգպետին»։

խնդրելոյ տաս ում և կամիս քոյով յորդ և աննախանձ առատութեամբդ։ Եւ եթէ որ ոչն խնդրեն՝ չարգելուս ի նոցանէ, բա՜ց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան քո, որ ի մանկութենէ մերմէ ցանկացեալ եմք բարեմասնութեան սրբոց քոց։ Զնորագիւտ դաստակերտս քո բարեխօս առնեմք վասն անձանց մերոց. մի՛ ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց ի մէջ ալէկոծեալ ծովու մեղաց»։

Եւ այսպէս յերկար կատարելով զաղօթսն, յորդ և առատ արտասուս հեղուին ի վերայ անձանց իւրեանց։ Գութ ողոքանաց արկանէին առաջի բարերարին, զի լսելի լիցի ձայն պաղատանաց նոցա, և հաստատուն կացցեն ի վիշտս ճգանցն, զի մի՛ զրկեսցին ի ցանկալի պսակացն, զոր ունէին սուրբքն ի ձեռս իւրեանց, որպէս և ազդեցաւ նոցա ի Հոգւոյն սրբոյ. զի մերձեալ էր ժամանակ կոչման նոցա, որպէս զի հրթիցեն և աներկեւղ դադարեսցին ի կասկածելի ակնկալութենէն, որում համբերէին բազում տառապանօք. զի առհաւատչէիւ փոքու հասցեն երկնաւոր մեծութեանն, որում ի վաղնջուց իսկ էին ցանկացեալք։

Եւ քանզի ինքն իսկ մոգպետն իշխան էր աշխարհին, և նմա յանձն արարեալ էր զկալեալսն քաղաքին, վասն այնորիկ և համարձակութեամբ ընդ առաւօտն հանեալ տանէր զկապեալսն յապարանսն իւր։ Լուանայր և սրբէր զնոսա ի չարչարանաց բանտին, առնոյր զջուր լուացման սրբոցն և արկանէր զիւրով մարմնովն։ Ուղղէր ի տան իւրում աւազան, և ընդունէր ի նոցանէ զսուրբ մկրտութիւնն. հաղորդէր ի կենդանարար մարմինն և ի քաւիչ արիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Բարձր բարբառով աղաղակէր և ասէր. «Մկրտութիւնս այս լիցի ինձ ի լուացումն մեղաց իմոց, և ի ծնունդս նորոգութեան վերստին Հոգւոյն սրբոյ, և ճաշակումն անմահ խորհրդոյս ի ժառանգութիւն երկնաւոր որդէգրու-

---

1 α քով փխ քոյով է օսիղ(1) փխ յորդ Թ չիք յորդ և 1—2 Դ առատութեամբ 2 ԱԳ ոչս ԴԵՁԷԸԺՀVS^3 ոչ S^2 չիք ոչ ԱԳԹ ի սոցանէ ԲԾ^{1}A բաց և մեզ 3 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ծ^{2}α չիք քո α չիք մերմէ 4 α զնորգիւտ 5 ԲԾ^{1}α չիք վասն Լ զի մի՛ 6 ԲԴԾ^{1}α հաւատոյս մերոյ Հ չիք ի մէջ ԲԾ^{1}α ալեկոծութեան ծովուս մեղաց ԳԼԿS^1 ծովուս Դ մեղաց մերոց ԵԸԺԽՀS^2 մեղաց ծովուս Խ ալեկոծութեան մեղաց 7 ԳԵԸԺԼԽԿՀ S^1S^2 կատարելով յերկար Խ յաղօթսն Դ յորդառատ 8 ԲԾ^{1}α և գութս ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 գութս ԸԽ ողոքանաց 9 Ծ^{1}α լինիցի Դ ձայնք 10 ԲԾ^{1}α և զի (հաստատուն) ԸԽԾ^1 կայցեն Դ ճգանց Ծ ճգանացն Դ և մի՛ 11 ԷVS^3 ի ձեռն 12 ԴԸԽS^2 չիք և ԲԾ^{1}α չիք նոցա A ազդեցաւ իսկ 12—13 ԲԾ^{1}α ժամանակ նոցա կոչմանն ԳԼ կոչմանն 13 Ի չիք որպէս ԱԲԳԴԵԶԷԹԺԼՀVS^3 դադարեսցեն 13—14 ԲԾ^{1}α ի կասկածանաց 14 ԳԵԺ յակնկալութենէն Հ յորում ԵԺԽՀ տառապանաց 15 ԲԴα առ-

ես՝ ում կամենում ես՝ քո հորդաբուխ և աննախանձ առատությամբ։ Եվ քանի որ չխնդրողներին էլ չես մերժում այն, բա՛ց մեզ, Տե՛ր, քո ողորմության դուռը, որ մեր մանկությունից քո սրբերի բարեմասնության ցանկացող ենք եղել։ Քո այս նորագյուտ ձեռակերտին բարեխոս ենք դարձնում մեր անձերի համար. մեր հավատի նավը թող չընկղմվի մեղքերի ալեկոծված ծովի մեջ»։

Եվ այսպես երկար աղոթք անելով՝ հորդ և առատ արտասուք էին թափում իրենց անձերի համար։ Գթություն էին հայցում բարերարից, որ լսելի լինի նրանց պաղատանքների ձայնը և հաստատուն մնան իրենց վիշտ ու նեղությունների մեջ, որպեսզի չզրկվեն այն ցանկալի պսակներից, որ ունեին սրբերն իրենց ձեռքին, ինչպես և ազդարարվեց նրանց սուրբ հոգու կողմից, որովհետև մոտեցել էր նրանց կանչվելու ժամանակը, որ գնան և աներկյուղ հանգստանան այն կասկածելի ակնկալությունից, որին դիմանում էին մեծ տառապանքներով, որպեսզի փոքրիկ առհավատչյայով հասնեն երկնավոր մեծությանը, որին ցանկացող էին ի վաղուց հետե։

Եվ որովհետև հենց ինքը մոգպետը այն աշխարհի իշխանն էր, և նրան էին հանձնված այն քաղաքի կալանավորները, ուստի և առավոտյան համարձակ կերպով հանեց-տարավ կալանավորներին իր ապարանքը։ Լվաց ու սրբեց նրանց բանտի աղտեղություններից, վերցնում էր սրբերի լվացաջուրը և ածում իր մարմնի վրա։ Իր տան մեջ ավազան սարքեց և նրանցից սուրբ մկրտություն ընդունեց, հաղորդվեց մեր տեր Հիսուսի կենդանարար մարմնին և քավիչ արյանը։ Բարձր ձայնով աղաղակում էր և ասում. «Այս մկրտությունը թող իմ մեղքերի լվացումն լինի ինձ համար, և սուրբ հոգով վերստին ծնունդ ու նորոգություն, և անմահ խորհրդի ճաշակումը երկնավոր որդեգրության ժառանգ դարձնի ինձ»։

հաւատչէին Թ առհաւատչեաւ Ի զառհաւատչեայի ԵՀ մեծութիւն ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ծ^{1}α որում և 15—16 Կ ի վաղնջուցն էին իսկ 16 ԲԳԾ^{1}α չիք իսկ ԴԹ ցանկացեալ 17 ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀS^1S^2Ծ^{1}α չիք իսկ ԳԵԸԺԽԾԿՀS^1S^2 չիք և (նմա) 18 ԵՀ չիք էր ԳԴԵԽα զկապեալս α այնորիկ ԲԴα չիք և 19 ԳԻ առաւօտն α հանեալ զնոսա տանէր ԲԾ^1 տանէր զնոսա փխ հանեալ տանէր զկապեալսն A չիք զկապեալսն 19—20 ԳԴԵα յապարանս 20 ԲԾ^{1}α չիք և սրբէր Դ չիք զնոսա 21 Դ զջուրն VS^3 լուացմանն α սրբոց ԲԾ^{1}α զմարմնով իւրով A զիւր 22 Բ և ուղղէր Հ սուրբ 22—23 Ե մկրտութիւն 23 Ի հաղորդիւր ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 ի կենդանի ԲԷԾ^{1}α ի կենարար ԳԵԸԺԽα մարմին Vα և ի մյուսները չիք և 23—24 ԲԳԵԸԺԽα արիւն 25 ԲԾ^{1}α եղիցի α չիք ինձ 26 ԳԴԼ չիք և ԱԲԳԴԹԻԼα ի ծնունդ ԵԸԺԽՀ չիք «և ի ծնունդս—Հոգւոյն սրբոյ» ԲԾ^{1}α չիք վերստին ԳԼS^1S^2 ի Հոգւոյն սրբոյ α Հոգւոյդ սրբոյ 27 ԳԼ խորհրդոյս է երկնաւորդէութիւն(!) ԴԵ որդեգրութեան։

թեանն»։ Դնէր և ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոյ, և մխիթարութեան բաժակ մատուցանէր նոցա, և միաբանէր ընդ նոսա ի հացին օրհնութեան։

Այլ թէպէտ և ինքն եհաս յերկնաւոր բարիսն, և աներկեւղ էր ի մարդկանց հարուածոց, սակայն վասն ընտանեացն յոյժ ունէր կասկած, զի մի՛ իբրև վնասակարք մատնեսցին յիրս արքունի։ Վասըն այնորիկ և ծածուկ կոչէր ի գիշերի և զնախարարսն, որ ի նմին քաղաքի էին ի կապանս, և առնէր ծախս մեծամեծս։ Եւ էին ամենեքեան ի մեծի խնդութեան վասն նոր սքանչելեացն, որ երևեցաւ նոցա։ Ոչ յիշէին ամենևին, եթէ վիշտք ինչ անցեալ էին ընդ նոսա։

Բայց ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն. զի ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, և տգիտագոյն ևս էր ի գրոց մխիթարութենէ։ Հրամայեցին նմա ունել զգլուխ բազմականին. եւ պատասխանի երանելին և ասէ. «Զի՞նչ է այդ, զոր դուքդ գործէք. և կամ յինէն զի՞ թաքուցանէք զծածուկս խորհրդոցդ։ Ես քան ըզկրսերս ձեր խոնարհագոյն եմ, և քան զեւս փոքունս յաշակերտաց ձերոց տգիտագոյն եմ. զիա՞րդ կարացից այդմ տանել։ Այս իսկ մեծ էր ինձ, զի սուրբ կապանաց ձերոց հաղորդեալ եմ այսօր։ Եթէ արժանի համարիք ձերում սեղանոյդ, կալարուք դուք զիւրաքանչիւր տեղի բազմականիդ, և հրամայեցէք ինձ զիմ տեղին»։ Եւ բռնադատեաց սուրբ եպիսկոպոսն միաբանութեամբ ամենայն սրբոցն, և ի վերոյ քան զամենեսեան բազմեցուցին զնա։

Եւ իբրև բոլորեցաւ ակումբ բազմականին, և հաղորդեցան ամենեքեան ի կերակուրն զուարթութեամբ, յոտն եկաց սուրբ Յով-

---

1 Դ ըստ մարմնոյ սեղան կերակրոյ առաջի նոցա ԵԸԺԽՀ զնէր առաջի նոցա և ըստ մարմնաւոր կերակրոց սեղան ԲԳԼS^1S^2Ճ^{1}α կերակրոց S^2 կերակրոց սեղան α սեղան կերակրոց 1—2 Հ և զմխիթարութեան 2 ԲՃ^{1}α չիք նոցա 3 ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀVS^1S^2 ի հացին ԲՃ^{1}α հացիւն Դ հացիւ Խ օրհնութեանն S^3A հացին օրհնութեան 4 Բ ի յերկնաւոր Բ չիք էր 4—5 ԲՃ^1 ի մարդկան հարուածոյ ԳԻԼS^1S^2 ի մարդկան Դ ի մարդկային հարուածոցն α ի մարդկան հարցուածոց Կ ի մարդկանէ Խ ի մարդկայն(!) 5 Ը ընտանեաց 5—6 ԲՃ^{1}α կասկածանս ԵԸԺԽՀS^2 ունէր կասկած յոյժ 6 α զի մի՛ երբէք Հ ի փոքու(!) փխ իբրև ԵԸԺԽ իբրու ԳԵԺԼԽՀS^1S^2 մատնիցին Կ մատնիցեն 7 Բα ի ծածուկ ի գիշերի կոչէր զնախարարս ԳԵԺ չիք ի (ծածուկ) ԵԸԺ և ի գիշերի ԴԵԸS^1S^2 չիք և 8 ԱԲԳԴԾԿS^1α մեծամեծս 9 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α վասն նոր սքանչելեացն A չիք նոր ԳԼԿ երևեցաւն 10 Դ նմա փխ նոցա Դ չյիշելով ԲԳԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α չյիշէին ԱԹԻ չիք ամենևին Բα վիշտ անցեալ է ընդ նոսա Դ են ԵԸԺԽԿՀS^2 էր Խ վիշտք մահու ԸԽαS^2 չիք ինչ 11 Բα ի մէջ փխ ի ժամ ԳԼS^1 չիք ժամ 11—12 Բ չիք սրբոցն α ի մէջ փխ ի միտս 12 ՋԷԹԻV երիցո(յ) ՀՃ^2 իրիցու ԸԽ չիք սուրբ

Նրանց առջև մարմնավոր կերակրի սեղան էլ բաց արեց, և նրանց մխիթարության բաժակ մատուցեց, և նրանց հետ միացավ օրհնված հացն [ուտելում]։

Բայց թեպետև ինքը հասավ երկնավոր բարիքներին և երկյուղ չուներ մարդկային հարվածներից, սակայն սաստիկ կասկածի մեջ էր հարազատների վերաբերմամբ, որ չլինի, թե մատնվեն իբրև արքունի գործերի մեջ վնասակար մարդիկ։ Այդ պատճառով գիշերով ծածուկ կանչեց նաև այն նախարարներին, որոնք կալանավորված պահվում էին նույն քաղաքում, և մեծամեծ ծախսեր արեց։ Եվ բոլորը մեծ ուրախության մեջ էին այն նոր հրաշքների համար, որ երևաց նրանց։ Ամենևին չէին հիշում, թե որևէ նեղություններ էին անցել իրենց գլխով։

Բայց սեղան նստելու ժամանակ սրբերը մտները բերին մի երեցի[148], որ նրանց հետ միասին սուրբ կապանքների մեջ էր. որովհետև նա շինական մարդկանց մեջ էր ապրել և ավելի տգետ էր սուրբ գրքի մխիթարության կողմից։ Նրան հրամայեցին նստել սեղանի գլխին. պատասխան տվեց երանելին և ասաց. «Այդ ի՞նչ բան է, որ դուք գործում եք, և կամ ինչո՞ւ եք ինձնից թաքցնում ձեր գաղտնի խորհուրդները։ Ես ձեր կրտսերներից էլ ավելի նվաստ եմ և ձեր աշակերտներից փոքրերից էլ ավելի տգետ. ինչպե՞ս կարող եմ դիմանալ այդ բանին։ Հենց այս էլ ինձ համար մեծ բան է, որ այսօր հաղորդակից եմ ձեր սուրբ կապանքներին։ Եթե ինձ արժանի եք համարում ձեր սեղանին, ամեն մեկդ ձեր տեղը բռնեցեք սեղանի շուրջը և ինձ էլ հրամայեցեք իմ տեղը նստել»։ Եվ սուրբ եպիսկոպոսը մյուս բոլոր սրբերի հետ միաբան հարկադրեցին և բոլորից վերև բազմեցրին նրան։

Եվ երբ բոլորը բազմեցին սեղանի շուրջը և ուրախ-զվարթ ճաշակեցին կերակուրը, ոտքի կանգնեց սուրբ Հովսեփը և սկսեց ուրախության

---

13 ԴԼՃ^{1}α կացեալ էր α և տգիտագոյն իսկ էր ՋԷV ի սուրբ գրոց 14 ԱԲԳԴՁԷԹԻԼԿVS^1S^2Ճ^{1}α հրամայեցին նմա ունել ԵԸԺԽՀS^2 նմա հրամայեցին ունել A չիք նմա 15 Բ զի՞նչ են ԲԵՀ դուք 15—16 α զի՞նչ է զոր դուք գործէք և յինէն թաքուցանէք 16 ԲՃ^1 չիք կամ Բα չիք զի՞ ԲՃ^{1}α զծածուկ խորհուրդս ձեր 16—17 Գ զկրտսերս Բ զկրտսեր 17 ԲՃ^{1}α չիք զևս ԳԵ յաշակերտացն 17 S^2 քոց փխ ձերոց ԸԽS^2 տկարագոյն ԴՃ^1 չիք եմ 19 Բα է փխ էր ԴԺ ձեր սուրբ ԸՀ որպէս փխ սուրբ ԳԴԵԸԺԽՀ կապանացդ ԲԳԴԵԸՀԼS^1S^2Ճ$^{5-7,10,12,14,17-18,27}$ և այսօր α և այժմ փխ այսօր Խ և եթէ 20 ԵԸԺԼԿՀS^1S^2 համարիք զիս է համարիցիք α համարեսջիք ԲԴα սուրբ սեղանոյդ ԴԽα զիս ձերում ԲՃ^1 կալէք ԳԴԼԿS^1 կալայք ԵԸԺԽՀS^2α կալջիք է չիք դուք 21 ԳԵԸԺԾԿS^2 տեղիս Հ տեղի 22 A մեծ եպիսկոպոսն Յովսէփ փխ սուրբ եպիսկոպոսն ԵԸԺԽՀS^2 ամենայն սրբոց միաբանութեամբն 23 Հ ի վեր Vα ի վերոյ A և այլք ի վերայ ԲՃ^{1}α նստուցին փխ բազմեցուցին 24 է մոլորեցաւ(!) է ակամբ(!) ԵԸԺՀ չիք և 25 Դ ի կերակուրսն։

սէփ, և սկսաւ զուրախութեան նուագն մատուցանել և ասել այսպէս.

«Ուրախ լերուք ամենեքեան ի Քրիստոս. քանզի վաղիւ այս ժամ իցէ՝ ահա մոռացեալ իցէ մեր զամենայն նեղութիւնս և զչարչարանս զոր կրեցաք։ Եւ փոխանակ սակաւ աշխատութեանս մերոյ՝ բազմապատիկ հանգիստ ընդունելոց եմք, և փոխանակ խաւարային արգելանի բանտիս՝ մտանելոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապետ ինքն Քրիստոս է, հանգստապետ, յորում ասպարիսի նախ ինքն առաքինացաւ առնելով զնշան յաղթութեան։ Եւ այսօր նոյն Տէր է, որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելով ի փրկութիւն անձանց մերոց և ի պարծանս մեծափառ սուրբ եկեղեցւոյ։ Եւ զոր օրինակ տեսէք դուք զեղբայրս զայս ի գլուխ բազմականիս մերոյ, սոյնպէս սա նախ ընդունելոց է վաղիւ զպսակն ի ձեռն կատարմանն իւրոյ։ Զի ահաւասիկ եկն եհաս և մերձեցաւ առ մեզ թշնամին կենաց մերոց և պսակիչ սուրբ չարչարանաց ծառայիցս Քրիստոսի»։

Զայս իբրև ասաց, լուաւ ի նմանէ բանս պնդութեան, որով յոյժ մխիթարեցան ամենեքեան։

Ասէ. «Ի սուրբ աղօթից ձերոց այսպէս արասցէ ինձ Քրիստոս, և կատարեսցէ զելս վախճանին իմոյ յաշխարհէս ըստ կամի քում։ Եւ ահա ընդ ասելդ քո ազդումն եղև հոգւոյս իմոյ, և յիշեցի ես զմարդասիրութիւնն Քրիստոսի, որոյ և գալուստ իսկ նորա յաշխարհս վասն մեր մեղացն եղև։ Գթասցի յիս որպէս և յաւազակն ի ժամ խաչին. որպէս նովաւ զդրունս փակեալ դրախտին երաց, և յառաջեցաւ լինել կարապետ այնոցիկ՝ որ անդրէն ի նոյն տեղի դառնալոց էին յուրախութիւն, արասցէ և զիս այսօր Տէր Յիսուս Քրիստոս սպասաւոր ձերում մեծաշուք գնդիդ։

աղոթք մատուցանել և ասել այսպես.

«Բոլորդ էլ ուրախ եղեք Քրիստոսով. որովհետև վաղն այս ժամին արդեն մոռացած կլինենք այն բոլոր նեղությունները ու չարչարանքները, որ կրեցինք։ Եվ մեր այս փոքրիկ աշխատության փոխարեն բազմապատիկ հանգիստ ենք ընդունելու և այս բանտի խավարային զնդանի փոխարեն մտնելու ենք երկնքի լուսավոր քաղաքը, որպիսի քաղաքի քաղաքապետը ինքը Քրիստոսն է, այն ասպարեզի հանգստապետը, որի մեջ նախ ինքն առաքինացավ՝ հաղթության նշանն առնելով։ Եվ այսօր նույն Տերն է, որ հաջողում է մեր գործը՝ նույն նշանն ընդունելով մեր անձերի փրկության և մեծափառ սուրբ եկեղեցու պարծանքի համար։ Եվ ինչպես որ դուք այս եղբորը տեսաք մեր սեղանի գլխին, այնպես էլ վաղը ամենից առաջ սա է ընդունելու պսակն իր նահատակության միջոցով։ Որովհետև ահավասիկ եկել-հասել և մոտեցել է մեզ մեր կյանքի թշնամին և Քրիստոսի ծառաներիս սուրբ չարչարանքները պսակողը»։

Երբ այս ասաց, քաջալերման խոսքեր լսեց նրանից[149], որով բոլորն էլ շատ մխիթարվեցին։

Նա ասաց. «Ձեր սուրբ աղոթքներով թո՛ղ այդպես անի ինձ Քրիստոս և քո ասածի նման կատարի իմ կյանքի վախճանն այս աշխարհից։ Եվ ահա քո ասելուն պես՝ ազդում եղավ հոգուս, և ես հիշեցի Քրիստոսի մարդասիրությունը, որի այս աշխարհը գալն էլ հենց մեր մեղքերի համար եղավ։ Թո՛ղ գթա ինձ, ինչպես ավազակին խաչվելու ժամանակ. ինչպես որ նրանով փակված դրախտի դռները բաց արեց, և առաջացավ՝ կարապետ եղավ նրանց համար, ովքեր նույն տեղն էին վերադառնալու ուրախության համար, թո՛ղ Տեր Հիսուս Քրիստոսն այսօր ինձ էլ ձեր մեծաշուք գնդին սպասավոր դարձնի։

---

1 Ի չիք և Դ սկսան Հ ուրախութեան Բα և ասէ 3 ԲԼՃ^{1}α չիք ի Քրիստոս և ի Քրիստոս ամենեքեան α վաղին 3—4 ԳԴԵԸԺԽԿՀՏ^2 յայս ժամ 4 α է փխ իցէ ԵԸԺԽՀՏ^2 իցէ՝ զի ահա 4—5 ԲՁէՃ^{1}α զնեղութիւնս և զչարչարանս A յարչարանս 5 ԲԽՏ^{2}α կրեցաքն Բ այս սակաւ α այս փխ սակաւ 5—7 է չիք «սակաւ-խաւարային» Բα մերոյ զոր կրեցաքն՝ բազմապատիկ ընդունելոց եմք հանգիստ 6 ԼՏ^1 ունելոց փխ ընդունելոց 7 ԱՁԹԻVՏ^3 չիք խաւարային Լ արգելանաց ԱԴԵՁԻԽԿՏ^{2}Տ^{3}α բանդին (Իխ բանտին) Ճ^{1}α չիք մտանելոց եմք ԴԵԸԺԽՏ^2 յերկնային α յերկինս 7—9 Բ քաղքին ի յերկինս ի քաղաքն լուսաւոր որոյ քաղաքապետն Քրիստոս է, հանգստապետ, յորում ասպարիսի ԵՀ քաղաքապետն α որոյ քաղաքապետ ԹՃ^{1}α չիք ինքն A և հանգստապետ ասպարիսին՝ յորում α և հանգստապետ 9 ԹԽՀ չիք ասպարիսին 9—10 Ա առաքինեցաւ առնելով զնշան յաղթութեանն ԳԴՁէԹԿV առաքինեցաւ ԵԺԻՀՃ^{2}α առնլով Ի չիք 10 Եւ Դ աջողէ Թ չիք մեզ Ե զնշան Ճ^{1}α նշան յաղթութեան 11 Կ զփրկութիւն ՁV յանձանց ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք մերոց 12 Ըխ չիք սուրբ ԹԻ տեսիք Բ զեղբարս ԲԳԴԵԸα չիք ի 13 Լ մեր ԲԳԴԵԺԼԽԿαՏ^{1}Տ^2 նախ սա 13—14 α վաղին զպսակն 14 α կատարման ԳԵԺԽՀՏ^{1}Տ^2 մերոյ փխ իւրոյ Դ չիք իւրոյ Գ չիք եհաս ԵԸԺՀ չիք և 15—16 ԲՃ^{1}α չարչարանաց սուրբ Հ չարչարանացս 16 Ե ծառայից Դ մերոյ փխ ծառայիցս Քրիստոսի 17 է և լուաւ զնմանէ Բ բան 19 ԲՃ^{1}α և ասէ ԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք ասէ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α այսպէս ԱՁէԹԻVՏ^3 այդպէս ԵԸԺԽՀ Քրիստոս ինձ անարժանիս է ինքն փխ ինձ 19—20 ԴԼԽՏ^1 ասէ, և կատարեսցէ 20 է չիք և ԲԳԹα վախճանի 21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ չիք և ԲՃ^1 ասելոյդ քում ԲԴ հոգոյ α ընդ ասելոյդ քո ազդ եղև 22 Ե զմարդասիրութիւն Բ չիք և ԱԴԵԺԻՀ գալուստն ԲԴ չիք իսկ 23 Դ վասն իմ փխ վասն մեր մեղացն ԲԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α մեղաւորացս փխ մեղացն Գ գթասցէ ԴԵՀα չիք և A զոր օրինակ փխ որպէս 24 Ե զնովաւ Բα զդուռն դրախտին երաց Բα չիք փակեալ 25 Ի լինիլ Բ այնորիկ Դ չիք անդրէն Ժ անդէն 26 Դ են ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք Յիսուս 27 ԲԴ ձերոց է մերում Տ^{1}Տ^2 չիք ձերում ԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{27} մեծաշուք գնդից ձերոյ (Հ գնդին) α ձերոյ մեծաշուք գնդիդ։

Աւանիկ վասն միոյ մեղաւորի, որ դառնայ յապաշխարութիւն, անվախճան լինի ուրախութիւն հրեշտակաց յերկինս. որպէս զի գիտեն իսկ զկամս Տեառն իւրեանց։ Քանզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին եկն ի խնդիր, վասն այնորիկ և նոքա խնդակիցք լինին վասն միոյ դարձելոյ յապաշխարութիւն։ Թերևս վասն իմ իսկ եկեալ էր մեծ զօրավարն Հայոց բազում սուրբ ընկերակցօքն իւրովք. զպսակն վասն ձեր բերեալ էր, այլ զուրախութեան աւետիսն հասարակաց տայր։ Եւ առաւել ևս ընդ իս էին զարմացեալ. զի ոչ ճանաչէին զիս ի կեանս իւրեանց, ահա ի սուրբ մահն իւրեանց կամին՝ զի և ես մասն ընկալայց ընդ երանելիսն։

«Աղաչեմ զձեզ, տեարք իմ և հարք, աղօթս արարէք ի վերայ անարժանութեանս իմոյ, զի արժանի եղէց մեծի աւետեացն հասանել, որ յանսուտ ձերոց բերանոցդ բարբառեցաւ ի լսելիս իմ։ Արդ փութամ տեսանել զօրն, և յաւուր անդ զժամն եկեալ հասեալ ի վերայ մեր։

Եւ ե՞րբ իցէ՝ զի ելից ի թանձրազանգաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ. ե՞րբ իցէ՝ զի տեսից զքեզ Տէր Յիսուս։ Ե՞րբ իցէ՝ զի աներկիւղ եղէց ի մահուանէ. ե՞րբ իցէ՝ զի տգիտութիւնս իմ հասցէ ի կատարեալ գիտութիւն։ Օգնեա ինձ, Տէր, օգնեա ինձ, և կարկառեա զամենազօր աջդ յօգնականութիւն. զի ըստ խոստման բանիցս իմոց և գործք արդեամբք կատարեսցին ի վերայ իմ. և փառաւոր լիցի յիս ի մեղաւորս անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Զայս իբրև ասաց երանելին, յոտն կացին ի բազմականացն անդ, գոհանային ասելով. «Փա՜ռք քեզ, Տէր փա՜ռք քեզ, Թագաւոր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ Հոգւովդ սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք և մի՛ ամաչեսցուք, զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր»։

---

1 Խ առաւանիկ   1—5 Կ չիք «անվախճան—յապաշխարութիւն»   2—3 α ուրախութիւն յերկինս, որպէս գիտեն Ա հրշտակաց ԳԾԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^{2}α չիք հրեշտակաց ԴՃ^1 չիք իսկ ԲԻՃ^1 չիք զի   3 α զի փխ քանզի ԼՏ^1 վասն միոյ մեղաւորի և կորուսելոյ   3—4 ԳԾ ոչխարի Բα ոչխարի կորուսելոյ   4 ԲՃ^{1}α վասն որոյ Դ խնդալից լինէին ԾԸԺԽՀՏ^2 խնդալից Լα խնդակից   5 ԾԸՀ դարձելոյն A չիք իսկ   6 Դ է ԲՃ^{1}α չիք մեծ ԲՃ^{1}α չիք սուրբ   8 ԲՃ^{1}α չիք ևս Ծ ընդ յիս Ի ընդ ինև են   9 Բ ի կենս ԲՃ^{1}α ահաւասիկ փխ ահա ԸԽ ընդ սուրբ ԱԹԻ մահս ԳԴԼԿՏ^1 մահսն ԲՃ^{1}α մահուանն   9—10 ՁէՎՏ^{3}A կամէին   11 Խ հարք իմ և եղբայրք Կ և եղբարք փխ և հարք   12 ԲՃ^{1}α իմոյ անարժանութեանս Դ չիք իմոյ Բα եղէց արժանի   12—13 Ի հասանիլ   13 ԳԾԼԽՏ^2 որ ի ԳԼՏ^1 բերանոցդ ձերոց ԾԸԺԽՀ բերանոց ձերոց α որոյ յանսուտ ձերոյ բերանոյդ   14—15 Բ իմ փխ մեր Դ այլ փխ արդ Դ յաւուրն Դ չիք անդ ԲՃ^{1}α իմ փխ մեր   16 Aα չիք Եւ ԳԾ ձանձրանալի Դ չիք ձանձրալի   17 ԲԳԴԵԺԼԿՀՏ^{1}Ճ^{1}α

«Ահա մի ապաշխարող մեղավորի համար հրեշտակների ուրախությունն անվերջ է լինում երկնքում, որովհետև հենց գիտեն իրենց տիրոջ կամքը։ Որովհետև նա եկավ փնտրելու մի կորած ոչխար, այդ պատճառով էլ նրանք խնդակցում են մի ապաշխարողի համար։ Թերևս հենց ինձ համար էր եկել Հայոց մեծ զորավարն իր բազմաթիվ սուրբ ընկերակիցներով. պսակը ձե՛զ համար էր բերել, իսկ ուրախության ավետիսը առհասարակ բոլորին էր տալիս։ Եվ ավելի ևս զարմացել էին ինձ վրա, որովհետև իրենց կենդանի եղած ժամանակ ինձ չէին ճանաչում, ահա իրենց սուրբ մահվան ժամանակ կամենում են, որ ես էլ բաժին ընդունեմ երանելիների հետ։

«Աղաչում եմ ձեզ, ի՛մ տերեր ու հայրեր, աղոթք արեք անարժանիս համար, որպեսզի արժանի լինեմ հասնելու այն մեծ ավետիքին, որ ձեր անսուտ բերանով ասվեց, որպեսզի ես լսեմ։ Այժմ շտապում եմ տեսնելու այն օրը, և այդ օրվա մեջ այն ժամը, որ եկել-հասել է մեզ վրա։

«Ե՞րբ պիտի լինի, որ դուրս գամ այս թանձր ու դանդաղ ձանձրալի մարմնից. ե՞րբ պիտի լինի, որ տեսնեմ քեզ, Տեր Հիսուս։ Ե՞րբ պիտի լինի, որ մահից չվախենամ, ե՞րբ պիտի լինի, որ իմ տգիտությունը կատարյալ գիտության հասնի։ Օգնի՛ր ինձ, Տեր, օգնիր ինձ և ամենազոր աջդ մեկնի՛ր օգնելու համար. որպեսզի իմ խոսքերի խոստման համաձայն՝ գործն էլ իրոք կատարվի ինձ վրա, և ինձնով, մեղավորովս, փառավորվի մեր տեր Հիսուս Քրիստոսի անունը»։

Երբ երանելին այս ասաց, վեր կացան այն սեղանից, գոհություն հայտնեցին՝ ասելով «Փա՜ռք քեզ, Տե՜ր, փա՜ռք քեզ, թագավո՛ր, որ մեզ ուրախության կերակուր տվիր. լցրո՛ւ մեզ սուրբ հոգովդ, որպեսզի հաճելի լինենք քո առաջ և չամաչենք, որովհետև դու յուրաքանչյուրիս հատուցանում ես իր գործերի համեմատ»։

չիք այսորիկ ԲԴ^1 չիք զքեզ   17—18 A չիք երբ իցէ՝ զի աներկիւղ եղէց ի մահուանէ ԳԴԾԸԺԼԿՏ^2 Քրիստոս փխ Յիսուս ԸԽ և ե՞րբ իցէ զի աներկիւղ եղէց ի մահուանէ, երբ իցէ զի տեսից...   18 է գիտութիւնս   19 Ի օգնեա ինձ տէր, օգնեա ինձ տէր, օգնեա ինձ   19—20 ԲՃ^{1}α զհզօր Գ կարկառ փխ կարկառեա   20 Բα աջդ քո α չիք զի ըստ ԳԴԾՁէՏ^{2}Տ^3 չիք ըստ ԲՃ^{1}α խոստմամբ   20—21 ԱԲα բանից   21 ԱԲԳԴԾԻՏ^{2}α գործքն ԲՃ^{1}α կատարեսցի յիս Դ չիք ի վերայ իմ ԾէԺԼԽՀՎՏ^{1}Տ^{2}Տ^3 մեր փխ իմ   22 Բ լինի յիս   24 Լ «զայս իբրև ասաց» բառերից հետո նորից կրկնում է «երաց» բառը, ապա սկսվում է «երանելին» բառով՝ 312$_{21}$ և շարունակվում ըստ կարգին։ Ծ կանոնավոր է։ Թ բազմականի   24—25 ԱԻ ի բազմականին անդ ԴԾԸԺԽՀ չիք անդ ԲՃ^{1}α բազմականաց անտի և գոհանալով ասէին   25 ԾԸԺՀԽ և գոհանային Խ փառք քեզ Քրիստոս ԴԾԸԺԽՀՏ^3 Թագաւոր փառաց   26 ԲԸԽՏ^{2}Ճ^{1}α որ փխ զի Ծ զկերակուր Ժ զկերակուրս ԱԳԾՁէԹԺԻԼԿՀՏ^1 յուրախութիւն ԴՃ^1 Հոգւովդ քո Բα լցո և զմեզ Հոգւովդ քով սրբով   27 ԲԴՃ^{1}α և մի՛ ամաչեսցուք մյուս բոլորը՝ մի՛ ամաչեցեալք   28 ԹԻ չիք ըստ Բ գործ իւր ԹԻՏ^3 զգործս։

Ի նմին ժամու եղև խորհուրդ մեծ ի մէջ նոցա, թէ զի՞նչ օրինակաւ կարասցեն ապրեցուցանել զմոգպետն, զի մի՛ լուեալ յարքունիսն՝ իբրև զհուր բորբոքեսցի բարկութիւն ի վերայ մնացելոցն։ Իբրև ոչ ինչ կարացին ի ժամուն վճարել, միաբանութեամբ աղօթս արարեալ՝ յԱստուած ապաստան առնէին զկեանս առնն հաւատացելոյ։

Իսկ նախարարքն հրաժարեցին ի սրբոցն յորդառատ արտասուօք, և ողբալից ուրախութեամբ անկեալ յոտս նոցա աղաչէին մեծաւ պաղատանօք՝ յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ. «Զի մի՛ ոք ի մէնջ, ասեն, թուլացեալ և ելեալ արտաքս ի հաւասար միաբանութենէս, կերակուր լիցի չարաբարոյ գազանին»։

Իսկ երանելիքն միաբան քաջալերէին զնոսա և ասէին. «Զօրացարուք, եղբարք, ի Տէր և մխիթարեցարուք ի մարդասիրութիւնն Աստուծոյ, որ ոչ թողու զձեզ որբս, և ոչ ի բացէ առնէ զողորմութիւնն իւր ի մէնջ հաւատով ի Քրիստոս. բազում բարեխօսիւքն, զոր ունիմք առ նմա, ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց, և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց։ Այլ նոյն Տէր է, որ զօրացոյց զառաջին նահատակսն՝ խառնելով զնոսա ի գունդս հրեշտակաց իւրոց. նոցուն սուրբ ոգիք և ամենայն դասք արդարոց հասցեն ձեզ յօգնականութիւն համբերութեան, զի ընդ նոսին նոցունց պսակացն արժանի լինիջիք»։

Զայս խօսէին ընդ նոսա, և զգիշերն ամենայն սաղմոսիւք ի գլուխ տանէին. իսկ ի ժամ առաւօտուն ասէին ամենեքեան. «Ծագեա, Տէր, զողորմութիւնս քո՝ ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիղ են սրտիւք։ Մի՛ եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։ Անդ անկցին ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն. մերժեցան, և այլ մի՛ կարասցեն հաստատել»։

Նույն ժամին նրանք մեծ խորհրդակցություն ունեցան, թե ի՞նչ եղանակով կարողանան փրկել մոգպետին, որպեսզի արքունիքում չլսեն և բարկությունը կրակի պես չբորբոքվի մնացածների վրա։ Երբ այդ միջոցին չկարողացան [խորհուրդը] վերջացնել, միաբանությամբ աղոթք արին և այն հավատացյալ մարդու կյանքը աստծու ձեռքը հանձնեցին։

Իսկ նախարարները սրբերից բաժանվեցին հորդառատ արտասուքներով, և ողբալից ուրախությամբ նրանց ոտներն ընկած՝ սաստիկ աղաչում-պաղատում էին, որ սուրբ հոգուն հանձնեն նրանց, «Որպեսզի, ասում են, մեզնից ոչ ոք չթուլանա և հավասարակաց միաբանությունից դուրս գալով՝ չարաբարո գազանին կերակուր դառնա»։

Իսկ երանելիները միաձայն քաջալերում էին նրանց և ասում. «Եղբայրնե՛ր, զորացե՛ք Տիրոջով և մխիթարվեցե՛ք աստծու մարդասիրությամբ, որ ձեզ որբ չի թողնում, և չի հեռացնում մեզնից իր ողորմությունը Քրիստոսի հավատով. շնորհիվ այն բազմաթիվ բարեխոսների, որ ունենք նրա մոտ, ձեր վառած կանթեղները չեն հանգչի, և չի ուրախանա ձեր կյանքի խավարասեր թշնամին։ Նույն Տերն է, որ զորացրեց առաջին նահատակներին, խառնելով նրանց իր հրեշտակների գնդերի մեջ. Նրանց սուրբ հոգիները և արդարների ամբողջ դասը կհասնեն ձեզ օգնելու համբերության մեջ, որպեսզի նրանց հետ միասին արժանի լինեք նրանց պսակներին»։

Այս էին խոսում նրանց հետ և ամբողջ գիշերը լուսացնում սաղմոսներով, իսկ առավոտյան ժամին բոլորն ասացին. «Տե՛ր, քո ողորմությունը ծագի՛ր նրանց վրա, ովքեր ճանաչում են քեզ, քո արդարությունը՝ ովքեր ուղիղ են սրտով։ Ամբարտավանների ոտքը թո՛ղ մեզ վրա չգա, և մեղավորների ձեռքերը թո՛ղ չդողացնեն մեզ։ Այնտեղ կործանվեն բոլորը, ովքեր անօրենություն են գործում. մերժվեցին, և այլևս

---

1 ԲԽՃ¹α չիք մեծ ԲԳԴԵԺԿՀՏ³ եթէ 2 α կարեն ապրեցուցանել 2—3 ԲԳԴԵα յարքունիս 3 ԲԴԸՃ¹,¹²α բորբոքեսցի բարկութեամբ ԳԵԸԺԼԽԿՏ¹Տ²Տ³Ճ⁴,⁷,¹⁴,¹⁷⁻¹⁸ բորբոքեսցի բարկութիւն ԱՋԷԹԻVA չիք բարկութիւն 4 ԲՃ¹α չիք ինչ α կարասցին Ա վճարեալ ԲԴα վճարել ի ժամուն 5 ԲՃ¹ ապաստան արարեալ ԲԳԴԻ առն α ապաստան արարին զկեանս առն 7 Դ նախարարք ԲՃ¹ յորդ և առատ 8 ԹԻ ի յոտս Բ աղաչէին Ը աղաղակէին փխ աղաչէին α աղաչէին նոցա 9 Թ չիք զնոսա ՋԷV ի հոգւոյն սրբոյ 9—10 ԸԼԽ ի ձէնջ Բα զի մի՛ ոք, ասէ (α ասեն), թուլացեալ ի մէնջ և ելեալ 10—11 Բ ի հաւասարութենէս և կերակուր Բ չիք միաբանութենէս Ի միաբանութենէն 11 Դ և կերակուր լինի Կ լինիցի է չարոց բարոց α չարաբարոյ 12—13 Բ զօրասցուք 13 ԸԽ չիք եղբարք Հ եղբարք իմ A չիք և Բ և մխիթարեսցուք ԵՀ ի մարդասիրութենէն 14 ԲՃ¹α Քրիստոսի աստուծոյ α չիք որ ոչ թողու զձեզ որբս ԵԺԽՀ ի բացեալ 14—15 ԲԳԴԵՀα զողորմութիւն 15 ԲՃ¹ ի ձէնջ ԲԳԴԵԽԿՀՃ¹α հաւատովք ի Քրիստոս Յիսուս ԲՃ¹α չիք բազում Թ ի բազում ԱԳԵՋԷԻԽԿՀ բարեխօսիւք 16 Տ³Aα առ նա Գ մերոց փխ ձերոց 16—17 է չիք ոչ (ուրախ) ԲԸ չիք «և ոչ ուրախ—կենաց ձերոց» 17 ԵՀ տէրն է Գ չիք է 18 ԳԼԿ ի գունդ 19 ԵՏ² նոցունց α նոցին ԲԴԵԺՀՏ²Ճ¹α ոգիքն էԹԿ հոգիք Ը հոգիքն ԲՃ¹α չիք ամենայն ԳԵԺԽՀՏ² արդարոցն 20 ԲԳԴԵԸԺԼԽԿՏ¹Տ²α հասանեն Ի օգնականութիւն Գ համբերութեանն Դ չիք համբերութեան 20—21 ԳԴα նոցուն 21 ԲՃ₁α լիցուք ԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² լինիք 22 ԸԽՃ² սաղմոսիւք և օրհնութեամբ 22—23 Դ ի գլուխ տանէին սաղմոսիւք 23 ԲՃ¹α հանէին փխ տանէին Գ ամենեքեանն 23—24 ԸԽ չիք տէր Հ չիք «իսկ ի ժամ—ամենեքեան» 24 Դα որք ԵՀ զքեզ տէր 25 ԵԸԺԽՀ որ փխ ոյք Դ որք ուղեղ են ԵՀ ոտք ԲՃ¹α որ ուղեղ են սրտիւք և որ զհետ այսորիկ (ուրեմն չիք 25—28 «Մի՛ եկեսցէ—մի՛ կարասցէն հաստատել») 26 Ը զիս փխ զմեզ 27 ԳԿ ոյք փխ որ ԳԼԾՀՏ¹Տ² մերժեսցին Ե մերժեցին(!) Ը մերժեսցեն ԱԴՋԷԹԺԻԽԿVՏ³ մերժեցան 28 Դ կարասցին հաստատել ԹԺԻՄՏ¹Տ² հաստատել ի հասանեն(!)։

Եւ անդէն վաղվաղակի հասին դահիճքն ի դուռն բանտին, մտին ի ներքս և տեսին, զի որ յառաջ մոգպետն էր, և նմա իսկ յանձն արարեալ էր պահել զնոսա, նստէր ի մէջ նոցա և լսէր ի նոցանէ, նա և քաջալերէր ևս զնոսա չերկնչել ի մահուանէ։ Իբրև տեսին զմեծ սքանչելիսն դահիճքն, յոյժ զարմացան ընդ իրսն, այլ ոչ ինչ իշխեցին հարցանել ցնա· բայց չոգան և պատմեցին Դենշապհոյ, որում յանձն արարեալ էր զչարչարանս սրբոցն։

Իսկ նա իբրև լուաւ ի դահճացն արքունի, զահի մեծի հարաւ ի միտս իւր, թէ գուցէ և ինքն անձամբ ի ներքս լիցի, քանզի և ծանօթագոյն ևս էր առնն։ Հրամայեաց հանել ի բանտէ անտի զամենեսեան կապանօքն, և հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրասախաւ։ Եւ ի ծածուկ խօսէր ընդ մոգպետին, եթէ զի՞նչ պատճառք իցեն կապանաց նորա։ Եւ պատասխանի այրն և ասէ ցնա. «Մի՛ խօսիր ընդ իս ի ծածուկ և մի՛ լսեր զխորհուրդս լուսոյ ի մէջ խաւարի, զի բացան աչք իմ արդ, քանզի տեսի զլոյսն երկնաւոր։ Եթէ կամիս լինել խորհրդակից կենաց, հարց ցիս յանդիման հրապարակաւ, և պատմեմ քեզ, զոր տեսի զմեծամեծսն Աստուծոյ»։

Եւ իբրև լուաւ ի նմանէ զամենայն, և ստուգեաց ևս վասն իւրոյ միաբանութեանն, եթէ ոչ քակտի ի սրբոցն հաւանութենէ, ոչ իշխեաց ձեռն արկանել ի նա, թէպէտ և ունէր հրաման յարքունուստ։ Այլ փութացաւ, և ինքն երթեալ պատմէր թագաւորին ի ծածուկ զամենայն որպէս զիարդ լուաւ ի նմանէ։

Եւ պատասխանի թագաւորն և ասէ ցԴենշապուհ. «Մի՛ որ ամենևին լուիցէ զայդ ի քէն, մանաւանդ վասն տեսլեանն մեծի, որ

---

1 Բα համանէին դահիճք   2 ԳԴԵԸԺԼԽԿՀ չիք զի S^2 չիք որ ԲՃ^{1}α յառաջագոյն Ժ մոգն էր Բ և նորա փխ և նմա իսկ   3—4 ԲԳԴԵԸԺԼԽՀS^1Ճ^{1}α լսէր նոցա   4 Դ քաջալերէին զնա α քաջալերէր իսկ զնոսա ԵԽS^2 զնոսա ևս Թի չերկնչիլ Խ ոչ երկնչել 5 Ձէ դահիճք ԵՀ ընդ իրս   5—6 Ի բայց ոչ ինչ իշխեցին   6 ՁէV յիշխէին S^3Ա իշխէին Բ ընդ նոսա փխ ցնա ԲԻԼS^1Ճ^{1}α այլ փխ բայց   8—9 Բα ի միտս իւր և ասէ՝ եթէ գուցէ ինքն   9 ԳԴԵԸԼԽԾԿՀS^1S^2Ճ^1 եթէ ԱՁէԹԺԻVS^3Ա թէ Դ ի ներս ԲԳԸԺԽԾԿS^1S^2Ճ^{1}α լինիցի ԲԳԴԵԼԽԿՀՃ$^1S^2$α չիք և   9—10 ԳԴԸԺԼԽԿՀS^2 չիք ևս S^2 քանզի ծանոթագոյն էր առնն   10—11 Դ առն Դ հանել զամենեսեան ի բանտէ անտի ԲՃ^{1}α չիք կապանօքն ԳԴԵԺԿՀ կապանօք ԵՀ զամենեսեան   11 ԲԴα և հեռացոյց ԳVS^2 հեռացուցանել Դ ի քաղաքէն Դ չիք անտի   12 Կ չիք պարսիկ ԱԲՁէԹԻS^3 հրասախաւ V հրասխաւ(!) ԳԵԸԺԼԽԿՀ հրամանաւ   13 α են փխ իցեն ԳԵԺԼԽԿՀ կապանացն Ա զառանցանաց փխ կապանաց Ձ չիք եա   14 ԲԳԵԸԺԼԽԿՀS^1S^2α չիք ցնա Ե յիս   15 ԳԴԵԸԺԽ

չկարողացան հաստատվել»։

Այդ միջոցին դահիճները շտապով հասան բանտի դուռը, ներս մտան և տեսան, որ նա, ով առաջ մոգպետ էր և հենց նրան էր հանձնված պահել նրանց, նստած էր նրանց մեջ և լսում էր նրանց. նույնիսկ քաջալերում էլ էր նրանց, որ մահից չվախենան։ Երբ այս մեծ հրաշքը տեսան դահիճները, սաստիկ զարմացան այդ բանի վրա, բայց չհամարձակվեցին որևէ բան հարցնել նրան. սակայն գնացին և պատմեցին Դենշապուհին, որին հանձնարարված էր սրբերին չարչարելը։

Իսկ սա, երբ լսեց արքունի դահիճներից, մեծ երկյուղի մեջ ընկավ, մտածելով՝ թե գուցե անձամբ իրեն էլ գործի մեջ խառնեն, մանավանդ որ շատ լավ ծանոթ էր այն մարդուն։ Հրամայեց բանտից հանել ամենքին իրենց կապանքներով և այն քաղաքից տասներկու պարսկական հրասախ[150] հեռացրեց։ Եվ թաքուն խոսեց մոգպետի հետ, թե ի՞նչ է նրա կալանավորված լինելու պատճառը։ Պատասխան տվեց այն մարդը և ասաց. «Թաքուն մի՛ խոսիր ինձ հետ և լուսավոր մտքերը մի՛ լսիր խավարի մեջ, որովհետև այժմ իմ աչքերը բացվեցին, քանի որ տեսա երկնավոր լույսը։ Եթե ուզում ես կյանքի խորհրդակից լինել, դեմ հանդիման հրապարակով հարցրու ինձ, և կպատմեմ քեզ Աստծու մեծամեծ գործերը, որ տեսա»։

Երբ նա լսեց նրանից ամեն բան և ստուգեց էլ նրա միաբանության վերաբերմամբ, որ չի բաժանվի սրբերի համերաշխությունից, չհամարձակվեց ձեռք բարձրացնել նրա վրա, թեպետև արքունիքից հրաման ուներ։ Այլ շտապեց, ինքն անձամբ գնաց թագավորի մոտ և թաքուն պատմեց նրան այն ամենը, ինչ և ինչպես լսել էր նրանից։

Պատասխան տվեց թագավորը և ասաց Դենշապուհին. «Ոչ ոք ամենևին չլսի քեզանից այդ բանը, մանավանդ այն մեծ տեսիլքի մասին,

---

ԵԿՀS^1S^2Ճ^{1,2}α բաց են փխ բացան α ականջք իմ փխ աչք իմ Դ չիք արդ α գլոյս   16 ԲՃ^{1}α կամաց իմոց փխ կենաց   16—17 ԲՃ$^{1,7-10,11,13,17-19,23-25,28}$α չիք յանդիման ԳԴԵԸԺԼԽԿՀ$S^1S^2$Ճ$^{5-8,12,14,27}$ յանդիման հրապարակաւ   17 ԱՁէԹԻVS^3Ա չիք հրապարակաւ ԱS^3 զի փխ զոր   17—18 ԲՃ^{1}α պատմեմ քեզ զմեծամեծս աստուծոյ զոր տեսի ԳԴԵԺԼԽS^2 զմեծամեծս   18 S^2 յաստուծոյ   19 ԲՃ^{1}α Եւ իբրև զամենայնն ստուգեաց փխ և իբրև լուաւ ի նմանէ զամենայն և ստուգեաց ԲՃ^{1}α և ևս և վասն Դ չիք ևս 20 Ե միաբանութեան ԱԴԵՁէԸԹԺԻԽԿՀS^2 քակի ԱԲՁէԹԻVՃ^{1}α միաբանութենէ Դ ի սուրբ միաբանութենէն փխ հաւանութենէ   21 ԲՃ^{1}α ի նա ձեռն արկանել   22 ԲԴα չիք և ԲՃ^{1}α ինքն երթալ պատմել S^1S^2 պատմել   23 Բα զամենայնն ԳԼԿ և լուաւ   24 ԲՃ^{1}α թագաւորն Դենշապհոյ և ասէ Ե թագաւոր   25 Ժ լուիցէ ամենեքին .24 ԲՃ^{1}α չիք ի քէն ԴՃ^{2}α վասն տեսլեանն մեծի մանաւանդ։

երևեալ է նմա, զի մի՛ տգէտ մարդիկ երկմտեալ՝ բաժանեսցին ի մեր հաստատուն օրինացս։ Մինչ մեք զայլս կամէաք հնազանդեցուցանել՝ թերևս զոգիս գտցեն, իբրև նոցա ոչ ինչ կարացաք առնել, մեր որ վարդապետ օրինացդ էին, զկնի նոցա մոլորութեանն խոտորեցան։

«Նա և այն ևս չար է մեզ քան զամենայն, զի ոչ դուզնաքեայ ոք խոտորեցաւ ի նոցա օրէնսն, այլ այր մի համակդեն, երևելի ընդ ամենայն Վերին աշխարհս։ Եթէ փայքարիմք ընդ նմա, նա տեղեկագոյն է քան զամենայն վարդապետս աշխարհիս. զուցէ ի հիմանէ խարխարեալ աւերէ զօրէնս մեր։ Եւ եթէ դատիմք զնա ընդ այլ չարագործսն, նա և այնպէս հռչակեալ ելանէ համբաւ քրիստոնէութեան նորա, և մեծ անարգանք զկնի զենիս ձգին։ Եւ եթէ սրով ևս վախճանեսցի, բազում են քրիստոնեայք ի կարաւանիս, ընդ ամենայն երկիր ցանեալ ցրուեսցեն զոսկերս նորա։ Սակաւիկ ինչ էին մեզ անարգանք առ ամենայն մարդիկս, ուր մեծարեալ պատուէին ոսկերք նածրացւոցդ. իսկ եթէ մոգուցդ և մոգպետացդ զնոյն պատիւ կրեսցեն, մեք մեզէն լինիմք քակտիչք օրինացն մերոց։

«Այլ այժմ իմ է քեզ երդումն տուեալ յանմահ դիսն. նախ ըզդառնացեալ ծերն կոչեա առաջի քո. եթէ հաւանեսցի սիրով, և զեղջացեալ ապաշաւեսցէ զկախարդութիւնս նոցա, մեծարեսջիր զնա պատուով ըստ առաջին կարգին, և մի՛ ոք գիտասցէ զթշնամանս նորա ամենևին։ Ապա թէ ոչ հաւանեսցի և ոչ կամեսցի առնել բա-

---

1 ԱԲՁԷԹՎα երևեալ էր և մարդիկք 1—2 α բաժանին ի մերոց ԲՃ^1 բաժանին ի մերոց Դ ի մերոց 2 Հ հաստատուն օրինացս(!) Գ մինչև և կամէաք զայլս 2—3 ԲՃ^{2}α հնազանդել դի ԳԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 հնազանդել 3 ԱԲԳԴՁԷԹԻα ինչ ոչ Բ կարաց 4 ԳԴԵԸԼԽՀՏ^2 վարդապետք ԲՃ^{1}α օրինադիրն էր Հ նորա փխ նոցա Ե մոլորութեան 4—5 ԲՃ^{1}α շրջեցաւ ԳԼՏ^1 հետևեցան Ի խոտորեցաւ Է խորհեցան 6 Բ այս ԲԴ չիք ևս է այնու ևս 6—7 Բ դոյնաքեայ որ է, որ խոտորեցաւ Դ դոզնաքեայ ԸԽՏ^2 զի ոչ եթէ այր դուզնաքեայ ԼՏ^1 ինչ ոք α դուզնաքեա որ էր որ խոտորեցաւ 7 ԲՃ^{1}α մոլորութիւնն փխ օրէնսն ԵԸԺԽՀ համակդեն (լուսանցքում՝ բոլորից ուսուցիչ) Թ համակդեն (լուսանցքում՝ ամենահաւատ) Ի և երևելի 8 ԲՃ^{1}α չիք Վերին Ի աշխարհն Հ աշխարհաւ ԲՃ$^{17-19}$ պարքարիմք ԳՏ^{1}Տ^2 փայկարիմք ԴՃ^{1}α պայքարիմք ԵԸԺԽՀ փոքարիմք 9 Ի աշխարհին 9—10 Բ ի հմանէ Ի ի հիմանց է ի նմանէ(!) α ի հիմանէ ի վեր 10 ՁԷ խարխատեալ Թ խարխարեալ Վ խրխատեալ ԵԹԻ դատեմք է դատանիմք փխ դատիմք 11 ԸԽ չիք նա 12 է մեծարանօք փխ մեծ անարգանք ԸԽ անարգանօք ԲՃ^{1}α դէնիս մերոյ ՁԷՎ ձգեն Թ դէնիս (լուսանցքում՝ հաւատոյս) 13 ԲՃ^{1}α չիք ևս ԲԴ քրիստոնեաք են α քրիստոնեայք են 14 ԱԲԳԵԹԺԻԼԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^1 ցանեալ ցրուեն Վ ցրուեսցին Դ անցեալ ցրուեն ԸԽ ցրուեսցի ԸԽ ոսկերս նորա A նոցա

որ երևացել է նրան, որպեսզի տգետ մարդիկ երկմտելով՝ չբաժանվեն մեր ճշմարիտ կրոնից։ Մինչ մենք ուզում էինք ուրիշներին հնազանդեցնել, որ թերևս իրենց հոգիները գտնեն, երբ մենք չկարողացանք նրանց ոչինչ անել, մեր կրոնի վարդապետները շեղվեցին-գնացին նրանց մոլորության հետևից»։

«Նաև մեզ համար ամենից վատն այն է, որ մի չնչին մարդ չէ, որ շեղվել է դեպի նրանց կրոնը, այլ մի համակդեն մարդ, այս ամբողջ Վերին աշխարհում[151] երևելի։ Եթե պայքարի մտնենք նրա հետ, նա ավելի տեղյակ է, քան մեր աշխարհի բոլոր վարդապետները. գուցե հիմքից խարխլելով քանդի մեր կրոնը։ Եվ եթե նրան մյուս չարագործների հետ պատժենք, այդ ձևով էլ կհռչակվի նրա քրիստոնեության համբավը, և մեծ անարգանք կկրի մեր հավատը։ Եթե մինչև իսկ սրով սպանվի, մեր բանակում բազմաթիվ քրիստոնյաներ կան, նրա ոսկորները կցրեն-կտարածեն ամբողջ երկրով մեկ։ Քիչ էր մեր անարգանքը այն ամեն մարդկանց մոտ, ուր մեծարում-պատվում էին այդ նածրացիների ոսկորները, իսկ եթե մոգերի և մոգպետների ոսկրներն էլ նույն պատիվն ստանան, հենց մենք ձեր ձեռքով քանդած կլինենք մեր կրոնը։

«Իսկ այժմ ես քեզ երդվեցնում եմ անմահ աստվածներով. ամենից առաջ՝ այդ ժանտ ծերունուն կանչի՛ր քո առաջ. եթե սիրով համաձայնի և զղջալով հրաժարվի նրանց կախարդություններից, մեծարիր նրան՝ պատվելով ինչպես առաջ. և թող ոչ ոք ամենևին չիմանա նրա նախատինքը։ Իսկ եթե չհամաձայնի և չկամենա ականջ դնել քո խոսքերին,

---

14—15 Բ ոչ սակաւ ինչ էին α սակաւ ինչ Տ^2 սակաւիկ ինչ 15 Բ ի մեզ Բ մարդիկ ԳԵԿ մարձիկս Հ մերձիկս 15—16 ԲՃ^{1}α ուր և պատուեալ մեծարէին 16 Հ պատուեն Դ պատուին ԱՁԹԻՎ ոսկերքդ նածրացւոյդ Տ^3 ոսկերքդ նածրացւոցդ է ոսկերացդ նայծրացւոյդ Բ ոսկերք նարծրացոց ԼԿՀՏ^{1}Տ^2 ոսկերքդ նածարացւոց Հ (լուսանցքում՝ նազորացւոց) ԳՃ^1 նածարացւոց Դ ոսկերքդ նածարացւոյդ ԵԺ ոսկերկդ(!) նածարացւոց (լուսանցքում՝ նազօրեցոց) Ը ոսկերս նածարացւոց (լուսանցքում՝ նազորեցւոց) Թ ոսկերքդ նածրացւոյդ (լուսանցքում՝ նազօրացւոյդ) Խ զոսկերս նածարացւոց (լուսանցքում՝ նազօրացւոյդ) α ածարացւոց ԱՁԼԹԻՀՎՏ^3 մոգպետացդ ԲՃ^{1}α մոգաց և մոգպետացդ A մոգբետաց Լ մոգուցն Տ^2 ի մոգացդ և ի մոգպետացդ 17 α մեզզէն ԵԼԺԼԾՏ^{1}Տ^2 մեզոյն A լինեցիմք ԵԸԺԾԽՏ^2 քակիչ Հ քաւիչ(!) Տ^1 քակիչք ԵԸԺԽՀ օրինացս ԳՁԷԹ օրինաց 17—18 ԲԳԻԿՃ^1 քակտիչ օրինաց մերոց 19 ԱԳԴԵԸԹԺԻԼԽՀα չիք է Բ այժմիկ երդումն տուեալ է քեզ ԾՏ^{1}Տ^2 իմ երդումն տուեալ քեզ 20 է կոչեաց α հաւանեսցի քեզ սիրով 21 ԲՃ^{2}α ապաշխարիցէ ԳԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,5-6}$ ապաշխարեսցէ ԱԲՁԷԸԹԻԼՀՎՏ^{2}Տ^3 զկախարդութիւն ԳԿ զկախարդութիւն 21—22 ՎՏ^{3}A սիրով պատուով ԲՃ^{1}α չիք պատուով ԴԵԺԼԽԿՀ պատուովն է պատուով զնա սիրով 22—23 ԲԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճα չիք ամենևին Դ ամենևին զթշնամանս նորա ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 և ոք մի՛ Չ գիտասցէ ԱԲՁԷԹα ապա եթէ 23 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 հաւանի ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 կամի ԴԻՃ^{2}α կամիցի։

նից քոց, յարուսջիր ի վերայ նորա բազում ամբաստանս յաշխարհէ անտի, զի վնասակար գացի յիրս արքունի. և աշխարհաւ փուրսիշն ի վերայ յարուսջիր, և չկօթակ արասջիր յայնկոյս քան զԿուրան և զՄակուրան. և անդ ընկեցեալ զնա ի վիրապ մի, և ընկալցի զմահ թշուառութեան։ Եւ զայլազենսն փութանակի կարճեա ի կենաց աշխարհիս, զի մի՛ դղրդեսցեն զօրէնս մերոյ աշխարհիս։ Զի եթէ զճարտար մոգպետն այնպէս արագ աշակերտեցին, տգէտ մարդիկ զիա՞րդ կարասցեն կալ առաջի նոցա պատիր խաբէութեանն»։

Արդ եւ նստաւ Դենշապուհ արտաքոյ բանակին յատենի, որպէս ասացաք, հեռի երկոտասան հրասախաւ։ Հարցանէր զմոգպետն և ասէր. «Իշխանութիւն առի վասն քո՝ ո՛չ միայն բանիւ հարցանել, այլ և ամենայն հարուածովք տանջանաց։ Մինչև ձեռն արկեալ է իմ ի քեզ, ընկալ զմեծարանս և արհամարհեա զանարգանս, և խնայեա ի պատուական ալիսդ։ Թող անդր ի բաց զքրիստոնէութիւնդ՝ զոր ոչ ունէիր ի բնէ, և դարձիր անդրէն ի մոգութիւնն, որպէս զի վարդապետ իսկ էիր բազմաց»։

Ետ պատասխանի երանելին և ասէ. «Աղաչեմ զքեզ, տէր, որ յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի կատարեալ, մի՛ ըստ առաջին սիրոյն գթար դու յիս, այլ կատարեա ի վերայ իմ զկամս չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն ի վերայ իմ՝ դատեա զիս»։

Յայնժամ իբրև ետես Դենշապուհ, եթէ առ ոչինչ զպատանալիսն արքունի համարեցաւ, և ոչ ողոքանացն երեսս ինչ արար, և քան ի ծածուկ՝ յայտնի եւ կամէր զի խօսեսցի, կատարեաց ի վերայ նորա ըստ խրատուն արքունի։ Եւ զաղտագողի ընկեցաւ ի հեռաւոր օտարութիւն. որպէս զիարդ և ուսաւ ի վարդապետէն, և արար։

---

1 VՏ^{3}A խմոց փխ քոց Դ չիք բազում 1—2 ԲՃ^{1,2}α ամբաստանութիւնս բազումս ի յաշխարհէ անտի ՁէV ամպաստանս Ըխ ամբաստանութիւն 2 ԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 յարքունի իրս Ժ յարքունական իրս α յիր արքունի Բ չիք և Բ փուրշիշն Դ փուրշիսն ԵԼխ փուրսիշ Հ փուրշիշ α փուշիշն 3 Դ արասջիր փխ յարուսջիր Խ յարուեսջիր(!) ԳԿ չկապթակ ԴԼՏ^1 չիք և չկօթակ արասջիր ԵԸԹԺԽՀ չկօթակ (լուսանցքում՝ տարաշխարհիկ) ԳԿՃ^{12} զՏուրան 4 α և անդէն ԲԴՃ^{1}α ընկեա Հ ընկեալ ԲՃ^{1}α վիհ փխ վիրապ Դα ընկալցի նա 5 ԲՃ^{1}α թշուառութեամբ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զայլակղէնսն Թ զայլադէնսն (լուսանցքում՝ այլահաւատս) α վճարեա փխ կարճեա 6 α դղրդեսցեն ԵԸԺԽՀՏ^{1}Տ^2 աշխարհիս մերոյ ԽՏ^{1}Տ^2 թէ 7 Թ Ճարտար Գ այսպէս ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 երագ Դ մարդիք Խ մարդիկք 8 ԵՀ խաբէութեան 9 α յատենին 10 ԱԲՁէԹԻVՏ^3 հրասխաւ ԳՏ^{1}Տ^2 հրասահաւ ԳԵԸԺԼԽՀ հրահասաւ(!) 10—11 α զմոգպետն 11 ԲՃ^{1}α ի վերայ քո փխ վասն քո ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α բանիւք 12 Բ չիք այլև ԳԵԸԼՀ չիք և Դα հարուածաւք 12—13 ԲԴՃ^{1}α արդ մինչև իմ ձեռն արկեալ է ի քեզ Դ մինչև է իմ

նրա վրա բազմաթիվ մեղադրանքներ բարդիր այն երկրի կողմից, որպեսզի վնասակար համարվի արքունի գործերի մեջ. հրապարակով դատաստան արա և աքսորիր Կուրանից ու Մակուրանից[152] էլ այն կողմը. այնտեղ թող նրան գցեն մի վիրապի մեջ և թշվառության մեջ մեռնի։ Իսկ այլակրոնների կյանքը շուտով կարճիր այս աշխարհից, որպեսզի մեր երկրի կրոնը չսասանեցնեն։ Որովհետև եթե ճարտար մոգպետին այնպես շուտով իրենց աշակերտ դարձրին, տգետ մարդիկ ինչպե՞ս կարող են նրանց ստապատիր խաբեությանը դեմ կանգնել»։

Արդ, Դենշապուհը ելավ ատյան նստեց բանակից դուրս, ինչպես ասացինք, տասներկու հրասախ հեռու։ Հարցրեց մոգպետին և ասաց. «Քո վերաբերմամբ իրավունք ստացա ո՛չ միայն խոսքերով հարցնել, այլև ամեն տեսակ տանջանքներ տալով։ Քանի դեռ քեզ ձեռք չեմ տվել, ընդունի՛ր մեծարանքներն ու արհամարհի՛ր անարգանքները և խնայի՛ր քո պատվական ծերությունը։ Հեռացի՛ր քրիստոնեությունից, որ ի բնե չունեիր, և նորից դարձի՛ր մոգության, ինչպես որ շատերի համար նույնիսկ վարդապետ էիր»։

Պատասխան տվեց երանելին և ասաց. «Աղաչում եմ քեզ, տե՛ր, որ առաջ իմ աչքում հարազատ եղբայր էիր համարվում, իսկ այսօր՝ կատարյալ թշնամի. մի՛ գթա ինձ առաջվա սիրուդ համեմատ, այլ կատարի՛ր ինձ վրա ձեր չար թագավորի կամքը, և ինչպես որ իրավունք ես ստացել իմ վերաբերմամբ՝ այնպես էլ պատժի՛ր ինձ»։

Այն ժամանակ, երբ Դենշապուհը տեսավ, որ ոչ մի բանի տեղ չդրեց թագավորի սպառնալիքները, և ոչ էլ իր հորդորներին ուշք դարձրեց, և ավելի կամենում էր, որ հայտնի խոսվի և ոչ թե ծածուկ, նրա վերաբերմամբ վարվեց թագավորի պատվերի համաձայն։ Գաղտագողի քշել տվեց հեռավոր օտարություն. ինչպես որ սովորել էր իր ուսուցչից, այնպես էլ արեց։

---

13 Գ չիք է Կ արարեալ փխ արկեալ V վասն քո ի քեզ Տ^{1}Տ^2 արկեալ եմ ի քեզ 14 Բ չիք ի բաց 15 ԲԳԼԽՏ^{2}α զքրիստոնէութիւնն Ե զքրիստոնէութիւն Զ քրիստոնէութիւնդ ԳՀ անդէն Դ չիք անդրէն 15—16 ԲԳԵԼԽԿՀՏ^{2}α ի մոգութիւն 16 VՏ^{3}A չիք իսկ ԷՀ ի բազմաց(!) 17 ԳԵԸԺԼԽԿՀՏ^2 չիք տէր 18 α յառաջն Բ քան փխ իբրև α իբր ԱՁէԹԻVՏ^3 հաստատեալ փխ համարեալ α չիք յաչս 18—19 ԲՃ^{1}α չիք և այսօր թշնամի կատարեալ 19 Հ զթոյն զթայր ԲՃ^{1}α չիք դու 20 Դ չիք ի վերայ իմ Լ չիք իմ 21 Ե չիք որպէս ԲՃ^{1}α և որպէս առեր ի վերայ իմ իշխանութիւն 22 ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 յայնժամ ժամանակի 22—23 ԳՋէԻ զպատանալիս Խ ոչինչ համարեցաւ 23 ԳԴԿ ողոքանաց Խ ուղաքանացն Հ երեսս α ինչ երեսս արար 24 ԲՃ^{1}α յայտնապէս փխ յայտնի եւ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α եթէ փխ զի ԲՃ^{1}α յայնժամ կատարեաց 25 α ըստ խրատու ԳԴՏ^2 զաղտագողեալ ԵԸԺՄԿՀՏ^{1}Ճ^{21} զաղտ զողացի 26 α զիարդ ուսաւ ԲԴ չիք և (արար)։

Եւ հրամայեաց նա Դենշապհոյ երկու ևս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն. զՋնիկանն, որ էր մարզպետ արքունի, և զՄովան հանդերձապետ՝ ի ձեռանէ Մովպետան մովպետի։

Արդ երեքեան սոքա իւրաքանչիւր սպասաւորօք առին ըզուրբսն յայնմ անապատէ, և փոխեցան նոյնչափ ևս հեռագոյն ի մեւս ևս դժնդակ տեղի ի նմին գիշերի։ Եւ զոք ի կարաւանէ անտի ոչ թողին տեսանել, ո՛չ ի Հայոց և ո՛չ յամենայն քրիստոնէից, և ո՛չ բնաւ յարտաքին հեթանոսաց։ Եւ սպասաւորքն, որ էին ի վերայ կապելոցն անդէն ի քաղաքին, հրամայեցին պահել զգուշութեամբ, զի զհետս նոցա մի՛ ոք գիտասցէ՝ ընդ որ տանիցեն ի մահու տեղի, մի՛ նոքա և մի՛ ամենևին ոք ի մարդկանէ։

Բայց այր մի խուժիկ ի զօրացն արքունի, որ ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւնն, և վիճակեալ էր ի դասս դահճացն, և կայր ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանօքն, եկն եմուտ ի մէջ գիշերին և խառնեցաւ ի դասս նախարարացն։ Առաջին դասն ի միջնոյն կարծէր զնա, և միջինն երրորդին, և երեքեանն միմեանց համարէին զնա. և ոչ ոք ի նոցանէ եհարց՝ եթէ «Դու ո՞վ ես ընդ մեզ», ո՛չ ի տերանցն և ո՛չ ի սպասաւորացն։

Իբրև հասին ի տեղի անապատին, որ ամենևին անբոյս էր ի դալարւոյ, և այնպէս էր ապառաժ դժնեա, զի և ոչ նստելոյ անգամ տեղի գտաւ անդ նոցա, իջին հեռագոյն նախարարքն երեքեան, և հրամայեցին դահճացն իւրեանց կապել զոտս և զձեռս նոցա։ Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա, և երկու երկու լծեցան և առին ի քարշ։ Եւ այնպէս նշեցին և ճողքեցին ընդ ապառաժ տե-

Եվ [թագավորը] հրամայեց Դենշապուհին ավագ գործակալներից երկու ընկեր էլ վերցնել իրեն օգնական—Ջնիկանին, որ արքունի մարզպետ էր, և Մովան հանդերձապետին՝ մովպետան մովպետի կողմից։

Արդ, այս երեքը, իրենց սպասավորների հետ միասին, վերցրին սրբերին այն անապատից և նույն գիշերը տարան նրանց նույնչափ հեռու մի ավելի դժնդակ տեղ։ Եվ բանակի միջից ոչ ոքի չթողին տեսնելու նրանց, ո՛չ հայերից և ո՛չ էլ ուրիշ քրիստոնյաներից, ո՛չ էլ բոլորովին արտաքին հեթանոսներից։ Եվ այն քաղաքում կալանավորների վրա նշանակված սպասավորներին հրամայեցին, որ նրանց զգուշությամբ պահեն, որպեսզի ոչ ոք չիմանա նրանց հետքը, որով տանելու են մահվան տեղը. ո՛չ նրանք և ո՛չ էլ ուրիշ որևէ մարդ։

Բայց արքունի զորքից խուժաստանցի մի մարդ, որ ծածուկ քրիստոնյա էր, և որին վիճակված էր դահիճների խմբում լինելու, և տանջական գործիքներով սպասավորում էր օրապահներին, կեսգիշերին եկավ-մտավ և խառնվեց նախարարների խմբերին։ Առաջին խումբը կարծում էր, թե նա միջին խմբից է, միջին խումբը կարծում էր, թե նա երրորդ խմբից է, իսկ երեքն էլ նրան մյուս խմբից էին համարում. և նրանցից ոչ ոք չհարցրեց, թե «Դու ո՞վ ես մեզ հետ», ո՛չ տերերից և ո՛չ էլ սպասավորներից։

Երբ հասան մի անապատ տեղ, որ բոլորովին զուրկ էր բուսականությունից և այնպես դժնյա ապառաժ էր, որ նրանց համար նույնիսկ նստելու տեղ չգտնվեց այնտեղ, երեք նախարարներն իջան մի քիչ ավելի հեռու տեղ և իրենց դահիճներին հրամայեցին կապել նրանց ձեռներն ու ոտները։ Երկար պարաններ գցեցին նրանց ոտներին և երկու-երկու լծվեցին ու սկսեցին քարշ տալ։ Եվ այնպես ձգեցին ու ճղճղոտեցին ապա-

---

1 ժ հրամայեաց (վրան ավելացրած է՝ *ման=հրամայեցաւ*) Դ Դենշապուհ Բ երկու ԲԳԴԵԸԺԾԿՀՏ^{1}Տ^2 չիք ևս 1—2 Դ ընկերակից օգնական α ընկերակից ԲՃ^{1}α օգնականս նմա 2 Թ զՋնիկան ԱԴԷԹԻՃ^{1,27} մայպետ Բ է մայրպետ Գ է փխ էր Գ մապետ Հ մաղպետ Կ մարանապետ 3 Բ մովան մոյպետին Դ մովպան մովպետին ԵԹԺՀ մովպետան մովպետի (լուսանցքում՝ *իշխանաց իշխան*) ԳԸԺԽԿՏ^{2}Ճ^{1,27} անդերձապետ ԴԼՏ^1 անդերձապետն 4 A երկորեան փխ երեքեան Բ սպասաւորք 5 ԱԳԵՁԷԸԺԼԽԿՀ յանապատէ Թ յայն յանապատէ Տ^{1}Տ^2 չիք յայնմ ԲԻՃ^{1}α փոխեցին 6 ԲԳԴԵԺ ի կարաւանէն ԲԴα անդ փխ անտի Դ անտր(!) ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 անդր 7 Գ ի տեսանել Ջ քրիստոնէից 8 ԲՃ^1 սպասաւորսն α զսպասաւորսն 8—9 ԲԳԴԵԺԾԿՀՏ^{1}Տ^{2}α չիք ի վերայ 9—10 ԲՃ^1 զգուշութեամբ պահել Թ չիք պահել α զգուշութեամբ հրամայեցին պահել 10 Բα զհետ ԳԴԵՁԺԻԼԽԿՀՏ^{2}α տանիցին 10—11 ԴԵՀα ի մահուն 11 Բ տեղին α և մի ոք ամենևին 12 ԲՁԷVAՏ^{2}Ճ^{1}α խուժիկ անուն 13 ԳԵԿՀ զքրիստոնէութիւն Թ դահճապետացն 14 ԲՃ^{1}α կապանաւորապահացն ԲԴα գործական ԳԸԽՀՃ^{27} տանջարանաւքն 15 ԲՃ^{1}α և եմուտ չիք եկն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α չիք մէջ Դ ի գիշերի 16 ԱՁԷԹԻV միջնոցն Բ ի միջոյն ԲՃ^{1}α և միջինն յերկրորդէն ԱՁԷԹV երկրորդին 16—17 ԲԼՏ^{2}Ճ^1 երեքեան ի միմեանց 17 ԵԸԺԽՀՏ^1 ի միմեանց ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք զնա Բα ի նոցանէն ԸԼԽ թէ 17—18 Դ ո՞ ԵՀ թէ ով ես դու 18 ԲԻ ի տէրանց Դ և ոչ ի սպասաւորաց 19 ԲՃ^{1}α և իբրև Բ ի տեղին 19—20 ԲՃ^{2,5,12,14,27} ի դալարաբեր բանջարոյ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α ի դալարաբեր բանջարոց ԱՁԷԹԻVՏ^{3}A ի դալարւոյ 20 ԲԸ չիք էր Բ ապառայժն α ապառաժն ԳԴԿ առապար ԵԸԺԼԽՀՏ^2 և այնպէս առապար դժնեայ էր ԲԸ չիք էր α զի ոչ և 20—21 α տեղի անգամ գտաւ նոցա 21 ԵԸԺԼԽՀՏ^1 անդ գտաւ ԲԻ չիք անդ Դ չիք հեռագոյն 22 Ե դահճաց α չիք իւրեանց Հ զձեռս և զոտս նոցա 23 Դ զպարանսն Կ զպարանս ԲՃ^{1}α երկայն ոտից Դ երկայն ԳԴԵԷԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զոտից նոցա 24 ԱԽԾ ձգեցին ճողքեցին ԲԴԼՃ^1 ձգեցին ճեղքեցին ԳԵՁԷԸԹԺԻՀՏ^{1}Տ^2 չիք և (ճողքեցին) α ձգեցին քարշեցին ընդ ապառաժ տեղին ճեղքելով, զի Բ ապառայժ տեղին ԳԵԸԺՀՏ^2 առապար Խ ապառ

զիսն քարշելով, զի ամենևին խայծ ոչ մնաց ի մարմինս երանելեացն։ Եւ ապա լուծին և ածին ի մի տեղի։

Եւ թուէր իմն նոցա այսպէս, եթէ կակղեցաք զխստութիւն նոցա, և հնազանդեցուցաք զբիրտ ապստամբութիւն նոցա. և արդ զինչ և խօսիցիմք, անսասցեն բանից մերոց, և առնիցեն զկամս թագաւորին, և ապրեալ լիցին յանհնարին տանջանացն։ Եւ զայն ոչ կարացին քաջ իմանալ, եթէ իբրև զքաջ զինուորս վառեցին զնոսա, և ի հրահանգս կրթութեան վարժեցին զնոսա, և իբրև զգազանս վայրենիս արիւնախանձս ուսուցին զնոսա։ Եւ եթէ ունէին սակաւ ինչ կասկած յառաջագոյն, հայեցեալ նոցա ի չարաչար վէրս մարմնոց իւրեանց՝ զառաջին երկեւղն ի բաց մերժեցին։ Սկսան իբրև արբեալք անզգայք զմիմեամբք ելանել ի բանից պատասխանիս, և փութային իբր ծարաւիք յաղբեւր, եթե ո՛ նախ վաղ զիւր արիւնն հեղցէ յերկիր։

Եւ մինչդեռ յայսմ պատրաստութեան էին սուրբքն, խօսել ըսկըսաւ ընդ նոսա Դենշապուհ և ասէ. «Արքայ յղեաց զիս առ ձեզ. ամենայն աւեր աշխարհին Հայոց, ասէ, և կոտորածք զօրացն՝ որ հասին ի վերայ, ի ձէնջ եղեն վնասքն ամենայն, և բազում նախարարք, որ այժմ կան կապանօք չարչարեալ, վասն ձերոյ յամառութեանդ եղև այդ ամենայն։ Այլ և արդ եթէ կամիք ինձ լսել՝ ասեմ ձեզ. որպէս եղերուք պատճառք ամենայն չարչարանաց մահուն, այսօր լերուք պատճառք կենաց ձերոց։ Եւ նախարարքն՝ որ կան ի կապանս, ի ձեռն ձեր է իշխանութիւն արձակել զնոսա. և աւեր

---

1 Դ մինչև փխ զի α ոչ գոյու փխ ոչ մնաց 1—2 ԲՃ^{1}α նոցա փխ երանելեացն 2 Բα ի տեղին Թ ի նմին տեղի 3 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^1 չիք Եւ Կ այդպէս ԲՃ^{1}α կակղացուցաք Ի կակղեցուցաք ԲՃ^{1}α զխստութիւնս 4 ԴԳԿ հնազանդեցաք α չիք և հնազանդեցուցաք զբիրտ ապստամբութիւն նոցա Բ ապստամբութիւնս Դ ապստամբութիւնն ԳԺԼԽ ապստամբութիւնն ԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք նոցա 5 ԱԳՁէԹԻV զինչ ես Տ^1 զինչ որ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 խօսիմք ԲՃ^{1}α անսան Կ խմոց փխ մերոց ԵՀ չիք բանից մերոց և առնիցեն Բ և առնեն 6 Ը լինիցեն Խ լինիցին Դ տանջանաց 7 Դ զնոսա վառեցին 8 ԲՃ^{1}α չիք և ի հրահանգս կրթութեան վարժեցին զնոսա և իբրև Խ վարեցին(!) 9 ԲԴα արիւնախանձ Հ արիւնանախանձ Ը արիւնախածս(!) ԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 ինչ սակաւիկ մի ՀՃ^{1}α չիք մի α սակաւիկ 10 ԲՃ^{1}α կասկածանս Բα չիք նոցա ԲՃ^1 հայեցեալ ի վէրս չարաչար 10—11 α ի վէրս չարաչարս մարմնոյ իւրեանց Դ ի չարչարանս ԳԿ մարմնոցն ԲԳԵԸԺԽԾՀՏ^{1}Տ^{2}Ճ^1 մարմնոց ԱԶէԹԻVՏ^{3}A մարմնոյն 11 Դ ընկեցին փխ մերժեցին 11—12 Բα զարբեալք Հ արբեալ է արգելեալք 13 ԱԴՁէԹԻV յանգզայք α ի բանիցն Բ ի բանից պատասխանիսն

ուած տեղերով քարշ տալով, որ ոչ մի ողջ տեղ չմնաց երանելիների մարմինների վրա։ Եվ ապա կապերը բաց արին ու մի տեղ բերին։

Նրանց մի տեսակ այնպես էր թվում, թե կակղացրին նրանց խստությունը և հնազանդեցրին նրանց բիրտ ապստամբությունը. և հիմա ինչ էլ ասենք, մեր խոսքերին կլսեն և թագավորի կամքը կկատարեն և անտանելի տանջանքներից կազատվեն։ Բայց այն չկարողացան լավ հասկանալ, որ նրանց քաջ զինվորների նման ոգևորեցին, կրթության հրահանգների մեջ վարժեցրին նրանց, և նրանց սովորեցրին ինչպես վայրենի արյունարբու գազանների։ Եվ եթե առաջուց մի քիչ կասկած ունեին, նայելով իրենց մարմինների չարաչար վերքերին՝ նախկին վախը մի կողմ նետեցին։ Հարբած ու անզգայացած մարդու նման սկսեցին միմյանցից գերազանցել պատասխաններ տալու մեջ, և շտապում էին՝ ինչպես ծարավը դեպի աղբյուրն է վազում, թե ո՛վ ավելի շուտ կթափի իր արյունը երկրի վրա։

Մինչդեռ սրբերն այս պատրաստության մեջ էին, խոսել սկսեց նրանց հետ Դենշապուհը և ասաց. «Թագավորն ինձ ուղարկեց ձեզ մոտ. Հայոց աշխարհի ամբողջ ավերածությունը, ասում է, և զորքերի կոտորածը, որ տեղի ունեցավ, ձեր պատճառով եղավ այդ ամբողջ վնասը. և շատ նախարարներ, որ այժմ կապանքների մեջ չարչարվում են, ձեր համառության պատճառով եղավ այդ բոլորը։ Բայց հիմա էլ, եթե ուզում եք լսել ինձ, ասում եմ ձեզ. ինչպես որ բոլոր չարչարանքների և մահվան պատճառ եղաք, այսօր էլ պատճառ եղեք ձեր կյանքի։ Կապանքների մեջ եղած նախարարներին արձակելու իշխանությունն էլ ձեր ձեռին է.

---

13 ԲՃ^{1}α որպէս փխ իբր Դ իբրև ծարաւք ԳԵԸԺԼԽԿՀ իբրև Բ յաղբիւրն α յաղբեւրն ԿՀ յաղբեր Տ^2 չիք յաղբեւր ԵՀ թէ Գ չիք վաղ Ը թէ ո՛ վաղ ԸԽ չիք նախ 14—15 ԲՃ^{1}α եթէ ով զիւր անունն վաղ հեղցէ յերկիր Դ յերկրի 15 ԲՃ^1 չիք Եւ ԲՃ^{1}α յայն Ի պատրաստութեանն Թի խօսիլ 16 ԸԽ չիք և ասէ ԲԿՃ^{1}α առ ձեզ և ասէ ամենայն 17 ԿՃ^{1}α չիք ասէ Դ կոտորած ԲԵԺԼԽՏ^{1}Տ^2 կոտորուածք 18 α վնասք 19 Ի որք Բα այժմս Բα չարչարեալք 19—20 ԲՃ^{1}α յամառութեան ձերոյ 20 Դ եղէն ԲՃ$^{1,17—18}$α լսել ինձ 21 Դ եղէք պատճառ Ի եղիք ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 որպէս ամենայն չարչարանացն մահուն պատճառք եղէք (ԸԺԼԽ չարչարանաց Հ մահուան) α չարեաց և մահու չիք ամենայն 21—22 է չիք «եղերուք—լերուք» Բ չիք ամենայն չարչարանաց մահուն, այսօր լերուք Բ պատճառք անձանց ձերոց ԴԻՃ^{1,2}α եղերուք 22 ԴՃ^{1}α պատճառ ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{17—18}$ անձանց փխ կենաց ԴՃ^{1,6}α կենաց անձանց ձերոց Բα նախարարք ԳԿ նախարարքդ Ը որք 23 ԲԳԴԵԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α ի ձեռս

աշխարհին ձերոյ ձեւք չինի, և բազումք որ վարեալ են ի գերութիւն, անդրէն դառնան։

«Ահա դուք ձերային աչօքդ տեսէք այսօր, եթէ զորպիսի՛ այր տոհմիկ, զոր Թագաւորն ինքնին յականէ յանուանէ ճանաչէր վասն մեծի գիտութեան օրինացս մերոց, և կատարեալ էր յամենայն ի դենիս և ամենայն մեծամեծաց սիրելի, և գրեթէ բոլոր աշխարհս կախեալ էր զնմանէ, և վասն զի անարգեաց զդենի մազդեզն, և պատրեցաւ ի ձեր տխմար գիտութիւնդ, ոչ ինչ խնայեաց Թագաւորն ի մեծ պատիւ նորա, այլ իբրև զգերի մի զանաշխարհիկ չկօթակ արարի զնա յայնչափ օտարութիւն հեռաւոր, զի ընդ երթալն իսկ ոչ ժամանէ ի տեղի պատուհասին իւրոյ։

«Արդ եթէ ի բուն դայեկութիւնն վասն պատուական օրինացն ոչ խնայեաց ի նա, ո՛րչափ ևս առաւել ի ձեզ յօտարաշխարհիկսդ, որ մահապարտ իսկ էք յիւր արքունի։ Եւ չիք ինչ ձեզ այլ հնար կենաց, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք զկամս Թագաւորին, որպէս և ուսոյց զմեզ մեծն Զրադեշտն։ Եւ եթէ զայդ առնէք, ոչ միայն արձակիք ի կապանացդ և ապրիք ի մահուանէ, այլ և մեծամեծ պարգևօք յուղարկիք յաշխարհն ձեր»։

Յառաջ մատեաւ Ղևոնդ երէց և թարգման կացոյց զՍահակ եպիսկոպոս. «Զի՞րդ լուիցուք, ասէ. երկդիմի հրամանացդ քոց. ահա զերկրպագութիւնդ նախ եդուր արեգական, և զկատարումն երկրպագութեան ի կամս Թագաւորին ձգեցեր. մեծարեցեր զարե-

---

1 Ի որք 1—2 α ի գերութեան 2 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² դառնան անդրէն 3 ԲՁ¹ ձերովք աչօք Գ ձերոյն աչօք Դα ձերով աչօք ԵԸԺԼԽՀՏ¹Տ² աչօք ձերովք Ի ձեր ԹԻ տեսիք ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ձ¹α չիք եթէ 4 Բα զոր և 5 ԳԴԼԽ օրինաց Եα օրինացն ԲԳԴԵԺԻԽԿՀՁ¹α չիք ի ԵՀ չիք ամենայն 5—6 ԲՁ¹α յամենայն դէնիս մերում 6 Տ² ի դէնիս Թ ի դէնիս (լուսանցքում՝ հաւատոյս) ԸԼԽՏ¹Տ² և մեծամեծաց ամենայնի 7 ԾՏ¹ կալեալ էր փխ կախեալ էր ԲԹ չիք և (վասն զի) ԲԼՏ¹Տ²Ձ¹α զդենի մազդեն ԱՋԷ ԹԻՎՏ³ մազդեան ԵԸԹԺԽՀ զդէնի մազդէն (լուսանցքում՝ հաւատոյ հաւատ) 8 ԲԸԽ պարտեցաւ ԲՁ¹α գիտութենէդ Դ գիտութեանդ Գ տգիտութիւնդ փխ գիտութիւնդ ԲԴՁ¹α ոչ փխ ոչ ինչ ԳԴԵԸԺԽԿՀՏ¹Տ² անխնայեաց 8—9 ԳԵ պատիւն α չիք Թագաւորն 9 ԲՁ¹α անաշխարհիկ Գ չիք զանաշխարհիկ Ա չկօթակ (լուսանցքում՝ խորասոյզ) Ի ըշկօթակ ԳԴԿ չկապթակ Թ չկօթակ (լուսանցքում՝ տարաշխարհիկ կամ խորասոյզ) ԵԸԺԽՀ չկօթակ (լուսանցքում՝ տարագիր) ԲՁ¹α չկուհթակ 10 ԲԴՁ¹α արար բոլոր մյուսները՝ արարի ԳԺՏ² այնչափ ԳԺՏ² յօտարութիւն Ձ¹α յայնպիսի (α յայնչափ) հեռաւոր օտարութիւն ԲՁ¹α զի յերթալն նորա իսկ 11 ԳԿ ի տեղիս ԲԴα պատուհասի 12 Բα

և ձեր աշխարհի ավերը ձեզնով կշինվի, և շատերը, որ գերի են տարված՝ կվերադառնան։

«Ահա դուք ձեր աչքերով տեսաք այսօր, թե ինչպիսի՜ մի տոհմիկ մարդ էր, որին Թագավորն ինքն անձամբ ճանաչում էր մեր կրոնը շատ լավ գիտենալու պատճառով, և կատարյալ էր մեր հավատի մեջ և բոլոր մեծամեծներին սիրելի, և գրեթե այս ամբողջ երկիրը կախված էր նրանից, բայց որովհետև անարգեց դենիմազդեզնը և մոլորվեց ձեր տխմար գիտության կողմը, Թագավորն ամենևին չխնայեց նրա մեծ պատվին, այլ, ինչպես մի անտուն-անտեր գերի նրան աքսորեցի այնպիսի հեռավոր օտարություն, որ չի էլ կարող գնալ-հասնել իր պատժավայրը։

«Արդ, եթե նույնիսկ նրա ազգակցությանը չխնայեց պատվական կրոնի պատճառով, որքա՜ն ավելի չի խնայի ձեզ՝ օտարերկրացիներիդ, որ նույնիսկ մահապարտ էլ եք արքունի գործերի վերաբերմամբ։ Եվ ձեզ համար ապրելու ուրիշ ոչ մի ճար չկա, բացի այն, որ երկրպագություն տաք արեգակին և կատարեք Թագավորի կամքը, ինչպես որ սովորեցրել է մեծ Զրադեշտը։ Եթե այդ անեք, ո՛չ միայն կապանքներից կարձակվեք և մահից կփրկվեք, այլև մեծամեծ պարգևներով ձեր աշխարհը կուղարկվեք»։

Առաջ անցավ Ղևոնդ երեցը և թարգման դարձրեց Սահակ եպիսկոպոսին. «Ինչպե՞ս հնազանդվենք քո երկդիմի հրամաններին,— ասաց նա.— ահա դու երկրպագությունդ նախ արեգակին տվիր, իսկ երկրպագության կատարումը Թագավորի կամքին վերագրեցիր. մեծարե-

---

չիք ի Բ դայեկութեանն ԳԴԵՏ² դայեկութիւնս ԲՁ¹α չիք վասն պատուական օրինացն 13 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² չիք առաւել Բ յապարաշխարհիկսդ ԳԵԼԽԿՏ² յօտարաշխարհիկս 14 Բα ի յիրս ԲՁ¹α չիք ինչ ԵՀ այլ մեզ փխ ձեզ այլ ԲՁ¹α չիք այլ ԳԺԼԽԿՏ¹Տ² այլ ձեզ հընարք Դ հնարս 15 Ե բաց փխ բայց Թ արեգականն Բα կատարեցէք ԴԵԸԺԼԿՀՏ¹Տ² և կատարէք 16 ԲԴՁ¹α չիք և (ուսոյց) ԳԴԵ ուսոյցն ԲՁ¹α չիք զմեզ ԱԳԴԻԿՁ¹ Զրադեշտ ԼՏ¹Տ² Զրադեշն ԲՋԷՎՏ³ Զրադեշտն Թ Զրադեշտ (լուսանցքում՝ բուն բանկ!) A Զրադաշտ ԵԸԽՀ Զրադեշն (լուսանցքում՝ կարևոր ուխտ) Ժ Զրադեշտն (լուսանցքում՝ կարևոր ուխտն) 16—17 ԴԸ չիք Եւ եթէ զայդ առնէք 17 ԲՁ¹α զայս ևս փխ զայդ ԵԺԼԽՀ կապանաց 18 Բ յղարկիք Ի յաշխարհն ձեր յուղարկիք 19 ԲԳԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ձ¹α մատեաւ ԱԴՋԷԹԻՎՏ³A մատուցեալ Ժ մատեալ Գ Ղևոնտ ԵԸԺԼԽՀՏ¹Տ² կացոյց թարգման 19—20 ԲՁ¹α եպիսկոպոսն և ասէ 20 ԲԴՁ¹α չիք ասէ Հ երկմտի ԲԴα հրամանաց 21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ²Ձ¹α եդուր նախ ԵԺԼԽ արեգականն Ա զկատարածն(!) 21—22 ԴԺ երկրպագութեանն Ե երկրպագութիւն 22 ԲՁ¹α երկրպագութեանդ ձգեցեր ի կամս Թագաւորին ԲՁ¹α մեծացուցեր։

գակն՝ յառաջ ձայնելով զանուն նորա, և մեծացուցեր զԹագաւորն աւելի քան զարեգակն. և յայտ արարեր՝ եթէ առանց կամաց իւրոց սպասաւորէ արեգակնն արարածոց, իսկ Թագաւորն ի կամս ազատութեանն իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանէ, և զոր կամի ծառայեցուցանէ. և ինքն ի ճշմարտութեանն վերայ չև է հասեալ։ Մի՛ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս, զի հասակաւ կատարեալ եմք, և գիտութեան ոչ եմք անտեղեակ։ Ուստի սկսար դու, այտի տաց քեզ պատասխանի։

«Ապաքէն զմեզ եդիր պատճառս աւերածոյ աշխարհին մերոյ և հարուածոց զօրացն արքունի. մեր օրէնքն զմեզ այդպէս ոչ ուսուցանեն, այլ յոյժ պատուել հրամայեն զերկրաւոր Թագաւորս, և սիրել զնոսա յամենայն զօրութենէ մերմէ, ոչ իբրև զմարդ, որք գուզնաքեայ ի մարդկանէ, այլ իբրև Աստուծոյ ճշմարտի կալ ի ծառայութեան. և եթէ զրկիմք ինչ ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորիս զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն։ Եւ ոչ միայն՝ զարքանեկութիւն հպատակութեան պարտիմք հատուցանել նոցա, այլ և մահու չափ զանձինս ի վերայ դնել սիրոյ Թագաւորին։ Եւ որպէս յերկրի ոչ ունիմք իշխանութիւն փոխանակել զնա ընդ այլում տեառն, նոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն փոխանակել զըճշմարիտ Աստուածն մեր ընդ այլում, որ չիք Աստուած բայց ի նմանէ։

«Բայց ասեմ քեզ՝ որում սակաւիկ մի տեղեկագոյն ես։ Ո՞վ ի քոց զօրականէն զկնի մտանիցէ ի պատերազմ. և եթէ զայս արասցէ, ոչ քաջ անուանի նա, այլ յոյժ վատ։ Եւ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց զպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ Թրուշայի, բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութեամբ, որպէս և ձեր

---

1 ԲԳԹՃ^{1}α մեծարեցեր ԴԵԺԼԿՀՏ^1 զԹագաւորդ 2 ԲՃ^{1}α առաւել ԳԴԵԸԺԽԾԿՀՃ^1 Տ^2 չիք և ԲՃ^{1}α յայտնի 3 ԱԲԳԴԵԸԺԼՀՏ^{1}Տ^{2}α արեգակն ԽՎ արեգականն(!) Գ չիք արեգակնն ԲԳԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 արարածոցս ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 Թագաւորդ 3—4 ԳԵՀ ազատութեան ԲՃ^{1}α ազատութեան անձին իւրոյ 4 ԵԸԽՀ չիք և զոր կամի ծառայեցուցանէ 5 ԵՀα ճշմարտութեան ԲԴ հասուտեալ 6 A կատարեալս 7. ԳԵՏ^{1}Տ^2 գիտութեամբ Լ եմ ԳՃ^{1}α անտեղեակք ԱԶԷՎ այդի տայց ԲԳԴԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α անտի ԿՀ անդի Դ տամ 9 ԲՄՏ^{1}Ճ^2 եդեր ԼՄ պատճառ Բ Հայոց փխ մերոյ 10 Դ հարուածոյ Գ օրէնք մեզ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 մեզ մեր օրէնքն 10—11 ԲԴ մեզ Բα ոչ ուսուցին 11 Ա պատուեալ Հ զերկնաւոր(!) α հրամայեցին Բ Թագաւորն 12 ԱԴԷԹԻՎ զնա Զ սիրելի զնա Գ իւրեանց փխ մերմէ 12—13 Բα դուզնաքեայ որք ԴԹ չիք որք 13 Դ չիք ի մարդկանէ ՎՏ^3 ճշմարիտ 14 ԲԷՀՃ^{1,5,27} ի ծառայութիւն Կ զրկեմք Տ^{3}A չիք ինչ ԲԴ Ճ^{1}α չիք ընդ 14—15 Խ զերկրաւորիս ԲՃ^{1}α զերկնայինն 15 ԵՀ զերկնից է չիք զերկնիցն ԲՃ^{1}α խոստացաւ տալ մեզ ԱԶԹՎα զարքայութիւնն Գ արքայութիւն Դ արքայութիւնն 16 ԲԴ զարքանեկութիւնն ԴԼՀ հպարտութեան փխ հպատակութեան ԵԺԼԽՄՀՏ^1 արկանել ԳԸԿՏ^{2}A հարկանել փխ հատուցանել 17 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 մահուամբ չափ ԱԶԷԻՎ ունել փխ դնել ԱԳԴԶԷԹԻԿՎ սիրով α չիք սիրոյ ԲՃ^{1}α չիք Եւ 18 Բ ի յերկիրս Դ յերկրէս Խ յերկնիս(!) ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α չունիմք Ը փոխանակ ԲՃ^{1}α չիք զնա Բ չիք «Տեառն—փոխանակել» ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 սոյնպէս և Զէ յերկին V երկին 19—20 Դ զճշմարիտ աստուածն մեր փոխանակել 20 Բ չիք ընդ այլում ԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α այլ աստուած A բաց 22 ԲՃ^{1}α բայց զոր ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 զայս ասեմ ԲԹՃ^{1}α ասեմք α որոց α տեղեկագոյնք 22—23 Բ զօրականէ ԳԸԽ ով քաջ ի զօրականէ Ե ով ի քաջ զօրականէ (աղղված է՝ ով քաջ զօրական) α ի քաջ զօրականէ 23 ԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք զկնի Ը մտանիցէ ի պատերազմ յետոյ ԲՃ^{1}α մտեալ իցէ Դ ի պատերազմն ԵԸԺԼԽՀՏ^1 Տ^2 ի պատերազմ յետոյ Դ չիք և ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զայն 23—24 ԲՃ^{1}α արարեալ 24 Բ անուանի է ԲՃ^{1}α չիք Եւ Ճ^1 ո՞վ 24—25 Բα վաճառականացն 25 Դ փոխանակեսցէ Բ անարգս Տ^2 չիք անարգ 26 ԲՏ^2 Թրաւշացն Ա Թրուշայի (լուսանցքում անպիտան) α Թաւշակի ԵԸԺԽՀ Թրուշայի (լուսանցքում՝ ԵՀ ոչինչ) Բ տգիտութեամբն ԲՃ^{1}α չիք և։

ցիր արեգակին՝ նախ տալով նրա անունը, իսկ Թագավորին արեգակից ավելի մեծացրիր. և ցույց տվիր, որ արեգակն առանց իր կամքի է սպասավորում արարածներին, իսկ Թագավորն իր ազատ կամքով ում կամենում է՝ աստվածացնում է և ում կամենում է ծառայեցնում է և ինքը դեռ վերահասու չի եղել ճշմարտությանը։ Մեզ հետ մի՛ խոսիր ինչպես երեխաների հետ, որովհետև հասակով կատարյալ մարդիկ ենք և գիտությանն էլ անտեղյակ չենք։ Որտեղից դու սկսեցիր, հենց այնտեղից էլ քեզ պատասխան կտամ։

«Մեր երկրի ավերածության և արքունի զորքերի կոտորածի պատճառ չէ՞ որ մե՛զ համարեցիր, մեր կրոնն այդպես չի սովորեցնում մեզ. այլ պատվիրում է մեծապես պատվել երկրավոր Թագավորներին և նրանց սիրել մեր բոլոր ուժով, ոչ իբրև մի չնչին մարդու՝ մարդկանց միջից, այլ ծառայել ինչպես ճշմարիտ Աստծուն. և եթե զրկանքներ կրենք նրանց կողմից, երկրավորիս փոխարեն մեզ խոստացավ երկնքի արքայությունը։ Եվ ո՛չ միայն իբրև հպատակ պարտավոր ենք ծառայել նրանց, այլև մեր անձերը մահու չափ դնել Թագավորի սիրո համար։ Եվ ինչպես որ երկրիս վրա իրավունք չունենք նրան ուրիշ տիրոջ հետ փոխելու, նույնպես և երկնքում իրավունք չունենք ուրիշի հետ փոխելու մեր ճշմարիտ աստծուն, որից բացի ուրիշ աստված չկա։

«Բայց քեզ մի բան ասեմ. որին ինքդ էլ մի քիչ տեղյակ ես։ Քաջ զորականներից ո՞րը հետևից կմտնի պատերազմի մեջ. և եթե այդպիսի բան անի, նա ո՛չ թե քաջ կկոչվի, այլ շատ վախկոտ։ Կամ թե՝ իմաստուն վաճառականներից ո՞վ պատվական մարգարիտը կփոխանակի անպետք ուլունքի հետ, բացի նրանցից, ովքեր հիմարացած են տգիտումոլորութեան առաջնորդք։

«Միայն գտեր զմեզ ի բազում յառաքինեացն մերոց, և կամիս գողութեամբ աւերել զամուրս խորհրդոց մերոց. չեմք մեք միայն՝ որպէս և դուդ կարծես. չիք տեղի ունայն, ուր չիցէ Քրիստոս թագաւորն մեր. բայց միայն այնոքիկ են թափուր և նմանէ, որ իբրև զքեզ և զչարագև իշխանն քո, որք ուրացեալ էք ի նմանէ։ Զի եթէ զինուորք աշխարհին մերոյ, որ աշակերտեալքն էին մեւք ի Քրիստոս, առ ոտն հարին զահագին հրամանս թագաւորին ձերոյ, և զմեծամեծ պարգևս նորա առ ոչինչ համարեցան, և զհայրենի տէրութիւնն ի բաց կողոպտեցան, չխնայեցին ի կին և յորդիս և ի գանձս մարմնաւորս կենաց աշխարհիս։ Նա և ոչ զարիւնն իւրեանց ածէին ինչ զմտաւ վասն սիրոյն Քրիստոսի, այլ զերկրպագուս արեգականն, որ ձեր վարդապետք էին, չարաչար հարուածովք սատակեցին զնոսա, և մեծամեծ չարիս հասուցին ի վերայ զօրացն ձերոց, և բազումք ի նոցանէ անկանէին ի նմին պատերազմի, և այլք մատնեցան ի պէս պէս փորձութիւնս, և կէսքն ընկեցան ի հեռաւոր օտարութիւն, և ևս բազմագոյնք վարեցան ի գերութիւն։ Եւ ամենեքին նոքա յառաջեցին քան զմեզ յարքայութիւնն Աստուծոյ, և խառնեալ են ի գունդս վերին հրեշտակացն և ցնծան ի պատրաստեալ յուրախութիւնս, յոր հասեալ խառնեցաւ երանելի այրն, զոր դու ասես չկօթակ արարի։ Երանի տամ նմա, և երանի երկրին՝ ընդ որ նայն անցանիցէ, և տեղւոյն՝ ուր նայն վախճանես-

---

1 ԲՃ^{1}α յիմարութեան փխ մոլորութեան Դ մոլորեալ ԲՃ^{1}α առաջնորդքն Խ առաջնորդք ԱՋէV առաջնորդքո 2 ԲԳԴԵԺԼԽԿՀՃ^{27}α առաքինեացն է առաքինութեանցն 2—3 ԲՃ^{1}α չիք «և կամիս—խորհրդոց մերոց» 3 ԲՃ^{1}α չիք մեք 4 ԲԴՃ^{27} չիք և ԲԴՃ^1 դու ԳԴԵԸԺԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{27} ոչ իցէ 4—5 ԲԵԸԺԼԽՀS^{1}S^{2}Ճ^{1}α թագաւորն մեր Քրիստոս 5—6 Բα զքեզ V որ իբրև իշխանն չարագև քո և քեզ(!) Հ որ α ուրացեալք 6—7 ԱՋէԹԻVS^3 Զի թէ A Զի և Բ որք 7 Բα աշակերտեալք ԵԺS^{1}S^2 աշակերտեալ 8 Դ չիք զահագին Դ զհրամանս Հ հրամանն 9 ԱՋէԹԻVS^{3}A չիք նորա 10 Բ զտէրութիւնն ԵՀ տէրութենէ ԲԳԴԻԼS^{1}S^{2}Ճ^{1}α կողոպտեցին Բα ոչ խնայեցին 10—11 ԲԴՃ^{1}α և ոչ ի գանձս 11 Հ ի գանձ ԴԺԼԽՀ մարմնաւոր Դ զարիւնս 11—12 ԲՃ^{1}α նաև ոչ ի մարմինս իւրեանց վասն սիրոյն Քրիստոսի Խ չիք իւրեանց 12 Բ չիք ածէին ինչ զմտաւ Ճ^{1}α չիք ածէին զմտաւ Դ ածեն զմտաւ չիք ինչ ԳԵԸԺԼԽԾԿՀS^{1}S^2 ածին ինչ զմտաւ A զմտաւ ինչ 12—13 Թ երկրպագուս 13 ԲԳα արեգական ԳԵԸԺԼԽԿՀS^2 արեգականց 13 ԲՃ^{1}α ձեր իսկ ԳԴԵԸԻԼԽՀα վարդապետքն ԲՃ^{1}α մեծամեծ հա-

թյամբ, ինչպես և մեր մոլորության առաջնորդները։

«Մենակ ես գտել մեզ մեր բազմաթիվ առաքինիներից և ուզում ես խարդախությամբ քանդել մեր հաստատուն մտադրությունները. մենք մենակ չենք, ինչպես որ դու ես կարծում. չկա ոչ մի դատարկ տեղ, որտեղ չլինի մեր թագավոր Քրիստոսը. միայն քեզ և քո չարագև իշխանի նմաններն են, որ զուրկ են նրանից, որ մերժված են նրա կողմից։ Որովհետև մեր աշխարհի զինվորներն էլ, որոնք մեր միջոցով աշակերտել էին Քրիստոսին, ոտնահարեցին ձեր թագավորի ահեղ հրամանները և նրա մեծամեծ պարգևները ոչ մի բանի տեղ չդրին. նրանց հայրենական իշխանությունը կողոպտվեց, բայց նրանք չխնայեցին իրենց կանանց ու որդիներին և այս աշխարհի մարմնավոր կյանքի գանձերը։ Մինչև անգամ իրենց արյունը մտքները չէին բերում Քրիստոսի սիրո համար, այլ արեգակի երկրպագուներին, որոնք ձեր ուսուցիչներն էին, չարաչար հարվածներով սպանեցին և մեծամեծ չարիքներ հասցրին ձեր զորքին, և նրանցից շատերն ընկան նույն պատերազմի մեջ, ոմանք տեսակ-տեսակ փորձությունների մատնվեցին, ուրիշները հեռավոր օտարության քշվեցին և է՛լ ավելի շատերը գերի տարվեցին։ Նրանք բոլորը մեզանից առաջ մտան աստծու արքայությունը և խառնված են վերին հրեշտակների գնդերին և ցնծում են պատրաստված ուրախությունների մեջ, որին հասնելով խառնվեց նաև այն երանելի մարդը, որի համար ասում ես, թե աքսոր քշեցի։ Երանի եմ տալիս նրան և երանի այն երկրին, որի միջով նա պիտի անցնի և այն տեղին, որտեղ նա պիտի վախճանվի. Նա

րուածովք 14 Ի սատակէին ԲՃ^{2}α նոքա փխ զնոսա Բ չիք և α մեծամեծ հարուածովք չարիս 14—15 Դ ի վերայ նոցա փխ ի վերայ զօրացն ձերոց ԲԳԵԺԼԽՀα զօրաց 15 Գ ի նոցանէն ԲԴԵԺԿՀS^{1}S^{2}Ճ^{1}α անկան (ԲԵα անգան) ԾS^1 միայն փխ ի նմին Բ պատերազմին 16 ԲԳԴԼԽ այլքն ԲԸα կէսքն ի նոցանէ անգան (α անկան) Լ և կէսք ԳԼԽՃ^2 անկան 17 ԲԼ օտարութիւնս Գ ի գերութեան Խ գերութիւնս 18 ԲԳՃ^{1}α ամենեքեան Բα չիք նոքա ԲՃ^{1}α քան զմեզ յառաջեցին Ե յարքայութիւն 19 ԳԴԻԿՀS^{1}S^2 չիք և 19 ԵԸԺԼԽՀS^{1}S^2 խառնեցան ի գունդ Գ ի գունդ ԳԴԿ հրեշտակաց 19—20 α ի պատրաստեալ ուրախութիւնսն 20 ԱԹԻ ուրախութիւնն ԲԺԼԽ ուրախութիւնսն ԳԴԿ ուրախութեանն 21 ԵԸԺԼԽՀS^{1}S^2 զորմէ Բα չկաւհթակ ասես արարի ԳԴԼ չկապթակ Ի ըշկօթակ Դ չկապթակն ասես արարի ԵԸԺԽՀ չկօթակ (լուսանցքում՝ վտարանդի) Թ չկօթակ (լուսանցքում՝ խորասոյզ) ԲԳԴԵԸԺԽԾԿՀS^{1}S^{2}Ճ^1 չիք երանի 22 ԲԳԵԸՃ^{1}α նա փխ նայն ԵՃ^1 անցանէ Ժ անցանիցէ նա ԳԵԸԺԼԽԿՀS^{1}S^2 տեղւացն ուր վախճանիցի նա (ԽS^2 վախճանիցէ) ԲԴԼԽԿՀS^{1}S^{2}Ճ^{1}α նա փխ նայն։

ցի. ոչ միայն զարքունեօք ձերովք անցանէ պատուականութեամբ, այլ և զերկնից լուսաւորօքդ, որում դուքդ երկիրպագանէք»։

Եւ պատասխանի Մովան անդերձապետ և ասէ ցնոսա. «Աստուածքն բարերար են, և երկայնմտութեամբ ջանան ընդ ազգի մարդկան, զի գիտասցեն և ծանիցեն զիւրեանց փոքրկութիւնն և զնոցա մեծութիւն, և վայելեսցեն ի պարգևս աշխարհիս, զոր տուեալ է յիշխանութիւնն ի ձեռս թագաւորի, և ի բերանոյ նոցա ելանեն հրաման մահու և կենաց։ Եւ ձեզ ոչ է այդպէս իշխանութիւն ընդդիմանալ կամաց նոցա և ոչ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական, որ ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անասնոց. և վասն հասարակաբաշխ առատութեանն և անաչառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած, զի չիք ի նմա նենգութիւն անիմաստութիւն։ Վասն որոյ և մեք երկայնամիտ լինիմք ի վերայ տգիտութեան ձերոյ. քանզի չեմք մարդատեացք իբրև զգազանս շաղղակերս և արիւնարբուս։ Խնայեցէք յանձինս ձեր, և մի՛ խառնէք զմեզ ակամայ յարիւնդ ձեր։ Թողէք անգր զառաջին յանցանս ձեր, և զառաջիկայս իրս ուղղեցէք, զի և այլոցն վասն ձեր լիցի ողորմութիւն ի մեծ թագաւորէն»։

Առ այս ետ պատասխանի Սահակ եպիսկոպոս և ասէ. «Իբրև ուսեալ և յոյժ խրատեալ՝ զգեղեցիկ հոգ յանձին ունիս շինութեան աշխարհի և փառաց թագաւորին. բայց զայս կարի տգիտաբար ուսուցանես, զի աստուածս բազումս խոստովանիս և զմի կամս ոչ ասես ամենեցուն։ Եթէ վեհքն առ միմեանս մարտուցեալ են, մեք խոնարհագոյնք քան զնոսա զիա՞րդ կարասցուք հաւանել բանից քոց։

---

1 α զարքունօքն ԲԴ զարքունովք ԳԽՏ² զարքունեօքն Բ ձերաւք Ի պատրաստութեամբ փխ պատուականութեամբ ԲԾ¹α պատուականութիւն նորա 2 Բα չիք և Բα լուսաւորօքն ԲԴԹԾ¹α դուք Հ երկրպագէք 3 ԴԺԼՏ¹Ծ¹α անդերձապետն ԵՇԽՀ անդերձապետն (յուսանցում՝ փառոյ) Հ անդերձպետն Բ հանդերձապետն Տ² հանդերձապետն A հանդերձապետ ԲԳԴԵՇԺԼԽԿՏ²Ծ¹α չիք ցնոսա 3—4 ԳԵ աստուածք 4 Թ բարերարք ԲԴՋ ԷՇVՏ³Ծ¹α երկայնամտութեամբ ԲԴԾ¹α ազգս 5 ԲԾ¹α ծանիցեն և գիտասցեն Ի փոկութիւնն(!) Եα փոքրկութիւն ԼՏ¹ փոքրութիւնն 6 ԱԲԳԴՋՇԹԺԻԼԽԿV մեծութիւնն α ի պարգև 7—8 Դ որ ԲԳԴα իշխանութիւն ԲԾ¹α թագաւորաց Դ թագաւորին Ե բերանոյն ԲԾ¹α նոցին 8 ԳԺԿՀՏ² ելանէ Բ հրամբ (!) ԴԾ¹α հրամանք ԲԳԵՇԺԼԽԿՀՏ¹Տ²Ծ¹α կենաց և մահու Բ չիք Եւ (ձեզ) 8—9 ԲԴԾ¹ ձեզ ոչ այդպէս է իշխանութիւն ԳՇԹԻԿՀ չիք այդպէս A իշխանութիւն այդպէս Կ ընդդիմանալ իշխանութեան և կամաց նոցա ԳՀԾ¹α նորա ԵՇԺԼԽՀՏ¹Տ² այլ փխ և ոչ Գ չիք ոչ 10 ԲԳԵԽα ճառագայթիւքն և իւրով Կ լուսաւորեաց 10—11 ԳԴԵՇԺԼԽԿՀՏ¹Տ² զտիեզերս ամենայն 11 ԲԳԵԺԼԽԿՀ ջերմութեամբքն ԲԳԴԵՇԺԼԽԿՀԾ¹ զկերակուրս α զամենայն կերակուրս 12 ԵՀ առատութեան 12—13 ԲԾ¹α չիք և անաչառ մատակարարութեանն 13 Ե մատակարարութիւն Լ և անուանեցաւ ԳԽԺԼՄԿՀԾ¹α Միրհ Դ Մեհր Հ Միրհր(!) 14 ԲԴՏ²Ծ¹α ստութիւն և նենգութիւն փխ նենգութիւն և անիմաստութիւն ԳԵՇԺԼԽԿՀՏ¹ անիմաստութիւն և նենգութիւն Դ չիք և 15 ԲԳԵՇԺԼԽԿՀՏ¹Տ²α տգիտութեանց Դ ձերոյ տգիտութեանց V գիտութեան(!) α դի փխ քանզի 16 ԲՀԾ¹ շաղակերս 17 Բα ակամայ զմեզ Ի ԻԿ յակամայ Բα ի յարիւնս (α չիք ի) ձեր ԴԵՇԺԼԽ յարիւնս Հ չիք ձեր 17—18 ԲԴԾ¹,¹²α չիք թողէք անգր զառաջին յանցանս ձեր 18 ԳԵԺԼԽՀ յանցանսն Գ չիք ձեր ԲԳԴԿԾ¹α այլ փխ և (զառաջիկայ) Դ զառաջակա 18—19 Է չիք «և զառաջիկայ— վասն ձեր» 19 Դ չիք մեծ 20 ՇԺԽՀ ետ պատասխանի Սահակ եպիսկոպոս առ այս և ասէ Դ չիք Սահակ ԲԵԼՏ¹Տ²Ծ¹α չիք առ այս ԲԴα եպիսկոպոսն Ե առ այս և ասէ Տ² եպիսկոպոս առ այս 21 Լ և ոչ փխ յոյժ ԲԴԾ¹ գեղեցիկ Խ յանձինս Բ ի յանձին α չիք յանձին 21—22 ԲԴα վասն շինութեան աշխարհի ԲԴԾ¹α տգիտութեամբ 22—23 ԵՇԺԼԽՀՏ¹Տ² ուսուցանես կարի յոյժ Տ² չիք զայս 24 Բ վեհք ԵՇԺԽՀ վիհքն(!) Լ վիշտն(!) ԾՏ¹ վիշապն(!) ԲԳԵՇԹԺԼԽՕԿՀՏ¹Ծ¹ մարտուցեալ են 24—25 Դ խոնարհագոյն 25 Թի հաւանիլ

ո՛չ միայն ձեր արքունիքից է գերազանցում իր պատվականությամբ, այլև այդ երկնային լուսավորներից, որոնց դուք երկրպագում եք»։

Պատասխան տվեց Մովան անդերձապետը և ասաց նրանց. «Աստվածները բարերար են և համբերությամբ հոգում են մարդկային ազգի համար. որպեսզի հասկանան ու ճանաչեն իրենց փոքրիկությունն ու նրանց մեծությունը և վայելեն այս աշխարհի պարգևները, որոնք հանձնըված են թագավորի իրավունքին, և նրանց բերանից են դուրս գալիս կյանքի ու մահվան հրամանները։ Դուք իրավունք չունեք այդպես ընդդիմանալու նրանց կամքին և հանձն չառնելու արեգակին երկրպագել, որ իր ճառագայթներով լուսավորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմությամբ հասցնում է մարդկանց և անասունների կերակուրը. և իր ընդհանուրին բաշխող առատության ու անաչառ մատակարարության պատճառով կոչվեց Միհր աստված, որովհետև նրա մեջ չկա նենգություն և անիմաստություն։ Ուստի և մենք էլ երկայնամիտ ենք լինում ձեր տգիտության վերաբերմամբ, որովհետև գիշակեր և արյունարբու գազանների նման մարդատյաց չենք։ Խնայեցե՛ք ձեր անձերին և մեզ ակամա մի՛ խառնեք ձեր արյունի մեջ։ Մի կողմ թողեք ձեր նախկին հանցանքը և առաջիկա գործերդ ուղղեցեք, որպեսզի ձեր պատճառով ուրիշներն էլ ողորմության արժանանան մեծ թագավորի կողմից»։

Նրան Սահակ եպիսկոպոսը պատասխան տվեց և ասաց. «Ինչպես մի ուսյալ և խիստ կրթված մարդ՝ գեղեցկապես հոգում ես աշխարհի շինության և թագավորի փառքի համար, բայց այս բանը շատ տգիտաբար ես սովորեցնում, որովհետև բազմաթիվ աստվածներ ես դավանում և բոլորի մասին չես ասում, թե մի կամք ունեն։ Եթե վեհագույնները հակամարտ են միմյանց, մենք, նրանցից ավելի խոնարհներս, ինչպե՞ս կարող ենք համաձայնել քո խոսքերին։ Միացրո՛ւ ջուրն ու կրակը, որ-

Միաբանեա զջուր և զկրակ, զի ուսցուք ի նոցանէ զխաղաղութիւն. կոչեա զարեգակն ի տուն որպէս կրակ, և եթէ նմա ոչ մարթի գալ՝ զի մի՛ աշխարհի ի խաւարի մնասցէ յղեա զգա առ նա, զի ուսցի ի նմանէ զանկարօտութիւնն։

Եւ եթէ մի է բնութիւն աստուածոցն քոց, հաւասարեսցեն առ միմեանս զուգութեամբ. լիցի անկերակուր կրակ իբրև զարեգակն, և մի՛ խափանեսցին ծառայքն արքունի ի ծախս ռոճկաց սորա։ Արդ մինդ անյագ ուտէ, և հանապազ մեռանի. և մինն որ չուտէ, առանց օդոյն նուազի լոյս ճառագայթից իւրոց. ցրտանայ ձմերայնի, և սառուցանէ զամենայն բոյսս դալար խոտոյ, տօթանայ ամարայնի, և հրակէզ առնէ զամենայն կենդանիս։ Եւ որ ինքն յար ի փոփոխման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք շնորհել։ Եւ քեզ ոչ կարեմ մեղադիր լինել. որոյ ոչ տեսեալ է զմեծ թագաւորն, պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն. իսկ եթէ ոք զայս ի հմուտ գիտնոցն արասցէ, վաղվաղակի մահ ի վերայ հրամայեն։

«Այլ վասն արեգական, եթէ կամիցիս ուսանել, զճշմարիտն ասացից քեզ։ Մասն է նա աշխարհիս արարածոց, ի բազում մասանց մի մասն որոշեալ է. կէսքն ի վերոյ են քան զնա, և կէսքն ներքոյ նորա։ Ոչ է նա առանձին սուրբ յատակ լուսով, այլ ի ձեռն օդոյն հրամանաւն Աստուծոյ տարածանէ զճառագայթս իւր, և հրային մասամբ ջեռուցանէ զամենայն գոյացեալս ի ներքոյ իւրոյ կայանին։ Իսկ վերինքն ոչ ինչ մասն ունին ի նորա ճառագայթիցն. քանզի իբրև յաման ինչ արկեալ է զլոյսն ի գունդ նորա, և ի վայր կոյս հեղու բերանացեալ՝ առ ի պէտս ներքնոցս վայելչութեան։ Եւ զոր օրինակ նաւ մի թռուցեալ ի վերայ ծովային ջուրցն բազմու-

---

1 S^1 միաբանել Հ զջուրն Ա ուսուցուք(!) ԳԵ ի նոցանէն Ջ ի սոցանէ 2 Ջ կոչեաց ԸԽ չիք ի տուն ԳԴԼԿS^1S^2 որպէս և զկրակ ԱԲԸԹԺԻԽՀՃ^{1}α զկրակ Բ չիք և ԲՃ^{1}α չմարթի V ոչ մարդի(!) 3 ԲԴՃ^{1}α աշխարհս խաւարեսցի ԵԺԼԽՀ ի խաւար ԲՃ^{1}α յուղարկեա ԱՁԷԹV ուսցիս 4 է ի սմանէ ԵԸԺԽՀ զանկարօտութիւն 5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^1 չիք և ԲԳԵԺԼԽԿα աստուածոց ԴԵԸԺԻԽՀՃ$_1$α հաւասարեսցին 6 ԲԿՃ^{2}α որպէս 7 Լ չիք և ԿՃ^{2}α չիք մի՛ ՁԷ մի՛ խափանեսցին ԱՁԷԹԻV ճառագայթքն(!) փխ ծառայքն ԲՃ^{1}α նոցա փխ սորա ԴԻ նորա 8 V անյօգ(!) ԲՃ^{1}α մինդ որ ոչ ուտէ ՁԷ և մին ոչ ուտէ ԱԻԿV մին ԳԼ և մին Դ մինդ 9 ԱԲԳԴՁԷԹԻԼԽα օդոյ Ե առանց օդոյն ուզի(!) ԲՃ^{1}α ի լուսոյ ԴԻ նորա 9—10 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽ ձմերանի ԿՀS^1S^2Ճ^2 ի ձմերայնի 10 Ա դալար բոյս Բα դալարոյ ԵԺԽՀS^2 դալարաբոյս ԳԴԿՀS^1 դալարաբոյս ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 խոտոցն ՁԷԹԻV զամենայն դալար բոյս խոտոյ Ը դալար բոյսս 10—11 ԱԲԳԼՃ^1 յամարանի ԴԹα ամարանի ԻՃ^2 ամարայնի A յամարայնի 11 ԱԳԴՁԷԹ

պեսզի նրանցից խաղաղություն սովորենք. արեգակին տուն կանչիր որպես կրակ, և եթե նրա գալը հնարավոր չէ, որպեսզի աշխարհը խավարի մեջ չմնա, դրա՛ն ուղարկիր նրա մոտ, որպեսզի նրանից անկարոտություն սովորի։

«Եվ եթե քո աստվածների բնությունը մեկ է, թող միանալով հավասարվեն միմյանց. կրակն անկերակուր դառնա ինչպես արեգակը, և արքունի ծառաները [գործից] չխափանվեն՝ դրան փայտ հասցնելու համար[153]։ Արդ, դրանցից մեկն անհագաբար ուտում է և շարունակ մեռնում, իսկ մյուսը, որ չի ուտում, առանց օդի նվազում է նրա ճառագայթների լույսը. ձմեռը ցրտանում է և բոլոր դալար բույսերը սառցնում, ամառը տոթանում է և այրում ամեն մի կենդանի բան։ Եվ նա, որ շարունակ փոփոխության մեջ է, չի կարող որևէ մեկին հաստատուն կյանք շնորհել։ Ես չեմ կարող քեզ մեղադրել. ով չի տեսել մեծ թագավորին, երկրպագություն է տալիս պատվավորներին. իսկ եթե հմուտ գիտուններից մեկն այսպես վարվի, իսկույն մահվան հրաման կտան նրա վերաբերմամբ։

«Իսկ արեգակի մասին, եթե կուզես սովորել, ճշմարիտը կասեմ քեզ։ Նա այս աշխարհի արարածների մի մասն է, շատ մասերից մի որոշված մաս. ոմանք նրանից վերև են, ոմանք ներքև։ Նա առանձին սուրբ և հատակ լույս չունի, այլ աստծու հրամանով նա իր ճառագայթները տարածում է օդի միջով և հրային մասով տաքացնում է իր կայանի ներքևը գտնվող բոլոր արարածներին։ Իսկ վերիններն ամենևին մաս չունեն նրա ճառագայթներից. որովհետև լույսը նրա գնդի մեջ տեղավորված է ինչպես մի ամանում, և բերանը դեպի ցած բաց արած՝ լույսը թափում է դեպի ներքև, որպեսզի ներքևում ապրողները վայելեն։ Ինչպես օրինակ, մի նավ թռչում-սահում է ծովային անհուն ջրերի

ԺԻԼԿS^1α Հրկէզ Դ յինքն 12 α ի փոփոխումն Խ ումեք կեանս Կ շնորհել ումեք 13 ԵԸԺԽՀS^2 կարեմք Բ որոյ չէ տեսեալ Ե որոց ոչ է տեսեալ ԴԽα ոչ է տեսեալ Ժ ոչ է ԸՀS^2 է տեսեալ 14 ԱՁ զերկրպագութիւնն ԵԼ զոք ՀS^1 չիք զոք 15 ԲՃ^1 չիք զայս ԵԸԺԽՀ չիք հմուտ ԲԴՃ^1 գիտնոց զայս արասցէ α զայն 15—16 ԲՃ^{1}α վաղվաղակի ի վերայ մահ հրամայեն Դ հրամայէ 17 ԲՃ^{1}α կամիս ԳԵԸԺԼS^1S^2 կամեսցիս Խ կամեսցես Հ կամեսցի(!) ԹԻ ուսանիլ 17—18 α ուսուցից փխ ասացից Դ չիք զճշմարիտն ասացից քեզ 18—19 Դ մասանցն 19 Ի չիք մի Բ աւրոշեալ է α ուրուշեալ է ԲԹ կէսն ԲԹ և կէսն 20 ԲԳα առանձինն ԲՃ^{1}α սուրբ և յատակ 21 ԲԳԴԵԸԼԿՀα աւդոյ ԲԳԴԵԺα հրամանաւ 21—22 Դ մասամբն α և հրամանին մասամբ 22 ԳԵԺ իւրոց Կ իւր 22—23 ԱԳ կաանին(!) ԲՃ^{2}α կայենին 23 ԳԴԵԼԿՀ վերինք ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք ինչ 24 Ի ինչ յաման Հ անկեալ է ԲԳα չիք է 25 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք առ ԱՁԷԹԻV ներքնոյս Բα ներքնոցն։

թեան, անգիտութեամբ գնայ զուղևորութիւնն ի ձեռն հմուտ և ճարտար նաւապետին, այսպէս և արեգակն ի ձեռն կառավարին իւրոյ ունի զփոփոխմունս շրջանին իւրոյ տարևոր ժամանակին։

«Եւ որպէս այլ մասունք աշխարհիս հաստատեալ են վասն մեր կենաց, և զնա իբրև զմի յայլոց մասանց տուեալ է մեզ յառաջնորդութիւն լուսոյ, որպէս զլուսին և զաստեղս և զօդս յարածուփս և զամպս անձրևաբերս. նոյնպէս և յերկրես մասանց զծով և զգետս և զաղբերս և զամենայն պիտանացու ջուրս, նոյնպէս և ըզցամաքայինս ամենայն պիտոյիւք իւրովք։ Աստուած և զմի ոք ի սոցանէ չէ արժան անուանել. և եթէ ժպրհիցի ոք ասել, զանձն ագիտաբար կորուսանէ, և աստուած անունն մեծարելով զնոսա՝ նոքա ոչ ինչ օգտեցան։ Միոյ իշխանութեան երկու թագաւորք ոչ լինին. և եթէ մարդ զայդ քեզ յանձն ոչ առնու, քանի՞ ևս հեռի է յԱստուծոյ բնութենէն այդպիսի կարգ չփոթիալ։

«Արդ եթէ կամիս ուսանել զճշմարիտն, քաղցրացո զդառնութիւն սրտիդ, և բաց զաչս մտացդ, և մի՛ յարթնութեան կուրութեամբ ընդ խաւար գնար, որ անկեալ ես ի խորխորատ, և զամենեսեան կամիս առ քեզ ձգել։ Եւ եթէ քոյքն զան զկնի մոլար վարդապետութեանդ՝ որ ոչ տեսանեն և ոչ իմանան, մի՛ և զմեզ կարծեր դոյն օրինակ. քանզի բաց են աչք մտաց մերոց և սրատեսիլ եմք։ Մարմնոյս աչօք զարարածս տեսանեմք, և իմանամք զնա յայլմէ արարեալ. և ամենեքեան ընդ ապականութեամբ։ Իսկ արարիչն ամենեցուն աներևոյթ է ի մարմնաւոր աչաց, այլ մտաց իմանի զօրութիւն նորա։

---

1 ԳԽ անգիտութեամբն ԲԴՃ^{2}α զուղղևորութիւնն(!) ԱԵՋ զուղևորութիւն ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք և 2 α այս փխ այսպէս ԳԴԵԸԺԼԽԿՀ և Բ արեգակնն 3 α զփոփոխումն ԲՃ^{1}α ժամանակաւ 4 Բ յաշխարհիս 5 A կենացն α յայլոց մասանց ԳԵԸԼԽՀ մասանցն Դ չիք է 5—6 Բα յառաջնորդութիւն մեզ լուսոյ 6 ԳԴ լուսին Թ չիք որպէս Դ չիք և զօդս ԱՋԷԹԻՎ յարարածոյս փխ յարածուփս ԳԵԸԺԼԽԿՀՏ^3 յարածուս Դ յարարածս Տ^1 յարարածուս 7 ԱՋԷ զամպս ԲՃ^{1}α չիք զամպս ԲՃ^1 զանձրևաբերս ԴՋԷՎ յանձրևաբերս ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 սոյնպէս և Բ ի յերկրի Թ երկրիս α յերկրի Լ յերկիրս Ծ երկիրս 7—8 Դ զծովս գետս 8 ԲԳԿ զաղբերս ԱՋԷԹԻՎ պիտանացուս ԳԿ ջուրսն Թ ջուրց Բ սոյնպէս α այնպէս 8—9 Գ զցամաքայինսս Դ զցամաքայինսն Լ ցամաքայինս 9 α պիտոյիւք և Բ Եւ աստուած ԵԸԼԽ չիք աստուած 9—10 ԲՃ^{1}α և ոչ զմի ոք ի սոցանէ արժան է անուանել ԵԸԼԽ աստուած անուանել ԳԴ և մի զոք Կ զոք ԺՀՏ^{1}Տ^2 և զմի ոք ի սոցանէ չէ արժան աստուած անուանել Ը ի նոցանէ 10 ԲԳԴՃ^{1}α ժպրհեսցի ԲԴՃ^{2}α զանձն իւր 11 Դ կորուսցէ ԲԻα անուն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 անուամբն 12 ԲՃ^{1}α ինչ ոչ Դ չաւգտեցան Բ մի 2 թագաւոր 13 ԵԺ թէ ԳԴԵԺԼԽԿՀ քեզ զայդ Դ

վրայով, անգիտությամբ ճանապարհ է կտրում հմուտ և ճարտար նավապետի ղեկավարությամբ, այդպես էլ արեգակը իր կառավարի ձեռքով փոփոխում է իր շրջանը տարևոր ժամանակում։

«Եվ ինչպես որ այս աշխարհի ուրիշ մասերը հաստատված են մեր կյանքի համար, նա էլ, ինչպես մյուս մասերից մեկը, տրված է մեզ՝ լույս տալու համար, ինչպես լուսինն ու աստղերը և հարածուփ օդերն ու անձրևաբեր ամպերը, նույնպես և երկրիս մասերից՝ ծովն ու գետերը, աղբյուրներն ու բոլոր պիտանի ջրերը, նույնպես և ցամաքայինները իրենց բոլոր պիտույքներով։ Սրանցից և ոչ մեկին էլ չպետք է աստված անվանել. իսկ եթե մեկը համարձակվի ասել, իր անձը կորցնում է տգիտաբար, իսկ նրանք էլ աստված անունով մեծարվելով՝ ոչ մի օգուտ չստացան։ Մի իշխանությունը երկու թագավոր չի ունենում, և եթե մարդն այդ բանը հանձն չի առնում, որքա՞ն ավելի հեռու է Աստծու բնությունից այդպիսի խառնաշփոթ կարգը։

«Արդ՝ եթե ուզում ես ճշմարիտը սովորել, քաղցրացրո՛ւ սրտիդ դառնությունը և բաց արա՛ մտքիդ աչքերը և արթնության վիճակում կուրորեն մի՛ գնա խավարի միջով. ինքդ ընկել ես խորխորատը և բոլորին էլ կամենում ես քաշել քեզ մոտ։ Եվ եթե քոյինները գալիս են մոլար ուսմունքիդ հետևից, առանց տեսնելու և հասկանալու, մեզ էլ այդպես մի՛ կարծիր. որովհետև մեր մտքի աչքերը բաց են և սրատես ենք։ Այս մարմնավոր աչքերով տեսնում ենք արարածներին և հասկանում ենք, որ սա ուրիշն է ստեղծել, և բոլորն էլ ապականացու են։ Իսկ բոլորի արարիչն անտեսանելի է մարմնավոր աչքերի համար, և նրա զորությունը մտքով է հասկացվում։

յանձն չառնու Բα քանի ևս ինչ 13—14 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^2 հեռի է առ ի յաստուծոյ A հեռի ի յաստուծոյ ԱՋԷԹԻՎՏ^3 քանի ևս հեռի է այս յաստուծոյ 14 ԳԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չփոթեալ է 15 ԹԻՏ^1 ուսանիլ Ճ^1 զճշմարիտն ուսանել Ճ^2 ուսանել զճշմարիտն 15—16 α զընութիւն փխ զդառնութիւն 16 ԵՀ չիք և (բաց) 16—17 Բ և մի յայոր(!) հնութեան կուրութեամբ ԳԴԵԸԺԼԿՀ յար հնութեան Ճ^{1}α յար հնութեամբ Խ յար հնութեամբ կուրութեամբ(!) Դ կուրութեամբդ ԵՀ կուրութեան 17 ՋԷՎ գնասցես A գնայցես ԲՃ^1 որ և անկեալդ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 անկեալդ α որ արգելեալ ես 17—18 Դ զամենեսին 18 ԴԵԸԽՀՏ^2 գնան ԱՋԷԹԻ զկնի քո մոլար 18—19 Բα քո վարդապետութեանդ 19 ԳԵԸԺԼԽԿՀ չիք և (զմեզ) Բ կարծես 20 ԲՃ^1 նոյն օրինակ Բ բացան փխ բաց են ԱՋԷԹԻՎՏ^3 սրատես իսկ եմք Դ սրատեսիլ եմ 21 Բα մարմնոյ Դ մարմնով ԳԼՏ^1 մարմնովս ԴՃ^{1}α զնոսա 22 ԵԺԼԽՀՏ^1 չիք են ԲՃ^{1}α ամենեքեան ընդ ապականութեամբ են Դ ապականութեան 23 ԲԳԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^2 աչացս է չիք այլ մտաց Ը ի մտաց 23—24 Ի զօրութիւնն։

«Եւ վասն զի ետես զմեզ ի մեծի տգիտութեան, և ողորմեցաւ մերում անուսումնութեանն, յորում և մեք իբրև զձեզդ երբեմն զերանելիսս կարծէաք արարիչ և գործէաք զամենայն անառակութիւնս, վասն այնորիկ առ սէր իւր եկն մարմնացաւ ի մարդկանէ, և ուսոյց մեզ զաներևոյթ աստուածութիւնն իւր։ Այն զի բարձրացոյց զինքն ի խաչն կախաղանի, և զի մարդիկ զհետ լուսաւորացդ մոլորեցան, մերկեաց յարեգակնէ զլոյս ճառագայթիցն իւրոց, զի եղիցի խաւար սպասաւոր մարդկութեան նորա. զի որ իբրև զձեզ անարժանք իցեն, մի՛ տեսցեն զկեանս իւրեանց ի մեծի անարգութեան։ Որպէս և այսօր, որ ոչ խոստովանի զխաչելեալն Աստուած, նոյն խաւար մածեալ է զոգւով և մարմնով նորա. որպէս և դու իսկ այսօր ի նմին խաւարի կաս, և զմեզ դեռ ևս չարչարես։ Պատրաստ եմք ըստ օրինակի Տեառն մերոյ մեռանել. որպէս զիարդ և կամիս՝ կատարեա զկամս դառնութեան քո»։

Յայնժամ իբրև հայեցաւ ի նոսա անօրէնն Դենշապուհ, և ետես ի մեծի ուրախութեան զուարթագին զամենեսեան, գիտաց եթէ ոչ գնան առ նոսա բանք սպառնալեաց և ողոքանաց։ Հրամայեաց ըզմի ոմն ի կրտսերագունիցն յառաջ մատուցանել, երէց մի Արշէն անուն, վասն որոյ յառաջ կասկածն իսկ եղև սրբոցն։ Կապեցին զոտսն և զձեռսն, և մեծաւ ուժով պրկեցին, մինչև ճարճատիւն հատաւ ամենայն ջլացն. և այնպէս կայր ցմեծ ժամս յանհնարին պրկոցանն։

Եբաց սուրբն զբերան իւր և ասէ. «Ահա շրջեցան զինև շունք բազումք, և ժողովք չարաց պաշարեցին զիս. ծակեցին զոտս իմ և

---

1 ԲԴα չիք եւ ԳԴԵԾԺԼԿՀՏ^2 ի մեծ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α չիք և V մերումն 2 ԳԴ ԵԼԿՀα անուսումնութեանս ԱԲԵՁԷԼՀVα որում 2—3 ԲՃ^{1}α զձեզդ էաք և երբեմն զերանելիս ԵԼՀՏ^{1}Տ^2 զձեզ Դ չիք երբեմն Լ զերանելի ԵԺԾ զերանելիս 3 ԲՃ^{1}α գործէաք զանօրէնութիւն Դ անառակութիւնն 4 ԲԴՃ^{1}α և մարմնացաւ 5 Լ աներևոյթ Ի աստուածութիւն Լ չիք այն Խ բարձրացաւ 6 Խ չիք զինքն ԲՃ^{1}α ի խաչին ԺԻ ի խաչ ԲՃ^{1}α չիք և Դ մարդիկդ Հ զմարդիկ(!) 6—7 Բ մոլորէին ԳԴԼԿՏ^1 մոլորեալ են Տ^{2}Ճα մոլորեալ էին 7 ԱԴ մերկաց(!) Հ մեկնեաց(!) ԱԲԳԴԿՏ^{1}Տ^{2}α յարեգականէ ԲԴα ճառագայթից 8 ԳԵ մարդկութեանն Թ չիք որ 9 α անարժանքն ԲՃ^{1}α էին փխ իցեն ԲՃ^{1}α մի՛ տեսանիցեն ԵԸԺԽԿՀՏ^2 իւրեանց, այլ ի մեծի ԾՏ^1 և ի մեծի 9—10 ԳԵԸԺԼ ԽԿՀՏ^{1}Տ^2 անարգութեան եղիցին 10 Բα խոստովանին ԱԴԵԻԹԼՀՃ^{1}Ճ^{2}α զխաչեալն 11 V մնացեալ է փխ մածեալ է ԱԵՁԷԺԻԼԽՀՏ^{1}Տ^2 զմարմնով ԳԴԿՃ^{1}α զոգովք և զմարմնովք Է հոգով և զմարմնով Ճ^{1}α նոցա փխ նորա Բ չիք և 12 ԳԴԿ չիք ես ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 և դեռևս զմեզ ԲՃ^{1}α չարաչար տանջես 12—13 ԲՃ^{1}α այլ մեք պատրաստ եմք ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մեք պատրաստ եմք 13 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք մեռանել Թի մեռանիլ Բα դու որպէս Հ չիք և 13—14 ԲՃ^{1}α զկամս թագաւորին քո դառնութեան 15 Ի ի

«Եվ որովհետև մեզ տեսավ մեծ տգիտության մեջ և խղճաց մեր անուսումնությանը, որով մենք էլ ձեզ նման տեսանելի [արարածներին] արարիչ էինք կարծում և ամեն տեսակ անկարգություններ գործում, այդ պատճառով էլ իր սիրով եկավ մարդկային մարմին առավ և մեզ սովորեցրեց իր աներևույթ աստվածությունը։ Նա, որ իրեն բարձրացրեց կախաղանի խաչի վրա, քանի որ մարդիկ մոլորվել էին այդ լուսավորների հետևից, արեգակին զրկեց իր ճառագայթների լույսից, որ խավարն սպասավոր լինի նրա մարդկությանը. որպեսզի ովքեր ձեզ նման անարժան լինեն, իրենց կյանքը չտեսնեն մեծ անարգության մեջ։ Այդպես և այսօր. ով չի խոստովանում խաչված աստծուն, նույն խավարն է պատել նրա հոգին ու մարմինը. ինչպես որ դու էլ այսօր նույն խավարի մեջ ես և դեռ մեզ էլ չարչարում ես։ Պատրաստ ենք մեռնելու մեր Տիրոջ նման. ինչպե՛ս և ի՛նչ կերպ ուզում ես՝ կատարի՛ր քո դաժան կամքը»։

Այն ժամանակ, երբ անօրեն Դենշապուհը նայեց նրանց և տեսավ բոլորին մեծ ուրախության մեջ և զվարթ, հասկացավ, որ նրանց վրա ազդեցություն չեն ունենում սպառնական և հորդորական խոսքերը։ Հրամայեց առաջ բերել ամենակրտսերներից մեկին, Արշեն անունով մի երեցի, որի մասին առաջ հենց կասկած էր առաջացել սրբերի մեջ։ Կապեցին ոտներն ու ձեռները և այնպիսի մեծ ուժով ձիգ տվին, մինչև որ բոլոր ջղերի ճարճատյունը կտրվեց. և այսպես երկար ժամանակ մնաց անտանելի պրկոցի մեջ։

Սուրբն իր բերանը բաց արեց և ասաց. «Ահա իմ շուրջը պատեցին բազմաթիվ շներ և չարերի ժողովը պաշարեց ինձ. ծակեցին իմ ոտներն

նա փխ ի նոսա α անօրէն 16 Բα ուրախութեան զնոսա α և զուարթագին 16—17 Խ թէ ԳԴԵԺԼԽԾԿՀՏ^{1}Տ^2 ոչինչ գնան Բ ոչ գնա ԱՁԷԸԹԻVՏ^{3}Λ ոչ գնան α ոչինչ զգա 17 ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α սպառնալեացն և ողոքանացն Ըխ ուղաքանացն Հ ողոգանացն 18 ԱԳԹԿ կրսերագունացն Դ կրտսերագոյնացն Λ կրսերագունիցն ԸV երէց α Արշէն 19 Բα վասն որոյ և Ի յառաջն Բα յառաջ իսկ կասկաց(!) (α կասկած) Դ իսկ կասկած ԴԵԻԼ կասկած 19—20 ԳԴԿՃ$^{5,12,17-18,27}$ կապեցին զոտսն և մեծաւ ուժով պրկեցին զձեռսն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 պնդեցին զձեռսն α կապեցին զոտս և զձեռս 20 ԲԻՃ^{1}α ճարճատումն 20—21 ՁԷV ճարճատեցան ամենայն ջիլքն 21 ԱԹԻ եղև փխ հատաւ α հարաւ փխ հատաւ ԴԺԿԽα ջլացն Դ ամենայն անդամոցն և ջլացն Բ կայր մինչև ցմեծ ժամն Ճ^{1}α կայր մինչև ցվեց ժամս ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ցմեծ ժամս ԱՁԷԹԻVՏ^{3}Λ մեծ α չիք յանհնարին 22 ԲՃ^{1}α ի պրկանացն Λ պրկոցն Դ պրկոցին 23 Բα զբերան իւր սուրբն Հ զբերանն Դ և ասաց Բα չիք ահա ԲՃ^{1}α շուրջ եղէն 24 ԵԸԽՀ չիք բազումք ԱԲԳՁԷԹԻԼԽV չարեաց ԵՀ չիք և ժողովք չարաց ԲԼα զձեռս իմ և զոտս իմ (α չիք իմ) ԵԸԺԼԽԾՀՏ^{1}Տ^2 զձեռս և զոտս իմ ԳԴԿ չիք իմ։

զձեռս իմ, և փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեսցին ամենայն ոսկերք իմ։ Լո՛ւր ինձ, Տէր, և լո՛ւր ձայնի իմում, և ընկալ զոգի իմ ի ժողովս սուրբ զօրականին քո, որ երևեցաւ նորակերտ դաստակերտին քոյ։ Ես որ կրտսերս եմ յամենեսեան, ողորմութիւն քո գթացեալ յառաջեցոյց զիս»։

Եւ զայս իբրև ասաց, ոչ ևս կարէր բանալ զբերանն յանհնարին պրկոցաց գելարանին։ Եւ անդէն վաղվաղակի դահիճքն հրաման առեալ յերից նախարարացն՝ սրով հատանել զպարանոց երանելւոյն, և ընկեցին զմարմինն ի խորխորատ մի ցամաք։

Եւ անդէն ի տեղւոջն սկսաւ խօսել Դենշապուհ ընդ եպիսկոպոսին և ասէ. «Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ զտարի մի և վեց ամիս եհաս շրջել ինձ անդ. ոչ յիշեմ ես ամենևին՝ եթէ բան մի տրտունջ յումեքէ լուայ վասն քո, սոյնպէս և առաւել վասն Յովսեփայ. զի դա իսկ էր իշխան ամենայն քրիստոնէից, և հաւատարիմ յամենայն իրս արքունի։ Նա և որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն, մեծապէս գոհ էր զսոնէս զայսմանէ. և ես ինձէն իսկ աչօք իմովք տեսի, զի որպէս հայր հաստատուն համարեալ էր ամենայն աշխարհին, և անաչառութեամբ սիրէր զմեծամեծս և զփոքունս։

«Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաչեմ զձեզ. խնայեցէք ի պատուական անձինս ձեր, և մի՛ մատնիք ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք։ Քանզի թէ ի դոյն միտըս յամառութեան կայք, և իմ եղեալ է ի մտի իմում բազում չարչարանօք կարճել զձեզ ի կենաց ձերոց։ Ես գիտեմ, զի ի հրապոյրս սանդ այդորիկ ելեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկութեամբ բժշկաց չիք գտեալ առողջութիւն, և հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, և փափագէ ի մահ քան ի կեանս»։

---

1 ԱԶ աղաղակեսցին է աղաղակեսցեն Դ աղաղակէ   2 Բ չիք և ԳԿ զհոգիս α զհոգի Դ զոգիս   2—3 ԳԵԺԼԽՀ ի ժողով   3 Գ զօրականացն քո որ երևեցան զօրականին(!) է որպէս փխ որ ԴԸԺԼԽԿՀՏ² երևեցան   4 ԴԵԸԽՀՏ² կրսեր Լ կրսերս էի ԳԴԸԺԽՀՏ¹Տ² էի A կրսերս ԳԿ ողորմութիւնդ Ժ չիք քո   5 Տ² յառաջացոյց   6 Դ չիք Եւ Բα չիք ես ԲԴα զբերան իւր   6—7 Տ¹ յանհնարին ցաւոցն α յահագին պրկոցաց   7 ԵԺԽԿՀ պրկոցացն Լ չիք պրկոցաց գելարանին Գ գալարանին ԲՃ¹α չիք վաղվաղակի ԳԴԵԸԺԼԽԿՀՏ² դահիճքն վաղվաղակի   8 ԲՃ¹α առին   8—9 ԲՃ¹α սրով կատարել զերանելին Արշէն (α Արսէն), որոց հատեալ զսուրբ պարանոցն ԳԴ հատեալ Ա երանելւոյ Բα չիք երանելւոյն   9 ԲԳԴԿα չիք և Բ ի խորխորատն Բα չիք մի   10 ԹԻ խօսել α Դենշափուհ   10—11 Բ եպիսկոպոսն ԵԺԼԽ տարի մի ԸՀՏ¹Տ² տարի A   11—12 զվեց ԲՃ¹Ճ²α եհաս շրջել ինձ անդ զտարի մի և ամիսս վեց (Ճ¹α զամիսս) ԳԿ տարի մի և զվեց ամիս   12 ԳԶԷԻՏ³ զվեց ամիս ԸԺԼԽՀ եհաս ինձ ԵՀ ինձ շրջել անդ Ի շրջել Թα չիք ես Դ թէ   13 ԲԿα լուայ յումեքէ Հ յումեքէ վասն քո լուաւ ԱԳԴԸԹԺԻ

ու ձեռները, և իմ բերանի փոխարեն բոլոր ոսկորներս աղաղակեցին։ Լսի՛ր ինձ Տե՛ր, և լսի՛ր իմ ձայնին, և ընդունի՛ր իմ հոգին քո սուրբ զորականների ժողովում, որ երևաց քո նորակերտ ձեռակերտին։ Ես որ ամենքից կրտսերն եմ, քո ողորմությունը գթալով ինձ վրա՝ առաջ քաշեց»։

Եվ երբ այս ասաց, այլևս չէր կարողանում բերանը բաց անել գելարանի անտանելի պրկոցներից։ Դահիճներն անմիջապես հրաման ստացան երեք նախարարներից՝ սրով կտրել երանելու պարանոցը, և մարմինը գցեցին մի ցամաք խորխորատի մեջ։

Եվ հենց տեղնուտեղը Դենշապուհն սկսեց խոսել եպիսկոպոսի հետ և ասաց. «Երբ ես եկա Հայոց աշխարհը, ինձ վիճակվեց մի տարի և վեց ամիս շրջել այնտեղ. ես ամենևին չեմ հիշում, թե որևէ մեկից մի տրտունջ լսած լինեմ քո մասին, նույնպես և ավելի Հովսեփի մասին. որովհետև հենց դա էր բոլոր քրիստոնյաների պետը և հավատարիմ էր արքունի բոլոր գործերի մեջ։ Նույնպես և նա, ով իմ գնալուց առաջ այն աշխարհում մարզպան էր, շատ գոհ էր այս մարդուց. ես ինքս էլ իմ աչքով տեսա, որ ամբողջ երկրի համար հաստատուն հայր էր համարվում, և անաչառ կերպով սիրում էր մեծամեծներին և փոքրերին։

«Արդ, փոխանակ որ դուք աղաչեք, ե՛ս եմ աղաչում ձեզ. խնայեցե՛ք ձեր պատվական անձերին և մի՛ մատնվեք չարչարալից մահվան առաջինի նման, ինչ որ տեսաք ձեր աչքերով։ Որովհետև եթե դուք այդ համառ մտքի վրա եք մնում, ես էլ մտքումս դրել եմ անթիվ չարչարանքներով վերջ դնել ձեր կյանքին։ Ես գիտեմ, որ դուք այդ մարդու կողմից խաբված եք. որովհետև ինքը մարմնով հիվանդ է և բժիշկների օգնությամբ չի կարողացել առողջություն գտնել, հիվանդոտ կյանքից ձանձրացել է և ավելի մահվան է փափագում, քան թե կյանքի»։

սոյնպէս և ԲՃ²α սոյնպէս ես ԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² սոյնպէս և առաւել ես   14 Բ Յուսիփա ԱԲԳԵԻα քրիստոնէիցն Զ քրիստովնէից   15 Բ մարզպանն Դ չիք աշխարհին   16 ԲՃ¹α զմեր փխ զիմ Գ չիք մեծապէս   17 Հ և ես իսկ α ինձէն իսկ տեսի աչօք իմովք ԲՃ¹ և ես ինձէն իսկ տեսանելի աչօք իմովք, զի իբրև ԳԴԵԸԹԺԼԽԿՏ¹Տ² ինձէն իսկ Խ ինձէն իսկ ինչ ԱԶԷԹԻՎՏ³A չիք իսկ α զի իբրև ԳԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² տեսանէի իբրև հայր   18 ԳԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² էր համարեալ Կ չիք և α համեալ էր(!)   19 Վα զմեծամեծան   20 Թ չիք ընդ ԶԷՎ ձեզ փխ զձեզ   21 Բ յանձինս α մատնէք   21—22 Բ առաջնոյդ ԳԴԵԺԼԽՀՏ¹ առաջնոցն α ըստ առաջնոյ   22 Դ չիք կարգի Դ զորս ԹԻ տեսիք ԲՃ¹ տեսանէք աչօքդ ձերովք α աչօք ձերովք։ Քանզի եթէ ԲԳԴԵԸԺԼԽՀՏ² եթէ   23 Բα չիք և Ճ¹α չիք և իմ   24 ԵԸԺԽՀ չիք ձերոց ԵԸԺԽՀՏ² և գիտեմ ես որ ԳԼԿՏ¹ չիք զի   24—25 ԲAα ի հրապոյր սանդ   25 ԷՀ չիք ինքն   26 ԲՃ¹α և ի ձեռն բժշկաց Ե բժշկացն α զառողջութիւն   27 ԲԳԴԵԸԺԽԾԿՀՏ¹Տ² չիք և ԻՏ¹ փափագի α փափաքէ ԵԸԽ զկեանս փխ ի կեանս

Առ այս ետ պատասխանի սուրբն Յովսէփ և ասէ. «Գովութիւնդ՝ զոր ետուր դու նախ եպիսկոպոսիդ և ապա ինձ, յիրաւի՛ արարեր և ըստ կարգի պատուեցեր վասն ալեացդ. այդպէս իսկ արժան է։ Այլ ճշմարիտ ծառայից Աստուծոյ ոչ է օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանաց, և ոչ զոք ի ժողովրդոց տրտունջ առնել վասն մարմնաւոր զօշաքաղութեան. այլ ցածութեամբ և հեզութեամբ ուսուցանել զպատուիրանս Աստուծոյ, և առանց խարդախ իմաստութեան խաղաղասէր լինել առ ամենեսեան, և անաչառ վարդապետութեամբ առ մի Տէրն արարածոց առաջնորդել բոլորեցունց։

«Այլ վասն առնս այսորիկ հրապուրանաց՝ զոր ասացեր, և զայդ ոչ ստեցեր, այլ կարի զճշմարիտն ասացեր։ Զի ոչ իբրև զօտար ոք հրապուրէ զմեզ, և ոչ իբրև զպատրող ոք խաբեբայ մոլորեցուցանէ զմեզ, այլ յոյժ սիրէ զմեզ։ Քանզի մի է մայր մեր եկեղեցի՝ որ երկնեացն զմեզ, և մի է հայր մեր սուրբ Հոգին՝ որ ծնաւ զմեզ. զիա՞րդ համահայրք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին, և ոչ միաբանք։ Որ քեզ թուին՝ թէ հրապոյրք իցեն, մեր ի տուէ և ի գիշերի զոյն խորհուրդ էր՝ զի անքակ ունիցիմք զկենաց միաբանութիւնս։ Իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւե՛լ ևս մեք ամենեքեան. զի չիք ոք ամենևին ի ծնունդս կանանց, որ ունիցի զմարմին առանց ցաւոց չարչարանաց»։

Ետ պատասխանի Դենշապուհ և ասէ. «Զայդ ոչ գիտէք, ո՞րչափ երկայնամիտ լինիմ ես ի վերայ ձեր. այս ոչ հրամանաւ արքունի է այսչափ երկայնաբան լինել ընդ ձեզ պայքարաւ, այլ յիմմէ քաղցրութենէ թողացուցի ձեզ. զի չեմ իբրև զձեզ անագորոյն, զի անձանց ատելի էք և այլոց թշնամիք։ Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ ընդ աշխարհն ձեր»։

Այս բանին պատասխան տվեց սուրբ Հովսեփը և ասաց. «Այդ գովասանքը, որ դու տվիր նախ այս եպիսկոպոսին և ապա ինձ, իրավացի արիր և ըստ կարգի պատվեցիր այդ ալեհերության համար. այդպես էլ վայել է։ Բայց աստծու ճշմարիտ ծառաներին օրենք չէ ընդդիմանալ երկրավոր իշխաններին, և ժողովրդից ոչ ոքի՝ տրտնջալ մարմնավոր աչքածակության համար, այլ խոնարհությամբ և հեզությամբ սովորեցնել աստծու պատվիրանները, և առանց խարդախամտության խաղաղասեր լինել բոլորի վերաբերմամբ, և անաչառ վարդապետությամբ բոլորին առաջնորդել դեպի արարածների միակ տերը։

Իսկ այս մարդու հրապուրանքների համար որ ասացիր, այդ էլ չըստեցիր, այլ բոլորովին ճշմարիտն ասացիր։ Որովհետև ո՛չ թե իբրև մի օտար մարդ է հրապուրում մեզ և ո՛չ թե իբրև մի խաբեբա մոլորեցնում է մեզ, այլ սաստիկ սիրում է մեզ։ Քանի որ մեր մայր եկեղեցին մեկ է, որ երկնեց մեզ, և մեկ է մեր հայր սուրբ հոգին, որ ծնեց մեզ, ինչո՞ւ պետք է մի հոր և մի մոր որդիները երկպառակված լինեն և ոչ թե միաբան։ Այն, ինչ որ քեզ թվում է, թե հրապույր է, մենք գիշեր ու ցերեկ նույն մտածմունքի մեջ էինք, որ անքակ պահենք մեր կյանքի միաբանությունը։ Իսկ եթե սա ձանձրացել է և ուզում է իր հիվանդ մարմնից դուրս գալ, առավել ևս մենք բոլորս, որովհետև բնավ ոչ ոք չկա կանանցից ծնվածների մեջ, որ առանց ցավերի ու չարչարանքների մարմին ունենա»։

Պատասխան տվեց Դենշապուհը և ասաց. «Դուք չգիտեք, թե որքա՜ն համբերող եմ դեպի ձեզ. Թագավորի հրամանով չէ, որ այսչափ երկարաբանում եմ ձեզ հետ և վիճում, այլ իմ քաղցրությամբ եմ այդ թույլ տվել ձեզ, որովհետև ձեզ նման անագորույն չեմ, որ ձեր անձերին ատելի եք և ուրիշներին թշնամի։ Ես աղ ու հաց եմ կերել ձեր աշխարհում, ուստի գութ ու սեր ունեմ ձեր աշխարհի վերաբերմամբ»։

---

1 ԵԸԺԽԿՏ^{2} ետ պատասխանի առ այս 1—2 ԳԴԿՏ^{2} գովութիւնն ԵԻՀ գովութիւն 2 Բ որ ԲԴԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^{2}Ձ^{1} չիք դու 3 ԳԴԵԾԿՀՏ^{2} չիք և (ըստ) ԲԴα ալեացն Բα այնպէս 4 Բα էր ԵԸԺԽՀ աստուծոյ ծառայից Ի լինիլ 5 ԱՋԷԹԻV երկրաւորաց փխ երկրաւոր իշխանաց ԳԵԺԼԽՀ իշխանացս ԵՀ ոչ ոք Կ ի ժողովրդոցս Թ հանել փխ առնել 7 ԲԴ զպատուիրանն 7—8 ԲՁ^{1}α չիք խաղաղասէր լինել առ ամենեսեան Գ առ ամենեսեան խաղաղասէր լինել ԵԸԺԽՀՏ^{2} և անխարդախ իմաստութեամբ 8 Ի լինիլ Գ ամենեսին 8—9 Բ իմաստութեանն և անաչառ վարդապետութեանն 9 ԴԾ ԸԺԽԿՀՏ^{2} բոլորեցուն 10 Ի առն 11 Դ ոչ ևս ստեցեր ԲԴՁ^{2}α չիք կարի 12 ԲՁ^{1,2} զպարտող(!) 12—13 Բα խաբէ և մոլորեցուցանէ զմեզ Ի չիք այլ յոյժ սիրէ ԵԽՁ^{1}A չիք զմեզ 14 ԲԴα երկնեաց Թ չիք է ԿՀ հայրն մեր ԲԵԺԽՀՏ^{2}Ձ^{1}α հոգին սուրբ Ը հոգի սուրբ 14—15 α ծնաւ մեզ 15 Դ համհարք ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք և ԾՏ^{1} միամօր Հ հօր փխ մօր ԲԴα երկպառակ 16 ԲԴα միաբան ԲԳԵԺԼԿՀ եթէ 17 ԵԸԺԽՀ խորհուրդ զոյն է ԲԴՏ^{2}α է փխ էր Բα զկենացն Լ կենաց 18 Բ միաբանութիւն Դ միաբանութիւնն Լ զի փխ իսկ α անձկացեալ իցէ փխ ձանձրացեալ իցէ Թ ախտալից 19 Խ մարմնոյս Բ չիք ոք 19—20 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք ի ծնունդս կանանց 20 Ի մարդկան փխ կանանց ԱՋԷԹԻVՏ^{3}A զմարմինս ԲԳԴԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} զմարմին α մարմին 20—21 Դ որ ոչ ունիցի ի մարմնի իւրում ցաւս չարչարանաց 22—23 Դ թէ որչափ α որպէս փխ որչափ ԸԽ չիք ես Բ հրաման 24 Դα երկայնաբանել Ի լինի ԲՁ^{1}α չիք ընդ ձեզ ԱՋԷԹԻV այդ փխ այլ α փայքարաւ 24—25 ԲԴ յիմէ 25 ԲԼ զի չեմ անագորոն իբրև զձեզ ԹՀ զձեր α զձեզդ ԳՁ^{1}α անագորոն Լ չիք անագորոյն 26 ԲԵՋԷԹԻՁ^{1,5}α ատելիք Ե չիք էք ԴԽԺԾԿՀՏ^{1}Տ^{2} թշնամի Ը չիք զի α մի փխ իմ 27 Բ ի յաշխարհին Ը յաշխարհն ԳԴԸԺԼ չիք ձեր ԲԵԸԺԼԽԾԿՀՏ^{1}Տ^{2}α առ փխ ընդ։

Ետ պատասխանի Ղևոնդ երէց և ասէ. «Որ առ արտաքինսն գութ և սէր ունի, զպատուիրանսն Աստուծոյ կատարէ, այլ պարտի և յիւր ոգին խնայել. զի չեմք անձանց տեարք, այլ է, որ համարս խնդրէ ի մէնջ և վասն արտաքնոց և վասն ներքնոց։ Այլ զոր ասացերդ՝ եթե յինէն անսամ ձեզ և ոչ հրամանաւ թագաւորին, եթէ դուք սովոր էք անցանել ըստ հրամանաւ թագաւորին ձերոյ, զայդ բարիոք առնէք, զի աւերիչ աշխարհի է և սատակիչ անմեղ մարդկան, բարեկամ սատանայի և թշնամի Աստուծոյ։ Այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամանաւ մերոյ թագաւորին, և ոչ զանանց կեանսըն մեր կարեմք փոխանակել ընդ ապականացու պատրանս աշխարհիս։

«Այլ վասն իմ զի ասացեր՝ չգտեալ զառողջութիւն ի բժշկաց, սիրէ զմահ քան զկեանս, այդ բանք ոչ այնոցիկ են, որ տեսանեն զամենայն չարչարանս աշխարհիս։ Աղէ ցածո զքեզ սակաւիկ մի ի զայրագին սրտմտութենէդ, և եկ զհետ ճշմարիտ բանից իմոց, և հայեաց կարգաւ ընդ իրս աշխարհիս։ Ո՞ որ ի մահկանացուացս ունիցի կեանս անտրտունջս. ո՞չ ահա ամենայն լի են ախտիւք, է որ ի ներքոյ, և է որ արտաքոյ. ցուրտ և տօթ, քաղց և ծարաւ և ամենայն աղքատութիւն կարօտութեան։ Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, զէճ պղծութիւն անառակ յարձակմամբ. ի ներքոյ՝ ամբարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անդարձ մոլորութիւն ի կամաւոր ազատութենէն։

«Բայց դու որ զբժիշկս խոտեալ անարգեցեր, թէ չիք իմ ի նոցանէ գտեալ զառողջութիւն, չեն ինչ զարմանք. վասն զի մարդիկ են նոքա. է ցաւ՝ որում գտանեն հնարս առողջութեան, և է՝ որ ապըստամբէ ի հնարից նոցա. վասն զի ամենեքեան եմք մահկանացուք, այն որ բժշկէն և որ բժշկին։ Այլ երանի թէ և դուք ըստ բժշկական արուեստին բերէիք զնմանութիւն. զի ոչ փոքր է ճըշ-

---

1 V էրէց Խ արտաքինս   2 ԲԳԵ զպատուիրանս Դα զպատուիրանն   3 ԵS^1 չիք և Բ յոգին Հ հոգին Բ չեմք ինչ Դ տէրք   4 Բ արտաքնոցն և ներքնոցն Դ չիք և վասն ներքնոց α չիք վասն (ներքնոց) ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2α զոր Ի չիք որ   4—5 ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ասացերդ   5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2α եթէ յինէն ԱՁԷԹԻVS^3A որ ասացեր (Ի չիք որ) A չիք եթէ Բα և ոչ եթէ Կ և ոչ է հրաման թագաւորին Հ և ոչ է հրամանաւ թագաւորին S^1S^2 և ոչ է   6 Դ ընդ հրամանս ՀS^1 ընդ հրամանաւ Ի հրամանաւ ԲԳ ըստ հրաման AS^2 զհրամանաւ մյուսները՝ ըստ հրամանաւ   7 Ա բարւոք ԲՃ^{1}α աւերիչ էք ԲԴ էք փխ է ԲԴՃ^{1}α սատակիչք   9 ԲՃ^{1}α ըստ հրամանաւ Դα թագաւորին մերոյ   9—10 Բ զկեանսն Ե կեանս մեր   10 ԳԸ չիք մեր Դ չիք մեր կարեմք ԲԵԸԺԼԽՀS^1S^2α փոխանակել կարեմք Դ փոխանակեմք VS^3 փոխարկել Դ կենաց փխ պատրանս   12 Բ չգիտել(!)   13 ԲՃ^{1}α բանքդ Գ է   14 α զչարչարանս VS^3α սակաւիկ մյուսները՝ զսակաւիկ   15 ԲԵS^1 տրմութենէդ(!) ԲՃ^{1}α չիք ճշմարիտ Ի մերոց

Պատասխան տվեց Ղևոնդ երեցն ու ասաց. «Ով դեպի դրսինները գութ ու սեր ունի, աստծու պատվիրաններն է կատարում, բայց պարտական է խնայել նաև իր հոգին. որովհետև մեր անձերի տերը չենք, այլ կա մեկը, որ հաշիվ է պահանջում մեզնից թե՛ դրսինների և թե՛ ներսինների համար։ Իսկ որ ասացի, թե իմ կամքով եմ ձեզ ականջ դնում և ոչ թե թագավորի հրամանով, եթե դուք սովոր եք զանց անել ձեր թագավորի հրամանը, այդ լավ եք անում, որովհետև նա աշխարհ ավերող է և անմեղ մարդկանց սպանող, սատանայի բարեկամ և աստծու թշնամի։ Բայց մենք չենք կարող մեր թագավորի հրամանից դուրս գալ, և ո՛չ էլ կարող ենք մեր անանց կյանքը փոխանակել այս աշխարհի ապականացու պատրանքների հետ։

«Իսկ ինձ համար որ ասացիր, թե բժիշկներից առողջություն չգտնելով՝ մահն ավելի է սիրում, քան թե կյանքը, այդ խոսքերը վայել չեն այն մարդկանց, որոնք տեսնում են այս աշխարհի բոլոր չարչարանքները։ Հապա՛, մի փոքր մեղմի՛ր այդ զայրագին սրտմտությունդ և հետևի՛ր իմ ճշմարիտ խոսքերին և կարգով նայի՛ր աշխարհիս գործերին։ Մահկանացուներիցս ո՞վ է, որ անտրտում կյանք ունի. չէ՞ որ ահա բոլորն էլ ախտերով լի են, ո՛րը ներսից և ո՛րն էլ դրսից— ցուրտ ու տոթ, քաղց ու ծարավ և ամեն տեսակ աղքատություն ու կարիք։ Դրսից՝ անիրավություն, հափշտակություն, գեճ պղծություն ու անառակություն ներսից՝ ամբարշտություն, ուրացություն, տգիտություն, անդարձ մոլորություն կամավոր ազատությունից։

«Բայց դու որ բժիշկներին մերժելով անարգեցիր, թե ես նրանց միջոցով առողջություն չեմ գտել, այդ էլ զարմանալի չէ, որովհետև նրանք էլ մարդ են. ցավ կա, որի առողջացման հնարը գտնում են, և ցավ էլ կա, որ նրանց հնարներին չի ենթարկվում, որովհետև բոլորս էլ մահկանացու ենք, թե՛ բժշկողը և թե՛ բժշկվողը։ Բայց երանի թե դուք էլ բժշկական արվեստից օրինակ առնեիք, որովհետև փոքր չէ նրանց բը-

---

փխ իմոց   16 ԳԵՀS^2 հայեա Բ ո՞վ ԱԳԴԵՁԷԺԼԽ ի մահկանացուաց V մահկանացուածոցս   17 ԴԹVS^3A ունի VS^3A անտրտունջս ԲԳԴԵԸԺԼԽՀS^1S^2Ճ^{1}α ո՞չ ահա լի են ամենայն ախտիւք (Դ ախտովք)   17—18 Ը է որ ներքոյ   18 ԲԵ չիք ի Լ չիք որ (արտաքոյ) ՁV յարտաքոյ   19 ԳԵԺԽԿՀS^1S^2Ճ^{1}σ աղքատութիւնք ԵԺԼԽՀS^1S^2 կարօտութեանց   19—20 ԲՃ^{1}α անիրաւութիւնք յափշտակութիւնք Դ չիք զէճ Գ անիրաւութիւն, զէշ պղծութիւն, յափշտակութիւն   20 ԲՃ^{1}α պղծութիւնք անիրաւ յարձակմամբ Թ արձակմամբ   21 Բα ամպարշտութեան   22 Բα ազատութենէ   23 V խոտորեալ(!) Բα եթէ   23—24 Բ գտեալ ի նոցանէ   24 ԲՃ^{1}α չիք ինչ զարմանք Թ զարմացք Խ մարդիկք   25 Բα որ փխ որում ԵԸԺԼԽՀS^1S^2 գտցին Բ հնար   25—26 Բα ապըստամբեն   26 ԵՀ չիք վասն   26—27 ԳԵԸԺԼԽԿՀS^2 մահկանացու   27 Բ եթէ փխ ԲԷԼ Դ դու   27—28 α զբժշկական փխ ըստ բժշկական   28 Թ արհեստին Դ բերէիր։

մարտութիւն նոցա բժշկութեանն։ Քանզի յորժամ տեսանեն նոքա զոք հիւանդացեալ, ոչ յապաղեն երթալ առ նոսա, այլ փութացեալ հնարին մատուցանել զառողջութիւն։ Մանաւանդ եթէ յարքունիս մի ոք ի սիրելեաց թագաւորին ախտանայցէ, և հասեալ ի մեծ հրապարակն՝ տեսանիցէ զբազմութիւն պատուաւորացն ու զառողջութիւն գեղեցիկ երիտասարդացն, և ևս ի ներքս մատուցեալ ի սրահսն արքունի, և անդ տեսանիցէ զամենայն սպասաւորացն ըզչքնաղ և զսքանչելի տեսիլն, ոչ ինչ զարմանայ ընդ հրաշակերտ տեսիլն։ Նա և եթէ զահոյք ականակապք իցեն և համակ ոսկեղէնք, յորոց վերայ հիւանդն անկեալ դնիցի, չէ ինչ նմա փոյթ զայնմ ամենայնէ. այլ ի բաց հրամայէ առնուլ զոսկեհուռ վերարկուսն, և ձեռն ի ներքս տարեալ՝ զննէ զամենայն մարմինն, եթէ ջե՞րմ իցէ բնութիւնն, և եթէ սիրտն ի տեղւոջն հանդա՞րտ կայցէ, և կամ թէ լեարդն կակո՞ւղ իցէ, և կամ թէ շարժք երակացն յարմա՞ր իցեն. և ըստ նմին զդարման բժշկութեանն առնիցէ՝ շնորհելով նմա զառողջութիւն։

«Իսկ արդ եթէ մարդկային բժշկութիւնն այսպիսի գիտէ քամահել զամենայնիւ, և միայն զիւր արուեստն յառաջ մատուցեալ՝ զգործն կատարէ, ո՞րչափ ևս առաւել ձեզ արժան է, որ զբոլոր աշխարհս ունիք յիշխանութեան մեծի, հոգ յանձին տանել նախ ըզհոգիսդ բժշկել յամենայն ախտալից մոլորութեանց աշխարհիս, և մարմնովք իսկ կային ամենեքեան ձեզ ի ծառայութեան։ Արդ այժմ զի դուք տգիտացարուք, և զանմահ հոգիսդ մահկանացու արարէք յանշէջ հուր գեհենին, մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ ոչ կամիք՝ ախտացեալ էք յախտաւորութիւն անառողջութեան. զմեզ նախատէք մարմնոյ ցաւովք, որ ոչ ի կամս մերոյ ազատութեան

---

1 ԲՃ^1 նոցա ճարտարութիւն բժշկութեանն փխ ճշմարտութիւն նոցա մյաւս բոլորը՝ ճշմարտութիւն բժշկութեանն Ե բժշկութեան ՁԷV բժշկութենէն α զի ոչ փոքր ինչ է ճարտարութիւն նոցա բժշկութեանն   2 Բα յապաղեն նոքա Դ երթեալ ԱՋԷԹԻV չիք փութացեալ   3 α մատուցանէր Ա զառողջութիւնն Դ թէ   4 ԲՃ^{1}α հասանիցէ Գ չիք մեծ   5 ԲՃ^{1}α և տեսանիցէ Դ պատուաւորաց Ը պատւորացն(!)   6 Դ երիտասարդաց α չիք և Դ ներս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 չիք ի ներքս   6—7 Բ ի սրահս ԸԼԽՏ^{2}Ճ^{1}α ի սրահն   7 ԵԸ զսպասաւորացն   7—8 Բα չքնաղ   8 Տ^1 զսքանչելի տեսիլսն α սքանչելի ԳԵԺ զարմանայր Ը հրեշտակակերտ փխ հրաշակերտ   9 ԵԸԺԼԽԾՀ տեսիլսն ԲՃ^{1}α չիք Նա α ականակապ   10 ԲԳԴԵԸԺԼԽԾԿՀՏ^{2}Ճ^{1,12}α յորոյ Տ^1 որոյ Բ փոյթ նմա   10—11 ԽՀ զայնմանէ փխ զայնմ ամենայնէ   11 Բ զոսկեհուռն ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{2}α վերարկուն   11—12 Դ ի ներս α զձեռնն ի ներքս արկեալ   12 ԲՃ^{1}α արկեալ փխ տարեալ ԱՋԷԹԻV և եթէ   13 Ե բնութիւն Դα չիք և Դ կացցէ ԲԴԵԿ չիք և կամ Գ եթէ   14 ԴԵՀ լերդն ԲԴα եթէ Գ և եթէ ԳԵՋԷԹԺԻԼԽԿՀVՏ^{1}Տ^2 շարք երակացն   15 Դ ընդ նմին Ե

ժշկության ճշմարտությունը։ Որովհետև երբ նրանք մեկին հիվանդացած են տեսնում, չեն դանդաղում նրանց մոտ գնալ, այլ շտապում են հնար գտնել և առողջացնել։ Մանավանդ եթե արքունիքում թագավորի սիրելիներից մեկը հիվանդանա, և մեծ հրապարակը հասնելով՝ [բժիշկը] տեսնի պատվավոր մարդկանց մի բազմություն և գեղեցիկ ու առողջ երիտասարդներ, և է՛լ ավելի ներս մտնելով արքայական սրահները՝ այնտեղ տեսնի բոլոր սպասավորների չքնաղ և սքանչելի տեսքը, նա ամենևին չի զարմանա այդ հրաշակերտ տեսարանով։ Նաև, եթե ակնառու և ամբողջովին ոսկեղեն լինի այն մահիճը, որի վրա դրված է հիվանդը, նա այդ բոլորի վրա բնավ ուշադրություն չի դարձնի. այլ կհրամայի հեռացնել ոսկեհուռ վերարկուները, և ձեռքը ներս տանելով, կզննի ամբողջ մարմինը՝ արդյոք ջե՞րմ է բնությունը, և սիրտն արդյոք հանգի՞ստ է իր տեղում, և կամ թե լյարդը փափո՞ւկ է, և կամ թե երակների շարժումը կարգի՞ն է. դրա համեմատ էլ բուժելու դարման կանի՝ առողջություն շնորհելով նրան։

«Իսկ արդ, եթե մարդկային բժշկությունը այսպես գիտե արհամարհել ամեն բան և միայն իր արվեստն առաջ տանելով գործ կատարել, որքա՞ն ավելի արժան է ձեզ, որ այս ամբողջ աշխարհը [ձեր] մեծ իշխանության տակ եք առել, հոգ տանել նախ ձեր հոգիները բըժշկելու այս աշխարհի ամեն տեսակ ախտալից մոլորություններից. իսկ մարմնով բոլորն էլ արդեն ձեր ծառայության մեջ էին։ Այժմ, որ դուք տգիտացել եք և անմահ հոգիներդ մահկանացու եք դարձրել Գեհենի անշեջ կրակի համար, ուզեք-չուզեք՝ մարմնով էլ բռնված եք անբուժելի ցավերով. և մեզ նախատում եք մարմնի ցավերի համար, որ մեր ա-

---

բժշկութեան ԲՃ^{2}α շնորհել Դ չիք նմա   17 ԲԴՃ^{1}α չիք արդ V զմարդկային Բα բժշկութիւնս ԴԵ բժշկութիւն Դ այնպիսի ԵԸԼԽԿՀՏ^2 այդպիսի   18 Բα չիք և Հ արհեստն   19 ԲՃ^{1}α իցէ փխ է Տ^3 արժան էր   20 Բ աշխարհ V յիշխանութիւն ԲԴα յիշխանութիւն մեծ ԲՃ^{1}α ունել փխ տանել Ը հոգ անձին առնել Տ^2 մեծ հոգ յանձին առնել α չիք նախ   20—21 ԲԴՃ^{1}α զոգիս ԳԵԺԼԽՀՏ^{2}Ճ^2 զհոգիս   21 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{2}Ճ^{1}α ախտից փխ ախտալից Բα որ և փխ և   22 ԲՃ^{1}α կան ԸԺ կային իսկ ԵԺԼԽՀՏ^{1}Տ^2 մարմնով կային իսկ ձեզ ամենեքեան ԳԴԿ ձեզ կային ամենեքեան ԲՃ^{1}α ի ծառայութիւն ամենեքեան α ի ծառայութեան ամենեքեան ԵԸԺԼԽՀՏ^2 ի ծառայութիւն   23 ԱՋԷԻV զի և դուք ԳԴԻԿ տգիտդ Դ մահկանացուս   23—24 Թի արարիք   24 ԲՃ^{1}α չիք հուր ԲՃ^{2}α մարմնովք ԳԿ մարմնովքդ Խ մարմնով եթէ կամիս Դ չիք մարմնովդ եթէ կամիք և   25 Բ յաւտարութիւն փխ ախտաւորութիւն α յանառողջութիւն ախտաւորութեան Ե անառողջութիւն ԱՋԷԻV չիք և   26 ԲՃ^{1}α մարմնաւոր ԳԸԺԽԾԿՀՏ^{1}Տ^2 մարմնոց ՋԷԹԻV և ոչ Գ մերոց Ա ազատութեանն ԲՃ^{1}α ազատութեանս։

է, այլ որպէս դիպեցաւ ի բնութեանս մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ։

«Եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած կենդանի և կենդանարար՝ ի կամս իւրոյ բարերարութեան եղև բժիշկ հոգւոց և մարմնոց. և նախ ինքն ի ցաւս չարչարանաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան։ Եւ ևս խանդաղատագոյն գթացեալ, վերստին ծննդեամբն ծնեալ զմեզ յառողջութիւն՝ անցաւս և անվէրս, և ի ծածուկ հարուածոց զհին ծակոտուածսն վիրապին ողջացոյց, և արար զմեզ անսպիս և անարատս հոգւով և մարմնով, զի իցեմք բանակակից հրեշտակաց և զօրք երկնաւոր թագաւորին մերոյ։ Եւ քո զայս ոչ գիտացեալ, և ոչ վայելեալ յերկնաւոր պարգևսն Աստուծոյ, և ոչ ևս այլ կամիս ուսանել ի մէնջ. այլ և զմեզ ևս վրիպեցուցանել կամիս, որում չիք հնար, և մի՛ այլ լիցի, և ոչ կարես իսկ առնել։

«Այլ վասն իմոյ ախտալից մարմնոյս ասացից քեզ կարճառօտ։ Խնդամ և ուրախ եմ յորժամ տեսանեմ զմարմինս իմ չարչարեալ. գիտեմ զի զօրանայ յիս առողջութիւն հոգւոյս իմոյ։ Մանաւանդ զի ունիմ ինձ գրաւական զմեծ վարդապետն հեթանոսաց, որ ի ցաւս մարմնոյ անձին մխիթարէր, և ի կոփումն սատանայական մարմնոյ պարծէր և ասէր. «Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա, ո՛րչափ ևս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա։ Այլ դու, որ ունիս իշխանութիւն ի վերայ մեր, դատեա զմեզ ըստ չարութեան կամաց քոց։ Զեմք ինչ զանգիտելոց յահագին յահաւոր սպառնալեացդ քոց, և ոչ երկիւղած ի դառն մահուանէն, զոր ածելոց ես ի վերայ մեր»։

Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելիսն ի միմեանց,

---

1 Բ չիք այլ ԲԳԵԼԽԿՀ որպէս և ԲԴՃ¹α բնութեան մարմնոյս 2 մարմնոց Կ չիք մարմնոյ Զէ ի բնութեանս զառողջութիւն մանաւանդ մարմնոյ 3 ԲԷS²Ճ¹α աստուած ճշմարիտ A չիք կենդանի և 4 է իւր ԱԲԳԴԶԹԻα բարերարութեանն α բժշիշկ(!) ի հոգւոյ և մարմնոյ 4—5 ԱԵԸԺԼԽԿՀS¹S² և նա ինքն 5 ԲԳԴԶԷԹԻVS³A նախ ինքն ԳԴԵ չարչարանացն Գ և բժշկեաց 6 ԲՃ¹α խանդաղատագոյնս գթացաւ 6—7 ԲԳԵԹԼԽՃ¹α ծննդեամբ ծնաւ զմեզ Դ ծնաւ զմեզ 7 Բ յառողջութիւնս 8 ԲԳԻԼԽԾα ծակոտուածս (Լ ծակոտուած) Դ ծակոտած է վիրապին(!) ԲՃ¹α առողջացոյց 9 Դ չիք և (անարատս) ԲԵԺԼԽԿՀS¹S²S³Ճ¹ անարատս ԱԳԴԶԷԸԹԻVA անարատ ԳԿ մարմնով և հոգւով Բ բնակիչք փխ բանակակից ԳԴԵԺԽԾՀS²α բանակակիցք Ի բնակակից α բնակակիցք Լ բանակիցք 10 S¹ զօրաց 11 ԱԶԷԹԻV չիք և ոչ վայելեալ ԲԳԴԵԸԺԼԽԿՀS¹S²Ճ¹α յանապական փխ յերկնաւոր 11—12 ԲԳԴ չիք ոչ ես Կα չիք ես ԵԸԺԼԽՀS¹S² և ոչ կամիս ուսանել ես ի մէնջ 12 ԱԹԻ ուսանիլ ԲԴα չիք ես 12—13 α կամիս վրիպեցուցանել 13 Բ որում և ԳԿ և այլ մի՛ լիցի ԵԸԼԽՀ և մի՛ լիցի այլ ԲԴՀ չիք

զատ կամքից չեն առաջացել, այլ ինչպես յուրաքանչյուր մարդու պատահում է մարմնի բնության համեմատ։

«Եվ Քրիստոսը՝ կենդանի և կենդանարար ճշմարիտ աստվածը՝ իր բարերար կամքով հոգիների և մարմինների բժիշկ դարձավ. և նախ ինքն իր չարչարանքների ցավերի միջոցով բժշկեց ամբողջ մարդկային ազգը։ Եվ սրանից էլ ավելի խանդաղատելով ու գթալով՝ կրկին ծննդյամբ ծընեց մեզ անցավ և անվերք առողջությամբ, առողջացրեց գաղտնի հարվածներից վիրապի հասցրած հին վերքերը, և մեզ դարձրեց հոգով ու մարմնով անսպի և անարատ. որպեսզի բանակակից լինենք հրեշտակներին և զորք՝ մեր երկնավոր թագավորի համար։ Իսկ դու այս չիմանալով և վայելած չլինելով աստծու երկնավոր պարգևները՝ չես էլ կամենում մեզնից սովորել, և դեռ մեզ էլ կամենում ես մոլորեցնել, որ անհնար է և չի լինի, և չես կարող անել։

«Իսկ իմ ցավագար մարմնիս մասին հակիրճ կասեմ քեզ։ Շատ ուրախ եմ, երբ իմ մարմինը չարչարված եմ տեսնում. գիտեմ, որ իմ մեջ զորանում է հոգուս առողջությունը։ Մանավանդ որ ինձ համար գրավական ունեմ հեթանոսների մեծ վարդապետին[154], որ իր մարմնի ցավերով իրեն մխիթարում էր և սատանայական մարմնի տանջանքով պարծենում էր և ասում. «Որովհետև եթե տնկակից եղանք նրա մահվան նմանությանը, որքա՞ն ավելի ևս մասնակից կլինենք նրա հարության»։ Իսկ դու, որ իշխանություն ունես մեզ վրա, դատի՛ր մեզ քո չար կամքի համեմատ։ Ամենևին չենք վախենալու, ո՛չ քո ահագին ահավոր սպառնալիքներից և ո՛չ էլ երկյուղ ենք կրելու այն դաժան մահից, որ բերելու ես մեր գլխին»։

Այն ժամանակ երանելիներին մի փոքր մեկուսացրեց միմյանցից

այլ ԺԾՀS¹S² այլ և ոչ կարես ԲՃ¹α և ոչ ես կարես առնել ԵԸԺԼԽՀS¹S² առնել իսկ 14 ԲՃ¹α զիմոյ փխ վասն իմոյ ԳԵԸԺԼԽԿՀS¹S² ձեզ փխ քեզ Թ չիք քեզ 14—15 ԲԹԿՃ¹α կարճառօտ 15 α տեսանիցեմ ԱԳԴԵԶԷԸԹԺԻԼԽՀS¹S² չիք իմ 16 Կ հոգւոց իմոց 17 Գ ինչ փխ ինձ ԵԸԺԼԽՀS¹ չիք ինձ 18 ԳԴα մարմնոց ԳԴԵԶԷԹԺԻԼԽS²α անձինն ԱԶԹԻV և կոփումն է և փոփոխումն փխ և ի կոփումն 19 ԱԲԶԷԹԻVS³ մարդոց ԳԴ Ճ¹α մարդոյ փխ մարմնոյ α պարձէր ԳԵԺԼԽԿՀ տնկակից α տնգակից ԱԳԴՃ¹ եղեաք 20 Դ մահուն փխ մահու նորա Բ հաղորդ 22 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS¹S²Ճ¹²⁻²⁷ ըստ կամաց չարութեան քո (Դ քում) 22—23 Բ չէ որ զանգիտելոց 23 Ը զահագին Գ ահաւոր ԲԳԴԵԸԺԼԽS¹S²Ճ¹ չիք յահաւոր α յահագին հրամանաց քոց ԲԴ սպառնալեաց Բ չիք ոչ Բ երկեղած ԵԸԺԼԽՀS¹S² երկնչիմք փխ երկիւղած 24 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS²Ճ¹α մահուանէք ԳԵԼԽԿՀ որ 25 ԱԲԳԶԷԹԻVՃ¹ յայնժամ դարձեալ ԲՃ¹α անօրէնն (α օրէնն) Դենչապուհ մեկուսացոյց զերանելիսն Գ մեկուսեցոյց Դ սակաւ ԲՃ¹α չիք սակաւիկ մի։

և միայն ասէ ցուրբ եպիսկոպոսն. «Գովութիւն, զոր եառ քեզ յառաջ, ոչ իմացար զպատիւ անձին քոյ։ Յիշեցուցանեմ քեզ զչարիսն, զոր գործեցեր դու, զի անձամբ զանձն քո արասցես մահապարտ։ Արդարև դո՞ւ աւերեցեր զատրուշանն յԻշտունիս, և կամ զկրակն դո՞ւ սպաներ. նա և որպէս լուայ և ստուգեցի, թէ և զմոգսըն դու չարչարեցեր, և զսպաս պաշտամանն դու տարար. արդ եթէ արդարև դու առեր, պատմեա ինձ»։

Եւ պատասխանի սուրբն և ասէ. «Ա՞րդ կամիս ուսանել զայդ յինէն, եթէ յառաջագոյն գիտէիր»։

Դենշապուհ ասէ. «Այլ է համբաւ, և այլ է ճշմարտութիւն»։

Եպիսկոպոսն ասէ. «Որպէս կարծես՝ ասա ինձ»։

Դենշապուհ ասէ. «Իմ լուեալ էր, եթէ զամենայն վնասն յԻըշտունիս դու արարեր»։

Եպիսկոպոսն ասէ. «Եւ զի այդպէս հաւաստեաւ ի վերայ հասեր, կրկին զի՞ հարցանես»։

Դենշապուհ ասէ. «Զճշմարիտն ի քէն կամիմ ուսանել»։

Եպիսկոպոսն ասէ. «Ոչ զօգուտ կենաց քոց կամիս ուսանել յինէն, այլ արեան իմոյ ցանկան միտք քո»։

Դենշապուհ ասէ. «Չեմ զազան արիւնախանձ, այլ վրէժխնդիր եմ աստուածոցն անարգութեան»։

Եպիսկոպոսն ասէ. «Զտարերս համերս աստուածս անուանես, և զպատկերակիցս քո մարդիկ խողխողել կամիս. տալոց հատուցանելոց ես վրէժ թագաւորաւն քով յանկաշառ ատենին Աստուծոյ։ Եւ զոր քո չար կամօքդ կամիս լսել յինէն, զայդ ես ասեմ քեզ։ Զտունն արդարև ես աւերեցի, և զմոգսն չարչարեցի զանիւ, և զկահ սպղութեան, որ ի տանն էր, ի ծովն ես ընկեցի։ Այլ զկրակ ո՞վ կարէ սպանանել. քանզի ամենիմաստ արարիչն արարածոց հող խնա-

---

1 Ըև չիք միայն ԲՃ^2 զզովութիւն α զգովութիւնն ԳԴԵԿ գովութիւն 2 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α զպատիւ ՁԷՎS^3A պատիւ Գ չիք անձին ԲԳՃ^{1}α չիք քեզ 3 Դ չիք դու 4 ԲԵԸԹԺԼԽՀS^1S^2Ճ^2 զատրուշանսն Թ զատրուշանն (լուսանցքում՝ կրակարանն) ԵԸՃ^{7,8,13} յԻթըշտունիս 5 Բα նա փխ նաև ԲՃ^{1}α չիք թէ ԳԵԸԺԼԽԿՀ եթէ 5—6 Դ զմոգս 6 S^3 սպաս 7 ԱՁԷԹԻՎ ասա ինձ փխ պատմեա ինձ 8—9 Դ զայդ ուսանել յինէն Թ ուսանիլ Ի չիք ուսանել 9 Խ յառաջ փխ յառաջագոյն 10 ԵԸԺԼԽՀS^1S^2 համբաւն α այլ ի փխ այլ է ԸԺԼS^1S^2 ճշմարտութիւնն Հ ճշտութիւն 11 ԲԴԵԸԺԼԽՀS^2α կարծես Գ կարծեսն 12 α Դենշապուհ ԳԵԺՀ վնասս ԿS^2 վնաս 12—13 Ե յԻթըշտունիս 14 Բα չիք Եւ ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{4,17,18} հասեր ի վերայ 15 Դ զի՞ ես ԲՃ^{1}α հարցանես զիս 16 Ը զճիշտն ԹԻԽS^1 ուսանիլ 17 α զօգուտն Բ չիք քոց 17—18 ԲՃ^{1}α յինէն ուսանել ԹԻS^1 ուսանիլ 18 Դ չիք յինէն ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1,27} արեանս իմում (Հ արեան) α արեանս իմոյ Դ ցանկայ 19 S^2 չիք զազան Ը արիւնա-

և միայն սուրբ եպիսկոպոսին ասաց. «Առաջ քեզ շատ գովասանք տվի, բայց քո անձի պատիվը չիմացար։ Հիշեցնում եմ քեզ այն չարիքները, որ դու գործել ես, որպեսզի ինքդ քեզ մահապարտ անես։ Իսկապես՝ դո՞ւ ավերեցիր ատրուշանը Ռշտունիքում և կամ կրակը դո՞ւ սպանեցիր. նաև, ինչպես լսեցի և ստուգեցի, մոգերին էլ դո՛ւ ես չարչարել և պաշտամունքի սպասները դո՛ւ ես տարել. արդ, եթե իրոք դո՛ւ ես վերցրել, պատմի՛ր ինձ»։

Պատասխան տվեց սուրբը և ասաց. «Ա՞յժմ ես կամենում այդ իմանալ ինձնից, թե առաջուց գիտեիր»։

Դենշապուհն ասաց. «Համբավն ուրիշ է, ճշմարտությունն ուրիշ»։

Եպիսկոպոսն ասաց. «Դու ինչպե՞ս ես կարծում՝ ասա՛ ինձ»։

Դենշապուհն ասաց. «Ես լսել եմ, որ բոլոր վնասները Ռշտունիքում դո՛ւ ես հասցրել»։

Եպիսկոպոսն ասաց. «Եթե այդպես ստույգ կերպով տեղեկացել ես, ինչո՞ւ ես նորից հարցնում»։

Դենշապուհն ասաց. «Ուզում եմ ճշմարտությունը քեզնից իմանալ»։

Եպիսկոպոսն ասաց. «Ո՛չ թե կյանքիդ օգուտն ես ուզում լսել ինձնից, այլ իմ արյունն ես ցանկանում»։

Դենշապուհն ասաց. «Արյունարբու գազան չեմ, այլ վրեժխնդիր եմ լինում աստվածներին անարգելու համար»։

Եպիսկոպոսն ասաց. «Համր տարրերին աստված ես անվանում և քո պատկերակից մարդկանց ուզում ես մորթոտել. քո թագավորի հետ միասին պատասխան պիտի տաս աստծու անկաշառ ատյանի առաջ։ Եվ ինչ որ քո չար կամքով ուզում ես լսել ինձնից, այդ ես կասեմ քեզ։ Արդարև կրակատունը ե՛ս ավերեցի և մոգերին ծեծելով չարչարեցի, և տան մեջ գտնված սրբության սպասները ե՛ս նետեցի ծովը։ Բայց կրակն ո՞վ կարող է սպանել, որովհետև արարածների ամենիմաստ արարիչը առա-

---

խած(!) 19—20 α վրէժխնդ[իր] եմ 20 Դ չաստուածոցն Դ անարգութեանն 21 Դ զհամերս Կ զտարերս աստուած ասես զհամերս Դ չաստուածս ԵԸԺՀS^1S^2 աստուած ԲՃ^{1}α խոստովանիս փխ անուանես 22 ԵԸԺԼԽՀS^1S^2 և զմարդիկ պատկերակից քո ԱԲԳԴՁԷԹԻԿ և զմարդիկ պատկերակիցս քո Լ և զմայրիկ α և զմարդիկ զպատկերակիցս քո Բ տալոց և 22—23 S^2 տալոց ես հատուցանելոց ես 23 Բ չիք վրէժ ԳԴՁԹԺԻԼԿՀՎՃ^{27} վրէժս α թագաւորին քո Բ քո ԲՃ^{1}α Քրիստոսի փխ Աստուծոյ 24 ԲՃ^{1,27}α կամք կամին ԳԴԼS^1S^2 չար կամքդ կամին ԵԸԺԽՀ չար կամք կամին ԲՃ^{1}α լսեա յինէն ԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{27} չիք լսել յինէն ԲԴՃ^{1}α չիք զայդ ես ասեմ քեզ 25 Բ զտուն ԱՁԷԹԻՎ այրեցի փխ աւերեցի ԳԵԸԺԼԽԿՀ ես չարչարեցի է զզահ(!) 26 ԲԳԴα սրբութեանն Ժ ի տանն ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1,27}α չիք ես ԲԴα ի ծով ԵԿՀ զկրակն ԳԴԵԸԺԼԽԿՀ ո՞ 27 ԲԴα ամենիմաստն ԲՃ^{1}α չիք արարիչն Լ արարիչ ԷԾ արարչին Դ հոգս ԲԴα խնամոց է խնամոցն։

մոյ տարեալ յառաջագոյն՝ անմահս հաստատեաց զբնութիւն չորից նիւթոցս։ Աղէ սպան դու զօդ՝ եթէ կարես, և կամ ապականեա զհող՝ զի մի բուսուցէ զդալարի, փողոտեա զգետ՝ զի մեռցի։ Եթէ զայդ երեսին կարես առնել, ապա և զկրակ կարես սպանանել։

«Ապա եթէ ճարտարապետն մեր միաբանեաց զչորից տարերցդ զանքակութիւն, ահա և գտանի բնութիւն հրոյ ի քարինս և յերկաթս և յամենայն տարերս գննելիս, ընդէ՞ր ստութեամբ զըրպարտես զիս, թէ դու զկրակ սպաներ։ Աղէ դու սպան զջերմութիւն արեգական, զի ունի նա մասն հրոյ, և կամ տուր հրաման՝ զի մի՛ թափեսցի հուր յերկաթոյ։ Մնասնի այն, որ շնչէին և շարժի և գնայ և ուտէ և ըմպէ. ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն։ Արդ զոր կենդանի քո չէ տեսեալ՝ մեռեա՞լ խոստովանիս։ Քանի՛ անթողլի է ամբարշտութիւնդ ձեր քան զամենայն հեթանոսաց, որ գետնագոյնք են քան զձեզ. որ թէպէտ և ի ճշմարիտն Աստուծոյ մոլորեալ են, զանխօս տարերս աստուած ոչ խոստովանին։ Արդ եթէ դու անգիտութեամբ կորնչելի ասես զբնութիւն հրոյ, ոչ առնուն քեզ յանձն արարածքս. քանզի խառն է դա յամենեցունց»։

Դենշապուհ ասէ. «Ոչ ինչ մտանեմ ես ընդ քեզ ի պայքար քննութեան վասն բնութեան արարածոցս. այլ խոստովանեա ինձ, եթէ դո՞ւ անցուցեր զկրակն, եթէ ոչ»։

Պատասխանի ետ երանելին և ասէ. «Որովհետև ոչ կամեցար լինել աշակերտ ճշմարտութեանն, ասացից զկամս հօրն քո սատանայի։ Ես ինձէն իսկ մտի ի կրակատունն ձեր և տեսի, զի կային պաշտօնեայք ամբարշտութեանն սնոտի կարծեացն ձերոց, և կրակարանն լի հրով առաջի նոցա բորբոքեալ այրէր։ Հարցի ցնոսա բանիւք և ոչ գանիւ, թէ զի՞նչ համարիք ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ։ Ետուն պատասխանի և ասեն։ Մեք ինչ ոչ գի-

---

1 ԲՏ^{2} յառաջագոյն տարեալ 2 ԲԹα նիւթոց Դ զօղս Բα թէ Ըխ չիք եթէ կարես Դ չիք և 2—3 ԲՃ^{1} և կամ փողոտեա α կամ փողոտեա 4 Բα երեսեան առնես Գ երեսեանս ԴԿ երեսեան ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} երեքեան ԱՁԷԹԻV սպանանել փխ առնել 5 Լ չիք մեր 5—6 ԲԳԴԵԸԺԼԽՀՏ^{2}Ճ^{1}α տարերցդ ԱՁԷԹԻVՏ^{3}A տարերացդ 6 ԲԳԴԵԸԺԼ ԽԿՀՏ^{2}α և ահա ԲՃ^{1}α հրոյ բնութիւն 8 ԲԳԴԵԸԺԼԽԿՀα եթէ ԲՃ^{1}α սպաներ զկրակ ԲՃ^{1}α չիք դու 9 ԲՃ^{1}α չիք նա ԲԴՃ^{1}α ի հրոյ Կ չիք և 10 ԲԳԴԵԸԼԽԿՀα շնչէ 11 ԳԴԵԼԽԿՀ չիք և (ուտէ) Դխ չիք դու Ը զկրակն ԴՃ^{1} գնացուն(!) 12 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1} Տ^{2} չէ քո 13 ԴԼԾՀVՏ^{1}Տ^{2}α քանզի փխ քանի 14 ԲՃ^{1}α որք տգիտագոյնք են Դ գիտնագոյնքն ԳԵԸԽԿ գիտնագոյն ԲԳԴԵԸԼԽԿՀα չիք որ ԲԴԻՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α ի ճշմարտէն 14—15

չուց հող տանելով՝ չորս նյութերի բնությունը հաստատել է անմահ։ Հապա՛, եթե կարող ես, սպանի՛ր օդը կամ փչացրո՛ւ հողը, որ խոտ չբուսցնի, գետը մորթի՛ր, որ մեռնի։ Եթե այս երեք բանը կարող ես անել, կրակն էլ կարող ես սպանել։

«Բայց քանի որ մեր ճարտարապետը այդ չորս տարրերն անքակտելի կերպով միացրել է, ուստի և կրակի բնությունը գտնվում է քարերի և երկաթների և զննելի բոլոր տարրերի մեջ, ինչո՞ւ ես ինձ ստությամբ զրպարտում, թե դու կրակն սպանել ես։ Հապա՛, սպանի՛ր արեգակի ջերմությունը, որ կրակի մասն ունի, և կամ հրաման տո՛ւր, որ երկաթից կրակ չթափվի։ Մնում է այն, որ շնչում է և շարժվում, գնում, ուտում է ու խմում, ե՞րբ ես տեսել, որ կրակը գնա կամ խոսուն ու գիտուն լինի։ Արդ, ինչ որ կենդանի չես տեսել, մեռա՞ծ ես ընդունում։ Որքա՜ն ավելի աններելի է ձեր ամբարշտությունը, քան բոլոր հեթանոսներինը, որոնք ավելի գիտուն են, քան թե դուք. նրանք թեև ճշմարիտ աստծուց մոլորված են, բայց անխոս տարրերին աստված չեն ընդունում։ Այժմ, եթե դու անգիտությամբ կորնչելի ես ասում կրակի բնությունը, այս արարածները քո ասածը չեն ընդունի, որովհետև դա խառն է բոլորից»։

Դենշապուհն ասաց. «Ես քեզ հետ ամենևին վեճի ու քննության մեջ չեմ մտնում այս արարածների բնության վերաբերմամբ. այլ խոստովանվիր ինձ՝ կրակը դո՞ւ ես հանգցրել, թե՞ ոչ»։

Պատասխան տվեց երանելին և ասաց. «Որովհետև չկամեցար ճշմարտությանն աշակերտ լինել, կասեմ քեզ քո հոր՝ սատանայի կամքը։ Ես հենց ինքս մտա ձեր կրակատունը և տեսա ձեր սնոտի ուսմունքի ամբարիշտ պաշտոնյաներին կանգնած, և կրակարանը կրակով լի բորբոքվում-այրվում էր նրանց առաջ։ Հարցրի նրանց խոսքով և ոչ թե ծեծով, թե ձեր մտքում ի՞նչ եք համարում այս պաշտամունքի կրակը։ Պատաս-

---

Բ աստուածս 15 Տ^{2} չիք ոչ 16 ԴԺ չիք դու 17 Բ ոչ յանձն առնուն քեզ ԱՁԷԹԻ ի յանձն V ի քեզ յանձն Դ աստուածքն փխ արարածքս 17—18 ԲՃ^{1}α ընդ ամենեցուն ԹԼ ամենեցունց 19—20 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} ես ի պայքար քննութեան ընդ քեզ α ոչ ինչ մտանեմ ընդ քեզ ես 20 ԲՃ^{1}α չիք քննութեան V չիք բնութեան Դ բնութեամբ ԲԴα արարածոց ԲԴՃ^{1,2}α այլ միայն 21 Բ զկրակարանն Դ զկրակ ԸԹՀ թէ 23 Ի լինել ԵԹԺԼ ԽԿՀՏ^{1}Տ^{2} աշակերտ լինել Ե ճշմարտութեան Բ քում 23—24 Ջ սատնայի(!) Լ հօրն քրիստոնէի(!) 24 ԲԳԵԸԺԽԿՀՏ^{2}α ինձէն իսկ ԱԴՁԷԹԻԼVՏ^{3}A չիք իսկ ԼՏ^{1} մտի իսկ Բ ի կրակատուն 25 Ե ամբարշտութեան Բ ձերոց սնոտի կարծեացն Դ կայծականցն(!) փխ կարծեացն 26 ԹԻ այրիւր 27 A բանիւ α չիք բանիւք և ոչ ԲԷՃ$^{4,7-8,12,17-18}$ գանիւք ԲԴ չիք թէ ԵԸԺԼԽՀ եթէ ԱՁԷԹԻV չիք ի միտս ձեր 27—28 Լ պաշտամանս Խ զկրակապաշտամանս 28 ԴԵԺԼԽՀՏ^{1} ոչ ինչ գիտեմք Ը չիք ինչ։

տեմք. բայց այսչափ ինչ իմանամք, զի սովորութիւն է նախնեացն և հրաման բուռն թագաւորին։

«Ասեմ դարձեալ ցնոսա. Եւ զբնութիւն կրակիդ զի՞նչ իմանայք. արարի՞չ կարծէք, թէ արարած։ Ասեն ամենեքեան միաբան. Արարիչ մեզ զդա ոչ գիտեմք, նաև ոչ հանգուցիչ աշխատելոց։ Ձեռք մեր փապարեալ են ի կացնի, և ողունք մեր տեռեալ են ի փայտակրի. աչք մեր գիջացեալ են արտասուք ի կծութենէ ծխոյ դորա, և երեսք մեր մրոտեալ են ի խոնաւութեանց թանձրութենէ նորին ծխոյ։ Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ բնաւ չտամք. ամենևին անցանէ. և եթէ մօտ երթամք և երկիր պագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք մօտ ամենևին, մոխիր լինի։ Մեր այդպէս հասեալ է վերայ բնութեան դորա։

«Ասեմ դարձեալ ցնոսա. Իսկ լուեա՞լ է ձեր՝ եթէ ո՛յր ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն։ Ետուն պատասխանի և ասեն. Զի՞ ի լսելոյ հարցանես զմեզ, այլ հայեաց ընդ առաջիկայ իրսդ. զի օրէնսդիրքն մեր հոգւովք մտաց միայն կուրացեալ են, այլ թագաւորն մեր մարմնով միով ակամբն կոյր է, այլ ոգւոյն բնաւ չիք իսկ աչք։

«Վասն այնորիկ և ես իբրև լուայ զայս ի մոգուցն, յոյժ ողորմեցայ. զի տգիտութեամբ զարդարն խոտեցան։ Սակայն մի չարչարեցի զնոսա զանիւ, և նոցուն իսկ ետու զկրակն ի ջուրն ընկենուլ, և ասացի այսպէս. աստուածք, որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն ի ներքոյ երկնից. և ապա զմոգսն ի բաց արձակեցի»։

Զայս ամենայն իբրև լուաւ Դենշապուհ ի բերանոյ սուրբ

---

1 ԱԴՁԷԹԻՎՏ^3 զայսչափ ինչ (ԴՏ^3 այսչափ ինչ) ԲԴԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α չիք ինչ է նախանձեացն(!) փխ նախնեացն ԲՃ^{1}α նախնեացն մերոց ԳԴԵԾԿՀ նախնեաց 3 Դ չիք Եւ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 զի՞նչ իմանայք զբնութիւն կրակիդ Թ կրակի 4 ԱԲԳԴԵՁԷԼԽα եթէ A միաբան ամենեքեան 4—5 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 մեք արարիչ 5 ԲՃ^{1}α ոչ գիտեմք զա ԲՃ^{1}α և ոչ Ե ախտելոց(!) փխ աշխատելոց 6 Բ կափարեալ փխ փապարեալ ԵԺԽՀ փապարեալ են (լուսանցքում՝ Ե խոշորել են ԺԽ խաշրեալ են Հ խոշրեալ են) Է փարատեալ են ԱԲԹԻα ի կացնէ ՁԷՎ չիք ի կացնի և ողունք մեր տեռեալ են Խ ոռունք(!) 7 ԲՃ^{1}α չիք արտասուօք Բ ի ծխութենէ փխ ի կծութենէ ԳԵԸԺԼԽԿՏ^{2}Տ^{3}α կծութենէ α չիք դորա 8 ԱՁԷԹԻՎ չիք և 8—9 ԲՃ^{1}α ի խոնաւութենէ թանձրութենէ (α թանձրութեանն) նորին ծխոյս ԳԴԼԽԿՏ^{2}Ճ^1 ի խոնաւութենէ թանձրութեան ԵԸԺՀ ի խոնաւութենէ թանձրութենէ 9 Ը Եւ եթէ ԲՃ^{1}α կերակուր մատուցանեմք Գ զկերակուր 10 Բα չիք և ԲՃ^{1}α շիջանի փխ անցանէ ԳԿ բնաւ անցանէ իսկ ի բաց ԴԹԻ անցանի ԵԸԺԼԽՀ Տ^{1}Տ^2 բնաւ փխ ամենևին ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 անցանէ և սպառի Դ չիք և 11 Դ երկիրպագանել Դ մօտ երթամք ԲՃ^{1}α ի մօտ 12 ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի մոխիր դառնայ (Տ^{1}Տ^2 չիք ի) ԳԵԺԼ բնութեանց ԲՃ^{1}α մեր այդպէս է ուսեալ դորա բնութիւնդ Դ դորա բնութեանդ

խան տվին և ասացին. մենք ոչինչ չգիտենք. միայն այսչափը գիտենք, որ նախնիքների սովորություն է և թագավորի սաստիկ հրամանը։

«Ասացի նրանց դարձյալ. այդ կրակի բնությունն՝ ինչպե՞ս եք հասկանում. արարի՞չ եք կարծում, թե՞ արարած։ Բոլորը միաբան ասացին. մենք դրան արարիչ չենք համարում, ո՛չ էլ աշխատող մարդկանց հանգստացնող։ Մեր ձեռքերը կոշտացել են կացին գործածելով, և մեր մեջքերը քերթվել փայտ կրելուց, աչքերս ջրակալել են արտասուքներով դրա ծխի կծու լինելուց, և մեր երեսները մրոտվել են դրա թանձր ծխի խոնավությունից։ Եթե շատ ենք նրան կերակուր տալիս, սաստիկ սովածանում է. իսկ եթե բնավ չենք տալիս, բոլորովին հանգչում է. եթե մոտ ենք գնում և երկրպագություն ենք տալիս, այրում է մեզ, իսկ եթե ամենևին մոտ չենք գնում, մոխիր է դառնում։ Մենք այսպես ենք հասկացել դրա բնությունը։

«Դարձյալ ասացի նրանց. իսկ դուք լսե՞լ եք, թե ո՛վ է սովորեցրել ձեզ այդպիսի մոլորությունը։ Պատասխան տվին և ասացին. ի՞նչ ես լսելու մասին հարցնում մեզ. ահա նայիր՝ ինչ որ կա առջևդ. որովհետև մեր օրենսդիրները միայն հոգու աչքերով են կուրացած, իսկ մեր թագավորը մարմնի մեկ աչքով կույր է[155], իսկ հոգին բնավ աչք չունի։

«Այս պատճառով էլ, երբ լսեցի մոգերից այս, շատ խղճացի, որովհետև տգիտությամբ ճշմարիտը խոտեցին։ Մի քիչ չարչարեցի նրանց ծեծելով և հենց իրենց տվի կրակը, որ ջուրը գցեն և այսպես ասացի. «Այն աստվածները, որ երկինքն ու երկիրը չեն ստեղծել, թող կորչեն երկնքի տակից»։ Եվ հետո արձակեցի մոգերին»։

Երբ Դենշապուհը լսեց այս բոլորը սուրբ եպիսկոպոսի բերանից,

---

13 Ի չիք ցնոսա ԲԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α իսկ եթէ ԲԳԴԵԸԼԽԿՀՃ^{1}α չիք եթէ ԱՁԷԹԻՎՏ^{3}A իսկ լուեալ է ձեր եթէ ԺՏ^{1}Տ^2 իսկ եթէ է այր փխ ոյր 14 ԱՁԷԻՎ ձեր փխ ձեզ ԲԴα մոլորութիւնդ Բα պատասխանի ետուն Դ ասեն ցիս 15 Գ չիք ի Բ զի՞ այդպէս հարցանես զմեզ α զի՞նչ այդպէս ի լսելոյ Բ չիք ի լսելոյ Դα զմեզ Ի հարցանէք Բα չիք այլ Թ չիք ընդ Գ իրսս ԴԵԺԼԽԿՀ իրս 16 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α չիք զի Գ օրինագիրքն α չիք մեր Բ հոգով մտացն ԱԳԵԷԸԹԺԻԼԽՎՏ^{1}Տ^2 ոգւովք Հ ոգւով α հոգւով α չիք մտաց Բα կուրացեալ են միայն ԵԸԺԼԽՀՏ^1 են կուրացեալ Տ^2 են կուրացեալք 16—17 ԲՃ^{1}α և մարմնով ԵԸԼԽՏ^2 մարմնոյ α այլ և 17 Լ ական ԲԳԴԵԹԺԽՀ^{2}α իսկ հոգւոյն Կ հոգոյն Լ հոգւոյ 17—18 Բ բնաւ չիք աչք 18 ԲԴα չիք իսկ 19 ԳԴԸԿ այսորիկ Գ չիք և ես Բα չիք և Բ ի մոգուցն զայս α չիք զայս ԳԴԵԾԾԿՀ մոգացն α ի մոգուցն 19—20 ԲՃ^{1}α յոյժ ողորմեցայ նոցա 20 ԲՃ^{1}α տգիտաբար ԲՃ^{1}α ասացին փխ խօտեցան 21 ԲԴԵԸԺԽԾԿՏ^{2}Ճ^{1}α նոցունց ԲՃ^{1}α ծովն փխ ջուրն Դ ի ջուր 22 ԵԸԺԼԽՀ Տ^{1}Տ^2 և այսպէս ասացի α աստուած Բ զերկին ԸԿ զերկիրս 22—23 Ե որ ոչ արարին 23 Ա ի ներքնոյ ԲՃ^1 ի ներքոյ ոտից երկնի և երկրի ԴՃ^{1}α երկնի և երկրի 25 Դ չիք սուրբ։

եպիսկոպոսին, անհնարին զահի հարաւ ի թշնամանաց թագաւորին և յանարգանաց դենին։ Վասն որոյ և երկեաւ իսկ մատուցանել զնա ի տանջանս հարուածոց, թէ գուցէ այլ ևս մեծ անարգանս զթագաւորէն տացէ առնել յատենին, և ի նա ձգիցին կարծիք թշնամանացն, զի երկայնմտութեամբ պայքարեցաւ ընդ նոսա։

Եւ քանզի սուսեր ընդ մէջ ածեալ նստէր յատենի ահ արկանելով սրբոցն, գոչեաց իբրև զառեւծ զայրագին, և հանեալ զսուսերն՝ գազանաբար յարձակեցաւ ի վերայ երանելեացն, և եհար եպիսկոպոսին զաջ ուսն թիկամբն հետ և զձեռն ի վայր ընկէց։ Եւ նորա յահեակ կողմն յերկիր անկեալ, և դարձեալ անդրէն պատսպարէր, առնոյր զաջ ձեռն ի վեր. աղաղակեաց մեծաձայն և ասէ. «Ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս՝ որ ինձէն զիս քեզ մատուցի բոլորովիմբ, և խառնեա զիս ի գունդս սուրբ զինուորացն քոց»։

Դարձեալ քաջալերէր զընկերակիցսն իւր և ասէր. «Հա՛պա առաքինիք, եհաս ժամ կատարման մերոյ. խցէք զաչս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զլոյսն մեր Քրիստոս»։ Եւ թաւալելով ընդ արիւն անձինն իւրոյ ասէր. «Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան իմ։ Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ եղիցին»։ Եւ ասելով զսաղմոսս զայս կատարէր մինչև ցայս տեղի. «Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր և պահէ զամենայն ոսկերս նոցա»։

Եւ մինչդեռ կայր ոյժ ի մարմնոյն սակաւիկ մի, իւրովք աչօք իսկ հայեցեալ՝ տեսանէր յերկնից եկեալ գունդս բազում հրեշտակաց և վեց պսակ ի ձեռին հրեշտակապետին։ Դարձեալ և լսէր ևս բարբառոյ ի վերուստ, որ ասէր. «Քաջալերեցարուք, սիրելիք իմ,

---

1 ԲՃ^{1,2}α յոյժ փխ անհնարին   2 Թ դենին (լուսանցքում՝ հաւատոյն) ԲՃ^{1}α վասն այնորիկ Դ չիք և ԳԴ չիք իսկ α ի նմա   2—3 ԲՃ^{1} ի նա զտանջանս հարուածոցն   3 ԳԴԵԸԺԼԽԿՀ եթէ Դ անարգութիւն   4 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} տայցէ Ըխ լսել փխ առնել ԲՃ^{1,2}α ձգեսցին ԵՎ ձգեցին   5 ԲՃ^{1} երկայնամտութեամբ   6 α չիք Եւ ԲՃ^{1,2}α ածեալ ընդ մէջ Դենշապուհ Տ^{2} ածեալ Դենշապուհ նստէր α նստեալ Թ նստիր ԵԸԺԼԽ յատենին ԳԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} ահս   6—7 Թ արկանել   7 ԱԶէԹԻՎ առիւծ ԲՃ^{1}α զսուրն   8 ԲՃ^{1} սրբոցն փխ երանելեացն Դα սրբոյն   8—9 Բ չիք և ԳԵԺԼԽα զեպիսկոպոսին ԲՃ^{1}α զաջոյ Դ զաջ ուսն եպիսկոպոսին   9 Կ յուսն և թիկամբն ԳԴԸԺԼԽ և թիկամբն ԵԺԼԽՀ չիք և (զձեռն) ԲՃ^{1}α և զձեռնն համդերձ թիկամբն Տ^{1}Տ^{2} և թիկամբն հետ զձեռն   9—10 Ե ահեակ   10 Խ չիք յերկիր Դ ի վայր անկեալ ԲԳԴԵԸԺԼԽԿՀ Տ^{1}Տ^{2}Ճ^{1}α չիք և Ը պարապարէր(!)   11 α զաջ ձեռնն ի վեր   12 Ըխ զոր Դ ես ինձէն   12—13 ԳԴԸԺԼԽԿՏ^{1}Տ^{2}Ճ$^{1,5-6,14,16,27}$ բոլորովին ԵՀ զբոլորովին ԱԶէՎՏ^{3}A բոլորովիմ ԲԹԻՃ$^{2,4,7,8,17-19}$α բոլորովիմբ   13 ԲԴα զինուորաց   14 Բα զընկերակիցս ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} չիք իւր Տ^{3} Ահապա   15 ԳԵԸԺԼԽԿՏ^{1}Տ^{2} պսակման փխ կատարման Հ

սաստիկ զարհուրեց, որ թագավորին այդպես նախատեց և կրոնն անարգեց։ Ուստի և մինչև իսկ վախեցավ հարվածներ ու տանջանքներ տալ նրան, որ չլինի թե ավելի մեծ անարգանքներ անել տա թագավորի մասին ատյանի մեջ, և իրեն վրա կասկած ընկնի իբրև այդ անարգանքների պատճառ, որ այնքան համբերողությամբ վեճի մեջ մտավ նրանց հետ։

Եվ որովհետև սուրը մեջքին կապած նստած էր ատյանում, սարսափ գցելով սրբերի վրա, մռնչաց ինչպես զայրացած առյուծ, և հանելով սուրը՝ գազանաբար հարձակվեց երանելիների վրա և կտրեց եպիսկոպոսի աջ ուսը թիկունքի հետ միասին և [նրա] ձեռքը վայր գցեց։ Իսկ նա ձախ կողմի վրա գետին ընկնելով՝ նորից զորացավ, աջ ձեռքը վեր բարձրացրեց, բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ընդունի՛ր, Տե՛ր, այս կամավոր զոհը, որ ինքս ինձ ամբողջովին մատուցի քեզ, և խառնի՛ր ինձ քո սուրբ զինվորների գնդին»։

Դարձյալ քաջալերում էր իր ընկերակիցներին և ասում. «Դե՛հ, առաքինինե՛ր, ահա հասել է մեր նահատակության ժամը. մի վայրկյան փակեցեք մարմնավոր աչքերդ և իսկույն կտեսնեք մեր հույս Քրիստոսին»։ Եվ իր արյունի մեջ թավալվելով՝ ասում էր. «Կօրհնեմ տիրոջը ամեն ժամանակ, Նրա օրհնությունը միշտ իմ բերանում է։ Տիրոջով թող պարծենա իմ անձը. հեզերը լսեն և ուրախ լինեն»։ Եվ այս սաղմոսն ասելով՝ հասցրեց մինչև այստեղ. «Արդարները շատ նեղություններ ունեն. այդ բոլորից կփրկի նրանց Տերը և կպահի նրանց բոլոր ոսկորները»։

Եվ մինչդեռ մի քիչ ուժ կար մարմնում, հենց իր աչքերով նայեց ու տեսավ, որ երկնքից գալիս էին հրեշտակների շատ գնդեր և վեց պսակ կար հրեշտակապետի ձեռին։ Նույնպես և ձայն լսեց վերևից, որ ասում էր. «Քաջալերվեցե՛ք, ի՛մ սիրելիներ, որովհետև ահա մոտեցաք ձեր այդ

պսակելոյ ԵՀ խցեցէք ԲԴՏ^{2}Ճ^{1}α մարմնոյդ ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1} մարմնոցդ   16 Բ տեսանեմք Ը տեսէք ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ$^{7-9,11,14,16}$ զլոյսն Դ Եւ թաւալեալ   16—17 ԱԲԴԵԶէԹԺԻԼԽԿՏ^{2} արիւն A արիւնն   17 ԲՃ^{1}α մարմնոյն իւրոյ ԳԵԺԻԼԽՀՏ^{2}Տ^{3} անձին   17—18 ԴՃ^{2}α յամենայն ժամ փխ հանապազ   18 ԲԳԴα իմում   19 Ե զսաղմոսս α զսաղմոսն ԲՃ^{1}α չիք զայս   20 ԲՃ^{1}α ցայն Գ յայս Դ բազումք   21 ԲԴՃ^{1}α ոսկերս նոցա և մի ի նոցանէ ոչ կորիցէ (Դ կորիցեն)   22 Բα ոյժ ի մարմնին կայր սակաւ մի ԸՏ^{3}A յուժի մարմնոյն α յուշի փխ ոյժ Դ սակաւ Տ^{1}Տ^{2} սակաւ մի ԱԻ աչօքն ԳԴԵԼԽ իւրով   22—23 Զէ աչօքն իսկ   23 Ա տեսանէր յերկնից եկեալ տեսանէր(!) ԲԳԴԵԸԺԻԼԿՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α եկեալ իջանէր Դ եկեալ իջեալ Հ չիք եկեալ ԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2} երկնից ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} գունդ   24 ԲԻ ի ձեռն ԲԴα չիք և չիք ես   25 Բ զի ասէ փխ որ ասէր α զի ասէր ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} չիք որ ասէր Դ քաջալերեցայք իմ սիրելիք α քաջալերացուք։

զի ահա մոռացայք զվշտալի կեանսդ, և հասէք երանելի պսակացըդ, որ ձերով ճարտարութեամբդ կազմեցէք. առէք զիք յիւրաքանչիւր գլուխ։ Զի նիւթ պատրաստական ի ձէնջ գործեալ հիւթեցաւ, իսկ ճարտարութիւն գործոյդ յամենասուրբ ձեռացն Քրիստոսի կազմեցաւ. զոր ի սպասաւորաց այտի իսկ ընկալեալ՝ ընդ Ստեփանոսի լինիք պսակակից»։ Նա և զայն ևս քաջապէս տեսանէր, զի դեռ ևս շողայր սուրն ի վերայ պարանոցի երանելեացն։

Զոր իբրև ետես սուրբն Ղևոնդ, եթէ ոչ ևս զմի մի կամին հարցանել և դատել, այլ միանգամայն հրաման եղև մահու, ասէ ցերանելի Յովսէփ. «Մատիր, յառաջեա ընդդէմ սորա, զի դու աստիճանաւ ի վեր ես քան զամենեսեան»։ Եւ զայս իբրև ասաց, կարգեցան կացին մի ըստ միոջէ. և առ ճեպ տագնապի ստիպելոյ դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զպարանոցս երանելեացն առաջի սուրբ եպիսկոպոսին. և նորա ընդ հանել ոգւոցն աղաղակեաց և ասէ. «Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն, և խառնեա զմեզ ի գունդս սիրելեացն քոց»։ Եւ միանգամայն կատարեցան ամենեքեան ի նմին տեղւոջ։

Եւ եթէ զմոգպետն ևս, որ հաւատաց ի Քրիստոս, կամիցիս ընդ նոսա ի համար արկանել, թուով են եւթն. Թող զերկուսն ևս, որ ի Վատգէսն կատարեցան. և միւս եպիսկոպոսն Թաթիկ անուն յԱսորեստանի։ Բայց անդէն ի տեղւոջն վեցեքին, որոց անուանքն են այսոքիկ.

Սահակ եպիսկոպոս յՌշտունեաց.

Սուրբն Յովսէփ ի Վայոց ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմանց.

---

1 ԲՃ^{1}α մոռասցիք Լ մառուցայք(!) փխ մոռացայք ԲԵԸԺՃ^{1}α զվշտալից կեանս ձեր (ԵԸԺ չիք ձեր) ԼԽԿՀՏ^{1}Տ^{2} զվշտալից զկեանսդ ԳԴ զվշտալից ի հասիք   1—2 ԲՃ^{1}α պսակաց Դ կենացն փխ պսակացդ α պսակացն Բα զոր ԲԵՏ^{1}Տ^{2}Ճ^{1} ճգնութեամբդ α ճըգնութեամբն փխ ճարտարութեամբդ ԳԴԵԷԸԺԼԽԿՀ ճշմարտութեամբդ Դ կազմեցէք զպսակս զայս   2 ԸԹԺԻԼԽՏ^{1}Տ^{2} կազմեցիք   3 ԲՃ^{1}α գլուխս ձեր ԲԳՏ^{2}Ճ^{1,2}α զնիւթ Տ^{1} զի նիւթ ԱԲԳԴԵԸԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}Ճ^{2}α պատուական փխ պատրաստական ԲՃ^{1}Ճ^{2}α զոր ի ձէնջ Դ գործեալ հիւթացաւ Բα գործեցեալ ԱԳԵԸԹԺԻԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{26} գործեալ Ա չիք գործեալ ԶԷԺV Տ^{3}Ճ^{27}α հիւսեցաւ   4 ԷԼVՏ^{3}Ա ճշմարտութիւն փխ ճարտարութիւն α գործոյն ԽՃ^{1,2}, չիք Քրիստոսի   5 ԲԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α զոր և ԳԿ ի սպասաւորացն ԲԴՃ^{1}α չիք իսկ   6 ԳԴԵԸԼԽԿՃ$^{26-27}$ պսակակիր (Ե լուսանցում՝ «ցյ»=պսակակից) Դ զայն իսկ   7 Գ սրբոցն փխ երանելեացն   8 Դ զոր և ԸԽ զայս փխ զոր Գ Ղևոնդ Բ չիք ևս Դ չիք մի   9 ԲՃ^{1}α չիք և դատել   9—10 ԲՃ^{1}α ցսուրբն փխ ցերանելին   10 Գ մատեաց, յառաջիր դու ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} յառաջեաց դու Է մատո՛ր(!)   10—11 ԱԲԻα աշտիճանաւ   11 Գ քան զմեզ զամենեսեան   12 Բα ի ճեպ Ե տագնապին   13 ԳԴ

վշտալի կյանքը և հասաք այս երանելի պսակներին, որ ձեր ճարտարությամբ կազմեցիք. վերցրեք և դրեք յուրաքանչյուրդ իր գլխին։ Որովհետև դրանց պատրաստելու համար հարկավոր նյութը դուք հայթայթեցիք, իսկ այդ գործի ճարտարությունը Քրիստոսի ամենասուրբ ձեռքով կազմվեց. դա ընդունեցեք այդ սպասավորների ձեռքից և պսակակից կլինեք Ստեփանոսին»[156]։ Շատ լավ տեսնում էր նաև այն, որ սուրը դեռ շողում էր երանելիների պարանոցի վրա։

Երբ սուրբ Ղևոնդն այս տեսավ, որ այլևս չեն ուզում մեկ-մեկ հարցնել ու դատել, այլ միանգամից մահի հրաման տրվեց, ասաց երանելի Հովսեփին. «Մոտեցի՛ր, առա՛ջ գնա սրի դեմ, որովհետև աստիճանով դու բոլորից բարձր ես»։ Եվ երբ այս ասաց, մեկը մեկի հետևից շարքով կանգնեցին. և որովհետև տագնապով ու շտապով ստիպում էին դահիճներին՝ միանգամից կտրեցին երանելիների պարանոցներն ու գցեցին սուրբ եպիսկոպոսի առաջ. իսկ նա հոգիներն ավանդելիս աղաղակեց և ասաց. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր մեր բոլորի հոգիները, և մեզ խառնի՛ր քո սիրելիների գնդերին»։ Եվ նույն տեղում անմիջապես նահատակվեցին բոլորը։

Եթե կամենաս նրանց հետ հաշիվ անել նաև մոգպետին, որ հավատաց Քրիստոսին, թվով յոթն են, բացի նաև այն երկուսից, որ Վատգեսում[157] նահատակվեցին, և Թաթիկ անունով մյուս եպիսկոպոսից, որ [նահատակվեց] Ասորեստանում։ Իսկ այդ նույն տեղում վեց հոգի էին, որոնց անուններն են՝

Սահակ Ռշտունյաց եպիսկոպոս.

Սուրբ Հովսեփ Վայոց ձորից, Հողոցիմք գյուղից.

ԵԸԺԼԽԿՀՏ^{2} հատին և ընկեցին   14 ԱԶԷԻVՃ$^{4,6-8,12}$ առաջին զսուրբ եպիսկոպոսն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} սրբոյ Բ և նա ընդ հոգւոյն հանելն ԶԷ ընդ հանել ոգւոյն V ընդ հանելոյ ոգւոյն α և ընդ հոգւոյն հանելն ԱԻՃ$^{4-6}$ ոգւոյն ԴԹ հոգոյն Կ հոգւոցն   15 Բα չիք Յիսուս ԲՃ^{1}α ընկալ Տէր զհոգիս ԸԽԵԿՏ^{1}Տ^{2}Ճ$^{4-6}$ զհոգիս   16 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} ի գունդ ԲԵα սիրելեաց α չիք Եւ   17 ԲՃ^{1}α տեղւոջն վեցեքին սոքա ԳԿ ամենեքին   18 ԲԴ Ճ^{1}α չիք ևս է որ և փխ ևս որ ԲՃ^{2}α կամիս ԸԺԼԽՏ^{1}Տ^{2} կամիցես ի   19 Ճ^{1} համարել ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} համար արկանել ընդ նոսա ԲԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2}α եւթն են   20 ԲԴα չիք ևս ԲԴ Վառոգէսն ԳԿ Վառոգէսն ԵՀ Վառոգեսոյն Զ Վրդէսն Է Վրդրէսն Թ Վարդղէսն ԸԺԼԽՏ^{1}Տ^{2} Վառոգէսան Ճ^{6} Վարդեսն Ճ^{28} Վարդէսն Ճ$^{4,7-8}$ Վարդեան α Վաղէսն α չիք և α Թոդիկ փխ Թաթիկ   21 ԳԼԿ ի յԱսորեստանի Բα վեցեքին սոքա ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} վեցքս Ճ^{1} վեցեքեան սոքա   21—22 Բα անուանք   22 ԼՏ^{1}Տ^{2} չիք են   23 Բ Ռշտունեաց Գ ըՌըշտունեաց Ե յըՌշտունեաց Ժ յըՌըշտունեաց ԿՀ ըՌշտունեաց   24 Տ^{2}Ճ^{1}α չիք սուրբն Բ Յովսէփ եպիսկոպոս ԱԶԷԺԻVՏ^{1}Տ^{2}Տ^{3} Վայոյ ձորոյ Գ Վառ ԵԸԼԽV Վայս ԳԺԼԽԿՀ Հողացմանց։

Ղեւոնդ երէց ի Վանանդայ՝ ի գեղջէ Իչաւանից.
Մուշէ երէց յԱղբակոյ.
Արշէն երէց ի Բագրեւանդայ՝ ի գեղջէ յԾղեգեկայ.
Քաջաջ սարկաւագ՝ ուստի եպիսկոպոսն էր Ռշտունեաց.
Իսկ երանելի Մոգպետն ի Նիւշապուհ քաղաքէ.
Սամուէլ երէց յԱյրարատոյ՝ ի գեղջէ յԱրածոյ.
Աբրահամ սարկաւագ ի նմին գեղջէ։

Արդ զվեց զայս սուրբս յանապատին՝ ուր կատարեցին, Դենշապուհ և մոգպետն և Ջնիկան մայպետն անդէն ի տեղւոջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն, և պահել հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս տասն կամ ևս աւելի, մինչև կարաւանն արքունի անցեալ գնասցէ. զի մի՛ այլադենքն, ասեն, եկեալ բառնայցեն զոսկերս դոցա, և բաշխեալ սփռեսցեն ընդ աշխարհս ամենայն, յոր և մարդիկ ևս առաւել յորդորեալ մոլորիցին զկնի նածարացւոց աղանդին։

Իսկ խուժիկն, զոր յառաջագոյն ասացաք, զինու հանդերձ մնայր անդէն ընդ պահապանսն որպէս զմի ի նոցանէ, այր լի իմաստութեամբ և կատարեալ աստուածային գիտութեամբ, սպա-

---

1 Գ Ղևոնս V էրէց Վանանդայ Բ ի Վանանդա(!) ԱԳԵՋԷԹԺԻԼԿՀ յԻչաւանից Դ Իչաւանաց Ըխ յԻչաւնից S^2Ճ^1 Իչեանից ՄՃ^2 Իչաւանից 2 V էրէց ԱՋ յԱղբագւոյ ԲԳԹα յԱղբագոյ Ժ ի յԱղբակոյ 3 α Արսէն V էրէց ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^2 Բագրաւանդա(յ) Ժ ի գիւղջէ ԲՃ^{1}α Ծղեգեկոյ ԳԴԵԸԺԼԿS^1S^2 յԾղեգեկէ ԹՃ^4 յԾղեգակայ Ի յԱղեգեկայ Խ յԾղեգէ Հ յԾղեգնիկէ 4 ԳԵ յըՌըշտունեաց Հ ըՌշտունեաց α յՌշտունեաց 5 Դ Նիւշապահ 6 ԴՃ^{12} Սանուէլ V էրէց Դ յԱյրարադոյ Ժ գիւղջէ ԲՃ^{1}α Արածոյ ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 յԱրածայ Է յԱրարածոյ(!) 7 Կ Աբրաամ Բ սարգաւագ Ժ գիւղջէ 8 ԲԳԴα զվեցս α զսուրբս Բ զսուրբսս Ժ զվեց Հ սուրբս այսոքիկ ԵԸԺԼԽS^1S^2 սուրբքս զայսոսիկ Դ սուրբքս որ կատարեցին յանապատին ԲՃ^{1}α չիք ուր ԱԹԻ կատարեցան 8—9 Պարսիկ պաշտոնյաների կարգը ոչ մի ձեռագիր ճիշտ չի տալիս. փոխանակ 3-ի մեծ մասը 4 են տալիս, այսպես՝ ԱԳԵՋԷԸԹԺԼԽՄԿՀV$S^1S^2S^3$A Դենշապուհ և (A չիք և) մոգպետն և Ջնիկանն և մայպետն (ԳԵԸԺԼԽՄԿՀ Ջնիկան, ԵԸԺԽՀ մովպետն փխ մայպետն Է պայպետն Լ մայրպետն) Բα նույնպես սխալ են տալիս՝ Դենշապուհ և Ջնիկանն և մայպետն (երեքը դառնում են երկու, քանի որ մայպետը Ջնիկանի պաշտոնի անունն է) Դ չիք և Ջնիկան մայպետն Ճ^{14,17} Դենշապուհ և մովան հանդերձապետն և Ջնիկան մայպետն։ 10 Բα կացուցին փխ ընտրեցին 10 Ե սպասաւորաց α զինուորաց փխ սպասաւորացն 11 ԲՃ^{1}α զմարմին սրբոյն մինչև յաւուրս փխ զմարմինս երանելեացն ցաւուրս Դ ա-

Ղևոնդ երեց Վանանդից՝ Իչավան գյուղից.
Մուշե երեց Աղբակից.
Արշեն երեց Բագրևանդից՝ Ծղեգեկ գյուղից.
Քաջաջ սարկավագ, որտեղից Ռշտունյաց եպիսկոպոսն էր.
Իսկ երանելի Մոգպետը Նյուշապուհ քաղաքից.
Սամվել երեց Այրարատից՝ Արած գյուղից.
Աբրահամ սարկավագ՝ նույն գյուղից։

Արդ, Դենշապուհը, մոգպետն ու Ջնիկան մայպետը նույն տեղում պահապաններ ընտրեցին ամեն մեկն իր սպասավորներից և այն անապատում, որտեղ այս վեց սրբերը նահատակվեցին, հրամայեցին երանելիների մարմինները պահել մոտ տասն օր կամ ավելի, մինչև արքունի բանակն անցնի գնա, որպեսզի, ասում են, այլակրոնները չգան ու չվերցնեն դրանց ոսկրները և բաժանելով տարածեն ամբողջ աշխարհով մեկ, որով և մարդիկ ավելի ևս քաջալերվելով կմոլորվեն-կգնան նածարացիների աղանդի հետևից։

Իսկ խուժիկը, որի մասին առաջ ասացինք, զենքով միասին սպասում էր այնտեղ պահապանների հետ, որպես նրանցից մեկը, իմաստությամբ լի և աստվածային գիտությամբ կատարյալ մի մարդ. Նա

ւուրս Ի յաւուրս Բ կամ այլևս աւելի ԳԴԵԺԼ և կամ Խ և կամ ևս առաւել 12 A կարաւան ԱԲԷՋԹԻVS^3Ճ^{1}α չիք անցեալ ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 անցցէ գնասցէ Դ անցցէ և գնասցէ A գնայցէ 12—13 ԲՃ^{1}α այլազէնքն, ասէ, եկեալ ԼԽS^1S^2 զի մի՛ ասեն ԼS^1S^2 համակդէնքն Խ ակդեհքն(!) ԳԴԵԸԺԼԽԿՀՃ^{12,14,17} զի մի՛ ասեն ակդէնքն (ԵԸԺԽԿՀ լուսանցքում՝ անհաւատքն) ԱՋԷԹԻVS^3A չիք ասեն Թ այլադենքն (լուսանցքում՝ այլահաւատքն) 13 է զորս ԱՋ բաժխեալ Ի և բաժանեալ ԳԴԺԼS^1S^2 սփռիցեն 13—14 ԵԸԺԽՀ ընդ ամենայն աշխարհս α ընդ աշխարհ ամենայն 14 Ը յորում մարդիկք Բα յորս փխ յոր և ԳԴԵԺԼԽԿՀα չիք և ԲՃ^{1}α չիք առաւել α 14—15 մոլորեալ խոտորեսցին Ի պաշտաման ԵԸ մոլորիցեն ԲՃ^1 մոլորեսցին ի պաշտօն նածրացւոց աղանդին 15 ԵԺα նածարացւոց (լուսանցքում՝ նազօրեցոց) Ըխ նածարեցւոց (լուսանցքում՝ նազօրեցւոց) Թ նածրացւոյ (լուսանցքում՝ նազօրացւոյ) Հ նածարացւոց (լուսանցքում՝ նազօրեցւոյ) Է նազօրացւոյ Լ նազարացւոց Ի նածրացւոյ V նազօրացւոց S^1 նազովրացւոց S^2 նածարեցւոց ԴԹԻ աղանդոյն 16 Բα իսկ երանելի խուժիկն ԱՋ յառաջագոյնն ԲՃ^1 յառաջ α յառաջն 17 Բα ընդ պահապանսն անդէն ԵԸԺԽՀ չիք անդէն ԲԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Ճ^{1}α իբրև փխ որպէս Դ իբրև մի Բα ի նոցանէն 18 ԳԺՄ գիտութեանն Ե գիտութեան Դ աստուածգիտութեամբ Կ գիտութեամբն S^2 յաստուածային գիտութեանն Է չիք և կատարեալ աստուածային գիտութեամբ α գիտութեամբ աստուածային։

սէր և զէտակն ունէր, եթէ որո՛վ օրինակաւ հնարս գտցէ զոսկերս սրբոցն գողանալ ի նոցանէ։

Եւ իբրև աւուրք երեք անցին ի վերայ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ ամենցուն, և իբրև թմբրեալք և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին, զերիս աւուրսն։ Իսկ ի չորրորդում աւուրն երկուք ի պահապանացն չարաչար լլկեցան ի դիւէ։ Դարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք հնչէին, և թնդիւնք որոտաձայնք ի ներքուստ՝ որպէս զդղրդումն գետնաշարժի. երկիրն դողայր ի ներքոյ նոցա, և շողիւնք սուսերաց փայլատակունս արձակէին շուրջ զնոքօք։ Եւ զամենեսեան զդիակունսն կանգնեալ տեսանէին, և զնոյն բանս ատենին ահագինս բարբառէին ի լսելիս նոցա. մինչև խուճապել նոցա ընդ միմեանս, դեռ ևս զիրեարս սատակէին։ Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք, մինչև այր զընկերի փախուստ չգիտէր ընդ որ երթայր։ Եւ եկեալ պատմէին մեծաւ զարմացմամբ զամենայն անցս չարչարանացն, զոր կրեցին։

Ի խորհուրդ մտին նախարարքն երեքեան, և սկսան զարմանալով ասել ցմիմեանս. «Զ՞ինչ գործեսցուք, զի՞նչ արասցուք վասն անքնին աղանդոյն քրիստոնէից. քանզի մինչդեռ կենդանի են, զարմանալի են կեանք նոցա. ընչատեացք են իբրև զանկարօտս, սրբասէրք են իբրև զանմարմինս, անաշառք են իբրև զարդարադատս. աներկիւղք են իբրև զանմահս։ Եթէ զայս ամենայն ասեմք իբրև զտգիտաց և իբրև զյանդգնելոց, իսկ զայն զի՞ առնիցեմք, զի ցաւոտք ամենայն ի կարաւանի աստ նոքօք առողջանան։ Եւ կամ որ մեծս է քան զայդ ամենայն, ո՞յր ուրուք զի կանգնեալ երևեցաւ ի կենդանեաց, կամ բարբառ բանից ոք լուաւ ի նմանէ։

1—2 Դα թէ ԵԸԺԽՀS^2 գողանալ ի նոցանէ զոսկերս սրբոցն 3 Բ իսկ աւուրք փխ և իբրև աւուրք ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք և α իսկ իբրև Թ գժ-ան (=երեքտասան) փխ երեք ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 անցանէին 3—4 Ժ անկանէր է չիք արհաւիրք մեծ անկանէին ի վերայ Ժ անկանէր 4 Է ամենեցունց Խ չիք ամենեցուն ԴԼS^1 չիք և ԲԴԶ^{1}α թմբրբեալք և կիսամեռեալք (Դα կիսամեռք) ԽԶ^2 թմրեալք ԱՋԸԹԻՎS^3Λ թմրրեալ Է թմրեալ 4—5 Խ անյարիք ԱԲԴՋԷԹԻՎ անարիք փխ անյարիրք 5 Բα էին փխ դնէին ԲԴα աւուրս ԲԵԽS^3 չորրորդումն աւուրն ԳԼ չորրորդումն աւուր 6 Բα երկու Դ երկուս Կ երկուքն α չարաչարք լլկեալք 6—7 ԲԴԶ^{1}α ի հասարակ գիշերի S^2 զհասարակ 7—8 ԱԲՋԷԹԻՎԶ^{1}α թնդիւնք և ռոնաձայնք S^3 և թնդիւնք և որոտաձայնք ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 հնչիւնք (Կ դըրնդիւնք, Հ դնդիւնք) և թնդիւնք և ռոնաձայնք ի ներքուստ իբրև դղըրդումն գետնաշարժի 8 ԱՋԷԹԺԻԼԽS^1S^2 զդղրդումն α իբրև դղրդումն 9 ԵԺԿՀ շողունք է փայտատունս փխ փայլատակունս α փայլատակմունք 10 ԲԶ^{2}α Եւ զամենայն ԸԺԽ զամենեցուն Հ զամենեցունցն Լ զդիակունս 11 Է չիք «և զնոյն բանս— բարբառէին» Բ բան ԳԼS^1 ասէին փխ ատենին 12 Ըα խուճապեալ Հ ճողոպել ԲԶ^{1}α

սպասում էր և ակնդետ նայում, թե ի՞նչ եղանակով հնար գտնի սրբերի ոսկրները գողանալու նրանցից։

Եվ երբ երեք օր անցավ, մեծ սարսափ ընկավ բոլորի վրա, և ինչպես թմրած ու կիսամեռ անկանգնելի վեր ընկած մնացին այն երեք օրը։ Իսկ չորրորդ օրը պահապաններից երկուսը սաստիկ դիվահարվեցին։ Դարձյալ կեսգիշերվան մոտ ահեղ ձայներ լսվեցին և ներքևից որոտաձայն թնդյուններ, երկրաշարժի դղրդոցի նման. երկիրը դողում էր նրանց ոտքի տակ և սրերի շողշողալուց կայծակ էր թափվում նրանց շուրջը։ Եվ տեսնում էին բոլոր դիակները կանգնած, և ատյանում ասածները բարձր ձայնով խոսում էին նրանց ականջին, այն աստիճան, որ նրանք՝ իրարանցման մեջ ընկնելով՝ միմյանց էին կոտորում։ Եվ այսպես տագնապած ու ցնորված՝ ընկերն ընկերոջից փախուստ տալով՝ չգիտեր, թե ուր էր գնում։ Եվ գալով՝ մեծ զարմանքով պատմեցին այն բոլոր անցքերն ու չարչարանքները, որ կրեցին։

Խորհրդի նստեցին երեք նախարարները և սկսեցին զարմանքով ասել միմյանց. «Ի՞նչ անենք, ինչպե՞ս վարվենք քրիստոնյաների այս անքննելի աղանդի հետ. որովհետև քանի կենդանի են, զարմանալի է նրանց կյանքը. ընչատյաց են՝ ինչպես անկարոտ մարդիկ, սրբասեր են՝ ինչպես անմարմինները, անաչառ են՝ ինչպես արդարադատ մարդիկ. աներկյուղ են՝ ինչպես անմահներ։ Եթե այս բոլորի վերաբերմամբ ասենք, թե նրանք տգետ են և հանդուգն, հապա ա՞յն ինչ անենք, որ այստեղ բանակում եղած բոլոր ցավագարները նրանց շնորհիվ առողջանում են։ Եվ կամ, որ այդ բոլորից մեծ է, ո՞ր մեռած մարդու դին է կանգնած երևացել. և ո՞վ է նրանից որևէ խոսք լսել։

զմիմեանս փխ զիրեարս 13 α չիք և ցնորեալք α մինչ 13—14 ԱԳԴՋԸԹԺԻԽՎΛ այր զընկեր ի փախուստ 14 ՋԷՎ ի փախուստ տայր ԲԶ^{1}α ոչ գիտէր ընդ որ երթիցէ Դ ոչ գիտէր ԵԺԽՀ չգիտէին 15 ԲԶ^{1}α չարչարանաց զոր կրեցին նոքա անդ ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 կրեցին նոքա 16 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2Զ^{1}α չիք և 17 ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ցմիմեանս ասել α ասեն ցմիմեանս Է չիք զինչ արասցուք 18 Ը անքնին ԲԶ^{1}α անքակ փխ անքնին ԱՋԷԹԻՎS^3 քրիստոնէիցն (ԱՋ քրիստոնէիցն) α զի փխ քանզի Թ մինչ Λ էր փխ են 19 ԲԴΛα էին եկանք ԲԳԴԵԸԺԼԽԶ^{1}α իւրեանց փխ նոցա Λ էին փխ են 20 Λ էին փխ են 21 Բ աներկեղք Գ աներկիւղ ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2α և եթէ զայն ԴԵ զայն Բ զամենայնն փխ զայս ամենայն ԵԸԺԽՀ կամ փխ և իբրև 22 ԳԴԿS^2 չիք և և զանդգնելոց α չիք իբրև (զյանդգնելոց) Դ իսկ զայս Ե առնիցիմք 22—23 ԵԸԺԽՀS^2 ամենայն ցաւոտք 23 ԲԶ^{1,2}α ի կարաւանիս նոքօք առողջանան աստ Բα չիք կամ 24 Բα մեծ ևս Դ չիք է ԵԸԺԽՀS^2 մեծ Ը մեծ է ԼS^1 չիք զայդ ԼS^1 չիք զայդ ԲԶ^{1}α դիակն փխ զի 24—25 ԲԶ^{1}α կենդանի ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք ի 25 Բα և կամ ԳԴԼS^1 լուաւ ոք ԴԷ ի նոցանէ։

«Զի սուտ չեն մեր սպասաւորքն. մեր մեզէն իսկ հասեալ է ի վերայ ստուգութեան նոցա։ Եւ եթէ կամեցեալ էր նոցա մարմնաւոր ինչ ագահութիւն ի ներքս խառնել, սակաւ մի ակնարկէին քրիստոնէից ի կարաւանիս, զկշիռ իւրաքանչիւր մարմնոյ նոցա ոսկի առնուին։ Դարձեալ և արքդ, որ ի դիւէ չարչարեցան, զի յայլ ժամս ցաւոտք չէին՝ մեք գիտեմք. յայտ է եթէ այսօր նշան մեծ երեւեցաւ։ Եթէ լուռ լինիմք, այսպէս մեզ և անձանց մերոց կասկած իսկ է. և եթէ տանիմք զդոսա առաջի թագաւորին, լսելով նորա ի դոցանէ զայդ ամենայն մեծամեծ սքանչելիս, գուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ»։

Նա պատասխանի մոգպետն և ասէ ցնոսա. «Ո՞չ զիս ոստիկան արարին ի վերայ ձեր երկոցունցդ. զի՞ այդչափ նեղեալ տագնապիք յանձինս ձեր. դուք զգործն ձեր կատարեցէք, և զհրամանն արքունի ի գլուխ տարայք։ Արդ եթէ համբաւդ այդ յայտնեսցի, և հարցափորձ ինչ լինիցին առաջի արքային, այդ խնդիր մեր մոգացս է. դուք անհոգ լերուք, և մի՛ ինչ ածէք զմտաւ։ Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուցն ի դարի թիր եկայք. զի վաղիւ անդ Մովպետան մովպետ ռատ յազէ, և նոյն հաճեալ հաւանեցուսցէ զմիտս ձեր»։

Իսկ խուժիկն իբրև լուաւ զայս ամենայն, և գիտաց՝ եթէ փոյթ ինչ ոչ է նոցա յայնմհետէ սուրբ սպանելոցն, փութացաւ վաղվաղակի էառ տասն այր, որոց զչափ գիտէր զքրիստոնէութեանն, և հասեալ ի տեղին՝ շէն եգիտ զամենեսեան։ Եւ քանզի կասկած ունէր տակաւին ի նոցուն ի դահճացն, դարձեալ փոխեցին անտի

---

1 Եխ գինչ են սուտ(!) Ըժ չեն սուտ ԱԹԻ սպասաւորքդ ԲԳԵԸԺԼԽԿՏ^{1}Տ^2 սպասաւորքս 2 Ըխ տգիտութեան փխ ստուգութեան ԲԹՃ^{1}α, նոցա ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}Ճ^{1}α գոցա Ը չիք և ԳԵԸԺԽՄԿՀՏ^{1}Տ^2 կամաւոր փխ մարմնաւոր 3 Դ ի ներս ԲԽՃ^{1}α սակաւիկ մի α ակն արկանէին 3—4 Զ քրիստոնէից 4 Դ չիք ի Բα ի կարաւանից Ի ի կարաւանին Դ զի կշիռ 5 Դ չիք և 5—6 ԲՃ^{1,2}α զի յայլում ժամու ցաւոտք չէին ԱՁԷԹԻVՏ^{3}A զի յայնժամ Դ ցաւոտ 6 α չիք և մեք գիտեմք ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չիք և ԱՁԷԹԻՄՏV^{3}A և մեք Ըխ և եթէ Բ եթէ յայտ է ԲՃ^{1}α չիք այսօր նշան մեծ երեւեցաւ 7 ԳԴԵԺ թէ ԵԺՀՏ^2 Եւ եթէ ԱԳԴՁԷԺ յանձանց Դ չիք մերոց ԲՃ^{1}α չիք իսկ ԳԴԼՏ^1 իսկ կասկած է Հ կասկած մեծ իսկ է 8 Բ զնոսա Դ չիք նորա 9 Դ չիք մեծամեծ Բα սքանչելիս մեծամեծս Դ չիք և ԲԴα օրինաց 10 ԲՃ^{1}α քակտումն ինչ հասանիցէ յարգումնաս Թ հասանիցի 11 ԲՃ^{1}α պատասխանի ետ Ճ^{1}α մովպետն 11—12 Թ ոստիկանս 12 ԲՃ^{1}α երկուցդ ԳԵԸԺԼԿՀՏ^{1}Տ^2 երկոցուն Դխ երկոցունց A երկոցունցն ԱՁԷVՏ^3 զի՞ այդ փխ զի՞ այդչափ Բα այդպէս 13 ԲՃ^{1}α զգործս Տ^2 զգործն ԵԸԹԺԻԽԿՀՃ^1 զգործն ձեր կատարեցիք ԱԳԴՁԷԼVՏ^{1}Տ^{3}A զգործ α կատարեցիք և զհրաման ԲԴ զհրաման 14 ԳՄՏ^1 տարէք ԲԴ արդ եթէ բան է ԳԼՄՏ^1 բանեդ փխ համբաւդ ԵԸԺα բանդ ԽԿՀՏ^2 քանդ այդ Ճ^1 բանդ այդորիկ ԱԳԵՁԸԹԺԻԽԿՀVՏ^{1}Տ^{2}Տ^3 յայտնեսցին է յայտնեսցին

«Որովհետև սուտ չեն [ասում] մեր սպասավորները. մենք ինքներս ստուգել ենք նրանց ճշտությունը։ Եթե նրանք ուզենային մարմնավոր ագահություն խառնել գործի մեջ, մի փոքրիկ ակնարկ անեին բանակում եղած քրիստոնյաներին՝ իրենց կշռովը մեկ ոսկի կառնեին։ Մեկ էլ՝ այն մարդիկ, որոնք դևի կողմից չարչարվեցին, ուրիշ ժամանակ նրանք ցավոտ չէին, մենք այդ գիտենք. հայտնի է, ուրեմն, որ այսօր մեծ հրաշք կատարվեց։ Եթե լուռ մնանք, մենք և մեր անձերը այդպիսով կասկածի տակ կընկնենք. իսկ եթե դրանց տանենք թագավորի առաջ, նա էլ դրանցից լսելով այդ բոլոր մեծամեծ հրաշքները, գուցե նույնիսկ մեր կրոնը քայքայվի»։

Պատասխան տվեց մոգպետն և ասաց նրանց. «Չէ՞ որ ինձ ոստիկան կարգեցին ձեր երկուսիդ վրա. ինչո՞ւ եք այդպես սրտնեղվում ու տագնապում ձեզուձեզ. դուք ձեր գործը կատարեցիք և արքունի հրամանը գլուխ բերիք։ Արդ, եթե այդ լուրն իմացվի և թագավորի առաջ որևէ հարցուփորձ լինի, այդ մեր, մոգերիս, գործն է. դուք անհոգ եղեք և ոչ մի բանի մասին մի՛ մտածեք։ Եվ եթե ձեր մտքերը զարհուրած են, առավոտը վաղ եկեք Դարիթիր[158], որովհետև վաղն այնտեղ տեր[159] Մովպետան Մովպետը գոհ է մատուցանելու. նա էլ ձեր մտքերը կհանգստացնի»։

Իսկ խուժիկը, երբ այս բոլորը լսեց և հասկացավ, որ այնուհետև նրանք հոգս չեն քաշելու սուրբ սպանվածների մասին, շտապեց շուտով տասը մարդ վերցրեց, որոնց քրիստոնյա լինելու վրա վստահ էր, և հասնելով այնտեղ՝ բոլորին կարգին վիճակի մեջ գտավ։ Եվ որովհետև դեռ կասկած ուներ նույն դահիճների վրա, այնտեղից սրբերին էլի հեռացրին

14—15 α հարց և փորձ 15 ԵԸԺԽՀՏ^2 չիք ինչ Դ լիցի ԵԺԽՏ^2 լիցին α լինիցի ԲՃ^{1}α արքային արքայի ԳԴԿ արքայի α չիք այդ Լ մոգուց α մոգացս 16 Ը չիք ինչ ԵԺԽՀՏ^2 զմտաւ ածէք Ը չիք ինչ Բα չիք Եւ 17 Ը չիք ինչ A հոգիս Բα չիք ձեր ԲՃ^1 վաղ α վաղ ինչ Բα առաւօտուց ԱՁԷԹԻV ի դարիթիրէ ԲԴԼՏ^2 ի դարիթիւ Ըխ ի դարթիր Ճ^{1,2}α ի դարիթեւր Ժ երթայք 18 ԲԵԸԺԼԽՀα անդր Թ մովպետան մովպետ (լուանցհատ՝ իշխանաց իշխան) ԴԸԼԽՄՏ^1 ռատ յազզէ (ԼՏ^1 ազզէ) Տ^2 ռատ ազդէ(!) Բ յազզէ(!) Բ զնոյն Ըխ ի նոյն V աճեալ(!) 18—19 ԳԴԵԸԺԽՄԿՀՏ^{1}Տ^2 հաւանեցուցանէ Լ չիք «և նոյն հաւանեցուսցէ» 20 Ի չիք և Ե գիտեաց 20—21 ԲՃ^{1}α և գիտաց եթէ յայնմհետէ վասն սուրբ սպանելոցն ոչ ինչ փոյթ է նոցա 21 Դ յայսմհետէ ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 զսուրբ Դ սպանանելոցն 22 Դα և առ ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2}α զորոց Դ զորոյ ԵԺՀ քրիստոնէութեան ԱՁ զքրիստոնէութեան ԴԻα զքրիստոնէութեան 23—24 ԳԼՏ^{1}Ճ^{1}α նոցունց ԴԵԸԺԽՀՃ^1 չիք ի Բα չիք Եւ Բα քանզի տակաւին կասկած ունէր ի նոցունց դահճացն դարձեալ փոխեցին զսուրբսն 24 ԲԽՃ^{1}α չիք անտի զսուրբսն յայլ տեղի բացագոյն իբրև երկու հրասախօք։ Եւ իբրև յանհոգս եղեն, սրբեցին կազմեցին զոսկերս երանելեացն. բերին ի բանակն և ունէին ի ծածուկ. և առ սակաւ սակաւ յայտնեցին նախ զօրականին Հայոց, և ապա բազում քրիստոնէիցն, որ էին ի կարաւանին։ Եւ զառաջին պտուղ ընծային մատուցանէին կապեալ նախարարացն. և անդէն վաղվաղակի արձակեցան նոքա ի կապանաց իւրեանց, և սպառնալիք մահուանն անցին զնոքօք, և հրովարտակք թողութեան առաքեցան յաշխարհն Հայոց։ —

Այս երանելի խումբս, որ արժանի եղեւ ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն, որ ինչ ի մահուանէն և այսր ասացաւ դատակնիք վճռիս այսորիկ, սա երկրորդեաց մեզ զամենայն կարգաւ. զչարաչար յարչումն, և զհարց և զփորձ դատաւորացն, և զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն, և զկատարումն մահուան նոցա, և զահագին արհաւիրսն, որ ի վերայ պահապանացն անկաւ, և զհեծեծումն քննութեան նախարարացն երեցունց, և զամփոփումն սուրբ ոսկերաց նոցա ոչ խառն ի խուռն ի մի վայր ժողովելով, այլ զմի մի ի նոցանէ ուրոյն ուրոյն ի վեց տապանս ժողովեալ էր, և զանուանս իւրաքանչիւր ուսեալ և ի վերայ տապանացն նշանակեալ էր։ Եւ զկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եդեալ էր, քանզի դահճացն ի բաց ընկեցեալ էր. որպէս և զհանդերձս զիւրաքանչիւր տապանի նշանակեալ էր։

Եւ կատարեցան սոքա վեցեքեան սուրբ և ցանկալի մահուամբն իւրեանց, որ օր քսան և հինգ էր հրոտից ամսոյ՝ ի մեծ անապատին յԱպար աշխարհի, ի սահմանս Նիւշապուհ քաղաքի։

---

1 ԱՋԷԹԻՎ չիք իբրև ԱՋԷԹԻՎՏ^3 հրասխօք Բ հրասխաւ ԴԽԸԺԼԽԿՀՏ^1 հրասահաւք Դ խրատախաւք Տ^2 հրահասօք α հրասախաւ 2 ԲԾ^{1}α մտին փխ եղէն Վ բերէին 3—4 Բ նախ յայտնեցին α յայտնէին նախ 4 Բ չիք Հայոց ԴԾ^{1}α Հայոց զօրականին 5 ԱԹԻՎՏ^3 զառաջի α ընծայեցին ԲԾ^{1}α մատուցին ԵԺԽՀ ի կապանացն 6 ԲԾ^{1}α մահու Դ անց փխ անցին 7—8 ԲԳՋԹԻԼԿԾ^{1}α հրովարտակ Դէ հրովարտաք 8 Դ չիք թողութեան ԱՋԹԺԻԼՎ առաքեցին ԲԾ^{1}α առաքեցաւ 9 A Արդ երանելի այս ԱՋԷԹԻԼՎՏ^3 Արդ այս Գ չիք այս 10 Ի լինիլ ԳԼՏ^1 ասացան 11 ԱՋԷԹՎα վճիռս Դ կարգաւ զամենայն α զամենայնն 12 ԳԵԿՀՏ^{1}Տ^2 և զչարաչար Գ զհարցափորձ Դ և զհարցափորձ ԳԼԿ դատաւորաց 13—14 ԲԾ^1 մահու Կ մահուանն 14 Դ չիք զահագին ԱՋԷԻՎ արհաւիրս 14—15 Դ զարհաւիրսն որ հասին 15 ԲԵԸ անգամ ԳԺԼԽԿՏ^{1}Տ^{2}α անկան ԱԹԻԾ^{1}α և զհծծումն Հ զհեծծեծմունս ԲԴԾ^{1}α չիք քննութեան ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 քնման Բ զհեծումն... երկոցունց ԳԵԺԼԽԿՀ երիցուն ԴԻՄ երիցունց է երկոցունց 15—

երկու հրասախի չափ։ Եվ երբ ապահովվեցին, մաքրեցին, կարգի բերին երանելիների ոսկրները. բերին բանակը և ծածուկ պահում էին. և կամաց-կամաց հայտնեցին նախ հայ զորականներին, ապա նաև բանակում եղած բազմաթիվ քրիստոնյաներին։ Եվ ընծայի առաջին պտուղը մատուցին կապված նախարարներին. և նրանք իսկույն նեթ արձակվեցին իրենց կապանքներից[160], մահվան սպառնալիքը վերացավ նրանց վրայից, և ներման հրովարտակներ ուղարկվեցին Հայոց աշխարհը։

Այս երանելի խումբը, որ արժանի եղավ ծածուկ սպասավոր լինելու սրբերին, ինչ որ նրանց մահից մինչև այժմ ասվեց իբրև այս վճռի դատակնիք՝ սա՛ պատմեց մեզ կարգով այս ամենը—չարաչար քարշ տալը, դատավորների հարցուփորձը, սրբերից յուրաքանչյուրի պատասխանները, նրանց նահատակությունը և պահապանների կրած ահագին արհավիրքները, և երեք նախարարների հեծեծանքն ու տարակուսանքները, և նրանց սուրբ ոսկրների ամփոփումը ո՛չ թե խառնիխուռն մի տեղ ժողովելով, այլ նրանցից ամեն մեկը առանձին-առանձին՝ վեց տապանների մեջ ժողոված. և յուրաքանչյուրի անունն էլ սովորել ու տապանների վրա նշանակել էր։ Եվ երկաթե կապանքները դրել էր յուրաքանչյուրի ոսկրների հետ, որովհետև դահիճները դեն էին գցել. ինչպես նաև նշանակել էր յուրաքանչյուր տապանի հանդերձանքը։

Եվ սրանք վեցը իրենց սուրբ և ցանկալի մահով նահատակվեցին Հրոտից ամսի քսանհինգին Ապար աշխարհի մեծ անապատում՝ Նյուշապուհ քաղաքի սահմաններում։

---

16 Բ զփոփոխումն փխ զամփոփումն 16 Դ ոչ խառն ի խուռն իմն ի մի մի վայր(!) 16—17 ԲԾ^{1}α ժողովեալ 17 ԱԴ ուրոյն ուրոյն A չիք ուրոյն (մեկը) 17—18 ԲԾ^{1,4} տապանի ժողովեալ էր α ի վեց տապանի ԳԼԽԿՀՏ^{1}Տ^2 տապանակս (ԽՀ տապանս) ժողովեալ էր Դ տապանակս ժողովէր ԱՋԷԹԻՎՏ^{3}A ժողովէր 18 է զանուանսն ԲԾ^{1}α սրբոցն ուսեալ ԳՀՏ^1 չիք և 18—19 ԳԼԿՏ^{1}Ծ^{2}α տապանակացն Հ տապանացն նշանակեալ էր 19 Բα չիք և ԱԿԴՋԷԺԻԿ զկապանս և կապանսն 20 ԲԴ ոսկերս Բα և քանզի ԱԳԹԻ չիք «քանզի—ընկեցեալ էր» ՄՏ^1 ի բաց եդեալ էր α չիք որպէս 20—21 ԲԴԾ^{1}α զհանդերձսն յիւրաքանչիւր ԳԵԸԺԿՀα զհանդերձսն ԼԽՏ^{1}Տ^2 որպէս զհանդերձսն 21 Տ^{1}Տ^2 տապանի ԲԴԾ^{1}α տապանի եդեալ էր ԱԳՋԷԹԻԿՎՏ^{3}A տապանակի նշանակեալ էր ԱԹԻ չիք էր 22 ԲԴԾ^{1}α վեցեքին Բα մահուամբ 23 ԲԾ$^{1—2,5—5}$α քսան և ւթն ԳԴԵ հրորտից 24 ԱՋԷԹԻՎՏ^3 յԱպր աշխարհի ԴԾ$^{4—8,12—13,17—19}$ յԱպր աշխարհին Բ աշխարհին ԲԿ Նիշապուհ Դ քաղաքին։

α-ի մեր լուսատիպ օրինակը վերջանում է 17-րդ տողի «այլ» բառով:

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՆՈՑՈՒՆՑ

Իսկ աշակերտք երանելեացն ի կապանս կային ի ներքս ի քաղաքին. եկն դահճապետ մի արքունի և եհան զնոսա ի քաղաքէ անտի արտաքս։

Եհան ի նմին քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ, քանզի և նոքա ի կապանս էին վասն անուանն Քրիստոսի. եհարց զնոսա բանիւք, և ոչ հաւանեցան երկիր պագանել արեգական։ Զարչարեաց զնոսա գանիւ, և նոքա ևս առաւել ի նոյն միտս պնդեցան. կտրեաց զնոցա ունչս և զականջս, և ետ տանել յԱսորեստան, զի կայցեն ի մշակութեան արքունի։ Երթային մեծաւ յօժարութեամբ, իբրև այն՝ թէ մեծ պարգևս գտեալ ի թագաւորէն։

Արդ եկն դարձեալ նոյն դահճապետն առ աշակերտս սուրբ ըսպանելոցն, ընտրեաց երկուս ի նոցանէ, որ համեստագոյնք էին, առեալ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա. «Զի՞նչ անուանք են ձեր»։

Ետ պատասխանի մինն և ասէ. «Առ ի ծնողաց ինձ Խորէն, և դմա Աբրահամ. իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի եմք և աշակերտք երանելեացն, զոր սպանէք»։

Ետ պատասխանի դահճապետն և ասէ ցնոսա. «Իսկ արդ զի՞նչ գործ է ձեր, և կամ բնաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր»։

ՎԵՐՆԱԳԻՐ—ԱԲԳԴԵՁԷԸԹԺԻԼԽՄԿՀVS¹S²S³ Դարձեալ վասն խոստովանող աշակերտաց նոցունց (Բ խոստովանող երանելեաց աշակերտաց ԳԺԿ աշակերտացն ԳԵԸԺԼԽՄԿՀS¹S² նոցին Դ նոցուն) A Վասն խոստովանողացն Հայոց Խորենայ և Աբրահամու

1 Բ էին ի կապանս Խ որ ի կապանս V և ի կապանս 1—2 Բ ի ներք ի քաղաքին Դ ի ներս Գ չիք ի (ներքս) ՄS¹ ի ներքս քաղաքին Թ ի քաղաքի 2 Զ դահճապետն 3—4 է չիք «անտի—քաղաքէ» 4 ԹԵ եհան Դ և ի նմին ԲԵ ի քաղաքէն Բ ասորեստանեաց Ը ասորիս ԵԺԼՀS¹S² ասորի Խ ասորիստանեայս Բ չիք քրիստոնեայս ԳԵ քրիստոնեայս 6 Բ բանիւ Բ ոչ հաւանեցան նոքա է երկրպագել Թ արեգականն 7 Լ պնդեցին 6—7 ԸԺ չիք «չարչարեաց—և նոքա» 8 ԲԳԴԵԺՀ զունչս Բ չիք և (ետ) 9 ԲԳԴԵԸԺԼԿՀS¹S² կայցեն Բ ի մշակութեանն V յարքունի ԵԸԺԼԽՀS¹S² Եւ նոքա երթային Ա յօժարութեամբ Բ ուրախութեամբ ԳԴԵԸԺԼԽԿՀS¹S² մեծաւ զօրութեամբ

ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ երանելիների աշակերտները կապանքների մեջ մնում էին նույն քաղաքի ներսում. արքունի մի դահճապետ եկավ և նրանց քաղաքից դուրս հանեց։

Նույն քաղաքից դուրս հանեց նաև հինգ ասորեստանցի քրիստոնյաների, որոնք նույնպես կապանքների մեջ էին Քրիստոսի անվան համար. սրանց հարցրեց խոսքերով, բայց չհամաձայնեցին արեգակին երկրպագություն տալ։ Չարչարեց նրանց ծեծելով, բայց նրանք ավելի ևս հաստատվեցին նույն մտքի մեջ. կտրեց նրանց քթերն ու ականջները և ուղարկեց Ասորեստան, որ արքունի [գործերում] մշակություն անեն։ Նրանք գնացին մեծ հոժարությամբ, կարծես թե մեծ պարգևներ ստացած լինեին թագավորից։

Այժմ դարձյալ եկավ նույն դահճապետը սուրբ սպանվածների աշակերտների մոտ, ընտրեց նրանցից երկուսին, որոնք ամենից համեստներն էին, մյուսներից հեռացրեց մի կողմ և ասաց նրանց. «Ձեր անուններն ի՞նչ է»։

Մեկը պատասխան տվեց և ասաց. «Ծնողներս իմ անունը Խորեն են դրել, իսկ դրա անունն Աբրահամ է. իսկ ըստ մեր շնորհատուր կարգի՝ Քրիստոսի ծառաներ ենք և այն երանելիների աշակերտները, որոնց սպանեցիք»։

Պատասխան տվեց դահճապետը և ասաց նրանց. «Իսկ այժմ ձեր գործն ի՞նչ է, և կամ թե՝ ո՞վ է ձեզ այստեղ բերել»։

---

10 ԲԳԿ եթէ Բ գտեալ էր 11 ԳԵ դահճապետ Ժ աշակերտսն 11—12 ԴԵՀ սպանանելոցն 12 ԵԸԺԼԽՀS¹S² ընտրեաց ի նոցանէ երկուս (S¹S² երկու) ԱԳԴԵՁԷԹԻԽԿՀ VS³ համեստագոյնքն 14 ԴԵԸԺԼԽՀS¹S² պատասխանի ետ A մին Ժ մինն ի նոցանէ Դ և ասէ ցնա 15 Կ զորա փխ դմա V աստուածատուր փխ շնորհատուր ԲԴ կարգի 15—16 Դ ծառայ եմք Քրիստոսի 16 Բ սպանէքն Թ սպանիք 17 ԱԳԴՁԷԹԿ իսկ ասա փխ իսկ արդ 17—18 Բ զի՞նչ գործ է ասա ձեր 18 ԱՁԷԹԻV չիք և կամ բնաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր Բ չիք իսկ Խ չիք է ԲԴ աստ փխ այսր

Առ այս ետ պատասխանի Աբրահամ և ասէ. «Զայդ ձեզ ի վարդապետաց մերոց արժան էր ուսանել. զի ոչ դուզնաքեայք ոք էին նոքա, այլ ունէին ստացուածս հայրենիս ըստ արժան բաւականին, ըստ նմին և սպասաւորս, էր որ իբրև զմեզ, և էր որ լաւագոյն քան զմեզ. որոց անուցեալ և ուսուցեալ էր, ընդ նոսա եմք եկեալ։ Քանզի և պատուէր իսկ ունիմք յաստուածատուր օրինացն մերոց՝ սիրել զնոսա իբրև զսուրբ ծնողս, և սպաս տանել նոցա իբրև հոգևոր տերանց»։

Ցասեաւ դահճապետն և ասէ. «Իբրև զանխրատ և զաներկիւղ ստամբակս խօսիս։ Մինչդեռ ի խաղաղութեան և յաշխարհի էիք, բարիոք էր. յորժամ գրուահ եղեն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան ըստ գործոց իւրեանց, ձեզ չէր արժան ամենևին մօտ երթալ առ նոսա։ Ո՞չ տեսանէք ի մեծ կարաւանիս. յորժամ ոք ի պատուաւորացն ի դիպահոջն արքունի լինիցի, սգոյ հանդերձ ագանի, և զատեալ և որոշեալ ի բացէ նստի միայնիկ, և ամենևին հուպ ոչ ոք իշխէ երթալ առ նոսա։ Եւ դու այդպէս իբրև զանյանցի աշակերտ պարծելով խօսիս»։

Առ այս ետ պատասխանի Խորէն և ասէ. «Ոչ ձեր կարգդ անիրաւ է և ոչ մերս ստութեամբ. նախարարն յանցաւոր՝ ուստի զպատիւն գտեալ էր, այնպէս պարտ էր նմա հպատակ լինել, զի ի պատուոյն վերայ և այլ ևս պարգևս մեծամեծս գտանէր ի նմանէ։ Արդ փոխանակ զի զայն չարար, ձախողակի յետս ընդդէմքն պատահեաց նմա։ Եւ մեր վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին, և կամ առ թագաւորն մեղուցեալ ինչ էին, նոյն օրինակ և մեք առ նոսա անէաք. ոչ յաշխարհի մօտ երթայաք, և ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա գնայաք։ Արդ քանզի առ երկոսին կող-

Այս բանին Աբրահամը պատասխան տվեց և ասաց. «Այդ դուք պետք է մեր ուսուցիչներից իմանայիք, որովհետև նրանք չնչին մարդիկ չէին, այլ բավական հայրենի ստացվածքներ ունեին ըստ արժանիքի, այնպես էլ սպասավորներ, ո՛րը մեզ նման և ո՛րն էլ մեզանից ավելի լավ. ովքեր մեզ սնուցել և սովորեցրել են, նրանց հետ ենք եկել։ Որովհետև մեր աստվածատուր օրենքները պատվեր են տալիս մեզ՝ սիրել նրանց ինչպես սուրբ ծնողների և ծառայել նրանց իբրև հոգևոր տերերի»։

Զայրացավ դահճապետն ու ասաց. «Անխրատ և աներկյուղ ապստամբի նման ես խոսում։ Քանի որ խաղաղության մեջ և ձեր աշխարհում էիք, լավ էր. բայց երբ նրանք քրեական հանցանքի մեջ բռնվեցին արքունի գործերում և մահապարտ համարվեցին իրենց գործերի համեմատ, ձեզ վայել չէր ամենևին նրանց մոտ գնալ։ Չե՞ք տեսնում այս մեծ բանակի մեջ [ինչպես է լինում]. երբ պատվավորներից որևէ մեկը արքունի ժամանակավոր բանտն է ընկնում, սգի շորեր է հագնում, ջոկվում-հեռանում է և միայնակ է նստում և ամենևին ոչ ոք չի համարձակվում մոտ գնալ նրանց։ Իսկ դու այդպես պարծենալով ես խոսում, ինչպես մի անմեղ մարդու աշակերտ»։

Սրան պատասխան տվեց Խորենը և ասաց. «Ո՛չ ձեր կարգն է անիրավ և ո՛չ մերը սուտ. հանցավոր նախարարը ումից որ պարգև էր ստացել, այնպես պետք է հնազանդ լիներ նրան, որ բացի իր ունեցած շուքից ուրիշ մեծամեծ պարգևներ էլ ստանար նրանից։ Արդ, քանի որ այդ չի արել, նրան ձախողակի հակառակ բաներն են պատահել։ Եվ մեր ուսուցիչներն էլ, եթե հանցանք գործած լինեին աստծու դեմ և կամ որևէ կերպ մեղանչած թագավորի դեմ, նույն ձևով էլ մենք նրանց հետ կվարվեինք. ո՛չ մեր աշխարհում նրանց մոտ կգնայինք և ո՛չ էլ նրանց հետևից այս օտար աշխարհը կգայինք։ Բայց քանի որ երկու կողմերի

---

1 ԵԸԺԼԽՀS^1S^2 պատասխանի ետ առ այսր սուրբն Աբրահամ $S^1S^2S^3$VA ասէ ցնոսա ԵԸԺԼԽՀ չիք ձեզ   1—2 ԲԳԴԵԿՀ վարդապետացն Ը վարդապետապետաց(!)   2 ԵԸԺԼԽՀS^2 ուսանել ձեզ ԹԻ ուսանիլ ԲԳԵԺԻԼԽԿՀ դուզնաքեայ   3 ԱԹԻV ունին Հ ստացուածս Դ հայրենի Բ հայրենեաց Բ արժանի բովականին Դ արժանի   4 Գ ընդ նմին   4—5 ՁէV չիք և էր որ լաւագոյն քան զմեզ   5 ԱԳՁէԹԻԿ անուցեալն ԴԵԺԼԽՀS^2 ուսուցեալ Բ անուցեալ և ուսուցեալ էր զնոսա, ընդ նոսին եկեալ եմք   6 Դ չիք և ԲԳԴԹ օրինաց   7 ԵՀ իբրու   7—8 Դ հոգևոր տէրանց մերոց Ը զհոգևոր   9 Բ ասէ ցնոսա   9—10 Բ զաներշիւղ և զանխրատ ստամբակաց Դ զանխրատս և զաներկիւղս   10 Դ ստահակս փխ ստամբակս Ե ի խաղաղութիւն Գ յաշխարհ Թ էք փխ էիք   11 Կ բարուոք Բ էիք փխ էր Բ արդ յորժամ Բ գրաւահ Դ գտան նոքա   12 Բ չէ փխ չէր   12—13 Դ անդ երթալ փխ մօտ երթալ   13 Թ չիք ի մեծ   13—14 Բ ի պատուաւորաց Դ պատուաւորացս S^2 ի սպասաւորացն   14 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽՀ ի դիպահոջ (Գ ի դիպահուոջ) ԸԽS^2 լիցի   15 ԲՁէ և զատեալ և որոշեալ ի բաց կայ անտի միայնիկ ԴԼԽՀS^1S^2 ի բացեա ԳԹԻԼԽԿՀV$S^1S^2S^3$ և զատեալ և որոշեալ ի բաց կայ անտի միայնիկ

ԴԼԽՀS^1S^2 ի բացեա ԳԹԻԼԽԿՀV$S^1S^2S^3$ և զատեալ և որոշեալ ի բացէ նստի միայնիկ ԵԸԺ և որոշեալ ի բացեայ A չիք և (որոշեալ)   16 ԵԸԺԼԽՀS^1S^2 ոք ոչ ԳԴ երթալ առ նա   16—17 Բ և դուք այնպէս որպէս զյանցաւորաց աշակերտս պարծանօք խօսիք   17 ԳԴ ԵԸԺԼԽԿՀS^1S^2 պարծանօք   18 ԸԽ չիք առ այս ԵԸԺԼԽՀS^1S^2 պատասխանի ետ Բ ձերդ Բ չիք կարգդ   19 Բ նախարարի յանցաւորի Թ անցաւոր փխ յանցաւոր   20 ԲԴ զպատիւն բոլոր մյուսները՝ զպարգևն Բ գտեալ է Բ պարտ է Ի լինիլ է   21 ԳԿ ի պատուոյն Բ չիք և Դ մեծամեծ պարգևս Գ ի նմանէն ԵԸԺԼԽՀS^1S^2 ի նմանէ գտանէր   22 Ա փոխանակ դի զայր(!) չարար ՁէԹԻV զայր չար որ փխ զայն չարար ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 ոչ արար Դ ձախողակ   22—23 ԱՁէԹԻV պատասխանեաց նմա Բ պատահեցան   23—24 Բ ինչ յանցեալ էին   24 Դ թագաւորդ Խ չիք ինչ Բ նոցուն օրինակ   25 Բ չիք անէաք (սակայն հետո այլ գրչով և բառով ավելացված է) Բ յաշխարհիս Բ չիք ոչ   26 Բ աշխարհի Դ աշխարհս ԲԴ չիք այսր Թ այսօր(!) ԱԴԵՁէԹԺԼԿՀ գայաք Բ արդ վասնզի զերկոսին A Բայց քանզի ԱՁէԿ երկոսեան ԵԸԺԼԽՀS^2 երկոքեան Դ երկոքեանս *մանսն արդարութեամբ կեցեալ են, և դուք զուր տարապարտուց սպանէք զնոսա, մեք արդ ևս առաւել սպասաւորեմք սուրբ ոսկերաց նոցա»։*

Ասէ ցնա դահճապետն. «Ես յառաջագոյն իսկ ասացի՝ եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղեւ աւադիկ, եթէ յամենայն վնաս նոցա խառն էք դուք»։

Աբրահամ ասէ. «Յո՞ր վնաս»։

Դահճապետն ասէ. «Առաջին ի մահ մոգացն, ապա և յայլսն ամենայն»։

Աբրահամ ասէ. «Այդ ոչ միայն ի մէնջ է, այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ. թագաւորք ձեզ տան հրաման, և դուք ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք»։

Դահճապետն ասէ. «Ի Միհր աստուած երդուեալ իմ. խստագոյն ևս խօսիս քան զվարդապետսն քո. յայտ է եթէ վնասակարագոյնք ևս էք դուք։ Արդ ոչ է հնար ձեր ապրել ի մահուանէ, բայց եթէ երկիր պագանէք արեգական, և կատարիցէք զկամս օրինաց մերոց»։

Խորէն ասէ. «Ցայժմ իբրև զմարդ չարախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաչես։ Եթէ գոյր արեգական ականջք, դու տայիր նմա թշնամանս զնել. արդ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա։ Յի՞մ տեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր. մի՛ բանիւք զփորձ առնուլ կամիս զմեր, այլ հանդէս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ գտանի հայրն քո սատանայ, ոչ միայն ի մէնջ. որ կատարելագոյնքս եմք, այլ և որ կարի փոքրիկն թուիցի քեզ՝ նա դիցէ վէրս սաստիկս յոգիս և մարմինս քո»։

Զայս իբրև լուաւ դահճապետն, սրտմտեալ բարկացաւ ի վերայ

---

1 Դ կողմանսդ Բ գնացեալ են Բ ի զուր   2 Դ սպանէք ԹԻ սպանիք Տ^{2} սպանանէք ԵԺԼԽՀՏ^{1}Տ^{2} մեք այժմ Ը այժմ ևս փխ արդ ևս Դ չիք սուրբ   4 ԱԲԳՁԷԹԻV ցնոսա փխ ցնա ԵԸԺԼԽՀ չիք ցնա ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} դահճապետն ասէ Տ^{3} ասէ ցնոսա դահճապետն ԼՏ^{1} դարձեալ դահճապետն Ը թէ   5 Դ չիք աւադիկ Խ ահաւադիկ   5—6 Թ ամենայն   6 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} վնասս ԱՁԷԹԻVՏ^{3}Λ վնաս Խ չիք նոցա Բ խառն էիք ի նոսա   7 ԳԴԵԸԺԽՀՏ^{1}Տ^{2} վնասս   8 ԲԴ առաջինն Λ մոգուցն ԵԸԺԼԽՀ և ապա Դ չիք և Λ յայլս   10 Բ այլև Բ ևս փխ և   11 Դ ձերոյ Ի ի ձերոց ԽՏ^{2} օրինացն Դ թագաւորքն ձեր Բ ձեր ձեզ Դ տան ձեզ հրաման ԵԸԺԼԽՏ^{1}Տ^{2} հրաման տան ձեզ   12 ԴՀ սպասաւորացն   13 Բ Միրհն ԳԵԸԺԼԽԿՀ Միհր ԴԵԺԼԽ աստուածն ԵԿՀ երդուեալ եմ ԸՏ^{3} է իմ   13—14 Բ եթէ խստագոյն   14 Բ չիք ևս ԲԴԷԹV խօսի սա քան զվարդապետն իւր (Բ զընկերսն) ԸԿ եթէ և   14—15 ԼԽՀ թէ և ԱԲԳԴԵՁԷԸԺԻԼԽԾԿՀVՏ^{1}Տ^{2}Տ^{3} վնասակարագոյնք ԹΛ վնասակարագոյն   15 Ե ևս էք ԴՁԷV և սոքա են ԱԳԴԻ ևս սո-

վերաբերմամբ էլ արդար են վարվել, և դուք զուր ու անմեղ սպանեցիք նրանց, այժմ մենք է՛լ ավելի ենք սպասավորում նրանց սուրբ ոսկորներին»։

Դահճապետն ասաց նրան. «Ես արդեն առաջուց ասացի, թե դու մի շատ հանդուգն մարդ ես. ահա պարզ հայտնվեց, որ նրանց բոլոր հանցանքների մեջ դուք էլ խառն եք»։

Աբրահամն ասաց .«Ո՞ր հանցանքի»։

Դահճապետն ասաց. «Նախ՝ մոգերի սպանման և ապա մնացած բոլոր հանցանքների մեջ»։

Աբրահամն ասաց. «Այդ ո՛չ միայն մեզնից է, այլ նաև ձեր օրենքների կարգի համեմատ. թագավորները հրաման են տալիս ձեզ, իսկ դուք գործում եք ձեր սպասավորների ձեռքով»։

Դահճապետն ասաց. «Միհր աստուծով եմ երդվում, որ դու ավելի խիստ ես խոսում, քան թե քո ուսուցիչները, դրանից երևում է, որ դուք նույնիսկ ավելի վնասակար եք։ Արդ, ձեզ համար մահվանից փրկվելու հնար չկա, բացի արեգակին երկրպագելուց և մեր կրոնի պատվերները կատարելուց»։

Խորենն ասաց. «Մինչև այժմ իբրև մարդ էիր չարախոսում, իսկ այժմ իբրև անպիտան շուն ես վայրահաչում։ Եթե արեգակն ականջներ ունենար, դու նրան նախատել կտայիր. բայց նա բնությամբ անզգա է, իսկ դու չարությամբ ավելի անզգա ես, քան թե նա։ Ինչի՞ մեջ մեզ ավելի պակաս տեսար, քան մեր հայրերն էին։ Չլինի՞ թե խոսքերով ուզում ես փորձել մեզ. այլ հանդես բեր քո չարությունն ու մեր բարությունը, և թող ամոթով մնա քո հայր սատանան ո՛չ միայն մեզնից, որ ավելի կատարյալ ենք, այլև ով քեզ խիստ փոքրիկ է թվում, նա էլ սաստիկ վերքեր կհասցնի քո հոգուն ու մարմնին»։

Երբ այս լսեց դահճապետը՝ սաստիկ բարկացավ նրանց վրա։ Ա-

քա են Բ ևս են քան զնոսա Թ նոքա են փխ էք դուք ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} ապրել ձեզ ԹV ապրիլ Ի ձեզ հնար ապրել   16 ԱԲՁԷԹԻV պագանիցէք Դ պագանէք երկիր Թ արեգականն ԱԳԴԵՁԷԸԺԻԼԽԿՀ կատարէք   16—17 Բ չիք և կատարիցէք զկամս օրինաց մերոց Է օրինացն ձերոց(!) Ի օրինացս Կ օրինացն   18 ԲԴԹԻ չար խօսէիր Կ և այժմ փխ և արդ   19 Խ ի վայր հաճես(!) ԵԹԺԼԽ արեգականն ԴԵԺԼԽ ականջ   21 Բ ի չարութեան Լ անզգայագոյն ևս Խ անզգագոյն ևս(!) ԵԸԺՀՏ^{1}Տ^{2} ևս քան զնա ԱԳԴՁԸԹԺԻԽԿV Յե՞մ փխ յի՞մ ԼԾՏ^{1}Տ^{2} Ե՞րբ փխ յի՞մ   22 Բ բանիւ Դ փորձ ԳԴԵԸԺԼԽԿՏ^{1}Տ^{2} կամիր Հ կամէիր   22—23 Է չիք «մի՛ բանիւք—զմեր» Ի չիք կամիս զմեր   23 Խ զմեզ փխ զմեր ԵԺԽՀ մեր   24 Բ յայնժամ փխ և (ամաչեցեալ) Դ և այժմ   25 ԲԵԺԼԽ կատարելագոյնք Դ չիք և Բ այլ և որ քեզ փոքրիկն ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^{2} թուիցի ԱՁԷԹԻVՏ^{3}Λ թուի Կ ձեզ փխ քեզ   26 Դ դնիցէ ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^{2} յոգի ԱԲԳԴՁԷԹԻ ի մարմինս Դ ձեր փխ քո ԵԼԽՀՏ^{1}Տ^{2} ի մարմին քո ԸԺ ի մարմին   27 Դ Եւ զայս Հ չիք ի վերայ նոցա։ Եւ քարշել չարագոյն քան զառաջինսն. և այնչափ սաստիկ քարշեցին, մինչև բազմաց կարծիք եղեն՝ թէ մեռան։

Իսկ իբրև ժամք երեք ի վերայ անցին, դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն. «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Աստուծոյ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք։ Հապա մի՛ դլար և մի՛ դադարեր, այլ զոր ինչ առ նոսայն արարեր, զնոյն և առ մեզ կատարեա։ Եթէ չարագոյն թուին քեզ գործքն նոցա, կրկին և զմերս համարեսջիք. զի նոքա բանիւք հրամայէին, և մեք գործովք զարդիւնսն կատարէաք»։ Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու գան հարկանել։ Եւ առ մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն. և մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոցունց ականջս մօտ կտրել։ Եւ այնպէս բրեցին, որպէս թէ չիցէ լեալ ի տեղւոջն։

Զարթեան իբրև ի քնոյ ի սաստիկ հարուածոցն, սկսան աղաչելով պաղատանս մատուցանել, և ասեն. «Աղաչեմք զքեզ, քաջ զինուոր թագաւորին. կա՛մ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր մահուամբ, և կամ արա զպատուհաս ըստ օրինակի վերջնոցս։ Զի ահա լսելիք մեր առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր, իսկ հոտոտելիքս դեռ ևս աստէն ի տեղւոջ կան յանցս չարչարանաց. մի՛ կիսապարգև առներ զմեզ յերկնից բարութենէն։ Սրբեցեր ըզմարմինս մեր քաշելով, և զլսելիս մեր կտրելով. սրբեա և զռնգունս մեր հատանելով. քանզի որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն»։

Եւ պատասխանի հեզութեամբ դահճապետն և ասէ. «Եթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով, կարծեմ՝ եթէ և աշակերտէք զիս ի ձեր յամառութիւնդ։ Զի ահա արդ և զխորհուրդս արքունի

---

1 Բ և եւ ԱԲԴՋԷԹԻV զառաջինն Բ այնպէս փխ այնչափ 2 ԵԺԼԽԿՀՏ¹Տ² չիք բազմաց Ի եղև ԳԴԵԾԿՏ² եթէ 3 Բ անցին ի վերայ Տ² անձին(!) ԹԻ խօսել 4 Ա երկոքեան Բ երկոքին 5 Թ ցաւս ԲԳԵԸԺԼԽԿ մարմնոցս Դ մարմնոց ԱՋԷԹԻՀVՏ²Տ³A մարմնոյս 6 ԵՀ չիք մեր Ի հոգևոր Դ մի՛ յագենար փխ մի՛ դլար Կ մի՛ դեգիր(!) Լ չիք մի Բ այլ զինչ Դ չիք ինչ 7 Հ առ նոսա Դ և զնոյն առ մեզ 8 Բ թուեցին ԲԴԵԸԺԻԼԽՏ² գործք Դ կրկին ես VՏ²Տ³ համարեսջիր 9 Բ բանիւ ԲԴ զարդիւնս ԱՋԷ ԹԻV կատարեմք 10 Ի զայրեգնեցաւ(!) Խ չիք և հրամայեաց 10—11 Բ մահու 11 ԲԳ ի նոցանէ փոխեցան ԱՋԷԹԻV վեց այր ԵԸԺԼԽՀՏ¹Տ² վեց վեց այս փոխեցաւ 12 Բ չիք ի (դահճացն) Հ կիսամեռ Բ ի յերկիր Ծ երկիր Թ չիք յերկիր 13 Բ զականջս կտրել չիք մօտ ԳԵԺԻԼԽԿՀՏ² զերկոցուն ականջսն Դ զականջսն 14 Բ չեղեալ փխ չիցէ լեալ ԱՋ լիեալ(!) 15 ԱԳԴԵԷՋԸԹԺԻԽԿՀՏ² իբրև ԲԼVՏ¹Տ³A որպէս փխ իբրև

առաջիններից ավելի գետնաքարշ անել տվեց նրանց. և այնքան սաստիկ գետնաքարշ արին, որ շատերը կարծեցին, թե մեռան։

Բայց երբ երեք ժամ անցավ, նորից սկսեցին խոսել երկուսը և ասացին. «Քիչ ենք համարում այս անարգանքը և ոչինչ մեր մարմնին տված ցավերը՝ աստծու մեծ սիրո հանդեպ, որով նահատակվեցին մեր հոգևոր հայրերը։ Հապա՛, կանգ մի՛ առնի և մի՛ դադարի, այլ ինչ որ նրանց վերաբերմամբ արիր, նույնը կատարի՛ր նաև մեր վերաբերմամբ։ Եթե նրանց գործերը քեզ վատթար են թվում, մերը կրկնապատիկ համարիր. որովհետև նրանք խոսքով էին հրամայում, իսկ մենք գործով կատարում էինք հրամայվածը»։ Այն ժամանակ ե՛լ ավելի զայրացավ նրանց վրա և հրամայեց մահու ծեծ տալ նրանց։ Նրանցից ամեն մեկին վեցական դահիճ փոխվեց, և մինչդեռ կիսամեռ ընկած էին գետնի վրա, հրամայեց երկուսի ականջները տակից կտրել։ Եվ այնպես խոր կտրեցին, որ կարծես երբեք իրենց տեղում չէին եղել։

Սաստիկ հարվածներից զարթնեցին ինչպես քնից, սկսեցին աղաչել ու պաղատել և ասացին. «Աղաչում ենք քեզ, թագավորի քա՛ջ զինվոր, կա՛մ մեզ էլ մահով սպանի՛ր, ինչպես մեր հայրերին, և կամ մեր պատիժն էլ վերջիններիս նման արա։ Որովհետև ահա մեր լսելիքն առողջացան երկնային առողջությամբ, իսկ հոտոտելիքը դեռ մնում են իրենց տեղերում ցավ ու չարչարանքի մեջ. կիսապարգև մի՛ անի մեզ երկնքի բարությունից։ Մեր մարմինները սրբեցին քարշ տալով և մեր լսելիքը՝ կտրելով. սրբի՛ր նաև մեր քթերը կտրելով. որովհետև որքան մեզ տգեղացնես այս հողեղեն [մարմնով], այնքան ավելի կգեղեցկացնես հոգևորով։

Դահճապետը մեղմորեն պատասխան տվեց և ասաց. «Եթե ես ավելի երկար մնամ ձեզ մոտ, կարծեմ ինձ էլ ձեր համառության աշակերտ կդարձնեք։ Ահա հայտնում եմ ձեզ նաև թագավորի կամքը։ Ձեզ պատ-

---

Բ հարուածոց անտի Դ և սկսան 15—16 Բ աղաղակելով փխ աղաչելով ԵԸԺԼԽՀՏ¹Տ² չիք աղաչելով 16 Բ ասեն ցնա Կ չիք և ասեն Դ զձեզ 17 Բ թագաւորին քո Դ զինուորք թագաւորիդ ԵԸԺԼԽԿՀՏ² թագաւորիդ Բ չիք և կամ 18 Բ զպատուհաս Զ զպատուհասատ(!) ԲԻ վերջնոցն 19 Բ լսելիքս է սրբելիք(!) փխ լսելիք ԲԴ զանախտաւորութիւնն է ախտաւորութիւն(!) ԾՏ¹ չիք իսկ 20 ԵԸԺԼԽՀՏ² հոտոտելիք մեր ԲԴԸԽ ի տեղւոջս Բ յայսց չարչարանացս 21 Բ կիսապարգևս Դ ի բարութենէ է բարերարութենէն 22 ԱՋԷԹԻV չիք սրբեա և ԵԸԺԼԽՀՏ¹Տ² զհոտոտելիս փխ զռնգունս 22—23 Ը չիք սրբեա և զռնգունս մեր հատանելով 23 Բ երկրաւորաւքս 24 A գեղեցկագոյն ԵԸԺԻԼՀՏ¹Տ² չիք զմեզ Բ երկնաւորաւքն 25 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² դահճապետն հեզութեամբ Բ և եթէ ԳԴԵԽԿՀՏ² թէ 26 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² մօտ կալով առ ձեզ ԳԴԵԸԼԽԿՀՏ² թէ ԲԴ չիք և 27 Դ զայս զիս ԲԴ արդարև փխ արդ և։

ի վեր հանեմ ձեզ։ Ցայդ վայր եղև հրաման պատուհասից ձերոյ, և ի վերայ գործն պատուհասի՝ երթալ ձեզ յԱսորեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ընդ ձեզ հայեսցի մի՛ ի զմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց թագաւորին»։ —

Ասեն ցնա երանելիքն. «Դու զմեր երկիրս կիսագործ թողեր. մեք յարքունի երկիրն կէս մարմնովք մերովք ոչ վաստակեմք»։

Իբրև զայս լուաւ դահճապետն, աղաչեաց զզինուորսն, որ տանէին զնոսա, և ասէ. «Միայն աստի դուք առէք գնացէք, և հասեալ յԱսորեստան՝ ուր կամ իւրեանց է և շրջեսցին»։

Այս են Հայոց խոստովանողք կատարեալք, որ զխեղութիւնն և զշարչարանսն խնդութեամբ ընկալան յանձինս իւրեանց։ Եւ վասն զի վրիպեցին ի սուրբ մահուանէն, սգով և տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին։ Ոչ ծանր թուէին նոցա կապանք ոտիցն և ձեռացն, իբրև զայն՝ թէ ընդէ՞ր ոչ եղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն։

Եւ իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն Բաբելացւոց, ի գաւառ մի, զոր Շահուղն անուանեն, թէպէտ և էին յարքունի պատուհասին, սակայն և յայտ և գաղտ մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհին։ Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրտմագին էին իբր այն՝ եթէ սակաւ վաստակեցաք և մեծապէս հանգչիմք. և հանապազ ի նմին զղջման կային։

Եւ անդէն թևակոխէին տեսանել զսուրբ կապանսն նախարարացն, լինել սպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա։ Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին, որք էին ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն։ Եւ հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց՝ ազդ առնել ամենայն երկրին, զի հաճոյ թուեսցի ամենեցուն՝ ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սուրբ կապելոցն ի հեռաւոր օտարութեանն։

---

1 ԲԴ հանի փխ հանեմ Ժ զձեզ Բ մինչև ցայդ վայր Դ ցասման պատուհասից ձերոյ 2 Ե գործին(!) փխ գործն Ի լինիլ 3 Բ յարքունիսն ԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 ի ձեզ Տ^1 հայեսցին 3—4 Բ յամառութեանդ 4 ԴՏ^1 պնդեսցին 5 Բ երկրին Բ կիսամարմնովք ոչ կարեմք վաստակել Բ չիք մերովք ԳԵԼԿՏ^2 վաստակիմք ԸԽԶՏ^2 մարմնով մերով ոչ վաստակիմք 7 ԵԸԺԼԽԶՏ^{1}Տ^2 զայս իբրև Ե զինուորսն Բ որք 7—8 Դ տանէին 8 Ը չիք և ասէ Բ առէք աստի և գնացէք Դ չիք դուք Դ առեալ գնացէք 9 Բ ուր և իւրեանց կամն է՝ շրջեսցին Դ կամք Դ չիք և 10 ԲԴ խոստովանողքն ԵԸԺԼԽԶՏ^{1}Տ^2 խոստովանողք Հայոց կատարեալք A չիք կատարեալք Դ զխեղութիւն 10—11 ԲԵԶ զխեղութիւն և զշարչարանս 11 Ե զշարչարանս 12 ԲԴ վրիպեցան 13 Բ զերկայնութիւն Բ թուէր կապանս Խ կապանքն 14 Դ ոտից ԵԸԺԼԽԶՏ^{1}Տ^2 ձեռացն և ոտիցն ԸԽ իբրու Բ այն ԴԵԼԽԿԶ եթէ Բ չեղեաք ԳԵԸԺԼԽԶՏ$_1$ չեղաք 14—15 Ի հաւասարիլ 15 Բ քաջ նահատակացն 16 Դ չիք Եւ 16—17 Բ գեաւղ փխ գաւառ 17 Բ

ելու վերաբերյալ եղած հրամանն այդքան էր. իսկ այդ պատժից հետո դուք պետք է գնաք Ասորեստան և մշակություն անեք արքունի գործերում. որպեսզի ով ձեզ նայի՝ այդ նույն համառության մեջ հաստատ չմնա թագավորի հրամանների դեմ»։

Երանելիներն ասացին նրան. «Դու մեր երկիրը կիսագործ թողիր[161], մենք արքունի երկրում մեր կես մարմիններով չենք կարող աշխատել»։

Երբ այս լսեց դահճապետը, նրանց տանող զինվորներին աղաչեց և ասաց. «Այստեղից դուք առեք գնացեք միայն, երբ Ասորեստան հասնեն, թող շրջեն՝ ուր կամենում են»։

Սրանք են Հայոց կատարյալ խոստովանողները, որոնք ուրախությամբ իրենց անձերի վրա ընդունեցին խեղությունն ու չարչարանքը։ Բայց որովհետև ազատվեցին սուրբ մահից, սգով ու տրտմությամբ էին գնում երկար ճանապարհը։ Նրանց ծանր չէին թվում ոտների և ձեռների կապանքները, այլ ավելի այն, թե ինչո՞ւ արժանի չեղանք հավասարվելու քաջ նահատակներին։

Երբ նրանց տարան-հասցրին Բաբելացոց երկիրը, մի գավառ, որ Շահուղ[162] է կոչվում, թեպետև արքունի պատժի ենթակա էին, սակայն թե՛ հայտնի և թե՛ գաղտնի մեծ ընդունելություն գտան այն երկրի բնակիչների կողմից։ Բայց երանելիներն. այնուամենայնիվ. խիստ տխուր էին այն իմաստով, թե քիչ ենք աշխատել և շատ ենք հանգստանում. և շարունակ նույն մտատանջության մեջ էին։

Նրանք աշխատում էին տեսնել նախարարների սուրբ կապանքները, ծառայել նրանց մարմնավոր պիտույքներին։ Այս բանն իմաց տվին այն երկրի մեծամեծներին, որոնք քրիստոնեության նույն սուրբ ուխտի մեջ էին։ Եվ բոլոր մեծամեծներն ու փոքրերը հավանություն տվին սրան՝ հայտարարել ամբողջ երկրում, որ ամենքն էլ համաձայն լինեն մարմնավոր պիտույքներ [հայթայթելու] միջոցով մասնակից լինել սուրբ կապվածներին հեռավոր օտարության մեջ։

Շապուխն է Շահողն Բ այլ թէպէտ և Դ չիք և 17—18 ԲԳԴԵԺԽ պատուհասի 18 ԲԴԵԼ չիք և (յայտ) Դ ի յայտ և ի գաղտ ԵԸԼԿԶ յայտնի ԺԽ սակայն յայտնի և գաղտ 19 ԴԼ սակայն և երանելիքն ԵԸԺԽԶՏ^2 այլ փխ սակայն Դ յայն եւ 19—20 ԵԸԺԼԽԶ Տ^{1}Տ^2 տրտում էին է տրտմագոյն 20 ԲԳԴԵԸԺԼԽԿԶՏ^{1}Տ^2 իբրև ԱՁԷԹԻVՏ^{3}A իբր 21 ԱԳՁԷԹԻԿV և իբրև հանապազ A զեղջի Հ զային(!) 22 Կ չիք զսուրբ ԲԳԴԵԶ կապանս 23 Բ չիք սպասաւոր ԻՏ^1 լինիլ ԼՏ^{1}Տ^2 չիք մարմնաւոր Բ և լինիլ նոցա բուռ մարմնաւոր պիտոյից ԳԴԵԸԺԼԽԿԶՏ^2 և լինել Բ չիք նոցա Բ Եւ իմացուցին 24 Բ ի սուրբ Խ չիք սուրբ 24—25 Բ ուխտին քրիստոնէութեան Դ ուխտին Հ քրիստոնէութեան ԼՍՏ^1 չիք «աշխարհին—մեծամեծաց» 25 Ձէ յամենեցուն Բ ամենեցունց 27 ԲԴ պիտոյից Ի լինիլ Բ կապանացն փխ կապելոցն 28 ԵԶ օտարութեան ՁէV օտարութենէն։

Եւ այսպէս ամ յամէ ժողովէին՝ ըստ իւրաքանչիւր կարի մարդկանն, ոմն սակաւ և ոմն շատ, ոյր զինչ և ի ձեռս պատրաստութիւն լինէր, եթէ դրամոց և եթէ դահեկանաց, ժողովէին կազմէին տային յերանելիսն՝ տանել նոցա։ Եւ այսպէս յարբանեկութեան կային, մինչև տասն ամն լցաւ սպասաւորութեանն։

Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ի ջերմոց աշխարհին, և անդադար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեչովն և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան, սաստիկ տապով հարեալ ի խորշակէ մեռանէր սուրբն Խորէն, և աւանդեալ լինէր ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վկայսն։

Իսկ երանելին Աբրահամ կայր ի նմին առաքինութեան անդադար. և զամենայն տուրս հաւատացելոցն շրջէր ժողովէր և տանէր ի մեծ հեռաստանն, և ինքն մատակարարէր ըստ իւրաքանչիւր կարօտութեան։ Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յերկոտասաներորդ ամն պատժաւորացն, մինչև աղաչել զնա միաբան ամենեցուն, զի հասանեսցի երթալ յաշխարհն Հայոց. զի ընդ մտանել նորա առ նոսա՝ ի նմա տեսցեն և զքաջ նահատակսն, որք կատարեցան սրով, ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չարչարանացն։

Եւ յորժամ մարտիրոսք և խոստովանողք և կապեալք նովաւ տեսանին, նովաւ օրհնի աշխարհն ամենայն, նովաւ օրհնին և տղայք նոցա յաճումն, նովաւ զգաստանան երիտասարդք նոցա ի սրբութիւն, նովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութիւն, նովաւ ուսանին իշխանք նոցա զմարդասիրութիւն, նովաւ անկանի գութ յԱստուծոյ ի սիրտ թագաւորին՝ շինել և խաղաղութիւն առնել բոլոր աշխարհին։ Նովաւ եկեղեցիքն պարծին իբրև քաջ և կատարեալ զինուոր, նովաւ վկայարանքն զարդարին, նովաւ և վկայքն ցնծա-

---

1 Լ այնպէս 2 ԲԴ որ փխ ոյր 2—3 Կ ում փխ ոյր Բ զինչ և լինէր փխ զինչ և ի ձեռս պատրաստութիւն լինէր Դ չիք և ԽԸժԼԽՀՏ¹Տ² պատրաստ փխ պատրաստութիւն 3 ԱԲԳԴԵԶԷԸԹժԻԼԽԿՀV դրամաց 4 ԲԴ և տային զերանելիսն Բ այնպէս 4—5 ԵԸՀՏ² յարբանեկութիւն 5 ԲԴ ամ Բ սպասաւորութեան նոցա Դ լցաւ նոցա սպասաւորութեանն ԵՀ սպասաւորութեան 6 Բ չիք յոյժ Խ և վասն յոյժ ջերմագոյն խստութեամբ պահէին Դ ջերմոց 7 Ե ի ճանապարհորդութեան էԻV Շաւուղ Թ Շաւուղս 7—8 ԱԶԷԹԻV Մեչաովն Բ Շաւիղս ընդ Մեչուր ԳԵԸժԼԽԿ Մեչան Հ Մեչյօն Տ² Մեչուր Դ ընդ Մէջան փխ ընդ Մեչովն 8—9 Բ և ընդ Խուժաստան 9 Է սակաւիկ փխ սաստիկ Բ ի սաստիկ տապոյն Բ խորշակէն Դ խորհակէ(!) 10 Դ աշխարհէն 11 ԲԴԽԿ առաքինութեանն Է առաքինութեամբ 11—12 Դ յանդադար 12 Բ չիք և Բ զամենայն հաւատացեալսն 12—13 Բ շրջէր և տանէր, չիք ժողովէր ԸԽ շրջէր և ժողովէր ԳԴԵժԼԿՀՏ¹ և ինքնին 14 ԲԴժԽ կարօտութեանն Թ երկարեցաւ Ե յերկեցաւ(!) Բ զերկոտասան Տ¹ ի տասներկու 15 ԳԴԵՏ¹ ամ Դ մինչ Բ չիք միաբան 16 Բ հասանեսցի նա Խ չիք ընդ Տ² ի փխ ընդ 16—17 Է չիք «զի ընդ—առ նոսա» ԲԵ

Եվ այսպես տարեցտարի ժողովում էին յուրաքանչյուր մարդու կարողության համեմատ, ո՛րից քիչ և ո՛րից շատ, ում ձեռին ինչ որ պատրաստ կար, թե՛ դրամ և թե՛ դահեկան, ժողովում-պատրաստում և տալիս էին երանելիներին, որ տանեն նրանց։ Եվ այսպես ծառայեցին նրանք, մինչև լրացավ սպասավորության տասը տարին։

Եվ որովհետև խիստ դաժան կյանքի մեջ էին այն շոգ երկրում և անդադար ճանապարհորդում էին նույն Շահուղ, Մեչովն[163] և Քաշկար[164] երկրներում և ամբողջ Ասորեստանում ու Խուժաստանում, սաստիկ տոթից խորշակահար մեռավ սուրբ Խորենը և ամփոփվեց այն երկրի բնակիչների կողմից սուրբ վկաների հետ։

Իսկ երանելի Աբրահամը շարունակ նույն առաքինի գործն էր կատարում. շրջում-հավաքում էր հավատացյալների բոլոր տուրքերը և տանում էր մեծ հեռաստանը և անձամբ բաժանում յուրաքանչյուրի կարիքների համեմատ։ Եվ այսպես շարունակվեց մինչև պատժվածների տասներկուերորդ տարին, մինչև որ բոլորը միասին աղաչեցին նրան, որ համաձայնի գնալ Հայոց աշխարհը, որպեսզի երբ նա հասնի նրանց մոտ, նրա մեջ տեսնեն նաև այն քաջ նահատակներին, որոնք սպանվեցին սրով, նրանում տեսնեն նաև չարչարանքների սուրբ կապանքները։

Եվ երբ մարտիրոսները, խոստովանողներն ու կապվածները հանձին նորա տեսնվեն, նրա շնորհիվ կօրհնվի ամբողջ աշխարհը, նրա շնորհիվ կօրհնվեն և կաճեն նրանց երեխաները, նրանով կզգաստանան և դեպի սրբություն կդիմեն երիտասարդները, նրանով կհամեստանան և կիմաստանան նրանց ծերերը, նրա շնորհիվ նրանց իշխանները մարդասիրություն կսովորեն, նրա շնորհիվ Աստծուց գութ կընկնի թագավորի սիրտը՝ շենացնել ամբողջ երկիրը և խաղաղություն տալ նրան։ Նրանով կպարծենան եկեղեցիներն իբրև կատարյալ և քաջ զինվորով, նրանով կզարդարվեն վկայարանները, նրանով վկաներն էլ կցնծան և կը-

---

զի ի մտանելն նորա ի նոսա ԳԴ մտանելն Ը ի մտանել ժԼՀ ի մտանելն 17 ԴԵԶԻԿՀ որ 17—18 ԼՑՏ¹ չիք «և զքաջ—տեսցեն և» 18 Ի չիք և ԵժԿ կապանսն Հ կապանս ԴԵՀ չարչարանաց 19 Է յորում փխ յորժամ Ե մարտիրոսքն Հ մարտիրոսքն ԸԽ չիք և կապեալք 19—20 Դ չիք նովաւ (տեսանին) 20 ԱԹԻV տեսանէին Գ չիք օրհնի աշխարհն ամենայն Չ օրհնին Դ օրհնին և Բ և աշխարհն ԴԵԸժԼԽԿՀՏ¹Տ² չիք և 20—21 ԱՉ տղայքն ԱԴՉԷԹV զգաստանան Գ նովաւ օրհնի և աշխարհն ամենայն (այստեղ է բերված 20-րդ տողից) 21—22 Դ ի սրբութեան 22 Բ իմաստութեամբ Հ չիք «նովաւ—յիմաստութիւն» 22—23 Բ նովաւ ուսանի աշխարհն նոցա զմարդասիրութին Բ նովաւ և գութ անկանի ԳԴԵԸժԼԽԿՀՏ¹Տ² դութ անկանի 24 ԱԲԳԷԸԹԻVՏ³ ի սիրտս Դ թագաւորիս 25 ԲԴ նովաւ և Բ եկեղեցիքն մեր Դժ եկեղեցիք ԵԸժԼԽՀՏ¹Տ² կատարեալ և քաջ 26 ԲՏ² զինուորակցաւ ԳԴԵԸժԻԼԽԿՀՏ¹ զինուորաւ Դ վկայարանք Է վկայարանն Բ նովաւ և (վկայարանքն) Դ զարդարին ի փառս աստուծոյ։

ցեալ բերկրին։ Նովաւ և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարիւնաբուխ վկայից ցանեալ և ցրուեալ սպիտակութիւն սուրբ ոսկերացն։ Յորժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստովանողին զլայնատարած տեղիս պատերազմին թէպէտ և երկիր իցէ ըստ բնութեան, յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջեսցի, կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն։

«Գիտեմք, ասեն, յորժամ տեսցեն զսա ամենայն միայնակեացք աշխարհին Հայոց, սովաւ յիշեսցեն զհոգևոր գունդս պատերազմողացն, որ փոխանակ մեր, ասեն, ետուն զանձինս ի մահ, և հեղին զարիւնս իւրեանց ի հաշտութիւն պատարագ Աստուծոյ։ Սովաւ յիշեսցեն զսուրբ քահանայսն, որք խողխողեցան յօտարութեանս և ցածուցին զտրտմութիւն բարկութեան թագաւորին։ Սովաւ թերևս և զմեր կապանս յիշեսցեն, և աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ զի գերէդարձ լիցի մեզ անդրէն ի հայրենի երկիրն մեր։

«Քանզի յոյժ անձկացեալ եմք՝ ոչ միայն ըստ մարմնոյ կարօտութեան, այլ առաւել տեսանել զսուրբ եկեղեցիսն մեր և զսրբասէր պաշտօնեայսն մեր, զոր ի նմա կարգեալ հաստատեցաք։ Եւ եթէ միւսովս յաջողեսցէ մեզ Աստուած երթալ և լնուլ զկարօտութիւն մնացելոցն, գիտեմք զի և մեզ բանայ Աստուած զդուռն ողորմութեան իւրոյ՝ ընդ նոյն ճանապարհ երթալ, ընդ որ ոտք սրբոյս կարապետեն»։

Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհ նախարարացն՝ մեծաւ թախանձանօք ածէին զխոստովանողն ի հաւանութիւն։ Եւ վասն

---

1 ԲԹ չիք և (դաշտն) 1—2 S^1 նովաւ դաշտ և այգի պայծառացեալ ծաղկալից լինին Բ Աւարայր 2 A անձրևաբեր ԱԶԷԹԻV ամպոյ (V ամոյ!) Կ յամպոց 2—3 Բ այլ յորդաբուխ վտակացն ցանեալք և ցրուեալք սպիտակութիւն ոսկերացն ԳԴԵ բուղխ վտակաց ցանեալք 3 ԸԺԼԽԿՀS^1S^2 վտակաց փխ վկայից ԱԶԷԹԻVS^3A ցանեալ ԺԼԽԿՀ ցանեալք A ցրուեալք Խ չիք սուրբ ԳԴԵԺԼԿՀS^1S^2 սպիտակութիւն ԸԽ ի սպիտակութիւն ԱԶԷԹԻVS^3A սպիտակութիւնք 4 Դ ամենավաստակք Բ ոտքն ԸԽS^1 սուրբ խոստովանողին 5 ԲԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 զտեղիսն ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 չիք իցէ Դ բնութեանն A չիք թէպէտ և երկիր իցէ ըստ բնութեան 6 ԲԳԸԺԼS^3 մարտիրոս ԴԵ մարտիւրոս Խ չիք մարտիրոս 6—7 Բ կենդանին առ կենդանին երթիցէ և ԳԴԸԺԼԽS^1S^2 շրջիցի Ե երթալ 7 Բ լինիցի S^2 լիցի ԱԲԹԻ կենդանութիւն Գ ուրախութիւն և կենդանութիւն Դ լինի կրկին ուրախութիւն ԵԸԺԼԽՀS^1S^2 ուրախութիւն փխ կենդանութիւն 8 Բ տեսանեն Է զնա Խ զայր փխ զսա ամենայն ԲԳԴԵԸԺԼԿՀS^1S^2 չիք ամենայն 9 Թ նովաւ (ուղղված՝ «սովաւ»-ից) Բ յիշեն ԲԳԵԸԺԼԽԿՀ գունդն Դ գունդ 9—10 ԱԳԵԶԷԻԼԽ պատերազմողաց 10 ԲԴԸ չիք ասեն ԲԸԽS^2 զանձինս իւրեանց 11 ԵՀ ի հեշտութիւն A ի հաշտութեան Բ պատարագաց 11—12 ԲԿՀ յիշեսցեն զսուրբ քահանայսն ԱԶԷԹԻV S^3A յիշին սուրբ քահանայքն ԳԴԵԸԹԽԾԿՀS^1S^2 յիշեն զսուրբ քահանայսն Թ նովաւ (տես տող 9) 12 ԱԶԷԹԻ քահանայք ԳԴԵ որ Է յոր 12—13 ԲԴ յօտարութեանն Ի ի յօտարութեանս Բ զտրտմութիւն և զբարկութիւն Կ զտրտմութիւնս 13 Է չիք բարկութեան 13—14 ԱԲԳԴԵԸԹԺԻԼԽԿՀS^1S^2 և զմեր ԶԷVS^3A զի զմեր Թ նովաւ (տես տող 9) 15 Բ դարձ փխ գերէդարձ ԸԽ լինի Բ անդրէն մեզ Գ աշխարհն 16 ԼS^1 չիք մեր 17 Կ չիք յոյժ Ե անձկացեալ եմք Դ ձանձրացեալ եմք փխ անձկացեալ եմք 17—18 Բ ցանկութեան մեր փխ կարօտութեան 18 Բ այլ եւ առաւել Կ այլև 18—19 ԵՀ չիք և զսրբասէր պաշտօնեայսն մեր 19 Լ պաշտօնեայս Բ ի նմին Ա կարգել 20 ԲԳԴԼԽԿ միովս փխ միւսովս ԵԸԺՀS^1S^2 մերովս փխ միւսովս Բ յաջողեսցէ Դ աջողեսցէ Դ երթեալ 21—22 Բ սրբոցն կարապետեցին 24 Բ խօսելով փխ խորհելով Խ խորհելով խորհուրդ 25 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 ածին Բ ի հաւան զխոստովանողն Բ չիք Եւ Կ չիք վասն Բ եւ է։

բերկրին։ Նրանով նաև Ավարայրի դաշտը պայծառանալով՝ ծաղիկներով կլցվի, ո՛չ թե անձրևաբեր ամպերից, այլ նահատակների սուրբ արյունով և նրանց ցիրուցան եղած սուրբ ոսկրների սպիտակությամբ։ Երբ խոստովանողն իր բազմավաստակ ոտքը դնի պատերազմի լայնատարած տեղերը, թեև ըստ իր բնության հող է, երբ կենդանի մարտիրոսը շրջի այնտեղ, կենդանին կենդանիների մոտ գնալով՝ ամբողջ աշխարհը նորից կենդանություն կստանա։

«Գիտենք, ասում են, երբ սրան տեսնեն Հայոց աշխարհի բոլոր միայնակյացները, սրանով կհիշեն պատերազմողների հոգևոր խմբերին, որոնք իրենց անձը, ասում են, մեր փոխարեն մահվան ենթարկեցին և իրենց արյունը թափեցին իբրև հաշտության զոհ Աստծուն։ Սրանով կհիշեն այն սուրբ քահանաներին, որոնք սրախողխող արվեցին այս օտարության մեջ և իջեցրին թագավորի սաստիկ բարկությունը։ Սրանով թերևս մեր կապանքներն էլ հիշեն և աղոթք անելով խնդրեն Աստծուն, որ մեզ համար գերությունից դարձ լինի դեպի մեր հայրենի երկիրը։

«Որովհետև սաստիկ փափագում ենք ո՛չ միայն մարմնավոր կարոտը լցնելու, այլ ավելի ևս տեսնելու մեր սուրբ եկեղեցիներն ու մեր սրբասեր պաշտոնյաներին, որոնց մենք նշանակեցինք ու հաստատեցինք այնտեղ։ Եվ եթե մյուս անգամ աստված հաջողի մեզ գնալ և լրացնել մնացածների կարոտությունը, գիտենք, որ աստված մեզ համար էլ կբանա իր ողորմության դուռը՝ միևնույն ճանապարհով գնալու, որով այս սրբի ոտքերը կառաջնորդեն»։

Այս խորհուրդը մտածելով աստվածաշնորհ նախարարները՝ մեծ թախանձանքով առան խոստովանողի հավանությունը։ Եվ որովհետև երզի ոչ էր սովորութիւն երբէք բարւոյն ընդդէմ դառնալ, ըստ առաջին սովորութեան և յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն զմիաբան հաւանեցելոցն յաստուածային առաքինութիւնն։ Եկն եմուտ յաշխարհն Հայոց Մեծաց։

Փութացան և եկին ընդ առաջ նորա վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազմութիւն ազատաց և շինականաց։ Անկանէին և փարէին զոտիւք և զձեռօք առաջի սրբոյն և ասէին. «Օրհնեա՜լ Տէր Աստուած ի բարձունս, որ առաքեաց մեզ զհրեշտակ յերկնից՝ բերել մեզ զաւետիս յարութեան, զի լինիցիմք ժառանգք արքայութեան։ Զի ահա ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամենեսեան զհրաժարեալսն յուսով յարութեամբ, և զկապեալսն ակնկալութեամբ արձակելով։ Ի քեզ տեսանեմք և զաշխարհիս շինութիւն խաղաղութեամբ. քև եկեղեցիքն մեր ցնծացեալ բերկրին, և քև սուրբ վկայքն մեր անդադար լիցին մեզ ի բարեխօսութիւն առ Աստուած։ Օրհնեա՜ զմեզ, սուրբ հայր մեր. դու ես բերան հանգուցելոցն, խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի յոգիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս սրբոցն։

«Հորդեցեր ճանապարհ այնոցիկ, որ անձկացեալ էին գալ յերկիր իւրեանց. խնդրեա յԱստուծոյ զի ստէպ եկեսցեն զհետ սուրբ կարապետիդ։ Եւ որպէս հորդեցեր զարգելեալ ճանապարհ երկրի, բա՛ց և յերկինս զդուռն աղօթից մերոց, զի և մեր մեղաւորաց մտցեն պաղատանք առաջի Աստուծոյ ի բարեխօսութիւն նոցին կապելոց. և մինչդեռ եմք յելանելի մարմինս. որպէս տեսաք զքո զերանելի սրբութիւնդ, տեսցուք և զսիրելի անձկալիսն մեր, որ ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոգիս և ի մար-

---

1 Հ չէր Λ սովոր երբէք S^1S^2 երբէք սրբոյս բարւոյն   1—2 ԱՁԷԹԻV սովորութիւնն ըստ առաջին ԲԳԴԸ սովորութեանն   2 Գ յայսր Բ վարի փխ վայրի   2—3 ԱԳՁԷԿV ի կատարել Բ և կատարեաց   3 Ի զհրամանսն ԲS^2 հաւանեալցն ԵԸԺԼԽՀS^1 հաւատացելոցն Լ աստուածային .   3—4 Ե առաքինութիւն   4 Բ արդ եկն եմուտ ԲԵԸԺԼԽՀS^1S^2 Հայոց Մեծաց ԳԿ Մեծ Հայոց Դ Մեծաց Հայոց ԱՁԷԹԻVS^3Λ չիք Մեծաց   5 Բ փութացան վաղվաղակի Դ չիք և ԲԴ չիք վաղվաղակի Գ մեծամեծ   6 Բ չիք և (ամենայն) Բ չիք բազմութիւն Դ բազմութիւնք   7—8 ԲԳԴԵԸԺԽԾԿՀ անկանէին առաջի փարէին զոտիւք և զձեռօք սրբոյն և... ԸԺԽԾՀS^1S^2 չիք առաջի   8 ԲԳԴԵԸԼԽԿՀS^2 օրհնեալ է   9 Λ հրեշտակ S^2 զհրեշտակ իւր Բ իւր ի բարձանց փխ յերկնից VS^3Λ աւետիս   10 ԳԵԸԺԽԿՀ չիք «զի—արքայութեան» Ծ լիցիմք Դ ժառանգք ԱԲՁV արքայութեանն   11 Բ զամենայն Դ զամենեսեան Բ յուսով ակնկալութեամբ   12 Λ արձակելոյ Բ արձակեալ Խ յարձակելով   13 ԱԴԵՁԸԹԺԻԽԿՀS^3 զաշխարհին է զյաշխարհին ԲԵՀ շինութիւն և խաղաղութիւն (Բ զխաղաղութիւն) ԲԴ չիք և ԱԴՁԷԸԹԺԻԼԽԾԿV$S^1S^2S^3$ խաղաղութեան ԳΛ խաղաղութեամբ ԲԳ եկեղեցիք Դ չիք մեր   13—14 Բ պայ-

բեք սովորություն չուներ բարի բանին հակառակ գնալ, իր նախկին սովորության համեմատ այստեղ էլ շտապեց շուտով կատարել աստվածային առաքինության հետևողների միաբան հրամանը։ Եկավ-հասավ Մեծ Հայոց աշխարհը։

Իսկույն շտապեցին և նրա առաջ դուրս եկան տղամարդիկ և կանայք, մեծերն ու փոքրերը և ազատների ու շինականների ամբողջ բազմությունը։ Ընկնում էին և փաթաթվում սրբի ոտներով ու ձեռներով և ասում. «Օրհնվա՜ծ լինի տեր աստվածը բարձունքում, որ երկնքից մեզ համար պատգամաբեր ուղարկեց՝ հարության ավետիս բերելու մեզ, որպեսզի արքայության ժառանգ լինենք։ Որովհետև ահա քո մեջ կերպարանք առած ենք տեսնում հարության հույսով բոլոր հրաժարվածներին և արձակման ակնկալություն ունեցող կապվածներին։ Քո մեջ ենք տեսնում նաև մեր աշխարհի շինությունը խաղաղությամբ. քեզանով մեր եկեղեցիները ցնծում են և բերկրանքի մեջ են, և քեզանով մեր սուրբ վկաները անդադար բարեխոս կլինեն մեզ համար աստծու մոտ։ Օրհնի՛ր մեզ, մե՛ր սուրբ հայր, դու հանգուցյալների բերանն ես, մեզ հետ խոսի՛ր հայտնի օրհնությամբ, որպեսզի մեր հոգիների մեջ ծածուկ լսենք սրբերի օրհնությունները։

«Ճանապարհ բաց արիր նրանց համար, ովքեր փափագում էին գալ իրենց երկիրը. խնդրի՛ր Աստծուց, որ շուտով գան սուրբ կարապետիդ հետևից։ Եվ ինչպես որ բաց արի՛ր երկրի արգելված ճանապարհը, երկնքում էլ բա՛ց արա մեր աղոթքների դուռը, որպեսզի մեր՝ մեղավորներիս՝ պաղատանքն էլ հասնի աստծու առաջ նույն կապվածների բարեխոսության համար. և քանի դեռ այս մահկանացու մարմինների մեջ ենք, ինչպես որ տեսանք քո երանելի սրբությունը, տեսնենք նաև մեր անձկալի սիրելիներին, մենք, որ շատ ժամանակներից ի վեր կտրված

ծառացեալ փխ ցնծացեալ   14 ԳԴԵԸԺԼԽԿՀS^1S^2 բերկրեսցին Բ չիք քև սուրբ ԱԳԵՁԷԸ ԺԻԼԿՀ քն և ԴԹԽ չիք և (քև) S^2 չիք և քև ԱԳԵՁԷԸԹԺԻԼԽԿՀS^1 վկայարանքն Ժ վկայ(արան)քն (փակագծում գրվածը ճեռտ է; ավելացրած լուսանցքում) ԲS^2 վկայքս Հ չիք մեր Ը լինիցին Բ չիք ի   15—16 Հ սուրբ հանգուցելոցն   16 ԱՁԷԹԻV խօսեալ փխ խօսեաց   17 Հ ոգիս ԱԲԴԿ զօրհնութիւն ԳՁԷԹԻV օրհնութիւն   18 ԲS^2 Հորդեցեր մեզ ճանապարհ և այնոցիկ Ե անձկացեալ Զ յանձկացեալ Է յանձնկացեալ ԲS^2 են փխ էին   18—19 Բ ի յերկիր   19 ԲԴ չիք սուրբ V չիք զհետ   19—20 V զսուրբ կարապետիդ Բ յերկրի   21 ԲԴ չիք և ԲԵԸԺԼԽԾՀS^1S^2 մեղաւորացս ԱԳԴՁԷԹԻԿVS^3Λ մեղաւորաց   22 ԳԴԵ նոցուն ԸԺԼԽՀS^1S^2 նոցունց   22—23 ԲԴ կապելոցն   23 ԳԴԺԼԽS^1 մարմնիս Ը մարմնոյս   23—24 Խ յերանելի Λ երանելի   24 Բ զերանելի փխ զսիրելի ԴԵ անձկալիսն   25 Ե ժամանակ   25—26 ԱԲԳԴԵՁԷԺԻԼԿՀS^1 ի մարմինս Բ ի յոգիս և ԴԵԺԼS^1 յոգի և ի Λ չիք ի ԸԽ յոգի և ի մարմին Հ ոգի և ի S^2 ի հոգի և ի մարմինս մեր։

մինս մեր։ Արդ հաւատամք յանսուտ յոյսն, զի որպէս լցեալ կատարեցաւ մեծ տեսիլս ի սուրբ սէր քո, այսպէս և ընդ մօտոյ ունիմք տեսանել զճշմարիտ վկայսն Քրիստոսի, որ հանապազ խանդակաթ եմք ի տեսիլս երկնաւոր գեղոյ նոցա»։

Բայց երանելի խոստովանողն, թէպէտ և այսպէս սիրով ընկալեալ եղև յամենայն աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտութեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց, և առաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ։

Զոր եթէ կամիցի ոք ի կարող արկանել, դժուարաւ կարասցէ ասել զվարս առաքինութեան նորա։ Զի եթէ զտքնութիւնն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամենայն գիշերս. և եթէ զսակաւապիտութիւնս կերակրոցն, համարեաց՝ եթէ զանկերակուր հրեշտակացն բերէր զնմանութիւն։ Եթէ զհեզութիւն ցածութեանն կամիցիս ասել, ոչ զոք ի կենդանեաց կարիցես գտանել նման նմա. և եթէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել, դարձեալ զոր օրինակ չպատրի մեռեալ ի կարասի, զնոյն օրինակ ճշմարտութեամբ և առ երանելին իմասցիր։

Անյագական ձայնիւ հանապազորդեալ էր ի պաշտաման, և անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ ի բարձունս խօսէր։ Այդ եղև նա անհամելոց, և խթան ընդոստուցիչ ամենայն հեղգացելոց։ Դսրովեցաւ նովաւ ագահութիւն, և կարի յոյժ ամաչեաց նովաւ շուայտութիւն որկորամոլութեան։ Առողջութիւն եղև նա աշխարհիս Հայոց, և բազում վիրաւորք ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն։ Եղև նա վարդապետ կատարեալ վարդապետաց իւրոց, և սուրբ հայր խրատտու հարանց իւրոց։ Ի լուր համբաւոյ նորա իմաստնա-

---

1 Բ ի յանսուտ ԲԴԼՏ² յոյսն մեր Բ չիք զի 2 ԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹Տ² մեծ տեսիլս Բ մեծ տեսիլն Դ չիք և ԳԵԺԼԽԿՏ¹ ընդ մօտս Դ ընդ մօտ ԱՋԷԹԻՎՏ³A ի քեզ փխ մեծ ի ի մօտոյ 3—4 Գ խանդաղատիմք ԵԸԺԻԼԽԿՀ խանդաղակաթ եմք 4 Բ տեսանել փխ ի տեսիլս Դ ի տեսիլ Բ գեղոյն նորա 5 Բ բայց և 6 Ի չիք եղև 7 ԵԸԺԼԽՀՏ¹ խնդրեաց փխ ընտրեաց ԲԻ չիք իւր 7—8 Դ տեղ մի 8—9 Բ եղբարբք երկու 9 Տ² երկու Բ կատարեալ Բ իւրեանց Դ լաւ փխ մեծաւ 10 ԲԵԺԼԽՀՏ¹Տ² կամեսցի ԸԽՏ² զի եթէ կամեսցի ի գիր կարգ ԵԺԼԽՀՏ² ոք ի գիր արկանել Բ կարէ ԸԽ կարգեսցէ 11 ԱՋԷԸ զվարս սուրբ Բ զսուրբ վարս ԳԵՋԷԹԺԻԼԽԿՀՏ¹Տ² սուրբ առաքինութեան ԵՀ զտքնութիւն Բ ասիցեմք 12 Բ զգիշերն Գ գիշերսն Դ գիշերն 12—14 ԵԸԺ զսակաւապիտութիւն ԱԲԳԴՋԷԹԻԿՎ զսակաւապիտութիւն կերակրոցն (Բ կերակրոց) կամիցիս ասել, համարեաց եթէ (Բ թէ) Հ զսակաւապիտութիւն կերակրոցն, հրամայեաց բերէր զնմանութիւն 13 Ը կերակրոց Դ համարեա ԲՏ² իմն հրեշտակաց (Տ² հրեշտակացն) ԴԵԼԽ

ու պաշարված ենք մեր հոգիներով ու մարմիններով։ Արդ, հավատում ենք անսուտ հույսին, որ ինչպես կատարվեց-լրացավ քո սուրբ սիրո մեծ տեսիլը, այնպես էլ մոտ ժամանակներս կտեսնենք Քրիստոսի ճշմարիտ վկաներին, որոնց երկնավոր գեղեցկության տեսքին փափագում ենք շարունակ»։

Բայց երանելի խոստովանողը, թեպետև այսպես սիրով ընդունվեց ամբողջ աշխարհի կողմից, ամենևին չուզեց որևէ մեկին մոտենալ մարմնավոր կարիքների բավարարման համար, այլ ընտրեց իրեն համար բազմամբոխ ժողովրդից մեկուսի մի տեղ և երեք առաքինի եղբայրների հետ մեծ ճգնությամբ ավարտեց իր կյանքը։

Եթե մեկը կամենա նկարագրել, դժվար թե կարողանա պատմել նրա առաքինի վարքը։ Որովհետև եթե նրա արթնությունն ասես, անշեջ կանթեղի նման վառվում էր ամբողջ գիշերներ. թե սակավապետությունն ասես կերակուրների վերաբերմամբ, համարյա թե անկերակուր հրեշտակներին էր նմանվում։ Եթե հեզությունն ու խոնարհությունն ուզենաս ասել, կենդանի էակների մեջ չես կարող նրա նմանը գտնել. իսկ եթե անընչասիրությունն ուզենաս ասել, ինչպես որ մեռած մարդը կայքով չի խաբվի, այդպես էլ ճշմարտությամբ իմացիր այս երանելու վերաբերմամբ։

Անդադար ձայնով շարունակ պաշտամունք էր մատուցանում և անհատնում աղոթքով միշտ աստծու հետ խոսում էր բարձունքում։ Այդ եղավ նա անհամացածների համար, և դրդիչ խթան հանդիսացավ բոլոր ծուլացածների համար։ Նրանով պախարակվեց ագահությունը, և շվայտ որկրամոլությունը սաստիկ ամաչեց նրա շնորհիվ։ Նա առողջություն եղավ Հայոց աշխարհի համար և շատ վիրավորներ գաղտնի կերպով առողջություն գտան նրա շնորհիվ։ Նա կատարյալ ուսուցիչ եղավ իր ուսուցիչների համար և խրատատու սուրբ հայր՝ իր հայրերի

հրեշտակաց Հ չիք եթէ զանկերակուր հրեշտակացն 14 Տ³ զնմանութիւնն ԲԳԴԵԸԺԼԽՀ Եւ եթէ ԲԵ ցածութեան ԲՏ² կամիս 14—15 ԵԸԺԼԽՀՏ¹ չիք կամիցիս ասել 15 Թ ոչ ոք ԲՏ² ի կենդանեացս Բ տեսանել փխ գտանել 16 ԲԵ զանընչասիրութիւն ԵԸԺԼԽ ՀՏ¹ չիք դարձեալ Ա զոր օրինակ փխ զոր օրինակ 16—17 ԱՋԷԻՎ չպարտի(!) ԲԴ ոչ պարտի Տ² ոչ պատրի 17 ԲՏ¹Տ² ի կարասոյ Թ ի կարիս(!) 18 Բ իմասցիք 19 ԱՋԷ անյայգական ԲԴՏ² ի պաշտամանն 20 Դ միշտ ի բարձունս ընդ Աստուծոյ խօսէր 21 ԸԽ յամելոց փխ անհամելոց Խ հեղգայելոց(!) 22 ԴԻ դրսովեցաւ Կ ագահութիւնն Դ չիք նովաւ 23 ԲՏ² որկորբոտութիւն (Տ² որկորստութիւն) շուայտութեան ԸԹԽՎ որկրամոլութեան Դ աշխարհին ԼԽՏ¹ յաշխարհիս 25 ԲԳՋԷԹԻԿՎ Եւ եղև ԵՀ չիք վարդապետ կատարեալ 26 ԲԴՋԷԸԹԼԽՀՎՏ¹ խրատու ԵԻ խրատատու ԲԴ հայր է համբաւոց փխ հարանց։

ցան ազէտք, և ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լըկտիք։ Բնակեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցկան, և ահ սրբութեան նորա անկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք։ Զարհուրեցան դևք և փախեան ի նմանէ, իջին հրեշտակք և բանակեալ էին զնովաւ։

Յոյնք երանի ետուն վասն նորա աշխարհին Հայոց, և բազում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով։ Սիրելի եղև նա սիրելեաց Աստուծոյ, և զբազումս ի թշնամեաց ճշմարտութեանն էած ի հաւանութիւն սուրբ սիրոյ։ Սկիզբն արար առաքինութեանն անդստին ի տղայ տիոց իւրոց, և նովին առաքինութեամբ կատարեցաւ ի վախճան կենաց իւրոց։ Որպէս ոչ խառնեցաւ ի կարգ սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապականացու իրաց աշխարհիս։ Եւ եթէ պարտ է պարզաբար ասել, որպէս փոխանակեաց զպէտս մարմնոյ ընդ պիտանացու հոգևոր իրաց, այսպէս փոխադրեալ եղև յերկրէ ի յերկինս։

---

1 ԱԴՁԷԹV զգաստացան 2 Դ չիք էր ԱԵՁԷԹԺԻԼԽԿVS³ խցկանն Հ բրցկանն(!) 3 ԲԳԴԵԸԺԼԽԾՀS¹S² անկեալ էր ԱՁԷԹԻVS³A արկեալ էր Է զհեռաւորօքն 4 Բ և բնակեցան ԲԸԺ շուրջ զնովաւ Դ և շուրջ բանակեցան զնովաւ 5 Դ Յոյնքն Բ աշխարհին Հայոց վասն նորա Գ Հայոց աշխարհիս ԵԸԼԿՀS¹S² աշխարհիս Խ յաշխարհիս Բ չիք բազում 6 Խ ի տեսանել Բ չիք նա 7 A սիրելեացն 7—8 Բ ճշմարտութեան ած ի հաւան սուրբ սիրով A ած փխ էած Ե ճշմարտութենէ(!) 8 Հ չիք ի հաւանութիւն 3 S² սիրով ԳԴԵՀ առաքինութեան 9 Ի տղայութեան տիոց 10 Դ ի վախճանի Բ չիք ի վախճան կենաց իւրոց 9—10 Է չիք «և նովին—կենաց իւրոց» ԲԳԴԵԸԺԼԽԿՀS¹S² կարգ ԱՁԷԹԻVS³A ի կարգս 11 Բ այնպէս Դ ոչ եմուտ 12 Բ պիտոյիւքս Բ կենաց փխ իրաց Դ չիք իրաց 12—13 ԲԴ պարտ իցէ 13 ԱԲԳԴՁԷԹԻԿV պարզապէս S² չիք պարզաբար Բ մարմնոյն 14 ԲԴS² հոգևորացն փխ հոգևոր իրաց 14—15 Դ փոխադրեալ եղև յերկինս։ չիք յերկրէ Բ ի յերկրէ ԳԵԼԽԿՀ չիք ի Ժ յերկրէ յերկինս։

համար։ Նրա համբավը լսելով՝ իմաստնացան ագետները, և նրա մոտիկությունը տեսնելով՝ զգաստացան լկտիները։ Մարմնով բնակվում էր մի նեղ խցի մեջ, իսկ նրա սրբության ահը պատել էր թե՛ հեռավորներին և թե՛ մերձավորներին։ Դևերը զարհուրեցին և փախան նրանից, հրեշտակներն իջան և շրջապատել էին նրան։

Հույները նրա պատճառով երանի տվին Հայոց աշխարհին և շատ բարբարոսներ շտապեցին տեսնել նրան մարմնով։ Նա սիրելի եղավ Աստծու սիրելիներին և ճշմարտության թշնամիներից շատերին առաջնորդեց դեպի սուրբ սերը։ Իր առաքինության սկիզբը հենց մանուկ հասակից դրեց և նույն առաքինությամբ հասավ մինչև իր կյանքի վերջը։ Ինչպես որ աշխարհիս սուրբ ամուսնության կարգի մեջ չմտավ, այնպես էլ այս աշխարհի բոլոր ապականացու բաների մարմնավոր պետքին չենթարկվեց։ Եվ եթե պետք է պարզորեն ասել, ինչպես որ մարմնի պիտույքները փոխեց հոգևոր պիտանացու բաների հետ, հենց այնպես էլ երկրից երկինք փոխադրվեց։

ԱՆՈՒԱՆՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ

Որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի նոսին զանձինս ի կապանս արքունի:

Յազգէն Սիւնեաց երկու եղբարք Բարգէն և Բակուր.

Յազգէն Արծրունեաց Ներշապուհ և Շաւասպ և Շնգին և Մեհրուժան և Պարգեւ և Տաճատ.

Յազգէն Մամիկոնէից Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ.

Յազգէն Կամսարականաց Արշաւիր և Թաթ. Վարձ, Ներսեհ և Աշոտ.

Յազգէն Ամատունեաց Վահան և Առանձար և Առնակ.

Յազգէն Գնունեաց Ատոմ.

Յազգէն Դիմաքսենից Թաթուլ և Սատոյ. *երկու ևս այլովք ընկերօք.*

Յազգէն Անձևացեաց Շմաւոն և Զուարէն և Առաւան.

Յազգէն Առաւեղինից Փապակ և Վարազդէն և Դատ.

ՅԱրծրունեաց տոհմէն Ապրսամ.

Ի տոհմէն Մանդակունեաց Սահակ և Փարսման.

Յազգէն Տաշրացեաց Վրէն.

ՎԵՐՆԱԳԻՐ.—ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԾԿՀV$S^1S^2S^3$ Անուանք նախարարացն որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի նոսին զանձինս ի կապանս արքունի (Թ որ կամաւ եւ զանձինս իւրեանց ԳԾԸԺ որ ԵԸԺԾՀS^1S^2 և յօժարութեամբ. զանձինս իւրեանց ԺԾ արքունիս Ը արքունիս վասն սիրոյն Քրիստոսի Է՝ որ կապանօք կամօք և յօժարութեամբ սուրբ սիրոյն Քրիստոսի նոսին զանձինս իւրեանց ի կապանս արքունիս Ա որ կամօք և յօժարութեամբ...արքունիսն վասն սիրոյն Քրիստոսի և յաւուր արքայութեանն) Դ շարունակում է անընդհատաբար, առանց նոյն իսկ նոր տողի. բՆ վերնագրի բառերն ունի:

1 ԳԾԸԽԿՀ Բարէն 2 Ե Արծրունեաց ԱԳԶԷV Մերշապուհ Կ Մերշապուհ անուն ԴS^2S^3 Ներշապուհ Բ Շաւասպ 2—3 ԳԿ Մեհուժան Դ Մերհուժան ԵԷՀ Մերհրուժան Ը Մերուժան 4 ԱԴ Մամիկոնենից 5 Կ Մուշեղ 6 ԳԾԺ Կամսարականացն ԵԸ ԺԼԽ Արշաւիր և Վարձ, Թաթ... ԱԶԷԹԻVS^3 Թաթուլ փխ *Թաթ Բ Վարզ և ԾՀS^1 Վարձ և*

ԱՅՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Որոնք իրենց հոժար կամքով Քրիստոսի սիրու համար իրենց անձերը արքունի կապանքների հանձնեցին:

Սյունյաց ցեղից երկու եղբայրներ Բարգեն և Բակուր.

Արծրունյաց ցեղից՝ Ներշապուհ և Շավասպ և Շնգին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ.

Մամիկոնյան ցեղից՝ Համազասպյան և Համազասպ և Արտավազդ և Մուշեղ.

Կամսարականների ցեղից՝ Արշավիր և Թաթ, Վարձ, Ներսեհ և Աշոտ.

Ամատունյաց ցեղից՝ Վահան և Առանձար և Առնակ.

Գնունյաց ցեղից՝ Ատոմ.

Դիմաքսյանների ցեղից՝ Թաթուլ և Սատոյ. *երկու այլ ընկերներով.*

Անձևացյաց ցեղից՝ Շմավոն և Զվարեն և Առավան.

Առավեղյանների ցեղից՝ Փապակ և Վարազդեն և Դատ.

Արծրունյաց տոհմից՝ Ապրսամ.

Մանդակունյաց տոհմից՝ Սահակ և Փարսման.

Տաշրացյաց ցեղից՝ Վրեն.

Թաթ Խ և Վարձ և Թաթ 7 ԳԺԼԿ Արշոտ Դ Աշատ 8 ԵԸԺԽՀ չիք *«յազգէն Ամատունեաց—և Առնակ» ԱԳԴԶ Սռնակ Բ և Առնակ և Առանձար V Սուանձար(!) Ի Ոռնակ(!) Է Վահան և Աւան և Սռնակ S^1 Աւանձար և Սռնակ S^2 Առնակ և Առանձար 9 Բ յազգէն Սիւնեաց սուրբ Ատոմ* փխ *յազգէն Գնունեաց Ատոմ Դ սուրբն Ատոմ 10 ԲS^2 Սատու ԲԾԸԺԽՀS^2 երկու այլես ԳԷ երկուք 10—11 Դ ընկերովք V երկու ևս Ծ երկու ևս այլովք ընկերօք 12 ԱԲԳԵԶԷԹԺԻԼS^1S^2 Անձաւացեաց Կ Անձաւեցեաց Հ Անձաւունձեաց ԲS^2 Զուրէն Թ Առան 13 ԱԻS^3 Առաւեղինից Բ Առուեղինից Թ Առաւեղինաց ԱԲ ԳԴԶԷԹԻV Վարազդէն ԱԶԷԹԻV Գադ* փխ *Դատ ԲԳԴԵԸԺԼԽԿՀ$S^1S^2S^3$ Դադ 14 Ի յազգէն Արծրունեաց Ապրսամ ԲS^2 Վահապրսամ V Աբրսամ 15 Բ Մամիկոնէից* փխ *Մանդակունեաց Ե Փարսման 16 Բ Տաշրաց Դ Տաշրացւոց ԵԸԺԼԽՀS^1S^2 Տաշրունեաց:*

Յռափսոնեան տանէն Բաբիկ և Յոհան:

Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ի կրսերագունիցն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք, իսկ ըստ հոգևոր առաքինութեանն ամենեքեան երկնային քաղաքացիք։ Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն։ Եւ ամենեքին սոքա կամօք մատնեցան ի սուրբ կապանս չարչարանացն։

Այլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն, զի կամօք չոգան մտին ի փորձութիւնն, այլ առաւել ընդ այն եմք սքանչացեալ, զի մարդիկ փափուկ իբրև զնոսա՝ ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց։ Որ զօրէն ազատ էրէոյ շրջէին ի մէջ ծաղկաբեր լերանց, ընկեցան ի բոցակէզ աշխարհն արևելից կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք։ Հաց նեղութեան և ջուր կարօտանաց, խաւարարգել ի տուէ և անլոյս ի գիշերի, անվերարկուք և անանկողինք, գազանաբար գետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս։ Եւ այնպէս մեծաւ խնդութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենևին ոչ ոք տրտունջ հայհոյութեան ի բերանոյ նոցա լուաւ, այլ յորդառատ գոհացութիւն ըստ նմանութեան բարեկեցիկ մարդկան, որ են յաստուածպաշտութեան։

Եւ մինչդեռ էին յայնպիսի նեղութեան, կարծիք եղեն ի միտս թագաւորին, թէ առ յոյժ վշտին ձանձրացեալ են դառնութեան կենօքն իւրեանց։ Յղեաց առ նոսա զմեծ հազարապետն և ասէ. «Գոնեայ յայսմ հետէ զգաստացայք յանձինս ձեր, և մի՛ կայք ի նոյն յամառութեան. պագէք երկիր արեգական, և արձակիք ի չարաչար

---

1 Բ Յռոփկիմեան տոհմէն Տ^2 Յռոփսենեան տոհմէն Թ Ռափսոմնեան ԳԵԸԺԼԽԿՀՏ^1 Ծառափսոնեան Դ յՌափսոհմեան տոհմէն ԶԷԻՎ յՌափսոմնեան Ա Յովհան (լուսանցքում կողքին՝ «Յուխնան») Բ Յոհան Գ Յոխնան Դ Յովնան ԵԸԺԼԽԿՀ Յոհնան ԶԷԹԻՎՏ^3 Յուխնան 2 Բ այր Բ նախարարացն են 3 Բ կրտսերագունիցն Գ կրտսերագունացն ԴԿ կրսերագունացն 3—4 ԲՏ^2 արհազունք փխ նախարարազունք 4 ԴԵԼ առաքինութեան Դ ամենիքեան 5 Թ մերկանայինն(!) փխ երկնային ԲՏ^2 երկնաքաղաքացիք Դ մարդիք 6 Բ տանէն Տ^1 ի տանէ նախարարացն 6—7 Բ նախարարաց նոցուն իսկ նիզակակակիցք... ԵԸԺԼԽ իսկ նոցուն իսկ Բ նիզակակիցք քաջք և անուանիք Բ և մարտակից էլ չիք և մարտակիցք Տ^{1}Տ^2 նոցուն իսկ նիզակակակից քաջ նահատակացն 7 ԲԳ ամենեքեան Դ ամենիքեան 8 Դ չիք սուրբ ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 չարչարանացն վասն Քրիստոսի Դ չարչարանաց 9 Ը առ այս փխ առ այժմ ԾՏ^{1}Տ^2 չիք առ Դ ոչ եթէ 10 ԲԴ ի մեծ փորձութիւնն ԵԸԺԼԽ փորձութիւն Բ այս 10—11 Բ սքանչացեալք 11 Դ մարդիք Բ մարդիկք փափուկք 12 Բ և եղէն ԲԿՏ^2 խորշակահար ԴԵԸԼԽՀ որք

Ռափսոնյան տնից՝ Բաբիկ և Հոհան:

Այս երեսունհինգ մարդկանցից ոմանք ավագ նախարարներից էին, ոմանք կրտսերներից, բայց բոլորն էլ մարմնով նախարարազուններ են, իսկ հոգևոր առաքինությամբ՝ բոլորն էլ երկնային քաղաքացիներ։ Եվ ուրիշ շատ ազատ մարդիկ էլ, ոմանք թագավորական տնից և ոմանք հենց նույն նախարարների տնից, քաջ նահատակների նիզակակիցներ ու մարտակիցներ։ Սրանք բոլորն էլ հոժարակամ հանձնվեցին չարչարանքների սուրբ կապանքներին։

Բայց մենք այժմ ո՛չ միայն այս բանի վրա ենք զարմացած, որ կամովին գնացին, փորձության մեջ ընկան, այլ ավելի այն բանի վրա ենք սքանչացած, որ նրանց նման փափկակյաց մարդիկ, ձյունապատ լեռների լայնարձակ ապրած բնակիչները, խորշակաբեր դաշտերի բնակիչ դարձան։ Նրանք, ովքեր ազատ էրեների նման շրջում էին ծաղկաբեր սարերում, ձեռքերն ու ոտքերը կապած գցվեցին Արևելքի բոցակեզ աշխարհը։ Հացի նեղության և ջրի կարոտության մեջ էին, ցերեկը խավարում և գիշերն անլույս, անվերարկու և անանկողին, գազանների նման գետնին փռված ինը տարի և վեց ամիս[165]։ Եվ այնպիսի մեծ ուրախությամբ էին տանում այդ նեղությունը, որ ոչ ոք ամենևին տրտունջ ու հայհոյանք չլսեց նրանց բերանից, այլ հորդառատ գոհացողություն՝ աստվածապաշտության մեջ գտնվող բարեկեցիկ մարդկանց նմանությամբ։

Եվ մինչդեռ նրանք այսպիսի նեղության մեջ էին, կասկած ընկավ թագավորի սիրտը, թե սաստիկ տառապանքի պատճառով ձանձրացած կլինեն իրենց դառն կյանքից։ Նրանց մոտ ուղարկեց մեծ հազարապետին և ասաց. «Գոնե այսուհետև զգաստացեք ձեզ ու ձեզ, և նույն համառության մեջ մի՛ մնաք. երկրպագեցեք արեգակին, և կարձակվեք այդ չարաչար կապանքներից և ամեն մեկդ կրկին տեղ կգտնեք ձեր հայրա-

---

13 ԵԸ էրէոյ Տ^1 էրէոց Տ^2 զօրէն նախարարացն ազատ որերոյ Բ և որ զօրէն նախարարացն ազատ այրոյ ԳԴԵԺ լերանցն 14 Դ արևելեաց Խ յարևելեաց Ծ կապեալ ոտիւք և ձեռօք Տ^1 չիք կապեալ 16 Բ անանդողինք 17 Տ^1 ինն ամ և վեց ամիս Տ^1 չիք Եւ Բ չիք մեծաւ 17—18 Դ այսպէս տանէին մեծաւ խնդութեամբ 18 ԲԴ զնեղութիւնսն Ե զնեղութիւն ԲԴ ոչ ոք լուան Գ զտրտունջ 19 Բ ի բերանոց ԲԴ չիք լուաւ Բ յորդ և առատ ԲՏ^2 գոհութիւն 20 Ա բարիկեցիկ 21 Դ չիք Եւ Հ մինչ Բ յայսպիսի 22 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ եթէ 22—23 Բ զառնութեամբ կենաց Դ կենօք Գ ձանձրացեալ են և զառնացեալ են անձամբ կենօքն իւրեանց 23—24 Դ գոնէ 24 ԱԶԷԹՎ սգաստացայք ԲՏ^2 զգացարուք Ը բզգաստացայք (մի քանի անգամ) Դ չիք և Բ ի նմին միտս փխ ի նոյն Տ^2 ի նոյն միտս 25 ՎՏ^{2}Ա երկիր պագէք ԵԺԼԽ արեգականն Դ արձակիցիք ԵՀ ի չարչարանացդ փխ ի չարաչար կապանացդ։

կապանացդ, և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր»։

Ետուն պատասխանի երանելիքն և ասեն. «Առ փո՞րձ ինչ եկեալ հարցանես զմեզ, եթէ արդարև թագաւորն իսկ յղեաց զքեզ»։ Երդուաւ հազարապետն և ասէ. «Ջիք այդր բան աւելի կամ պակաս, որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է»։ Ասե ցնա անդրէն. «Որք միանգամ աշակերտեալ են ճշմարտութեանն, ոչ երբէք փոխին ի նմանէ. այլ որ ենն՝ նոյն կան։ Միթէ յայնժամ առ չիմանա՞լ ինչ պնդեցաք, և այսօր նեղութիւնս իմաստնացո՞յց ինչ զմեզ. այլ ոչ այնպէս։ Այլ զղջումն մտաց մերոց այս է, եթէ ընդէ՞ր ընդ առաջինսն չկատարեցաք զկեանս մեր։ Բայց արդ աղաչեմ զքեզ և քեւ զթագաւորն ձեր, մի՛ այլ վասն այդպիսի իրաց հարցանէր զմեզ. այլ զինչ եդեալ է ի մտի ձերում վասն մեր՝ կատարեցէք»։

Իբրև լուաւ զայս մեծ հազարապետն, յոյժ գովեաց ի միտս իւր զպնդութիւն հաստատութեան նոցա. և յայնմ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա իբրև ընդ սիրելիս Աստուծոյ։ Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զթագաւորն ի հաւանութիւն, զի թողութիւն արասցէ նոցա ի կապանացն իւրեանց։ Զի թէպէտ և փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի, և ի բազում իրս գտաւ վնասակար, ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տուն իւր, սակայն զկապելոցն որ երբէք չարախօս կամէր լինել մինչև ցօր վախճանի կենաց իւրոց։

Իսկ յերանելեացն բազումք ի նոցանէ, որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, և եղեւ նոցա այն կերակուր հոգևոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն մխիթարէին։ Եւ այնպէս զմայլեցան ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերագոյնքն էին ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան։

---

1 Բ ունիցիք իւրաքանչիւր ոք զհայրենիս և զկեանս ձեր Բ չիք անդրէն Դ իւրաքանչիւր S^2 իւրաքանչիւր ոք Դ զհայրենի S^2 զհայրենիս և զկեանս ձեր Գ իւր փխ ձեր 2 Ըխ առ ի փորձ 2—3 Բ եկեալ ես հարցանել զմեզ 3 ԲԴ չիք իսկ Դ զձեզ փխ զքեզ 4 ԳԵԸԺԼԽԿՀS^1 երդուաւ նոցա Դ երդնու ԲS^2 ընաւ բան Դ չիք այդր բան 5 Բ որ ոչ ել ի բերանոյ նորա S^2 որ ոչ ելեալ է Դ նոքա փխ ցնա անդրէն 6 Խ միանգամայն S^1 աշակերտեալք ԵՀ ճշմարտութեան է ճշմարտութեամբ ԲԳԴԵԸԺԻԼԽԿՀS^1S^2 փոփոխին 7 Խ էնն Բ ի նոյն S^2 ի նոյն կան ԴԸԽ առ ի չիմանալ Թ չիք ինչ 7—8 ԲS^2 ինչ իմաստնացոյց Դ չիք ինչ 8—9 ԵԸԺԼԽՀS^1S^2 այլ ոչ է այնպէս Բ ոչ այդպէս A ոչ այնպէս Գ այլ ոչ այնպէս է Դ ոչ այդպէս է 9 ԳԵԸԺԼԽԿՀ թէ 10 Բ ոչ կատարեցաք Դ չիք արդ 11 ԵԸԺԽՀ չիք այլ Բ իրացդ ինչ Դ հարցանել ԵԸԺԽ ՀS^2 այլ հարցանէք 12 ԲԸ զմեզ Բ զինչ և ԲԴ չիք վասն մեր Դ վաղվաղակի կատա-

կան գույքին»։

Պատասխան տվին երանելիներն ու ասացին. «Փորձելու համա՞ր ես եկել-հարցնում մեզ, թե՞ իսկապես թագավորն ինքն է ուղարկել քեզ»։ Հազարապետը երդվեց և ասաց. «Ասածիս մեջ ավելի կամ պակաս խոսք չկա, որ նրա բերանից դուրս եկած չլինի»։ Այն ժամանակ ասացին նրան. «Ովքեր մի անգամ աշակերտել են ճշմարտությանը, այլևս երբեք ետ չեն դառնա նրանից, այլ ինչ որ կան՝ այնպես էլ մնում են։ Մի՞թե այն ժամանակ չիմանալուց էինք պնդում, և այսօր նեղությո՞ւնն իմաստնացրեց մեզ. այդպես չէ։ Այլ մենք ափսոսում ենք այն բանի համար, թե ինչո՛ւ մենք էլ առաջինների հետ չվերջացրինք մեր կյանքը։ Իսկ այժմ աղաչում ենք քեզ և քո միջոցով ձեր թագավորին՝ այդպիսի բաների մասին մեզ այլևս մի՛ հարցնեք, այլ ինչ որ մտքներումդ դրել եք մեր վերաբերմամբ՝ կատարեցե՛ք»։

Երբ մեծ հազարապետն այս լսեց, իր մտքում շատ գովեց նրանց հաստատամտությունը, և այնուհետև սկսեց նրանց սիրալիրություն ցույց տալ, ինչպես աստծու սիրելիներին։ Եվ շատ հորդորական խոսքերով թագավորին համոզում էր, որ նրանց ների և արձակի իրենց կապանքներից։ Որովհետև նա թեպետև փոխվեց արքունի հազարապետության պաշտոնից, և շատ բաներում վնասակար ճանաչվեց, ինքը հենց իրեն էր համարում Հայոց աշխարհի ավերման պատճառը, ուստի և մեծ անարգանքով իր տունն ուղարկվեց, սակայն կապվածների մասին երբեք չէր ուզում չարախոսել՝ մինչև իր կյանքի վերջը։

Իսկ երանելիներից շատերը, որոնք ավելի երիտասարդ էին, սովորեցին իրենց հայրենի երկրի գիրն ու գրականությունը, և այն դարձավ նրանց համար հոգևոր կերակուր, որով իրենց խրախուսում էին և ընկերներին մխիթարում։ Եվ այնպես զմայլվեցին իրենց մտքով ու հոգով, որ նրանց ծերագույններն անգամ փափկացան, երիտասարդացան, մանկա-

---

րեցէք 14 Դ հաստատութեանն Բ այնուհետև 14—15 ԲԴ սէր արկանել 15 Բ ընդ սիրելիս իւր բոլոր մյուսները՝ ընդ սիրելիս աստուծոյ 15—16 Ը ուղարանօք(!) 17 ԲԴԹ ի կապանաց Բ չիք նա 17—18 ԳԵԸԺԼԽԿՀS^1S^2 ի գործոց 18 Ե հազարապետութեան Բ վասն զի փխ և Զէ չիք ի 19 ԳԴԵԸԺԽՀ ինքնին իսկ Ե յանձին S^1 ինքնին յանձն իւր ԹԼՄԿՀ կրէր փխ կրթէր 20 Դ չիք և Թ ուղարկեցաւ VS^3Λ ի տունն 20—21 Բ սակայն վասն սրբոցն ոչ կամեցաւ չարախօս լինել 21 ԴV ոչ երբէք կամէր չարախօս լինել Ի լինիլ ԳԴԵԸԼԽԿՀ ցօր 23 ԲV երանելեացն Ե ի նմանէ Ի չիք որ ԲԿ մանկագոյնք 24 ԵԸԺԼԽ չիք և Ա եղէն 24—25 Բ այն նոցա ի կերակուր 25 ԼS^1 հոգևոր կերակուր V զանձինս իւրեանց ԱԴԻ զընկերս Թ զնկերս 25—26 ԲԶէV չիք և զընկերսն մխիթարէին 26 Բ չիք Եւ Բ ի յոգիս Խ և ի հոգիս ԲԴ չիք և (որ) 27 Բ ի նոցանէ էին։

Զի թէպէտ և դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոսս ի բերան առեալ՝ հոգևոր երգակից լինէին մատաղերամ մանկտւոյն։

Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սրբութեան, մինչև ոմանք ի դառն դահճացն մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա, և որչափ ի ձեռս իւրեանց էր՝ արտաքոյ արքունի հրամանին զդիւրութիւն առնէին նոցա, և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան, և բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա լնուին նոքա։ Մանաւանդ զի նշանք ևս բժշկութեան յԱստուծոյ յաջողեալ լինէր ի ձեռս նոցա. որպէս զի բազումք ի դիւահարաց սրբեցան ի նմին քաղաքի, ուր կապեալքն կային։ Իբրև ոչ ոք գոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժետք քաղաքին, և ընդունէին ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն։

Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին, զոր և Հարկզղամ Տաղաւ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն, մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենեսեան։ Զծերս ի նոցանէ առ հարս ունէր, և զմանկագոյնս ի նոցանէ իբրև զսիրելի որդիս զգուէր։ Բազում անգամ գրեաց և եցոյց յարքունիս զվիշտս նեղութեան կապելոցն, և զառն առն իւրաքանչիւր զբարս ազնուականութեանն ցուցանէր նոցա. առաջի մեծամեծացն տառապէր, ջանայր ազգի ազգի հնարիւք, մինչև բազում բարեխօսիւք ածին ի հաւան զթագաւորն։ Հրամայեաց լուծանել զկապանս նոցա, և բառնալ ի նոցանէ զսուգ պատուհասին, և ագանել նոցա հանդերձ զօրէն նախարարութեանն. կարգեաց նոցա ռոճիկ, և զպատրաստութիւն սպառազինութեանն հրամայեաց յարքունուստ։ Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն ի գործ պատերազմի։

---

1 Դ չիք Զի Գէ չիք և ԲՏ² ժամանակն դպրութեան ԴԵժԽ ժամանակն Դ բստ դպրութեան ժամանակն Տ² անցեալ էր Բ էր փխ էին 1—2 Բ չիք բազում 2 ԱԲԳԴԹԻՏ³Ա սաղմոս Բ ի բերան նոցա 3 Է մանկանցն 4 Է այսպէս Բ բարձրացուցանէին ԳԹԷ զպաշտօն ԲԴ սրբութեանն ԵԸԺԽՀ դպրութեան փխ սրբութեան 4—5 ԲԴ ոմանց 5 ԵՀ ի դուան(!) փխ ի դառն է ընդ սիրելիս փխ ընդ լսելիս Ը լսելիսս Ժ ի լսելիս 6 ԲՏ² որչափ ևս ԺԻ ի ձեռս նոցա էր Բ հրամանին արքունի 7 Բ ընդ նոսա փխ նոցա ԵՀ չիք «նոցա—ունէին» ԲՏ² խնամոց 8 Բ պէտսն Բ չիք նոցա 9 ԲԴՏ¹ չիք ևս Բ չիք յաստուծոյ ԲԴ աջողեալ էր 10 Բ բժշկեցան փխ սրբեցան Դ ի նմին ժամու փխ ի նմին քաղաքի Լե ի նմին քաղաքէ 11 ԳԵԸԺԿՀՏ¹ քաղաքէ Գ կապեալք Դ չիք ուր կապեալքն կային ԲՏ¹Տ² ոչ կայր փխ ոչ ոք գոյր 11—12 ԵՀ չիք քահանայ. դիմէին առ նոսա Խ քահանայ առ նոսա 12 Թ չիք և (ընդունէին) 13 ԴԿ առողջութիւն Ըե չիք զիւրաքանչիւր ցաւոց 14 Տ² է Ըե քաղաքին փխ աշխարհին ԱՁԹԻՎ

ցան։ Որովհետև թեպետ նրանց ուսման ժամանակներն անցել էին, սակայն բազմաթիվ սաղմոսներ բերան անելով՝ հոգևոր երգակից էին դառնում մանուկների մատաղերամ բազմությանը։

Եվ այնպես էին պայծառացնում սրբության պաշտամունքը, մինչև որ դաժան դահիճներից ոմանք հրապուրվում էին՝ լսելով նրանց երգերի քաղցրությունը, և որքան իրենց ձեռքից գալիս էր, թագավորի հրամանից դուրս դյուրություններ էին տալիս նրանց, սեր ու խնամք էին ցույց տալիս բոլորին և շատ անգամ հոգում էին նրանց մարմնավոր կարիքները։ Մանավանդ որ աստծու հաջողությամբ բժշկության հրաշքներ էլ էին կատարվում նրանց ձեռքով. ինչպես որ դիվահարներից շատերը բժշկվեցին այն քաղաքում, որտեղ գտնվում էին կալանավորները։ Քանի որ նրանց մոտ ոչ մի քահանա չկար, նրանց էին դիմում քաղաքի հիվանդներն ու ցավագարները, և նրանցից ստանում ամեն մեկն իր հիվանդության բժշկությունը։

Այլև այն աշխարհի[196] մեծ իշխանը, որի անունը Հարկզղամ Տաղաւ էր, և որին հանձնված էին բոլոր պատժվածները, շատ գութ ու սեր ցույց տվեց նրանց բոլորին։ Նրանցից ծերերին հոր տեղ էր ընդունում, իսկ ավելի փոքրերին գգվում էր իբրև իր սիրելի որդիների։ Շատ անգամ գրեց արքունիք և հայտնեց կապվածների տառապանքն ու նեղությունը, և նրանցից յուրաքանչյուրի ազնիվ վարք ու բարքը բացատրել նրանց. մեծամեծների առաջ ճգնում, ամեն տեսակ հնարքներով ջանք էր գործ դնում, մինչև որ շատ բարեխոսների միջոցով թագավորի հաճությունն առավ։ Հրամայեց նրանց կապանքները արձակել և վերացնել նրանց վրայից պատժի սուգը և նրանց նախարարությանը վայել զգեստ հագցնել. նրանց ռոճիկ կարգեց և հրամայեց ամբողջ սպառազինությունն արքունիքից տալ։ Գրեց և հանձնարարեց մեծ սպարապետին, որ արքունի զորքի հետ պատերազմելու գնան։

Հարկզղամհաղաւ Բ Շրամազաւուն Դ Հարկզղամշապուհն ԶՏ² Շրամշապուհ 15 Տ¹ անուանեն Գ չիք ամենայն 15—16 Բ առ մեծապէս 16 ԲԴ արկ Գ առ նոսա փխ առ ամենեսեան 17 Բ զհէր փխ ունէր ԳԷՏ¹ ընդունէր Ի ունէին(!) Բ և զմանկունսն ԳԴԵԺԷԽ զմանկագոյնսն ԲԳԴԵԽԷԽՀՏ¹ չիք ի նոցանէ Բ որպէս փխ իբրև Բ սիրելի զգուէր 18 Ի նեղութեանն 19 Գ առն Բ զբանսն ազնուական Դ ազնուականութեան Է ազնուականութեամբ 19—20 Ժ ազնուականութեան նոցա ԲԴ չիք նոցա Զ նոցա ցուցանէր ԵԸԺԽՀ չիք ցուցանէր 20 ԲԴ չիք առաջի ԲՏ² տառապէր և ջանայր 21 Դ բարեխօսք ԲՏ² բարեխօսութեամբ ԲՏ² ածէին զթագաւորն ի հաւան ԵԸԺԽՀ ի հաւանութիւն 21 Բ և (հրամայեաց) 23 ԲՏ² ագանեցին Ի անգանել(!) Գ չիք նոցա ԳԷ հանդերձս Բ չիք հանդերձ ԳԵ նախարարութեան 24—25 ԲԴ ռոճիկս ԵՀ սպառազինութեան ԵԸԺԽՀ յարքունուստ տալ 25—26 Բ հազարապետին փխ սպարապետին 26 ԲԴ զօրսն Գ ի մեծ պատերազմին։

Եւ իբրև այս այսպէս կարգեցաւ, և կազմեցաւ նոր հրաման թագաւորին, ի բազում տեղիս՝ ուր և հասին՝ սաստկեալ գտան ի գործ արութեան, մինչև գովութեան հրովարտակ վասն նոցա ի Դուռն տալին։ Որպէս զի քաղցրացաւ խակ մտաց թագաւորին, հրամայեաց զամենեսեան ածել զառաջեաւ։ Եկին և յանդիման եղեն Յազկերտի արքայից արքային։ Ետես զնոսա զուարթութեամբ, խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութեամբ, և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի հայրենի պատւոյն, և արձակել զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէութեանն, յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ։

Եւ մինչդեռ անդէն մեծաւ խնդութեամբ շրջէին ի կարաւանին առաջի թագաւորին, ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց թագաւորին՝ յիննևտասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ։ Եւ ընդ հակառակս ելեալ երկու որդիք նորա ի վերայ տէրութեանն կռուէին. սաստկանայր գործ դառնութեան պատերազմին զերկուս ամս։

Եւ մինչդեռ նոքա յայնմ խռովութեան էին, ապստամբեաց և Աղուանից արքայն. վասն զի քեռորդի էր նոցա, և ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ, և Յազկերտ արքայից արքայ բռնի մոգ արար։ Եւ նորա գտեալ ժամանակ անձինն պարապոյ, հարկեցաւ զանձն ի մահ դնել. լաւ համարեցաւ մեռանել ի պատերազմի, քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւնն։ Վասն այսր ամենայնի յապաղումն եղև արձակելոյն նոցա յաշխարհն։

Իսկ կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն, Ռահամ անուն ի Միհրան տոհմէն, թէպէտ և ետես զգունդն Արեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն գազանաբար յարձակեցաւ ի վերայ երէց որդւոյ թագաւորին. հար, սատակեաց զգունդն, և ձերբակալ արա-

---

1 ԳԵԸԺԼԽԿՀ չիք այս Բ կատարեցաւ կազմեցաւ ԴԼՏ։ չիք և (կազմեցաւ) Բ ի նոսա փխ նոր 2 Բ հասանէին Հ տաւեալ Բ գտանէին Դ գտին 3 ԲԴ արութեանն Դ հրովարտակ գովութեանն Թ չիք գովութեան ԲՏ^2 հրովարտակս 3—4 Բ դուռնն 4—5 Բ ի մտաց թագաւորն և հրամայեաց... 5 Գ զառաջաւ 6 ԲԸԽ Ազկերտի Բ արքայից արքայի Կ արքայի 6—7 ԲԴՏ^2 և խօսեցաւ 7 Է խաղաղութիւն Տ^1 խաղաղութեան 8 Դ չիք և Բ իշխանութիւնս ԳԼԽԿՏ^1 չիք կարգի ԵԸԺԽՀ չիք ըստ կարգի ԱԳՁԷԻԼԿVՏ^{1}Տ^3 պատուոյն 9 ԵԺԽ արձակեալ Դ յաշխարհ ԵԺԽԿ յաշխարհս ԲԵՀ քրիստոնէութեան Դ քրիստոնէութեամբ 10 ԴԵԸԺԽՀ չիք և Դ չարչարել 11 Բ մեծապէս փխ մեծաւ 12 Բ չիք առաջի թագաւորին Բ լինէր փխ հասանէր 13 ԱԲՁԷԸ VՏ^3 յինն և ի տասներորդ Դ յիննուտասներորդ ԲՏ^2 թագաւորութեան նորա ԴԵ թագաւորութեան 14 Տ^1 լեալ փխ ելեալ ԵՀ տէրութեան Խ կռուէին ի վերայ տէրութեանն 15 Բ և սաստկանայր ԼՏ^1 պատերազմին դառնութեան ԵԸ զամս երկու ԺԽ զամս երկուս Հ ամս երկուս 16 ԸԽ Եւ մինչ Բ յայսմ Դ յայն ԱՁ խռովութեանն Է խռովութիւն Բ

Եվ երբ այսպես կարգադրվեց ու կատարվեց թագավորի նոր հրամանը, շատ տեղերում, ուր որ նրանք հասան, գերազանց գտնվեցին՝ քաջության գործում, այնպես որ նրանց մասին գովասանության գրություն էլ գրվեց Դուռը։ Թագավորի սիրտն այնպես քաղցրացավ, որ հրամայեց բոլորին իր առջև բերել։ Եկան և ներկայացան արքայից արքա Հազկերտին։ Ուրախ-զվարթ հանդիպեց նրանց, հանգիստ խոսքերով խոսեց նրանց հետ և խոստացավ ամեն մեկին իր իշխանությունը տալ հայրենի պատվի կարգով և նրանց իրենց աշխարհն ուղարկել՝ քրիստոնեական կրոնը պաշտելու, որի համար այնքան մեծամեծ չարչարանքներ էին կրել։

Եվ մինչդեռ նրանք այնտեղ մեծ ուրախությամբ [ազատ] շրջում էին բանակում թագավորի առաջ, այդ նույն ժամանակ հասավ թագավորի կյանքի վերջը՝ իր թագավորության տասնիններորդ տարում։ Եվ միմյանց հակառակ դուրս գալով՝ նրա երկու որդիները կռվում էին թագավորության համար. այս դժնդակ պատերազմի գործը սաստկությամբ շարունակվեց երկու տարի։

Մինչդեռ նրանք այս խռովության մեջ էին, ապստամբեց նաև Աղվանից թագավորը. որովհետև նրանց քեռորդին էր և հայրենի հավատի համաձայն առաջ քրիստոնյա էր, և արքայից արքա Հազկերտը նրան բռնությամբ մոգական կրոնին էր դարձրել։ Եվ նա իրեն համար հարմար ժամանակ ընտրելով՝ իր անձը մահվան վտանգի ենթարկեց. ավելի լավ համարեց պատերազմում մեռնել, քան թե ուրացությամբ թագավոր լինել։ Այս բոլորի պատճառով ուշացավ նրանց [Հայոց] աշխարհն ուղարկելը։

Իսկ Հազկերտի կրտսեր որդու դայակը, որի անունը Ռահամ էր Միհրան տոհմից[167], թեև տեսավ Արյաց զորքը երկու մասի բաժանված, բայց մեկ կիսով գազանաբար հարձակվեց թագավորի երեց որդու վրա. ջարդեց, կոտորեց նրա զորքը և թագավորի որդուն ձերբակալելով՝ հրա-

---

ապստամբեցաւ Հ չիք և 17 ԱԳԴԵԸԹԻԼԽԿՀՏ^2 արքայ Գ վասն զի 18 Դ հաւատոց Բ չիք հաւատոցն Թ՚ի յառաջն Ը Ազկերտ 18—19 Բ և Յազկերտ արքայից արքայն բռնի մոգ եղեալ 19 ԼՏ^1 մոգ արար զնա Ի և սորա ԳԽԺԼԿՀ զժամանակն ԴԸԽ զժամանակ ԲԳԴԵԸԺԼԽԿՀ անձին 20 Բ չիք հարկեցաւ զանձն ի մահ դնել Դ հնարեցաւ ԹԻԼՕՏ^1 մեռանել 21 Է ուրախութեամբ փխ ուրացութեամբ Ե զթագաւորութիւն 22 ԱՁԷԹVՏ^3 յարձակելոյն ԲԴԼՏ^1 արձակելոյ Ի յարձակելոյն Տ^2 արձակելոյն նոցա Դ նոցա արձակելոյ յաշխարհ ԲԵԸԺԽՏ^2 յաշխարհս 23 ԴԵԸԺԿՀ կրսեր Բ Ազկերտի և դայեակ նորին Ի չիք Յազկերտի Բ Ռահ է Ռահման անուն 24 ԳԴԵԸԹԺԻԼՀVՏ^{1}Տ^3 Միհրան Բ Միրհեան տոհմէ 25 Բ չիք գազանաբար Բ յարձակէր փխ յարձակեցաւ ԸV երէց 26 Դ որդւոյն Գ և հար Թ էհար ԲԻՕՀՏ^{1}Տ^2 եհար։

րեալ զորդի թագաւորին՝ անդէն ի տեղւոջն հրամայէր սպանանել։ Եւ զմնացեալ զօրսն ածէր հաւանեցուցանէր, և առնէր միաբանութիւն ամենայն Արեաց գնդին. և թագաւորեցուցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ։

Թէպէտ և Արեաց աշխարհին առնէր մեծապէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճել անդրէն ի ծառայութիւն. այլ խրամատեաց զպահակն Ճորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Մասքթաց. միաբանեաց զմնացեալ թագաւորս զլեռնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին, և բազում վնաս արար զօրացն արքունի։ Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրովարտակս աղաչանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն ի հաւանութիւն. այլ գրով և պատգամաւ յանդիմանէր զնոսա վասն զուր աւերածի աշխարհին Հայոց։ Յիշեցուցանէր նոցա զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն։ «Ի վերայ այնչափ սիրոյ և վաստակոց փոխանակ կենաց առնելոյ՝ զարև հատէք, ասէ։ Լաւ լիցի ինձ, ասէ, զնոցա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան թողուլ զքրիստոնէութիւնն»։

Եւ իբրև տեսին, թէ ոչ բռնութեամբ և ոչ սիրով կարացար ածել ի հաւանութիւն, զանձս սաստիկս ետուն տանել յաշխարհն խայլանդրաց, բացին զդրունս Ալանաց և հանին զունդ բազում ի Հոնաց, և կռուեցան տարի մի ընդ Աղուանից արքային։ Թէպէտ և թօթափեցան և ցրուեցան զօրքն իւր ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել. այլ և հարուածք եւ մեծամեծք հասին ի վերայ նոցա, էր որ կռուով և էր որ ախտիւ չարչարանօք։ Եւ յայնչափ ժամանակաց ընդերկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ որ ի նմանէ երկմտեաց բաժանեցաւ։

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից. «Զքոյրդ իմ, ասէ,

---

1 ԲԴ անդրէն Դ հրամայեաց 3—4 ԵԸԺԽՀ զսանն իւր 4 Խ չիք որում անուն էր Խ զՊերոզ 5 Բ աշխարհին Արեաց ՁԷՎ առեր Դ մեծապէս առնէր 6 ԴԵԸԺԼԽԿՀՏ^2 արքա(յ) ԲԴ ոչ կամեցաւ ԹԻՏ^{1}Տ^2 նուաճել 6—7 ԲՏ^2 ընդ նորա ծառայութեամբ փխ անդրէն ի ծառայութիւն 7 Խ խրատեաց(!) ԲՏ^2 այլ հրամայեաց արգելուլ անդրէն ընդ դուռն Պահլ (Տ^2 Պահ) զպահակն Ճորայ յարեւյս Ը զպահեակն 7—8 Ա յայն կոյս Դ զզօրս 8 ԹԻՏ^3 Մասքթաց Դ միաբանեաց և 8—9 Բ և զմնացեալ թագաւորսն զլեռնորդեանսն Տ^2 և զմնացեալ ԵԸԺՀ թագաւորսն զլեռնորդեայսն Կ զթագաւորս ԷԻՍ զլեռնորդեայսն Լ զլեռնորդեայսս 10 Տ^3 վնաս 10—11 Դ ետուն առնել 11 ԱԳԵՁԷԹԺԻԼԽԿՀՎՏ^{1}Տ^2 հրովարտակս ԲԴԸՏ^{3}Ա հրովարտակ է աղաչանաց Բ զայն փխ զայրն 12 Է հրով փխ գրով 13 ԱԴՁԷՎՏ^3 աւերածին ԲՏ^2 աւերածոյ Դ Հայոց աշխարհին ԵՀ աշխարհիս ԲՏ^2 և զմահ փխ նոցա զմահ 14 ՁԷՎ չարչարանս ԱԵՁԷԸԹԼԽԿՀՎՏ^{1}Տ^3 անչափ 15 Բ կենաց առնելոյ և զարգեւ շնորհելոյ

մայեց տեղն ու տեղը սպանել։ Իսկ մնացած զորքն էլ հավանության բերեց և միաբանություն հաստատեց Արյաց ամբողջ զորքի մեջ, և թագավորեցրեց իր սանին, որի անունը Պերոզ էր։

Թեպետև Արյաց աշխարհում կատարյալ խաղաղություն հաստատեց, բայց Աղվանից թագավորը չէր ուզում նորից ծառայության տակ մտնել. այլ նա քանդեց Ճորա պահակը և Մասքութների զորքն այս կողմն անցկացրեց. միաբանեց տասնմեկ լեռնական թագավորներին և պատերազմով ընդդեմ կացավ Արյաց զորքին և մեծ վնաս պատճառեց արքունի զորքերին։ Թեպետ երկու-երեք անգամ աղաչանքի գրություններ ուղղեցին նրան, բայց չկարողացան այդ մարդուն համոզել. Նա գրով ու պատգամներով հանդիմանում էր նրանց՝ Հայոց երկիրն իզուր տեղը ավերելու համար։ Նրանց հիշեցնում էր նախարարների մահը և կապվածների չարչարանքները։ Ասում էր՝ «Այնչափ սիրո և վաստակների համար փոխանակ կյանք շնորհելու, նրանց արևը խավարեցրիք։ Լավ կլինի ինձ համար, ասում է, նրանց չարչարանքները հանձն առնել, քան թե քրիստոնեությունը թողնել»։

Եվ երբ տեսան, որ ո՛չ բռնությամբ և ո՛չ էլ սիրով չկարողացան համոզել նրան, շատ գանձեր ուղարկեցին խայլանդուրների աշխարհը, բաց արին Ալանների դռները[168], շատ զորք հանեցին հոներից և մի տարի կռվեցին Աղվանից թագավորի դեմ։ Թեպետև նրա զորքը ցրվեց ու հեռացավ նրանից, սակայն նրան չկարողացան հնազանդեցնել, այլ դեռ մեծամեծ հարվածներ էլ ստացան, ո՛րը պատերազմով և ո՛րը հիվանդությունների չարչարանքներով։ Եվ պաշարումը երկար ժամանակ տևելու պատճառով աշխարհի մեծ կեսն ավերվեց, բայց ոչ ոք նրանից չերկմտեց ու չբաժանվեց։

Պարսից թագավորը դարձյալ մարդ ուղարկեց նրա մոտ՝ «Իմ քրոջն,

էՁ առնելոյ Դ ասէր՝ զարև հատէք ԲԵ ասէ փխ ասէր 15—16 ԼՏ^1 լաւ իցէ ինձ 16 Տ^2 զնոցա ճանապարհն և զչարչարանսն յանձն Բ զճանապարհն և զչարչարանսն Ը չարչարանս Ա յանձ ԲԻԵԸԺԽՀՏ^2 չիք իմ 17 ԲԳԴԵԸԺԼԽԿՀ զքրիստոնէութիւն 18 ԵԺԼԽԿՀՏ^2 եթէ Տ·Տ^2 կարացին 19 ԳԼ զանձ սաստիկ Դ չիք յաշխարհն 20 ԱԻԹՎ խայլանդրաց Բ խաղանդրաց Ձ խայղանդրա Է խայլանդրոց ՍՏ^1 խաղանդրացւոց Բ բացին և ԴԵԸԺԽՀՏ^2 զդրունսն ԲԴՏ^2 զունդս բազումս 20—21 Է ի հնոց փխ ի Հոնաց 21 ԵԸԺԽՀ ընդ արքային Աղուանից Բ արքային 22 Է թօթեցան փխ թօթափեցան Դ չիք և (ցրուեցան) 22—23 Բ ոչ կարացին զնա հնազանդեցուցանել Տ^2 զնա ոչ կարացին հնազանդեցուցանել 23 Դ չիք և 24 ԱՁԷԹԻՎ կռուաւ Բ ախտիւք չարաչար Դ ախտիւք չարչարանաց ԵԸԺԽՀ չարչարանաց Տ^2 չարաչար 25 ԴԵԸԿ յերկարել ԲՏ^2 պատերազմացն փխ պաշարմանն 26 Տ^{1}Տ^2 ի նոցանէ փխ ի նմանէ Բ չիք այլ ոչ ոք ի նմանէ երկմտեաց բաժանեցաւ ԱՁ բարժանեցաւ Դ բաժանեցան 27 Բ չիք դարձեալ ԲՏ^2 Պարսից Պերոզ Ե զքոյրդ։

և զքեռորդին ի բաց տար աժել, զի ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր, և աշխարհդ քեզ լիցի։ Իսկ սքանչելի այրն ոչ ի տէրութեանն վերայ կռուէր, այլ յաստուածպաշտութեանն։ Զմայրն և զկինն ետ տանել, և զաշխարհն բովանդակ ի բաց եթող. և ինքն զաւետարանն առ և յաշխարհէն ի բաց կամէր գնալ։

Զայս իբրև լուաւ թագաւորն, կարի զեղջ և ապաշաւ անկանէր ի միտս նորա, և զամենայն վնասս իրացն զհարցն իւրով արկանէր։ Անսուտ երդումն կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի՛ գնար, և զինչ ասես առնեմ։ Խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդ. էառ զայն ի թագաւորն, և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ։ Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն, զի և յիշէր ամենեքին, թէ և թագաւոր լեալ իցէ յառաջ։

Եւ այս ամենայն յերկար խռովութիւնք, որ եղեն մինչև ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի, պատճառք եղեն չարձակելոյ նախարարացն Հայոց. այլ ռոճկաւ և ի տաճար մտանել յարքունիս մեծապէս առաւացոյց քան զամաց սովորութիւնն։

Եւ ի նմին հինգերորդ ամին զբազմաց նոցա զկեանսն անդրէն շնորհեաց. և այլոցն առ յոյսն խոստացաւ՝ յամն վեցերորդ միանգամայն արձակել զամենեսեան կենօք և պատուով։

Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի։

Իսկ կանայք Երանեկի առաքինեացն և կապելոցն և անկելոցն

---

1 ԵՁԷՎ զքեռորդիս ԲԴ մոդ Ե զուք 1—2 է քրիստոնեայ 2 ԲԳԴԵԸԺԼԽԿՀՏ¹ Տ² աշխարհդ քո Դ որ ոչ 3 ԴԵՀ տէրութեան ԵՀ յաստուածպաշտութեան 4 Լ չիք ետ Լ տեսանել փխ ետ տանել 5 ԴԵԹԻՀՏ¹ էառ Դ չիք և (յաշխարհէն) Խ յաշխարհէս Բ իրթալ փխ գնալ 6 Դ զայն Տ² կարի զեղջ ապաշաւ անկաւ Բ անզաւ Թ ապաշաւանս ԷՏ¹ զեղջ և ապաշաւան կարի 7 Բ զվնաս Դ վնաս Դ արկանէր զհարցն իւրով 8 Բ երդմունս 9 ԴԵԷՀ մի՛ գնայր Բ և զոր ինչ ասեսց առնեմ ԷՏ¹ և զինչ ես ասեմ առնեմ Բ խնդրեաց զի 9—10 Բ զմանկութեան զսեփականն Դ ի մանկութեանն 10 Ա սեփականն ԳԵՎՏ³ սեփհականն Բ չիք ի տղայութեանն Ե տղայութեան Հ ի տղայութեան 11 Ա առ Բ զայն առ ի թագաւորէն Պարսից Հ չիք զայն Բ չիք ի նմա 12 Դ և այսպէս ԳՕՏ¹ հանապազորդեաց(!) 13 ԷԸԽՏ² պաշտամանն Դ սոր փխ զի և ԲԴ եթէ փխ թէ և ԲՏ² լեալ էր ՕՀՏ¹ թագաւորեալ Տ² չիք և (թագաւոր) 13—14 Բ յառաջն 15 ՕՀՏ¹Տ² երկար ԸԺԽՀ մինչ 16 Բ այս ամենայն պատճառք եղէն ԲԳԴ ամ 16—17 ԱՁԻՎՏ³ չարձակելոյն է չարձակելոցն(!) 17 Բ ռոճկով Կ ռոճկաւք 17—18 Բ յարքունիսն 18 Կ աստուածապէս(!) փխ մեծապէս ԲԳԼՏ¹Տ² քան զամե-

տասյ, և քեռորդուս ուղարկի՛ր ինձ մոտ, որովհետև ի բնե մոգական էին, և դու քրիստոնյա դարձրիր, իսկ աշխարհդ թող քեզ մնա»։ Բայց այն սքանչելի մարդը կռվում էր ո՛չ թե տերության համար, այլ աստվածապաշտության։ Մորն ու կնոջը ուղարկեց և ամբողջ աշխարհից հրաժարվեց. իսկ ինքը վերցրեց ավետարանը և ուզում էր աշխարհից հեռանալ։

Երբ այս բանը լսեց թագավորը, շատ ափսոսաց ու ցավեց իր մտքում, և ամբողջ մեղքն իր հոր վրա էր գցում։ Անսուտ երդում կնքեց և ուղարկեց նրան, թե՝ երկրից մի՛ հեռանա միայն, և ինչ որ ասես՝ կանեմ։ Նա խնդրեց՝ ինչ որ մանկությունից իր սեփականն էր և որ իր հայրը շնորհել էր նրան երեխա ժամանակ— հազար տուն. թագավորից ստացավ այդ և միայնակյացների հետ միասին նստեց այնտեղ։ Եվ այնպես անդադար աստվածային պաշտամունքով զբաղվեց, որ ամենքին չէր էլ հիշում, թե առաջ թագավոր է եղել։

Այս բոլոր երկարատև խռովությունները, որոնք շարունակվեցին մինչև արքայից արքա Պերոզի հինգերորդ տարին, պատճառ եղան Հայոց նախարարների չարձակվելուն։ Բայց [նախկին] տարիների սովորությունից ավելի շատացրեց նրանց ռոճիկները և արքունի խնջույքներին մասնակցելու իրավունք տվեց։

Եվ նույն հինգերորդ տարում նրանցից շատերին կրկին շնորհեց նրանց գույքը և մյուսներին էլ հույս տվեց, որ վեցերորդ տարին բոլորին անխտիր կարձակի իրենց գույքով ու պատվով։

Բայց ես դարձյալ պիտի վերադառնամ այս կետին։

Իսկ Երանեկի առաքինիների և կապվածների ու պատերազմում ըն-

նայն փխ քան զամաց ԵՀ սովորութիւն 19 ԲԿ ի հինգերորդ 19—20 Բ բազմաց զկեանս նոցա շնորհեաց Բ չիք անդրէն Տ³ անդրէն զկեանսն Ա անդրէն զկեանս 20 ԵԸ ԽՀ և զայլոցն Լ և այլոց ԳԴԵԸԺԼԽԿՀ առ ի յոյսն ԲՏ² առ յոյս Կ չիք յամն վեցերորդ Տ¹ վեցերորդի 20—21 ԱՁԷԹԻՎ միանգամ ԲԴ և միայն փխ միանգամայն 21 Դ զամենեսեան ԵԸԺԼԽՕՀՏ¹Տ² կենօք և պատուով և Քրիստոսի անմահ թագաւորին փառք յաւիտեանս ամէն։ է պատուօք 22 ԲՏ² դարձեալ ինձ ԱՁԷԹԻ բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի (այլ տառերով, բայց նույն ձեռքով) ԼՕ ի տեղի այլ ինչ փխ ի տեղի այսր Դ ունի նույնը լուսանցքում եռանկյունու մեջ ԵՁԷԸԻ նույնը կարմիր թանաքով) Կ բայցի տեղի ԹԺԻ ունեն վերնագրի նման (Ժ միայն առաջին տառը կարմիր թանաքով) Կ բայցի տեղի այս ինչ ԴԵԸԺԽՀ ինչ փխ ինձ V բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի (սովորական գրով) 23 Ա Իսկ կանայք երանեկի առաքինեացն գլխատառերով: Ե էջ 400, տող 23 և էջ 102, տող 1 երեք տող կարմիր թանաքով է երանեկիք ԹԻԺ «Իսկ կանայք» կարմիր թանաքով վերնագրի նման ԵԸԺԼԽՀՏ¹Տ² երանելեացն և առաքինի կապելոցն V Իսկ կանայք երանելի (կարմիր թանաքով):

ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի։

Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ։ Քանզի եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան։ Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին ըղհամբերութիւն վշտաց։

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան։ Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկինն իցէ և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս գետնախշտիք երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր. քանզի և չճանաչէին, իսկ զխոտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փխրայիցն, և մի գոյն սևութեան սնարից բարձիցն։

Ոչ գոյր նոցա խախամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հա-

կածների կանանցն ամբողջ Հայոց աշխարհում ես հաշվել չեմ կարող, որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան թե իմացածներս։ Հինգ հարյուրի չափ անուն-անուն ճանաչում եմ, ո՛չ միայն նրանցից, ովքեր ավագագույններից էին, այլև շատերին կրտսերագույններից։

Բոլորը միահամուռ երկնավոր նախանձով լցված ամենևին պակաս չմնացին նրանցից, ովքեր աշխարհ չէին մտել։ Որովհետև թե՛ ավագագույնները և թե՛ մանկագույնները հավատի միևնույն առաքինությամբ զգեստավորվեցին։ Ամենևին չհիշեցին մայրենի ազատության փափկության անունը, այլ իբրև այնպիսի մարդիկ, որոնք հենց սկզբից նեղությունների են համբերել շինական սովորությունների օրինակով և տանջվելով են անցկացրել իրենց կյանքը, նրանցից է՛լ ավելի մեծ վշտերի համբերել հանձն առան։

Ո՛չ միայն իրենց հոգիների մեջ մխիթարված էին հավիտենական հույսի աներևույթ զորությամբ, այլև մարմնի նեղություններով է՛լ ավելի կրեցին ծանր բեռը։ Որովհետև թեպետ ամեն մեկն էլ իրենց ձեռնասուն սպասավորներն ունեին, բայց նրանց մեջ չէր երևում, թե ո՛րն է տիկինը և կամ ո՛րը նաժիշտը. բոլորի զգեստները միատեսակ էին և միապես երկուսն էլ պառկում էին գետնին։ Ոչ մեկը մյուսի համար անկողին չէր գցում. որովհետև մինչև իսկ չգիտեին խոտեղենները ջոկել միմյանցից. միևնույն թուխ գույնն ունեին փսիաթները և միևնույն սև գույնի էին գլխատակերի բարձերը։

Չկային նրանց համար առանձին անուշահամ կերակուրներ պատրաստող խոհարարներ և ոչ էլ ջոկ հացարարներ՝ նրանց ազատների սո-

---

1 ԳԵԿՀ ի պատերազմի 1—2 Բ ընդ համարով ոչ կարեմ արկանել 2 ԵՀ բազումք Դ է փխ *են Բ գիտեմք ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^1 ՆԹԼ 2—3 Բ գիտեմք* փխ *գիտիցեմ 3 ԲՏ^2 չափ միայն զոր յականէ... Դ զհինգ հարիւրով չափ Բ ճանաչեմք 3—4 ԱԳԵԹ ԻԺԼԽԿՀՎՏ^{1}Տ^{2}Տ^3 որ ոչ միայն 4 է որ միայն Գ աւագագոյնք Դ աւագագոյն 4—5 ԲՏ^1 այլ և բազումս ի կրտսերագունից անտի Գ կրտսերագունաց ԵԺԼԽՀՏ^2 կրտսերագունից Ի կրսերագունիցն 6 Դ ամենքեին Բ միահամուռն Գ միահամուռս ԴԵԸԺԼԽՏ^{1}Տ^2 զերկնային Բ նախանձս 7 ԳԵԺԼԽԿՀ նախատ* փխ *ընդհատ Ի անընդհատ ԲՂ երևելով Ի որք Բ ճանաչեցին* փխ *ճաշակեցին Է ճաշակեցան(!) Բ զաշխարհս 8 Ի աւագագոյնքն Բ առաքինութիւնն 8—9 ԳԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 հաւատոյ 9 Լ փափկութեանն 10 ԽԼՀ ազատութեան Տ^1 մարդիք Բ զմարդք Ի որք ԱԲՋԷԸԹԻՎ վշտաբերք Զ լինել 11 ԱՋԷԹԻԼՎ իշխանական* փխ *ի շինական ԳԴԵԸԺԽԾԿՀԱ ի շինական Բ սովորութեանն ԳԴԼ սովորութեանց Բ տանելով* փխ *տանջելով Է վարանեալ* փխ *վարեալ 12 Դ աշխարհի Ի վարել Բ անարգագոյն քան զնոսա Թ չիք ևս Բ առնուին 13 Բ վշտացն 14 Կ չիք միայն Բ յոգիս մխիթարել կային ԷՀ ոգիսն Խ հոգիսն Լ յորդիսն* փխ *յոգիսն ԳԴԵԸԺԼ ԽԿՀՏ^{1}Տ^2 կային ԱԴՋՎՏ^3 զօրութիւնն 14—15 Բ աներևոյթ յոյսն յաւիտենից 15 Խ հոգւոյն յուսոյն Դ չիք յաւիտենից Բ առ մարմնոյ Լ մարմնոյն Դ նեղութեամբ։ չիք առաւել ևս 16 Լ ծանրութեանն 15—17 ԲԴԵԼՀ ձեռասուն Բ սպասաւորսն 17 ԲԳԴ ԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 ոչինչ* փխ *ոչ ոք Թ երևիւր Բ ի նոցանէն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ի նոսա* փխ *ի նոցանէ ԳԴԵԺԽՀ եթէ 18 Բ չիք կամ Լ չիք որ (նաժիշտն) ԳԵ նաժիշտ 19 ԱՋԷԻՎ գետնախշտիկ Բ գետնախնշտի անկողինքն Լ գետնախշտիւք Բ չիք երկոքեան ԵԺԽՀ երկոքեանն ԵԸԺԼԽՀՏ^{1}Տ^2 ոչ ումեք որ Բ լինել 20 ԳԵԸԺԼԽՀ չիք և ԴՋԷՎ ճանաչէին* փխ *չճանաչէին Բ ճանաչէին իսկ ոչ ԱՋԷՎ ընտրեալ Բ զխոտեղէնս ի միմեանց ընտրելով Դ ի միմեանց ընտրել 20—21 ԱՋՎ փսրայիցն ԲԴ թխութիւն էր փխրայիցն(!) և միագոյն ի փսրացն ԳԵ չիք մի գոյն թխութեան փխրայիցն Է մի գոյն մխիթարութեան(!) սնարից բարձիցն Ը չիք «թխութեան—սնարից» Տ^{1}Տ^2 ընտրել ի միմեանց փսան միագոյն սևութեան սնարի բարձիցն ԺԼԽԾԿՀ չիք «թխութեան—մի գոյն» 21 ԵԺԼԽՀ սնարի Գ սնարի բարձիցն Դ բարձին 22 ՎՏ^{3}Ա համեմ (խախամոքք) ԹԻ յաւանցնում նոյն գրով՝ համեմ Ա խախամոքք Բ ոչ գոյր նոցա խոհարար անուշութեան խորտկաց առանձինն 22—23 Դ ոչ գոյր նոցա խոհարար անուշահամ կերակրոց և ոչ հացարարք Գ առանձին Տ^{1}Տ^2 անուշարարք 23 ԲԵԺԼԽԿՀ որոշեալք Բ սպասուց Ի ըստ ազատաց ըստ կարգի ԳԵԸԺԽ այս* փխ *այլ Բ հասարակ էր ԱԴԻՋԷԹԺԻՎՏ^3 այս հասարակացն էր։*

տարակաց էր։ Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եւղ ի զուարթութիւն խրախութեանս։ Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց։

Փշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա։ Չորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գիներեր այգեաց նոցա։

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան գանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց, խոտարուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն

---

*1 Բ միայնակեցացն V միայնակեցայց 1—2 A յանապատի S^2 յանապատ 2 ԲԹ բնակեալ էին։ Դ ի ձեռն ածեալ 2—3 ԵԺՀ կրսերք Խ և ոչ ոք կրտսերք 3 Խ յաւագաց Բ դաստառակ Դ մատուցանէր Թ օշնան (*լուսանցքում՝ *չօղան) V անճան* փխ *օշնան 3—4 ԱՋէԻԽV ի ձեռն 4— Բ փափկութեան* փխ *փափկասուն 5 Բ ուրախութեանն ԲS^2 առաջի նոցա Ը սանղք(!) Բ* չիք *անկան 6 Բ ուրախութեանն Դ յուրախութեան ԲԴ ի նոցանէ* փխ *նոցա S^1* չիք *նոցա ԵԺԼՀS^1S^2 նուիրակ նոցա Ը նըւիրակաց նոցա Խ նուիրականաց նոցա Բ ի դուռն* փխ *առ դուրս 7 Բ ի պատուական Բ նոքա* փխ *նոցա 8 ԲԳԵԸԺԼԿՀ եթէ Ա ամենևիմ Ի ամենևիմբ Ի* չիք *ի Ջ մի բընակասնդ(!) Է մի բնականունդ(!) Բ դայեկացն S^2 դայեկամնունդ բնակաց Դ* չիք *բնաւ 9 Բ* չիք *ի 10 Բ սրահք և սրմակալք* փխ *սրահակք և սրսկապանք S^2* չիք *և Բ 11 հարսանցն Ջ ոստայնքն Ե սենեակս 12 Բ տաճարք 13 Է երախնոց Ը երախտանաց Լ* չիք *անկան կործանեցան ապարանք նոցա 14 Դ աւերեցաւ 15 Գ բուրաստան*

վորության համաձայն սպասավորելու համար, այլ [այդ ամենը] ընդհանուր էր։ Շաբաթամուտն [անց էին կացնում] անապատում բնակվող միայնակյացների կարգով։ Ո՛չ ոք մյուսի ձեռին ջուր չէր լցնում, և ո՛չ էլ կրտսերները ավագներին սրբիչ էին մատուցանում. փափկասուն կանանց ձեռքը օճառ չընկավ, և յուղ չառաջարկվեց ուրախության հանդեսների համար։ Նրանց առջև մաքուր սկուտեղներ չդրվեցին և ո՛չ էլ բաժակակալներ տրվեցին ուրախության համար. նրանցից ոչ մեկի դռների մոտ նվիրակ չկանգնեց, և պատվական մարդիկ չկանչվեցին նրանց խնջույքի սեղանին. նրանց մտքերից չանցավ, թե գուցե սնուցանող որևէ դաստիարակ կամ մի սիրելի հարազատ ունեն։

Փշոտվեցին ու ծխոտվեցին նորահարսների սրահակներն ու առագաստները և սարդի ոստայններ ձգվեցին նրանց հարսնարաններում. կործանվեցին նրանց դահլիճների բարձր գահերը, և խանգարվեցին նրանց սեղանների պարագաները. ընկան-կործանվեցին նրանց ապարանքները, և տապալվեցին ու ավերվեցին նրանց ապաստան ծառայող ամրոցները։ Չորացան-ճռզեցին նրանց ծաղկանոցների բուրաստանները, և արմատախիլ եղան նրանց գինեբեր այգիների տունկերը։

Իրենց աչքերով տեսան իրենց կայքերի հափշտակությունը և իրենց ականջներով լսեցին իրենց սիրելիների վշտերն ու չարչարանքները. Նրանց գանձերն առան, թագավորական արին, և ամենևին զարդեր չմնացին նրանց երեսների վրա։

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ. շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթատները, առանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը։ Ովքեր իրենց մանկությունից հորթերի ուղեղներով և էրեների փափուկ մսով էին սնվել, մեծ ուրախությամբ խոտեղեն կերակուր էին ընդունում վայ-

---

ԱԵՋԷԸԹԺԻԼԽԿՀVS^1S^3 դաշտախիլ 15—16 Բ տաշտախիթք այգեստանեաց նոցա Դ դաշտայխիլ Կ չիք *եղէն Դ* չիք *«և դաշտախիլ եղէն—այգեաց նոցա» 16 Ե այգաց Ժ այգեցաց S^1 գինեայգեաց 17 ԲԴԻ արարաց Ը արարածոց 17—18 Բ* չիք *«և ականջօք—սիրելեաց իւրեանց» 18 ԳԵԺԼԽԿՀS^1S^2 զվիշտս չարչարանաց Դ* չիք *վշտից Բ* չիք *իւրեանց 19 Բ* չիք *և Դ* չիք *ամենևին 20 Դ նոցա* փխ *իւրեանց 21 Գ աշխարհին Հայոց Ջ գրեալք(!) Է գրեալք(!) ԹԺ գրգեալք, Հ գրուեալք(!) 22 ԲS^2 պաստառունս S^1 պաստեռունս Թ բաստեռունս (*լուսանցքում՝ *ցեսպակ կամ կոպայկ) Դ* չիք *ի 22—23 Բ հանապազորդ 23 ԳԴԵԸԺԻԼԽՀS^1S^2 ի տուն Դ աղօթիցն Կ հետիոտս ընթանային ի տուն աղօթիցն 23—24 ԲԳԴԵԺԻԿ խնդրել 24 ԵԽՀ նեղութեան 24—25 Դ որք,* չիք *իւրեանց 25 Բ ուղղով Դ ուղղովք ԵՑS^1 ուղովք ԸԺԽԿՀ իւղովք 26 Ա էրից ԳԿ երից Բ կերակրովք* փխ *կենօք Բ զվայրենի ԱԳԵՋԷԸԹԺԻԼԽԿՀS^2 զկերակուրսն Բ զկեանս իւրեանց* փխ մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն։ Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արեւակէզք և զամենայն գիշերսն գետնաբնէին։

Սաղմոսք էին մշտնջենաւորք մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն։ Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան։

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն որպէս առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եդեալ կռուեցան ընդ մեղսն կարևորս. հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա։ Խոնարհութեամբ կոփեցին զամբարտաւանութիւն և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն։ Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. աւետիս լուան ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս։

Այլք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին բաց նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն։ Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն։ Ա-

---

1 Բ սնդութեամբ փխ խնդութեամբ Բ չիք ամենևին զկերակուրն ԴՏ^1 զկերակուրս։ Բ սնդութեամբ փխ խնդութեամբ Բ չիք ամենևին 1—2 Ե փափկութիւն 2 V սևացան մորթք։ չիք ներկան Ըխ ներկեցան Բ իւրեանց մարմնոցն ԳԴԵԸԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 մարմնոցն ԲԿ ցերեկն 3 Կ յինէին փխ էին ԲԴ գիշերն 4 Բ ի բերանս նոցա մրմունջք ԳԵԸԺԽԾՀՏ^1 մրմունջ 4—5 Բ մխիթարութիւն 5 ԲԳԴԵԺԼԽԿՀՏ^{1}Տ^2 կատարեա։ 5—6 Խ միաբանեցին իբրև 6 Դխ չիք իբրև Բ հաւասար փխ հաւանք Բ ուղեղ 7 ԴԼՏ^{1}Տ^2 չիք զակօսն Ի զակօս ԱՁԻVՏ^3 արքայութեանն Բ յարքայութեանն առաջնոյ ԳԴԸԺԼԽԿՏ^{1}Տ^2 յարքայութիւնն ԽՀ յարքայութեան 7—8 Բ ուղիղ հասցեն ի նաւահանգիստ խաղաղութեամբ 9 ՁԷԻV զկանանցի ԲԳԵԸԺԿՀՏ^{1}Տ^2 տկարութիւնն Բ իբրև զարուս 10 Բ մեղս ԱՁԷԹԻV կարևորսն 11 ԲՏ^2 հարին և կորեցին ԲԴ չիք և ընկեցին Դ և կորեցին Բ արմատ 11—13 ԵԸԺԽՀ չիք միամտութեամբ—նախանձուն 12 ԱԳՁԻԼԿVՏ^{1}Տ^{2}Տ^3 խորամանկութեանն Ն խորա-

ընկների նման և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափուկ կյանքը։ Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրա էին քնում։

Մշտական սաղմոսներն էին նրանց բերանների մրմունջները, իսկ կատարյալ մխիթարությունը մարգարեների [գրքերի] ընթերցումն էր։ Երկու-երկու միաբանվեցին իբրև իրար համաձայն ու հավասար ամոլներ՝ ուղիղ տանելով արքայության ակոսը, որպեսզի առանց վրիպելու հասնեն խաղաղության նավահանգիստը։

Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ. կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ, կտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները։ Միամտությամբ հաղթեցին խորամանկությանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապտագույն ներկվածքը. կտրեցին ագահության արմատները և չորացան նրանց ոստերի մահաբեր պտուղները։ Խոնարհությամբ հաղթահարեցին ամբարտավանությունը և միևնույն խոնարհությամբ հասան երկնավոր բարձրությանը։ Աղոթքով բաց արին երկնքի փակված դռները և սուրբ խնդրվածքներով հրեշտակներին ցած բերին փրկության համար. ավետիս լսեցին հեռաստանից և փառավորեցին աստծուն բարձունքում։

Այն այրիները, որ նրանց մեջ կային, նորից առաքինության հարսներ դարձան և իրենց վրայից վերացրին այրիության նախատինքը։ Իսկ կապվածների կանայք կամովին կապեցին իրենց մարմնավոր ցանկությունները և հաղորդակից եղան սուրբ կապվածների չարչարանքներին. իրենց կյանքում նմանվեցին մեռած բաց նահատակներին, և հեռվից մխիթարիչ վարդապետներ եղան բանտարկվածներին։ Իրենց մատներով աշխատեցին ու կերակրվեցին, և թագավորից նրանց համար նշանակված ռոճիկը տարեցտարի թոշակ էին անում և նրանց ուղարկում մխիթարե-

---

մանկութեանն ստամանյի Բ չիք և 13 Ի կապուտակ Բ ներկուածոյ 14 Բ մահաբերք է պտուղք մահաբեր Տ^{1}Տ^2 չորացան պտուղք մահաբեր ոստոց նոցա ԱԲԵԸԺԻՀ նորա փխ նոցա 15 Դ կոխեցին փխ կոփեցին 15—16 Բ առաքինութեամբ փխ խոնարհութեամբ 16 ԵԼՀ բարձրութեան Է զկապեալ փխ զփակեալ 17—18 Բ ի փրկութեան փխ ի փրկութիւն 18 Բ զաւետիս 20 Բ էին ի նոցանէ Դ էին ի նոսա 20—21 Դ եղէն հարսունք վերստին առաքինութեան Բ ի նուաստութեան փխ առաքինութեան 21 ԲԴ բարձին զնախատինս այրութեան յանձանց Գ զնախատանս Տ^1 այրութեանն ԵԸԿՀ այրութեան 22 Բ կամու 23 ԱԳԴԻV կցորդք 23—24 Բ մատնեցին(!) փխ նմանեցին Տ^1 նմանեցան 25 Ըխ մխիթարիչ ԲԴ բանտարկելոցն Բ մատամբ Խ մահուամբ փխ մատամբք 25—26 Գ վաստակեցան 26 ԱՁԷԹԻV կերակրեցին ԲԸԽ ռոճիկս Դ ռոճիկան ԵԺԿՀ ռոճիկն 27 ԳԼՏ^1 չիք ի մխիթարութիւն։

նարին ճիպռանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն։

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց։ Ընագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։

*Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ որ ի հեռաստանէ, եթէ ե՞րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին խնդիր աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ **քաջութեամբ** և նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն։*

*Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց, և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ ի **Քրիստոս** Յիսուս ի Տէր մեր։*

---

1 ԳԾԿՏ¹ ճիպռաց ԵԸՀ ճիպռայ Տ² ճպռանց Դ հրեշտակաց փխ ճիպռաց Դ և փխ որ Ժ որք 1—2 Բ ճիպռանց նմանեցան ձայնիւ ոգով քաղցրութեամբ առանց կերակրոյ կենդանի են միայն զօդն... 2 Դ կերակրոյ Կ կան փխ կեան ԱԶէԹԻV ծածկելով փխ ծծելով 2—3 Դ և (զանմարմնոցն) 3 ԳԼ նմանութիւն 4 ԲԴՏ² զբազում ձմերանցն հալեցին զսառնամանիսն (Դ ձմերանցս զսառնամանիս) ԲԹ գարունն 5 ԳԵԺԼՀՏ¹ ծիծառունք Դ նոր ծիծառունք ԲԸԹԻԽԿՏ² ծիծռունք ԱԶէVՏ³Ա ծիծեռունք Խ մարդիկք 6 ԸԽ չիք երբէք Դ ոչ կարացին երբէք ԵԺՀ ոչ կարացին տեսանել երբէք Բ տեսին փխ կարացին տեսանել Կ զանձկալիս Ե զանծկալիսն 6—8 ԲՏ² ծաղիկք գարնանային ծաղկեցան և նոքա ոչ յիշեցին զպսակասէր ամուսնութիւնն իւրեանց (Տ² զամուսինս) է չիք «ծաղիկք—աչք իւրեանց» Ե ամուսինսն(!) 7—8 Բ չիք և (աչք) 8 ԱԶէԹԻV ցանկացան փխ կարօտացան Դ զգեղ 9 Տ¹ սպառացան(!) Հ սփռեցան(!) Բ բանակք փխ բարակք Դ չիք բարակք Ժ բանակք բանակր Կ բարակք բարակր Բ կորացան փխ կուրացան 10 Բ որսողացն ԳԼԽԿՀՏ¹ ընագրաւ(!) Դ ընագրաւք ոչ յիշատակեցան նոցա Դ և ոչ մասք փխ և ոչ մի տօնք 10—11 է տօնէկանաց(!) փխ տարեկանաց

լու համար։ Նմանվեցին անարյուն ճպուռներին, որոնք իրենց երգի քաղցրությամբ ապրում են առանց կերակրվելու և կենդանի են միայն օդ ծծելով՝ նմանվելով անմարմին [հրեշտակ]ներին։

Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ և նոր ծիծեռներ եկան. կենցաղասեր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին։ Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու։ Որսի բարակները վերջացան, և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները։ Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն նրանց հեռու օտարությունից տուն չբերեց. Նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասվեցին և բոլոր ատյաններում հիշեցին նրանց անունները։ Շատ արձաններ էին կանգնեցրած նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա։

Եվ մինչդեռ այսպես ամեն կողմից ալեկոծվում էին նրանց մտքերը, նրանք ամենևին չթուլացան երկնավոր առաքինությունից։ Դրսից նայողներին երևում էին որպես սգավոր և չարչարված այրիներ, իսկ իրենց սրտերում զարդարված ու մխիթարված էին երկնավոր սիրով։

Այլևս սովորություն չարին հեռու երկրից եկած մեկին հարցնելու, թե ե՞րբ կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նրանց իղձն ու աղոթքն առ աստված, որ ինչպես սկսել են, այնպես էլ քաջությամբ ու երկնավոր սիրով լի նույնը գլուխ հանեն-վերջացնեն։

Ե՛վ մենք, և՛ նրանք առհասարակ ժառանգենք երկնքի արքայությունը և հասնենք այն ամենին, ինչ որ խոստացված է աստծու սիրելիներին հանուն մեր տեր Հիսուս Քրիստոսի։

---

11 ԵԸԺԼԽՀՏ¹Տ² չիք ոչ (ածին) ԳԿ ի ճաշետեղս Դ ի ճաշակատեղին Տ³Ա ի ճաշակատեղս 12 Հ ամենայն ԳԼԽՀՏ² ատեանս 13 Բ չիք բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա Գ արձան Դ արձանս կանգնեալ է 14 Դ զիւրաքանչիւր ԲԴ նշանակեալ է ի նոսա 15 Բ իբրև այս այսպէս։ չիք Եւ Դ չիք իբրև Բ ալեկոծէին փխ ալեկոծ լինէին 16 Դ և ոչինչ կասեալք Թ յոլացան(!) փխ թուլացան Բ առաքինութենէ 16—17 ԱԶէԹV արտաքնոյն 17 Գ այրիքս իբրև թագաւորք փխ իբրև այրիք սգաւորք Ծ վերջանում է՝ «չարչարեալք» բառով. թերթ է ընկել. հետևյալ էջը հիշատակարան է։ Խ վերջանում է տող 12—13 «զանուանս նոցա» բառերով։ Ձեռագրի վերջին թերթն ընկած է։ Հ հոգիս 18 Գ չիք զարդարեալք և Դ չիք և մխիթարեալք երկնաւոր սիրով ԵԸԺԼ սիրովն 19 Բ սովորեցան V սովորեցին ԶէԹV զեկեալքս 19—20 ԲԸՏ² թէ Հ յե՞րբ 20 Բ լիցի Դ չիք մեզ Դ զսիրելիս ԲԴ այս է եղձք փխ խնդիր 21 Բ թէ որպէս սկսաքն Տ¹ սկսան 21—22 Բ և կատարեսցուք 22 Բ սիրով 23 ԲԴԼՕՏ¹Տ² առհասարակ 24—25 Բ չիք «և հասցուք—ի տէր մեր»։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եղիշեն իր պատմությունը գրել է Մամիկոնյան Դավիթ երեցի խնդրով։ Ո՞վ է սա՝ անհայտ է։ Բանասեր Ե. Կյուլեսերյանը («Եղիշե. Քննական ու ուսումնասիրություն», Վիեննա, 1909, էջ 79—80) Դավիթ Անհաղթին է ենթադրում, սակայն այդպիսի ենթադրության համար ոչ մի կռվան և փաստի հեռավոր նմանություն չկա, բացի Դավթին «երկրավոր ասաց գիտության վերագրելուց», մի բան, որ չի կարելի Դավիթ Անհաղթի մենաշնորհը համարել։ Միքայել Փորթուգալ փաշան Դավիթ երեցին նույնացնում է Ղազար Փարպեցու կողմից իբրև Արտաշատի ժողովի մասնակից հիշված Դավիթ երեցի հետ։ Այս կարծիքի դեմ է խոսում այն հանգամանքը, որ այս դեպքում Եղիշեն չէր կարող չհիշել իր մեկենասի Արտաշատի ժողովական լինելը և անշուշտ անունով կհիշեր նրան և ոչ թե կգործածեր «և պատուական երիցունք ի տեղեաց տեղեաց» անորոշ արտահայտությունը*։

2. Եղիշեի բնագրի միտքն այստեղ մութն է, և այդ պատճառով էլ Եղիշեի թարգմանիչները այստեղ լոկ ենթադրական, բայց մեծ մասամբ սխալ թարգմանություններ են տվել։ Թվում է ինձ, թե այստեղ Եղիշեն մեծարում է իր մեկենասին՝ ասելով, թե նա այնքան գիտուն անձ է, որ կարող է իր հրամայածից ավելի լավերն արտագրել, և ուրիշները պետք է իրեն դիմեին այդպիսի լավագույն գործերի համար։ Մոտավորապես այս իմաստով էլ թարգմանված է սույն աշխատության մեջ։

3. «Հաղթության զորագլուխ» ասելով հասկացվում է Քրիստոսը։

4. «Արշակունյաց ցեղը» հայոց թագավորների այն հարստությունն էր, որ Հայաստանում թագավորել է ըստ ավանդության Քր. առաջ 2-րդ դարի կեսերից (հավանորեն 132 թվականից) մինչև 428 թվականը Քրիստոսից հետո, ուրեմն շուրջ 560 տարի։ Սակայն պատմական ճշգրիտ տեղեկությունների համաձայն՝ Արշակունիները թագավորել են Հայաստանում միայն 54 թվականից Քր. հետո, հաստատապես 66 թվականից սկսած, երբ Արշակունի Տրդատ I-ը թագ ընդունեց հռոմեական կայսր Ներոնի ձեռքից։ Արշակունիների հաջորդականությունն ու ժամանակագրությունը մոտավորապես հետևյալն է.

Տրդատ I (54 թ. պաշտոնապես 66—75?)
Աշխադար (?—110)
Պարթամասիր (110—114)
Վաղարշ I (118—140)
Սոյեմոս (140—162)
Պակոր (162—164)

---

* Ծանոթագրությունները տրվում են առանց փոփոխության, ըստ 1971 թ. հրատարակության։

Սոյեմոս երկրորդ անգամ (164—169)
Սանատրուկ (190—196)
Վաղարշ II (196—215)
Տրդատ II (216—222)
Արշակ II, Խոսրով (222—238)
Տրդատ III (238—252)
Արտավազդ V (253—273?)
Պարսից տիրապետություն (273—297)
Տրդատ Մեծ (297—336)
Խոսրով II (337—342)
Տիրան (342—350)
Արշակ II (350—367)
Պապ (368—374)
Վարազդատ (374—377)
Արշակ III (378—386)
Հայաստանի բաժանումը 384 թ., վերջնականապես 390 թ.
Խոսրով III Պարսից բաժնում (389—391)
Վռամշապուհ (391—414)
Շապուհ պարսիկ (415—419)
Անիշխանություն (419—422)
Արտաշես կամ Արտաշիր (422—428)
Արշակունյաց բարձումը 428 թ.։

5. Պարսիկ Սասանի ցեղը կամ Սասանյան տոհմը սկիզբ է առնում Սասանից, որի թոռն էր Պապակի որդի Արտաշիր I-ը, Սասանյան պետության հիմնադիրը։ Սա, թագավոր դառնալով, պատերազմի է դուրս գալիս պարթևների արքայից արքա Արտավանի դեմ և 224 թվականին հաղթում է նրան, 226 թ. գրավում է նաև Կտեսիփոն կամ Տիզբոն մայրաքաղաքը և ամբողջ պետությունը ենթարկում է իրեն։

226 թվականից Սասանյան տոհմն իշխում է Պարսկաստանում և երկիրն ու պետությունը այնպիսի ծաղկման հասցնում, ինչպիսին նա ունեցել էր Աքեմենյանների ժամանակ միայն։ Այս տոհմի օրով է, որ ազգային մշակույթի, կրոնական սովորությունների և կյանքի զարգացումն իր գագաթնակետին է հասնում. իրանական (զրադաշտական կամ մոգական) կրոնը հաղթական դիրք է գրավում նաև Իրանում լայնորեն տարածված քրիստոնեության հանդեպ և մեծ ծաղկման է հասնում, տևելով մինչև Սասանյան պետության անկումը՝ 642 թվականը՝ արաբական արշավանքների հետևանքով։

Մինչև Կոստանդնի քրիստոնեություն ընդունելը և քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ պետական կրոն դարձնելը մենք ոչ մի տեղեկություն չունենք, որ պարսից թագավորներն սկզբունքով հալածած լինեին քրիստոնեությունը։ Բայց այս իրադարձությունից հետո և պարսկա-հռոմեական պատերազմներին զուգընթաց Պարսկաստանում սկսվում են դաժան հալածանքները քրիստոնեության դեմ, որովհետև պարսիկները նկատում էին, որ Պարսկաստանի բոլոր քրիստոնեաների համակրությունը հռոմեացիների կողմն էր։

Հալածանքների գլխավոր նպատակն էր ոչնչացնել մանավանդ քրիստոնեական եկեղեցու կազմակերպությունը։ Այս քաղաքականությունն են վարում հատկապես Շապուհ II-ը և նրա հաջորդները մինչև Հազկերտ I-ը (399—420), որի ժամանակ հալածանքները դադարում են, և քրիստոնեաների դրությունն այն աստիճան է լավանում, որ նրանք 410 թվականին նույնիսկ ժողով են գումարում Սելևկիայում, կարգավորում են իրենց եկեղեցական գործերը և Սելևկիայի եպիսկոպոս Իսահակին ընտրում են բոլոր պարսից քրիստոնեաների կաթողիկոս։ Հազկերտ I-ի մահից հետո հալածանքները վերսկսվում են Վռամ V-ի ժամանակ կարճատև և ապա ավելի մեծ եռանդով՝ Հազկերտ II-ի օրով (438—457), որը հալածանքները տարածում է նաև Հայաստանի վրա։

Ահա այս հալածանքների պատմությունն է նկարված Եղիշեի Վարդանանց պատմությունը։ Միանգամայն սխալ կլինի քրիստոնեության այս հալածանքները Սասանյան թագավորների կողմից կրոնական մոլեռանդությամբ ու մոգերի սադրանքներով բացատրել։ Անկասկած է, որ պարսից թագավորների և պետական գործիչների համար ամենագլխավորն այստեղ քաղաքական խնդիրն էր՝ իրենց երկրի քրիստոնյաների և Բյուզանդական կայսրության միջև անջրպետ դնել և թույլ չտալ որ սահմանակից քրիստոնյա երկրները իրենց ձեռքից դուրս գան և Բյուզանդիայի հետ միանան։ Սրա փայլուն ապացույցն այն է, որ քրիստոնեաների սկզբունքային հալածանքները պարսից պետության մեջ դադարեցին այն ժամանակվանից, երբ Պարսկաստանում հաստատվեցին Բյուզանդական կայսրության սահմաններից արտաքսված քրիստոնյա նեստորականները իրենց մետրոպոլիտ Բարծումայի (435—489) ջանքերով, և պարսիկները տեսան, որ այս քրիստոնյաները ամենևին էլ համակրանքով չեն վերաբերվում բյուզանդացիներին։ Նույն քաղաքականությունը նկատվում է նաև հետագայում միաբնակների վերաբերմամբ։ Սրան բնավ չի հակասում այն, որ մոգերն, իրենց հերթին, ամեն կերպ աշխատում էին օգտվել ստեղծված դրությունից և իրենց կրոնի ազդեցությունն ավելի հեռուները տարածել։

Սասանյան թագավորների ժամանակագրական աղյուսակը սկսած Որմիզդ II-ից։

Որմիզդ II (303—310)
Շապուհ II (310—379)
Արտաշիր II (379—384)
Շապուհ III (385—388)
Վռամ (Բահրամ) IV (389—399)
Հազկերտ I (399—420)
Վռամ (Բահրամ) V (420—438)
Հազկերտ II (438—457)
Որմիզդ III (457—458)
Պերոզ (458—484)

6. Այստեղ հիշված Շապուհն անշուշտ Շապուհ III-ն է (385—388)։

7. Վռամ կամ Բահրամ V (420—438), Հազկերտ II-ի հայրը։

8. Հազկերտ II (438—457)։ Նյոլդեկեն այս թագավորի մասին գրում է հետևյալը. «Բահրամի մահից (438 կամ 439) հետո թագավոր է դառնում նրա որդին՝ Հազկերտ II-ը։ Սա հալածում էր թե՛ քրիստոնյաներին և թե՛ հրեաներին։ Անհասարակ էլ դժվար է նրա մասին լավ բան ասել. նա վերացրեց ամեն ամսի 1-ին կատարվող ընդունելությունները, որոնց ժամանակ ամեն մի ականավոր մարդ անձամբ կարող էր իր գանգատները կամ խնդիրները հայտնել թագավորին։ Նրա մասին պատմում են, թե ամուսնացել էր իր աղջկա հետ— սա, իհարկե, հանցանք չէր զրադաշտական կրոնի հետևողի

համար, ընդհակառակը, նույնիսկ առաքինություն էր,—բայց հետո սպանել է այդ աղջկանը։ (*Th. Nöldeke*, Aufsätze zur persischen Geschichte, էջ 106)։ Այս բնութագիրը միանգամայն համապատասխանում է Հազկերտ II-ի կատաղի բնավորությանը, ինչպես այն նկարագրում է Եղիշեն, իբրև սատանային գործակից, իբրև մի կատաղի գազան, իբրև մի մարդ, որին շատ սիրելի էր խռովությունն ու արյունհեղությունը, իբրև մի չար դև և այլն։

9. **Հունաց երկիր** արտահայտությունը գործ է ածվում Հռոմեական կայսրության մեջ մտած երկրների համար. երկու տող ներքև Եղիշեն նույն երկրների համար գործ է ածում **հռոմների գավառներ** արտահայտությունը։

10. **Մծբին**—Վերին Միջագետքի կամ Արվաստանի (Բեթ-Արբայե) մայրաքաղաքը, լատին. Nisibis, Տիգրիսից մոտ 100 կիլոմետր դեպի արևմուտք։ Պարսից և հռոմայեցոց հարաբերությունների մեջ հսկայական դեր խաղացող ռազմագիտական կետ։ Այս քաղաքը և իր շրջանը Հոբիանոս կայսեր խայտառակ դաշինքի շնորհիվ 364 թվականին վերջնականապես անցավ պարսիկներին և պարսկա-հռոմեական բոլոր հետագա պատերազմներում պարսիկների համար իբրև հենակետ էր ծառայում թե՛ հարձակումների և թե՛ նահանջների ժամանակ։

11. **Թեոդոս II կայսր** (408—450), Արևելյան Հռոմեական կայսրության ամենաթույլ կայսրներից մեկը, որ քաղաքականապես երբեք չափահաս չդարձավ և միշտ գտնվում էր իրեն շրջապատողների ազդեցության տակ։

12. **Տիզբոն կամ Կտեսիփոն**, այժմյան Բաղդադից մոտ 16 կիլոմետր դեպի ցած Տիգրիսի ձախ ափին, Սելևկյանների մայրաքաղաք Սելևկիայի դեմուդեմը, Պարթևների ժամանակից բարգավաճեց ու դարձավ պետության մայրաքաղաք և թագավորական ձմեռոց։ Տիզբոնն իր այս դիրքը պահեց նաև Սասանյանների ժամանակ, մանավանդ Շապուհ II-ից սկսած։ Այժմ ավերակ է։

13. **Ջախջախման պաշտոնյաներ** կոչվում են մոգերը։

14. **Մոգեր**— կոչվում են իրանական կրոնի քահանաները, քրմերը ինչպես զրադաշտական կրոնից առաջ, այնպես էլ զրադաշտական կրոնի ժամանակ։ Մոգ բառը գործ է ածվում նաև «կախարդ», «աստղագետ», «երազահան» նշանակություններով։ Ավեստան խուսափում է այս անունից և քահանաներին իրենց կատարած գործի անունով կոչում է աթրավան=կրակ վառողներ։ Անշուշտ ժողովրդի մեջ գերակշռել է մոգ անունը. հույներն ու հայերն էլ պարսկական քահանաների համար գործ են ածում այս բառը ի տարբերություն բաբելական քահանաների, որոնք կոչվում են քաղդեացիներ կամ քավդեներ։

15. **Քուշաններ**—հոնական ցեղեր, որոնք ապրում էին Պարսկաստանի հյուսիս-արևելյան սահմաններին կից Բակտրիայում (այժմյան Խորասանում) և նրանից հյուսիս ու արևելք և այնտեղից հաճախակի արշավանքներ ձեռնարկում դեպի պարսից պետության սահմանները։ Նրանց մայրաքաղաքն էր Բահլ, կոչվում էր նաև Բակտրա, համարվում էր Զրադաշտի հայրենիքը, Կյուրոսի մայրաքաղաքը, արհեստների ու առևտրի կենտրոն, Պարսիկ և արաբ պատմիչները սրանց և սրանց հաջորդներին տալիս են **ճայթալ** անունը, որը նույնն է հայ պատմիչների **հեփթաղների** հետ. վերջիններս կոչվում են նաև սպիտակ հոներ։ Հեփթաղներն ավելի ուշ են պատմական թատերաբեմ դուրս գալիս։ Քուշանները 468 թվականին մեծ պարտություն են կրում և անհետանալով պարսկական պետության հյուսիս-արևելյան սահմաններից՝ անցնում են Հինդուկուշ և մի նոր պետություն հիմնում Փենջաբում։

16. **Պահ դուռ**— տեղը հաստատապես որոշել հնարավոր չէ։ Պարզ է, որ այն պետք է որոնել Պարսկաստանի հյուսիս-արևմտյան կողմերում։ Փորթուգալ փաշան Պահ դուռը համարում է Էլբուրսի հարավակողմը գտնվող Սիրտառ կոչված կիրճը և նույնացնում է այն նախկին դուռն Կասպից (Pylae Caspiae) կոչվածի հետ, որը պաշտպանելու համար կառուցված էր Ռեյ քաղաքը։

17. **Դեն** բառն այստեղ չի գործածվում կրոնի կամ հավատի, այլ այդ կրոնի կամ հավատի հետ կապված գուշակությունների, հմայությունների իմաստով։

18. **«Արիք և Անարիք»** համապատասխանում է պարսկերեն «Էրան և Աներան» արտահայտությանը և նշանակում է Իրան և Ոչ-Իրան, իրանացիներ և ոչ-իրանացիներ։ «Արեաց և Անարեաց» կամ «Էրան և Աներան» պարսից արքայից արքայի տիտղոսն է։

19. **Ապար աշխարհ** հին պարսկական ձևն է Ապրշահր, որ բառացի նշանակում է «վերին աշխարհ»— Պարսկաստանի հյուսիս-արևելյան մասը (այժմյան Խորասան), որ տարածվում էր մինչև Վրկան աշխարհի սահմանները։ Այստեղ է գտնվում Հարև-րուդ գետը և Հերաթ (Հին Հարև) քաղաքը, որ այսօր էլ վաճառաշահ քաղաք է։ Այս քաղաքում էին գտնվում հայ նախարարները կապանքներից արձակվելուց հետո (Ղազար Փարպեցի, Թիֆլիս, 1904, էջ 168)։ Ապար աշխարհի գլխավոր քաղաքն էր Նյուշապուհը, որ կառուցել էր Շապուհ I-ը։ Այստեղ է գտնվում նաև Ռեվան գյուղը, որտեղ նահատակվեցին Ղևոնդյանք։

20. **Աղվանից աշխարհ**— Վրաստանից դեպի արևելք, Կովկասյան լեռներից հարավ, այժմյան Ադրբեջանի հյուսիս-արևմտյան մասում։

21. **Լփնաց աշխարհ**—Լփինք, Կովկասյան լեռնական ցեղ և երկիր, տեղը որոշակի հայտնի չէ. Ալիշանը Շիրվանի մեջ է դնում, Պլինիոսն այդ ցեղն անվանում է լուպիենի և դնում է Աղվանից հարավ։

22. **Ծավդեից աշխարհ**— նույն տեղում հիշվում է երկու անգամ. առաջին անգամ «Վրաց, Աղվանից, Լփնաց, Ծավդեից» իրար հետ կապված, որ հավանական է դարձնում դրանց Կովկասյան լեռնական լինելը և Սոդերի (Ծոդեից) հետ նույնացնելը։ Երկրորդ անգամ ասվում է՝ «և որ այլ են ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի և ի Հոռոմոց աշխարհն և ի Կորդուաց և ի Դասն և ի Ծաւդէիցն և յԱրզնարզինս». այս կապակցությունը ցույց է տալիս, որ երկրորդ անգամ հիշված Ծավդեից աշխարհը բոլորովին այլ է և կապ չունի առաջին անգամ հիշված հյուսիսային լեռնական երկրի հետ։ Այս երկրորդ Ծավդեից աշխարհն անշուշտ պետք է նույնացնել Կորդվաց աշխարհից հարավ գտնվող Zabdicene գավառի հետ (=ասոր. Be Zawdai), Տիգրիս գետից դեպի արևմուտք (տե՛ս սրանց մասին *H. Hubschmann*, «Die altarmenischen Ortsnamen», Strassburg, 1904, էջ 321 և *J. Marquart*, «Eranschahr», էջ 158)։

23. **Կորդվաց աշխարհ**— Տիգրիսի ափին, սրա վտակների՝ Բոհտանսուի և Խաբուրի

միջև մինչև Մոսուլի սահմանները։ Այս անունից է առաջացել հավանորեն Քուրդիստան անունը։

24. **Աղձնյաց աշխարհ,** *Աղձնիք*—Arzanene—Տիգրիս գետից դեպի հյուսիս, Միջագետքից դեպի արևելք, Մեծ Հայքի 15 նահանգներից երրորդը, Հայաստանի հարավարևմտյան կողմը. սահմաններն են Չորրորդ Հայք, Տուրուբերան և Մոկք նահանգները և Ասորեստանը։ Գլխավոր գետերն են՝ Տիգրիս և Բուխ, լեռները՝ Սիմ, Տորոս, Խույթ և այլն։

25. **Տաճկաստան** այստեղ գործ է ածված արաբների երկիր իմաստով և համապատասխանում է Հյուսիսային Միջագետքի Արվաստան (Բեթ-Արբայե) երկրամասին, որի մայրաքաղաքը Մծբինն էր և որտեղ մեծ քանակությամբ արաբներ էին ապրում։ Հմմտ. ծանոթ. 10։

26. **Արզնարզին**— ճիշտ տեղը հայտնի չէ։ Անվանվում է Մոկաց և Ծավդեից աշխարհների կողքին, ուրեմն պետք է նրանց սահմանակից լիներ. հավանորեն, Աղձնյաց աշխարհի Արձն կամ Արզն գավառն է։ Այս անունը հիշում է նաև Թովմա Արծրունին, Բարձումայի մասին խոսելիս՝ «եկն եհաս յԱրզնարզիւն և յաշխարհն Մոկաց»։ **Ակինյան,** «Հանդես Ամսօրյա», 1936 թ., էջ 42, ծանոթագր. 7-ում գրում է սրա մասին. «Ինձ կթվի թե նույն է Արզն=Արզուն գավառին հետ, որ ժամանակ մը երկուքի բաժնված կերևա. ասորի հեղինակք կզանազանեն Արզուն և Արզուն Ռոստան (Braun, Synhados, 32, 34, 162, Hübschmann, Altarmen. Ortsnamen, 248—251, 311, 321), երկուսն ալ եպիսկոպոսանիստ։ Հավանորեն Արզն=Արզուն և Արզուն Ռոստան. հետո... վարչականապես միացած են և կոչված Արզն—Արզուն=Արզնարզիւն»։

27. **«Բարբարոսներ»** էին անվանում հույները բոլոր օտար ազգերին։ Պարսիկներն այդպիսիներին պիտի անվանեին ո՛չ թե բարբարոսներ, այլ «անարիներ»։

28. **Հազկերտի** II-ի թագավորության չորրորդ տարվանից մինչև 11-րդ տարին կլինի 441/442—448/449, որովհետև Հազկերտի գահակալության առաջին տարին է 438 թվականի օգոստոսի 4-ից մինչև 439 թվականի օգոստոսի 4-ը։

29. **Խայլնդուրներ կամ Խայլանդուրներ**—հոնական ցեղերի անունն է։ Մարքվարտի կարծիքով այդպես է կոչվել հոների արքայական հորդան. ուղղագույնն այն է, որ հոների մեծ պետության քայքայումից հետո, այդ անունն էլ անհետանում է։

30. **Ճորա պահակ.** Ճողա, Չողա, Կապան Ճորա, Դուռն Աղվանից, Հոնաց և այլն. գտնվում էր այժմյան Դերբենտ քաղաքի մոտերը՝ Կասպից ծովի ափին։ Այդ վայրը խոշոր կարևորություն ուներ թե՛ հռովմայեցիների և թե՛ պարսիկների համար։ Հռովմեական պետությունը հոգ էր տանում և նույնիսկ դրամական միջոցներ էր տալիս Ճորա պահակը կարգին ամրացված վիճակում պահելու համար, որպեսզի հյուսիսային վայրենի ցեղերն այնտեղից Վրաստան և Հայաստան և ապա հռովմեական գավառները չանցնեին։ Երբ Հռովմայեցիները ուշացնում կամ դադարեցնում էին Ճորա պահակի պահպանման համար պայմանավորված սուբսիդիայի վճարումը, պարսիկներն անմիջապես պահանջ էին դնում վերականգնելու այդ վճարումները, և նրանց դադարեցումը պատճառ էր դառնում թշնամական ու պատերազմական գործողությունների։

31. **Ատրուշան**— այն սեղանն է, որի վրա վառվում էր կրակը. շատ անգամ գործ է ածվում նաև կրակատուն իմաստով։ **Ատր** կամ **Ատուր** պհլ. նշանակում է կրակ։

32. **Բաբելոնի հնոցը**— ակնարկություն է Դանիելի մարգարեության գլ. Գ 19 և 46—47, որտեղ նկարագրված է Սեդրակին, Միսաքին և Աբեդնագովին խարույկ բարձրացնելը Նաբուգոդոնոսոր թագավորի հրամանով։ Թագավորը պատվիրում է հնոցը յոթնապատիկ ջեռուցանել, և սպասավորները չեն դադարում հնոցը նավթով ու ձյութով և այլ վառելանյութերով բորբոքելուց, մինչև որ բոցը հնոցից 49 կանգուն վեր է բարձրանում և այրում է շրջապատող քաղդեացիներին։

33. **Քավդեություն**— բաբելոնական կրոնի վերջին շրջանի անունը, երբ կրոնը ամբողջովին վեր էր ածվել աստղաբաշխության, կախարդությունների, հմայությունների և գուշակությունների։ Կրոնի ներկայացուցիչ քուրմը կոչվում էր քավդեա։

34. **Խազական երկիր**— հայթալների կամ հեփթալների երկիրը, ուրիշ խոսքով քուշանների երկիրը։ Հմմտ. ծանոթ. 15։

35. **Զրադաշտական կրոն կամ Մազդայականություն**—իրանական կրոնը նրա մեծ մարգարե Զրադաշտի անունով կոչվում է զրադաշտականություն։ Այլ անունով նա կոչվում է նաև Ահուրա-Մազդայի հավատ. դենիմազդեզն, մազդայականություն, այլև մոգական կրոն՝ այդ կրոնի ներկայացուցիչ քահանաների անունով։

Զրադաշտական կրոնի էական բովանդակությունը միմյանց հակառակ երկու սկզբունքների՝ **բարու և չարի,** մշտական պայքարն է։ Այդ պայքարն ու կռիվը չեն կարող վերջանալ, մինչև որ բարին չհաղթի չարին։

36. **Խանչան**—վարտիքի կամ անդրավարտիքի կապ։ Խանչանները կնքելը մի ծանր պատիժ էր Պարսկաստանում, որպեսզի հանցավորը մնա իր կեղտոտությունների մեջ և տանջվի։

37. **Հազարապետ**—երկրի բարձրագույն քաղաքացիական պաշտոնյան ու բարձրագույն դատավորը։ Բառը նույն նշանակությունն ունի, ինչ որ պարսկական buzurg framadhar-ը։ Այդ անունը տրվում էր նաև պարսից թիկնապահների բանակի կամ «անմահների» տասը գնդերից յուրաքանչյուրի հրամանատարին. այդ գնդերը բաղկացած էին հազարական հոգուց, այդտեղից էլ հազարապետ անունը։

Եղիշեի մեջ այս տեղում խոսքը վերաբերում է Վահան **Ամատունուն,** որը Հմայակ Մամիկոնյանի հետ աշակերտել էր Մեսրոպ Մաշտոցին, և որանց համար Կորյունն ասում է՝ «Արք պատուականք, երկիւղածք հրամանակատարք վարդապետական հրամանացս» (Կորյուն, Վարք Մաշտոցի, հրատ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 92)։

38. **Դանեկան**—հնագույն ձևը երևի «դարեհական»—Դարեհի նշանով պարսկական դրամ։ Հյուբշմանը (Arm. Gr., էջ 133) բացատրում է պարսկական **դանգան** բառից, որ նշանակում է «տասնոց» (Հր. Աճառյան, Արմատական բառարան, II հատ., էջ 382—384)։

39. **Սակ, Բաժ և Հաս**—բաժը մաքսն է, իսկ հասն ու սակը դժվար է միմյանցից որոշել։ Գուցե սակը հողահարկն է, իսկ հասը՝ բահրան։

40. Վզուրկ—պհլ. վուզուրգ կամ վազուրգ բառն է, որ նշանակում է «ավագ, մեծ» (տե՛ս Hübschmann, Arm. Gr., էջ 246 և **Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, VI հ., էջ 662)։ Հրամանատարի կամ հետնագույն հրամանատարի կողքին դրվելով՝ նշանակում է մեծ հրամանատար, ավագ հրամանատար կամ, ինչպես մենք այժմ ասում ենք մեծ վեզիր։ Սա մովպետան մովպետից հետո պետության բարձրագույն պաշտոնյան էր։ Այստեղ հիշված վզուրկ հրամանատար (**Տաբարիի** մեջ buzurg framadhar) Միհրներսեհը հայտնի պատմական անձնավորություն է, որ երկար տարիներ (Հազկերտ I-ի ժամանակից) կատարել է այդ բարձրագույն պաշտոնը և որին ծերության հասակում Հազկերտ II-ը նորից նույն պաշտոնին է կոչել։ **Տաբարին** հետևյալ կերպով է արտահայտվում Միհրներսեհի մասին. «Այս Միհրներսեհը մեծ ակնածանք էր վայելում։ Պարսից բոլոր թագավորների կողմից իր նուրբ կրթության, մեծ խոհեմության և այն վստահության պատճառով, որ դեպի նա տածում էր ժողովուրդը» (Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. übersetzt von Th. Nöldeke, Leyden, 1879, էջ 109)։ Մի այլ տեղում՝ «նա իր ժամանակի իմաստուն մարդն էր, կատարյալ կրթության տեր, և իր վարվեցողությամբ գերազանց ու աչքի ընկնող էր ժամանակակիցների մեջ» (Անդ. էջ 75—76)։ Սրան միանգամայն համաձայն է հայ եպիսկոպոսների պատասխանի «Գիտեմ, զի այլովք ամենայնիւ յոյժ իմաստուն ես» գովասանքը։

41. Երան և Աներան— Նույնն է, ինչ որ Արիք և Անարիք։ Տե՛ս ծանոթագր. 18։

42. Դենիմազդեզն— մազդայական կրոն, իրանական կամ զրադաշտական կրոնի անունը Ահուրա-Մազդայի անվան երկրորդ մասից (Մազդա=իմաստուն) և յասն բառից, որ նշանակում է պաշտել։ Մազդայական կրոնի մասին տե՛ս ծանոթագր. 35։

43. Հարամանի, Խարամանի կամ Հարաման, Խարաման—նույնն է, ինչ որ Արհմն կամ Ահրիման, չարության աստծու անունը։ Hübschmann, Arm. cr., Leipzig, 1897, էջ 26, ասում է. «Թվում է, թե հայերենի Հարամանի ձևը ավելի հին է (Արշակունիների շրջանից), իսկ Արհմն ձևն ավելի նոր է (Սասանյան)»։ **Արդեն Եզնիկ** (Վենետիկ ՌՄՀԵ, էջ 144 և 235) Խարաման կամ Խարամանի անունը գործ է ածում Արհմնի մասին։ Խարամանի ձևը հավանորեն առաջացել է զուգակցվելով ասորերեն **խարմանա** բառի հետ, որ նշանակում է օձ և հիշեցնում է դրախտի օձին կամ սատանային։

44. Բանբուռակ— անշուշտ Պանթերա անվան աղավաղումն է։ Հրեական գրույցները Քրիստոսի մասին ասում էին, նրա վարկը գցելու համար, թե անառակություններից ծնված մի մարդ է նա, և նրա հայրը եղել է հռովմայեցի մի զինվոր Պանթերա անունով։

45. Նածրացի կամ Նածարացի— նույնն է, ինչ որ **Նազարացի** կամ **Նազովրեցի** և նշանակում է Հիսուս Նազովրեցու հետևող կամ քրիստոնյա. բառը գործ է ածվում ընդհանուր նշանակությամբ թե՛ եպիսկոպոսների և թե՛ սովորական քրիստոնյաների համար (համմտ. Hoffmann, Auszüge 34)։ Վկայք Արևելից. էջմիածին, 1921, էջ 159 և 160. Յազդանդուխտ իրեն մասին ասում է՝ «Զի ես եմ կին Նազաւրացի և աշակերտ Քրիստոսի»։ Սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ Միհրներսեհը Նածրացի է անվանում միայն քրիստոնեական կրոնի առաջնորդներին («Մի՛ հավատաք ձեր առաջնորդներին, որոնց նածրացի եք անվանում»). արդյոք այն պատճառով, որպեսզի միայն նրանց մեղապարտ և դատապարտելի ցույց տա. ինչպես կարծում է Փորթուգալ փաշան (Եղիշե, 223), թե իրոք V դարում այդպես կոչվել են հատկապես քրիստոնյա հոգևորականները, դժվար է հաստատապես որոշել։ Միհրներսեհի որոշակի արտահայտությունը հավանական է դարձնում այն ենթադրությունը, որ սկզբնապես ընդհանուր նշանակություն ունեցող բառը հետագայում սկսվել է գործածվել միայն ղեկավարների համար։

46. «Կարասի, որ ժողովէ, աւեն, մեղք են յոյժ» բառերը բնագրում աղավաղված են թվում։ Ըստ իմաստի պետք է լինեն՝ «Կարասի, որ ժողովէ, ասեն, չեն ինչ մեղք» (**Ակինյան**), քանի որ այդ բառերին հետևում է «բայց զաղքատութեանն առաւել քան զյոյժ գովեն»։

47. Արտաշատի ժողովական եպիսկոպոսների անունները տալիս են մեզ թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին, վերջինս առանց ժողովի տեղը հիշելու։ Այդ անունների կարգը թեև տարբեր է երկու մատենագիրների մոտ, բայց բոլորը համապատասխանում են միմյանց, բացի մեկից. մինչդեռ Եղիշեն հիշում է Մարդաղվո Եվղաղ եպիսկոպոսին, Փարպեցին նրա փոխարեն տալիս է Մանանաղվո Զավեն եպիսկոպոսի անունը։ Մեզ ավելի ճիշտ է թվում Եղիշեի հաղորդածը, որովհետև մեր հին եպիսկոպոսական աթոռների ցանկերում Մանանաղին չի հիշվում, բացի Ղազար Փարպեցու այս տեղից. իսկ Մարդաղվո եպիսկոպոսությունը հիշվում է մի քանի անգամ, օրինակ՝ Ներսես Բ-ի (547/548—556/557) ժողովում, Հովհաննես Բ-ի (556/557—571, մեռել է Կ. Պոլսում 573 թ.) թղթերում (տե՛ս **Գիրք թղթոց**. Թիֆլիս, 1901, էջ 73, 78, 81), Ներսես Գ. Շինողի 645 թ. Դվինում կայացրած ժողովում («Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն», էջմիածին, 1905, էջ 26—27)։

Այստեղ հիշված անձերից հայտնի են՝ Հովսեփը Վայոց ձորի Հողոցիմք գյուղից, որ կաթողիկոսական իշխանություն վարեց 441—451. **Մելիտե Մանազկերտացին**, որ կաթողիկոս դարձավ Հովսեփի նահատակությունից հետո. Բագրևանդի եպիսկոպոս հռչակավոր **Եզնիկ Կողբացին**, «Եղծ աղանդոց» անմահ հեղինակը և աստվածաշնչի թարգմանության [illegible] մասնակիցը. Բզնունյաց տխրահռչակ **Սուրմակ** եպիսկոպոսը, Սահակ Պարթևի հակաթոռը և, ապա Մեսրոպ Մաշտոցի մահից հետո անվանապես կաթողիկոս պարսից թագավորի հրամանով. **Թաթիկ**՝ Սահակի և Մեսրոպի աշակերտներից։ Մնացածներն անհայտ են։ Բանասերներից ոմանք **Եղիշա** Ամատունյաց եպիսկոպոսին նույնացնում են մեր պատմագրի հետ, բայց այդ կարծիքն անհավանական է։

48. Քորեպիսկոպոս կոչվում էին Արևելք-ում գավառների ու գյուղերի եպիսկոպոսներն ի տարբերություն քաղաքների եպիսկոպոսներից։ Մինչև IV դարի կեսերը բավական տարածված էին, ունեին լրիվ եպիսկոպոսական իրավունքներ և ստանում էին եպիսկոպոսական ձեռնադրություն. բայց IV դարի կեսերից սկսած ամեն կերպ աշխատում են նրանց իրավունքները կրճատել և նրանց ամբողջովին ենթարկել քաղաքների եպիսկոպոսներին. Նրանք այլևս եպիսկոպոսական ձեռնադրություն չեն ստանում, այլ միայն քահանայական, և այս ձևով իրենց գոյությունը շարունակում են մինչև VI դարը։ Տե՛ս Fr. Gillmann, Das Institut der chobischöfe im Orient, Müncher, 1903, VI+136։

49. Երեցներ— հունարեն **պրեսբյուտեր** բառի թարգմանությունն է. այսպես էին կոչվում քրիստոնեական համայնքի ավագները, որոնք կանգնած էին լինում համայնքի գլուխը։ Սկզբնական շրջանում նրանք ձեռնադրություն չէին ստանում և կառավարում էին համայնքի գործերը։ Հետագայում, երբ եկեղեցին միապետական կերպարանք է ընդունում, նրանցից մի կողմից զարգանում է եպիսկոպոսական իշխանությունը, մյուս կողմից՝ երեցները քահանայական ձեռնադրություն են ստանում և դառնում են առանձին համայնք-

ների հոգևոր ղեկավարներ։ Այդ պատճառով էլ մեզանում երեց և քահանա բառերը հետագայում իրենց նշանակությամբ նույնանում են։

50. **Սպահ Արյաց**—*նշանակում է* **Արյաց զորաբանակ**: *Պհլ. սպահ, պրս. սիպահ նշանակում է «զորք, բանակ»։ Այստեղից՝ սպասալար=սիպահսալար, որ նշանակում է զորապետ։ Կա նաև սպայասալար ձևը (տե՛ս* Հր. Աճառյան, *Արմատ. բառարան, VI հ., էջ 383—384 և 398)։*

51. **Որմիզդ արքա**—*Որովհետև Որմիզդ III-ը Հազկերտ II-ից հետո է գալիս (457—458), ուստի այստեղ խոսք կարող է լինել միայն Որմիզդ I-ի (273) կամ Որմիզդ II-ի (303—310) մասին. հավանորեն պետք է հասկանալ Որմիզդ II-ը։ Մազդայական կրոնն ուրացած մոգպետի մասին ոչ մի տեղեկություն չի մնացել։*

52. **Անխառն իշխան**—*նշանակում է աստված։*

53. **Գեհեն**—ἡ γέεννα—*հունականացրած բառ է եբրայերեն* Գե-Հինոմ *կամ ավելի ճշգրիտ՝* Գե-բեն-Հինոմ *բառից, որ նշանակում է Հինոմի որդիների հովիտ՝ կիրճ։ Հետին շրջանում հրեական ժողովրդական հավատի համաձայն՝ Երուսաղեմից հարավ գտնըվող այդ կիրճում պետք է տեղի ունենա վերջին դատաստանն ու պատիժը։ Նույնացվում է պատժի կրակի կամ դժոխքի կրակի հետ. այստեղից՝ Գեհենի անշեջ հուր արտահայտությունը։*

54. **Ամլորդի Հովհաննես**— *կոչվում է Հովհաննես Մկրտիչը՝ Զաքարիա քահանայի և նրա կին Եղիսաբեթի որդին, որովհետև* Եղիսաբեթն *ամուլ էր (Ղուկ. Ա. 7)։*

55. **Հորդանան գետ**— *կոչվում է այն գետը, որ անցնում է Պաղեստինի միջով հյուսիսից դեպի հարավ և ամբողջ երկիրը բաժանում է երկու մասի։ Հորդանան գետն սկիզբ է առնում Հերմոն սարից բխող 3 աղբյուրներից և թափվում է Մեռյալ ծովը։*

56. **Պոնտացի Պիղատոս**— *Հրեաստանի և Սամարիայի 5-րդ հռովմեական պրոկուրատորը (26—36 թթ.), որի ժամանակ, ավանդության համաձայն, հանդես է եկել Հիսուս Քրիստոսը։ Պիղատոսը մի վախկոտ, բայց միևնույն ժամանակ դաժանաբարո մարդ էր. մերթ երկչոտ զիջողություններ էր անում հրեաներին, մերթ արյունահեղ դատաստան տեսնում նրանց գլխին (Ղուկ. ԺԳ 1)։ Ի վերջո՝ սամարացիների գանգատների հիման վրա Սիրիայի կուսակալ Վիտելիոսը նրան Հռոմ է ուղարկում՝ իր չարագործությունների պատասխանը տալու։*

57. **Ձիթենյաց սար**—*Երուսաղեմի դիմացը դեպի արևելք ընկած լեռ 818 մետր բարձրությամբ։ Այստեղ էր գտնվում Գեթսեմանի պարտեզը և այստեղից է, ավանդության համաձայն, երկինք համբարձել Քրիստոսը (Գործք Առաքելոց, Ա 12), որ և այստեղ ակնարկում է Եղիշեն։*

58. **Խռնաստան**— *հավանորեն պարսից արքայական պալատի անունն էր։*

59. **Դառնացյալ ծեր**— *Միհրներսեհ մեծ հազարապետն է։ Ուրիշ տեղ էլ Եղիշեն նույն կերպ է արտահայտվում Միհրներսեհի մասին (տե՛ս III գլխի վերջում)։*

60. **«Հրաման տուր ներսը»**, *այսինքն՝ հրամայիր պալատի ներսում գտնվող դրագիրներին և այլ գործադիր պաշտոնյաներին։*

61. **«Դայեկասնունդ բնակք»**— *մեկ տան մեջ մեկ խնամակալի ձեռքով մեծացած և դաստիարակված անձեր։ Դայակ պհլ. նշանակում է «ծծմայր, ստնտու», բայց հաճախ գործ է ածվում նաև տղամարդկանց մասին՝ դաստիարակ, խնամակալ նշանակությամբ։ Առաջ է եկել նրանից, որ հին ժամանակները սովորություն կար, որ թագավորն իր որդիներին հանձնում էր որևէ իշխանի դաստիարակության, և սա նրանց սնուցանում էր իր տանը իր զավակների հետ։ Հաճախ թագավորազն և իշխանազն երեխաները միևնույն կնոջ կաթով էին մեծանում և, այսպիսով, դառնում էին կաթնեղբայր ու մտերիմ։ Դայեկասնունդ անձերի միմյանց հետ ունեցած կապերը շատ սերտ էին. դայակները սիրում էին իրենց սաներին հարազատ զավակների պես, հավատարիմ էին նրանց և ամեն նեղության հանձն էին առնում նրանց վտանգներից փրկելու համար։*

62. **«Շապուհի ժամանակները, որ էր պապն Հազկերտի հայրն էր»**:— *խոսքը Շապուհ III-ի (385—388) և նրա որդի Հազկերտ I-ի (399—420) մասին է։ Առհասարակ Շապուհ II-ից (310—379) հետո թագավորող անձերի ազգակցական կապերը միմյանց հետ անորոշ են. օրինակ՝ Վռամ (Բահրամ) IV (389—399), ոմանց ասելով Շապուհ III-ի որդին էր, ուրիշների ասելով՝ Շապուհ II-ի։ Այդպես էլ Հազկերտ I-ը ոմանց ասելով Վռամ (Բահրամ) IV-ի որդին էր, ուրիշների ասելով՝ նրա եղբայրն էր և այլն։* **Նյոլդեկեն** (Tabari, *էջ 436a) Շապուհ III-ի որդի է համարում Վռամ (Բահրամ) IV-ին և Հազկերտ I-ին, բայց ծանոթագրության մեջ երկուսի մասին էլ ասում է՝ (գուցե սրանք Շապուհ II-ի որդիներն են։ Հետաքրքրական է, որ Եղիշեն պարզապես Շապուհ III-ին է համարում Հազկերտ II-ի պապ Հազկերտ I-ի հայր։*

63. *Բոլոր ապագրություններն ունեն* **Ֆռիկար**, *միայն Թեոդոսիայինը (Անձևացյաց օրինակը) տալիս է* **Ֆռաւր**: *Պետք է լինի* **Ֆրարիկար**, *որ նշանակում է «մազդեզական կրոնի պատվիրած բարի գործեր, որոնք արժանի են վարձատրության»։ Այս բառը գործ է ածված միայն երկու անգամ. մեկ այստեղ և մեկ էլ Եղիշեի VI գլխում. «...ետ սպանանել զհօրեղբայրն իւր զՎաղինակ և յինքն տարաւ զաւրութիւնն իբրև ֆռիկար յարքունիս»։ Մանրամասն բացատրությունը տե՛ս* Հր. Աճառյան, *Արմատ. բառարան, VI հատոր, էջ 1556—1559 և* **Փորթուգալ փաշա**, *Եղիշե, էջ 252—253։*

64. **Սագաստան**— *սակերի երկիրը, պարսից պետության արևելյան նահանգներից մեկն է, սահմանակից Հնդկաստանին, այժմյան Աֆղանստանի սահմաններում։ Հետագայում, արաբական տիրապետությունից սկսած կոչվում է Սեիստան (տե՛ս Hübschmann* Arm. Gr., *էջ 71 և* **Փորթուգալ փաշա**, *Եղիշե, էջ 255։ Հմմտ. նաև J. Marquart* Eranschahr, *էջ 35—39)։*

65. **Խուժաստան**—*այժմ Խուզիստան, հունական Սուզիանա. բուն Պարսկաստանի մի մասը, ուր աքսորվում էին հանցավոր համարվածների կանայք և որդիները՝ արքունի կալվածքներում աշխատելու համար։ Գտնվում է հին Բաբելոնից դեպի արևելք, Պարսից ծոցից դեպի հյուսիս։*

66. **Դուրսան** *կամ* **Դասան** *աշխարհ*—*իսկապես պետք է լինի* **Դասն**. *հիշատակվում*

է Աղձնյաց, Կորդվաց և Ծավդեից աշխարհների կողքին, ասորերեն՝ Բեթ-Դասեն։ Պլինիոսը տիլ-Մանհե (177,4) հիշում է Դաթն Մոսուլի շրջանում, արաբերեն Դասն—Մեծ Զաբից արևմուտք ընկած մի գավառ Ամադիեի և Գարա լեռների շրջակայքում (*Hoffmann*, Auszüge 202—207 և *Hübschmann*, altarm. Ortsnamen, էջ 320—321)։ Այս աշխարհը հիշատակվում է մի անգամ էլ Եղիշեի առաջին գլխում։

67. **Փանդամ**—ձիրմակ լայնից բաց, որով մոգերն իրենց դեմքերը ծածկում էին կրակին մոտենալիս, որպեսզի իրենց արտաշնչությամբ չպղծեն սուրբ հուրը։

68. **Փամեզ**— կովի մեզ. լվացման արարողությունների մեջ գործ էր ածվում կովի մեզը՝ պղծությունը սրբելու համար։

69. **Կույճարիվ մոխրաշաղ կարգով**— ինչպես այստեղից երևում է, յուրաքանչյուր տուն պարտավոր էր, իբրև ապացույց իր բարեպաշտության, կայծերով (չափի անուն է) չափված որոշ քանակությամբ մոխիր ներկայացնել։

70. **Եկեղեցու սուրբ ուխտ**— Եղիշեի մեջ առհասարակ եկեղեցու սուրբ ուխտ ասելով պետք է հասկանալ մի ուխտ կազմած ամբողջ հայ ժողովուրդը, որ մահու չափ էր կռվել պարսից արքունիքի զավթողական-ասիմիլյատորական քաղաքականության դեմ և իր ապստամբությամբ պաշտպանում է հայ ժողովրդի ինքնուրույնությունը։

71. **«Խառնակյաս ողջում կին մեզ»**,— ասում է Եղիշեն, ցույց տալու համար, որ նախարարների ուրացության պահին ինքն էլ նրանց հետ եղել է Պարսկաստանում։

72. **Մարտիրոս** (μα΄ρτυρος) կոչվում էին Քրիստոսի անվան համար կամ քրիստոնեությունը չուրանալու պատճառով նահատակված մարդիկ, որոնց գերեզմանների վրա վկայարաններ էին շինում. այդ վկայարանները հունարեն կոչվում էին μαρτύ΄ριον, որից և առաջացել է հայերեն մատուռ բառը։

73. **Պարսից ամիսներ**, որոնցից մի քանիսը հիշվում են Եղիշեի մեջ. հետևյալներն էին. 1) Ֆերվերդին, 2) Արդիբեհեշտ, 3) Խորդադ, 4) Տիր, 5) Մորդադ, 6) Շահրիվ, 7) Միհր, 8) Աբան, 9) Ադեր, 10) Դեհ, 11) Բահմեն և 12) Ասֆենդարմեդ։ Հիմնականում պարսկական տարին մեզ հետաքրքրող շրջանում եղել է փոփոխական տարի—12 ամիս 30-ական օրով և 5 ավելյաց օրեր։ Պարսկականից փոխառություն են համարվում Կապադովկյան և Հայկական օրացույցները։ Սակայն հնարավոր է, որ երկուսի հիմքն էլ մի ավելի հին և առաջավորասիական տարի է (տե՛ս Ginzel, Handbuch der mathemat. und techn. Chronologie, Leipzig, 1906, I հատոր, էջ 274—309)։

74. **Անգղ գյուղաքաղաք**— Այրարատի Մաղկոտն գավառում ամուր բերդ և գյուղաքաղաք։ **Ղազար Փարպեցին** (Պատմություն հայոց, Թիֆլիս, 1904, էջ 60) ասում է. «Գային հասանէին ի գաւառն, որ կոչի Մաղկոտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անգղն անուանեն»։

75. Այստեղ հիշված Շապուհ արքայից արքան անշուշտ **Շապուհ II-ն** է (310—379), որի ժամանակ իրոք քրիստոնեությունը մեծ չափով տարածված էր թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում, և որի սաստիկ հալածանքներից փախած պարսկական քրիստոնյաներն ամենայն հավանականությամբ հասել են մինչև Հնդկաստան։ Սրա մասին է ասում Եղիշեն, թե «Որքան նա կամեցավ արգելել, նրանք (քրիստոնյաներն) ավելի ու ավելի աճեցին ու բազմացան, և հասան մինչև Քուշանների աշխարհը, և այնտեղից էլ (քրիստոնեությունը) տարածվեց դեպի հարավ՝ մինչև Հնդկաստան»։

76. **Զանդիկ**— այստեղ գործ է ածված «մանիքեցու» իմաստով, ճիշտ այնպես, ինչպես նաև **Եզնիկն** իր «Եղծ աղանդոց»-ի մեջ Մանիի հետևորդներին զանդիկ է կոչում (տե՛ս «Եղծ աղանդոց», Վենետիկ, ՌՄՀԵ, էջ 116)։ **Տաբարին** ևս Մանիի անվան կողքին դնում է զանդիկ բառը՝ «Շապուհի օրերում հանդես եկավ զանդիկ Մանին» (Tabari, էջ 40. 47 չար.)։ Զանդիկ բառի բացատրությունը դեռ հաստատապես չի տրված։

Մանիքեական կրոնի հիմնադիրն է 216 թվականին ծնված պարսիկ **Մանին**, որ իբրև հերձվածող ու մոլորեցուցիչ խաչվել է Վռամ (Բահրամ) I-ի ժամանակ 276/277 թվականին։ Մանիի քարոզած կրոնը կամ մանիքեությունը պատկանում է սեմական բնության կրոնների շարքին և բաբելոնական բնույթ ունի։ Այդ կրոնը սերտորեն կապված է քրիստոնեական գնոստիկյան Մոգդասիլահների հետ, որոնք հրեական քրիստոնեության մնացորդներն էին Արևելքում։ Մանիքեության հիմքն է կազմում հին պարսկական կրոնը լույսի և խավարի իր բարոյական երկվությամբ, ինչպես և այդ երկու աշխարհների կռիվը միմյանց հետ։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մանիքեության վրա, բացի նրա հիմքը կազմող հին պարսկական կրոնից, մեծ ազդեցություն են գործել նաև քրիստոնեությունն ու հրեությունը, կարելի է այն բնորոշել իբրև առաջավոր Ասիայի բոլոր կրոններից կազմված մի սինկրետիզմ (խառնուրդ) նոր-պարսկական պետության հողի վրա (Մանիի և Մանիքեության մասին տե՛ս **Ն. Տեր-Մինասյան**, Ընդհանուր եկեղ. պատմություն, հատ. I, Էջմիածին, էջ 186—190)։

77. Խոսքն ուղղված է այստեղ **Մարզպանին**, որ այն ժամանակ Վասակն էր։ Խոսողը Մոգպետն է, որ հորդորում է Վասակին՝ եղելությունը հայտնել պարսից թագավորին, որպեսզի Մոգպետը չմեղադրվի անխոհեմության կամ անկարողության համար։

78. **Մովպետան Մովպետ**=Մոգպետների Մոգպետ, Մազդայական կրոնի գլխավոր քահանայապետ։ Սկզբնապես պհլ. ասվել է մոգպետ (գրվել է մագուպատ)։ Սասանյան շրջանում դարձել է մովպետ և այստեղից՝ մովպետան մովպետ, մովան անդերձապետ և այլ արտահայտությունները (տե՛ս Hübschmann, Arm. Gr., էջ 195 և **Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, հատ. IV, էջ 1087—1089)։

79. **Դերանդերձապետ և անդերձապետ**—«Պարսից արքունիքի մեծ պաշտոնյա»։ Կա մոգուց անդերձապետ (Բուզ.), Մովան անդերձապետ (Եղիշե, Փարպեցի) և դերանդերձապետ (Եղիշե)։ Գրվում է նաև հանդերձապետ։ **Հր. Աճառյանը** (Արմատ. բառարան, հ. I, էջ 310—311) ասում է. «պհլ. andarzpat «օգնական, խորհրդական», որ կազմված է andarz «խորհուրդ» (տե՛ս **անդարձ** բառի տակ) և pat «պետ» բառերից։ Հին պարսից մեջ այսպիսի խորհրդականներ կային մոգպետի, նահանգապետների, հրամանատարների մոտ և այլն. բառ այնմ ունենք պհլ. andarzpat—i—vas-Puhrakan «անդերձապետ ավագանվոր», my an andarzpat... «մոգպետի խորհրդականը»=մոգուց անդերձապետ, dar-andarzpat... «խորհրդական արքունի դռան»=դերանդերձապետ (կազմված պհլ. dar=պրս. dar «դուռն» բառով)։ Sagastan andarzpat «խորհրդական նահանգապետին Սագաստանի»=Սակստան անդերձապետ։ Անդերձապետը ստորադասից հետո նահանգի ա-

մենամեծ պաշտոնյան էր։ Այս մասին տե՛ս նաև Hübschmann Arm. Gr., *էջ 99 և 179։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եղիշեի մեջ դերանդերձապետը (= արքունի դռան խորհրդականը) հիշվում է մովպետան մովպետից անմիջապես հետո և մեծ հազարապետից առաջ, պետք է ենթադրել, որ նա շատ բարձր դիրք է ունեցել պարսից արքունիքում և իր ազդեցությամբ հավասար է եղել հետագայի արքայական պալատի մինիստրին։ Անդերձապետները հիշվում են երբեմն նաև իբրև զորավարներ (Փավստ. Բուզանդ, IV գլ. ԽԵ և ԽԷ)։*

80. **Մեծ հազարապետ**—*Միհրներսեհի տիտղոսն է, նշանակում է մեծ վեզիր և ամենայն հավանականությամբ «վզուրկ հրամանատարի» հայերեն թարգմանությունն է։ Այս տիտղոսը անշուշտ պետք է տարբերել հայերեն «հազարապետ» բառից, որ ավելի սահմանափակ նշանակություն ունի։*

81. **Զորքերի սպարապետ** *անվամբ հասկացվում է Վարդան Մամիկոնյանը, թեև անունը տրված չէ։*

82. **Փշտիպան**—*պարսկերեն բառ է, որ նշանակում է թիկնապահ, օգնական։*

83. **«Հավատավոր կանայք»**—*տերմին է կույսերի, մայրապետների համար։*

84. **«Մեծարիվ բանակ»** *անվամբ պետք է հասկանալ մոգերի և նախարարների հետ Պարսկաստանից եկած զորքը, որի մեջ էր նաև երկրի մարզպան Սյունյաց իշխան Վասակը։*

85. *Այստեղ հիշված բազմաթիվ բերդերից մի քանիսի տեղն է միայն որոշակի հայտնի, մյուսներն անհայտ են։ Հայտնիներն են Արտաշատը, Գառնին, Անին, Արտագերսը (այժմյան Կաղզվանի մոտերքը), Ողականը (Մշո դաշտի արևմտյան ծայրին, Կուրկուռ կոչված տեղը, որտեղ Արածանին սեղմվում է երկու քարաժայռերի միջև. դրանցից երկու ժամի ճանապարհ դեպի ցած մի ապառաժ բարձրավանդակ, որտեղ մինչև այժմ էլ երևում են Ողականի ավերակները), Վանը և Որոտնը (Սյունյաց երկրում)։ Մնացածները՝ Երկայնորդը, Բարձրարողը, Խորանիստը և այլն, անհայտ են, և նրանց տեղերը որոշել հնարավոր չէ։ Հավանական է, որ այդ բոլոր ամուր տեղերն էլ գտնվում էին Հայաստանի պարսից բաժնում։*

86. **Ատրպատական**—*Եղիշեի ժամանակ այժմյան Ադրբեջանի հարավային և Պարսկաստանի հյուսիս-արևմտյան մասի անունը։ Սահմանները ճշտիվ որոշել հնարավոր չէ, որովհետև շարունակ փոխվել է այն երբեմն հօգուտ Հայաստանի, բայց մեծ մասամբ հօգուտ Պարսկաստանի (տե՛ս J. Marquart,* Eranschahr, *էջ 108—114)։*

87. **Վռամական կրակ**—*Բահրամ աթաշ, ամենասրբազան կրակը։*

88. **Սերայի սահմաններից մինչև Գադերովնի կողմերը**— *Սերաց աշխարհը համարվում է Արևելյան Ասիան, իսկ Գադերովնը Կադիքսն է Սպանիայի հարավ-արևմտյան ծայրին։ Ուրեմն ուզում է ասել՝ Ասիայի արևելյան ափերից մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը։*

89. **Սինկղիտոս**—*ծերակույտ, սենատ, հունարեն* σύγκλητο, *հայերեն գրվում է նաև Սիւնկղիտոս։*

90. **Մարկիանոս կայսր**— *(450—457) Թեոդոս կայսեր մահից (450 թվականի ամառնը) հետո կայսերական իշխանությունն անցավ Թեոդոսի քույր Պուլխերիային, որն ամուսնացավ Մարկիանոսի հետ, և վերջինս այսպիսով կայսր դարձավ։ Եղիշեն բավական ծանր խոսքերով է բնութագրում Մարկիանոս կայսրին. «Իրեն խիստ տվող վատ, անարգ և անաստված մարդկանց լսող, անարի կամ վախկոտ մարդ, որ մարմնավոր խաղաղության համար ավելի լավ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ. քան թե քրիստոնեական ուխտին պատերազմակից լինել»։ Թեոդոս կայսրն էլ իր ժամանակ ո՛չ միայն չէր օգնել քրիստոնյաներին, այլ նույնիսկ իր մայրաքաղաքում եղած պարսիկ քրիստոնյաներին բռնել և մատնել էր Պարսից թագավորի ձեռքը (տե՛ս I գլուխ)։ Բայց Եղիշեն ո՛չ միայն խոսք չի գտնում նրա արած ամարդությունը պախարակելու, այլ մինչև իսկ արդարացնում է՝ «քանզի խաղաղասեր էր ի Քրիստոս» ասելով։ Արդյոք Մարկիանոսի և նրա ծառաների դեմ ուղղված այս նախատական խոսքերի մեջ չե՞ն արտացոլվում նաև Քաղկեդոնի ժողովի (451 թ.) հետ կապված հանգամանքներն ու այդ ժողովի շնորհիվ ամբողջ արևելյան կայսրության հավատի մեջ կատարված փոփոխությունը, որին բացասաբար է վերաբերվում Եղիշեն։*

91. *Հեթանոսների հետ կռած դաշինք անվամբ Եղիշեն այստեղ հասկանում է Հազկերտ II-ի և Թեոդոս կայսեր դաշինքը (գլ. I), որ այս անգամ ավելի է ամրապնդվում նրանով, որ Մարկիանոսը խոստանում է հայերին ոչ մի օգնություն ցույց չտալ ո՛չ զորքով և ո՛չ էլ զենքով։*

92. **Հեր և Զարևանդ գավառներ**—*Պարսկահայք կոչված նահանգի երկու գավառները, ոչ հեռու այժմյան Սալմաստից և Խոյից։*

93. **Խաղխաղ քաղաք**— *Աղվանից թագավորների ձմեռոցը V դարում, II և III դարերում Հայոց թագավորների ձմեռոցը։ Գտնվում էր Ուտի կոչված նահանգում, այժմյան Ջեգամ գետի ափին։ Մ. Բարխուդարյան (Արցախ, Բաքու, 1895, էջ 421) հիշատակում է հին ավերակների վրա կառուցված Խաղխաղ անունով մի թուրքաբնակ գյուղ, Ջեգամ գետի մոտերքը։ Այս համապատասխանում է Եղիշեի ասածին, որ նույնպես Խաղխաղ քաղաքը դնում է Վրաստանի սահմաններին մոտիկ։*

94. **Լոփնաս գետ**—*հավանորեն այժմյան Ջեգամ գետը։*

95. **Բաղասական կողմեր** *կամ* **Բաղասական դաշտ**— *գտնվում էր Աղվանից երկրում, հավանորեն երկրի հյուսիս-արևելյան կողմերում, հոների սահմաններին մոտիկ (տե՛ս* **Մ. Աբեղյան**, *Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, ծանոթագր. 116 և J. Marquart,* Eranschahr, *էջ 119—120)։*

96. **Աղվանից մեծ շահաստան** *անվամբ հասկացվում է Աղվանից աշխարհի մայրաքաղաք Պարտավը, Տրտու (այժմյան Թարթար) գետի ափին։ Շահաստան անունը տրվում էր մեծ ու վաճառաշահ քաղաքներին, նահանգի կամ գավառի կենտրոնական քաղաքին։*

97. **Կապկոհ լեռներ**—Կովկասյան լեռներ. Թիֆլիսեցիք մինչև այժմ էլ անվանում են Կավկավ։

98. **Հոների պահակ**— նույնն է Ճորա պահակ։ Տե՛ս ծանոթագր. 30։

99. Այստեղ հիշված ամրոցներն ու զորքերի կայանները մեծ մասամբ հայտնի անուններ են, ինչպես Գառնին, Երամոնքը, Օշականը, Արմավիրը (այժմ Շահրիար և Թափադիբի գյուղերի մոտերքը, հայոց հնագույն մայրաքաղաքը), Կուաշ ավանը (այժմյան Կոշը Արագածի հարավ-արևմտյան լանջին), Այունքը և Աշնակը (երկուսն էլ Թալինի մոտերքը), Արագածոտն գավառը (այժմյան [illegible], Թալիշի, Սարդարապատի, Կարբիի, Համբերդի կամ Բյուրականի և Վաղարշապատի շրջակայքը), Արտաշատի նահանգն ու Արտաշատ քաղաքն ինքը։ Մնացած անունների տեղերը որոշ կերպով հայտնի չեն, ինչպես՝ Դրասխանակերտը, Վարդանաշատը, Փառախոտը, Ցոլակերտը, Սարդյանքը։

100. **«Միջոց աշխարհին»** կամ **Միջնաշխարհ** ասելով պետք է հասկանալ Այրարատը իբրև Հայաստանի կենտրոն։

101. **Հայկական տարվա** ամիսները հետևյալներն են. 1) Նավասարդ, 2) Հոռի, 3) Սահմի, 4) Տրե, 5) Քաղոց, 6) Արաց, 7) Մեհեկան, 8) Արեգ, 9) Ահեկան, 10) Մարերի, 11) Մարգաց և 12) Հրոտից։ Բոլոր ամիսները, պարսկական ամիսների նման, ունեն 30-ական օր և վերջին ամսից՝ Հրոտիցից՝ հետո գալիս են 5 ավելյաց օրերը՝ տարվա 365 օրը լրացնելու համար։

102. Պարսից արքայից արքայի ձմեռոցի տեղն ասելով պետք է հասկանալ **Տիզբոնը**։ Տիզբոնի մասին տե՛ս ծանոթագր. 12։

103. **Հազկերտ II-ի** հայրը Վռամ (Բահրամ) V-ն էր (420—438)։

104. **Մեծ** ինչպես այստեղ, այնպես էլ այլ տեղերում, գործ է ածվում մեծ հազարապետ Միհրներսեհի համար։

105. **Փայտակարան քաղաք**— Հայաստանի Փայտակարան նահանգը համապատասխանում է Մովսեսի հիշած Κασπιανη նահանգին, որ ընկած էր Ուտյաց երկրից դեպի արևելք Արաքսի ափերին և տարածվում էր մինչև Կասպից ծովը։ Այս նահանգն իր անունն ստացել է իր մայրաքաղաք Փայտակարանի անունից, որ գտնվում էր Կասպից ծովի ափին, Արաքսի գետաբերանի մոտ։ Փայտակարան քաղաքը հիշատակվում է Փավստոսի, Ագաթանգեղոսի, Փարպեցու, Եղիշեի, Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմությունների մեջ։ Արաբներն այդ քաղաքն անվանում են **Բայլաքան**։ Ոմանք միանգամայն սխալ կերպով Փայտակարան քաղաքը շփոթել են Թիֆլիսի և Պարտավի հետ։ Տե՛ս *Hübschmann*, altarmenische Ortsnamen, էջ 267—270 և *J. Marquart*, Eranschahr, էջ 108, 111, 118, 122 և այլն։

106. **«Ուրացավ այն ավազանը, որ ծնացավ նրան»**— խոսքը քրիստոնեական մկրտության մասին է, որով հին մարդը մեռնում է և մի նորը, վերակենդանացածն է ծնվում՝ քրիստոնեական վարդապետության համաձայն։

107. **«Ընկալուչ սուրբ հոգին»**— պետք է հասկանալ՝ նրան քրիստոնեական համայնքի մեջ ընդունող սուրբ հոգին։

108. **«Ջնջեց ուղեգրության գիրը և իր ձեռքով խորտակեց մատանու նապաստակ կնիքը»**.— այստեղից հետևում է, որ Եղիշեի ժամանակ ուղեգրության համար հատուկ գիր էր պատրաստվում և այն կնքվում էր մատանու վրա փորագրած կնիքով իբրև ստորագրություն։ Խորտակել կնիքն արտահայտությունը ցույց է տալիս, որ կնիքը դրվում էր հավանորեն մեղրամոմով և ոչ թե ներկով, որի համար չէր կարելի խորտակել ասել։

109. **Վասակի գործակիցների անունները** և այստեղ հիշված իշխանությունները ցույց են տալիս, որ նրա կողմն էին անցել Ոշտունիք (Վանա ծովից հարավ-արևելք), Խորխոռունիք (Վանա ծովից հյուսիս-արևմուտք), Վահևունիք (հավանորեն ստորին Բասեն), Գաբեղյանք (այժմյան Կաղզվանի շրջանը), Բագրատունիք (Հայաստանի ամենախոշոր և ամենապատվավոր նախարարներից, որոնց պատկանում էին Բարձր Հայոց Սպեր գավառը և Այրարատի Կոգովիտ գավառը Դարույնք գլխավոր քաղաքով, այժմյան Հին Բայազետը), Ապահունիք (Վանա ծովից հյուսիս, այժմյան Մալազկերտի շրջանը), Անե (Պարսից Հայաստանում, այժմյան Մակուի շրջանում), Ուրծի տեղը որոշապես հայտնի չէ (Ալիշանը դնում է Այրարատի արևելյան սահմանածայրին) և Պալունիք, որոնք երկու մասի էին բաժանված, մի մասը բնակվում էր Վասպուրականում և գործակցում Վասակի հետ, մյուս մասը՝ սահմանակից էր Տարոնին և գործակցում էր Վարդան Մամիկոնյանի հետ։

110. **Վրաց աշխարհի միաբանությունը** հայերի հետ առաջ էր գալիս այն միանման քաղաքական դրությունից, որի մեջ գտնվում էին երկու ժողովուրդները պարսից պետության հանդեպ։ Երկու ժողովուրդներին էլ ճնշում ու կործանում էր սպառնում. հենց դրանով էլ պայմանավորվում էր երկու հարևան ազգերի միասնությունն ու ռազմական դաշինքը։

111. **Ստորին Հայք**— կոչվում է Հայաստանի արևմտա-հարավային մասը, Ծոփաց և Դիարբեքիրի գավառները, որոնք ավելի ցածրադիր են և տաք կլիմա ունեն։ Հ. Հ. **Տաշյան** («Հանդ. Ամս.», 1937, էջ 14—15) այս մասին գրում է. «Ստորին Հայոց» թարգմանություն կրնա ըլլալ Armenia interior-ի, թեև ավելի ուղիղն էր «Ներքին» բառը։ Ասով կհասկցվեր՝ Թեոդոսի բաժանումեն առջի մինչև Հուստինիանոս՝ «Կարնոյ աշխարհէն ընդարձակ մասը...»։ Թե ինչպես պետք է հասկանալ Վասակ Մամիկոնյանի վերաբերյալ այս հատվածը՝ այդ մասին տե՛ս սույն գրքի նախորդ հրատարակության մեր ներածության մեջ։

112. **Ներքին Վասակը**—Մամիկոնյան Վասակն է, որ ապրում էր Հունաց բաժնում և գործակցում էր Սյունյաց իշխան Վասակին։ Եղիշեն Մամիկոնյան Վասակին ևս նկարագրում է իբրև մի չարագործ և աստծու օրենքներին հակառակ գործող մարդ։

113. **Տմորիք**—հնագույն ժամանակներից հիշատակվում է Կորդվաց երկրի և Կորդրիքի կողքին (Փավստոս, Եղիշե, Խորենացի), Պարսից երկրին մոտիկ։ **Մովսես Խորենացին** (Պատմություն հայոց, Տփխիս, 1913, էջ 183) ասում է՝ Տմորիք, «որ այժմ կոչվում է Կորճեք». սրանից պետք է հետևցնել, որ Մովսես Խորենացու ժամանակ Տմորիքը

միացած է եղել Կորդրիքի հետ և այնուհետև կրել է Կորդրիք անունը։ Տմորիքի տեղը որոշելու համար կարևոր է Խորենացու նույն հատվածը, որտեղ ասված է, թե Սմբատը բնակություն հաստատեց «Տմորիքում, որն այժմ Կորդրիք է կոչվում, և գերիների բազմությունը բնակեցրեց Ալկիում»։ Այդ Ալկին այժմյան Ելկին է, կամ Էլկն է, մոտավորապես այժմյան Բոհտան գավառում (Քուրդիստան)։ Ասորիներն այդ երկրի բնակիչներին անվանում են Թմորայե, դրանք եղել են «մի լեռնային վայրենի ժողովուրդ Պարսից պետության մեջ, որոնց դեմ դեռ 506 թվականի խաղաղությունից հետո ստիպված էր կռիվ մղելու Կավադ արքայից արքան» (Նյոլդեկե)։ Տե՛ս *Hübschmann*, Altarmen, Ortsnamen, էջ 336—337 և *J. Marquart*, Ermanschahr, (էջ 170, ծանոթագր. 2)։

114. **Խաղտյաց աշխարհ, Խաղտիք**—հավանաբար հին խալդերի անունից. այդ երկիրն ընկած էր Սև ծովի հարավ-արևելյան ափերին, այժմյան Տրապիզոնից դեպի հարավ, Հայաստանի Տայք նահանգից դեպի հյուսիս-արևմուտք, Պարխարյան լեռների մոտ։

115. Այստեղ հիշված **տասնմեկ երկրները իրենց** ժողովուրդներով ու թագավորներով պատկանում էին այն դաշտային ու լեռնային ժողովուրդներին, որոնք բնակված էին Կովկասյան լեռների արևելյան մասի հարավային ու հյուսիսային լանջերին և պահպանում էին Ճորա պահակը Հոների և Մասքութների արշավանքներից։ Սրանց տեղերն առանձին-առանձին որոշել հնարավոր չէ։ **Փոքրուզալ փաշա** (Եղիշե, էջ 329) կարծում է, որ այժմյան Թապասարանը Թավասպարն է, Պուտուն-Վասը, Քուպան—Գավը և Խիբին—Խիբիովանը։

116. **Դրոշ**—բացի «դրոշակ» սովորական նշանակությունից՝ նշանակում է նաև մեկ դրոշի տակ խմբված զորաբաժին, «գունդ, վաշտ» (**Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, հ. II, էջ 642)։ Փավստոսն ասում է, «Բայց ուր լինէր հանդէս ի նշանաւոր տեղիս, գնդի գնդի, դրոշու դրոշու, վաշտաւց վաշտաւց» և այլն (III է)։

117. **Վարդան Մամիկոնյանի** նիզակակիցներից էին՝ **Արտակ Պալունին** Պալունյաց ցեղի մի մասի տանուտերը Մոկաց գավառում։ Պալունյաց ցեղի մյուս մասի իշխանը գործակցում էր Վասակին (տե՛ս ծանոթագր. 109)։ **Վահան Ամատունին**, Հայոց երկրի նախկին հազարապետը (տե՛ս ծանոթագր. 37), որին Վասակը բանսարկությամբ հանել էր տվել պաշտոնից. հիմա Վարդան Մամիկոնյանի ամենաեռանդուն օգնականն էր և ապստամբության գլխավոր հրահրողներից մեկը (**Ղազար Փարպեցի**, էջ 60)։ **Թաթուլ Դիմաքսյան** կամ **Վանանդեցի** (Եղիշե, V գլ. և Փարպեցի), **Արշավիր Արշարունի**, Շիրակի և Երասխաձորի տերն ու Արշարունյաց իշխանը և շատ ուրիշ իշխաններ ու սեպուհներ, որոնք թվարկված են այստեղ։

118. **Արտազու դաշտ**— այլ անունով **Շավարշական դաշտ, Արտազու գավառ**: Գըտնվում է Մակուից դեպի հարավ արևելք, այժմյան Մակուի մեջ։ Պատերազմը տեղի է ունենում այն մեծ դաշտում, որը գտնվում էր Արտազի և Հեր ու Զարևանդ գավառների միջև, դրա համար էլ դաշտը կոչվում է Արտազի դաշտ։ Այդ դաշտի միջով հոսում էր Տղմուտ գետը, և Փարպեցին դաշտն անվանում է Տղմուտի դաշտ, իսկ Եղիշեն անվանում է Ավարայր՝ մոտը եղած մի գյուղի անունով։ «Արարատ» ամսագրում (1872 թ. նոյեմբեր-դեկտեմբեր)) **Գալուստ Տեր-Մկրտչյանը** նկարագրում է Մակու գետն անցնելուց հետո դեպի հարավ ձգված դաշտեր, որոնցից մեկը կոչվում է Զորսի դաշտ և մյուս մոտակա

դաշտից բաժանվում է Աղսու գետով։ Այդ Աղսու գետը համարվում է Տղմուտը, իսկ լեռներով շրջապատված Զորսի դաշտը՝ Ավարայրի դաշտը։

119. **Աստվածային տեղ** ասելով հասկացվում է դրախտը, որտեղ բնակեցված էր Ադամը, բայց աստծու պատվիրը չպահելով և չարին լսելով՝ պատվիրանազանց գտնվեց և դուրս արվեց այնտեղից։

120. **Մսեղեն մեծ բլուրը** Գողիաթն է, որի դեմ դուրս եկավ պատանի Դավիթը պարսատիկով ու քարով և սպանեց նրան։ Տե՛ս Ա. Թագ. ԺԷ գլուխ։

121. **«Իմանալի արեգակ»** արտահայտությունը գործ է ածվում Քրիստոսի համար։

122. «Մի՛ մոռանաք այն յուղը, պսակը, ուտերն ու առատաձեռն պարգևները, որ շնորհվում է ձեզ արքունիքից»,— ասում է Պարսից զորավար Մուշկան-Նիսալավուրտը իր զորքերին։ Յուղն այնքան ազնիվ բան էր համարվում, որ մազդեզն արդարների հոգիները հանդերձյալ կյանքում յուղով պիտի սնվեին։ Պսակը նույնպես շատ գործածական էր Պարսկաստանում և նրանով պսակում կամ վարձատրում էին որևէ գործի մեջ աչքի ընկնող անձերին. իշխաններն ու մեծամեծներն այն իրենց գլուխներին էին դնում տոնի և Նեվրուզի օրերը, իսկ այլ մարդիկ՝ ամուսնանալու ժամանակ։ Այստեղից է առաջացել նաև անշուշտ մեր մեջ սովորական **պսակվել** խոսքը **ամուսնանալ** բառի փոխարեն։ Ուտ, երևի տրվում էր կա՛մ պսակ շինելու համար կա՛մ այսպես էր կոչվում խաղողի որթը, որ տրվում էր այգի տնկելու համար (հմմտ. **Փոքրուզալ փաշա**, Եղիշե, էջ 350, ծանոթ. 1)։

123. **Մատյան գունդ**— այսպես էր կոչվում Պարսից զորքի մեջ ամենաընտիր, լրիվ սպառազինված գունդը։ Փավստոս Բյուզանդն ասում է մատենիկ գունդ։ Ամենայն հավանականությամբ նույնն է, ինչ որ Հերոդոտի հիշած **անմահների** գունդը, որ բաղկացած էր լինում 10 հազար ընտիր հեծյալներից. գունդն անմահ էր կոչվում այն պատճառով, որ երբ նրա միջից որևէ մեկն սպանվում էր կամ մեռնում, տեղն անմիջապես ուրիշին էին նշանակում, այնպես որ 10 հազար թիվը երբեք չէր պակասում (Հերոդ. գիրք Է. գլ. 83)։ Հերոդոտի տեղեկությունը վերաբերում է Քսերքսեսի զորքերին, բայց VI դարի պատմիչ Պրոկոպիոսի վկայության համաձայն՝ Սասանյանները վերահաստատել են Անմահների գունդը (այս ամենի մասին տե՛ս **Փոքրուզալ փաշա**, Եղիշե, էջ 360—361)։

118. **Արտազու դաշտ**— այլ անունով **Շավարշական դաշտ, Արտազու գավառ**: Գըտ- որանք ապրում էին Կասպից ծովի հարավային և հարավ-արևմտյան ափերին։ Պտղոմեոսի և Ստրաբոնի տված տեղեկությունների համաձայն՝ Կադիշները բնակվում էին այժմյան Թալիշ նահանգում։ Պլուտարքոսը **Կադիշների երկիրը** նկարագրում է իբրև մի դըժվար մատչելի և մրգապատ երկիր, որտեղ ո՛չ ցորեն էր բուսնում և ո՛չ էլ այլ արմտիք, երկրի պատերազմասեր բնակիչները սնվում էին տանձով ու խնձորով և ուրիշ պտուղներով։ **Գեղերը** այժմյան Գիլանի բնակիչներն են, իսկ **Ապարհացիք** երևի Ստրաբոնի հիշած։ **Պարճայանները** են, որոնց բնակության վայրը եղել է այժմյան Մազանդարանի գավառը (տե՛ս **Փոքրուզալ փաշա**, Եղիշե, էջ 361 և *J. Marquart*, Eranschahr, էջ 125)։

125. Պարսից զորավարը հրաման է տալիս իր զորքերի աջ կողմում պատրաստ լի-

նել ընդդեմ Հայոց զորավարի. այս նշանակում է, որ Վարդան Մամիկոնյանը բռնել էր Հայոց բանակի ձախ թևը։

126. Խորէն Խորխոռունեաւ նիզակակից տրված Ընծայինը Արսեն Ընծայացին է (տե՛ս նաև գլ. V և մի քիչ հետո նախարարների ցանկում՝ «յազգէն Ընծայնոց արդարն Արսէն»)։ Անձախի ձոր կամ Անձահից ձոր—Վասպուրականի գավառներից մեկն էր. գրվում է նաև Անձախաձոր և Ընձահից ձոր։ Ըստ Թովմա Արծրունու՝ այս գավառի սահմանները հասնում են մինչև Պարսկահայքի Հեր գավառի սահմանները։ Նշանավոր է այս ձորում գտնվող Կոտոր բերդը, որի անունով էլ կոչվում է այժմյան Քոտուր վիճակը (տե՛ս Հ. Ա. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1900, էջ 213)։

127. «Պարսից երկու կողմեն էլ ջարդվեցին»— ակնարկ է մի կողմից՝ III գլխում պատմած Քուշանների դեմ մղած պատերազմի անհաջողության մասին—«Մանաւանդ զի յարևելից պատերազմէն կորակոր և ոչ բարձրագլուխ էր դարձեալ»— մյուս կողմից՝ իրերի խառնաշփոթ վիճակի մասին Հայաստանում։

128. Տայոց ձորագավառ— Հայաստանի XIV նահանգը, սահմանակից էր հյուսիս-արևմտյան կողմից Եգերացոց աշխարհին, իսկ հյուսիս-արևելյան կողմից Գուգարքին. հայտնի է իր ամուր դիրքով, ամրոցներով ու բերդերով։ Պատկանում էր IV դարում Մամիկոնյան տոհմին։ Փավստոս Բուզանդն այս երկիրն անվանում է աշխարհ, Եղիշեն՝ ձորագավառ, հաճախ պարզապես գավառ է կոչվում Փարպեցու կողմից (էջ 94, 110, 121)։

129. Խիբիովան—Կովկասյան լեռնականների երկրի անունն է. այս երկիրը չի հիշվում IV գլխի 11 լեռնական ցեղերի անունների շարքում, բայց այստեղ անվանված է նույն երկրների թվում և անշուշտ նրանցից մեկն է։ Տե՛ս ծանոթագր. 115։

130. Սամուել, Աբրահամ, Արշեն երեցներ և Քաջաջ սարկավագ:—VII գլխում Եղիշեն ավելի որոշ տեղեկություններ է հաղորդում սրանց մասին։ Սամուելը Արարատից էր. Արածո գյուղից (ըստ Ալիշանի՝ Շիրակ, էջ 6, Շարուրի գավառում), Աբրահամը, որ VII գլխում սարկավագ է կոչվում, մինչդեռ VI գլխում քահանա է ասված, նույն գյուղից էր ըստ Փարպեցու (Տփխիս՝ 1904, էջ 75 և 78) և Սամուելի «հոգւոյ որդին»։ Պետք է ասել, որ Փարպեցին էլ Աբրահամին (էջ 75) քահանա է անվանում, իսկ էջ 78-ում՝ սարկավագ։ Այս Աբրահամ նահատակին բնավ չպետք է շփոթել հայտնի Աբրահամ Խոստովանողի հետ, որը Տայոց գավառի Զենակ գյուղից էր։ Սա չնահատակվելով Պարսկաստանում, այլ բազմաթիվ տանջանքների ենթարկվելուց, խեղանդամ դառնալուց և երկար տարիներ աքսորում անցկացնելուց հետո Հայաստան վերադարձավ։ Այս վերջինս է նաև Մայփերկաթի եպիսկոպոս Մարութայի հռչակավոր «Վկայք Արևելից» գրքի թարգմանիչը։ Արշենը Բագրևանդ գավառի Եղեգիկ կամ Եղեգյակ գյուղի երեցն էր։ Քաջաջ սարկավագի մասին Եղիշեն ասում է. «Որտեղից Ռշտունյաց եպիսկոպոս Սահակն էր», առանց ճշգրիտ որոշելու վայրը։ Ղազար Փարպեցին (էջ 79) Քաջաջ սարկավագի մասին ասում է՝ «որ էր և նա ի գաւառէն Ռշտունեաց, աշակերտ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ»։

131. «Այս բոլոր թղթերի վրա դրված էր Վասակի վավերական մատանին»։ Հին սովորության համաձայն մատանիների վրա կնիք էր փորագրվում և պաշտոնական գրությունները վավերացվում էին այդ կնիքը դրոշմելով ստորագրության փոխարեն, եթե մանավանդ համապատասխան անձը անգրագետ էլ էր, ինչպես պատահում էր հաճախ։

132. Վասակին Պարսից արքունիքում ամբաստանող նրա ազգականները կարող էին միայն իր փեսա Վարազվաղանը և հորեղբոր որդիները՝ Բաբգենը և Բակուրը լինել, որոնց նա հալածել էր հայրենի ժառանգությունից և տիրացել Սյունյաց իշխանությանը։ Եղիշեի գրքի IV գլխում նրանք եղբոր որդի են անվանված, բայց անշուշտ պետք է ավելի ընդարձակ իմաստով հասկանալ։ Բաբգենը և Բակուրը Վասակի հորեղբոր՝ Վաղինակի որդիներն էին և բնականաբար թշնամի պիտի լինեին Վասակին, որովհետև սա բանսարկությամբ սպանել էր տվել նրանց հորը և իշխանությունը հափշտակել։

133. Պարսից արքունիքում կատարված դատավարության ժամանակ հոգևորականների կողմից խոսում և պատասխան է տալիս Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը, թեև այնտեղ էր գտնվում կաթողիկոսական իշխանությունը վարող Հովսեփ երեցը և ինչպես նա պետք է լիներ եկեղեցու գլուխ բոլոր հոգևորականների կողմից պատասխան տար։ Այդ բացատրվում է նրանով, որ ինչպես Եղիշեն VII գլխում ասում է՝ Սահակ եպիսկոպոսը «լավ գիտեր պարսկերեն»։ Նույնը վկայում է նաև Ղազար Փարպեցին (էջ 97). «Սուրբ եպիսկոպոսն միայն գիտէր պարսկերէն, և այլ ոչ ի սրբոցն ոչ գիտէր»։

134. «Դուռն ճավառացիր Վրաց աշխարհիդ»—ասում է Եղիշեն Վասակի համար, ակնարկելով նրա վրաց մարզպան նշանակված լինելը։ Երբ է Վասակը Վրաստանի մարզպան եղել, անհայտ է, համենայն դեպս Հայաստանի մարզպան նշանակվելուց առաջ պետք է եղած լինի, հավանորեն 442—445-ի միջև։ Այդ մարզպանության տևողությունը նույնպես անհայտ է, միայն այսքանն է երևում Եղիշեի խոսքերից, որ վրացիները շատ էլ գոհ չեն եղել նրա իշխանությունից։

135. «Ինձ այնպես է թվում, թե դա ձեզ սուտ հույսով է կերակրել» —ասում է Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը Վասակի մասին։ Սահակ եպիսկոպոսն ուզում է ասել՝ թեև դա շատ լավ գիտեր, որ հայերին պարսից կրոնին դարձնել չի կարող, բայց ձեզ կերակրել է սուտ հույսերով թե ինքն այդ գործը կկարողանա կատարել։

136. «Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և բռնութեամբ եւ սպանանէր զհօրեղբայր իւր զՎաղինակ, և յինքն առնու զտէրութիւնն իւրև Բռաբիար յաղթանիւս»: Սա երկրորդ տեղն է, որ Եղիշեն գործ է ածում այս «բռաբիար» կամ ավելի ճիշտ՝ «բռաբիարա» արտահայտությունը։ Իմաստն այն է, որ Վասակը նենգությամբ ու բռնությամբ սպանել տալով իր հորեղբայր Վաղինակին՝ նրա իշխանությունը իբրև վարձատրության արժանի երախտավոր գործ գրավել էր ավել հարքանիս և իր այդ ծառայության փոխարեն նա ինքն էր Պարսից թագավորից ստացել Սյունյաց իշխանությունը։

137. «Որոյ ճանապարհք բազում մարդիկ խոյլ չոգան ի տունին» ասելով պետք է հասկանալ, որ պարսիկները Վասակի բնտանիքից շատ մարդկանց բռնել և որպես գերի արքունիք էին տարել տույժի փոխարեն, որովհետև Վասակը դատապարտվել էր նաև արքունի հարկերը

տեղ չհասցնելու և յուրացնելու համար, և նրա ու իր հայրերի ունեցած-չունեցածն ու նույնիսկ կանանց զարդերը բավական չէին եղել նրա վրա բարդված պարտքը հանգցնելու համար։ Եղիշեն ասում է՝ եթե Վասակն իր նախնիքների գերեզմաններում էլ գանձ գտնելու հույս ունենար, նա «այդ գանձերը կհաներ և տուգանք կտար իրեն և ընտանիքի համար»։

138. **Հազկերտ II**-ի 16-րդ տարին համապատասխանում է 453/454 թվականին։

139. **Վրկան**— Կասպից ծովից դեպի հարավ-արևելք ընկած աշխարհի անունը. այլ անունով կոչվում է **Հիրկանիա**, հունարեն Ὑρκανία։ Անվան ավելի ուշ ձևն է Գուրգան, ինչպես գործ են ածում արաբները։ Մինչև II դարի կեսերը Ք. հետո առանձին պետություն էր։ Այդ ժամանակվանից հետո Արշակունիների օրով այդ երկրի դրության մասին տեղեկություններ չկան մինչև Սասանյանները. **Տաբարին** տեղեկություն է տալիս նրա նվաճման մասին Արտաշիրի կողմից, առանց նրա քաղաքական դրության մասին որևէ բան ասելու։ Վրկանը շատ մեծ դեր էր կատարում. Պարսից թագավորների պատերազմների մեջ Քուշանների և Հեփթաղների դեմ ծառայում էր իբրև օպերացիոն բազա։ Հետագայում, 595—602, Սմբատ Բագրատունին այդ երկրի մարզպանն էր (տե՛ս J. Marquart, Eranschahr, էջ 72—74)։

140. **Նյուշապուհ քաղաք**—Ապար աշխարհի մայրաքաղաքն այժմյան Խորասանում։ Հիմնել է ըստ ոմանց Շապուհ I-ը (242—273), ուրիշների ասելով (Տաբարի, էջ 59)՝ այդ քաղաքը կառուցել է Շապուհ II (310—379)։ Անունը նշանակում է «Գեղեցիկ Շապուհ»։ Տե՛ս Hübschmann, Arm. Gr. էջ 20 և J. Marquart, Eranschahr, էջ 74։

141. **Համակդեն**—կրոնի ամբողջ ուսմունքը լավ գիտցող։ Թովմա Արծրունին (Հրատ. Պատկանյանի, էջ 2[illegible]) ասում է՝ «Անուանէին զինքեանս համակդենս, այսինքն ամենագէտ ի հաւատս կրակին»— կրակի հավատի կամ պաշտամունքի մեջ ամեն բան իմացող (տե՛ս Hübschmann, Arm. Gr., էջ 117 և **Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, IV հատոր. էջ 57—58)։ Բայց այստեղ Եղիշեն համակդենությունը կարծես առանձին կեշտ կամ դավանանք է համարում այն իմաստով, որ նրա մեջ պարունակվում են մյուս բոլոր չորս կամ հինգ դավանությունները։

142. **Ամպարտաշ**—կոչվում է, հավանորեն, պարսից առաջին կամ նախնական կրոնը։

143. **Բոզպայիտ**—պարսկական կրոնին վերաբերյալ մի գրքի անուն, որ մեկնվում է իբրև «մեղքերի քավություն» (Hübschmann, Arm. Gr., է, 122)։ **Փորբուզալ փաշա** (անդ, էջ 400) ենթադրում է, որ կարող է նշանակել «աղոթք, աղերս, պաշտամունք», և Եղիշեն այստեղ ուզում է ասել, թե մոգպետը ո՛չ միայն գիտեր բուն կրոնը, այլ նաև մյուս արարողությունների ու պաշտամունքի կարգերն ու աղոթքները. հայտնի է, որ պարսիկներն այս վերջիններին էլ նույնքան կարևորություն էին տալիս, որքան առաջինին (տե՛ս նաև **Հր. Աճառյան**, Արմատ. բառարան հ. I, էջ 112 և Յ. Թիրեաքյան, «Արարատ» ամսագիր, 1903, էջ 735—736)։

144. **Պահլավիկ և Պարսկագեն**—նշանակում է՝ մոգպետը ծանոթ էր պահլավիկ լեզվին, որով թարգմանված և մեկնաբանված էին Ավեստայի անհասկանալի լեզվով գրված գրքերը, և, ուրեմն, գիտեր ամբողջ կրոնական վարդապետությունը, որ ամփոփված էր Պահլավիկ գրքի մեջ։ Իսկ պարսկագեն ասելով պետք է հասկանալ այն ուսմունքներն ու զրույցները, որոնք պահլավիկ գրքերում չկան, ինչպես Զրվանի նախագոյությունը, Որմզդի սպանումը, արեգակի և լուսնի [illegible] ծագումը և այլն, առաջ էին եկել Սասանյանների ժամանակ և տարածված էին Պարսկաստանի արևմտյան և հարավային նահանգներում և դավանանքի զորություն ունեին (**Փորբուզալ փաշա**, Անդ. էջ 399։ Հմմտ. նաև J. Marquart, Eranschahr, էջ 123, ծանոթագր. 5)։

145. **Պետմոգ.** այլ ընթերցված՝ մոգպետն—այսպես է անվանում Եղիշեն վեցերորդ կեշտը կամ դավանանքը։ Ի՞նչ է այդ վեցերորդ կեշտը, և ինչպե՞ս պետք է բացատրել պետմոգ բառը, մինչև այժմ որոշ չէ։ Գուցե նույնպես կրոնական որևէ գրքի անուն էր՝ նախորդների նման։

146. **Ադեն**—նույնն է, ինչ որ Եդեմ կամ եբրայեցերեն էդեն, որ նշանակում է «հաճույք, բերկրանք»։ Այս այն պարտեզի կամ ուրիշ խոսքով դրախտի անունն է, որ եբրայական առասպելի համաձայն՝ ստեղծված էր առաջին նախամարդկանց—Ադամի և Եվայի համար, բայց նրանք պատվիրանազանց դառնալով և օձին լսելով՝ զրկվեցին նրանից և արտաքսվեցին այնտեղից։ Այդ պարտեզը կոչվում է նաև աստծու պարտեզ (Եզեկիելի մարգարեություն, ԻԸ 13 և ԼԱ 8 և այլն)։ Պատվիրազանցությունից և արտաքսվելուց հետո Եդեմի դուռը փակված է մարդկանց առաջ, դրա համար էլ Եղիշեն այստեղ ասում է, որ Քրիստոս «բաց է արել Ադենի կողպած դուռը»։

147. «Ետես և ի ձեռին նոցա զանշուշտ առրունայն, որ հանդերձեալ պահի ի ձեռն ճարտարապետինն»։ Առրունա (Առհրունա) ասորերեն բառ է, որ անցել է հունարենին ἀῤῥαβών ձևով և նշանակում է գրավական, առհավատչյա (տե՛ս *Payne Smith*, Syriac Dictionary, Oxford, 1903, էջ 531 և *C. Brockelmann*, Lexicon syriacum, Berlin, 1895, էջ 348)։

148. Այստեղ առանց անունը տալու հիշված երեցը Բագրևանդի Եղեգեկ գյուղի Արշեն երեցն է, ինչպես հետո՝ նահատակությունը պատմելիս բացատրում է ինքը Եղիշեն. «Երէց մի Արշէն անուն, վասն որոյ յառաջ կասկածն իսկ եղև սրբոցն»։ Այստեղ ասված է միայն՝ «կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն»։

149. «Զայս իբրև ասաց, լուաւ ի նմանէ բանս պնդութեան». «ի նմանէ» պետք է հասկանալ «մոգպետից», նկատի ունենալով հաջորդող խոսքերը, թեև մոգպետի մասին չէր առաջ խոսքը այլ Արշեն երեցի։

150. **Հրասախ**—ասվում է նաև **խրասախ**, **փարսախ**—երկայնության չափ է (5250 մետր)։ Փարսախ բառը ունեցել է իրանական լեզվի մեջ երկու ձև՝ պհլ. frasang և հյուս. պհլ. frasach։ **Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, հ. VI, էջ 1186-ում գրում է՝ «Հայերեն **հրասախ** գալիս է հյուս. պհլ. frasach ձևից. նախաձայնից վերջաձայնից ազդվելով (հմմտ. **հարբուխ>խարբուխ**) բառը հետո դարձած է **խրասախ** և սղմամբ՝ **հրախ, խրախ**. Հետին **փարսախ** ձևը փոխառյալ է արաբ. farsax-ից, իսկ **փարսանգ**՝ պրսկ. farsang ձևից»— Հյուբշ., էջ 193)։

151. **Վերին աշխարհ**— *բառացի թարգմանությունն է Ապար աշխարհի կամ Ապրշահրի։*

152. **Կուշան և Մակուրան**— *Պետք էր ասել, ինչպես,* **Տուրան և Մակուրան** *(Սեբեոս, Երևան, 1939, էջ 111), որովհետև Պարսկաստանի այս երկու ամենահեռավոր հարավային նահանգները համարյա միշտ միասին են հիշվում։ Եվ սա շատ հարմարվում է Եղիշեի տեքստին, որտեղ ասված է, թե Հազկերտ II-ը հրաման է տալիս Դենշապուհին՝ եթե մովպետը գործի չգա, նրան աքսորել Կուշանից ու Մակուրանից էլ այն կողմը, ուրեմն Պարսից պետության ամենահեռավոր ծայրամասերը, և այնտեղ սպանել տալ նրան։ Իրոք Տուրանն ու Մակուրանը կամ այժմյան Մեկրանը գտնվում էին Պարսից երկրի ամենահեռավոր հարավային ծայրին. այժմյան Բելուջիստանում, Հնդկաստանի սահմաններին կպած։ Տուրանի և Մակուրանի մասին տե՛ս J. Marquart,* Eranschahr, *էջ 31—34։*

153. **«Մի՛ խափանեսցին ծառայքն առնուլ ի ծախս ռոճկաց սորա»**—*խոսքը կրակի «ռոճկի» մասին է. այս կապակցության մեջ և առհասարակ էլ ռոճիկ բառը նշանակում է «օրական ուտելիք, պարեն, թոշակ» (Հր. Աճառյան, Արմատ. բառարան, հ. V, էջ 1279), ուրեմն այստեղ վառելափայտի այն քանակությունը, որ սահմանված էր պետության կողմից և անհրաժեշտ էր կրակը վառ պահելու համար։ Պետությունը նշանակել էր նաև պաշտոնյաներ՝ այդ գործին խնամք տանելու համար։ Այդ պատճառով էլ Եղիշեն ասում է՝ «Թող կրակն անկերակուր դառնա ինչպես արեգակը և արքունի ծառաները (գործից) չխափանվեն՝ դրան փայտ հասցնելու համար»։*

154. **«Հեթանոսաց մեծ վարդապետ»** *կամ* **«Հեթանոսաց մեծ Առաքյալ»**. *Պողոս Առաքյալի մականունն է իբրև հակադրություն մյուս առաքյալների, որոնք սկզբում իրենց միայն հրեաների առաքյալ էին համարում և հեթանոսներին քրիստոնեություն չէին քարոզում։*

155. *Այստեղից պետք է եզրակացնել, որ Հազկերտ II-ը մի աչքով կույր է եղել, եթե ճարտասանական դարձվածք չհամարենք «թագաւորն մեր մարմնով միով ականն կոյր է, այլ ոգւոյն բնավ չիք իսկ աչք» արտահայտությունը։*

156. *Խոսքը* **Ստեփանոս Նախավկա** *կոչվածի մասին է, որին քարկոծեցին հրեաները իբրև Քրիստոսի հետևողի և վկայի՝ առաջին անգամը լինելով (տե՛ս Գործք Առաքելոց, Զ 8—է 59)։*

157. **Վատգես** *կամ* **Վաղգես**—*հին Բակտրիայի գավառներից մեկն էր, Բահլ շահաստանից ոչ շատ հեռու, այժմյան Խորասանից դեպի արևելք և Հերաթից հյուսիս (հմմտ. J. Marquart,* Eranschahr, *էջ 64—78, 150 և այլն)։*

158. *«Վաղագոյն առաւօտուցն ի* **Դարի-Թիր** *եկայք». գրվում է նաև «ի Դարիթիրէ»։ Այս բառը միայն Եղիշեն ունի այստեղ։ Բառին զանազան մեկնություններ են տրված, ինչպես օրինակ՝ «դուռն օրինաց», բայց այս իմաստը չի հարմարվում, որովհետև իշխանները ո՛չ թե դատարան պիտի գնային, այլ մովպետի կողմից հրավիրվում են ներկա լինելու մովպետան մովպետի զոհաբերությանը։ Մի այլ բացատրություն տրվում է «մութ, մթին, մթագույն» նշանակությամբ, իբր թե իմաստն այն է, թե «վաղը մութին եկեք». բայց այս բացատրությունն էլ հարմար չէ, որովհետև Եղիշեի ասածից երևում է, որ խոսքը տեղի մասին է. «Զի վաղիւ անդ մովպետան մովպետ ռամ՝ յաղէ»։ Այս բացատրությունները մերժելով՝* **Փորքուզալ փաշան** *(«Բազմավեպ», 1895, էջ 6—7, Եղիշե, էջ 438—439)* **Դարիթիր** *բառն առաջարկում է ուղղագրել* **Դարիմիհր** *կամ առանց «հ»-ի* **Դարիմիր**=*«դուռն Միհրի», որ գործ էր ածվում մեծ զոհաբերությունների սրբավայրի, կրակի մեծ տաճարների համար։ Այս բացատրությունը շատ հարմար է տեղին։ Դարիթիր բառի մասին տե՛ս մանրամասն* **Հր. Աճառյան**, *Արմատ. բառարան, հ. II, էջ 454—456։*

159. *«Զի վաղիւ անդ մովպետան մովպետ* **ռամ**՝ *յաղէ»—«ռամ» բառը նշանակում է «գլխավոր, մեծ» և հաճախ գործ է ածվում որպես տիտղոս որևէ գավառի պետի համար։*

160. *Նախարարները կապանքներից արձակվելուց հետո Հայաստան չեն ուղարկվում, այլ առժամանակ դեռ մնում են Պարսկաստանում և ուղարկվում են Հրև կամ այժմյան Հերաթ քաղաքը՝ արքայից արքայի զորաբանակում ծառայելու և Քուշանների դեմ մղվող կռիվներին մասնակցելու համար։*

161. **«Դու զմեր երկիրս կիսագործ թողեր, մեզ յաւէտենի երկիրն կես մարմնով մեռեալ ոչ վաստակեմք»**— *հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նախորդը. այնտեղ պատմված է, որ Խորենին ու Աբրահամին սաստիկ տանջանքների են ենթարկում, մեռցնելու չափ ծեծում և երկուսի ականջներն էլ տակից կտրում, ինչպես Եղիշեն է ասում՝ այնպես խոր, որ կարծես երբեք իրենց տեղում չէին եղել։ Այս առթիվ նրանք ասում են դահճապետին. «Ահա մեր լսելիքն առողջացան երկնային առողջությամբ, իսկ հոտոտելիքը դեռ մնում են իրենց տեղերում չարչարանքի մեջ. կիսապարգև մի՛ անի մեզ երկնքի բարությունից... սրբի՛ր նաև մեր քթերը՝ կտրելով»։ Երբ դահճապետը նրանց առաջարկում է գնալ Ասորեստան և մշակություն անել արքունի գործերում, նրանք դահճապետին ասում են այս ծանոթագրության սկզբում գրված խոսքերը, կամենալով մատնանշել, թե դահճապետը նրանց խեղանդամ է դարձրել, կիսապարգև անելով երկնքի բարությունից և չլրացնելով նրանց մարմնավոր չարչարանքը (=դու մեր երկիրը կիսագործ թողիր), իսկ խեղանդամ լինելով՝ նրանք արքունի հողը մշակել չեն կարող։*

162. **Շահուղ** — *Շահուղի փոխարեն Փարպեցին (էջ 106) տալիս է* **Շափուլ** *կամ* **Շաբուլ**։ *Անշուշտ Եղիշեի մեջ «հ»-ից հետո դուրս է ընկել «փ» կամ «բ» տառը։ Այդ գավառը և իր նույնանուն գլխավոր քաղաք Շապուրը պետք է լինի Շիրազի և Կազերունի մոտերքը և հիշատակվում է իբրև գավառ Տաբարի կողմից (տե՛ս էջ 111)։*

163. **Մեշակն**—*պարսկերեն կոչվում էր Մեշուն և համապատասխանում է Մեշան կամ հունարեն* Μεσήνη *նահանգին, որ մինչև Արշակունյաց հարստության վերջերն առանձին կիսանկախ պետություն էր կազմում, և Արտաշիր Սասանյանը նվաճելով նահանգի վերածեց։ Այդ նահանգը գտնվում էր այժմյան Բասրայի մոտերքը ստորին Տիգրիսի ափերին, Իրաքում։*

164. **Քաշկար**—*գտնվում էր այդ վայրերից ավելի հյուսիս Սավադում, այժմյան Վասիտի ճահճոտ վայրերում։ Նույնպես 410 թվից հայտնի է որպես եպիսկոպոսական աթոռ և պատկանում էր Կտեսիփոնի կամ Տիզբոնի կաթողիկոսի թեմին։ Սավադի հին անունն է Սուրիստան, որը թարգմանված է արամերեն* **Բեթ-Արամայե**—*ասորիների երկիր*—

անունից։ Հայ պատմիչներն (Ագաթանգեղոս, Փավստոս, Եղիշե, Փարպեցի, Սեբեոս) այս երկիրն անվանում են Ասորեստան, որի մայրաքաղաքն է Տիզբոնը։

Ուրիշ խոսքով՝ հիշատակված երեք նահանգներն էլ գտնվում էին անմիջապես Պարսից ծոցից դեպի հյուսիս-արևմուտք, հյուսիս և հյուսիս-արևելք։ Նրանց մասին տե՛ս ընդհանրապես Նյոլդեքե, *Տաբարի, էջ 13—15 և J. Marquart,* Eranschahr, *էջ 21 և 40—42։*

165. **Հայ նախարարների ախոռի տեղությունը** *մոտ 12 տարի է. սկսած 451 թվականի վերջերից կամ 452 թվականի սկզբից մինչև 463/464 թվականը, երբ նրանք կրկին Հայաստան վերադարձան։ Այստեղ հիշված 9 տարի և 6 ամիսը պետք է հասկանալ նախարարների կապված ու բանտարկված վիճակի մասին։ Մնացած ժամանակը նրանք թեև ազատ էին բանտարկությունից, բայց դեռ աքսորի մեջ էին Պարսկաստանում, իրավունք չունեին Հայաստան վերադառնալու և ծառայում էին պարսկական հեծելազորի մեջ Հրեվում կամ Հերաթում։*

166. **«Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին»**—*խոսքը Հրևի կամ Հերաթի մասին է։*

167. **Միհրան տոհմը** *Սասանյանների պատմության մեջ հռչակավոր դարձած երեք ամենանշանավոր տոհմերից մեկն է—Սուրենի, Ասպահապետի և Միհրանի—երեքն էլ Արշակունի, բնակության վայրը բուն Պարթևների երկիրը։ Այս տոհմի շառավիղ է համարվում նաև թե՛ Եղիշեի պատմությունից և թե՛ առհասարակ շատ հայտնի Միհրներսեհը։*

168. **«Ալանաց դուռ»** *էր կոչվում նախկին Վլադիկավկազի ճանապարհը կամ Դարիալի կիրճը։*

169. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եղիշեն մի քանի անգամ տալիս է հայ նախարարական ցուցակներ, ավելորդ չենք համարում այստեղ դնել հայտնի գահնամակը (=հայ նախարարների գահերի դասավորությունը)։ Այդ գահնամակը գտել է Ю. Ф. Ахвердов-*ը, առաջին անգամ հրատարակել է Էմինը իր Խորենացու ռուսերեն թարգմանության առաջին տպագրության մեջ (1858 թ., էջ 358), նրանից վերցրել է Խորեն Ստեփանեն, իսկ Ալիշանն իր «Այրարատում» հրատարակել է այն ֆոտոտիպով, բնական մեծությամբ (էջ 430-ի և 431-ի միջև)։ Մենք վերցնում ենք այն Ն. Ադոնցի՝* «Армения в эпоху Юстиниана» (СПБ, 1908) *աշխատությունից, որովհետև Ադոնցի ընթերցումը լավագույնն է եղածների մեջ (տե՛ս հիշյալ գիրքը, էջ 249—250)։*

ԳԱՀՆԱՄԱԿ

(Իմ Սա)հակայ խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի Թագաւորի զօր ի Տիզբոնն խաւսեցեալ եթէ ես զռամականն ընամա զօր Արտաշրի ի դիւանին տեսի ի Քաղոց ամսոյ ժէ։ Եւ Վռամայ արքայից արքայի և բարերարի և գիր արարի ես Սահակ կաթողիկոս թէ որպէս Ձեր բարերարութիւնդ հրաման տայցէ հայոց ազատաց և տանուտէրանց որպէս յառաջ առ հայոց ազգին, նոյնպէս և ի ձեռսամ դիւանի շահհամա(ր)ին առնել, որ յայսմհետէ հայոց ազատաց և տանուտէրանց գահ ի յայտ լինէր։ Նոյնպէս Ներսէհ հրամանաւ արքայից արքայի և ես (Սա)հակ հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնամակն և եդաք մատանի զարքայից արքայի և զմերս. և է այսպէս արդար և ճշմարիտ։

[Առաջին իշխան Հայոց և մախաղազն]

ա. Սիւնեաց տէր
բ. Ասպետն
գ. Արծրունեաց տէր
(դ. Մաղխազունի)
դ. Մամիկոնէից տէր
ե. Շահապն Ծոփաց տէր
զ. Մոկաց տէր
է. Ռշտունեաց տէր
ը. Վահունեաց տէր
թ. Կապէից տէր
ժ. Անձաւացեաց տէր
ժա. Ապահունեաց տէր
ժբ. Կամսարականն
ժգ. Այլ Ապահունի
ժդ. Վանանդացին
ժե. Ամատունի տէր
ժզ. Գողթան տէր
ժէ. Գնունյաց տէր
ժը. Այլ Անձաւացի
ժթ. Տայոց
ի. Բասենոյ դատաւորն
իա. Գնթունեաց տէր
իբ. Վարձաւունին
իգ. Գարդմանայ տէր
իդ. Սահառունին
իզ. Գաբեղէնից տէր
իէ. Աբեղէնից տէր
իը. Սիւնեաց երկրորդն
իթ. Արծրունեաց երկրորդն
լ. Արծրունեաց երրորդն
լա. Մամիկոնէից երկրորդն
լբ. Ռոփսեանն
լգ. գ-Աշոցեանն
լդ. Դիմաքսեանն
լե. Բուխա Դիմաքսեանն
լզ. Այլ, Աբեղեանն
լէ. Այլ Դիմաքսեանն
լը. Պալունին
լթ. Առաւեղեանն
խ. Աշահմարեանն
խա. Համբուժեանն
խբ. Վարազպակեանն
խգ. Զյունականն
խդ. Ակէացին
խե. Զարեհաւանեանն
խզ. Ընծայեցին
խէ. Մանդակունին
խը. Սղկունին
խթ. Տայգրեանն
ծ. Երմանթունին
ծա. Սպանդունին
ծբ. Առաւենեանն
ծգ. Տրունին
ծդ. Մամբերացին
ծե. Հաւնունին
ծզ. Բժնունին
ծէ. Քաջբերունին
ծը. Մեհնունին
ծթ. Նախճերին
կ. Քաղաքապետն արքունի
կա. Որսապետն արքունի
կբ. Արտաշեսեանն
կգ. Վանանդացին երկրորդն
կդ. Ցուն
կե. Վիժանու(նի)
կզ. Աբաձու
կէ. Շիրակա Դիմաքսեանն
կը. Գազրիկանն
կթ. Մարացեան տ(էր)
հ. Վազրասպու(նին)

Ն. Ադոնց լգ. գ-Աշոցեան ուղղում է Աշոցեան, համարելով գ տառը կրկնված, ծդ. Մամբերացին առաջարկում է ուղղել Տամբերացի (նույն առաջարկն արել է Ալիշանը, Այրարատ, Վենետիկ 1890, էջ 431, ծանոթագր. 1) և խ. Աշահմարեանն համարում է հավանորեն աղավաղված Աշխադարեանից։

Իսկ դ. գահի բացթողումը բացատրվում է հետևյալ կերպով. «Առաջին իշխանն Հայոց և Մաղխազն» (Խորխոռունեաց իշխանների տիտղոսը) իր տեղում չէ. հայտնի չէ, թե երբ Խորխոռունյաց իշխաններից մեկն ստացել է Հայոց առաջին իշխանի գահը, և այդ պատճառով նրա անունը գահնամակում իր տեղից հանել են և տարել են վերև։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբեղյան Մ. 417, 425
Աբրահամ առաքյալ 96, 97, 216, 217
Աբրահամ խոստովանող 430
Աբրահամ սարկավագ 262, 263, 288, 289, 360, 361, 368—373, 378, 379 430, 435
Ագաթանգեղոս 426, 436
Ադամ 429, 433
Ադոնց Ն. 436, 437
Ալիշան Ղ. 415, 420, 427, 436, 437
Ակինյան Ն. 416, 419
Աճառյան Հր. 417, 418, 420, 421, 423 428, 432—435
Ամլորդի Հովհաննես, տե՛ս Հովհաննես Մկրտիչ
Այրուկ Սլկունի 202, 203
Անանիա, Սյունյաց եպիսկոպոս 56, 57
Անատոլ, ստրատելատ 14, 15, 146, 147
Աշոտ Կամսարական 388, 389
Ապահունյաց իշխան 148, 149
Ապրսամ Արծրունի 202, 203, 388, 389
Առանձար 212, 213, 388, 389
Առավան Անձևացի 388, 389
Առնակ Ամատունի 388, 389
Ատոմ Գնունի 142, 143, 200, 201, 268 269, 388, 389
Ատրորմիզդ 260, 261

Աբեդնագով, աստվածաշնչային 417
Արծրունյաց իշխան 234, 235
Արհմն (Ահրիման) 50—53, 64, 65, 92 93, 418
Արշավիր Արշարունի 154, 155, 200, 201
Արշակ II, հայոց թագավոր 11, 13, 412 234, 235, 388, 389, 428, 436
Արշավիր Կամսարական, տե՛ս Արշավիր Արշարունի
Արշեն, քահանա, 254, 255, 262, 263, 338, 339, 360, 361, 433
Արսեն Ընծայացի 202, 203, 234, 235, 242, 243, 430
Արտակ Մոկացի 86, 87
Արտակ Պալունի 200, 201, 240, 241, 428
Արտակ Ռշտունի 86, 87, 186, 187
Արտաշես (Արտաշիր), հայոց թագավոր 12, 13, 412, 436
Արտաշիր (ոմն) 238, 239
Արտաշիր I, պարսից թագավոր 412, 435
Արտաշիր II, պարսից թագավոր 412, 413, 432
Արտավազդ V, հայոց թագավոր 412
Արտավազդ Մամիկոնյան 388, 389
Արտավան, պարթևաց թագավոր 412
Արտեն, Գաբեղենից իշխան 186, 187
Աքար 218, 219
Աքսիդար Արշակունի 411

Բաբգեն Սյունի 388, 389, 431
Բաբիկ Ռափսոնյան 390, 391
Բագրատունյաց իշխան 148, 149
Բակի. հայ գրական 246, 247
Բակուր Սյունի 388, 389, 431
Բաղասական թագավոր 152, 153, 270, 271
Բանթուրակ 52, 53, 76, 77, 418
Բարձումա 413, 416
Բասիլ, Մոկաց եպիսկոպոս 56, 57
Բել, Հոն 284—287

Գաբեղենից իշխան 148, 149
Գադ, Վանանդի եպիսկոպոս 56, 57
Գադեշո (Գադիշո) Խորխոռունի 86, 87 186, 187
Գազրիկ Դիմաքսյան 154, 155, 202, 203
Գարեգին Սրվանձտյան 26, 27, 242, 243
Գեդեոն, Իսրայելի զորավար 220, 221
Գյուտ Վահևունի 86, 87, 148, 149, 186, 187, 200, 201
Գողիաթ, աստվածաշնչային 429

Դանիել մարգարե 417
Դավիթ Անհաղթ 411
Դավիթ Երեց 6, 7, 411
Դավիթ, հրեից թագավոր 218, 219, 429
Դատ Առավեղյան 388, 389
Դարեհ 417
Դենշապուհ 44, 45, 316, 317, 320—324, 339—341, 350—355, 360, 361, 434
Դիոնիսիոս 422

Եզնիկ, Բագրևանդի եպիսկոպոս 54, 55
Եզնիկ Կողբացի 418, 419
Եզրայր, Անձևացյաց եպիսկոպոս 56, 57
Եղիաս 218, 219
Եղիշե, Ամատունյաց եպիսկոպոս 56, 57 419
Եղիշե 411, 413, 414, 417—436
Եղիսաբեթ, աստվածաշնչային 420
Եվգաղ եպիսկոպոս 56, 57, 419
Եվփարիոս ասորի 146, 147
Եվա 433
Երեմիա, Ապահունյաց եպիսկոպոս 56, 57
Երեմիա, Մարդաստանի եպիսկոպոս 56 57
Եփթայե, Իսրայելի զորավար 220, 221

Զանգակ, երեց 186, 187
Զավեն եպիսկոպոս 419
Զաքարիա քահանա, Հովհ. Մկրտչի հայր 420
Զրադաշտ 414
Զվարեն Անձևացի 388, 389
Զրվան 48—51

Էմին Մ. 436
Էփրիկյան Հ. 430

Ընչուղ 186, 187

Թաթ Կամսարական 388, 389
Թաթիկ, Սահակի և Մեսրոպի աշակերտ 419
Թաթիկ, Բասենի եպիսկոպոս 56, 57, 358, 359
Թաթուլ Դիմաքսյան 200, 201, 234, 235, 388, 389, 428
Թաթուլ Վանանդացի, տե՛ս Թաթուլ Դիմաքսյան
Թեոդոս II 14, 15, 142, 143, 414 425, 427
Թեոդոս երանելի 146, 147
Թովմա Արծրունի 416, 430, 432
Թերևաքյան Ց. 432

Իսահակ, աստվածաշնչային 98, 99
Իսահակ, Սելևկիայի եպիսկոպոս 413

Խոսրով Գաբեղյան 202, 203
Խոսրով II 413
Խոսրով III 412
Խուրս Սրվանձտյան 202, 203
Խորեն Խորխոռունի 200, 201, 234, 235, 240, 241, 430
Խորեն նահատակ 302, 303, 368—373 378, 379, 435
Խորեն Ստեփանե 436

Կավադ, պարսից թագավոր 428
Կարեն Սահառունի 202, 203
Կյուլեսերյան Բ. 411
Կյուրոս 414
Կոստանդին 412
Կորյուն 417

Հազկերտ I 90, 91, 412, 413, 418, 420, 421
Հազկերտ II 12, 15, 396, 397, 413 414, 416, 418, 420, 425, 426, 432, 434
Համազասպ Մամիկոնյան 388, 389
Համազասպյան Մամիկոնյան 234, 235, 388, 389
Հարամանի, տե՛ս Արհմն

Հարկեշղոմ Շապուհ 394, 395
Հեռան 270, 271
Հեսու, Իսրայելի զորավար 220, 221
Հերոդոտ 429
Հինոմ 420
Հիսուս Քրիստոս 12, 13, 16, 17, 26, 27, 38, 39, 42—45, 76, 83, 88, 89, 104, 105, 108, 109, 128, 129, 134—139, 144, 145, 158, 159, 162, 163, 174—177, 184, 185, 208, 209, 220—223, 252, 253, 278, 279, 296, 297, 304—307, 310—315, 330, 331, 344, 345, 348, 349, 356—359, 368, 369, 384, 385, 388, 389, 408, 409, 411, 418, 420, 422, 425, 429
Հմայակ Դիմաքսյան 202, 203, 241, 242
Հմայակ Մամիկոնյան 256, 257, 417
Հյուբշման 417
Հոբիանոս կայսր 414
Հոհան Ռափսոնյան 390, 391
Հովհաննես Բ կաթողիկոս 419
Հովհաննես Մկրտիչ 80, 81, 420
Հովսեփ, Մարիամի ամուսին 52, 53
Հովսեփ երեց 431
Հովսեփ Վայոցձորցի 54—57, 86, 87, 142, 143, 202, 203, 214, 215, 248—251, 262, 263, 270, 271, 294, 295, 308, 309, 340—343, 358, 359, 419, 431
Հուստինիանոս 427

Ղազար Փարպեցի 411, 415, 419, 422, 423, 426, 428, 430, 431, 435, 436
Ղևոնդ երեց 116, 117, 202, 203, 214, 215, 230, 231, 248—251, 262, 263, 270, 271, 298, 299, 326, 327, 342—345, 358—361

Մալխասյան Ստ. 438
Մանեճ Ապահունի 86, 87, 186, 187
Մանեն Ամատունի 186, 187
Մանի պարսիկ 423
Մատաթիա 212, 213
Մարիամ 52, 53, 78, 79
Մարկիանոս կայսր 146, 147, 172, 173, 425
Մարքվարտ 416
Մելիտե Մանազկերտցի 419
Մեհրուժան Արծրունի 388, 389
Մեղետ, Մանազկերտի եպիսկոպոս 54, 55
Մեսրոպ Մաշտոց 417, 419
Միհր 64, 65, 70, 71, 372, 373
Միհրներսեհ Վզուրկ 48, 49, 56, 57, 178, 179, 182, 183, 192—195, 258, 259, 418, 420, 424, 426, 436
Միսաք 417
Միքայել Փորթուգալ 411, 432
Մոգպետ, եկեղեցական 360, 361
Մոկաց մեծ իշխան 234, 235
Մովան հանդերձապետ 322, 323, 423
Մովպետան Մովպետ 364, 365
Մովսես Խորենացի 426, 427, 428
Մովսես մարգարե 70, 71, 216, 217
Մուշ Դիմաքսյան 154, 155
Մուշե Արծրունի 56, 57, 260, 261, 360, 361
Մուշեղ Մամիկոնյան 388, 389
Մուշի սարկավագ 186, 187
Մուշկան Նիսալավուրտ 196, 197, 236—239, 242, 243, 246—249, 260, 261, 268, 269, 429

Յեզանդուխտ 418

Նաբուգոդոնոսոր 417
Ներշապուհ, նախարար Արծրունյաց տոհմից 86, 87, 200, 201, 388, 389
Ներշապուհ Ռմբոսյան 142, 143, 148, 149
Ներշապուհ Կամսարական 388, 389
Ներսեհ, տե՛ս Միհրներսեհ
Ներսեհ, Ուրծի իշխան 148, 149, 186, 187
Ներսեհ Քաջբերունի [illegible] 203, 234, 235, 242, 243
Ներսես Բ 419
Ներսես Գ Շինող 419
Նյոլդեքե 413, 421
Նոյ 216, 217

Շահխոստապետան արքունյաց 202, 203
Շապուհ I 415, 421, 432
Շապուհ II 120, 121, 412—414, 421, 422, 432
Շապուհ III 12, 13, 90, 91, 413, 421
Շապուհ պարսիկ 412
Շավասպ Արծրունի 388, 389
Շերմազանյան Գ. 428
Շմավոն Անձևացի (Անձավացի) 86, 87, 388, 389
Շնգին Արծրունի 388, 389

Որմիզդ I 420
Որմիզդ II 413, 420
Որմիզդ III 413

Պալունյաց իշխան 148, 149
Պակուր (Արշակունի) 411
Պանթերա, տե՛ս Բանթուրակ
Պապակ, պարսից թագավոր 412
Պարգև 388, 389
Պարթամասիր 411
Պետրոս երեց 186, 187
Պերոզ, թագավոր 398—401, 413
Պիղատոս Պոնտացի 80, 81, 420
Պլուտարքոս 429
Պողոս առաքյալ 22, 23, 434
Պտղոմեոս 429
Պրոկոպիոս պատմիչ 429
Պուլխերիա, Թեոդոսի քույր 425

Ջնիկան 322, 323, 360, 361

Ռահամ 396, 397

Սահակ, հայոց կաթողիկոս 436, 438
Սահակ Մանդակունի 388, 389
Սահակ Պարթև 419
Սահակ, Ռշտունյաց եպիսկոպոս 56, 57, 260, 261, 270, 326, 327, 358, 359, 430, 431
Սահակ, սարկավագ 186, 187
Սահակ, Տարոնի եպիսկոպոս 54, 55
Սամվել երեց 262, 263, 288, 289, 360, 361, 430
Սանատրուկ, հայոց թագավոր 412
Սատոյ Դիմաքսյան 388, 389
Սեբեոս 426, 434, 436
Սեդրակ 417
Սերուխտ, մարզպան 150, 151
Սմբատ Բագրատունի 432
Սոյեմոս, հայոց թագավոր 411, 412
Ստեփանոս Նախավկա 358, 359, 434
Ստրաբոն 426, 429
Սուրեն Արշակունի 436
Սուրմակ, Բզնունյաց եպիսկոպոս 54, 55, 419

Վահան, Աղվանների թագավորի ցեղից 156, 157
Վահան Ամատունի 86, 87, 200, 201, 388, 389, 417, 428
Վահան Գնունի 242, 243
Վաղարշ I, հայոց թագավոր 411
Վաղինակ, Վասակի հորեղբայր 276, 277, 421, 431
Վասակ Մամիկոնյան 188, 189, 190, 191, 427
Վասակ Սյունի 84, 85, 128, 129, 142, 143, 148—151, 158—165, 182, 183, 188, 189, 192, 193, 196, 197, 214, 215, 230, 231, 244—255, 258—263, 266—273, 278, 279, 423, 424, 427, 428, 431
Վարազդեն Առավեղյան 388, 389
Վարազշապուհ Պալունի 186, 187
Վարազվաղան, Վասակի փեսա 431
Վարդան Մամիկոնյան 6, 7, 86, 87, 148—153, 160, 161, 194, 195, 200, 201, 234—241, 256, 257, 302, 303, 424, 427, 428, 430
Վարձ Կամսարական 388, 389
Վիտելիոս, Սիրիայի կուսակալ 420
Վռամ (Բահրամ) I 423
Վռամ (Բահրամ) IV 413, 421
Վռամ (Բահրամ) V 12, 13, 426
Վռամշապուհ, հայոց թագավոր 12, 13, 412
Վրեն Տաշրացի 202, 203, 388, 389
Վուրկ, Լփնաց թագավորի եղբայր 154, 155

Տաշյան Հ. 427

Տաճատ Գնթունի 200, 201, 234, 235, 240, 241
Տաճատ Արծրունի 388, 389
Տաճատ, Տայոց եպիսկոպոս 54, 55
Տեր-Մինասյան Ե. 423
Տիրան, հայոց թագավոր 12, 13, 412
Տիրոց Բագրատունի 186, 187
Տրդատիոս 144, 145
Տրդատ I 411
Տրդատ II 412
Տրդատ III Մեծ 144, 145, 412

Փանդուրակ, տե՛ս Բանթուրակ
Փապակ Առավեղյան 388, 389
Փավստոս Բուզանդ 424, 426—429, 436
Փարսման Մանդակունի 202, 203, 388, 389
Փենեհեզ 218, 219
Փորթուգալ փաշա 411, 415, 421, 428, 429, 432, 433, 435

Քաջաջ սարկավագ 262, 263, 260, 261, 430
Քաջ Վարդան, տե՛ս Վարդան Մամիկոնյան
Քասու, Տուրուբերանի եպիսկոպոս 56, 57
Քսենոֆոն 430

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ալանաց դուռ 398, 399, 436
Ալկի, այժմ Ելկի 428
Ակե (Ակեա) 186, 187, 427
Աղրակ 360, 361
Աղձնիք, Աղձնյաց աշխարհ 20, 21, 102, 103, 188—189, 266, 267, 416, 422
Աղսու, տե՛ս Տղմուտ գետ
Աղվանից աշխարհ 20, 21, 102, 103, 126, 127, 140, 141, 148—151, 154, 155, 160, 161, 188, 189, 260, 261, 266, 267, 396—399, 415, 425
Աղվանք 150, 151, 156, 157, 190, 270, 271
Ամադրե լեռ 422
Այրարատյան գավառ (Այրարատ) 54, 55, 160, 161, 360, 361, 422, 426, 427, 437
Անդղ, գյուղ 116, 117, 422
Անձախի ձոր, Անձահից ձոր 430
Անտիոք 266, 267
Աշնակ 158, 159, 426
Ապահունիք 427
Ապար աշխարհ 20, 21, 284, 285, 288, 289, 318, 319, 366, 367, 415, 432, 434
Ապրշահ, տե՛ս Ապար աշխարհ
Ասիա 423, 424
Ասորեստան 358, 359, 368, 369, 376—379, 416, 435, 436
Ավարայր 380, 381, 428
Ատրպատական 138, 139, 148, 149, 158, 159, 424
Արագած 426
Արագածոտն 158, 159, 426
Արածա, գյուղ 360, 361, 430
Արածանի 424
Արարատ 430
Արաքս 426
Արզնարզյուն 20, 21, 415, 416
Արխնի 136, 137
Արձն (Արզն), գավառ 416
Արմավիր 158, 159, 426
Արյաց աշխարհ 166, 167, 286, 287
Արվաստան (Բեթ-Արբայե) 416
Արտագերս 136, 137, 424
Արտազու դաշտ 202, 203, 428
Արտաշատ 200, 201, 262, 263, 411,
Արտաշատի նահանգ 158, 159, 426
419, 424, 426
Արցախ 190, 191, 252, 253, 256, 257, 425
Արուճ 158, 159, 426

Արփանյալ 138, 139
Արքունի Դուռ 274, 275
Արևելյան Ասիա 424
Արևելյան երկիր 196, 197
Արևելյան Հռովմեական կայսրություն 414
Արևելք 6, 7, 14, 15, 20, 21, 28, 29, 38, 39, 142, 143, 146, 147, 174, 175, 390, 391, 419, 422, 423
Արևմտյան երկիր 142, 143
Արևմուտք 122, 123, 174, 175, 422
Աֆղանստան 421, 436

Բաբելոն 26, 27, 376, 377, 421
Բագրևանդ 54, 55, 360, 361, 419, 430, 433
Բահլ, Բակտրիայի մայրաքաղաք 414
Բաղդադ 414
Բաղասական, դաշտ 425
Բայլարան, տե՛ս Փայտակարան
Բասեն 56, 57, 427
Բասրա 435
Բարձրարող 136, 137
Բարձր Հայք 427
Բարու 425
Բեթ—Դասեն, տե՛ս Դարին
Բելուջիստան 434
Բյուզանդիա 413
Բյուրական 426
Բոհտան, գավառ 428

Գառնի 136, 137, 158, 159, 424, 426
Գավ 190, 191
Գարա լեռ 422
Գագերովն 144, 145, 424
Գեթսեմանի պարտեզ 420
Գեղաց երկիր 232, 233
Գզվար, երկիր 190, 191
Գոյալ, գյուղ 138, 139
Գուգարք 430

Դասն (Դարին, Դասան) աշխարհ 21, 102, 103, 421
Դարիալի կիրճ 436
Դարիթիր 364, 365, 434
Դարույնք,, քաղաք 427
Դերբենտ, քաղաք 416
Դիարբեքիր, գավառ 427
Դվին 419
Դրասխանակերտ 158, 159, 426
Դուռ (Պարսից դուռ) 88, 89, 96, 97, 126, 127, 156, 157, 260—263

Եգերացոց աշխարհ 430
Եղեգեկ, Եղեգյակ գյուղ 360, 361, 430, 433
Երամոնս 158, 159, 426
Երասխաձոր 428
Երիքով, քաղաք 220, 221
Երկայնորդ 136, 137
Եվրոպա 144, 145, 424
Երուսաղեմ 420
Երևան 417, 425, 438

Զարեհավան 268, 269
Զարեանդ, գավառ 150, 151, 212, 213, 425, 428
Զենակ, գյուղ 430

Էլբուրս 415
Էջմիածին 418, 419, 423

Թալին 426
Թալիշ 426, 429
Թավասպարների երկիր (Թապաերան) 190, 191.260, 261, 428
Թափիգիպի գյուղ 426
Թեոդոսիա 421
Թիֆլիս 415, 419, 422, 426
Թուխ, գետ 416

Իշավան, գյուղ 360, 361
Իսրայել 220, 221
Իտալական երկիր 36, 37, 220, 221, 417
Իրան 412, 415
Իրաք 435

Լոփնաս, գետ 152, 153, 425
Լփնաց աշխարհ (Լփինք) 20, 21, 102, 103, 154, 155, 190, 191, 260, 261, 415

Խաբուր, Տիգրիսի վտակ 415

Խաղխաղ, քաղաք 150, 151, 425
Խաղտյաց երկիր (Խաղտիք) 190, 191, 252, 253, 256, 257, 428
Խայլանդուրների աշխարհ 24, 25, 284, 285, 398, 399
Խիբիովան (Խիբի) երկիր 260, 261, 428, 430
Խոյ 425
Խորանիստ 137, 138
Խորասան 414, 415, 432
Խորխոռունիք 427
Խրաան 190, 191
Խուժաստան (Խուզիստան) 96, 97, 378, 379, 421
Խույթ, լեռ 416

Ծախանիստ 137, 138
Ծաղկոտն գավառ 422
Ծավդեից աշխարհ 20, 21, 102, 103, 415, 416, 422
Ծոփաց գավառ 427

Կադիքս, տե՛ս Գադեյրոն
Կազերուն 435
Կաղզվան 424, 427
Կապկոհ լեռներ, տե՛ս Կովկասյան լեռներ
Կապույտ, ավան 138, 139
Կապուտ լեռ 254, 255
Կասպից ծով 415, 416, 426, 429, 432
Կարբի 426
Կոգովիտ, գավառ 427
Կովկասյան լեռներ 156, 157, 415, 426 428
Կոտոր բերդ 430
Կորդվաց աշխարհ 20, 21, 102, 103, 190, 191, 415, 422, 427
Կորդրիք 427, 428
Կ. Պոլիս 419
Կտեսիփոն, տե՛ս Տիզբոն
Կուաշ ավան (Կող) 158, 159, 426
Կուրան (Տուրան) 320, 321, 434
Կուր, գետ 150, 151
Կուրկուր, վայր 424

Հայաստան 88, 89, 118, 119, 126, 127, 176, 177, 188, 189, 258, 259, 274, 275, 411—413, 416, 424, 426—428, 430, 431, 435, 436
Հայոց աշխարհ 12, 13, 20, 21, 32, 33, 44, 45, 86—91, 98, 99, 102, 103, 106, 107, 114—117, 144, 145, 156—163, 172, 173, 192—195, 200, 201, 212—213, 230—233, 248, 249, 256, 257, 260, 261, 268, 269, 282, 283, 286, 287, 324, 325, 340, 341, 366, 367, 378—381, 384—387, 392, 393, 396—399, 402—405, 428
Հարե-րուդ, գետ 415
Հենմատակ (Հենմատակների երկիր) 190, 191, 260, 261
Հերաթ 415
Հեր, գավառ 150, 151, 212, 213, 425, 428, 430
Հերմոն սար 420
Հին Բայազետ, տե՛ս Դարույնք
Հինդուկուշ 415
Հյուսիսային Միջագետք 416
Հնդկաստան 120, 121, 421—423, 434
Հողոցիմք, գյուղ 358, 359, 419
Հոնաց աշխարհ, տե՛ս Քուշանք 22, 23, 140, 141, 156, 157, 256, 257
Հոնաց պահակ, տե՛ս Ճորա պահակ
Հոռոմների աշխարհ 14, 15, 20, 21, 23—25, 188, 189, 415
Հորդանան գետ 80, 81, 420
Հռոմ 144, 145, 420
Հռովմեական կայսրություն 412, 414, 416
Հրեաստան 420
Հրև (Հերաթ), քաղաք 415, 435, 436
Հունաց երկիր 14, 15, 18, 19, 162, 163, 188, 189, 270, 271, 414

Ձեգամ, գետ 425
Ձիթենյաց սար 80, 81, 420
Ձորակերտ ավան 150, 159

Ճղբաց երկիր 190, 191, 260, 261
Ճորա պահակ (Ճողա, Ջողա, Կապան Ճորա, Դուռն Աղվանից) 24, 25, 86, 87, 148—151, 190, 191, 286, 287, 298, 399, 416, 426, 428

Մազանդարան, գավառ 429
Մակու, տե՛ս Ակե
Մակու գետ 428
Մակուրան 320, 321, 434
Մայփերկաթ 430
Մանազկերտ 54, 55
Մահանաղի 419
Մասիս 428
Մարդաղի 56, 57
Մարդաստան 56, 57
Մեծ Զաբ 422
Մեծ Հայք 20, 21, 416
Մեշովն (Մեշուն), նահանգ 378, 379, 435
Մեռյալ ծով 420
Միջագետք 416
Միջնաշխարհ (Այրարատ) 158, 159, 252—255, 426
Մծբին 14, 15, 414, 416
Մշո դաշտ 424
Մոկաց աշխարհ (Մոկք) 416
Մոսուլ 416

Նյուշապուհ, քաղաք, 284, 285, 360, 361, 366, 367, 415, 432

Շահրիար, գյուղ 426
Շահուղ (Շաիուլ, Շարուլ), գավառ 376—379, 435
Շապուր, քաղաք, 435
Շավարշական դաշտ, տե՛ս Արտազու դաշտ
Շարուրի դաշտ 430
Շիրազ 435
Շիրակ 428, 430
Շիրվան 415

Ողական 137, 138, 424
Որոտն 138, 139, 424

Չորի դաշտ, տե՛ս Ավարայր
Չորրորդ Հայք 416

Պալունիք 427
Պահ դուռ 18, 19, 38, 39, 415
Պաղեստին 420
Պարխարյան լեռներ 428
Պարսից երկիր 12, 13, 24, 25, 102, 103, 120—123, 172, 173, 178, 179, 258, 259, 398, 399, 412, 418, 427, 428, 434
Պարսից ծոց 421, 436
Պարսկաստան 412—415, 421, 422, 424, 429, 430, 433, 435, 436
Պարսկահայք 425, 430
Պարտավ 425, 426,
Պուտուն—Վատ 428

Սագաստան 96, 97, 421
Սալմաստ, գավառ 425
Սամարիա 420
Սասանյան պետություն 412
Սավադ 435
Սարդարապատ 426
Սարդյանք 158, 159, 426
Սեիստան, տե՛ս Սագաստան
Սելեկիա 413, 414
Սերա 144, 145, 424
Սիմ, լեռ 416
Սինա 70, 71
Սիրիա 420
Սիրտառա, կիրճ 415
Սյունյաց աշխարհ 126, 127, 162, 163, 272, 273, 276, 277, 424, 431
Սպանիա 424
Սպեր, գավառ 427
Ստորին Հայք 188, 189, 427
Սուզիանա, տե՛ս Խուժաստան
Սուրիստան, տե՛ս Սավադ
Սև ծով 428

Վահևունիք 427
Վաղարշապատ 426
Վայոց ձոր 358, 359, 419
Վան 138, 139, 424
Վանա ծով 427
Վանանդ 56, 57, 360, 361
Վաշակաշատ 138, 139
Վասիտ 435
Վասպուրական 427
Վատգես 358, 359

Վառ 190, 191
Վարդանաշատ 158, 159, 426
Վենետիկ 418, 423, 437
Վերին աշխարհ, տե՛ս [illegible] աշխարհ
Վերին միջագետք 414
Վիեննա 411
Վլադիկավկազ 437
Վրաստան 190, 191, 415, 416, 425, 431
Վրաց աշխարհ 20, 21, 93, 99, 102, 103, 148—151, 188, 189, 190, 191, 266, 267, 272, 273, 427, 431
Վրկանից աշխարհ 284, 285, 415, 432
Վոլգա (Գավ) 428

Տաճկաստան 20, 21, 122, 123, 415, 416
Տայք 54, 55, 256, 257, 428, 430
Տարոն 54, 55, 427
Տիգրիս 414—416, 435
Տիզբոն (Տիսբոն, Տիսպոն) 14, 15, 412, 414, 426, 435, 436
Տղմուտ գետ 234, 235, 428, 429
Տղմուտի դաշտ, տե՛ս Արտազի դաշտ
Տմորիք 190, 191, 252—255, 427, 428
Տորոս լեռ 416
Տրապիզոն 428
Տրտու (Թարթառ) գետ 425
Տուրուբերան 56, 57, 416
Տփխիս 427, 430

Ցոլակերտ 426

Ուտիք 425, 426
Որձ 186, 187, 427

Փայտակարան, քաղաք 176, 177, 192, 193, 426
Փառախոտ 158, 159, 426
Փախ, երկիր 190, 191
Փյուրվան, երկիր 190, 191
Փեղավար 415
Քոխ, երկիր 190, 191

Քաղկեդոն 425
Քաշկար 378, 379, 435
Քասո 56, 57
Քուշանների աշխարհ 18—21, 36, 37, 93, 99, 120, 121, 284—287
Քուրդիստան 416, 428
Օվրուզա 144, 145, 424

Օշական 158, 159, 426

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին Դաւթի երիցու Մամիկոնէի հայցեալ	6	**Մամիկոնյան Դավիթ երեցի խնդրած (պատմությունը) Վարդանի և Հայոց պատերազմի մասին**	7
ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ		ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ	
Ժամանակն	12	*Ժամանակը*	13
ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Իրացն պատահումն յիշխանէն արեւելից	28	*Արևելքի իշխանի ձեռնարկած գործերը*	29
ԵՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ	108	*Եկեղեցու սուրբ ուխտի միաբանության մասին*	109
ՉՈՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց	180	*Սյունյաց իշխանի և իր ընկերների մասին*	181
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին պարսից	198	*Հայերի կրկին անգամ պատերազմով պարսից թագավորին դիմադրելը*	199
ՎԵՑԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Յորում կարգադրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երեւի անօրէնութիւնն Վասակայ	246	*Դարձյալ Հայերի առաքինությունը և Վասակի անօրենությունը*	247
ԵՒԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ		ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
Դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն	284	*Դարձյալ նույն պատերազմի և սուրբ քահանաների չարչարանքների մասին*	285
Դարձեալ վասն խոստովանող աշակերտաց նոցունց	363	*Դարձյալ նրանց խոստովանող աշակերտների մասին*	369
		Ծանոթագրություններ	410
		Ցանկեր	439

ԵՂԻՇԵ

ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայ գրականության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Ջ. Հ. Թամրազյան
Նկարիչ՝ Լ. Ա. Սաղոյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Ալվրցյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ Ավետիսյան

ՓԲ 651
Հանձնված է շարվածքի 29.03.1988 թ.: Ստորագրված է տպագրության 20.01.1989: Չափսը $60\times84^1/_{16}$: Թուղթ № 1: Տառատեսակը «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 26,1 մամուլ +1 ներդիր: Տպագրական 28 մամուլ= պայմանական 26,04 մամուլի: Տպաքանակ 30000: Պատվեր 578: Գինը՝ 2 ռ. 60 կ.:
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան, փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна. № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52:
Типография Ереванского университета. Ереван, ул. Абовяна, № 52.